-636-

ՅՈՒ. Մ. ԲՈՉԱՐՈՎ, Ա. Զ. ԻՈԱՆՆԻՍՅԱՆԻ ՅԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

(XIII—XX ԴԱՐԵՐ)

Տեխնիկումների, բանֆակների յեվ
կուսխորհրդային դպրոցների համար

ԹԱՐԳ. Ս. Մարկոսյան
Ս. Ներսեսյան

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

-636-

1/2

ՅՈՒ. Մ. ԲՈՉԱՐՈՎ, Ա. Զ. ԻՈԱՆՆԻՍԻԱՆԻ ՅԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

(XVIII—XX ԴԱՐԵՐ)

Տեխնիկումների, բանֆակների յեվ
Կուսխորհրդային դպրոցների համար

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

II-26093 գր

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԻՑ

XVIII—XX դ.դ. դասակարգային պայքարի պատմության վերաբերյալ ներկա դասագիրքը կազմված է Պետգիտխորհրդի կողմից հաստատված ծրագրի համաձայն: Նա միջնակարգ դպրոցների համար է՝ տեխնիկումի, բանֆակի, խորհկուսդպրոցի, II աստիճանի դպրոցի համար:

Ընդհանուր հաշվով՝ գրքի տեքստը կարելի է մշակել 90 ժամվա ընթացքում: Գործնականում, հավանաբար, հարկ լինի գրքի վորոշ մասերը կրճատելու՝ աշխատանքի ինքնուրույն մոմենտներն ուժեղացնելու նպատակով: Այն ուսումնական հիմնարկներում, վորտեղ պատմության դասընթացին հատկացված է 90-ից ավելի ժամ, անհրաժեշտ է հետազոտական ուսումնասիրություն կազմակերպել՝ օգտագործելով գրքում զետեղված հանձնարարություն—խնդիրները, վորոնք բավականաչափ լրացուցիչ նյութ են տալիս:

Դասագրքի համար իբրև հիմք է ընդունված աշակերտների ինքնուրույն աշխատանքի սկզբունքը: Առանձին խնդիրների խորացած ուսումնասիրությունը յենթադրում է այն, վոր աշակերտները պետք է նախապես ծանոթացած լինեն համապատասխան դարաշրջանի հետ՝ իր ամբողջությամբ: Միանգամայն պարզ է, վոր առանց նման ծանոթություն ունենալու աննպատակ բան կլինի մասնավոր յերևույթներ ուսումնասիրելը: Նմանապես վոչ-ռացիոնալ գործ կլիներ դոկումենտներ ընթերցելն առանց բավարար չափով ծանոթ լինելու այն եպոխային, վորի առանձին պրոցեսներին են վերաբերում այդ դոկումենտները: Պրակտիկան ցույց է տալիս, վորքան աննշան արդյունք է ստացվում այն դեպքերում, յերբ պատմության ուսումնասիրությունը դպրոցում փորձում են կատարել՝ միմիայն դոկումենտներ ընթերցելով և վերլուծելով: Գործի այդպիսի դրվածքն անխուսափելիորեն հանգում է այն դրության, վոր առանց վորևէ սիստեմի յուրացվում են հատ ու կտոր գիտելիքներ և ղատղատված ուրիշի մտքեր, աղճատվում են պատմության բացվածքներ և, ինչպես կալեյդոսկոպում, իրար հետևից յերևում ու անհետանում են պատմական զանազան անուններ, տերմիններ, տարիներ և եպոխաներ:

Գրքի բովանդակությունը ստուգելու, գրքի ասածների ու յեզրակացությունների հանդեպ քննադատական վերաբերմունք մշակելու, աշակերտների պատմական հորիզոնն ընդլայնելու և հետազոտության մարքսիստական մեթոդը կիրառելու կարողության համար ահագին ե-

մասն ունի այն պրոցեսը, յերբ աշակերտների կատարած ընդհանրացումները պատկերավորվում են դոկումենտալ նյութերով:

Գրքի յուրաքանչյուր գլխի սկզբում, ներածությունների մեջ ընդգծվում են մի քանի հիմնական խնդիրներ, վորոնց ուսումնասիրությունն իմաստավորում է տվյալ դարաշրջանը: Այդ խնդիրները մանրամասնորեն լուսաբանվում են գրքի տեքստում: Նրանց համեմատ էլ տրվում են ցուցմունքներ գրականության վերաբերյալ և կազմվում են հանձնարարություն—խնդիրներ ինքնուրույն աշխատանքի համար: Ներածությունների մեջ կապ է հաստատվում նախընթաց թեմաների հետ և նշվում են սոցիոլոգիական վորոշ ընդհանրացումներ: Նպատակահարմար կլիներ, յեթե աշակերտներին հանձնարարվեր չսահմանափակվել սոսկ միայն սկզբում ծանոթանալով ներածություններին, այլ ամեն անգամ, թեմայի նյութը մշակելուց հետո, նորից դառնալ նրանց:

Հանձնարարություն—խնդիրներն, իհարկե, իբրև օրինակ են բերված: Պրակտիկան նոր խնդիրներ կառաջադրի՝ համապատասխան տեղական աշխատանքի պայմաններին: Այդ խնդիրների շուրջը, անշուշտ, պետք է կազմակերպել ինքնուրույն հետազոտական ուսումնասիրություն: Անզգույշ քայլ կլիներ նպատակ դնել՝ բոլոր խնդիրները մի առ մի լուծելու: Ավելի նպատակահարմար է բաշխել այդ խնդիրներն աշխատող օղակներին՝ տալով յուրաքանչյուր օղակին մի—մի խնդիր և, միաժամանակ, պարտադիր կերպով բաժանել աշխատանքի տեսակներն օղակի առանձին մասնակցիների միջև:

Նմանապես նպատակահարմար է պարապմունքների ընթացքում հանձնարարել աշակերտներին կազմել անունների և աշխարհագրական տերմինների առձեռն ցուցակներ, ականավոր պատմական անձերի կենսագրություններ, քարտեզներ և քարտոգրամներ, տարբեր կուսակցությունների և քաղաքական գործիչների հայացքներն ու դիրքերը պատկերավորող համեմատական աղյուսակներ:

Գրքում ցուցումներ կան տրված հիշողությունների գրականության և գեղարվեստական յերկերի վերաբերյալ, վորոնք արտացոլում են ուսումնասիրվող դարաշրջանները: Դասատուն պետք է օգտագործի նաև այդ նյութերը դասընթացն աշխուժացնելու նպատակով:

Գեղարվեստական գրականությունը, պարզ է, պետք է գա ուժեղացնելու եմոցիոնալ մոմենտները՝ պատմական դարաշրջաններն ու դեպքերն ուսումնասիրելու: Տեղի սղությունը թույլ չտվեց մեկնաբանելու կամ գոնե համառոտակի բնութագրելու մատենագրական մասում նշված գեղարվեստական յերկերը: Բոլոր յերկերն էլ հավասար չափով գեղարվեստական և սոցիալական արժեք չունեն. Նրանցից շատերը՝ արտացոլելով հեղինակների տրամադրությունն ու համակրանքները՝ սուբյեկտիվ և միտումավոր կերպով են պատկերում համապատասխան դարաշրջանը: Պատմական յերևույթներին և դեմքերին վերագրվում են այն գծերը, վո-

րոնք բնորոշ են հեղինակներին՝ ժամանակակից կենցաղային և սոցիալական միջավայրի համար: Դասատուն, իհարկե, պետք է հաշվի առնի այդ հանգամանքը և ուշադրությամբ հետևի աշակերտների ընթերցանությանն ու կազմակերպի այն: Թե՛ անհատական և թե՛ խմբակային զրույցների ժամանակ, կոնսուլտացիայի և նման այլ դեպքերում պետք է խնդիրներ հարուցել գեղարվեստական յերկերի վերաբերյալ՝ նրանց պատմական հավաստիության տեսակետից գնահատելու շուրջը:

Գրքի վորոշ բաժինները պետք է խորացնել՝ գավառագիտական ուսումնասիրություն կատարելով: Շրջաններում անհրաժեշտ է կազմակերպել ուսումնասիրվող դարաշրջանի վերաբերյալ նյութերի հավաքում՝ եքսկուրսիաների, արխիվային նյութերին ծանոթանալու, հիշողություններ գրի առնելու, զրույցների և այլ միջոցներով: Աշխատանքի այդ ձևը վերաբերում է գրքի այն բաժիններին, վորոնք նվիրված են ռուսական պատմության անց ու դարձին, մասնավորապես գյուղական և բանվորական շարժումներին, 1905 թ. հեղափոխությանն ու պրոլետարական հեղափոխության եպոխայի դեպքերին: Այլ կարգի եքսկուրսիաներից պարտադիր պետք է համարել գոնե մեկ եքսկուրսիա դեպի գործարան՝ պարզելու տեխնիկայի և արտադրության զարգացման պրոցեսները:

Առանձնապես պետք է նշել այն, վոր աշակերտները կարող են գործնական աշխատանքներ կատարել դասակարգային պայքարի պատմության դասընթացից, այն է՝ ինքնուրույն յելույթներ ունենալ տարբեր լսարանների առջև զանազան պատմական թեմաների շուրջը (հոբելյանական թվականներ, տոներ և այլն):

Կարիք չկա, և հազիվ թե նպատակահարմար էլ լինի—բոլոր թեմաներն անցնելու լաբորատորական պլանով:

Մի շարք թեմաներ դասատուն մշակելու յե իր խմբի հետ միասին՝ զրույցների միջոցով: Այդ զրույցների համար անհրաժեշտ է, վոր դասատուն կոնսպեկտ կամ մանրամասն ծրագիր մշակի և զրույցից մի քանի օր առաջ բաժանի աշակերտներին՝ առաջարկելով նրանց ծանոթանալ թեմային դասագրքի միջոցով: Այդ յեղանակով կազմակերպված զրույցը հետաքրքրություն կառաջացնի և կընթանա աշխույժ՝ գործնական պայմաններում:

Այդ զրույցները կթեթևացնեն ծրագիրը և հնարավորություն կտան լուրջ հիմունքներով կազմակերպելու գրքի մյուս բաժինների լաբորատորական մշակումը:

Ներկա դասագրքն արդյունք է այն փորձի և կոլեկտիվ աշխատանքի, վոր կատարել են Մոսկվայի մի խումբ դասատուները Յու. Մ. Բոչարովի և Ա. Զ. Իոաննիսիանի գլխավորությամբ:

Գրքի հեղինակներն են հետևյալ ընկ   րը՝ Ն. Ա. Արսենյեվ, Լ. Ա. Ֆենցլիանովա, Ա. Գ. Բոկշչանին, Յու. Մ. Բոչարով, Ա. Մ. Վըվերն,

մասը ունի այն դրվագը, երբ աշակերտների կատարած ընդհանրացումները պատկերավորվում են դոկումենտալ նյութերով։

Գրքի յուրաքանչյուր գլխի սկզբում, ներածությունների մեջ ընդգծվում են մի քանի հիմնական խնդիրներ, որոնց ուսումնասիրությունն իմաստավորում է տվյալ դարաշրջանը։ Այդ խնդիրները մանրամասնորեն լուսաբանվում են գրքի տեքստում։ Նրանց համեմատ էլ տրվում են ցուցմունքներ գրականության վերաբերյալ և կազմվում են հանձնարարություն—խնդիրներ ինքնուրույն աշխատանքի համար։ Ներածությունների մեջ կապ է հաստատվում նախընթաց թեմաների հետ և նշվում են սոցիոլոգիական որոշ ընդհանրացումներ։ Նպատակահարմար կլիներ, եթե աշակերտներին հանձնարարվեր չսահմանափակվել սոսկ միայն սկզբում ծանոթանալով ներածություններին, այլ ամեն անգամ, թեմայի նյութը մշակելուց հետո, նորից դառնալ նրանց։

Հանձնարարություն—խնդիրներն, իհարկե, իբրև օրինակ են բերված։ Պրակտիկան նոր խնդիրներ կառաջադրի՝ համապատասխան տեղական աշխատանքի պայմաններին։ Այդ խնդիրների շուրջը, անշուշտ, պետք է կազմակերպել ինքնուրույն հետազոտական ուսումնասիրություն։ Անզգույշ քայլ կլիներ նպատակ դնել՝ բոլոր խնդիրները մի առ մի լուծելու։ Ավելի նպատակահարմար է բաշխել այդ խնդիրներն աշխատող օղակներին՝ տալով յուրաքանչյուր օղակին մի—մի խնդիր և, միաժամանակ, պարտադիր կերպով բաժանել աշխատանքի տեսակներն օղակի առանձին մասնակցիների միջև։

Նմանապես նպատակահարմար է պարապմունքների ընթացքում հանձնարարել աշակերտներին կազմել անունների և աշխարհագրական տերմինների առձեռն ցուցակներ, ականավոր պատմական անձերի կենսագրություններ, քարտեզներ և քարտոգրամներ, տարբեր կուսակցությունների և քաղաքական գործիչների հայացքներն ու դիրքերը պատկերավորող համեմատական աղյուսակներ։

Գրքում ցուցումներ կան տրված հիշողությունների գրականության և գեղարվեստական երկերի վերաբերյալ, որոնք արտացոլում են ուսումնասիրվող դարաշրջանները։ Դասատուն պետք է օգտագործի նաև այդ նյութերը դասընթացն աշխուժացնելու նպատակով։

Գեղարվեստական գրականությունը, պարզ է, պետք է դա ուժեղացնելու էմոցիոնալ մոմենտները՝ պատմական դարաշրջաններն ու դեպքերն ուսումնասիրելու։ Տեղի սղությունը թույլ չտվեց մեկնաբանելու կամ գոնե համառոտակի բնութագրելու մատենագրական մասում նշվող գեղարվեստական երկերը։ Բոլոր երկերն էլ հավասար չափով գեղարվեստական և սոցիալական արժեք չունեն. Նրանցից շատերը՝ արտացոլելով հեղինակների տրամադրությունն ու համակրանքները՝ սուբյեկտիվ և միտումնավոր կերպով են պատկերում համապատասխան դարաշրջանը։ Պատմական երևույթներին և դեմքերին վերագրվում են այն գծերը, որոնք բնորոշ են հեղինակներին՝ ժամանակակից կենցաղային և սոցիալական միջավայրի համար։ Դասատուն, իհարկե, պետք է հաշվի առնի այդ հանգամանքը և ուշադրությամբ հետևի աշակերտների ընթերցանությանն ու կազմակերպի այն։ Թե՛ անհատական և թե՛ խմբակային զրույցների ժամանակ, կոնսուլտացիայի և նման այլ դեպքերում պետք է խնդիրներ հարուցել գեղարվեստական երկերի վերաբերյալ՝ նրանց պատմական հավաստիության տեսակետից գնահատելու շուրջը։

Գրքի որոշ բաժինները պետք է խորացնել՝ գավառագիտական ուսումնասիրություն կատարելով։ Շրջաններում անհրաժեշտ է կազմակերպել ուսումնասիրվող դարաշրջանի վերաբերյալ նյութերի հավաքում՝ էքսկուրսիաների, արխիվային նյութերին ծանոթանալու, հիշողություններ գրի առնելու, զրույցների և այլ միջոցներով։ Աշխատանքի այդ ձևը վերաբերում է գրքի այն բաժիններին, որոնք նվիրված են ռուսական պատմության անց ու դարձին, մասնավորապես գյուղական և բանվորական շարժումներին, 1905 թ. հեղափոխությանն ու պրոլետարական հեղափոխության եպոխայի դեպքերին։ Այլ կարգի էքսկուրսիաներից պարտադիր պետք է համարել գոնե մեկ էքսկուրսիա դեպի գործարան՝ պարզելու տեխնիկայի և արտադրության զարգացման պրոցեսները։

Առանձնապես պետք է նշել այն, որ աշակերտները կարող են գործնական աշխատանքներ կատարել դասակարգային պայքարի պատմության դասընթացից, այն է՝ ինքնուրույն ելույթներ ունենալ տարբեր լսարանների առջև զանազան պատմական թեմաների շուրջը (հոբելյանական թվականներ, տոներ և այլն)։

Կարիք չկա, և հազիվ թե նպատակահարմար էլ լինի—բոլոր թեմաներն անցնելու լաբորատորական պլանով։

Մի շարք թեմաներ դասատուն մշակելու յե իր խմբի հետ միասին՝ զրույցների միջոցով։ Այդ զրույցների համար անհրաժեշտ է, որ դասատուն կոնսպեկտ կամ մանրամասն ծրագիր մշակի և զրույցից մի քանի օր առաջ բաժանի աշակերտներին՝ առաջարկելով նրանց ծանոթանալ թեմային դասագրքի միջոցով։ Այդ յեղանակով կազմակերպված զրույցը հետաքրքրություն կառաջացնի և կընթանա աշխույժ՝ գործնական պայմաններում։

Այդ զրույցները կթեթևացնեն ծրագիրը և հնարավորություն կտան լուրջ հիմունքներով կազմակերպելու գրքի մյուս բաժինների լաբորատորական մշակումը։

Ներկա դասագիրքն արդյունք է այն փորձի և կոլեկտիվ աշխատանքի, որ կատարել են Մոսկվայի մի խումբ դասատուները Յու. Մ. Բոչարովի և Ա. Զ. Իոաննիսիանի գլխավորությամբ։

Գրքի հեղինակներն են հետևյալ ընկ[illegible]րը՝ Ն. Ա. Արսենյեվ, Լ. Ա. Ֆենցիանովա, Ա. Գ. Բոկշանին, Յու. Մ. Բոչարով, Ա. Մ. Վեվերն,

Պ. Վ. Յեգորով, Ն. Մ. Յեգուխով, Ա. Զ. Իոաննիսիանի, Ն. Պ. Պոլյակով, Ս. Ա. Ռոզենտալեր: Գրքի՝ առանց բացառության՝ բոլոր գլուխներն ու մատերիալները խնամքով քննվել և ուղղվել են կոլեկտիվի ժողովներում և ապա նոր հանձնվել խմբագրությանը նայելու:

ՅԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Ներկա հրատարակությունը լույս է տեսնում վերամշակված և լրացված ձևով: Նա բովանդակում է իր մեջ այն անհրաժեշտ լրացումներն ու փոփոխությունները, վորոնք, դժբախտաբար, հնարավոր չեղավ մտցնել յերկրորդ հրատարակության մեջ, քանի վոր վերջինս հարկ յեղավ կատարելու գիրքը լույս տեսնելուց իսկույն և եթ: Դասագիրքը վերամշակելիս նրա հեղինակներն ի նկատի յեն ունեցել վոչ միայն բարելավել նրա վորակը, այլ և ե՛լ ավելի հարմարեցնել դասագիրքն այն ուսումնական հիմնարկների ծրագրերին, վորտեղ XVIII—XX դ. դ. դասակարգային պայքարի պատմության դասընթացին հատկացված է 90-ից ավելի ուսումնական ժամ: Սակայն, հրատարակչական պայմանները հնարավորություն չտվին շատ ընդարձակել գրքի ծավալը:

28–29 թ. ձմեռը ներկա դասագիրքը հատուկ քննության առարկա դարձավ մի քանի ժողովներում՝ մարքսիստ-պատմաբանների ընկերության մեթոդական սեկցիայի նիստում, Մոսկվայի տեխնիկումների դասատուների և բանֆակների դասատուների հավաքույթներում: Մանկավարժների կողմից այդ ժողովներում արված նկատողությունների հիման վրա մի շարք համապատասխան փոփոխություններ են մտցված գրքում: Դժբախտաբար, հեղինակներին չվիճակվեց օգտվել գրախոսների ցուցումներից, քանի վոր ներկա հրատարակության վերամշակումն ավարտելու միջոցին գրախոսականները—չհաշված մեկ-յերկուսը՝ դեռևս լույս չէին տեսել:

Առաջին յերկու հրատարակությունների համեմատությամբ, գրքում վորոշ փոփոխություններ են կատարված նյութի դասավորման կողմից: Գրքի տեքստում արված լրացումները վերաբերում են բոլոր գլուխներին: Այսպես՝ IV գլխում նոր բաժիններ են մտցված Գերմանիայի և Իտալիայի 1848 թ. հեղափոխության վերաբերյալ, VI գլխում ավելացել է մի բաժին, վոր վերաբերում է Միացյալ Նահանգների դրությանը XIX դ. 30—70-ական թ.թ. VIII գլխում՝ ևս մի բաժին, Միացյալ Նահանգների բանվորական շարժման մասին: Մի շարք գլուխներ լրացված են նոր հատվածներով: Դրա հետ միասին, նախկին տեքստի մի նշանավոր մասը յենթարկվել է արմատական վերամշակման: Վերամշակման է յենթարկված նաև մեթոդական ապարատը: Դասագրքի այս մասում հիմնովին վերափոխվել են գլուխների սկզբում զետեղված մեթոդական ներածությունները, կարևորագույն անցքերի օրացույցները, ստուգիչ հարցերն ու հանձնարարություն-խնդիրները. վերջիններիս թիվը մեծա-

ժամանակ և կրճատվել է: Ավելացվել են էքսկուրսիների թեմաները. ցուցմունքներ են մտցված նոր լույս տեսած գրականության վերաբերյալ և, ընդհակառակն, գրականության ցուցակից դուրս են գցված այն գրքերի անունները, վորոնք դժվարությամբ են ճարվում գրքի շուկայում կամ վորոնք հազվադեպ են ուսումնական հիմնարկների գրադարաններում. լրացված են նաև ակնառու(?) ձեռնարկների և կինո-ֆիլմերի ցանկերը: Սինքրոնիստական աղյուսակները, վորոնցից սակավ եյին օգտվում աշակերտները, հանված են:

Հեղինակներն իրենց շնորհակալությունն են հայտնում այն բոլոր ընկերներին, վորոնք գիրքը վերամշակելու ժամանակ օգնության յեկան իրենց քննադատական յեզրակացություններով և խորհուրդներով:

ՉՈՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Համարելով այն մատերիալը, վոր վերաբերում է Արևելքում տեղի ունեցած յետ-պատերազմյան ազգային-հեղափոխական շարժումներին և վոր նախընթաց հրատարակությունների ժամանակ զետեղված եր VII գլխում, վոչ-բավարար՝ հեղինակները լրացրին ներկա—չորրորդ հրատարակությունը, ավելացնելով մի նոր գլուխ ևս, հատկապես այդ թեմային նվիրված: Գրքում մեջ-բերված քաղվածքներն ստուգված և ուղղված են համաձայն նոր թարգմանված և հրատարակված այն աշխատանքների, վորոնցից արված են այդ քաղվածքները: Նախկին հրատարակությունների մեջ զետեղված պատկերների մի մասը տեխնիկական պայմանների հետևանքով փոխարինված են ուրիշներով: Մնացածում դասագիրքն արտատպվում է յերրորդ վերամշակված և լրացված հրատարակություններից, աննշան փոփոխություններով:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Ներկա հրատարակության մեջ՝ նախորդ հրատարակության հետ համեմատած՝ մի շարք գլուխներում լրացումներ են կատարված, վորոնք վերաբերում են գլխավորապես վերջին անցքերին (ՀամԿԿ(բ) XVI համագումարին, հակահեղափոխական վնասարարական կազմակերպությունների հայտնագործման, Հնդկաստանում, Չինաստանում տեղի ունեցած դեպքերին և այլն): Բացի դրանից, վերանայված-ուղղված է գրքի ամբողջ տեքստը և մի շարք փոփոխություններ են մտցված մեթոդական մասում: Հրատարակչական պայմանների պատճառով դասագիրքը լույս է տեսնում յերեք պրակից:

1931 թ. մարտ.

Գ. Վ. Ցեղարով, Ն. Մ. Ցեղուխտով, Ա. Զ. Իոաննիսյանի, Ն. Գ. Գուլյակով, Ս. Ա. Ռոզենտալեր: Գրքի՝ առանց բացառության՝ բոլոր գլուխներն ու մատերիալները խնամքով քննվել և ուղղվել են կոլեկտիվի ժողովներում և ապա նոր հանձնվել խմբագրությանը նայելու:

ՅԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Ներկա հրատարակությունը լույս է տեսնում վերամշակված և լրացված ձևով: Նա բովանդակում է իր մեջ այն անհրաժեշտ լրացումներն ու փոփոխությունները, վորոնք, դժբախտաբար, հնարավոր չեղավ մտցնել յերկրորդ հրատարակության մեջ, քանի վոր վերջինս հարկ յեղավ կատարելու գիրքը լույս տեսնելուց իսկույն և եթ: Դասագիրքը վերամշակելիս նրա հեղինակներն ի նկատի յեն ունեցել վոչ միայն բարելավել նրա վորակը, այլ և ե՛լ ավելի հարմարեցնել դասագիրքն այն ուսումնական հիմնարկների ծրագրերին, վորտեղ XVIII—XX դ. դ. դասակարգային պայքարի պատմության դասընթացին հատկացված է 90-ից ավելի ուսումնական ժամ: Սակայն, հրատարակչական պայմանները հնարավորություն չտվին շատ ընդարձակել գրքի ծավալը:

28—29 թ. ձմեռը ներկա դասագիրքը հատուկ քննության առարկա դարձավ մի քանի ժողովներում՝ մարքսիստ-պատմաբանների ընկերության մեթոդական սեկցիայի նիստում, Մոսկվայի տեխնիկումների դասատուների և բանֆակների դասատուների հավաքույթներում: Մանկավարժների կողմից այդ ժողովներում արված նկատողությունների հիման վրա մի շարք համապատասխան փոփոխություններ են մտցված գրքում: Դժբախտաբար, հեղինակներին չվիճակվեց օգտվել գրախոսների ցուցումներից, քանի վոր ներկա հրատարակության վերամշակումն ավարտելու միջոցին գրախոսականները—հասցված մեկ-յերկուսը՝ դեռևս լույս չեն տեսել:

Առաջին յերկու հրատարակությունների համեմատությամբ, գրքում վորոշ փոփոխություններ են կատարված նյութի դասավորման կողմից: Գրքի տեքստում արված լրացումները վերաբերում են բոլոր գլուխներին: Այսպես՝ IV գլխում նոր բաժիններ են մտցված Գերմանիայի և Իտալիայի 1848 թ. հեղափոխության վերաբերյալ, VI գլխում ավելացել է մի բաժին, վոր վերաբերում է Միացյալ Նահանգների դրությանը XIX դ. 50—70-ական թ. թ. VIII գլխում՝ ևս մի բաժին, Միացյալ Նահանգների բանվորական շարժման մասին: Մի շարք գլուխներ լրացված են նոր հատվածներով: Դրա հետ միասին, նախկին տեքստի մի նշանավոր մասը յենթարկվել է արմատական վերամշակման: Վերամշակման և յենթարկված նաև մեթոդական ապարատը: Դասագրքի այս մասում հիմնովին վերափոխվել են գլուխների սկզբում զետեղված մեթոդական ներածությունները, կարևորագույն անցքերի որացույցները, ստուգիչ հարցերն ու հանձնարարություն—խնդիրները. վերջիններիս թիվը մեծա-

ժամանակ և կրճատվել է: Ավելացվել են էքսկուրսիաների թեմաները. ցուցմունքներ են մտցված նոր լույս տեսած գրականության վերաբերյալ և, ընդհակառակն, գրականության ցուցակից դուրս են գցված այն գրքերի անունները, վորոնք դժվարությամբ են ճարվում գրքի շուկայում կամ վորոնք հազվադեպ են ուսումնական հիմնարկների գրադարաններում. լրացված են նաև իրազննական ձեռնարկների և կինո-ֆիլմերի ցանկերը: Սինքրոնիստական աղյուսակները, վորոնցից սակավ եյին օգտվում աշակերտները, հանված են:

Հեղինակներն իրենց շնորհակալությունն են հայտնում այն բոլոր ընկերներին, վորոնք գիրքը վերամշակելու ժամանակ օգնության յեկան իրենց քննադատական յեզրակացություններով և խորհուրդներով:

ՉՈՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Համարելով այն մատերիալը, վոր վերաբերում է Արևելքում տեղի ունեցած յետ-պատերազմյան ազգային-հեղափոխական շարժումներին և վոր նախընթաց հրատարակությունների ժամանակ զետեղված եր VII գլխում, վոչ-բավարար՝ հեղինակները լրացրին ներկա—չորրորդ—հրատարակությունը, ավելացնելով մի նոր գլուխ ևս, հատկապես այդ թեմային նվիրված: Գրքում մեջ-բերված քաղվածքներն ստուգված և ուղղված են համաձայն նոր թարգմանված և հրատարակված այն աշխատանքների, վորոնցից արված են այդ քաղվածքները: Նախկին հրատարակությունների մեջ զետեղված պատկերների մի մասը տեխնիկական պայմանների հետևանքով փոխարինված են ուրիշներով: Մնացածում դասագիրքն արտատպվում է յերրորդ վերամշակված և լրացված հրատարակություններից, աննշան փոփոխություններով:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Ներկա հրատարակության մեջ՝ նախորդ հրատարակության հետ համեմատած՝ մի շարք գլուխներում լրացումներ են կատարված, վորոնք վերաբերում են գլխավորապես վերջին անցքերին (ՀամԿԿ(բ) XVI համագումարին, հակահեղափոխական վնասարարական կազմակերպությունների հայտնագործման, Հնդկաստանում, Չինաստանում տեղի ունեցած դեպքերին և այլն): Բացի դրանից, վերանայված-ուղղված է գրքի ամբողջ տեքստը և մի շարք փոփոխություններ են մտցված մեթոդական մասում: Հրատարակչական պայմանների պատճառով դասագիրքը լույս է տեսնում յերեք պրակից:

1931 թ. մարտ.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵՎՐՈՊԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՆ XVIII ԴԱՐՈՒՄ

Ժամանակակից կապիտալիստական հասարակությունը, վորտեղ տիրապետող դասակարգը բուրժուազիան է, կազմվել է յերկու հեղափոխությունների հետևանքով: Սրանցից մեկը հասարակական արտադրության մեջ կատարված հեղափոխությունն էր, այսպես կոչվող արդյունաբերական հեղաշրջումը. սա իր հերթին հիմնված էր տեխնիքական այն հեղափոխության վրա, վորի շնորհիվ ձեռքով կատարվող արտադրությունը փոխարինվեց մեքենային արտադրությամբ. այդ հեղաշրջումը տեղի յե ունեցել յեվրոպական և ամերիկական ցամաքամասերի վրա գտնվող բոլոր յերկրներում, բայց ամենից վաղ, այն է՝ XVIII դարում, նա կատարվել է Անգլիայում: Մյուս հեղափոխությունը նույն դարի վերջին բռնված ֆրանսիական մեծ հեղափոխությունն էր, վորի հետևանքով իշխանության գլուխ բարձրացավ բուրժուազիան:

Մեր գրքի ներկա գլխից սկսում ենք ուսումնասիրել կապիտալիստական հասարակության զարգացումը XIX—XX դ. դ.: Այստեղ տալիս ենք XVIII դարի Յեվրոպայի և Ամերիկայի սոցիալ-տնտեսական և քաղաքական դրության բնութագիրը՝ հիմք ունենալով չորս յերկրների վերաբերող կոնկրետ նյութերը,—յերկրներ, վորոնք կանգնած եյին տնտեսական զարգացման տարբեր աստիճանների վրա. այդ նպատակով մենք այս գլխում ծանոթացնում ենք նախ՝ Անգլիայում կատարված արդյունաբերական հեղաշրջման հետ, ապա՝ Հյուսիսային Ամերիկայում տեղի ունեցած հեղափոխության հետ, այնուհետև՝ Ֆրանսիայի կացությունը «հին կարգերի» ժամանակ, յերբ նախադրյալներ ստեղծվեցին Մեծ հեղափոխության համար, և, վերջապես՝ ճորտային տնտեսության և ճորտատիրական պետության զարգացմանը Ռուսաստանում:

Տվյալ թեմայի հիմնական խնդիրները, վոր պետք է պարզել ներկա գլուխն ուսումնասիրելիս, հետևյալն են՝

1. Ի՞նչ պայմաններ նպաստեցին արդյունաբերական կապիտալիզմի զարգացմանն Անգլիայում.
2. Հյուսիսային Ամերիկայում հիմնված անգլիական գաղութների տնտեսական զարգացման համար ի՞նչ նշանակություն ուներ այն հանգամանքը, վոր նրանք՝ Անգլիայից անջատվելով՝ կազմակերպեցին իրենց ինքնուրույն պետությունը՝ Հանձինս Միացյալ Նահանգների.
3. Ինչո՞ւ հեղափոխական ուղիով միայն կարելի յեր վերացնել «հին կարգերը» Ֆրանսիայում.
4. Ի՞նչ ուղիներով ընթացավ ճորտային տնտեսության և ճորտատիրական պետության զարգացումը XVIII դ. Ռուսաստանում.
5. Վորո՞նք եյին XVIII դ. Ռուսաստանում առաջացած գյուղացիական հեղափոխության սո[illegible]—տնտեսական նախապայմաններն ու նրա պարտության պատճառները.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

ԱՆԳԼԻԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

XVIII դարի սկզբին Անգլիայի բնակչության մեծագույն մասը պարապում էր գյուղատնտեսությամբ. ահա թե ինչու ավելի խիտ էր բնակեցված կղզու հարավ-արևելյան՝ բավականին բերրի՝ մասը: Հողագործությունը ձեռնարկատիրական բնույթ չեր կրում. համարյա բոլոր արտադրած մթերքները հենց իրենք հողագործներն եյին սպառում: Հողը պատկանում էր խոշոր սեփականատերերին (լորդերին), մանր կալվածատերերին (սկվայրներին) և ազատ գյուղացիներին (փրիհոլդերներին. գյուղացիներից ավելի ունևորները կոչվում եյին յոմեններ: Բացի սրանից, հողի հետ եյին կապված նաև ցմահ կամ ժառանգական վարձակալները (կոպիհոլդերները). սրանք նախկին ճորտերի հետնորդներ եյին և զանազան պարհակներ եյին կատարում հողատեր կալվածատերերի: Վերջապես, կար հողատերերի մի շերտ ևս՝ ամենից ավելի կախյալ վիճակում. դա—«կոտտեջերներն» եյին կամ վարձու բատրակներ, վորոնք միայն մի փոքր հողամաս ունեյին իրենց խրճիթների (կոտեջների) շուրջը և հարկադրված եյին աշխատելու կալվածատերերի համար: Խոշոր հողամասերի տեր եյին նաև յեկեղեցին ու արքայական ընտանիքը:

Գյուղերում ամենուրեք պահպանվում եյին տնտեսավարական հին ձևերը—գերիշխում էր յեռադաշտ սիստեմը (վարելահողի յերեք մասերից մեկը հանգիստ եյին թողնում, իսկ մնացած յերկու մասում մշակում եյին ցորեն և գարի) պարտադիր ցանքափոխությամբ հանդերձ: Թե՛ կալվածատերերը և թե՛ գյուղացիները մտնում եյին մի վորոշ գյուղական համայնքի կազմի մեջ. կալվածատիրական հողերն էլ սովորաբար մի միասնական առանձին կտոր չեյին կազմում, այլ բաժան-բաժան արված՝ մանր կտորներով ընկած եյին գյուղացիական հողերի հետ խառը: Հողատիրության այդ խայտաբղետ ցրվածությունը ստիպում էր բոլոր տնտեսատերերին էլ միևնույն յեղանակով մշակել հողը՝ դասավորելով ու կատարելով դաշտային աշխատանքները վորոշված ժամկետներում: Բերքահավաքն ավարտելուց հետո քանդում եյին բոլոր ցանկապատերը, վորոնցով տարբեր տերերի հողամասերը բաժանված եյին իրարից, և ցանկապատերից ազատված այդ հողերի վրա արածեցնում եյին անասուններին: Այդ, այսպես կոչված՝ «բաց դաշտերը» յենթակա եյին բոլոր տերերի օգտագործման և մարգագետինների ու անտառների հետ միասին կազմում եյին համայնական հանդամասեր:

Առևտուրն ու արդյունաբերությունը կենտրոնացած եյին քաղաքներում, վորոնք իրենց բնակչության քանակով շատ աննշան եյին. XVII դ. վերջին Լիվերպուլ, [illegible]մինհեմ, Շեֆֆիլդ քաղաքներն ու[illegible]յին յուրա—

քանչյուրը միայն չորս հազար, իսկ Մանչեստրը—վեց հազար բնակիչ։ Քաղաքներում դեռ գոյություն ուներ տակավին ուժեղ, համքարություններում կազմակերպված արհեստը։ Կառավարությունն ու համքարությունները հատուկ կանոնադրությունների միջոցով մանրամասն ռեգլամենտացիայի եյին յենթարկում արտադրության բոլոր դրվածքները, ինչպես և արտադրանքի քանակը, գործածվող նյութերի ներկվածքը, գույնն ու չափերը. նրանք կանխորոշում եյին բանվորների թիվն արհեստային ձեռնարկությունների համար, կարգավորում եյին վարպետների, վարպետացուների և աշակերտների փոխհարաբերությունները. միաժամանակ նրանք կանոնավորում եյին և՛ փոխանակությունը, արտահանվող ապրանքների համար մի վորոշ նորմա և քանակ եյին սահմանում։ Դրամային տնտեսության զարգացմամբ, սակայն, այնպիսի պայմաններ ստեղծվեցին, վոր համքարություններն այլևս ի վիճակի չեյին կարգավորելու վոչ արտադրությունը և վոչ էլ փոխանակությունը։ Եվ ահա՝ սկիզբ են առնում արտահամքարային ձեռնարկություններ, սկսում ե զարգանալ տնայնագործական արդյունաբերությունը՝ իր արմատները ձգելով համքարային ճնշումներից ազատ միջավայրում, գյուղում։ Այսպես, ուրեմն՝ մինչև մեքենաների յերևան գալը գյուղն եր հանդիսանում արդյունաբերության կենտրոն։ Գյուղական արդյունաբերությունը սաստիկ զարգացավ այն բանի շնորհիվ, վոր հրապարակում արդեն կային հողազուրկ յեղած գյուղացիներ՝ կողմնակի աշխատանք վորոնող։

Տնայնագործական արդյունաբերությունը լայն չափով տարածվեց վողջ Անգլիայում. տնայնագործների մի մասը մետաղե իրեր եր պատրաստում (Շեֆֆիլդի և Բիրմինհեմի շրջանում), իսկ նրանց մեծ մասը զբաղված եր բուրդ մանելով և բրդի կտորեղեն արտադրելով։ Տնայնագործը շատ ծանր դրության մեջ եր, քանի վոր նա հարկադրված եր ամբողջ որերով աշխատելու իր խրճիթում, չափազանց վատառողջ պայմաններում։

Անգլիական բուրժուական քաղաքագետ, հրապարակախոս և գրող Դանիել Դեֆո—ն (1661—1731 թ.), «Ռոբինզոն Կրուզո»—ի հեղինակը, իր «Ճանապարհորդություն Մեծ Բրիտանիա կղզում» կոչված յերկում (1727 թ.) նկարագրել ե Գալիֆաքսի շրջակայքը, վորտեղ շատ մանր, ինքնուրույն մահուդագործներ եյին բնակվում։ Նրանց արհեստանոցները ընկած եյին իրարից վոչ հեռու, այնպես վոր մեկ տնից արձակած ձայնը լսելի յեր մյուսի մոտ։ Յուրաքանչյուր տան առաջ կարելի յեր տեսնել մի շրջանակ դրած՝ վրան էլ մահուդի կամ վորևե մի այլ բրդեղեն կտոր քաշած։ Ամեն մի մահուդագործ առնվազն մեկ ձի յեր պահում և այդ ձիով շաբաթ որերը շուկա յեր տանում մի—յերկու թոփ կտորեղեն։ Տնատերերից յուրաքանչյուրն՝ իր ընտանիքին սնունդ հայթայթելու

նպատակով՝ մի—յերկու կով էլ եր պահում։ Իսկ նրանց ցանած հացահատիկն այնքան եր միայն, վորքան վոր կուտ եր պետք ե իրենց տնային թռչուններին տալու։ Ամբողջ ընտանիքով լծվում եյին աշխատանքի. մեկը ներկելու տակառի մոտ եր աշխատում, մյուսը՝ գործելու հաստոցի վրա, յերրորդը մահուդն եր չորացնում, իսկ կանայք ու յերեխաները բուրդ եյին գզում և մանում։ Յերբ վոր մահուդագործներն իրենց պատրաստած իրերը շուկա եյին բերում, այստեղ գալիս եյին նաև վաճառականներ՝ իրենց գործակատարներով հանդերձ. սրանք շրջում եյին սեղանները, վորոնց վրա ի ցույց եր դրված թոփ—թոփ կտորեղենը, նայում—ջոկում եյին և իրենց հավանածը գնում։

Այսպիսով՝ սկզբներում տնայնագործն ինքն եր շուկա հանում վաճառելու իր իսկ պատրաստած մահուդը. սակայն, հետագայում նա այլևս վոչ ժամանակ, վոչ էլ հնարավորություն ուներ կազմակերպելու իր ապրանքների վաճառքը. ուստի նա հոժարությամբ դիմում եր ապրանքատուի ոգնության, վորն այն ժամանակվա համար բնորոշ դեմք եր հանդիսանում։ Ապրանքատուն վորոշ կապիտալ ուներ իր տրամադրության տակ և, հետևապես, նա հեշտությամբ կարող եր մաս-մաս գնել մեծ քանակի ապրանքներ և՝ վաճառելով այդ ապրանքները փոքրիշատե հեռավոր շուկաներում՝ մեծ շահ ստանալ։ Ոգտվելով տնայնագործների նեղ դրությունից, նա փող և հումույթ եր նրանց փոխ տալիս՝ նրանց ձեռքի տակ յեղած արտադրական միջոցների գրավականով։ Այդ հանգամանքն արդեն իսկ բավական եր, վորպեսզի տնայնագործը հետզհետե ընկնի լիակատար կախման վիճակի մեջ իր վարկատուի հանդեպ։ Ապրանքատուն աստիճանաբար ձեռնարկող եր դառնում. նա կամայականորեն սահմանում եր վարձատրության չափերը և կազմակերպում արտադրությունը՝ իր գործի համար շահավետ մասնագիտացում մտցնելով իրենից կախում ունեցող տնայնագործների շրջանում։ Ոգտվելով իրենց ձեռք բերած դիրքից՝ ապրանքատուները գնալով ավելի ու ավելի եյին ուժեղացնում տնայնագործների շահագործումը և այդպիսով մեծ կապիտալներ եյին վաստակում։

Ահավասիկ բրդամանածային արդյունաբերության վիճակը XVIII դարի յերկրորդ կեսին.

«Այդ արհեստն ամբողջապես տնային բնույթ ուներ. նրա զանազան ճյուղերը լայն տարածված եյին յերկրում։ Ամենից առաջ մանուֆակտուրիստը՝ ձին հեծած՝ մի յերկար ճանապարհորդություն եր կատարում իր ուզած հում նյութը ճարելու համար, այդ նյութը նա ձեռք եր բերում ֆերմերներից, կամ խոշոր տոնավաճառներում, վորոնք տեղի եյին ունենում այն հին քաղաքներում, վոր առաջներում հայտնի եյին իբրև բացառապես բրդի շուկաներ կամ, ինչպես անվանում եյին նրանց, բրդի «պահեստատեղեր»։

Բուրդը հաջողությամբ տեղ հասցնելուն պես՝ տալիս եյին հատուկ

մարդկանց ձեռքը՝ պատելու, ջնջելու համար. սրանք խստորեն ընտրում եյին բրդի այն տեսակը միայն, վոր իր մազերի յերկարությամբ համապատասխանում եր ընդունված չափին և, հետևապես, պիտանի յեր համարվում բրդի արդյունաբերության համար. և ինչ վոր այդ անհրաժեշտ յերկարության չափին չեր հասնում, այդ ամենը նրանք անխնա կերպով կտրատում եյին մկրատով կամ կաղամբահատի պես մի այլ գործիքով: Յերկարամազ բուրդն այնուհետև հանձնում եյին բուրդ գզողի ձեռքը, և ապա յետ ստանալով նրանից արդեն գզված բուրդը՝ նորից այն փաթաթում-կապում եյին խնամքով, մի ձիու մեջքի բարձելով՝ ուղարկում եյին յերկրի ներքին շրջանները՝ մանել տալու համար:

Մանուֆակտուրիստն այստեղ յուրաքանչյուր գյուղում իր գործակալներն ուներ, վորոնք բուրդն ընդունում, բաշխում եյին գյուղացիների միջև և ապա նրանցից յետ ստանում այն՝ իբրև մանած թել: Աշխատանքի ժամանակ գործադրվող մեքենան դեռ ելի հին միաթել ճախարակն եր. ամառվա որերին գյուղական մարգագետիններում կարելի յեր տեսնել կանանց՝ իրենց արհեստով զբաղվելիս: Յերբ վոր մանուֆակտուրիստը վերցնում եր հենքի առեջքը և վողջ ու առողջ յետ դարձնում իր տեղը, նա այժմ սկսում եր վորոնել իր ջուլհակներին, վորոնք հետո, վերջապես, հանձնում եյին պատրաստի գործվածքներն իրենց տիրոջ՝ վաճառականի վրա ծախելու կամ ներկարարի տալու»:

XVIII դարի ընթացքում ապրանքառուն, քանի գնում, ավելի խոշոր դեր եր խաղում արտադրության ասպարեզում. իր տրամադրության տակ ունենալով հումույթ, արտադրական գործիքներ, ինչպես և մեծ թվով գործավորներ՝ իրեն յենթակա, նա դառնում եր մի խոշոր արդյունաբերական ձեռնարկության տեր: Բայց այն հանգամանքը, վոր ձեռնարկության առանձին մասերը ցրված եյին դես ու դեն և անայնագործները շարունակում եյին կատարել աշխատանքը դեռ իրենց տանը, այլևս ձեռնտու չեր ապրանքառուի համար: Ուստի նա սկսում է հավաքել ու միացնել մի արհեստանոցի մեջ այն աշխատավորներին, վորոնց նա առաջ գործ եր տալիս տանը կատարելու: Այսպես՝ ակիզբ է առնում մանուֆակտուրան,—կապիտալիստական մի խոշոր ձեռնարկություն՝ ձեռքի աշխատանքի վրա հիմնված (մանուֆակտուրա՝ լատիներենից թարգմանած՝ նշանակում է «ձեռքի աշխատանք»): Արդյունաբերության տնային սիստեմի նկատմամբ մանուֆակտուրան այն առավելությունն ունի, վոր այստեղ, մանուֆակտուրայի մեջ աշխատանքի արտադրողականությունը նշանավոր չափով բարձրանում է, շնորհիվ աշխատանքի տեխնիկական բաժանման և բանվորների վրա հսկելու հնարավորության: «Ճախարակներն ու մանածագործային հաստոցները, վոր մինչ այդ ընկած եյին ցիր ու ցան այս ու այն գյուղում, այժմ մի քանի խոշոր բանվորական զորանոցներում են կենտրոնացվում, ինչպես և հենց իրենք, բանվորներն ու հում նյութը: Ճախարակներն

ու մանածագործական հաստոցները և թե՛ հում նյութը մանողների և ջուլհակների անկախ գոյությունն ապահովող միջոցներից վեր են ածվում միջոցների, վորոնք մանողների ու ջուլհակների վրա իշխելու և նրանցից անվճար աշխատանք քամելն են ապահովում» (Մարքս):

Արդյունաբերական հեղաշրջման ժամանակից՝ անգլիական ականավոր տնտեսագետ Ադամ Սմիթը տվել է մի մանուֆակտուրայի նկարագրությունը. դա գնդասեղներ արտադրող մանուֆակտուրան է: Աշխատանքի պրոցեսն այդ մանուֆակտուրայի մեջ՝ համեմատած տնայնագործական աշխատանքի հետ, աչքի յե ընկնում իր արագ տեմպով և բարձր արտադրողականությամբ: Աշխատանքն այստեղ կատարվում է մի ընդհանուր կտուրի տակ՝ բազմաթիվ բանվոր-տնայնագործների մասնակցությամբ, վորոնցից յուրաքանչյուրը մի վորոշ գործողություն է միայն կատարում. մեկը մետաղալար է քաշում, պատրաստում, մյուսը ձգում-ուղղում է այդ լարը, յերրորդը կտրատում է, չորրորդը սրում է, հինգերորդն էլ հենց միայն ծայրն է հղկում՝ վրան գնդիկ սարքելու համար: Աշխատանքի նման բաժանման շնորհիվ, մանուֆակտուրայի մեջ 10 բանվոր որական 12 ֆունտ գնդասեղ եր պատրաստում, այսինքն՝ մոտ 48 հազար գնդասեղ: Այսպիսով՝ ամեն մի բանվորին ընկնում եր միջին հաշվով որական 4·800 գնդասեղ, մինչդեռ մենաշխատ-տնայնագործը մի ամբողջ բանվորական որվա ընթացքում հազիվ եր կարողանում մի 20 գնդասեղ շինել:

Մանուֆակտուրան արագացրեց ու մեծացրեց ապրանքների արտադրությունը. միաժամանակ նա անհրաժեշտ նախապայմաններ ստեղծեց մեքենաների յերևան գալու համար. աշխատանքի տարբաժանումը մանր մասերի պարզեցրեց մի շարք իրար հաջորդող գործողություններ և դրանով դյուրացրեց արտադրության մեքենայացման գործը:

Ծավալվող տնային արդյունաբերությունն էլ բազմաթիվ ապրանքներ եր շուկա նետում և նպաստում, վոր քաղաքի և գյուղի միջև առևտրական կապերն ամրապնդվեն, վոր ուժեղանա ապրանքների արտահանումը օտարերկրյա շուկաներ:

XVIII դարի սկզբներում խոշոր կապիտալների կուտակում է նկատվում Անգլիայում,—կապիտալներ, վորոնք գլխավորապես նրա վարած արտաքին առևտրի հետևանքով եյին հանդես յեկել: Դա մի ժամանակաշրջան եր, յերբ զանազան ակցիոներական ընկերություններ եյին կազմակերպվում՝ զուտ սպեկուլյատիվ բնույթ ունեցող. (օրինակ՝ արճճից արծաթ ստանալու համար հիմնված ընկերությունը և այլն): Ցեվ յեթե նման ընկերությունները սովորաբար մեծ հաջողություն եյին ունենում, ապա դա նրանով է բացատրվում, վոր յերկիրը լի յեր կապիտալներով, վորոնցից փափագում եյին մեծ տոկոսներ ստանալ: Նույն այդ հանգամանքով է բացատրվում և՛ պետական փոխառությունների դատած-խաղաղությունը, վորոնց միջոցով կառավարությունը կարողացավ բարելավել պետության ֆինանսական դրությունը:

Բայց և այնպես ներքին կուտակումը չէր, վոր անսովոր հարստացման աղբյուր հանդիսացավ: «Պորթուգալիայի, Սպանիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի, Անգլիայի հարստությունն անհնարին բան կլիներ, յեթե նախապես չոչնչացնեյին արաբական կուլտուրան, չկողոպտեյին Աֆրիկան, յեթե չաղքատացնեյին ու չամայացնեյին Հարավային Ասիան իր կղզիներով, առատաբեր Արևելյան Հնդկաստանն ու Միջին Ամերիկայի բարգավաճ պետությունները»—նկատում է ժամանակակից բուրժուական՝ գերմանական տնտեսագետ Վ. Զոմբարտը: Սկզբնական կուտակման դարաշրջանում կատարված գաղութային կողոպուտները սկիզբ դրին Յեվրոպայի կապիտալիստական զարգացման: Ամերիկա և Հնդկաստան տանող ովկիանոսյան ճանապարհների հայտաբերումով ընդլայնվեց միջազգային առևտրի ասպարեզը: Հարստանալու, շահ վաստակելու ծարավը ստեղծեց արկածախնդիր վաճառականների, ծովահենների, ավազակների մի ամբողջ կաղը, վորոնք գնում, թալանում եյին գաղութների անպաշտպան բնիկներին: Մի շարք ձեռներեց գործարար մարդիկ կազմակերպում են թալանչիական արշավանքներ, և այդ շահավետ գործին, իբրև փայատերեր, մասնակցելուց չեյին խորշում նույնիսկ թագակիր անձինք[1]) «ազնվազարմ» ջենտլմենները: Ազնվական-ծովահենները յերբեմն իրենց ցեղակից վաճառականներին էլ եյին թալանում: «Վոսկու և արծաթի հանքեր են հայտնագործվում Ամերիկայում. տեղական բնակչությունը բնաջինջ է արվում, ստրկացվում է և կենդանի-կենդանի թաղվում հանքավայրերում. առաջին քայլերն են արվում՝ նվաճելու և կողոպտելու Արևելյան Հնդկաստանը. Աֆրիկան վեր է ածվում մի արգելյալ դաշտի՝ սևամորթներին վորսալու—ահա կապիտալիստական դարաշրջանի արշալույսը: Հովվերգական այս պրոցեսները սկզբնական կուտակման գլխավոր մոմենտներն են կազմում» (Մարքս):

Գաղութների հետ առևտրական գործողություններ կատարելու համար անգլիական վաճառականները միանում եյին իրար հետ, կազմում «թափառական առևտրականների» ընկերություններ: XVI-XVII դարերում մի շարք առևտրական ընկերություններ կազմակերպվեցին, վորոնք մոնոպոլ առևտրի արտոնագիր ստացան կառավարությունից: 1554 թվին կազմակերպվեց Մոսկովյան ընկերությունը, 1575 թվին՝ Մարոկկոյի ընկերությունը, 1588 թվին՝ Գվինեյականը, 1581 թվին՝ Լևանտականը՝ Միջերկրական ծովի արևելյան մասի հետ առևտուր անելու համար, 1600 թվին՝ Արևելյան—Հնդկական ընկերությունը, 1606 թվին՝ Վիրջինեյականը, վորի ոգնությամբ սկսվեց Ամերիկայի կոլոնիզացիան: Այդ ընկերություններն ահագին կապիտալների տեր եյին, նրանք ոգտվում եյին պետական կազմակերպություններին վերապահված ի-

[1]) Ֆրենսիս Դրեյկի և նրա ծովահենների ձեռնարկած արշավանքների գործում գլխավոր փայատերուհին եր անգլիական թագուհի Յելիզավեթը (1558--1603).

րավունքներով ու արտոնություններով, հիմնում եյին տեղերում իրենց գրասենյակները (ֆակտորիաները), նշանակում եյին իրենց կողմից նահանգապետներ, կառավարիչներ, և այլն: Կողոպուտներին զուգընթաց կուտակման մի զորեղ աղբյուրն եր նաև նեգրերի վաճառքը: Տարեկան 300 հազար հոգու չափ նեգրեր եյին ներմուծվում: Նկատի առնելով, վոր նեգրերի վաճառքը մի բացառիկ ձեռնտու գործ է, անգլիական կառավարությունը XVIII դարի սկզբին, Ֆրանսիայի հետ մղած պատերազմի հետևանքով, ձեռք բերեց իր յերկրի առևտրականների համար նեգրեր վաճառելու մոնոպոլիան, վորը առաջներում պատկանում եր սպանացիներին, հոլանդացիներին, ֆրանսիացիներին (այսպես կոչված «ասսյենտո»):

«Ինչպես մեքենաներն ու վարկը, այնպես էլ ստրկությունը բուրժուական արդյունաբերության հիմնաքարն է հանդիսանում. առանց ստրկության չեր կարող լինել բամբակ, առանց բամբակի էլ անկարելի բան է ժամանակակից արդյունաբերությունը. ստրկությունն եր, վոր նշանակություն ընձեռեց ժամանակակից գաղութներին, գաղութներն էլ ստեղծեցին համաշխարհային առևտուրը, իսկ համաշխարհային առևտուրն անհրաժեշտ նախապայման է հանդիսանում խոշոր արդյունաբերության համար» (Մարքս):

Ստրկավաճառության հիման վրա յեր, վոր բարգավաճեցին Լիվերպուլ ու Բոստոն քաղաքները, վորոնք մետաղե իրեր եյին արտահանում Արևմտյան Աֆրիկա՝ նեգրերով փոխարինելու այն: Այստեղից նեգրերին տանում եյին Բրազիլիայի և Արևմտյան Հնդկաստանի պլանտացիաները: Նեգրերի դիմաց ստացած ապրանքները ներմուծում եյին Անգլիա: Նեգրերին աշխատեցնում եյին՝ բամբակի, հացի, ծխախոտի, սրճի, շաքարեղեգնի և բրնձի պլանտացիաներում: Յերկու տարվա ընթացքում սովորաբար հանում եյին գնված ստրկի ծախսը:

Մեծ ոգուտ եր բերում գաղութային առևտուրը. նրանից ստացած շահույթը հասնում եր 500%-ից և դեռ ավելի: Խոշոր գումարներ եյին վաստակում առևտրականները թե՛ այն դեպքում, յերբ գաղութային ապրանքներ եյին բերում, վաճառում յեվրոպական շուկաներում, և թե այն ժամանակ, յերբ յեվրոպական ապրանքներ եյին արտահանում: Վաճառականները, զոռով թե խաբելով, տեղացիների վզին եյին փաթաթում զանազան չխկչխկան, զիզի-պիզի բաներ, հաճախ անպիտանացած խլամ՝ ստիպելով բնիկներին այդ բաների փոխարեն նրանց տալ իրենց թանկարժեք իրերը: Հուդսոնյան ծոցի ընկերությունը XVIII դարի սկզբներին գաղութներում ապրանքներ եր «վաճառում»՝ 2000% չափ շահ ստանալով:

Այդ ամբողջ սիստեմն ոգտվում է պետական իշխանությունից, այսինքն խտացրած ու կազմակերպված բռնությունից, արտադրության ֆեոդալական յեղանակի՝ կապիտալիստականի վերածելու պրոցեսը դյու-

բացնելու և նրա (այդ պրոցեսի) անցողիկ սաղիկները կրճատելու համար։ Բռնությունը տատմայրն է հանդիսանում ամեն մի հին հասարակության համար, յերբ սա հղի յե նորով» (Մարքս)։

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Յեվրոպայում, մանավանդ Նիդերլանդիայում ծավալվող բրդի արտադրությունը բրդի մեծ պահանջ առաջացրեց,—հատկապես անգլիական բրդի, վորն հայտնի յեր իր բարձր վորակով։

Բրդի գինը մի քանի անգամով բարձրացավ։ Այդ հանգամանքը դրդեց հողատերերին ընդարձակելու իրանց արոտատեղերը վարելահողերի հաշվին, այդ նպատակով նրանք աշխատում եյին իրենց կալվածները կլորացնել՝ վերացնելով հողաշերտերի ցրվածությունը և ցանկապատելով իրենց հողերը։ Գյուղատնտեսական մթերքների բարձր գների շնորհիվ, լորդերի շրջանում ծայր առավ սեփական տնտեսությունը խոշորացնելու ձգտումը,—մի ձգտում, վոր հարկադրում եր լորդերին հողերը «մաքրելու» գյուղացիներից։ Արոտատեղային տնտեսության անցնելը կործանարար յեղավ գյուղացիների համար. դրա հետևանքով եր, վոր նրանք հողազուրկ դարձան։ Գյուղի քայքայման հենց սկզբնական տարիների ժամանակակից, XVI դարու անգլիական գրող Թոմաս Մորն իր «Ուտոպիա» գրքում նկարագրում է այն, թե ինչպես «վոչխարները վտարում եյին գյուղացիներին իրենց տարիներով նստած վայրերից». նա գրում է, վոր «վոչխարներն այնքան շատակեր ու անզուսպ են դարձել, վոր սկսել են մարդկանց լափել և դաշտերը, տներն ու քաղաքներն ամայացնել ու ավերել»։ «Ազնվականները» «հողի հետ են հավասարեցնում տներն ու նույնիսկ ամբողջ գյուղերը. ձեռք չեն տալիս միայն յեկեղեցիներին, այն էլ նրա համար, վոր նրանց մեջ գոմեր չլինեն վոչխարների համար»։ Հողերի ցանկապատումը, վոր սկսվեց դեռևս XV դարում, փաստորեն գյուղացիներին կողոպտել եր նշանակում, վորովհետև բաց արոտավայրերի սիստեմը գյուղացիական տնտեսության համար անհրաժեշտ նախապայման եր հանդիսանում։ Կալվածատերերի համար այնքան էլ դժվար չեր արտաքսել կոպիհոլդերներին և կոտտիջերներին, քանի վոր սրանց գրաված հողը համարվում եր կալվածատիրական, իսկ այդպես վարվել ֆրիհոլդերների հետ, սեփականատեր–գյուղացիների հետ—դա արդեն ավելի բարդ խնդիր եր։ Սակայն այստեղ հողատերերին ոգնության է գալիս պարլամենտը, վորը և հենց նրանց շահերն արտահայտող մարմին եր հանդիսանում։

Որենքով՝ կարելի յեր հողերի վերաբաժանում կատարել այն դեպքում միայն, յեթե պարլամենտը դրա վերաբերյալ վորոշում կայացներ. իսկ այդ բանի համար անհրաժեշտ եր պարլամենտ մտցնել համապատասխան մի բիլլ (որինագիծ), վոր ստորագրված լիներ ամբողջ բաժա-

նելի հողի 4/5 մասի տերերի կողմից. և վորովհետև գավառներում հողի մեծագույն մասը պատկանում եր լորդերին, վորոնց ձեռքումն եր կենտրոնացած նմանապես և տեղական ամբողջ իշխանությունը, ուստի հասկանալի յե, վոր նմանորինակ բիլլերը անպակաս պետք է լինեն։ 1700 թվից սկսած մինչև 1760 թիվը պարլամենտը 208 որենք է հրատարակել, վորոնցով նա կարգադրել է լիակատար կամ մասնակի ցանկապատման յենթարկել այսինչ կամ այնինչ շրջանների հողը՝ 312 հազար ակրից[1]) ավելի ընդհանուր տարածությամբ։ Իսկ 1760 թվից մինչև 1801 թիվը հրատարակվել են 2 հազար որենք, վորոնց ներգործությունը տարածվել է ավելի քան 3 միլիոն ակր հողի վրա։ Ցանկապատումը սաստկանում եր շնորհիվ այն բանի, վոր արագորեն աճող քաղաքների կողմից գյուղատնտեսական մթերքների պահանջը շատանում եր։ Շահավետ գործ եր դարձել վոչ միայն վոչխարաբուծությամբ, այլև հողագործությամբ զբաղվելը։ Մեծ պարգևներ եյին տրվում հացահատիկի արտահանման համար։ 1697 թվից մինչև 1767 թիվը տրված այդ որինակ պարգևների գումարը հասնում եր 6 միլիոն ֆունտ ստերլինգի։ Հացի որենքներ էլ հրատարակվեցին, վորոնց շնորհիվ Անգլիան մինչև XVIII դարի յերկրորդ կեսը նշանավոր չափով շարունակեց մնալ վորպես հացահատիկ արտահանող մի յերկիր։ Այդ իսկ ժամանակի մոտերքին եր, վոր անգլիական հողագործները սկսեցին հետաքրքրվել յերկրագործության վերաբերյալ խնդիրներով, բերքատվությունը բարձրացնելու, գյուղատնտեսությունն ինտենսիֆիկացիայի յենթարկելու գործով։ Ցանկապատվող դաշտերի մշտական ընդարձակումը հնարավորություն եր ընձեռում նորանոր ցանքսեր մտցնելու, սերմնափոխություն կիրառելու, արմատապտուղներ, և խոտաբույսեր (առվույտ և վիկ) մշակելու, մելիորատիվ (հողի բարելավման) աշխատանքներ կատարելու, այն է՝ ճահիճները չորացնելու, պարապուները մշակելու, դրենաժ սարքելու արհեստական պարարտացմանը՝ կրի և մերգելի միջոցով։ Պարլամենտական հատուկ որենքով արգելվեց հողը «վարել փայտե արորով» և վերացվեց կենդանի վոչխարներին վաղ գարնանը խուզելու բարբարոսական սովորույթը։ Յերկրի կապիտալիստական զարգացմանը նպաստում եր այն հանգամանքը, վոր ցանկապատման հետևանքով տեղի յեր ունենում գյուղացիական հողամասերի մի աննախընթաց մաքրումն։ Հողաչափական գործը կատարվում եր հատուկ կոմիսարների ղեկավարությամբ, վորոնց նշանակում եր պարլամենտը՝ լորդերից կախում ունեցող մարդկանց միջից։ Դրա հետևանքով էլ գյուղացիներից խլում եյին լավագույն հողերը, իսկ նրանց հատկացնում եյին ամենավատ հողամասերը, վորտեղ միանգամայն անկարելի

1) Ակրը Անգլիայում և Հյուսիսային Ամերիկայում ընդունված հողային չափ է =40,46 արե=0,4046 հեկտարի.

յեր անտեսություն վարել առանց առանձին արտատեղեր ունենալու։ Գյուղացիները քայքայվում էյին ու լքում իրենց հողերը։ Մարքսի ասելով՝ «ինքը՝ օրենքը մի գործիք է դառնում ժողովրդական հողերը թալանելու համար»։ Իբրև այդ թալանի պարլամենտական մի ձև՝ հանդես են գալիս «համայնական հողի ցանկապատման վերաբերյալ օրենքները», վորոնց միջոցով հողային սեփականատերերը իրենք իրենց են ընծայում գյուղացիական հողը «մասնավոր սեփականության» իրավունքով. այդ այն օրենքներն էյին, վոր յեկան սեփականազուրկ անելու գյուղացիությունը։

Թոշորացված կալվածները վեր էյին ածվում խոշոր կապիտալիստական ձեռնարկությունների, վորոնք շուկա էյին նետում բազմաթիվ գյուղատնտեսական մթերքներ։ Չնայած, վոր հող մշակող անձանց թիվը փոքրացել եր, բայց հողն այժմ նույնքան արդյունք եր տալիս, վորքան առաջ կամ նույնիսկ առաջվանից էլ դեռ ավելի...Մի կողմից գյուղատնտեսական վարձու բանվորները հարկադրվում էյին ավելի ինտենսիվ աշխատանք կատարելու, իսկ մյուս կողմից, քանի գնում, այնքան ավելի յեր կրճատվում արտադրության այն բնագավառը, վորտեղ նրանք հօգուտ իրենց էյին աշխատում։ Այսպիսով գյուղական բնակչության մի մասի ազատագրման հետ միասին ազատվում էյին նաև նրա առաջվա գոյության միջոցները. սրանք հիմա փոփոխական կապիտալի նյութական տարրն են դառնում։ Յերկրի և յերկնքի միջև ընկած, օդում կախված գյուղացին պետք է աշխատավարձի ձևով նրանց արժեքը գնի իր նոր տիրոջից, արդյունաբերական կապիտալից» (Մարքս)։

Այսպիսով՝ ֆեոդալական հողատիրությունն Անգլիայում հարմարվում եր նոր պայմաններին—անգլիական կալվածատերերը բուրժուական հողատերեր էյին դառնում։ Արտատնտեսական հարկադրանքի միջոցներով նրանք ճնշում էյին հավելյալ արդյունք և հավելյալ արժեք ստեղծող դասակարգերի դիմադրությունը, նրանք յեռանդուն կերպով «մաքրում էյին» հողը գյուղատնտեսական մանր արտադրողներից և «ազատում» էյին նրանց արտադրական միջոցներից՝ մեծացնելով վարձու բանվորների պահեստամասերը։

Սրանով ավարտվեց ագրարային հեղափոխությունը, վոր բռնի կերպով հողից զրկեց բանկչության մի ամբողջ խավը։ Արդեն իսկ XVIII դարի միջերքին գյուղացիությունը՝ վորպես դասակարգ՝ դադարեց գոյություն ունենալ։ Արդյունաբերական հեղաշրջման պատմաբան Տոյնբիի ասելով՝ XV դարի վերջին Անգլիայում գոյություն ունեյին 180 հազար ֆրիհոլդերներ, այնինչ դրանից հետո հարյուր տարի դեռևս չանցած՝ այն ժամանակվա պամֆլետիստները մանր սեփականատերերի վերաբերմամբ խոսում էյին վորպես փաստորեն չքացած յերևույթի մասին։ Առանձնապես պետք է նշել անգլիական պարլամենտի ձեռք առած միջոցները՝ գրավելու Իռլանդիայի հողերը։ Իռլանդիան իրենից ներկա-

Ցեվրոպական պետությունների քաղաքական կարգերը XVIII դ. (Ֆրանսիական մեծ հեղափոխության նախօրյակին)

յացնում եր մի յերկիր, վորի տերն ու տիրակալն անգլիական կալվածատերներն եյին: Այստեղ հողն ամբողջովին անցել եր անգլիական լենդլորդների ձեռքը, վորոնք այդ հողը մաս-մաս տալիս եյին Իրլանդիայի վարձակալներին չափազանց ծանր վարձակալական պայմաններով («վարձակալություն չեր, տանջանք եր»): Խոշոր վարձակալներն իրենց կողմից վարձակալած հողն իրենց հերթին վերցնում-տալիս եյին մանր հողամասերով և բավական բարձր գնով գյուղացիության չքավոր մասին: Ցեվ յեթե իրլանդացիք հաճախակի ապստամբություններ եյին բարձրացնում անգլիական կեղեքիչների դեմ—ապա դրա պատճառը Իրլանդիայի հենց այդ ծանր դրությունն եր: Անգլիացիք անողոքաբար ճնշում եյին այդ ապստամբությունները: Մի առանձին խստությամբ ճնշվեց «Միացյալ իրլանդացոց» ընկերության ձեռնարկած ապստամբությունը, վոր բռնկվեց 1798 թվին այն պատերազմի կապակցությամբ, վոր Անգլիան մղում եր հեղափոխական Ֆրանսիայի դեմ: Վերացնելով Իրլանդիայի ինքնավարությունը՝ անգլիացիք բռնի կերպով միացրին Իրլանդիան Անգլիայի հետ, մտցնելով նրան «Մեծ Բրիտանիայի և Իրլանդիայի Միացյալ Թագավորության» կազմի մեջ (1801) թ.):

Ագրարային հեղաշրջման հետևանքով՝ հողի ահագին տարածություններ անցան լենդլորդների,—խոշոր հողային սեփականատերերի,—տիրապետության ներքո: Հաճախ այդ կալվածներն իրենց տերերը վարձակալության եյին տալիս կարճ ժամկետներով կապիտալիստներին, վորոնք խոշոր միջոցներ եյին ներդրում ռացիոնալ տնտեսության կազմակերպման գործում: Այդ ֆերմերներն, իհարկե, շատ քիչ եյին նմանվում նախկին յոմեններին և կոպիհոլդերներին: Նրանցից շատերն առևտրականներ եյին, վորոնք հարստացել եյին սպեկուլացիայի, արտաքին առևտրի և գաղութային ավարառության շնորհիվ: Սրանք «նոր կուլտուրայի» կրողներն եյին, հողագործության ինտենսիֆիկացիայի կողմնակիցները, ախոռային անասնաբուծության ջատագովները, անգլիական անասունների հռչակված տեսակների ստեղծողները: Անցնելով տնտեսության ավելի կատարելագործված ձևերին և դրա հետ միասին կիրառելով բատրակների ու քայքայված գյուղացիների վարձու բանվորական ուժը՝ ձեռնարկատերերն ահագին շահույթ եյին վաստակում: Գյուղացիության եքսպրոպրիացիան ստեղծեց բանվորական ուժի բազմաթիվ կադրեր, իսկ վոչխարաբուծության և հողագործության զարգացումը շատացրեց արդյունաբերության համար անհրաժեշտ հումքի պաշարը: Սեփականությունից և արտադրական միջոցներից զրկված, պրոլետարականացած գյուղացիությունը մեծ մասամբ քաղաք եր գնում և այնտեղ ծավալվող արդյունաբերությանը եժան բանվորական ձեռներ մատակարարում—մի հանգամանք, վորն այնպիսի պայմաններում, յերբ կապիտալի վիթխարի կուտակում եր կատարվել, յերբ հումքի մեծ պաշար եր գոյացել, յերբ վաճառքի համար հսկայական շուկաներ եյին

բացվել և յերբ յերկրի բնական պայմաններն էլ բավականին բարենպաստ եյին—հիմնական նախադրյալ է հանդիսանում արդյունաբերության ասպարեզում տեղի ունեցած խոշոր փոփոխությունների համար, այն է՝ արդյունաբերական հեղաշրջման համար:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

Այսպես ուրեմն՝ հրապարակում արդեն պատրաստ կային այն բոլոր ավյալները, վորոնք անհրաժեշտ եյին արդյունաբերության վերելքի համար, այն է՝ կապիտալ, աշխատանք և շուկա: Այժմ հարց եր ծագում արտադրության մեքենայացման մասին—մեքենայացում, վոր անհրաժեշտ եր ապրանքների հարաճուն պահանջը բավարարելու համար: Ահա այդ մեքենայացումն եր, վոր գլուխ բերվեց բամբակագործական արդյունաբերության ասպարեզում, մի ճյուղում, վոր Հնդկաստանից եյին ընդօրինակել: Այնտեղից բերված բամբակյա գործվածքները մի անգամից տարածվեցին լայնորեն: Նրանց արտադրելու գործը խոշորապես շահույթ եր խոստանում կապիտալիստներին: Ցեվ ահա արագորեն հիմնվեցին բամբակագործության մանուֆակտուրաներ—Ռիչմոնդում, Եդինբուրգում և այլ տեղերում: Չթի այդքան ուժեղ չափով տարածվելը մեծ խռովություն է առաջ բերում մահուդագործների շրջանում.—չե՞ վոր չիթը հրապարակից վտարում եր հին բրդի արդյունաբերությունը: Բրդեղեն արտադրող ջուլհակները փողոցներում հարձակվում եյին չթե գործվածքներ հագած անցորդների վրա, նրանց վրայից պոկում և այրում եյին այն, չթեղեն գործածողների վրա թունդ ողի եյին թափում: Չնայած դրան՝ բամբակյա գործվածքներն իրենց բացառիկ եժանության շնորհիվ գործածական դարձան լայն մասսաների շրջանում և հեշտությամբ նվաճեցին շուկան: Ձեռքով կատարվող արտադրությունն այլևս չեր բավարարում շուկայի հսկայական պահանջները: Ժամանակն եր տեխնիկական հեղաշրջում կատարելու, մեքենա հնարելու: «Խոշոր մեքենային արդյունաբերությունն է միայն, վոր ամուր հիմք է ընձեռում կապիտալիստական հողագործությանը, արմատականորեն սեփականազուրկ է անում գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը և իր վերջավորությանն է հասցնում հողագործության անջատումը տնային գյուղական արդյունաբերությունից՝ պոկելով վերջինիս արմատները—մանելն ու գործելը: Ցեվ, հետևապես՝ միայն նա յե, վոր արդյունաբերական կապիտալի համար նվաճում է ամբողջ ներքին շուկան» (Մարքս):

Առաջին գյուտը, վոր յեկավ արագացնելու արտադրության պրոցեսը,—թռչող մաքոքի մուծումն եր մանածագործության մեջ. այդ մաքոքը, վոր հնարեց ժամագործ Կեյը 1733 թվին, յերկու անգամ ավելացրեց կտորեղենի արտադրանքը: Այդ նորամուծությունից մանածի պահանջը շատացավ. խիստ զգալի դարձավ հումքի պակասը մանագործական մանուֆակտուրաներում: «Մանածի սով» դրդեց գյուտարարներին հնարներ

գտնել՝ մանածի արտադրությունն արագացնելու համար: 1765 թվին ջուլհակ և ատաղձագործ Հարգրիվսը ճախարակը փոխարինեց ձեռքի մեքենայով, վորի «Ջեննի» անունը տվեց՝ ի պատիվ յուր աղջկա: Այդ մեքենայով մի բանվոր շարժողության մեջ էր դնում մի քանի վոլիկներ (առանցքներ) և միաժամանակ ութ թել էր պատրաստում: Մանվածքի արտադրությունը հիմա 200 անգամ արագացավ: Հետագայում մեքենայի վրա սարքում, բանեցնում էին 10 և ավելի իլիկ: Նախկին սափրիչ Արկրայթը 1769 թվին մի մեքենա հնարեց, վոր շարժվում էր ջրի ուժով («Վատեր մաշինա»—ջրի մեքենա): Նա առաջինն էր, վոր մի մեծ բամբակամանածային գործարան բացեց՝ մի քանի հարյուր բանվորներով: «Ջեննի» մեքենայով բարակ թել էր ստացվում, իսկ «վատեր-մաշինայի» միջոցով՝ հաստ: 1779 թվին մանող Կրոմպտոնը՝ օգտագործելով ու կատարելագործելով Հարգրիվսի և Արկրայթի գյուտերը, շինեց մի նոր, մանելու մեքենա, «մյուլ-ջեննի» կոչված՝ (խառն կառուցվածքով մեքենա), վորը մեծ արագությամբ էր պատրաստում մանվածքը և ամուր ու բարակ թել էր արտադրում: Այժմ արդեն ջուլհակները չէին կարողանում հասցնել,—այնքան գլուխները խառն էր, և ահա մի իսկական «ջուլհակային սով» է սկսվում, վոր և վերանում է, յերբ քահանա Կարտրայթը 1785 թվին հնարում է մի մեխանիկական մանածագործային հաստոց: Այդ գյուտի շնորհիվ՝ արտադրության արագությունն ավելացավ քառասուն անգամ:

Առաջին մեքենաները շարժվում էին բանվորների, կենդանիների կամ ջրի ուժով: Ջրի ուժը. իբրև շարժիչ՝ կիրառելու գործը խոշոր ազդեցություն ունեցավ արտադրության բարձրացման վրա: Գետերի ափերին սկսեցին կառուցել բազմահարկանի գործարաններ: Սակայն այն հանգամանքը, վոր արտադրությունը մշտապես կապված էր մնում մի վորոշ տեղում, վոր նա կախում ուներ բնական պայմաններից և յենթակա յեր կլիմայական ազդեցություններին,—այդ հանգամանքը սահմանափակ էր դարձնում արտադրական հնարավորությունները: Գիտնական քիմիկոս Ջեմս Ուատտի 1765 թվին հնարած շոգեշարժիչն էր միայն, վոր վճռական հեղաշրջում կատարեց տեխնիկայի և արդյունաբերության ասպարեզում: Ուատտն անջատեց պաղիչ մեքենան գլանից. մթնոլորտի ոդը չէր, վոր դես ու դեն էր շարժում մխոցը, այլ շոգու ուժն էր. այլևս կարիք չկար պաղեցնելու և ապա նորից տաքացնելու գլանը: Ուատտի շոգեմեքենան առաջին անգամ գործի դրվեց 1774 թվին՝ Բուլտոնի գործարանում՝ Սոխոյում, Բիրմինհեմի մոտ:

Մեքենայի տեխնիկայի զարգացումով հեղաշրջում կատարվեց նաև մետաղագործական արդյունաբերության մեջ: Ձեռնարկությունների սարքավորումը մեքենաներով և շարժիչներով մի անսովոր չափով շատացրեց չուգունի, յերկաթի և պողպատի պահանջը: Քարածխի և յերկաթի հանքերով հարուստ Անգլիայում մինչև XVIII դարի վերջը յերկաթի հանքանյութը հալում էին փայտածխի միջոցով: Դրանից վտանգ էր առաջանում՝ Անգլիան անտառազուրկ յերկիր դարձնելու: Պարլամենտն օրենքներ էր հրատարակում և արգելում էր անտառները կտրատել, բայց Անգլիայում դեռ չէին կարողանում յերկաթը հալել քարածխի օգնությամբ: Ստիպված՝ յերկաթն ու չուգունը տանում էին Ռուսաստանից և Շվեդիայից: Նոր միայն XVIII դարի 80-ական թվականներին սկսեցին գործածել կոքսը, ծծմբի հետ խառնած քարածուխը, փայտածխի փոխարեն: Նույն այդ ժամանակին է վերաբերում և պուդլինգացման յեղանակի կիրառումը, վորի միջոցով կոքսի օգնությամբ հալած յերկաթը, վորից միայն չուգուն էր ստացվում, փափուկ, կռելի յերկաթ էին դարձնում հատուկ (պուդլինգային) վառարանում, վոր սովորական բոցատու վառարանի տեսքն էր ներկայացնում իրենից: Հենց այստեղ էլ պետք է հիշել և այն նոր յեղանակի մասին, վորով բարձր վորակի պողպատ էին արտադրում (այսպես կոչված տիգելի պողպատ—հալոցի պողպատ): 1788 թվին Յորկշիրում կառուցվեց առաջին յերկաթե կամուրջը, իսկ 1790 թվին գտան պողպատ ձուլելու յեղանակը: Մեքենաների համար անհրաժեշտ յերկաթե պատվանդանների գործածության, գազային լուսավորության մուծման և, վերջապես, առաջին յերկաթուղիների բացման շնորհիվ՝ յերկաթի պահանջը մի քանի անգամ ավելացավ: Այդ իսկ ժամանակ էլ Ուատտը հնարեց շոգեմուրճը, վոր յեկավ փոխարինելու ձեռքի մուրճը: Ութ տարվա ընթացքում յերկաթի արտադրությունը յերկու անգամ մեծացավ: Արագ թափով սկսեց զարգանալ մեքենաշինության գործը: Յերկաթի սառը մշակման ժամանակ գործածվող հաստոցները շարունակ խոշորացնում էին, ավելի զորեղ էին դարձնում և արագ կատարելագործում էին:

Ահա թե ինչ է պատմում ժամանակակիցներից մեկն այն տենդի մասին, վորով բռնված էին գործարանատերերը. «Հենց վոր շոգու գործադրելուն անցան՝ գործարանատերերի նոր ցեղը շտապեց գործարաններ կառուցել ամենուրեք, ուր վոր էլ մի փոքր հնարավորություն կար, առանց յերկար մտածելու տեղի ընտրության մասին. Հնացած կալվածներն ու սարայները, ամեն մի բարձիթող արված գյուղական շենքն իսկույն սարք ու կարգի էին բերում, հին պատերին լուսամուտներ անցկացնում և ամեն ինչ հարմարեցնում էին նոր գործանոցների կարիքներին»: Ուատի հնարած շարժիչի կիրառումը հսկայական նշանակություն ուներ արդյունաբերության համար: Արդյունաբերական հեղաշրջման պատմաբաններից մեկի ասելով՝ «Ջրի ուժի փոխարեն շոգու ուժը մուծելուց հետո միայն գործարանները հնարավորություն ստացան կենտրոնանալու այն քաղաքներում և վայրերում, վորտեղ շոգու արտադրության համար անհրաժեշտ և բավականաչափ ջուր և ածուխ կարելի յեր ճարել: Շոգեմեքենան գործարանային քաղաքների մայրն է»:

Խոշոր շարժիչ մեխանիզմը, ինչպես Մարքսն է ասում, ինքը «կարիք ունի ավելի զորեղ շարժիչ ուժի, քան մարդկայինն է, վորպեսզի իր իսկ սեփական դիմադրությունը հաղթահարելի. մենք չենք խոսում այն բանի մասին, վոր մարդս մի չափազանց անկատար միջոց է ներկայացնում իրենից՝ միակերպ ու անընդհատ շարժում արտադրելու համար: Մի անգամ վոր մենք յենթադրեցինք, վոր մարդս գործում է արդեն լոկ վորպես պարզ շարժիչ ուժ և վոր, հետևաբար, նրա գործիքի տեղը բանող մեքենան է բռնել,—ուստի բնության ուժերը կարող են փոխարինել նրան նաև վորպես շարժիչ ուժ:

ԱՆԳԼԻԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Արդյունաբերական հեղաշրջումը խորապես անդրադարձավ Անգլիայի ամբողջ կյանքի վրա: Գյուղական բներից դուրս մղված բնակչությունը նետվեց քաղաքներն ու հարյուրավոր նոր հիմնվող գործարանները լցրեց: Քարածուխ բանեցնող արդյունաբերությունը ծնունդ է առնում հենց նրա հանքատեղերի մոտ. այդ շրջաններում յեղած փոքրիկ բնակավայրերը շուտով խոշոր քաղաքներ են դառնում: Անգլիայի բնակչությունը պտղաբեր հարավ-արևելքից տեղափոխվում է քարածխի շերտերով հարուստ հյուսիս-արևմուտք: Լիվերպուլի մոտերքում, վորով Անգլիա յեր ներմուծվում բամբակ, զարգացավ ու ծավալվեց Լանկաշիր խոշորագույն կենտրոն Մանչեստրով հանդերձ: Մետաղագործական արդյունաբերության կենտրոն դարձավ Բիրմինհեմը: Բրդի արդյունաբերությունն էլ կենտրոնացավ Լիդսում: Գործարանային յերկրամասեր դարձան նմանապես և Շոտլանդիան ու Հարավային Ուելսը:

Ներքին առևտրի պետքերի համար բարվոքվեցին հաղորդակցության ճանապարհները. հասարակ, գրունտային ճանապարհները փոխարինվեցին խճուղիներով, շոսեներով. բազմաթիվ նավագնաց գետեր իրար միացրին ջրանցքների մի ամբողջ ցանցով, վորի միջոցով կենտրոնը կապվեց այնպիսի նավահանգիստների հետ, վորպիսին են Լոնդոնը, Լիվերպուլը, Հուլլը և Բրիստոլը:

Մեքենային տեխնիկայի հետևանքով՝ չափազանց ընդարձակվեց արտադրությունը և էժանացան ապրանքները: Տնայնագործները, վորոնք շարունակում եյին աշխատել արդեն հնացած գործիքներով, անկարող եյին այլևս մրցման դիմանալ գործարանային արտադրության հանդեպ: Բանվորական որվա յերկարացումն անգամ չեր կարող նրանց փրկել կատարյալ քայքայումից. վերջիվերջո նրանք հարկադրված յեղան աշխատանք վորոնելու իրենց բախտավոր մրցակից-գործարանատերերի մոտ՝ խտացնելով պրոլետարիատի շարքերը: Էնգելսը հետևյալ կերպով է նկարագրում Անգլիայում կատարված արդյունաբերական հեղաշրջման հետևանքները.

«Արդյունաբերության արագ զարգացումը բանվորական ձեռների պահանջ ստեղծեց. աշխատավարձը գնալով բարձրանում էր, և դրա հետևանքով հողագործական շրջաններից ամբոխներով քաղաքներ եյին գալիս բանվորներ: Մի չտեսնված արագությամբ աճում եր բնակչությունը և համարյա ամբողջ աճեցողությունը բանվոր դասակարգին եր վերաբերում: Դրան պետք է ավելացնել և այն, վոր XVIII դարի սկզբից միայն Իռլանդիայում վերահաստատվեց կարգ ու կանոնը, այստեղ ևս բնակչությունը, վոր նախկին խռովությունների ժամանակ անգլիացիների բարբարոսությունների շնորհիվ նվազել եր, սկսել եր այժմ արագ շատանալ, մանավանդ այն պահից սկսած, յերբ ծաղկող արդյունաբերությունն իռլանդացիներից շատերին դեպի Անգլիա սկսեց գրավել: Այսպես առաջացան Մեծ Բրիտանիայի գործարանային և առևտրական խոշոր քաղաքները, վորտեղ բնակչության առնվազն յերեք քառորդը պատկանում է բանվոր դասակարգին, իսկ մանր բուրժուազիան բաղկացած է լոկ խանութպաններից և փոքրաթիվ արհեստավորներից:

Յեվ յեթե ժամանակակից արդյունաբերությունն այսչափ ծավալվել է, դա միայն այն բանի շնորհիվ է, վոր նա գործիքները փոխարինել է մեքենաներով, արհեստանոցները՝ գործարաններով և, դրա հետևանքով՝ միջին դասակարգի աշխատավորական տարրերը նա վեր է ածել բանվոր պրոլետարիատի, իսկ նախկին խոշոր առևտրականներին՝ գործարանատերերի. հետո նա դուրս է մղել մանր բուրժուազիային և ամբողջ բնակչությունը բաժանել է յերկու իրար հակադիր բանակի—բանվորների և կապիտալիստների:

Ժամանակակից հասարակության այս յերկու հիմնական դասակարգերի—պրոլետարիատի և բուրժուազիայի—պայքարն է կազմում ամբողջ հետագա պատմական դարաշրջանի բովանդակությունը:

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԻԴԵՈԼՈԳԻԱՆ

Առևտրա-արդյունաբերական դասակարգն Անգլիայում, վորը դերիշխող տնտեսական դիրք եր արագորեն գրավել, XVIII դարի վերջին, սակայն, դեռևս մուտք չեր գործել պարլամենտ: Պետությունն Անգլիայում առաջվա նման առաջնորդվում եր հողատերերի շահերով և ծանր կապանքներով նեղում եր առևտրա-արդյունաբերական գործունեությունը: Կառավարության՝ նման քաղաքականությունը վոչ միայն տնտեսական վնաս եր հասցնում բուրժուազիային, այլև հակասում եր սրա մեջ խորացած այն համոզմունքին, վոր ընդհանուր շահերի տեսակետից անհրաժեշտ է լիակատար ազատություն տալ արդյունաբերողներին և առևտրականներին՝ իրենց գործունեությունը ծավալելու: Ժամանակակիցներին թվում եր, վոր ընդամենը մի քանի տասնամյակում կատարված խոշոր փոփոխություններն արդյունք են առանձին անհատների էներգիայի և ձեռներեցության. ազատ մրցման պայմաններում թո՛ղ վո-

մանք հարստանան, վոմանք էլ թո՛ղ կործանվեն․ ազատ մրցման շնորհիվ է, վոր մարդիկ առաջադիմություն են կատարում և հարստություն ստեղծում։ Տնտեսական հարաբերությունների լիակատար ազատության բուրժուական իդեալն իր ամենալրիվ արտահայտությունը գտել է «քաղաքատնտեսության հայրը» համարվող Ադամ Սմիթի (1723–1790) յերկերում։ «Ժողովուրդների հարստության մասին» կոչված իր գրքում նա պնդում է, վոր տնտեսական զարգացման հիմքը, անձնական շահագրգռվածությունն է, վոր մղում է մարդկանց դեպի առողջարար մրցումը։ Յուրաքանչյուր վոք ինքնուրույն կերպով շատ լավ կարողանում է ընտրել իր համար ամենաշահավետ գործունեությունը, իսկ դա տանում է դեպի ընդհանուրի բարեկեցությունը։ Այստեղից Ադամ Սմիթն անում է այն յեզրակացությունը, վոր վոչ մի խնամակալություն չպետք է արվի պետության կողմից, մանավանդ փոխանակության ասպարեզում։ Ապա նա հաստատում էր, վոր բոլոր հարստությունների աղբյուրը վերջին հաշվով հանդիսանում է մարդկային աշխատանքը, վորն ամենից ավելի արտադրողական է դառնում մասնագիտացման դեպքում։ Ազատ առևտրի իդեալը, վորն այդքան հստակորեն ձևակերպված է Ադամ Սմիթի կողմից, հետագայում դարձավ «ֆրիտրեդերականություն» կոչված շարժման հիմքը (այդ խոսքն անգլիական «ֆրի տրեդ» բառերից է, վոր նշանակում են ազատ փոխանակություն)։ Այնուհետև՝ անգլիական բուրժուազիային մնում էր մուտք գործել պարլամենտ, գլուխ բերելու համար իր իդեալների կենսագործումն օրենսդրական ճանապարհով։

Կապիտալիզմի զարգացման ուղեկից էր գյուղացիական և բանվորական մասսաների աննախընթաց աղքատացումն ու գործազրկության աճումը։ Այդ յերևույթի անխուսափելիությունը պաշտպանելու յելավ անգլիական տնտեսագետ Ռոբերտ Մալթուսը (1766—1834)։ Իր «Մի փորձ՝ ազգաբնակչության օրենքի վերաբերյալ» գրքում, վոր մեծ հռչակ ստացավ բուրժուական աշխարհում, Մալթուսը ձգտում էր ապացուցել, վոր ժողովրդական աղքատությունը տվյալ հասարակակարգի արդյունքը չէ բնավ, այլ նա կախված է բացառապես հենց իրենց աղքատներից և հանդիսանում է բնության «անփոփոխ և հավիտենական» օրենքը։ Կապիտալիզմը մեղք չունի, վոր աղքատություն է առաջանում—հայտարարում էր Մալթուսը—մարդիկ են մեղավոր, վոր այնքան արագ են բազմանում, վոր այդ պրոցեսի հետևից չի հասնում գոյության միջոցների աճումը։ Բնակչությունը (ծնունդը) աճում է յերկրաչափական առաջատվությամբ (1, 2, 4, 8, 16 և այլն), այնինչ գոյության միջոցներն ավելանում են լավագույն դեպքում թվաբանական առաջատվությամբ (1,2,3,4,5,6, և այլն)։ Այդ անհամապատասխանությունը մարդիկ կարող են վերացնել մի շարք կանխարգել միջոցներով միայն, ժուժկալ կյանք վարելով, չափ ճանաչելով վորդեծնության, սեռական սիրո և այլ խնդիրներում․ այլապես՝ անխուսափելի յեն պատերազմները, հիվան-



Արդյունաբերական Անգլիան XVIII դարի յերկրորդ կեսում

դությունները, համաճարակները և այլն, վորոնք գալու յեն խախտված հավասարակշռությունը վերականգնելու՝ մարդկության արհեստական կրճատման միջոցով։ Մալթուսի ասածից դուրս է գալիս, վոր աղքատությունը նրանից է առաջ գալիս, վոր մարդիկ իրենց չեն չափավորում, իրենց հեռու չեն պահում վաղ ամուսնությունից և սեռական կյանքից․ հետևաբար, սոցիալական չարիքների մեջ մեղավոր են վոչ թե կապի

տալիսները, այլ հենց իրենք՝ աղքատները, վոր գերբնակչություն են ստեղծում: Ժուժկալություն քարոզելով չքավորներին՝ Մալթուսը հարուստներին էր վերապահում սերը խինդը, վորդեծնության յերջանկությունը, կյանքի վայելքները:

Մալթուսի թեորիան (մալթուսականությունը) պետք է բանվորներին ներշնչեր այն միտքը, վոր միակ յելքը նրանց ծանր դրությունից վոչ թե քաղաքական պայքարն է, վոչ թե կապիտալիստների դեմ կռվելն է, վոչ թե գործադուլներն են, այլ ասկետիզմն է, ժուժկալողությունը:

Մարքսը հերքեց այդ բուրժուական տեսությունը: Նա ապացուցեց, վոր բանվորների աղքատ վիճակը ծնունդ է առնում կապիտալիզմի շնորհիվ, վոր նրանց աղքատության արմատն այն է, վոր բանվորի կատարած աշխատանքի արդյունքը ստանում է վոչ թե ինքը՝ բանվորը, այլ կապիտալիստը, վոր այդ արդյունքից մի մասն է միայն տալիս բանվորներին՝ իբրև աշխատավարձ, իսկ մնացյալ մասն ինքն է վերցնում, վորպես հավելյալ արժեք, և վոր կապիտալիզմին ուղեկցող արդյունաբերական ճգնաժամները շատացնում են գործազուրկների զանգվածները և սաստկացնում է նրանց աղքատությունը:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Անգլիայի ամերիկական գաղութները XVIII դարի առաջին կեսին

XVIII դարի մոտերքին էր, վոր անգլիացիները սկսեցին գաղթել Հյուսիսային Ամերիկա և այնտեղ բնակություն հաստատել: Առաջին գաղթողները նրանք էյին, վորոնք իրենց հայրենիքում յենթարկվել էյին քաղաքական կամ կրոնական հալածանքների. Նման դեպքերով հարուստ էր Անգլիայի XVIII դարի պատմությունը: Հյուսիսային Ամերիկա գալով՝ անգլիացիները գտան այստեղ բարեխառն կլիմա, լայնածավալ տափաստաններ, կուսական անտառներ, նավարկելի գետեր, ջրառատ լճեր (Միսսիսիպի և Ս. Լավրենտիոսի գետերը, հյուսիսային լճերի սիստեմը): Հյուսիսային Ամերիկայի արևելյան ափը կտրտված է բազմաթիվ ծովախորշերով ու նավահանգիստներով, իսկ նրա ընդերքն առատ է յերկաթով, քարածխով և այլ հանածոներով: Անգլիական գաղթականներն այս յերկրում հանդիպեցին միայն բավական նոսր, կիսաթափառական մի բնակչության (հնդիկներին)՝ տրոհված՝ մի շարք իրար հետ թշնամացած ցեղերի, վորոնք այդ իսկ պատճառով էլ համեմատաբար թույլ դիմադրություն կարող էյին ցույց տալ նվաճողներին: Յեկվորները սկսեցին ոգտագործել յերկրի բոլոր բնական հարստությունները՝ զարկ տալով գաղութներում գյուղատնտեսության, արդյունաբերության և առևտրի զարգացմանը: Մի շարք ինքնուրույն, իրարից անկախ գաղութներ հիմնվեցին, վորոնցից կարևորագույնները հետևյալներն էյին՝ Նյու-Յորք, Մասսաչուսետս, Վիրգինիա, Պենսիլվանիա Հյուսիսային և Հարավային Կարոլինա, Գեորգիա:

Անգլիական կառավարությունը սկզբներում շատ սակավ էր մի-

ջամտում գաղութների ներքին գործերին: Գաղութները կառավարում էյին անգլիական կառավարությունից նշանակված նահանգապետները, վորոնց իշխանությունը սահմանափակված էր ժողովրդական ներկայացուցիչների խորհրդի կողմից: Գաղութների բնակչությունն աճում էր առասպելական արագությամբ (այն ժամանակվա հաշվով՝ յուրաքանչյուր 20 տարվա ընթացքում նա համարյա կրկնապատկվում էր). ընդարձակվում էր նաև գաղթականների բռնած տերրիտորիան: XVIII դարի կեսին Անգլիային հաջողվեց գրավել Ֆրանսիական գաղութները, վոր տեղավորված էյին Միսսիսիպի գետի յերկարությամբ (Լուիզիանան և ուրիշները), ինչպես նաև Կանադան:

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Անգլիան ձգտում էր իր ամերիկական գաղութները վերածելու շուկաների՝ ծառայեցնելու այն իր ապրանքների վաճառքին. Նա ձգտում էր իր իշխանության ներքո պահելու այդ գաղութները, վորպես հումքի աղբյուրներ, նրանց արդյունաբերական և առևտրական զարգացման հնարավորությունը սահմանափակելու և այդ յեղանակով ապահովելու իր սեփական արդյունաբերությունն ու առևտուրը մրցումից: Առևտրի և արդյունաբերության աճումը ամերիկական գաղութներում սկսեց մեծ վնաս հասցնել Անգլիայի շահերին: Նման իրողության հետ չկամեցավ հաշտվել Անգլիան և մի շարք որենքներ հրատարակեց, վորպեսզի ամերիկական գաղութներն անմիջական կախման մեջ դնի իրենից: Այսպես՝ այդ որենքների համաձայն գաղութները կարող էյին ստանալ անգլիական ապրանքներ միայն, հենց անգլիական նավերով բերված. իրենց հումքը (մորթեղեն, անտառներ, մետաղներ) նրանք կարող էյին արտահանել միմիայն Անգլիա. բացի այդ, արգելվեց գաղութներում հումքի արդյունագործական մշակումը: Այդօրինակ խնամակալությունն Անգլիայի կողմից գաղութների համար վիրավորեցուցիչ և ապորինի մի քայլ էր: Գաղութների տնտեսական պայքարն Անգլիայի դեմ սկզբում նրանով արտահայտվեց, վոր ուժեղացավ նրանց կոնտրաբանդային առևտուր (մաքսանենգություն» Արևմտյան Հնդկաստանի, Սպանիայի, Փորթուգալիայի և այլոց հետ. հետագայում այդ պայքարը շատ սուր բնույթ ստացավ: Անգլիան, վոր XVIII դարի կեսին՝ Ֆրանսիայի հետ մղած բազմաթիվ պատերազմների հետևանքով՝ ընկավ ֆինանսական դժվարին դրության մեջ, սկսեց ավելի ուժեղ ճնշել գաղութները: Սրանք պատասխանեցին նրանով, վոր բոյկոտի յենթարկեցին անգլիական ապրանքները: Իր հերթին Անգլիան, ի պատասխան այդ քայլին՝ ընդարձակեց նահանգապետների իշխանությունը և զորքեր ուղարկեց Հյուսիսային Ամերիկա: Անգլիայի դեմ պայքարելու համար գաղութները վորոշեցին միանալ իրար հետ: 1774 թվին Ֆիլադելֆիայում հրավիրվեց կոնտինենտալ համագումար՝ առանձին գաղութների ներկայացուցիչ-

ներից · այդ համագումարը փորձեց համաձայնության գալ Անգլիայի
հետ զիջումների միջոցով · բայց Անգլիան իր կողմից զիջումներ չարավ
և ռազմական ուժություն հայտարարեց գաղութներում՝ կարծելով, վոր
գաղութների խաղաղ բնակիչներն անկարող կլինեն դիմադրելու նրա կա-
նոնավոր զորքերին : Գաղութների համար մնում եր միակ մի ուղի-
հանուն անկախության պայքարելու ուղին : 1775 թվին Ֆիլադելֆիա-
յում հավաքվեց յերկրորդ համագումարը, վորը վորոշեց վերջնակա-
նապես խզել կապերն Անգլիայի հետ, բայց թողեց իր դրամը և չտապ
կարգով կազմակերպեց իր բանակը, վորի գլուխ նշանակվեց համագու-
մարի պատգամավորներից մեկը՝ Ջորջ Վաշինգտոնը : Անգլիայից ան-
ջատվելու դեմ եր հարավային գաղութների բուրժուազիան, վոր բամ-
բակ եր մատակարարում անգլիական արդյունաբերությանը : 1776 թվին
հանդիսավոր կերպով գաղութներն իրենց անկախ հայտարարեցին և
ընդունեցին «Անկախության դեկլարացիան» Անգլիայից անջատվելու
մասին . դեկլարացիան ազդարարում եր, վոր «բոլոր մարդիկ ի ծնե
հավասար են», ուստի նրանք լիակատար իրավունք ունեն տապալելու այն
կառավարությունները, վորոնք չարաշահումների և բռնությունների վրա
յեն հիմնված : Դրանով սկսվեց անկախության համար մղվող պատերազ-
մը, վոր տևեց մինչև 1783 թ. և վորի ժամանակ հաջողությունը թեք-
վում եր մերթ այս կողմ, մերթ՝ այն կողմ : Ապստամբածների դրու-
թյունը չափազանց ծանր եր, վորովհետև նրանք ստիպված եյին վարժ-
ված, կռիվներում կոփված անգլիական զորքերից պաշտպանվելու իրենց՝
հապճեպ հավաքված՝ պահակազորի ոգնությամբ : Չնայած դրան՝ գա-
ղութները կռվում եյին մեծագույն վոգևորությամբ և անմիջապես
կռվի դաշտերում սովորում ռազմական արվեստը : Այդ վոգևորությունը,
սակայն, համակել եր գլխավորապես շարքային զինվորական մասսա-
ները, վորոնք պատկանում եյին մանր առևտրականներին, ֆերմերներին
և արհեստավորներին : Մինչդեռ բուրժուազիան և հողատերերը՝ իրենց
առևտրական և արդյունաբերական գործերով կապված լինելով Անգլիա-
յի հետ՝ ամեն կերպ աշխատում եյին համաձայնության գալ վերջինիս
հետ և կասեցնել մասսաների հեղափոխական գրոհը : Ամբողջ Յեվրո-
պայի համակրանքն ապստամբածների կողմն եր . այդ համակրանքը
նրանով եր արտահայտվում, վոր հազարավոր կամավորներ եյին գա-
լիս գաղութներին ոգնության : Առանձնապես շատ կամավորներ եյին
գալիս Ֆրանսիայից, վորը ցանկանում եր իր բախտավոր մրցակցից
վրեժ առնել իր բազմիցս կրած անհաջողությունների համար : Ֆրանսի-
ական կամավորների շարքերում եր յերիտասարդ մարկիզ Լաֆայետը,
Ֆրանսիական մեծ հեղափոխության հետագա գործիչը և ապագա սոցիա-
լիստ–ուտոպիստ Սեն–Սիմոնը : Համառ կռվից հետո անգլիան հարկադր-
ված եր 1783 թվին ճանաչելու ամերիկյան գաղութների, կամ, ինչպես
նրանք կոչվեցին, շտատների (նահանգների) անկախությունը : Ամերիկական

գաղութների՝ իրենց ազատագրման համար մղած պատերազմը, ըստ Լենինի տված բնութագրության, «մեկն եր այն մեծ, իսկական ազատագրական, իսկական հեղափոխական պատերազմներից, վորոնք այնքան փոքրաթիվ են յեղել համեմատած այն բազմաթիվ թալանչիական պատերազմների, վորոնք առաջացել են...թագավորների, կալվածատերերի, կապիտալիստների իրար հետ կռվելուց՝ զավթած հողերի կամ թալանած շահույթների բաժանման շուրջը : Դա մի պատերազմ եր, վոր ամերիկական ժողովուրդը մղում եր ավազակ–անգլիացիների դեմ, վորոնք կեղեքում և գաղութային ստրկության մեջ եյին պահում Ամերիկան...»[1]) Այդ պատերազմը, վորի հետևանքով տնտեսապես ինքնուրույն մի հանրապետություն ստեղծվեց, խոշորագույն նշանակություն ունեցավ յեվրոպական յերկրների համար : XVIII դարում ամերիկական ազատագրական պատերազմը մի ահազանգ եր, վոր հնչեց Յեվրոպայի միջին դասակարգի հասցեյին», —գրում եր Մարքսը («Կապիտալի» I հատորի 1–ին հրատարակության նախաբանում) :

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ազատագրված գաղութների համար դժվար եր մշակել իրենց սահմանադրության հիմնական սկզբունքները, վորովհետև գաղութայինների շրջանում կային թե մի միասնական հզոր պետություն կազմելու կողմնակիցներ և թե առանձին նահանգների ինքնուրույնությունը պաշտպանողներ : 1789 թվին միայն վերջնականորեն մշակվեց «Միացյալ Նահանգներ» կոչված նորածագ պետության սահմանադրությունը : Այդ սահմանադրության համաձայն՝ նահանգներից յուրաքանչյուրը պահպանում եր իր ընտրովի հիմնարկությունները՝ տեղական գործերը վարելու համար : Կենտրոնական, համապետական հաստատությունը դարձավ Կոնգրեսը՝ կազմված յերկու պալատից, այն ե՝ սենատից, վորի մեջ մտնում եր յուրաքանչյուր նահանգից յերկերկու ներկայացուցիչ, և պատգամավորների պալատից, վորի անդամներն ընտրվում եյին յուրաքանչյուր նահանգի բնակչության քանակի համեմատությամբ : Սենատը ներկայացնելու յեր տարբեր նահանգների շահերը, իսկ պատգամավորների պալատը՝ ամբողջ պետության շահերը : Միացյալ Նահանգների գլուխ նշանակվեց պրեզիդենտը, վոր ընտրվում եր ընդհանուր ձայնատվությամբ՝ չորս տարով . նա յեր նշանակում և արձակում մինիստրներին՝ ըստ իր հայեցողության, կոնգրեսից անկախ : Առաջին անգամ պրեզիդենտ ընտրվեց ազատագրական կռվի ղեկավար Վաշինգտոնը :

Միացյալ Նահանգների այդ որինակ պետական կառուցվածքը, փոքրիկ փոփոխություններով, պահպանվում ե մինչև այժմ :

---

1) «Նամակ ամերիկական բանվորներին» 1918 թ.

ՀԻՆ ԿԱՐԳԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ

Անգլիան արդեն վայելում էր արդյունաբերական հեղաշրջման արդյունքները, մինչդեռ Ֆրանսիայում այդ ժամանակ դեռ նոր էր միայն այդ հեղաշրջումն սկսվում: XVIII դարի վերջին Ֆրանսիան գլխավորապես հողագործական յերկիր էր. ամբողջ բնակչության մոտ 90 %ապրում էր գյուղում. ընդամենը միայն յերկու քաղաքներ կային, վորոնցից յուրաքանչյուրը 100 հազարից ավելի բնակիչ ուներ. դա—Փարիզն էր և Լիոնը. սրանցից շատ ավելի փոքր էյին մնացյալ քաղաքները:

Տնտեսական բոլոր ճյուղերից ամենից ավելի շատ էր զարգանում արտաքին առևտուրը. նա անընդհատ աճում էր՝ չնայած, վոր Ֆրան-

Հին կարգերը Ֆրանսիայում (XVIII դ. ծաղրանկար)

սիան կորցրել էր իր գաղութներից շատերը. 1720 թվից սկսած մինչև 1789 թիվը նա գրեթե հինգ անգամ աճել էր: Այնպիսի նավահանգիստներ, ինչպես Մարսելն էր, Բորդոն և Նանտը, համաշխարհային առևտրական կենտրոններ դարձան: Ֆրանսիայի արտածումը հիմնված էր գլխավորապես գյուղատնտեսական մթերքների և փարթամության իրերի վրա: Իսկ ինչ վերաբերում է Ֆրանսիայի ներքին առևտրին, նա գտնվում էր չափազանց աննպաստ պայմաններում: Ամբողջ յերկիրը բաժանված էր մի շարք մարզերի, վորոնք իրարից անջատված էյին

մաքսային սահմաններով, մի հանգամանք, վոր խանգարում էր ապրանքների առաջ շարժվելուն՝ բարձրացնելով նրանց գինը: Համախակի անբերրիության շնորհիվ հատկապես նեղված էր հացի առևտուրը. կառավարությունը խստորեն կարգավորում էր այդ առևտուրը՝ սահմանելով հացի վաճառելու ժամանակն ու տեղը, հացի գինը, հացահատիկը կշռելու, փոխադրելու, թափելու համար գանձվող տուրքերի չափերը: Յերկրի սահմաններից դուրս հաց արտահանելը մեծ մասամբ արգելված էր: Այդ բոլոր միջոցներն այն հետևանքն էյին ունենում, վոր անբերրիության տարիներին հացի սպեկուլյացիա յեր սկսվում, իսկ դա բացասաբար էր անդրադառնում բնակչության վրա:

Արդյունաբերության ասպարեզում գերիշխում էր գյուղի տնայնագործական արտադրությունը և քաղաքների մանր ձեռնարկությունները՝ վոչ ավել քան տասը բանվոր բանեցնող. հարյուր բանվոր ունեցող ձեռնարկություններն արդեն խոշոր էյին համարվում: Խոշոր արդյունաբերությունը կենտրոնանում էր գլխավորապես նավահանգստային քաղաքներում,—մի հանգամանք, վորը ցույց է տալիս առևտրական և արդյունաբերական կապիտալների հաջորդական կապը: Արդյունաբերական գլխավոր քաղաքն էր Լիոնը, մետաքսեղենի արտադրության կենտրոնը:

XVIII դարի վերջին Ֆրանսիան նոր էր սկսել յուրացնել Անգլիայի արդյունաբերական տեխնիկան. ահա թե ինչու մեքենաների քանակը Ֆրանսիայում մինչև XIX դարի սկիզբը շատ աննշան էր: Գերիշխում էյին մեծ մասամբ միջին տեսակի մանուֆակտուրաները, սրանց թվում և խոշոր դեր էյին խաղում խառը տիպի ձեռնարկությունները, վորոնց բանվորների միայն մի մասն էր աշխատում մանուֆակտուրայի պատերի ներսը, իսկ մեծ մասը իր տանն էր կատարում աշխատանքը: Բավական ուժեղ չափով զարգացած էր արհեստային արտադրությունը. առաջվա պես նա տրոհվում էր առանձին համքարությունների. այստեղ միավորված էյին վարպետները, վորոնց մոտ աշխատում էյին վարպետացուներն ու աշկերտները. Համքարային արտադրությունը կաշկանդված էր վորոշ կանոնադրություններով, վորոնք սաստիկ նեղում էյին վարպետացուներին: Վարպետ-տերերին ընդդեմ՝ իրենց շահերը պաշտպանելու համար վարպետացուները հատուկ միություններ էյին կազմակերպում, վորոնք կրում էյին «Կոմպանիոնաժ» անունը, իսկ յերբեմն և գործադուլներ էյին ձեռնարկում: Արդյունաբերության արագ զարգացման առջև մեծ խոչընդոտ էր հանդիսանում պետությունը, վորը միջամտում էր արտադրությանը և ամենայն խստությամբ կտորեղենների համար մի վորոշ վորակ, գույն և լայնություն էր սահմանում: Այն կտորեղենը, վորը չէր համապատասխանում կառավարության պահանջներին, վոչնչացնում էյին:

Այդ տեսակ ճնշիչ խնամակալությունից խույս էր տալիս միայն տնայնագործական արտադրությունը վորը բազմաթիվ գյուղացիու-

Դաս. պայք. պատմությունը, I պրակ—3

թյան համար լրացուցիչ յեկամտի մի աղբյուր էր: Տնայնագործությունը հատկապես զարգացած էր Ֆրանսիայի հյուսիսային մասում, վորտեղ հողն անբերրի էր և չէր բավարարում իր վրա ապրող բազմաթիվ բնակչության կարիքները:

Անգլիայի օրինակին հակառակ՝ գյուղացիական հողատիրությունը Ֆրանսիայում պահպանվել էր մինչև XVIII դարի վերջը: Նրա կողքին գոյություն ուներ նաև խոշոր հողատիրություն. սրա հատկանշական գիծն այն էր, վոր միևնույն տիրոջ պատկանող հողամասերը խիտ սփռված, բաժան-բաժան էին ընկած. դա արգելք էր հանդիսանում տնտեսությունը կանոնավոր վարելու համար: Այդ պատճառով էլ կալվածատերերի մեծագույն մասն իր հողերը վարձակալության էր տալիս գյուղացիներին շատ փոքր հողաբաժիններով. վարձակալության պայմանները չափազանց ծանր էին: Ամենից շատ տարածված էր կիսարարային վարձակալությունը, այսինքն՝ բերքի կեսը հողի տիրոջը հանձնելու պայմանով վարձակալելը: Գյուղատնտեսական տեխնիկայի մակարդակը շատ ցածր էր. յեռադաշտի կողքին գործադրվում էր անգամ յերկդաշտային սիստեմ. գութանի փոխարեն գործ էր ածվում արորը. անասունները չափազանց քիչ էին և այդ պատճառով էլ հողը վատ էր պարարտացվում, իսկ մի քանի վայրերում բոլորովին էլ չէր պարարտացվում. դրա հետևանքով՝ հողն ուժասպառ էր լինում և հաճախ անբերրիություն էր պատահում. այսպես՝ 1700 թվից մինչև 1780 թիվը մոտ յերեսուն անգամ կրկնվել է անբերրիությունը:

Գյուղատնտեսության վողորմելի դրությունը բացատրվում է այն բազմաթիվ հարկերով, վորոնք XVIII դարում իրենց ամբողջ ծանրությամբ ընկած էին գյուղացիության վրա: Գյուղացիության ճնշող մեծամասնությունը թեպետ և ազատվել էր արդեն ճորտական կախումից, սակայն այն հողը, վորի վրա նրանք աշխատում էին, տակավին շարունակում էր այս կամ այն կերպ կախում ունենալ սենյորից (կալվածատիրոջից): Ճորտական իրավունքի մնացորդներն արտահայտվում էին մի ամբողջ շարք սենյորալ պարտականություններով, վորոնք շատ վաղ ծագում ունեին և XVIII դարի կեսին արդեն կորցրել էին իրենց իմաստը: Այսպես՝ գյուղացիները պարտավոր էին վորոշ վճար տալ իրենց սենյորին՝ նրա ջրաղացում աղուն աղալու համար, ինչպես և նրա փռում հաց թխելու դեպքում. նրանք պետք է վճարեյին և՝ տիրոջ կամուրջներով ու ճանապարհներով յերթևեկելու համար (պեաժ). նրանք պետք է մի վորոշ գումար դրամ տային տիրոջը՝ հողից օգտվելու համար (ցենզ). յերբեմն այդ վճարման փոխարեն բերքի մի վորոշ մասն էին տալիս նատուրայով (շամպար): Այդ բոլոր հարկերն ու տուրքերը, վոր այնքան ծանրաբեռնում էին գյուղացիությանը, առավել ևս անարդարացի էին այն պատճառով, վոր սենյորը հաճախ իր կալվածում չէր ապրում, վո՛չ ջրաղաց և վո՛չ էլ փուռ էր պահում, և չէր նորոգում կամուրջներն ու ճանապարհները: Յեվ յեթե նա գալիս էլ էր

իր կալվածը, այդ դեպքում գյուղացիների դրությունն ավելի ևս վատթարանում էր, վորովհետև ազնվականների սիրած զբաղմունքը վորսորդությունն էր, վորով զբաղվում էին անգամ գյուղացիների այն արտերում, վորտեղ դեռ բերքը չէր հավաքված: Բացի դրանից, սենյորն իր վորսորդության համար ճագարներ, կաքավներ ու աղավնիներ էր բազմացնում, վորոնք միանգամայն անպատիժ մնալով՝ սնվում էին գյուղացիական արտերում և վոչնչացնում էին ցանքսերը:

Դրանք բոլորն էլ հին կարգերի մնացորդներ էին. ֆրանսիական գյուղն իր զարգացմամբ արդեն աճել, դուրս էր յեկել այդ հին կարգերի շրջանակներից և հիմա ձգտում էր իր վրայից թոթափել ճորտական կապանքների մնացորդները. այնինչ այդ կապանքներն սպառնում էին ավելի ևս ամրանալու. կապիտալը մուտք գործելով գյուղը՝ աշխատում էր օգտագործել նաև սենյորիալ իրավունքները և ահա այդ կապակցությամբ XVIII դարի 70-ական թվականներին փորձեր էին կատարվում հիշյալ իրավունքներից շատերը վերականգնելու. այդ փորձերին գյուղացիները պատասխանում էին ավելի ու ավելի սաստկացող խռովություններով:

ԴԱՍԵՐԸ

Ֆրանսիայի բնակչությունը պաշտոնապես բաժանված էր յերեք դասի, վորոնք իրենց մեջ սոցիալական տարբեր խմբավորումներ էին պարունակում:

Առաջին դասը հոգևորականությունն էր համարվում. նա ազատ էր ամեն տեսակի հարկերից և տուրքերից. նրան էր պատկանում լավագույն հողի նշանավոր մասը, վոր ահագին յեկամուտ էր բերում. բացի

Յերեք դասերի ներկայացուցիչները Ֆրանսիայում՝ հին կարգերի օրոք

դրանից, նրա օգտին էր գնում այսպես կոչված «տասանորդը»—վաղուց իվեր գոյություն ունեցող մի հարկ էր այդ, վոր բնակչությունը վճարում էր յեկեղեցու օգտին իր ստացած յեկամտի $^{1}/_{10}$-ի չափով. նա գլխավորապես գյուղացիության վրա էր ծանրանում: Այդ հոգևորական յեկամուտներն ամբողջովին գնում էին «յեկեղեցու իշխանների» օգտին, այսինքն՝ յեպիսկոպոսներին, վորոնք սովորաբար ազնվականության շրջաններից յելած մարդիկ էին: Իսկ ծխական հոգևորակա-

նությունը, վորի շարքերը մտնում էյին գլխավորապես մանր բուրժուազիայի ներկայացուցիչները, համեմատաբար աղքատ կյանք էր վարում և մասամբ ձուլված էր գյուղական մասսաների հետ:

Երկրորդ դասն էր հանդիսանում ազնվականությունը: Նրա տնտեսական դրությունը շատ խախուտ էր դառել: Տոհմական ազնվականության մեծ մասը լքել էր իր վոչ այնքան հասութաբեր կալվածները և տեղափոխվել էր Փարիզ՝ արքունիք: Այդ քայքայվող դասը պահպանելու համար կառավարությունը մի շարք պատվավոր պաշտոններ էր ստեղծել, վորոնց հետ չէր շաղկապված և վոչ մի պարտականություն. այդ պաշտոնների համար տրված վարձատրությունը կլանում էր պետական յեկամուտների նշանավոր մասը: Բացի դրանից, ազնվականության այդ վերնախավը գրավում էր նաև բանակի բոլոր բարձրագույն հրամանատարական պաշտոնները, վորոնք շատ լավ էյին վարձատրվում: Այսպիսով՝ ինչպես բարձր հոգևորականությունը, նույնպես և տոհմական ազնվականությունը հանդիսանում էյին իբրև պորտաբույծների մի դասակարգ, վոր համեմատաբար փոքրաթիվ էր, բայց չափազանց թանգ էր նստում բնակչության համար:

Երկրորդ դասի հաջորդ գրուպպան կազմում էր կալվածային ազնվականությունը, վորը տեղ-տեղ դեռ նստած էր մնում իր հին բներում. Նա աղքատ էր ապրում, յերբեմն իր կյանքի պարզությամբ շատ քիչ էր տարբերվում իրեն յենթակա գյուղացիներից: Նա պարծենում էր իր ծագումով, չէր խառնվում իրեն շրջապատող բնակչության հետ և նվաստացուցիչ էր համարում վորևե գործով զբաղվելը. միաժամանակ, սակայն, նա նախանձով և զայրույթով էր նայում փարթամության մեջ լողացող պալատական ազնվականությանը:

Ազնվականների յերրորդ և վերջին շերտը կազմում էր պաշտոնատար ազնվականությունը կամ «պատմուճանի ազնվականությունը» (այդպես էր նա կոչվում նրա համար, վոր դատավորներն իրենց պարտականությունը կատարելիս՝ ըստ ընդունված սովորության՝ փառահեղ պատմուճան էյին հագնում): Այդ այն բարձրաստիճան չինովնիկներն էյին, վորոնք մասնակցում էյին պետական խորհրդի և 15 պարլամենտների նիստերին: Պարլամենտներ կոչվում էյին գավառային դատական հիմնարկությունները, վորոնք վաղուց ի վեր իրենց էյին վերապահել մի իրավունք, արքայական բոլոր նոր կարգադրությունները որենքների ցուցակների մեջ մտցնելու իրավունքը, և այդ գործը կատարելիս՝ փորձում էյին յերբեմն,—սակայն, ապարդյուն,—ընդդիմանալ թագավորական աբսոլյուտիզմին (ինքնակալության): Քանի վոր պետական գանձարկղի միջոցները սպառված էյին արդեն, ուստի կառավարությունը ձեռնարկում էր պետական պաշտոնների վաճառման՝ ժառանգաբար ոգտագործելու իրավունքով. այդ պաշտոնները գնելիս ձեռք էյին բերում ազնվականական կոչում:

Դրանից ոգտվեցին ունևոր բուրժուազիայի ներկայացուցիչները, վորոնք վաղուց ի վեր նախանձում էյին ազնվականների արտոնություններին: Ձեռք բերելով բարձր պաշտոններ, մանավանդ պարլամենտներում, դառնալով այդ պաշտոնների անփոփոխելի և ժառանգական տերերը՝ նրանք իրենց անկախ էյին զգում թագավորական իշխանությունից:

Յերրորդ դասն ընդգրկում էր ամբողջ մնացյալ բնակչությունը: Ամենից ավելի բազմամարդ գրուպպան կազմում էյին գյուղացիները (տ. վերևը): Բացի ազնվականության և հոգևորականության ոգտին գնացող վճարումներից՝ գյուղացիները պարտավոր էյին տալ նաև մի շարք պետական հարկեր՝ թե ուղղակի, թե անուղղակի: Անուղղակի հարկերից առանձնապես ծանր էր աղի հարկը: Պետությունն իրեն էր վերապահել աղի առևտրի մոնոպոլիան և աղի վրա այնքան խոշոր տուրք էր նշանակել, վոր նրա իրական գնից 10–15 անգամ ավելի յեր. դեռ կառավարությունը հարկադրում էլ էր մարդագլուխ վորոշ քանակի աղ գնելու, մի քանակ, վոր սովորական սպառման չափից բավականին ավել էր: Դրանից տուժում էր մանավանդ առանց այն էլ աղքատացող՝ գյուղացիությունը: Սա միատարր չէր. գյուղացիության ունևոր և միջին շերտերի կողքին գոյություն ունեյին գյուղական չքավոր մասսաները:

Յերրորդ դասի գլխավոր տնտեսական ուժը բուրժուազիան էր, վոր շատ այլատարր էր իր կազմով: Նրա բարձր շերտը խոշոր կապիտալիստներն էյին, վորոնք դրամով փոխատվություն էյին անում պետությանը, մեծ տոկոսներով կամ կապալով վերցնում էյին հարկերն ու հետո իրենք այդ հարկերը դուրս էյին քամում բնակչությունից մի քանի անգամ ավելի մեծ չափով: Նրանց համար հին կարգերը ձեռնտու էյին, բայց նրանք յերկյուղ էյին կրում, վոր սնանկացած պետությունն իր պարտքերից կհրաժարվի. և ահա այդ յերկյուղը ստիպում էր նրանց հոգ տանել պետական իշխանության բարեփոխման մասին:

Ապա գալիս էր գավառային առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի գրուպպան: Սա հիմք ուներ չսիրելու հին կարգերը, քանի վոր այդ կարգերը շատ էյին խանգարում յերկրի կապիտալիստական զարգացմանը: Բուրժուազիայի այդ մասի համար անշահավետ էր հատկապես այն առևտրական պայմանագիրը, վոր կնքվեց 1786 թվին Անգլիայի հետ. այդ պայմանագիրը կազմված էր ազատ առևտրի հիմունքներով և, հետևաբար, վերացնում էր մաքսերի գանձումն անգլիական եժան ապրանքներից: Ֆրանսիական թանկագին ապրանքները, վորոնք մեծ մասամբ ձեռքի աշխատանքով էյին արտադրվում, չէյին կարող մրցել նրանց հետ,—մի հանգամանք, վոր ֆրանսիական ձեռնարկություններից շատերի սնանկացման պատճառը հանդիսացավ:

Յերրորդ դասին էյին պատկանում, վերջապես, բուրժուական ինտելիգենցիայի ներկայացուցիչները (փաստաբանները, բժիշկները և

այլն), մանր բուրժուազիան՝ ի դեմս մանր խանութպանների և արհեստավորների, և դեռ նոր միայն ծնվող պրոլետարիատի գրուպպան:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Պետական կարգերը Ֆրանսիայում իրենցից ներկայացնում եյին աբսոլյուտ (անսահմանափակ, բացարձակ) միապետություն, վորի գլուխ կանգնած եր ժառանգական թագավորը՝ շուրջը շափազանց փառահեղ մի արքունիք: Պետությունը կառավարում եյին հենվելով չինովնիկների—բյուրոկրատների բազմաթիվ շտատի, ինչպես և զորքի ու ոստիկանության վրա: Պետական ծախսերը բոլորովին չեյին համապատասխանում յեկամուտներին. խիստ աճել եյին պետական պարտքերը, այնպես վոր նրանց վճարումը տարեվերջին կազմում եր տարեկան բոլոր ծախսերի մոտ 50%-ը: Լյուդովիկոս XIV-ի, կամ, ինչպես նրան անվանում եյին նրա շողոքորթ պալատականները, «Արեգակ արքայի» ժամանակից սկսած՝ Ֆրանսիայի թագավորներն իրենց մշտական բնակությունն եյին հաստատել Վերսալում, վոր գտնվում եր մայրաքաղաքից 17 կիլոմետր հեռավորության վրա: Դա մի հոյակապ քաղաքամերձ պալատ եր, գեղեցիկ պարկով, սքանչելի պարտեզներով՝ զարդարված բազմաթիվ շատրվաններով ու արձաններով: Մոտիկ անտառներում կազմակերպվում եր ազնվականի վորսորդությունը, վորին հետևում եյին շքեղ հանդեսները՝ պարերով, յերաժշտությամբ և հրավառությամբ հանդերձ: Պալատի այդ շուքը, վոր հսկայական ժողովրդական դրամ արժեր, ավելի յեր նկատելի դառնում աշխատավորական և գյուղացիական մասսաների աղքատացման շնորհիվ: Թագավորական իշխանությունը գործում եր վորպես արտատնտեսական հարկադրանքի գործիք՝ գյուղացիական մասսաների և քաղաքի աշխատավորության հանդեպ:

Կապիտալիզմի և մասսաների հեղափոխական շարժման աճումով ուժեղանում եյին բախումներն արդյունաբերական բուրժուազիայի և աբսոլյուտիզմի միջև: Բուրժուազիայի աջակցությունից զրկվելով՝ աբսոլյուտիզմն այլևս դառնում եր ֆեոդալական-կալվածատիրական ռեակցիայի գործիք: Վրա հասնող հեղափոխությունը պետք ե տապալեր աբսոլյուտ միապետությունը:

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԻԴԵՈԼՈԳԻԱՆ

Հին կարգերից դժգոհ լինելով՝ բուրժուազիան տրամադրված եր ոպոզիցիոն կերպով. Նրա միջից յելած՝ մի շարք մտածողներ հանդես յեկան, վորոնք իրենց յերկերում արտացոլեցին բուրժուական տարբեր գրուպպաների բազմատեսակ ձգտումները:

XVIII դարի գրողներից ամենաականավորը Վոլտերն եր (1694—1778): Նա մեծ խելքի տեր մարդ եր, ոժտված գրական խոշոր տաղանդով, վորը նա գործադրել ե հասարակական և պետական կարգերի քննադատության վրա: Վոլտերը հավասարապես յեռանդուն կերպով հարձակվում եր թե՛ ֆեոդալական և թե՛ կրոնական նախապաշարմունքների վրա: Նա կոչ եր անում խորտակելու յեկեղեցին, «ճզմելու այդ զարշելիին»: Ամենից բարձր եր դասում նա բանականությունն ու լուսավորությունը և այն ժամանակվա խոշորագույն փիլիսոփա-ռացիոնալիստներից մեկն եր հանդիսանում (ռացիոնալիզմ՝ լատինական «ռացիո» բառից ե, վոր բանականություն ե նշանակում): Եմպիրիկ փիլիսոփայության կողմնակից և կրոնական ֆանատիկոսության հակառակորդ՝ Վոլտերը դեիստ եր (լատինական «դեուս»—աստված բառից), չեր բացասում աստծուն, վորպես ստեղծագործող ուժ: Նրա քաղաքական իդեալն եր այն միապետությունը, վորի գլուխ կանգնած և կառավարող թագավորը միշտ հաշվի յե առնում փիլիսոփա-մտածողների ձայնը: Բարձր գնահատելով բուրժուազիայի կուլտուրան՝ նա արհամարհանքով և ատելությամբ եր վերաբերվում աշխատավոր մասսաներին: «Ժողովուրդը—գրում եր նա—գռեհիկ և բթամիտ ե միշտ. դրանք յեզներ են, վորոնց հարկավոր ե՝ լուծ, քշող և կեր»: Աշխատավորության դեմ տրամադրված՝ Վոլտերը հանդիսանում եր հասարակության ազնվական-կապիտալիստական բուրժուական վերնախավի իդեոլոգը, իր հայացքներով չափավոր մի խավի, վոր յեկել եր հերթափոխելու այլասերված ֆեոդալական ազնվականությանը: Բարձրացող բուրժուազիան բարեփոխությունների յեր ձգտում, բայց միաժամանակ նա վախենում եր աշխատավոր մասսաներից՝ արհամարհելով և ատելով նրանց այնպես, ինչպես ատել գիտեն ունեցած և կուշտ մարդիկ:

Այլ հայացքների տեր եր «Որենքների վոգու մասին» գրքի հեղինակ Մոնտեսքյոն (1689–1755): Այն ժամանակ, յերբ նա գրում եր իր գիրքը (1748 թ.), կուլտուրական մերձեցումն Անգլիայի ու Ֆրանսիայի միջև բացառիկ հաջողությունների յեր հասել: Ֆրանսիական ինտելլիգենցիայի ներկայացուցիչները՝ միապետության լծից զայրացած՝ մի առանձին հետաքրքրությամբ դիտում եյին Անգլիայի պետական կարգերն ու հիանում եյին անգլիական բուրժուական սահմանադրական միապետությունից: Մոնտեսքյոն նման հայացքների ամենափայլուն արտահայտիչն եր: Նա գտնում եր, վոր քաղաքական ազատությունը հնարավոր ե միայն այն դեպքում, յերբ թագավորի իշխանությունը սահմանափակված ե ժողովրդական ներկայացուցիչների ժողովի կողմից, վորի ձեռքում կենտրոնացած ե որենքներ սահմանելու իրավունքը. նմանապես և դատավարությունը պետք ե կատարեն ժողովրդի ընտրած և թագավորից անկախ մարդիկ. թագավորին էլ կարելի յե վերապահել միայն կառավարելու, այսինքն՝ որենքները գործադրելու իրավունքը, ինչպես և զորքերն ու ֆինանսները տնորինելու իրավունքը, բայց պարլամենտի խիստ հսկողության տակ: Այդ թեորիան, վոր կոչվում ե «իշխանությունների բաժանման թեորիա» (որենսդրական, գործադիր և դատական), մեծ հաջողություն եր գտել բուրժուազիայի

շրջաններում և արտացոլում էր իր մեջ արդյունաբերական բուրժուազիայի շարժումը՝ արիստոկրատիզմի դեմ ուղղված:

Դեմոկրատիայի (ժողովրդավարության) քարոզիչը մանր բուրժուազիայի ներկայացուցիչ Ժան-Ժակ Ռուսսոն էր (1712—1778): Վոլտերին հակառակ՝ նա բարձր էր գնահատում աշխատավորական մասսաները իրենց բնական պարզությամբ. քաղաքային կյանքն իր փարթամությամբ և կուլտուրայով միայն անբարոյականացնում է մարդկանց: Նա կարծում էր, վոր մարդիկ ավելի լավ էին ապրում նախնադարյան շրջանում, յերբ գոյություն չուներ ո՛չ մասնավոր սեփականություն և ո՛չ էլ սրա վրա հիմնված անհավասարություն: Մասնավոր սեփականության մասին նա այսպես է գրում. «քաղաքացիական հասարակության իսկական հիմնադիրը նա էր, ով առաջինը միտք հղացավ հողամասը ցանկապատելու և ասելու թե «այս իմն է»: Վորքան հանցանքներից, կռիվներից և սպանություններից, վորքան փորձանքներից և արհավիրքներից կփրկեր մարդկային ցեղը նա, ով կհաներ, կքանդեր ցանկապատի ցցերը և կլցներ սահմանագծի փորվածքը և կգոչեր իր մերձավորներին. «Մի՛ լսեք այս խաբեբային. դուք կորած եք, յեթե ընդունակ եք մոռանալու, վոր յերկրի պտուղները պատկանում են բոլորին, իսկ հողը չի պատկանում և վոչ վոքի»: Այսպիսով՝ Ռուսսոն արտահայտում էր գլխավորապես մանր բուրժուազիայի տրամադրությունը, «յերրորդ դասի» այն մասի, վոր վճռականորեն ձգտում էր վերացնել արիստոկրատիայի արտոնությունները: Ռուսսոն գալիք պետությունը պատկերում էր այնպիսի կարգերի ձևով, վորոնք կառաջանան ազատ, մանր արտադրողների միջև կնքված «պայմանագրի» հետևանքով: Այդորինակ պետության նպատակն է անհատի բարօրությունը, այսինքն՝ մանր սեփականատերերի շահերի պահպանումն ու պաշտպանությունը:

Ահա բուրժուազիայի տարբեր շերտերի հայացքները: Սակայն նույն այդ ժամանակ ծայր են առնում կոմունիստական գաղափարներ էլ, վորոնք արտահայտում են հասարակության ստորին դասակարգերի շահերը: Այսպես՝ ջուլհակի վորդի, չքավոր ծխական քահանա Մելյեն (1660–1729), վորը շատ տարիներ շարունակ ապրել է գյուղացիների հետ, իր «Կտակում» գլխավոր չարիքը համարում է հողի մասնավոր սեփականության և դասային անհավասարության պահպանումը: Այդ չարիքի պաշտպան է հանդիսանում քրիստոնեյական յեկեղեցին, վոր կոչված է ամեն կերպ հիմարացնելու և խաբելու աշխատավոր մասսաներին: Բուրժուական գրողներին հակառակ՝ Մելյեն կոչ էր անում չքավորներին ապստամբելու բոլոր կեղեքողների և շահագործողների դեմ՝ միանգամայն անօգուտ բան համարելով հարուստներից ակնկալել փոփոխություն դեպի լավը: Իր կոմունիստական իդեալը Մելյեն արտահայտում էր հետևյալ ձևով. «Յերկրի բոլոր բարիքներն ու հարստությունները մարդիկ պետք է վայելեն միասին և հավասար չա-

փով: Մի քաղաքի կամ մի ծխի բոլոր բնակիչները պետք է մի ամբողջություն կազմեն, իբրև մի ընտանիք: Նրանք պետք է ապրեն միատեղ, օգտվեն միևնույն կամ միանման կերակրից, բոլորն էլ հագնեն հավասարապես լավ հագուստեղեն, ունենան հավասարապես լավ բնակարան»:

XVIII դարի մյուս կոմունիստը՝ Մորելլին գրում էր, վոր մարդկության գլխավոր սխալն է յեղել ընդհանուր գույքի սկզբնական բաժանումը և, հետևապես, մասնավոր սեփականության սահմանելը: Այդ սխալը կարելի յե ուղղել գոյություն ունեցող հասարակական կարգերի քննադատության և կոմունիստական գաղափարների պրոպագանդի միջոցով միայն: Յեթե մարդիկ ըմբռնեն կոմունիզմի բոլոր առավելությունները, նրանք արագ կվերակառուցեն վողջ կյանքը նոր հիմունքներով: Կոմունիստական նոր հասարակակարգի պլանը Մորելլին արտահայտել է յերեք հիմնական օրենքներով. այն է՝ 1) մասնավոր սեփականության բացակայություն 2) հասարակական ապրուստ բոլոր քաղաքացիների համար 3) բոլոր քաղաքացիների համար սահմանված՝ նրանց ուժին համապատասխան աշխատանք, հասարակության օգտին: Նոր կարգերին անցնելու ուղին Մորելլին համարում էր լուսավորությունը:

Այն ժամանակվա համար շատ հատկանշական էր այսպես կոչված «էնցիկլոպեդիստների» գրական գործունեյությունը: Նրանց գլխավորում էին Դիդրոն (1713–1784), դ'Ալամբերը (1717–1783), Հոլբախ (1723–1789), Հելվեցիուսը (1715–1771) և ուրիշներ: Նրանք ձգտում էին տարածել և մատչելի դարձնել գիտական նորագույն նվաճումները. այդ նպատակով նրանք ձեռնարկեցին «գիտությունների, գեղարվեստի և արհեստների մեծ էնցիկլոպեդիայի» հրատարակմանը, վոր հալածանքների յենթարկվեց գրաքննիչների կողմից: Ֆրանսիական մատերիալիստները հանդես էին յեկել «հին կարգերի» գաղափարախոսության խորտակիչների դերում, նրանք բուրժուական հեղափոխության արտահայտողներն էին գիտության և տեխնիկայի զանազան ճյուղերում: Իբրև համոզված աթեիստներ (աթեիզմ—աստծո գոյության բացասում), էնցիկլոպեդիստներն իրենց յերկերում մատերիալիստական գաղափարներ էին արծարծում՝ ընդունելով, վոր բոլոր յերևույթների հիմքը մատերիայի շարժումն է. այս դրույթից յելնելով՝ նրանք հանգում էին այն յեզրակացության, վոր մարդկանց բնավորությունները կախված են վոչ թե նրանց բնածին հատկություններից, այլ շրջապատող միջավայրի ներգործությունից: Նրանք ահագին նշանակություն էին տալիս գիտություններին, վոր և անհրաժեշտ են գտնում յեռանդուն կերպով տարածել մասսաների մեջ: XVIII դարի ֆրանսիական մատերիալիստները քիմիա-ֆիզիքական և օրգանական յերևույթներն ամբողջովին վեր էին ածում, ի վերջո, լոկ մեխանիկայի յերևույթների: Նրանք ժխտում էին զարգացման պրոցեսը և՛ բնու-

թյան, և՛ հասարակության մեջ: Նրանք թերագնահատում եյին արտադրողական ուժերի դերը պատմական պրոցեսում և մարդկային մտքի կատարած նվաճումների, լուսավորության և նման այլ յերևույթների մեջ եյին միայն նկատում պատմության հիմնական շարժիչ ուժը:

Բուրժուական փիլիսոփաների և քաղաքական գրողների ամբողջ այդ գործունեությունը խոշոր նշանակություն ուներ՝ գալիք հեղափոխության համար մարդկանց մտքերը նախապատրաստելու տեսակետից: Իրենց աշխատանքներով նրանք նպաստում եյին հին կարգերի բուն իսկ հիմքերի ցնցելուն, ինչպես եյին՝ թագավորական իշխանությունը, առաջին յերկու դասերի արտոնությունները, բուրժուազիայի զուրկ լինելը քաղաքական իրավունքներից: Միաժամանակ նրանք տարածում եյին բազմազան դրական գիտելիքներ և առաջադրում քաղաքական այն իդեալները, վորոնցով առաջնորդվում եյին հետագայում Ֆրանսիական մեծ հեղափոխության գործիչները:

ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

ՃՈՐՏԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

XVIII դարի Ռուսաստանը մի տիպիկ գյուղատնտեսական յերկիր եր. բնակչության ճնշող մեծամասնությունը (90%-ից ավելին) կազմում եյին գյուղացիները: Անձնական ազատությունից զրկված՝ նրանք ամրացված եյին իրենց ձեռքով մշակվող հողին: Վորովհետև հողի տերերն եյին պետությունը, կալվածատերերն ու վանքերը, ուստի և գյուղացիները բաժանվում եյին յերեք խմբի՝ պետական գյուղացիներ, կալվածատիրական, կամ պարզապես ճորտ գյուղացիներ, և վանքապատկան գյուղացիներ: 1764 թվին վանքապատկան հողերը սեկուլյարիզացիայի յենթարկվեցին, այլ խոսքով, նրանք դարձան պետական սեփականություն և կառավարելու հանձնվեցին հատուկ հիմնարկության՝ կալվածավարության կոլլեգիային (коллегия экономии) Դրանից հետո նախկին վանքապատկան գյուղացիները «կալվածավարական» («экономическое») անունն ստացան: Բոլոր գյուղացիների վրա գլխահարկ եր նշանակված պետության օգտին. այն էլ դնում եյին անխտիր բոլոր տղամարդկանց վրա, ինչ հասակի էլ նրանք լինեն՝ մանուկներից սկսած մինչև ծերունիները: Ճորտ գյուղացիներից գլխահարկը հավաքում եր հենց ինքը՝ կալվածատերը, վոր իր ճորտերի տերն ու տիրականն եր հանդիսանում: Կալվածներ տիրելու բացառիկ իրավունքն ազնվականներին եր վերապահված. ամբողջ XVIII դարի ընթացքում դրանք եյին տիրապետող դասակարգը Ռուսաստանում: Սակայն XVIII դարի սկզբին, Պետրոս I-ի (1689-1725) թագավորության օրոք, ազնվականները դեռևս լիովին ազատ չեյին, ինչպես և մնացյալ բոլոր դասերը. Նրանք պարտավոր եյին ծառայելու ռազմական կամ քաղաքացիական ծառայության գծով—մի պարտականություն, վոր

նրանց շատ եր նեղում: Ճոր [illegible] յթ եր կրում նաև քաղաքի կամ ավանի բնակչությունը, վորը գյուղացիների պես գլխահարկ պետք է վճարեր: Պետրոս I-ի օրով քաղաքի բնակիչները պաշտոնապես բաժանված եյին վաճառականների, արհեստավորների և սևագործ բանվորների. արհեստավորներն էլ ստորաբաժանված եյին համքարությունների: Ամենաթեթև պարտականությունը պետության հանդեպ ընկնում եր հոգևոր դասի վրա. նա պարտավոր եր աղոթքներ վերառաքել աստծուն՝ իր մասին հոգացող կառավարության օգտին. իսկ այդ ծառայության համար հոգևորականությունն ազատված եր ամեն տեսակի հարկերից ու պարհակներից:

Ճորտատիրական Ռուսաստանը XVIII դարի սկզբներին տնտեսապես բավական հետամնաց յերկիր եր: Նա ընկած եր հեռու միջազգային առևտրի կենտրոններից և Ատլանտիկ օվկիանոսից: Այդ պարագան թույլ չեր տալիս նրան մասնակցելու անդրօվկիանյան գաղութների թալանին: Ռուս ճորտատերերն ու առևտրական կապիտալը ստիպված եյին գրավել հարևան յերկրամասերը՝ Սիբիրը, Ռուսաստանի հարավ-արևելքն ու հարավը, բայց առաջին հերթին արտաքին առևտրի զարգացման համար անհրաժեշտ եր իրենց համար յելք բանալ դեպի ծովերը, տիրել ծովերին: Ռուսաստանը հարուստ եր հումքով, վորի կարիքը մեծ եր Արևմտյան Յեվրոպայում. արտահանվող ապրանքներն եյին, նախ՝ շարունակ զարգացող նավաշինության համար անհրաժեշտ փայտեղենը, պարանը, կանեփի թելն ու քաթանը, ապա՝ կաշին—կոշիկների համար, սննդամթերքները և, վերջապես, յերկաթը: Ամենամոտիկ ծովային ճանապարհը, վոր Ռուսաստանից տանում եր դեպի գնորդ-պետությունները և սրանց շարքում առաջին հերթին Անգլիա,—Բալտիկ ծովն եր. բայց Ռուսաստանը կտրված եր այդ ծովից՝ շնորհիվ Լեհաստանի և Շվեդիայի տիրապետությունների: Ճիշտ ե, Ռուսաստանն անմիջապես Անգլիայի հետ առևտուր եր անում Արխանգելսկի վրայով, բայց այդ հեռավոր ճանապարհն իր կլիմայական պայմանների հետևանքով փակված եր լինում տարվա մեջ մի քանի ամիս շարունակ: Առաջնորդվելով առևտրական կապիտալի շահերով՝ Պետրոս I-ը պատերազմի բռնվեց Շվեդիայի հետ՝ Բալտիկ ծովի ափերին տիրանալու համար: Այդ, այսպես կոչված՝ հյուսիսային մեծ պատերազմը տևեց 21 տարի (1700—1721) և հսկայական զոհեր տարավ թե՛ մարդկանցով և թե՛ դրամով: Դրա հետևանքով Ռուսաստանին հաջողվեց յելք բանալ դեպի Ֆիննական և Ռիգայի ծովածոցերը. և Ֆիննական ծոցի ափին, Նևա գետի վրա (1703 թ.) Ռուսաստանի նոր մայրաքաղաքի՝ Սանկտ-Պետերբուրգի (թարգմանաբար—ս. Պետրոսի քաղաք) հիմքը դրվեց:

Ռուսաստանի ներքին առևտուրը մասամբ կենտրոնացած եր քաղաքներում, մասամբ էլ կատարվում եր տոնավաճառներում, վորոնք պարբերաբար կազմակերպվում եյին գավառական քաղաքներում և գյուղաքաղաքներում, տեղական յեկեղեցական տոների ժամանակ: Ա-

տրի առարկաներն եյին թե՛ սննդամթերքները և թե՛ տնայնագործական արտադրության արդյունքները: Արտասահմանյան ապրանքները (գլխավորապես պերճանքի իրեր) վաճառվում եյին միայն քաղաքի մագազիններում, իսկ գնում եյին միայն ազնվականները:

Գյուղատնտեսությունը զարգացման ցածր աստիճանի վրա եր կանգնած: Պետական գյուղացիները, վորոնք կենտրոնացած եյին հյուսիսային նահանգներում, միացած եյին գյուղական հասարակությունների մեջ. այդ հասարակություններն ոգտվում եյին ինքնավարության մի քանի իրավունքներով. Նրանց ներսում իշխում եյին յեռադաշտ սիստեմը, արորն ու պարտադիր ցանքաշրջանառությունը: Մի փոքր ավելի լավ եր տարվում գյուղատնտեսությունն ազնվականների կալվածներում, վորոնք գերիշխում եյին կենտրոնական Ռուսաստանում: Կալվա-

Ռուս գյուղացիները VII դ. (Աբբա Շապպ դ՝ Օտրոշի «Ճանապարհորդությունը դեպի Սիբիր» գրքի նկարներից 1761 թ.

ծատիրական տնտեսության մեջ ամբողջ հողը սովորաբար բաժանվում եր յերկու անհավասար մասերի. լավագույն մասը կալվածատերը հատկացնում եր իր տնտեսության վարելուն, իսկ վատագույնը տալիս եր

գյուղացիներին: Այդ հողամասերից ստացած արդյունքներով գյուղացիները պետք է վոչ միայն կերակրեյին իրենց ընտանիքները, այլև պետությանը գլխահարկ վճարեյին: Միաժամանակ նրանք պարտավոր եյին իրենց ինվենտարով մշակելու կալվածատիրոջ ոգտին նրա արտերը: Ճորտի աշխատանքը կալվածատիրոջ համար կոչվում եր կոռ և կայանում եր թե գյուղատնտեսական աշխատանքների մեջ, և թե աշխատանքի այլ ձևերի մեջ, ինչպես, օրինակ, շենքեր կառուցելն է, սունկեր և հատապտուղներ հավաքելը և այլն: Կոռի հետ հաճախ միացվում եր բահրան, յերբ գյուղացիներն իրենց կալվածատերերին մի վորոշ գումար դրամ եյին վճարում կամ իրենց բերքի վորոշ մասը մուծում: Սակայն գյուղացիների համար շատ դժվար եր լինում իրենց փոքր տնտեսություններից մեծ բահրա վճարել, ահա թե ինչու կալվածատերերը բահրան այն դեպքում եյին մեծացնում, յերբ կրճատում եյին իրենց վարուցանքը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ռուսաստանը թևակոխեց XVIII դարը՝ ունենալով թույլ զարգացած արդյունաբերություն: Արտադրությունը կրում եր գլխավորապես տնային բնույթ. քաղաքներում գերիշխում եր արհեստը, այսինքն՝ պատվերով աշխատելու ձևը. կոշկակարներից, դերձակներից, կաշեգործներից և այլ նախկին արհեստավորներից զատ՝ Պետրոս I-ի ժամանակ Պետերբուրգում արդեն հանդես եյին յեկել նոր արհեստավորներ ել՝ կառք պատրաստողներ, կազմարարներ, ժամագործներ և այլն: Գյուղերում զարգանում եր գլխավորապես տնայնագործական արտադրությունը, վորի մեջ եր ներգրավված գյուղացիության նշանավոր մասը, վորովհետև գյուղացիների համար դժվար գործ եր միմիայն իրենց տնտեսությունից սնունդ հայթայթելը: Մի քանի վայրերում արդեն իսկ XVIII դարում առաջացել եյին վորոշ տնայնագործական իրեր արտադրող կենտրոններ. այսպես՝ իր կտավներով հայտնի եյին դարձել Իվանովո-Վոզնեսենսկ և Շույա գյուղաքաղաքները, մետաղե արտադրանքներով՝ Պավլովոն (Նիժնինովգորոդի նահանգում):

Արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները սկսեցին յերևան գալ XVIII դարի վերջին, բայց նրանք առանձնակի յերևույթներ եյին, այդ այն մի քանի մանուֆակտուրաներն եյին, վոր կազմակերպել եյին ոտարերկրացիները կամ ծնունդ եյին առել կալվածատիրական տնտեսության ծոցում: Պետրոս I-ի որով սկսեցին յեռանդուն կերպով հիմնել մանուֆակտուրաներ, կամ, ինչպես անճիշտ կոչվում եյին նրանք այն ժամանակ, ֆաբրիկաներ: Մանուֆակտուրաների ուժեղ ծավալումը հրահրվում եր մասամբ պետության կողմից, վորի աճող պահանջները չեր կարող բավարարել ցրված, փոշիացած տնայնագործական արտադրությունը: Առաջ ինքը, պետությունն սկսեց կազմակերպել մանուֆակտուրաներ և գործարաններ՝ մահուդ, առագաստներ, զենքեր, ապակի և այլն արտադրելու համար. պետությունը գյուղացիներ եր կցում

այդ գործանոցներին՝ նրանց սպասարկելու համար: Թե ինչ չափերի եյին հասնում այդ արտադրությունները, դրա մասին կարելի յե դատել հետևյալ տվյալների հիման վրա. Պերմի 9 լեռնային գործարաններին կցված եյին 25 հազար գյուղացիներ, Սեստրորեցկի մետաղագործական գործարաններում աշխատում եյին 683 հոգի, Մոսկվայի առագաստագործարանում՝ 1.162 հոգի և այլն: Սակայն նման ձեռնարկություններ ստեղծելիս հենվում եյին տնային ձեռքի աշխատանքի առաջվա հին հիմքերի վրա. այդ ձեռնարկությունները մեծ մասամբ չեյին կենտրոնացնում բանվորներին մի շենքում, այլ լավագույն դեպքում առանձին խրճիթների սիստեմ եյին կազմում, իսկ մեծ մասամբ օգտվում եյին առանձին տնայնագործների տնային աշխատանքով:

Բայց պետական ֆաբրիկաների—մանուֆակտուրաների զարգացման եպոխան համեմատաբար վաղ վերջացավ, վորովհետև նրանք անշահավետ և վնասաբեր դուրս յեկան: Ստիպված յեղան դիմելու մասնավոր ձեռներեցության. գործարանների մի մասն արտոնյալ պայմաններով հանձնվեց ռուս և օտարերկրացի առևտրականներին, նմանապես և ազնվականներին: Առևտրականներն օգտվում եյին փախած գյուղացիների, բանակից արձակված զինվորների, մուրացկանների, շրջմոլիկների և այլոց ազատավարձու աշխատանքով. բայց քանի դեռ ռուսական պետությունը ճորտատիրական բնույթ եր կրում, ազատ բանվորներ չափազանց քիչ կային: Ահա թե ինչու 1721 թվին ի նպաստ վաճառականության՝ թույլատրվեց առևտրականներին ունենալ այսպես կոչված «պոսեսսիոն»1) ճորտային գործարաններ՝ որոնց կցված գյուղացիներով հանդերձ: Այսպիսով՝ յերևան յեկան նոր կարգի գյուղացիներ, պոսեսսիոն գյուղացիներ վորոնք ամրացված եյին վոչ թե գործարանատիրոջ անձնավորությանը, (ինչպես ճորտ գյուղացիները՝ կալվածատիրոջ անձնավորությանը), այլ հենց իսկ գործարանին. դրա համար էլ նրանց չեր կարելի վաճառել գործարանից անջատ:

Վաճառականների պոսեսսիոն գործարանների կողքին սկսեցին յերևան գալ նաև ազնվականների—կալվածատերերի գործարաններ, վորտեղ նրանք օգտագործում եյին հենց իրենց ճորտերի աշխատանքը: Ազնվականական գործարանների յերևան գալը նրանով ե բացատրվում, վոր ճորտ գյուղացիների շրջանում շատ տնայնագործներ կային. և հաճախ հենց իրենք կալվածատերերն եյին իրենց մոտ կազմակերպում կտավի և ուրիշ իրերի արտադրությունը սեփական տնտեսության պետքերի համար:

Արդյունաբերության բարգավաճմանը նպաստելու համար՝ Պետրոս I-ի ժամանակ բավական բարձր մաքսեր նշանակվեցին արտասահմանյան այն ապրանքների վրա, վորոնք սկսել եյին արտադրվել Ռուս-

1) Այսինքն՝ տիրական. լատինական «պոսեսսիո» բառից ե, վոր նշանակում ե տիրություն:

աստանում: Մասամբ հենց կառավարության կողմից ցույց տրված աջակցության շնորհիվ եր, վոր Պետրոս I-ի թագավորության վերջում Ռուսաստանում յերկու հարյուրից ավելի գործարան կար:

ԿԱԼՎԱԾԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիզմի զարգացումն ու ազնվականների պահանջի աճումը ուժեղ չափով անդրադարձան ճորտական տնտեսության վրա: Դրամ եր հարկավոր՝ հարաճուն պահանջները բավարարելու համար: Սկզբներում կոռավարական տնտեսավարությունը միայն այնպիսի արդյունքներ եր տալիս (հաց, վարսակ), վորոնք նրանց հեռավոր շուկաներ արտահանելու հետ կապված ծախսերը չեյին ծածկում, վորովհետև Ռուսաստանում այն ժամանակ ճանապարհները շատ վատ եյին: Դրամ ստանալու նպատակով՝ կալվածատերերը վոքր ինչ կրճատում եյին սեփական վարուցանքը և գյուղացիներից դրամային բահրա պահանջում. դրա հետևանքով վոչ միայն տնայնագործական արտադրություններն եյին զարգանում, այլև ուժեղանում եր ճորտ գյուղացիների ժամանակավորապես ուրիշ աշխատանքի գնալը (դրսի աշխատանք): Կալվածատերերից մի քանիսները սկսեցին իրենց տնտեսությունները մասամբ արդյունաբերական ռելսերի վրա փոխադրել՝ զբաղվելով օղեգործությամբ, կանեփի թելի, քաթանի, կտավի արտադրությամբ և այլն: Թվում եր, թե հացագործությունը պետք ե յերկրորդ պլան անցներ:

Սակայն XVIII դարի վերջին Անգլիայում կատարված արդյունաբերական հեղաշրջման առնչությամբ ուժեղացավ ռուսական հացի պահանջը: Այդ պարագան մեծ աշխուժացում առաջացրեց կալվածային տնտեսության ներսում: Կալվածատերերի աչքում մեծացավ սևահող հարավի և հարավ-արևմուտքի արժեքը: Խոշոր նշանակություն ստացավ Սև ծովի ափերին տիրելու խնդիրը. այդ ծովի նավահանգիստների միջոցով կարելի յե կազմակերպել հացի վաճառքը: Ռուս ազնվականությունը այդ ժամանակ ձեռնամուխ յեղավ իր տնտեսության զարգացման: Նեղվելով իր համար սահմանված պարտադիր պաշտոնավարությունից՝ ազնվականությունը, քանի աճում եր նրա ազդեցությունը պետական ապրանքների վրա, աստիճանաբար ազատվում եր ծառայելուց, վորպեսզի ավելի շատ ժամանակ հատկացնի իր կալվածներին, վորոնք հիմա հասութաբեր եյին դարձել: XVIII դարի 30-ական թվականներին ազնվականների պարտադիր ծառայության ժամանակամիջոցը սահմանափակվեց քսանհինգ տարով (20 տարեկանից սկսած մինչև 45 տարի), իսկ 1762 թվին նրանք խսպառ ազատվեցին այդ պարտավորությունից: Մյուս կողմից էլ, ազնվականությունը մեծ թափով հափշտակում եր պետական հողերը: Կալվածային հողատիրությունը տարածվեց համարյա ամբողջ Ռուսաստանում: XVIII դարի վերջին 39 տարվա ընթացքում կալվածատերերը պետությունից 1.400 հազար հոգի գյուղացիներ ստացան: Ազնվակնության ճնշման տակ՝ Ռուսաստանը XVIII դարի ընթացքում մի քանի անգամ պատերազմ ե մղել Տաճկաստանի դեմ՝ Սև ծովի հյուսիսային ափերին տիրանալու համար: Մեծ

զոհերի միջոցով նրան հաջողվեց գլուխ բերել այդ գործը, և նա ամուր հաստատվեց սևահող հարավում և Ղրիմում: Բայց կոլոնիզացիան չըսահմանափակվեց միայն հարավով. նա գնաց և հարավ-արևելքի ուղղությամբ, դեպի ղալմուխների և ուրալյան բերրի տափաստանները, ինչպես և դեպի Կովկաս, վորտեղ Պավել I թագավորության ժամանակ նվաճեց Վրաստանը (1801 թ.):

Վրաստանն իրենից ներկայացնում էր ֆեոդալական մի պետություն, վոր տրոհված էր բազմաթիվ առանձին թագավորությունների և իշխանությունների և ուժասպառ էր յեղել թե ներքին յերկպառակություններից և թե Պարսկաստանի, Տաճկաստանի, լեզգինների և ուբիխների հետ մղած անընդհատ կռիվներից: Վրաստանի կառավարող շրջանները ձգտում եյին մտնել Ռուսաստանի «հովանավորության» տակ՝ ակնկալելով, վոր այդպիսով նրանք կպահպանեն թե իրենց իշխանությունը և թե պետական անկախությունը: Սակայն ռուս ինքնակալության համար Վրաստանի այդ «խաղաղ կցումը» Ռուսաստանին նշանակում էր Վրաստանը վերածել գաղութի և Ռուսաստանի համար ամուր դիրք ձեռք բերել Սև ու Կասպից ծովերի ափերին: Ռուսական ցարիզմն իրոք վոր նվաճեց Վրաստանը, վերջ տվեց նրա ինքնուրույնությանը և նրան դարձրեց գաղութային անպատկառ թալանի մի դաշտ: Վրաստանում սահմանված ռուսական կարգերը, նոր օրենքների և ժողովրդի համար անհասկանալի ռուսաց լեզվի բռնի արմատացումը բոլոր հաստատություններում, վրացական լեզվի վտարումը, ազգային գրականության հալածումը, Ռուսաստանի ներքին նահանգներից այստեղ յեկած, մեծ մասամբ աքսորված ռուս չինովնիկներն իրենց կոպիտ և խայտառակ վարմունքով — այս ամենը խռովություն և ուղղակի հենց ապստամբություն եյին առաջացնում օկկուպացիայի (գրավման) առաջին իսկ տարիներին: Կոլոնիզատորներն ամեն կերպ ոգտագործում եյին իրենց շահերի համար վրաց գյուղացիության և կալվածատեր-ազնվականների դասակարգային պայքարը, հենվում եյին վերջինների վրա, կաշառում եյին նրանց ամեն տեսակի պարգևներով, իշխանական կոչում եյին ընձեռում մանր ազնվականներին, վոստիկանական չինովնիկների պաշտոններ եյին տալիս նրանց, առաջին կարգի սպաներ դարձնում նրանց և դրա հետ միաժամանակ չեյին դադարում հսկել նրանց քաղաքական բարեհուսության վրա: Հատկապես ծանր դրության մեջ ընկավ վրաց գյուղացիությունը. գյուղացիներից հողերն «տարում եյին», գյուղացիներից եյին պարեն հավաքում զորքերի համար, անհնազանդների դեմ պատժիչ արշավախմբեր եյին ուղարկում, վորոնք նրանց հետ վարվում եյին շատ անխնա և ամբողջ գյուղեր եյին վոչնչացնում: Գյուղացիական շարժումը մասսայական բնույթ էր կրում: Վրաստանի լեռնականների առաջին ապստամբությունը ընդդեմ կոլոնիզատորների բռնկվեց 1804 թվին և անողոքաբար ճնշվեց 1805 թվին: XIX դարի առաջին քառորդում գյուղացիական ապստամբությունները կրկնվում եյին մի քանի անգամ:

Ռուսական կոլոնիզացիան արագացրեց վրացական ֆեոդալիզմի

քայքայումը՝ միանգամայն անխախտ թողնելով ճորտատիրական իրավունքը Վրաստանում: Ռուսական իշխանության հաստատվելուց հետո գյուղացիության շահագործումն ազնվականների կողմից այստեղ վոչ միայն չմեղմացավ, այլ դեռ ավելի ևս ուժեղացավ:

XIX դարի առաջին կիսին, Ալեքսանդր I և Նիկոլայ I թագավորության օրերին, ցարական Ռուսաստանը՝ տարածելով իր իշխանությունն Անդրկովկասում՝ իր տիրապետություններին միացրեց նմանապես և Պարսկաստանին յենթակա հայկական շրջանները (Ղարաբաղի, Յերևանի, Նախիջևանի իշխանությունները):

Վորքան կարելի յե ավելի մեծ շահ ստանալու նպատակով՝ ռուս կալվածատերերն էլ եյին դիմում հիշյալ՝ համեմատաբար հեշտ միջոցին — առավել չափով եյին շահագործում գյուղացիներին, այսինքն՝ սաստկացնում եյին ճորտատիրական իրավունքը: Կենտրոնական նահանգներում, վորոնք այնքան էլ բերրի չեյին և հեռու եյին գտնվում Սև ծովի նավահանգիստներից, տիրոջ վարուցանքն աստիճանաբար կրճատվում էր՝ իր տեղը զիջելով սաստիկ մեծացած բահրային. XVIII դարի վերջին քառորդում տարվա ընթացքում բահրայի չափն ավելացել էր ավելի քան հինգ անգամ: Այդ յերևույթը կապված էր տվյալ շրջանի արդյունաբերության զարգացման հետ: Սևահող հարավում և հարավ-արևելքում, վորտեղ ձեռնտու յեր հողագործությամբ պարապելը, գլխավորապես կիրառվում էր ընդհակառակը, տնտեսության կոռային սիստեմը, վոր յերբեմն այնտեղ էր հասնում, վոր գյուղացիները՝ գրեթե ամբողջ շաբաթ զբաղված լինելով կոռով՝ այլևս վոչ մի հնարավորություն չեյին ունենում վարելու իրենց տնտեսությունը: Մի քանի կալվածներում էլ համարյա բոլոր գյուղացիական հողերը հատկացվում եյին տիրոջ վարուցանքերին, իսկ գյուղացիներին տրվում էր ամսական պարեն («месячина»):

XVIII դարի յերկրորդ կեսին ներքին շուկայում նկատվում էր հացի գների սաստիկ բարձրացում. դա նրանով էր բացատրվում, վոր սկսել եյին ռուսական հացն արտահանել Անգլիա, վոր արդյունաբերական հեղաշրջման կապակցությամբ հարկադրված էր հացը դրսից բերելու: Միաժամանակ՝ Ռուսաստանի վոչ-սևահող միջին գոտին հացի մեծ պահանջ էր առաջադրում հանդեպ սևահող հարավի և հարավ-արևելքի, վորտեղից ստացվում էր այդ հացը: Հացի գները 60—80-ական թվականներին բարձրացան համարյա 500%-ով: Ավելի շահավետ դարձավ հաց արտադրելը, քան տարբեր տեսակի արդյունաբերական գործունեյությամբ զբաղվելը: Հիշյալ հանգամանքների հետևանքով կալվածատերերը, մանավանդ արտադրող նահանգներում, մեծ յեռանդով ձեռնարկեցին հացի արտադրության. նրանք ընդարձակում եյին իրենց վարուցանքն ի հաշիվ գյուղացիականի և գյուղացիներին բահրայից փոխադրում եյին կոռային աշխատանքի՝ գյուղացիների շահագործումն յերբեմն հասցնելով հրեշավոր չափերի: Շահագործման ուժեղացումը սպառնում էր առաջ բերել գյուղացիական ապստամբություններ. գյու-

ղացխության մեջ նկատելիորեն աճում եր ատելությունը հանդեպ կալվածատերերի: Գյուղացիներին հնազանդության մեջ պահելու համար՝ ազնվականությունը Յեկատերինա II օրոք իրավունք ձեռք բերեց՝ իր ճորտերին քշելու Սիբիրի աքսորավայրերը և մինչև անգամ տաժանակիր աշխատանքի: Բացի դրանից, նա լայն չափով ուրիշ պատիժներ էլ եր գործադրում, ինչպես ճիպոտով ծեծելն ու զանազան տանջանքների յենթարկելը:

ԱԶՆՎԱԿԱՆԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

XVIII դարում ազնվականները հետզհետե գրավում եյին պետական ապարատը: Պետրոս I օրերին ազնվական դասը դեռևս յենթակա յեր պետապարտավորությունների. նրա վրա յեր ծանրացած պարտադիր պետական ծառայությունը: Պետրոս I հարկադրեց ազնվականներին գիրք վերցնել ձեռքը և արգելեց ամուսնանալ նրանց, ով հաջող քննություն չի տա քերականությունից, թվաբանությունից և յերկրաչափությունից: Պետրոս I նեղում եր ազնվականությունը նաև նրա տիրական իրավունքների կողմից. ազնվականությունը հարկադրված եր իր կալվածները տրամադրելու իր զավակներից մեկին միայն (միանձնյա ժառանգության իրավունք): Ընդհանրապես Պետրոսը քիչ եր հենվում տոհմական ազնվականության վրա՝ տալով պետական բարձր պաշտոնները մասամբ «ռազնոչինեցներին», այսինքն՝ տարբեր դասերից յելած անձանց, մասամբ էլ՝ օտարերկրացիներին: Կառավարության բարձրագույն հիմնարկը նա դարձրեց սենատը, վորի կազմի մեջ նույնպես ռազնոչինեցներ եյին մտնում: Պետրոսի մահից հետո գահի շուրջը պայքար սկսվեց հին բոյարական մեծամեծների և ազնվականության միջև: Այդ պայքարը XVIII դարում արտահայտվեց մի շարք պալատական հեղաշրջումներով, վորոնց միջոցով ազնվականությունը գահից հեռացնում եր (յերբեմն սպանություն կատարելով) այն կայսրներին, վորոնք կամենում եյին թագավորել ինքնուրույն կերպով և վոչ թե ազնվականների ձգտումների վոգով: Այդ հեղաշրջումների ժամանակ վճռական դեր եր խաղում գվարդիան—այն գնդերը, վորոնք անմիջապես թագավորական պալատում եյին գտնվում և կազմված եյին ամբողջովին՝ շարքայիններից սկսած մինչև հրամանատարները՝ ազնվականներից: Այսպիսով՝ գվարդիան զուտ ազնվականական մի կազմակերպություն եր, վոր զարգացող բուրժուազիայի թույլ լինելու հետևանքով գահ եր բարձրացնում իր թեկնածուներին: Այդ ժամանակաշրջանում Ռուսաստանի արտաքին քաղաքականությունն էլ տարվում եր բացառապես կալվածատիրական դասակարգի շահերին համապատասխան:

Արդեն իսկ Պետրոս I-ի աղջկա՝ Յեղիսաբեթ I-ի թագավորության ժամանակ (1746—1761)—այդ թագուհուն ազնվականներն եյին գահ բարձրացրել—ազնվականության ազդեցությունը ցայտուն կերպով արտահայտվեց կառավարության գերագույն կենտրոնական հիմնարկության մեջ—սենատում: Այդ թագուհու օրոք սենատը մի շարք խոշոր և

ժանր ռեֆորմներ անց կացրեց, վորոնք լիովին համապատասխանում եյին ազնվականության շահերին: Յեղիսաբեթի ֆավորիտներից (սիրեկաններից) մեկի՝ Պ. Ի. Շուվալովի առաջարկով՝ պակասեցրին գլխահարկը, վոր վճարում եյին կալվածատերերը՝ յուրաքանչյուր ճորտ գյուղացու դիմաց. դրանից, իհարկե, չեր լավանում գյուղացիների դրությունը. նրանք շարունակում եյին վճարել իրենց կալվածատերերին բահրան, և այն էլ վոչ թե ավելի փոքր, այլ մեծ մասամբ դեռ ավելի մեծ չափով. տվյալ ռեֆորմի շնորհիվ, սակայն, ազնվականների գրպանում ավելի մեծ գումարներ եյին մնում: Նույն այդ թագավորության ժամանակ արմատացավ մի սովորություն, վորի համաձայն ազնվականները իրենց զավակներին զինվորական ծառայության եյին գրում նրանց ծնվելու պես իսկույն. այնպես վոր, մեծանալով, յերեխաները բարձրանում եյին ծառայության սանդուխքով և փաստորեն ծառայության մըտնելու մոմենտին արդեն հասած եյին լինում սպայական աստիճանի:

Պետրոս III օրոք (1761—1762) ազնվականները կատարեցին իրենց նվիրական իղձը. «ազնվականության ազատության» վերաբերյալ մանիֆեստը (1762 թ.) յեկավ ազատագրելու նրանց պարտադիր ծառայությունից և նրանց դարձնելու ազատ (վոչ-հարկատու) դաս: Ամենաշատ իրավունքներ ձեռք բերին ազնվականները Յեկատերինա II թագավորության օրերին (1762—1796). սրան էլ գահ եյին բարձրացրել գվարդիականները՝ տապալելով նրա ամուսնուն՝ Պետրոս III-ին, վորին և շուտով սպանեցին սպաները՝ Արլով յեղբայրների գլխավորությամբ: Յեկատերինա II-ը իր շուրջն եր հավաքել ազնվականներից ընտրած ֆավորիտներին (սրանցից ամենամեծ ազդեցություն ձեռք բերեց Գ. Ա. Պոտյոմկինը, վոր «իշխան Տավրիկյան»-ի տիտղոս ստացավ) և ազնվականների շահերի թելադրանքով ստացած իր կարգադրություններն արդարացնում եր ֆրանսիական փիլիսոփաներից և հրապարակախոսներից (Մոնտեսքյո, Վոլտեր, Դիդրո) փոխ առած ֆրազներով. վերջին յերկուսի հետ նա շարունակ նամակագրություն ուներ: Նա մի առանձին շռնդով հայտարարեց խորհրդակցական մի հատուկ ժողովի գումարման մասին. դա պատգամավորների (գերազանցորեն ազնվականներից) մի հանձնաժողով եր՝ նոր «Ուլոժենյե», այսինքն՝ օրենսգիրք մշակելու համար: Սակայն այդ հանձնաժողովը, դեռ նրա ժամկետը չլրացած՝ արդեն ցրեցին, վորովհետև վախեցան ինքնակալությունը սահմանափակելու փորձերից: Բայց և այնպես, ազնվականների ցանկություններից շատերը, վոր նրանք հայտնել եյին հանձնաժողովի նիստերին, կենսագործվեցին հետագայում: Ռեֆորմները վերաբերում եյին գլխավորապես տեղական կառավարության, վորն ամբողջովին հանձնվեց ազնվականների ձեռքը. նահանգները կառավարելու գործը հանձնեցին նահանգապետներին և գավառային վոստիկանապետներին՝ կապիտան-իսպրավնիկներին. այդ յերկու պաշտոններն էլ բացառապես ազնվականներին եյին տալիս: 1785 թ. հրատարակված «Շնորհագրով» Յեկատերինան հաստատեց ազնվականների մինչ այդ ստացած իրավունքները՝ իրենց գույքերն ազատ

տնօրինելու (մինչև նույնիսկ ժառանգության վերաբերյալ օրենքը վերացված էր դրանից առաջ) և պարտադիր ծառայությունից ազատ լինելու. ազնվականները համարվում էին ազատ՝ ամեն տեսակի անձնական տուրքերից. նրանք կարող էին իրենց կոչումից զրկվել բացառիկ հանգամանքներում միայն և ազնվականների դատարանի կայացրած վճռով. վերջապես, նրանք ազատ էին և մարմնական պատիժներից: Հաստատվեց նաև ազնվականների բացառիկ իրավունքը՝ ճորտերի տեր լինելու: Ի վերջո «ազնվականության շնորհագրով» ճանաչվեց նրանց իրավունքը՝ իրենց կորպորատիվ, դասային միավորությունն ունենալու նահանգական և գավառային ազնվականական ժողովներում և այդտեղ ընտրելու ազնվականության պարագլուխներ:

Ազնվականների կողմից «Մեծ» հորջորջված Եկատերինա II-ի դարը հանդիսանում էր ազնվականության տիրապետության վոսկեդարը:

Եկատերինայի թագավորության ժամանակաշրջանի մեծ մասը լի էր Լեհաստանի և Տաճկաստանի հետ մղած պատերազմներով: Լեհաստանի հետ ունեցած կռիվները վերջացան նրանով, վոր լեհական պետության քաղաքական ինքնուրույնությունն իսպառ վոչնչացրին՝ բաժանելով 1772—1795 թ. թ. այդ պետությունը Ռուսաստանի, Պրուսիայի և Ավստրիայի միջև: Նախկին լեհական տիրապետություններից Ռուսաստանը ստացավ Բելոռուսիան, Վոլինը, Պոդոլիան և Լիտվան: Իսկ տաճկական պատերազմները,—վորոնցով պաշտոնապես նպատակ էր դրվում ազատագրելու բալկանյան սլավոններին տաճկական լծից, այն ինչ իրականում նրանք ուղղված էին Բոսֆորն ու Դարդանելը գրավելու և կալվածատիրական ցորենի արտահանման համար Սև ծովի վրայով ճանապարհ բանալու գծով,—վերջացան նրանով, վոր Նովոռոսիայի տափաստաններն ու Ղրիմը Ռուսաստանին միացրին:

ՊՈՒԳԱՉՈՎՇՉԻՆԱՆ

Կոռի ուժեղացման, ճորտատիրական իրավունքի սաստկացման հետևանքով աճում էր ճորտերի ատելությունը կալվածատերերի հանդեպ: Մերթ այստեղ, մերթ այնտեղ գյուղացիական խռովություններ էին բռնկվում՝ իրարից անջատ. յերբեմն կալվածատերերի սպանության դեպքեր էլ էին լինում. չափազանց մեծ ծավալ և մասսայական բնույթ ստացավ գյուղացիների փախուստը դեպի ծայրագավառները: Փախած գյուղացիներն այստեղ կազմում էին կազակների միավորություններ և ակամա ծառայում էին պետության կոլոնիզացիոն ձգտումներին: Կառավարությունը թույլ էր տալիս նրանց ազատություն վայելել միայն այն պայմանով, վոր նրանք պարտադիր զինվորական ծառայություն անեն սահմանամերձ տափաստաններում: Կազակներն օգտվում էին ինքնավարության իրավունքով՝ ընտրելով իրենց ավագներին և ատամաններին (զորապետներին): Այն կազակները, վոր ապրում էին Յայիկ (այժմ Ուրալ) գետի ափերին, պարապում էին ձկնորսությամբ. նրանք ձուկն աղում և ծախում էին ռուս վաճառականներին: Ժամանակ առ

ժամանակ նրանք ասպատակում էին բաշկիրներին և այլ քոչվորներին: Ժամանակի ընթացքում կազակների շրջանում շերտավորում առաջացավ. նկատելիորեն ուռճացան ավագները՝ մեծ շահ վաստակելով առևտրական այն գործառնություններից, վոր նրանք կատարում էին աղը դնելիս և ձուկը վաճառելիս. ամենաչքավոր շարքային կազակների վրա մեծ հարկեր նշանակվեցին, և նրանք ընկան տնտեսական կախման մեջ հարուստներից:

Ազնվականական պետության հանդեպ վոչ պակաս զայրույթով էին լցված ծայրագավառներում ապրող ազգությունները, «այլազգիները», ինչպես նրանց անվանում էին արհամարհանքով: Թաթարները, մորդվան, չերեմիսները (Մարի), ղալմուխները, բաշկիրները—սրանք բոլորն էլ մեծ հիմք ունեին ձգտելու ռուսական լծի տապալման. նրանց հողերը գրավում էին ռուսները, վորոնք այստեղ նույն յեղանակով էին գործում, ինչ վոր նրանց ռուսերկրյա յեղբայրակիցները: Տեղական բնակչությունը ծայրամասերում յենթարկվում էր հալածանքների, նրանց ստիպում էին ընդունել քրիստոնեական հավատը, նրանց զրկում էին իրենց վաղեմի հողերից, նրանց վրա ծանրագույն հարկեր էին դնում: XVII—XVIII դ. դ. ընթացքում բաշկիրները մի քանի անգամ ապստամբել էին ռուս կոլոնիզատորների դեմ, բայց ցարական կառավարությունը չափազանց անողոքաբար ճնշել է այդ ապստամբությունները՝ հազարներով մահվան դատապարտելով ապստամբածներին, ավերելով ու վոչնչացնելով նրանց գյուղը:

Ուրալի լեռնային գավառներում չափազանց ծանր պայմաններում աշխատում էին բազմաթիվ գյուղացիներ, վորոնք բռնի կցված էին գավոդներին և կտրված իրենց ընտանիքներից:

Այդ բոլոր հանգամանքները վերին աստիճանի լարված դրություն էին ստեղծում ծայրագավառներում: Բարձր տրամադրությամբ էր համակված վողջ գյուղացիական մասսան անգամ վոչ-սևահող նահանգներում, վորտեղ ճորտերի շահագործումն այն չափերին չէր հասնում, ինչպես հարավ-արևելքում և արևելքում: Գյուղացիները սպասում էին, վոր ազնվականներին պարտադիր ծառայությունից ազատելուն պես իրենց էլ կազատեն ճորտական կախումից: Ամենաչնչին լուրերին անգամ գյուղացիական մասսան ունկնդրում էր մեծ հետաքրքրությամբ: Բավական էր մի կայծ՝ ապստամբության հրդեհ առաջացնելու համար. վառվող նյութը չափազանց շատ էր կիտված: Նման կայծի դեր կատարեց այն շարժումը, վոր սկսեցին Յայիկի կազակների չքավոր և միջակ շերտերը կառավարության գործադրած ճնշումների հողի վրա:

1773 թվին Յայիկի ամբողջ շրջանում լուր տարածվեց, վոր կազակների մոտ է յեկել Պետրոս III կայսրը (վոր փաստորեն սպանված էր 1762 թվին իր կնոջ՝ Եկատերինայի հրամանով): Այդ անվան տակ հանդես յեկավ Դոնի շրջանի կազակ Եմելյան Պուգաչովը: 1773 թվին լույս տեսան նրա առաջին հրովարտակները («ուկազները»)՝ Պետրոս III-ի անունից հրատարակած: Հրովարտակներից մեկը Յայիկի կազակներին

շնորհում էր «գետն ու հողը, բույսերն ու ջրերը, դրամ և հաց, արճիճ և վառոդ, և հավիտենական ազատություն»։ Բաշկիրներին նա խոստանում էր հնարավորություն տալ ազատ օգտագործելու՝ հողերն, անտառները, ջրերը, ձկնորսության վայրերը, նա նրանց շնորհում էր դրամ և պարեն, յերաշխավորում էր նրանց կրոնական համոզմունքների ան-

Պուգաչովյան շարժումը 1773—1774 թ.

ձեռնմխելիությունը։ Պուգաչովի կոչերին ոգով արձագանքեցին չքավոր կազակները, բաշկիրները, մարին, մորդվան, թաթարները, ղալմուխները և այլն։

Այդ զորքերով Պուգաչովը շարժվեց դեպի հյուսիս՝ ամենուրեք տարածելով իր հրովարտակները։ Քանի նա առաջ էր շարժվում, նրան միանում եյին զինված կազակների և գյուղացիների նորանոր մասսաներ. Հաճախ նրա կողմն եյին անցնում և նրա դեմ ուղարկված կառավարական զորամասերը։ Եյական օգնություն ցույց տվին Պուգաչովին լեռնային գավառների բանվորները, վորոնք յեկան նրա հետ միանալու ուրալյան գավառներում պատրաստած թնդանոթներով հանդերձ։ Պուգաչովի ղեկավարության ներքո շուտով մեծ զորք հավաքվեց, մի զորք,

վոր իր մեջ ուներ զենքի բոլոր տեսակները և վոր, սակայն, այնքան էլ կարգապահ չէր։ Նրա գլխավոր նեցուկն էր գյուղացիական ճորտական մասսան։ Դիմելով գյուղացիներին՝ Պուգաչովը 1774 թվի մանիֆեստում նրանց հրավիրում էր կոտորելու ազնվականներին. «ով դեմ ա մեր իշխանության, ով խառնակչություն ա գցում մեր կայսրության մեջ ու գյուղացիների տունը քանդում ա—նրանց բռնեցե՛ք, սպանեցե՛ք, կախեցե՛ք»։ Ազատելով գյուղացիներին կալվածատերերից, վերացնելով զինվորագրությունն ու հարկերը՝ մանիֆեստը միաժամանակ շնորհում էր գյուղացիներին առանց վորևե դրամական հատուցման («առանց յետգնման և առանց բահրայի») հողեր, հանդամասեր, ձկնորսության վայրեր, աղի լճեր։ Ի պատասխան այդ կոչերի՝ գյուղացիները վոտքի եյին յելնում վողջ Մերձ-ուրալյան և Մերձ-վոլգյան շրջաններում։ Գյուղացիական մասսան, հենց վոր լուր էր առնում, վոր Պուգաչովն արդեն մոտ է, խկույն մաքրում էր իր հաշիվները կալվածատերերի հետ, այրում և ավերում էր նրանց ագարակները և ապա մտնում Պուգաչովի զորքը։ Ապստամբություններ եյին բռնկվում նաև կառավարական զորքերի թիկունքում։

Իսկ ի՞նչ լոզունգներ եյին համախմբում այդ բազմամարդ մասսան, վոր Պուգաչովի շուրջն էր հավաքվում. ի՞նչ նպատակներ էր նա ցանկանում իրագործել։

Մի ներդաշնակ, մի ամբողջական քաղաքական ծրագիր Պուգաչովը չուներ։ Իր մանիֆեստներում Պուգաչովը խոստանում էր բնակչության բոլոր հարստահարվող շերտերին՝ բավարարություն տալ նրանց կենսական շահերին և նրանց ազատել կալվածատերերի և կառավարության ծանր լծից։

Պուգաչովի ապստամբությունն իր հիմնական գծերով հետևյալ պատկերն էր ներկայացնում։ Ծայր առնելով Յայիկի շրջանում՝ նա հետզհետե ընդարձակվեց դեպի հյուսիս և հյուսիս-արևելք և ընդգրկեց Ուրալը։ Այնուհետև Պուգաչովը գնաց դեպի արևմուտք, դեպի Վոլգա գետը։ Նա, դենն էլ գնաց, դեպի Ռուսաստանի կենտրոնը, վորտեղ գյուղացիական մասսան նրան էր սպասում, վորպես իր ազատարարին։ Մերձ-Վոլգյան և Մերձ-ուրալյան ապստամբությունը, անկասկած, հասարակական կշիռ և միանգամայն այլ հետևանքներ կունենար, սակայն, Պուգաչովը դեռևս մինչ այդ բավականին հապաղեց Օրենբուրգի պաշարման հետևանքով և հնարավորություն տվեց կառավարությանը՝ ռազմական խոշոր ուժեր հավաքագրելու և ուղղելու նրա դեմ։ Այն պահից, յերբ Պուգաչովը իր ճանապարհն ուղղեց դեպի Վոլգա, նա կտրվեց ուրալյան գավառներից, մի քանի անգամ պարտություն կրեց և՝ առանց ճեղքելու թշնամու շարքերն ու մտնելու կենտրոնական Ռուսաստան՝ նա սկսեց կամաց-կամաց նահանջել Վոլգայի ափերով դեպի հարավ։ Այդ նահանջը կազմալուծում առաջացրեց ապստամբածների շարքերում և շուտով վերածվեց խուճապային փախուստի։ Ցարիցինի մոտերքում Պուգաչովը վերջնականապես ջախջախվեց և հետո փախավ-

—գնաց կազակների մոտ, բայց սրանք մատնեցին նրան հակառակորդի ձեռքը․ Նրան Մոսկվա տարան և այնտեղ մահվան պատժի յենթարկեցին 1775 թվին։ Պուգաչովի սպանությունից հետո, սակայն գյուղացիական շրջաններում չընդհատվեցին խլրտումները։ Յեկատերինայի կառավարությունը դժվարությամբ ճնշեց այդ շարժումը։

Պուգաչովի ապստամբության անհաջողության պատճառները, իհարկե, չպետք է փնտրել այն սխալների շարքում, վոր Պուգաչովն իրեն թույլ տվեց իր ռազմական գործողությունների ընթացքում։ Նրանց արմատն էր շարժման տարերային և անկազմակերպված լինելը։ Դասակարգային կազմի խայտաբղետությունը, շարժման մեջ ներքաշված սոցիալական տարբեր գրուպպաները՝ կազակները, գյուղացիները, տեղական բնակչությունը, անգամ լեռնային գործարանների բանվորները՝ յուրաքանչյուրը կռվում էր իր տեղական շահերի համար, առանց կապակցելու իր այդ շահերը սոցիալական մյուս գրուպպաների շահերի հետ։ Ապստամբությունը հեգեմոն չուներ, վոր ղեկավարեր մասսաներին, բավականաչափ հստակ ծրագիր չկար շարժման համար։ Ապստամբած բաշկիրներն ավերում էյին գործարանները՝ նրանց մեջ նկատելով իրենց թշնամին և այդպիսով զրկում էյին Պուգաչովի բանակը տեխնիկական մատակարարման բազայից։ Գյուղացիները՝ իրենց հաշիվները տեսնելով իրենց կալվածատերերի հետ՝ այլևս չէյին շարժվում առաջ՝ Պուգաչովին ուղեկցելու։ Դրանով էր պայմանավորված շարժման անհաջող վախճանը, մի շարժման, վոր ծավալվեց վորպես գյուղացիական հեղափոխություն՝ լուրջ վտանգ սպառնալով ճորտատիրական կարգերին և ճորտատիրական պետությանը։

Ապստամբությունը ճնշվեց կառավարության կողմից չափազանց անխնա կերպով, տանջանքներն ու մահապատիժները հազարավոր զոհեր տարան, գյուղերից շատերը հողի հետ հավասարեցվեցին։

Պուգաչովշչինան սարսափ ազդեց ազնվականական Ռուսաստանին։ Թե կալվածատերերի և թե կառավարության համար նա մի ահեղ նախազգուշացում էր՝ իր կրկնվելու հնարավորության մասին։ Իսկ հետագա հեղափոխական շարժման համար պուգաչովշչինան իբրև պատմական դաս ծառայեց։

XVIII ԴԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պուգաչովշչինան չթոթափեց ճորտական ծանր բեռը գյուղացիների ուսերից․ բայց չնայած, վոր ճորտական հարաբերությունները պահպանվեցին և տարածվեցին ավելի ընդարձակ տերրիտորիայի վրա՝ այնուամենայնիվ XVIII դարի վերջում Ռուսաստանը քիչ էր նմանվում Պետրոս I-ի Ռուսաստանին։ Կապիտալիզմի էլեմենտներն այդ ժամանակ ավելի էյին զարգացել, առաջ անցել։ Զգալի չափով աճել, մեծացել էյին քաղաքները։ Այն հանգամանքը, վոր կալվածատերերն իրանց գյուղացիներից շատերին փոխադրում էյին բահրայի, ստիպում էր նրանց գյուղերից դուրս գալ, գնալ քաղաքները—գործարաններում աշխատելու,

դրա հետևանքով ազատ վարձու բանվորների թիվն ավելացավ։ Արդյունաբերությունը սաստիկ զարգանում էր․ XVIII դարի վերջերքում ֆաբրիկաների և գործարանների քանակը մինչև 3 հազարի յեր հասնում․ ազնվականների գործարաններն էլ դեռ հինգ անգամ ավելի քիչ էյին, քան վաճառականներինը։ Աճել, լայն ծավալ էր ստացել ներքին շուկան, և արդեն 1754 թվին պետությունը հարկադրված էր վերացնելու բոլոր ներքին մաքսերը, վորոնք այստեղ ևս, ինչպես և Ֆրանսիայում, խեղդում էյին առևտուրը։ XVIII դարի վերջերքում աճել, ուժեղացել էր բուրժուազիան։ Յեկատերինա II «Քաղաքների շնորհագրով» (1785 թ.) ինքնավարության իրավունք ընձեռեց քաղաքներին՝ հանձինս նրանց ամենահարուստ շերտերի։ Բուրժուազիայի և ինտելիգենցիայի բարձր շերտերն ազատվեցին գլխահարկից և զինվորական պարհակից։

XVIII դարի ընթացքում վորոշ առաջադիմություն էր նկատվում նաև լուսավորության ասպարեզում։ Ազնվական կորպուսներից (վարժարաններից) և ինստիտուտներից զատ՝ 1755 թվին Մոսկվայում հիմնվեց առաջին ռուսական համալսարանը, վոր յերկու բաժանմունք ուներ՝ մեկն ազնվականների համար, մյուսը՝ ռազնոչինեցների։ Բացի սրանից, Մոսկվայում և Կազանում գիմնազիաներ հիմնվեցին։

Արտասահմանից Ռուսաստան սկսեցին թափանցել զանազան գրքեր։ Յե՛վ բուրժուազիայի, և՛ ազնվականության առաջավոր շերտերը պարզ գիտակցում էյին, վոր Ռուսաստանը պետք է ընթանա արևմտյան պետությունների ուղիով։ Հետամնաց տեխնիկան, ճորտատիրական կարգերը, թույլ չափով տարածված լուսավորությունը կասեցնում էյին Ռուսաստանի կապիտալիստական զարգացումը։ Անգլիայում կատարված տեխնիքական գյուտերը խորթ մնացին Ռուսաստանի համար, քանի վոր նա օգտվում էր էժան կամ ձրի գյուղացիական աշխատանքով։

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԻԴԵՈԼՈԳԻԱՆ

Արդեն իսկ Յեկատերինա II-ի հրավիրած հանձնաժողովում ձայներ էյին արտասանվում, վորտեղ դրվատում էյին Ադամ Սմիտի նման առևտրի ազատությունը։ Բուրժուազիայի ամենափայլուն ներկայացուցիչների թվին են պատկանում ազնվականության առաջավոր շերտերից յելած Ն. Ի. Նովիկովը (1744–1818) և Ա. Ն. Ռադիշչևը (1748–1802)։ Նովիկովը պայքարում էր ճորտատիրական իրավունքի դեմ՝ հրատարակելով յերգիծաբանական ժուրնալներ։ Նա մի գրախանութ ուներ, վորտեղ վաճառում էր իր հրատարակած գրքերը, թե՛ ռուսերեն գրված և թե՛ օտար լեզուներից ռուսերեն թարգմանված․ բացի դրանցից, նա անմիջապես օգնություն էր ցույց տալիս սովից տառապող գյուղացիներին։ Իր գործունեության համար նա տուժեց՝ մի քանի տարով բանտարկված մնալով Շլիսելբուրգի բերդում։

Բուրժուական հայացքների մյուս խոշոր ներկայացուցիչը, Ռադիշչևը, ազնվականների զավակներից շատերի պես, իր բարձրագույն

կրթությունը ստացել էր արտասահմանում (Լայպցիգի համալսարանում)․ այդ այն տարիներին էր, երբ ուսանողները մեծ խանդավառությամբ կարդում էին ֆրանսիական նախահեղափոխական գրականությունը՝ վոգևորվելով լուսավորչական փիլիսոփայության գաղափարներով։ Վերադառնալով Ռուսաստան և այստեղ ծառայության մտնելով՝ Ռադիշչևն զբաղվեց գրական գործունեությամբ։ Նրա երկերից ամենանշանավորն են «Ազատություն» բանաստեղծությունը և «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» գիրքը։ «Ազատության» մեջ նա հարձակվում էր ինքնակալության վրա, նրան հակադրելով ազատությունը, «բոլոր մեծ գործերի աղբյուրը»։ Ֆրանսիական մեծ հեղափոխության ազդեցության տակ գրված «Ճանապարհորդության» մեջ Ռադիշչևը դուրս յելավ ընդդեմ ինքնակալության և ճորտատիրական իրավունքի։ Նա այստեղ մի շարք վառ պատկերներ տվեց՝ կալվածատերերի գործադրած ճնշման վերաբերող։ Այստեղ է ահա՛ կալվածատերը, վոր ստիպում է գյուղացիներին ամբողջ շաբաթն աշխատել իր համար․ այստեղ են ահա և՛ գյուղացիների վաճառքը, և՛ նրանց խոշտանգումը, և՛ պամեշչիկական անզուսպ շվայտանքի բոլոր տեսակները։ «Գազաններ ագահ—հարց է տալիս Ռադիշչևը—եվ ինչ ենք մենք թողնում գյուղացուն․ այն միայն, ինչ վոր չենք կարող նրանից խլել՝ օդը»։ Գիրքը հրատարակելիս՝ Ռադիշչևը ծածկեց իր անունը, բայց շուտով բացվեց, վոր նա յե հեղինակը։ Ռադիշչևը ձերբակալվեց, նրա գիրքն արգելեցին։ Պետրոպավլովսկի բերդում բանտարկվելուց հետո՝ նա աքսորվեց Սիբիր, վորտեղ մնաց վեց տարի։ Ալեքսանդր I-ի թագավորության ժամանակ (1801–1825) Ռադիշչևը ներում ստացավ, սակայն և այնպես չկարողացավ հաշտվել իրեն շրջապատող իրականության հետ և ինքնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին։ Այսպես ավարտվեց լիբերալական բուրժուական գաղափարների առաջին ընդհարումը ճորտատիրական Ռուսաստանի հետ։

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԴԵՊՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1733—1785 Թ. Թ. — ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՏԵՐԻ ԵՊՈԽԱՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

1733 թ. — Կեյի թռչող մաքոքը․
1765 թ. — Հարգրիվսի «ջեննին»․
1769 թ. — Արկրայտի ջրային շարժիչն ու Ջեմս Ուատի շոգեմեքենան․
1779 թ. — Կրոմպտոնի «Մյուլ-ջեննին»․
1785 թ. — Կարտրայտի մեքենական մանածագործական դազգյահը․

1776–1789 Թ. Թ. — ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1774 թ. — Ֆիլադելֆիայի համագումարը․
1775 թ. — Յերկրորդ համագումարը Ֆիլադելֆիայում․

1775–1783 Թ. Թ. — ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՆՈՒՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ

1776 թ. — Անկախության դեկլարացիան․
1785 թ. — Անգլիան ճանաչեց ամերիկական գաղութների անկախությունը․
1789 թ. — Միացյալ Նահանգների միութենական սահմանադրությունը․

ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

1721 թ. — Վաճառականները թույլտվություն են ստանում՝ ունենալու պոսսեսսիոն գործարաններ․
1755 թ. — Առաջին համալսարանի բացումը Մոսկվայում․
1762 թ. — Ազնվականության ազատության վերաբերյալ մանիֆեստը․
1772–1795 թ. թ. — Լեհաստանի բաժանումները․
1773–1775 թ. թ. — Պուգաչովշչինան․
1785 թ. — Շնորհագիր՝ ազնվականության համար։

ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1․ Ի՞նչ հանգամանքներ դրդեցին Անգլիայի ամերիկական գաղութներին անջատվելու նրանից․

2․ Ի՞նչից առաջացավ ագրարային հեղաշրջումն Անգլիայում, ո՞ւմ ոգտին և ի՞նչպես նա կատարվեց․

3․ Ի՞նչից են առաջացել տեխնիքական գյուտերն Անգլիայում և ի՞նչու ամենից առաջ նրանք տրվել են տեքստիլ արդյունաբերության ասպարեզում․

4․ Ի՞նչպիսի սոցիալ-տնտեսական հետևանքներ ունեցավ արդյունաբերական կապիտալիզմի հաղթանակն Անգլիայում․

5․ Ի՞նչու յեր դանդաղ ընթանում մինչ-հեղափոխական Ֆրանսիայի կապիտալիստական զարգացումը․

6․ Ինչո՞վ եր արտահայտվում ներհակությունը՝ նորածագ կապիտալիզմի և ֆեոդալական կարգերի մնացորդների միջև Ֆրանսիայում․

7․ Ի՞նչպես եյին դասավորված դասակարգային ուժերը ֆրանսիական Մեծ հեղափոխության նախօրյակին․

8․ Ինչո՞վ կարելի յե բացատրել այն, վոր Ռուսաստանում կալվածատիրական մի քանի տնտեսություններում կոռն եր գերիշխում, իսկ մյուսներում՝ բահրան․

9․ Ինչո՞ւ Յեկատերինա II թագավորությունն ազնվականության տիրապետության ժամանակշրջան հանդիսացավ․

10. Ինչպի՞սի սոցիալական գրուպպաներ էյին մասնակցում Պուգաչովյան շարժման մեջ և ի՞նչպես անդրադարձավ նրանց մասնակցությունը շարժման վիճակի վրա:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ—ԽՆԴԻՐՆԵՐ

1. Կարդացեք Ֆրիդլյանդի և Սլուցկու «Քրեստոմատիայի»I գլխում զետեղված № № 5, 6 և 8 դոկումենտները և պատասխանեցեք հետևյալ հարցին՝ ի՞նչու Կ. Մարքսը ցանկապատումն անվանեց «քաղանի կապիտալիստական ձև». նմանապես պարզեք, թե ինչո՞ւ նոր տիպի տնտեսությունները ավելի հասութաբեր էյին:

2. Նույն Քրեստոմատիայի I գլխում զետեղված № № 7, 10 և 11 դոկումենտների հիման վրա պարզեք մանր արհեստավորների դրությունն Անգլիայում XVIII դարի սկզբում և ապա զննեք, ի՞նչպես էր աճում արդյունաբերությունը:

3. Նույն գլխում զետեղված № 8 դոկումենտի հիման վրա կազմեք Ֆրանսիայի 1787 թվի յելքի բյուջեյի վերաբերյալ մի շրջանաձև դիագրամ այնպես, որ շրջանի սեկտորները ծառայեն իբրև բյուջեյի հիմնական ստորաբաժանումներ.

4. Կարդացեք Կարպովի և Մարտինովի քրեստոմատիայում («История классовой борьбы в России в материалах и документах», т., I, Гиз, 1926 г.) Պուգաչովի մանիֆեստները՝ ուղղված Յայկի կազակներին (էջ 211) և զինվորներին (էջ 219–220), նրա հրամանգիրը՝ տրված Օրենբուրգի նահանգական դիվանին (էջ 222), ինչպես և Պուգաչովի հրովարտակները՝ բաշկիրներին ուղղված (էջ 240–241) և ազնվականներին կոտորելու մասին (էջ 266). այդ դոկումենտների հիման վրա համառոտակի շարադրեք Պուգաչովի ծրագրի հիմնական կետերը.

5. Օգտվելով այս դասագրքի տվյալ գլխի տեքստից՝ բաղդատեք Ֆրանսիայի և Ռուսաստանի սոցիալական և քաղաքական կարգերը և բացատրեք, թե ինչո՞ւ Ֆրանսիայում անխուսափելի յեր քաղաքական հեղաշրջումը, այնինչ Ռուսաստանում նույն այն ժամանակ չէր կարելի սպասել այն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դոկումենտներ.

Ц. ФРИДЛЯНД и А. СЛУЦКИЙ.—История революционного движения Западной Европы (1789-1914), хрестоматия, изд. 5, Гиз, М. 1928. *Փաստաթղթերով հարուստ հավաքածու յե այդ, վորտեղ յուրաքանչյուր գլխում փաստաթղթերից առաջ տրվում են պատմական ներածություն և մեթոդական ցուցմունքներ: Տվյալ թեմային վերաբերում են* I («Промышленный переворот») *և* II («Франсия накануне Великой революции») *գլուխները:*

Н. КАРПОВ и М. МАРТИНОВ—История классовой борьбы в России в материалах и документах, т. I, Гиз. 1926.

Ներկա գլխի համար կարելի յե օգտագործել III *մասը* («Пугачевщина»).

В. ВИКТОРОВ.—Крестьянские движения XVII—XVIII в. в. сборник документов и материалов, изд. Коммунистического Университета им. Свердлова, М. 1926.

XVIII դարին վերաբերում են IV («Расцвет торгового капитализма») և V («Движения Пугачева») գլուխները: Գրքի վերջում զետեղված են կարևորագույն տերմինների բացատրությունն ու դոկումենտների մեջ հիշված անձանց համառոտ կենսագրությունը:

«Пугачевщина», Центроархив, т I. «Из архива Пугачева» (манифесты, указы, переписки), Гиз, М. 1926

Պուգաչովականների ձեռքով կազմած դոկումենտների ժողովածու յե: Արժեքավոր է Մ. Ն. Պակրովսկու ներածական հոդվածը:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

К. МАРКС, Капитал, т. I, Гиз (несколько изданий) XXIV գլուխը հիմնական, ուղեցույց գաղափարն է տալիս՝ ըմբռնելու սկզբնական կուտակման և պրոլետարիատի առաջացման դարաշրջանը:

Ц. ФРИДЛЯНД— История Западной Европы (1789—1914), часть I, Европа в эпоху промышленного капитализма (1789—1871) 3-е дополненное и переработанное издание, изд. «Пролетарий» 1930.

Այս գիրքը հարուստ է փաստական մատերիալով և տալիս է՝ Անգլիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի պատմության սիստեմատիկ դասընթացը. Մյուս յերկրների—դրանց թվում նաև Հ. Ա. Միացյալ Նահանգների—պատմությունը տրվում է կոնսպեկտիվ ձևով: Տվյալ գլխին են վերաբերյում 1–ին, («От торгового капитала к промышленному. Промышленный переворот в Англии»), 2–րդ («Франция накануне Великой революции») և 3–րդ («Политический строй Англии и Франции во второй половине XVIII в.», «Идеология революционной буржуазии») դասախոսությունները.

И. М. ЛУКИН (Н. Антонов), Новейшая история Западной Европы, вып. I, изд. 2-е, Гиз. М. 1926

Տվյալ թեմային են վերաբերում I («Промышленный переворот и образование новых классов»), II («Идеологи подимающейся буржуазии и народничество») և III («Европа накануне Великой французской революции») գլուխները:

М. Н. Покровский—Русская история с древнейших времен, изд. 7-е, Гиз, М. 1924 Կարևորագույն մարքսիստական մի աշխատանք է՝ Ռուսաստանի պատմության վերաբերող: Տվյալ թեմային վերաբե-

րում են III հատորի XI գլուխը՝ «Манархия XVIII века», 1–5 բաժինները:

Книга для чтения по истории народов СССР, под ред. М. Н. Покровского, т. I, о-во историков-марксистов при Ком. академии СССР, изд. «Пролетарий», Харьков, 1930

Այս գիրքը պարունակում է իր մեջ մի շարք մատչելի ձևով գրված ուրվագծեր, վորոնք ընդգրկում են XVII--XVIII դ. ելոխան:

Տվյալ գլխի թեմային վերաբերում են հետևյալ հոդվածները. В. Рахметов— «Образование Российской империи», П. Лященко—«Экономика второй половины XVIII в.», А. Малышева—«Крепостные отношения производства (крепостное хозяйство) XVIII в. в России», М. Нечкиной—«Дворянская империя XVIII в.», А. Пресиякова—«Международные отношения России XVIII в.» и С. Томсинской—«Пугачевщина».

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

А. ПУШКИН—Капитанская дочка; Дубровский.

М. ЛЕРМОНТОВ—Вадим, неоконченная повесть в собр. соч.

Д. МАМИН-СИБИРЯК, Охотник брови (այս վիպակում նկարագրված է պուգաչովշչինան Ուրալում): И. ЛАЖЕЧНИКОВ—Ледяной дом, изд. 2-е, «Молодая гвардия», М. 1929 (թագուհի Աննա Իոաննովնայի ելոխան):

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

В. Гюго— Человек, который смеется (ինսցենիրովկան ըստ Վ. Հյուգոյի վեպի. Անգլիան և անգլիական արքունիքը XVIII դ. սկզբում); БОМАРШЕ,— Безумный день или женитьба Фигаро. Комедия в 5 действиях. Дешевая библиотека классиков, Гиз, Л. 1929. (այս կատակերգությունը, վոր բեմադրված է 1784 թ., ծաղրում է արիստոկրատիային և հին կարգերը), Д. ФОНВИЗИН—Недоросль, Бригадир; К. ТРЕНЕВ—Пугачевщина. Картины народных трагедий, изд. Мосполиграф, М. 1924; В. КАМЕНСКИЙ— Ем. Пугачов, народная драма в 2 действиях, изд. «Новая Москва», М. 1925; Д. СМОЛИН—Елизавета Петровна (Պետերբուրգի արքունիքը XVIII դ. մեջերքում):

ԻՐԱԶՆՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Պատկերների ալբոմներ

Атлас наглядных пособий по истории классовой борьбы на Западе, сост. Северо-кавказский Комм. Университетом, вып. I, раздел I. Промышленный переворот в Англии (таблици 1—16), Гиз, 1930.

Պատի աղյուսակներ

Издание отдела учебных пособий Главполитпросвета: серия **«История народного хозяйства России с XVIII в.до войны 1914 г.»**, выпуск II—«Крестьянство, аграрные отношения до 1861 г. и реформа 1861 г.» (таблици 1-я и 2-я).

Դիապոզիտիվներ

Издание гос. акц. о-ва наглядных пособий (АОНАПО—Москва): серия № 553—**Крестьянские восстания XVIII в.»** (25 սևագույն դիապոզիտիվներ):

Պատմական քարտեզներ և ատլասներ

В. ЕРМАКОВ и К. КОТРОХОВ—Европа в эпоху промышленного переворота (XVIII դարի 2-րդ կեսը պատի քարտեզ), Гиз, 1930.

К. КУДРЯШОВ—Россия в эпоху крепостного хозяйства и зарождения промышленного капитализма от конца XVIII в. до 1861 г.) (պատի քարտեզ), Гиз, М. 1929. К. КУДРЯШОВ. Русский исторический атлас. предисловие М. Н. Покровского, Гиз, М. 1928.

Կինո ֆիլմեր

«Այն մարդը, վոր ծիծաղում է» (ամերիկական ֆիլմ, ըստ Վ. Հյուգոյի վեպի), «Տիկին Դյուբարրի» (գերմանական ֆիլմ, ֆրանսիական արքունիքի բարքերը XVIII դ. մեջերքում). «Սառուցյալ տունը» (ըստ Ի. Լաժեչնիկովի վեպի: Ճորտատիրական իրավունքը: Արքունիքը Աննա Իոաննովնայի թագավորության որոք), «Ջկնորսի տղան» (Մ. Լոմոնոսովի կյանքը), «Պարոնայք Սկոտինինները» (ճորտատիրական տըննտեսությունը, Պուգաչովշչինան). «Կապիտանի դուստրը» (ըստ Պուշկինի վիպակի. պուգաչովշչինան). «Բուլատ-Բատիր» (կազանը պուգաչովշչինայի որով). «Վոսկե կտուցը» (Պավել I-ի ելոխան):

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիական մեծ հեղափոխությունը բուրժուական հեղափոխություն է: Նա յեկավ հիմնովին խորտակելու ֆեոդալական հարաբերությունները և այդ խնդիրը լուծեց հեղափոխական ուղիով: Սոցիալական կարգերը Ֆրանսիայում հեղափոխությունից առաջ («հին կարգերը») կասեցնում եյին կապիտալիստական հասարակության ձևավորման պրոցեսը, թույլ չեյին տալիս, վոր արտադրողական ուժերի զարգացումն առաջ ընթանա և առանց կռվի չեյին զիջում իրենց դիրքերը: Անհրաժեշտ է վորոշել, թե ինչպես հեղափոխությունը լուծեց «հին հասարակության բոլոր կապանքներն ավելել-տանելու, ղեն նետելու, կործանելու» իր խնդիրը (Լենին) և ճանապարհ հարթեց Ֆրանսիայում արդյունաբերական կապիտալիզմին անցնելու համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն դերի վրա, վոր խաղացին այդ հեղափոխության ընթացքում գյուղացիությունը, քաղաքի մանր բուրժուազիան և բանվորները, ապա պետք է պարզել մանր բուրժուազիայի (յակոբինների) ստեղծած դիկտատուրայի նշանակությունը, ուսում-

նվիրել այն «մեծ, անջնջելի, անմոռանալի գործը, որ կատարեցին XVIII դարի յակոբինները» (Լենին):

Այս գլուխն ուսումնասիրելիս՝ պետք է պարզել հետևյալ հիմնական խնդիրները.

1. Սոցիալական ի՞նչ իմաստ ուներ այն կոնֆլիկտը, որ հանգեց հեղափոխության.

2. Ինչո՞ւ այս հեղափոխությունը բուրժուական է.

3. Ի՞նչպիսի դեր ուներ այդ հեղափոխության մեջ մանր բուրժուազիան.

4. Ինչո՞ւ չեր կարող այն ժամանակվա բանվոր դասակարգը գրավել իշխանությունը:

ԴԱՍԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻՑ ԴԵՊԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԱՐԻՍՏՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Հին կարգերը Ֆրանսիայում քայքայվում եյին: Դժգոհությունը գնալով ավելի յեր տարածվում և ընդգրկում բնակչության նորանոր շերտեր: 1788 թ. ամառվա յերաշտից հետո սկսվեց ձմեռվա սեզոնը: Առաջնակարգ անհրաժեշտության իրերի և հացի գները աճում եյին օրեցօր: Հացը վաճառվում եր փոքր բաժիններով: Պատահում եր, որ սոված ամբոխները թալանում եյին հացի պահեստները, հացի խանութներն ու փռերը և անխնա կերպով սպեկուլյանտների դատը տեսնում:

Գրգռված գյուղացիությունը վտանգ եր սպառնում տիրող կարգերին: Պետության զանազան մասերում խռովություններ եյին ծագում: Մի ժամանակակցի ասելով՝ «ժողովրդի մեջ բացահայտ կերպով ըմբոստության վոգի յե նկատվում»:

1789 թ. ապրիլին Փարիզի Սենտ-Անտուան արվարձանում գտնվող ճենապակու, հախճապակու, պաստառի, գուլպայի և այլ ձեռնարկությունների բանվորները՝ սեզոնային բանվորների հետ միասին՝ տակն ու վրա արին գործարանատեր Ռեվեյոնի տունն ու մանուֆակտուրան: Անկարգությունները ճնշվեցին զինված ուժով: Խռովության հեղինակներն ու ղեկավարները կախվեցին: Բանվորներից շատերն աքսորվեցին տաժանակիր աշխատանքի:

Ֆինանսական դրությունը, վոր Լյուդովիկոս XIV կառավարության վերջում արդեն ծանր եր, 1774 թվից սկսած անելանելի դարձավ: Հեղափոխության սկզբին Ֆրանսիայի պետական պարտքն աճել-հասել եր 4 ½ միլլիարդ լիվրի [1]: Կառավարությունը փորձում եր դրությունը բարելավել թղթադրամներ բաց թողնելով: Սակայն այդ փորձերը մեծ անհաջողությամբ եյին վերջանում: Թագավորի և արտոնյալ բարձր դասի կառավարությունն արագացնում եր հեղափոխությունը: Նա ամեն կերպ խանգարում եր անցկացնելու այն ռեֆորմները, վորոնք առաջարկվում եյին յերրորդ դասի ներկայացուցիչների կողմից: Լյուդովիկոս XVI-ի մինիստրներից մեկը՝ ֆիզիոկրատ [1]) Տյուրգոն՝ միապետությունը կործանումից փրկելու նպատակով՝ առաջարկեց հրավիրել բնակչությունից ընտրված պատգամավորների պարբերական խորհրդակցություն՝ զանազան խնդիրներ լուծելու համար, հայտարարել առևտրի ազատություն, ճանապարհային կոռի փոխարեն հարկ նշանակել բնակչության բոլոր դասակարգերի վրա, կրճատել արքունիքի շռայլ ծախսերը և այլն: Տյուրգոյի դեմ յելան պալատական ընչաքաղց մեծամեծները, բարձր հոգևորականությունը, թագավորի ազգականներն ու նրա կինը՝ Ավստրիական կայսր Հովսեփ II-ի քույրը՝ Մարի Անտուանետը, վորն իր շռայլության համար «տիկին դեֆիցիտ» մականուն եր ստացել:

[1] Լիվրը = 37 ½ կոպ.

Չկարողանալով վորևե այլ յելք գտնել՝ կառավարությունը նոր և նոր փոխառությունների յեր դիմում: Իսկ չկատարելով փոխառությունների հետ կապված պարտավորությունները՝ նա այլևս չեր կարող շահել պետության վարկատու՝ խոշոր բուրժուազիայի վստահությունը:

Վրա հասնող ֆինանսական սնանկացումը մեկուսացնում եր թագավորական կառավարությունը: Ակնհայտ եր դարձել այն, վոր յերկրի զարգացման առջև յեղած արգելքները պետք է անխուսափելիորեն վերացվեն հեղափոխական ճանապարհով:

ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄԻ ԱՆԿՈՒՄԸ

Բուրժուազիան, վոր դրամով փոխատվություն եր անում պետությանը փոխառությունների ձևով, գայրույթով և տագնապով լցվեց, յերբ ֆինանսների մինիստր՝ բանկիր Նեկկերի կողմից հրապարակված պետական բյուջեյից (այդ առաջին բյուջեն եր Ֆրանսիայում, թագավորական իշխանության գոյության ամբողջ ընթացքում) իմացավ, վոր պետության դեֆիցիտը հասել է վողջ բյուջեյի 16 տոկոսին (5 միլլոն լիվր): Բուրժուական շրջաններում գնալով ավելի խիստ ոպոզիցիոն եր դառնում տրամադրությունը: Ձայներ եյին լսվում դասերի գլխավոր ժողով գումարելու մասին: Այդ լոզունգը, քանի գնում, ավելի ժողովրդականանում եր:

Դասերի գլխավոր ժողովը հին դասային մի ներկայացուցչություն եր, վոր հրավիրում եյին թագավորներն այն նպատակով, վորպեսզի միջոցներ ճարեն զորք պահելու, պատերազմներ մղելու համար և այլն: Թագավորական իշխանության ուժեղացմամբ՝ վերացավ դասերի գլխավոր ժողով գումարելու կարիքը: Վերջին անգամ այդ ժողովը գումարվեց 1614 թվին:

[1]) Ֆիզիոկրատներ կոչվում եյին XVIII դ. տարածված այն ուսմունքի հետևորդները, վորի համաձայն հարստության միակ աղբյուրն եր համարվում հողը, իսկ արտադրողական եր ճանաչվում հողագործների զբաղմունքը: Ֆիզիոկրատները պաշտպանում եյին նաև այն գաղափարը, վոր պետությունը չպետք է միջամտի տնտեսական կյանքին:

Կառավարությունն այժմ փորձեց դասերի գլխավոր ժողով հրավիրել այն հույսով, վոր յելք կգտնի իր դրությունից դուրս գալու: Դասերի ժողովը սովորաբար նիստ եր կայացնում և քվեարկությունը կատարում ըստ դասերի: Յուրաքանչյուր առաջարկ քննարկվում եր յերեք դասերի կողմից առանձին-առանձին: Վճիռը կայացնում եյին վոչ թե ըստ ձայների, այլ ըստ դասերի մեծամասնության: Կարևորագույն խնդիրները լուծելիս՝ յերեք դասերի մեծամասնությունը, բնականաբար, լինում եր արտոնյալ դասերի՝ ազնվականության և հոգևորականության կողմը:

1789 թվի ապրիլին սկսվեցին Դասերի գլխավոր ժողովի պատգամավորների ընտրությունները: Ով հարկ չեր վճարում, նրանց բոլորին հեռացրին ընտրություններին մասնակցելուց: Այսպիսով քաղաքի բանվորների մի քանի կատեգորիաներ ընտրություններին չեյին մասնակցում: Ազնվականների և բարձր հոգևորականության համար ընտրությունները ուղղակի եյին- արտոնյալ դասերն իրենց պատգամավորներին ընտրում եյին անմիջականորեն: Ստորին հոգևորականության և յերրորդ դասի համար սահմանված եյին յերկաստիճան ընտրություններ· առաջ նրանք լիազորներ եյին առաջադրում, և ապա լիազորներն իրենց միջից պատգամավորներ եյին ընտրում: Լիազորների ժողովներում իբրև դասերի գլխավոր ժողովի պատգամավորներ, բնականաբար, անցնում եյին մեծ մասամբ քաղաքացիները:

Նման ընտրությունների հետևանքն այն եր, վոր դասերի գլխավոր ժողովի ընդհանուր կազմի մեջ կային մոտ 300 հոգի ազնվական-պատգամավորներ: Սրանց ճնշող մեծամասնությունը կազմում եյին պալատական և գավառային ազնվականները, իսկ փոքր մասը (28 հոգի)՝ պատմուճանի ազնվականներ: Հոգևորականությունից ընտրված եյին նույնպես մոտ 300 հոգի պատգամավորներ. նրանց մեծագույն մասը (200 հոգուց ավելի) կազմում եյին քահանաները, գլխավորապես՝ գյուղական. հոգևորականության բարձր խավը ներկայացված եր 48 արքեպիսկոպոսներով և յեպիսկոպոսներով, 35 աբբաներով (կաթոլիկական մենաստանների վանահայրերով): Կառավարությունը ձգտում եր շահել բուրժուազիայի աջակցությունը հարկեր անցկացնելու խնդրում,—հարկեր, վորոնք պետք է դրվեյին նաև արտոնյալ դասերի վրա. այդ նկատումով եր, վոր կառավարությունն ավելացրեց իր յերրորդ դասի պատգամավորների թիվը՝ հասցնելով այն մինչև 600 հոգու: Սրանց թվում շատ կային քաղաքի պաշտոնյաներ, վաճառականներ (216 հոգի), փաստաբաններ (212), բժիշկներ, քաղաքային ձայնավորներ (քաղ. խորհրդարանների անդամներ): Իբրև յերրորդ դասի ներկայացուցիչներ՝ ընտրվեցին մի քանի հոգևորականներ և 12 ազնվականներ:

Հին սովորության համաձայն՝ ընտրողներն իրենց պատգամավորներին հրահանգներ եյին հանձնում («Գանգատների և հայտարարությունների տետր»), վորտեղ նրանք արտահայտում եյին իրենց կարիքները և ձևակերպում իրենց պահանջները: Այդ հրահանգների հիման

վրա կարելի յե դատել, թե ինչ տրամադրություն եր տիրում Ֆրանսիան հեղափոխության նախօրյակին:

Իրենց հրահանգներում գյուղացիները գանգատվում եյին այն բանից, վոր հողի պակասություն ունեն, վոր հարկերը ծանր են, վոր կարգին ճանապարհներ չկան, վոր հողերը կուտակվել են կալվածատեր-ազնվականների կամ ազնվականական կալվածների խոշոր վարձակալների ձեռքում, վոր տիրոջ գործադրած վորսորդության իրավունքն իրենց տնաքանդ է անում և այլն:

Քաղաքական պահանջները գերակշռում եյին քաղաքացիների տված հրահանգներում: Այստեղ հիմնականում պահանջվում եյին սահմանադրություն մտցնել, դասերի գլխավոր ժողովին իրավունք ընձեռել՝ հարկեր սահմանելու և պետական ծախսերն վերահսկելու. այստեղ առանձնապես շեշտվում եր հարկերի հավասար բաշխման անհրաժեշտությունը: Արտոնյալ դասերն իրենց հրահանգներում համառորեն պաշտպանում եյին իրենց ֆեոդալական իրավունքները, ձգտում եյին ապացուցել նրանց անկապտելիությունը, հիմնավորելով այն իրավաբանական տեսակետից: Բացի հոգևորականության տված հրահանգներից, բոլոր հրահանգներն էլ առաջարկում եյին յեկեղեցական դույքերը ոգտագործել պետական պարտքը ծածկելու նպատակով: Դասերի գլխավոր ժողովում կիրառվելիք քվեարկության ձևի խնդրում յերրորդ դասը պաշտպանում եր ընդհանուր քվեարկությունը, այնինչ մնացյալ դասերը լռությամբ եյին անցնում այդ հարցը, թեև դեմ չեյին թույլ տալու, վոր բացառիկ դեպքերում կիրառվի նաև ընդհանուր քվեարկություն: Կառավարության դիրքն այդ խնդրում այնքան էլ պարզ չեր: Սակայն ռեֆորմների կողմնակից՝ մինիստր Նեկկերի 1788 թ. զեկուցագիրը հիմք եր տալիս կարծելու, վոր կառավարությունը բաժանում է յերրորդ դասի տեսակետը:

Տոնապայծառ պայմաններում 1789 թ. մայիսի 5-ին արքայական դահլիճում Վերսալում հավաքվեց դասերի գլխավոր ժողովը:

Առաջին «հանդիսավոր» նիստի ամբողջ ընթացքը (թագավորի, մինիստրների ճառերը) յեկավ ընդգծելու արքունիքի արհամարհական վերաբերմունքը յերրորդ դասի հանդեպ: Նորամուծությունների կողմնակիցների հասցեյին ուղղված սպառնալիքները («Դուք, պարոնայք, պետք է զայրույթով մերժեք այդ վտանգավոր նորամուծությունները»—ասաց իր ճառում Լյուդովիկոս XVI) վկայեցին, վոր պալատական շրջաններում վորոշել են վերջ տալ յերրորդ դասի ոպոզիցիային և պահպանել հին կարգերը:

Դասերն սկսեցին բանակցել իրար հետ՝ իրենց զբաղմունքները վարելու, ինչպես և քվեարկություն կատարելու յեղանակների մասին: Այդ յերկարատև ապարդյուն բանակցություններից հետո յերրորդ դասը հունիսի 17-ին իրեն հայտարարեց Ազգային, իսկ հետագայում՝ Հիմնադիր ժողով և առաջարկեց մյուս յերկու դասերի պատգամավորներին

միանալ իր հետ: Կառավարությունն անհապաղ մի շարք միջոցներ ձեռք առավ՝ արգելելու Ազգային ժողովի նիստերը: Հունիսի 20-ին յերրորդ դասի պատգամավորները՝ յերկրի հարաճուն հեղափոխական տրամադրությունից քաջալերված՝ հավաքվեցին, ուրիշ տեղ չունենալու պատճառով, գնդակախաղի դահլիճում և այստեղ յերդվեցին չցրվել մինչև սահմանադրության մշակելը: Ժողովրդական ամբոխները փողոցներում խանդավառությամբ եյին դիմավորում յերրորդ դասի պատգամավորներին: Հատուկ նիստում թագավորի մասնակցությամբ (արքայական նիստ) վերացվեցին Ազգային ժողովի վորոշումները: Թագավորը «հրամայեց» պահպանել առանձին դասերը և նրանց առանձին նիստերն ու իսկույն ևեթ կատարել նրա «կամքը» ու ցրվել: Սակայն յերրորդ դասի պատգամավորները մնացին իրենց տեղում շարունակելու նիստը: Այդ նիստում հանդես յեկավ իր ճառով յերրորդ դասի առաջնորդ Միրաբոն: Նա դատափետում եր աբսոլյուտիզմը: Նա հայտարարեց, վոր թագավորը սոսկ պաշտոնյա յե, իրենց լիազորը, մինչդեռ իշխանության կրողները հանդիսանում են իրենք՝ պատգամավորները, ժողովրդի ընտրյալները, վոր կոչված են յերկրին սահմանադրություն ընձեռելու:

Ներս մտավ պալատական ծառայողներից մեկը: Յերբ սա բարձր ձայնով հանդիմանեց ժողովականներին՝ «Ձեզ հայտնի յե թագավորի կամքը. ապա ինչո՞ւ չեք ցրվում»՝ այն ժամանակ Միրաբոն վրա բերեց. «Մենք այստեղ նիստի յենք հավաքվել ժողովրդի կամքով և վորոշել ենք չցրվել վոչ մի այլ դեպքում, քան սվինների ուժին յենթարկվելով միայն: Հայտնեցեք այս նրան, ով ուղարկել է ձեզ այստեղ»:

Այսօրինակ հաստատակամությունը, ինչպես և հրամայական տոնը բխում եյին այն համոզմունքից, վոր հեղափոխությունն արդեն սկսվել է և վոր հեղափոխական յերկիրը պատրաստ է վերջին և վճռական կռվի բռնվելու հին աշխարհի հետ:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻԶՈՒՄ ՅԵՎ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

Փարիզը վերածվեց հեղափոխության կազմակերպող կենտրոնի: Իշխան Օռլեանցու պալատին կից Պալե-Ռոյալ այգին դարձավ անընդհատ հավաքույթների վայր՝ Փարիզի բնակչության համար: Այստեղ նորություններ եյին հաղորդում իրարու, քաղաքական խնդիրներ լուծում, լսում եյին յերրորդ դասի ագիտատորների հուզող ճառերը, հանրամատչելի գրականությունը, բրոշյուրները, լրագրերն ու ժուրնալները մասսաների մեջ տարածում եյին քաղգիտակիցների տարրեր, հաղորդում եյին վերջին նորությունները Վերսալի մասին, գավառներում ծավալվող շարժումների մասին, գրգռում եյին հեղափոխական եներգիան, զարթեցնում հեղափոխական միտքը: Մի առանձին աշխուժությամբ արձագանք եյին տալիս անցուդարձերին Փարիզի արվարձանների բանվորական թաղամասերը:

Մի առիթ եր պետք, վոր հեղափոխությունը պոռթկա: Վրա հասնող հեղափոխության նախազգացումն արքունիքին հարկադրում եր զգուշությամբ գործելու. կառավարությունն արտաքուստ միջոցներ չեր ձեռք առնում ցրելու Հիմնադիր ժողովը, սակայն աննկատելիորեն զորքեր եր հավաքում կենտրոն և պատրաստվում եր խեղդելու հեղափոխությունը:

Հուլիսի 11-ին թագավորն արձակեց պաշտոնից Նեկկերին: Հուլիսի 12-ին Փարիզն ապստամբեց: Ժողովրդական մասսաներն արվարձաններից շարժվեցին դեպի քաղաքի կենտրոնը: Ամբոխը հարձակվեց զի-



Բաստիլի առումը 1789 թ. հուլիսի 14-ին (ժամանակակից փորագրությունից)

նապահեստի վրա և տակն ու վրա արավ այն. հետո քանդեցին քաղաքի ուղեփակները, վորտեղ մաքսեր են գանձվում ներմուծվող հացից: Հուլիսի 14-ին ամբոխը շարժվեց դեպի Բաստիլ, այն հին ամրոցը, վոր ծառայում եր իբրև բանտ՝ հեղափոխականների համար և իբրև հենակետ՝ հեղափոխության ճնշման դեպքում: Ապստամբած բնակչությունը, վորի հետ շատ զինվորներ միացան, գրոհ տալով առավ Բաստիլը: Շուտով քարուքանդ արին այդ բերդը:

Այդ օրերին խոշոր բուրժուազիան՝ ինքնապաշտպանության նպատակով և ժողովրդական շարժումից յերկյուղ կրելով՝ շտապեց կազմակերպել Փարիզում կոմունա, քաղաքային ինքնավարության մի մարմին՝ բուրժուական կազմով. նա ստեղծեց նաև իր զինված պահակախումբը՝ ազգային գվարդիան: Վարձու զորքերը—շվեյցարացի այն հրաձիգները, վորոնք ռոճիկով ծառայում եյին հին ռեժիմին—հեռացվեցին: Նեկկերին վերականգնեցին իր պաշտոնի մեջ:

Փարիզի փողոցները վերածվեցին զինված ճամբարների: Ժողովուրդը՝ ցասումով լի՝ դատաստան եր անում հին իշխանության ներկայացուցիչներին և գործակալներին:

1789 թվի հոկտեմբերի 5-ին Փարիզի սոված բանվորներն իրենց կանանց հետ միասին գնացին Վերսալ և ստիպեցին թագավորին Հիմնադիր ժողովի հետ տեղափոխվել Փարիզ: Նրանք կարծում եյին, վոր, յեթե թագավորն այստեղ տեղափոխվի, հակահեղափոխական յելույթները կվերանան և ավելի շատ եժանագին հաց կներմուծվի քաղաք:

Հեղափոխական շարժումն անցավ գավառները, գյուղերը: Թագավորի կառավարությունը զրկվեց հնարավորությունից՝ հենվելու իր «հավատարիմ հպատակների», իր «բարի շինականների» վրա. նա այլևս հող չեր գտնում՝ հեղափոխության դեմ պայքար կազմակերպելու համար: Գավառներում շարժումն ուղղված եր թագավորական իշխանության տեղական ներկայացուցիչների դեմ: Բուրժուազիան ամենուրեք ստեղծում եր իր զինված ուժը (ազգային գվարդիան): Քաղաքներում հիմնվում եյին նոր իշխանության մարմիններ, «մշտական կոմիտեներ». այդ կոմիտեները ղեկավարում եյին միլիցիան՝ ազգային գվարդիան, և վարում եյին այն բոլոր գործերը, վորոնք վերաբերում եյին քաղաքներում կարգ ու խաղաղություն հաստատելուն և բնակչությունը պարենով ապահովելուն:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Գյուղացիական շարժումը լայն չափեր եր ընդունում: Նա ձգվում եր դեպի քաղաքներն էլ. այստեղ քաղաքային ուղեփակներում մաքսեր եյին գանձվում ներմուծվող ապրանքներից: Գյուղացիների շարժումը տագնապ եր ազդում բուրժուազիային: Լիոն, Տրուա և Շալոն քաղաքների բուրժուազիան ուղարկում եր ազգային գվարդիան՝ ճնշելու գյուղացիական կառավարությունները: Գյուղացիները վոչնչացնում եյին քաղաքային ուղեփակները, ավերում եյին ազնվականների կալվածներն ու ֆեոդալական ամրոցները, կրակում եյին բերքը, սպանում եյին [illegible]սուններին, իսկ յերբեմն էլ՝ իրենց կալվածատերերին: 1789 թվի հուլիսի յերկրորդ կեսը նշանավոր եր նրանով, վոր այդ ժամանակ գյուղացիական ապստամբությունը տարածվել եր ամենուրեք:

Գյուղացիական շարժումը չեր խնայում վոչ բուրժուա հողատերերին, վոչ կալվածատիրական ագարակների վարձակալներին, վոչ էլ վանքերի և հոգևորականների տիրապետությունները:

«Սեփականությունը ամենալկտի թալանի և ավազակության զոհ է դարձել, ամենուրեք հրդեհում են ամրոցները, այլև չեն վճարվում տուրքերը, չեն կատարվում սենյորալ պարհակները. որենքներն անզոր են, իշխանությունները՝ հեղինակությունից զուրկ, դատարաններից ստվեր է մնացել»—գրում եր Հիմնադիր ժողովի պատգամավորը:

Գյուղացիական շարժումն ընդգրկեց ողջ Ֆրանսիան: Առանձին ուժով նա պայթեց արևելյան շրջաններում: Հիմնադիր ժողովը, որ այնքան մեծ ուշադրություն եր նվիրում քաղաքական խնդիրներին, իհարկե, հուզված եր սաստիկ. չէ՞ վոր այնտեղ նստած եր կալվածատեր պատգամավորների ամբողջ կեսը: Ահա թե ինչու իրենք՝ կալվածատերերն ոգոստոսի 4-ի գիշերվա նիստին շտապեցին հրաժարվել իրենց ֆեոդալական իրավունքներից և բոլոր ֆրանսիացիների համար սահմանեցին հավասարություն՝ որենքի առաջ: Սակայն այդ դեկրետը, վոր հրատարակվեց այդ վորոշման հիման վրա, գյուղացիների ոգտին չեր բնավ: Ոգոստոսի 11-ի դեկրետը՝ հաղթական տոնով ազդարարելով ֆեոդալիզմի վերացման մասին՝՝ գյուղացիական պարհակները բաժանեց յերկու կարգի —անձնական և իրական: Անձնական պարհակներն ու վճարումները, վոր կապված եյին գյուղացիների անձնապես անազատ լինելու հետ, վերացվում եյին առանց փրկանքի: Իսկ իրական պարհակների խնդիրը հանձնվեց Հիմնադիր ժողովի ընտրած հատուկ «ֆեոդալական հանձնաժողովին» լուծելու: Յեվ ահա այդ հանձնաժողովի վորոշումը որենքի ուժ ստացավ 1790 թվի մարտի 15-ին: Այդ որենքի համաձայն՝ իրական պարհակները, այսինքն այն բոլոր պարտավորությունները հանդեպ սենյորի, վոր գյուղացիները պետք է կատարեյին սենյորից վերցրած հողամասերի դիմաց,—յենթակա եյին հատուցման: Հասութաբեր սենյորալ պարհակները՝ դաշտային բահրան, հողը տիրող անձանց փոփոխելու դեպքում վճարվող տուրքերը՝ նմանապես համարվում եյին իրական:

Բոլոր վեճերը, վոր հարուցվում եյին դատարանում իրական պարհակների վորոշման շուրջը, լուծվում եյին, կանխամտաբար, սենյորի ոգտին: Իրական պարհակների փրկանքով ազատվելու պայմանները գյուղացիների համար չափազանց ծանր եյին: Փրկանքի վճարումը լինում եր միաժամանակ և պարտադիր՝ տվյալ վայրում ապրող բոլոր գյուղացիների համար առանց բացառության: Փրկանքի հաջողությունն ապահովելու համար սահմանվում եր համապարտ յերաշխավորություն: Գյուղացիները յետ եյին գնում պարհակները՝ 29 տարվա ընթացքում յեղած ամեն տեսակի հարկային ապառիկները չիջուցանելով հանդերձ, առանց վորևէ նպաստ և ոգնություն ստանալու պետական վարկատու և ֆինանսական հիմնարկներից: Այսպիսով՝ բուրժուական Հիմնադիր ժողովը փորձեց Ֆրանսիայի գյուղացիության վրա բարձել ահագին վճարումներ, վորոնց ընդհանուր գումարը հասնում եր մոտ 2·500 միլիոն լիվրի:

Զարմանալու բան չկա, վոր ֆեոդալական պարտագրերը, վորոնց ձևակերպված եյին այդ «իրական» իրավունքները, այնքան խորը ատելություն եյին առաջացնում գյուղացիների մեջ և այրվում եյին նրանց ձեռքով:

1789 թվի ոգոստոսի 11-ի և 1790 թվի մարտի 15-ի դեկրետները նոր խթան հանդիսացան գյուղացիական շարժման վերելքի համար. գյուղացիներն այլևս չեյին կատարում ֆեոդալական պարհակները: Ըմբոստումները չեյին հանդարտվում: Հաճախակի յեր դառնում կալվածատերերի փախուստը դեպի քաղաքները, ինչպես և նրանց գաղթը՝ արտասահման:

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽ ԱՆՑԱԾ

Անցնելով իշխանության գլուխ՝ բուրժուազիան ամեն կերպ աշխատեց հանել պետությունը ֆինանսական փակուղուց: Այդ նպատակին հասնելու համար [illegible] իմաստով լուծվեց յեկեղեցական կալվածների

ազգայնացման[1]) հարցը: Յեկեղեցական անշարժ սեփականությունը ազգայնացվեց և ծառայեց իբրև թղթադրամների—ասսիգնատների[2]) —ապահովման միջոց: Մոտավոր հաշվով՝ յերկրի բոլոր հողերի մոտ 20% անցավ պետության ձեռքը (յեկեղեցական յեկամուտների ընդհանուր գումարը համարվում էր մոտ 350 միլիոն լիվր): Այդ գույքը սկսեցին վաճառել խոշոր հողամասերով՝ նրանց արժեքը մաս-մաս վճարելու կարճ ժամկետներ նշանակելով: Նման պայմանների շնորհիվ հողն ընկնում էր քաղաքային և գյուղական (կուլակային) բուրժուազիայի և սպեկուլյանտների ձեռքը: Գյուղի չքավոր ու միջակ շերտերը, գյուղացիության լայն մասսաները, իհարկե, չէին կարող օգտվել ազգային ֆոնդի հողերից: Գրավելով յեկեղեցու հողերը՝ բուրժուազիան արդարանում էր նրանով, որ պետությունն է ստեղծել յեկեղեցիներն ու վանքերը, իբրև հոգևոր հաստատություններ, պետությունը հողեր է պարգևել նրանց, հետևապես՝ նա ինքն էլ իրավունք ունի նրանց զրկելու այդ հողերից: Այս յեղանակով բուրժուազիան փորձեց՝ հանուն «սրբազան» սեփականության մաքուր և անսասան պահպանման՝ արդարացնել յեկեղեցական հողերի գրավումն իր օգտին:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ ՅԵՎ 1791 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բուրժուական վոգով են տոգորված Հիմնադիր ժողովի հիմնական օրենսդրական ակտերը՝ «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան» և 1791 թվի սահմանադրությունը: «Դեկլարացիան» ծառայում է իբրև սահմանադրության ներածություն, նա սկզբունքային լուսաբանություն է տալիս քաղաքական նոր հաստատություններին և կազմակերպություններին, հայտարարում է ֆեոդալական կարգերը վերացած և նոր կարգերի հիմքերն է սահմանում: «Դեկլարացիան» արտացոլում է այն տրամադրությունն ու մտայնությունը, վորոնցով տոգորված էր հեղափոխական բուրժուազիան՝ հանուն հին ֆեոդալական կարգերի վոչնչացման մղած իր պայքարում: Իսկ 1791 թվի սահմանադրությունը հաստատում էր Ֆրանսիայում մեկ պալատով սահմանադրական միապետություն:

Բուրժուազիան վոչնչացրեց դասերը, արտոնությունները, տիտղոսները, վերացրեց նեգրերի ստրկությունը, հրեյաների, բողոքականների համար սահմանված բոլոր ճնշումները, չեղյալ հայտարարեց քահա-

1) Ազգայնացնել—այս կամ այն տիրապետությունը հայտարարել պետական սեփականություն:

2) Ասսիգնատներ—1789 թվի դեկտեմբերին բաց թողած թղթե դրամնիշներն են. դրանք պետական պարտաթղթեր էյին: Ասսիգնատի տերը վորոշ հողամասի իրավունք ուներ: 1790 թ. սկզբին, հնչուն դրամի պակասության հետևանքով, ասսիգնատները հայտարարվեցին հարկադիր կուրս ունեցող թղթադրամներ և շրջանառության մեջ ընդունվում էյին հնչուն դրամի հետ համահավասար:

նաների գրաքննությունը, յերդվյալ ատենակալների դատարան և հրապարակական դատավարություն մտցրեց: 1791 թվի սահմանադրության համաձայն՝ թագավորն ու նրա կողմից նշանակված մինիստրները համարվում էյին իբրև գործադիր իշխանություն, իսկ օրենսդրական իշխանությունը պատկանում էր ժողովրդական ներկայացուցիչների պալատին (օրենսդրական ժողովին): Թագավորն իրավունք ուներ միայն «վետո» (արգելք)՝ դնելու ժողովի վորոշումների վրա. այդ վետոն, սակայն, կորցնում էր իր ուժը, յեթե յերկու անգամ փոխված օրենսդրական ժողովները պնդեյին իրենց առաջվա վորոշման վրա: Բյուրոկրատական հին ապարատի փոխարեն գավառներում հաստատվեց ինքնավարություն: Ֆրանսիան բաժանվեց 83 ինքնավար մասերի (դեպարտամենտների), վորոնք կոչվում էյին նոր ձևով, գետերի, լեռների և այլ անուններով: Գավառական իշխանություններն ընտրվում և հաստատվում էյին պաշտոնների մեջ իր իսկ բնակչության կողմից: Անուղղակի հարկերն ու կապալների սիստեմը վերացրին և ուղղակի հարկ մտցրին՝ հողի, տների և ձեռնարկությունների համար:

1789 թվի դեկլարացիան ավելի յեր արմատական (վճռական), քան 1791 թ. սահմանադրությունը: Բայց «դեկլարացիան» պարտավորեցուցիչ բնույթ չուներ. այնինչ 1791 թվի սահմանադրությունը իրավական վորոշ նորմաներ սահմանող մի օրենք էր: 1789 թվից սկսած՝ բուրժուազիան ձեռք էր բերել սոցիալական մեծ փորձ. նա տեսել էր ժողովրդական մասսաների հեղափոխական ակտիվությունը: Թե՛ գյուղացիական շարժման մեջ, թե Փարիզի և գավառական քաղաքների ապստամբություններում և թե բանվորական գործադուլների մեջ բուրժուազիան նկատում—ճանաչում էր դասակարգային իր թշնամիներին: Ահա թե ինչո՛ւ նա աշխատում էր ամրապնդել իր դիրքերը, միջոցներ էր ձեռք առնում հեղափոխական ժողովրդի դեմ:

«Դեկլարացիով» ժողովրդական գերիշխանություն հռչակելով հանդերձ՝ նա սահմանադրությամբ պահպանեց թագավորի իշխանությունը. բոլորի հավասարությունն օրենքի առջև սահմանադրության մեջ ընդունեց ցենզային ընտրական օրենքի ձև. ըստ 1791 թվի սահմանադրության, քաղաքացիները բաժանվում էյին ակտիվների և պասիվների: Ընտրական իրավունքից օգտվում էյին միայն ակտիվ քաղաքացիները (արական սեռի), վորոնք 25 տարեկան հասակի էյին հասել, յերկար ապրել էյին միևնույն վայրում և յերեք օրվա աշխատավարձի չափ ուղղակի հարկ էյին վճարում: Իսկ պատգամավոր ընտրվել կարող էր նա միայն, ով վճարում էր 50 ֆրանկից ավելի ուղղակի հարկ և անշարժ գույքի տեր էր: Հիմնադիր ժողովի անդամներից մեկի ասելով՝ «ով վոչ մի սեփականություն չունի, նա հասարակության անդամ չէ. կառավարչությունն ու օրենսդրությունը սեփականության գործն են. ահա թե ինչո՛ւ միայն սեփականատերերն են նրանցով շահագրգռված»:

Մինչդեռ «դեկլարացիան» պնդում էր, թե «բոլոր քաղաքացիները իրավունք ունեն անձամբ կամ ներկայացուցիչների միջոցով մասնակցելու օրենքների հրատարակման գործին»: «Դեկլարացիան» ազդարարում էր, որ ժողովուրդն իրավունք ունի ճնշումներին դիմադրելու»: 1791 թվի սահմանադրությունը, սակայն, պարզաբանեց այդ իրավունքն այն իմաստով, թե ճնշումներին դիմադրելն ավարտվել, անցյալի գիրկն է նետվել, այնպես որ այժմ բուրժուազիայի իշխանության դեմ, քաղաքական նոր «կարգերի» դեմ ուղղված ամեն մի նոր դիմադրություն պետք է ճնշվի ռազմական ուժի օգնությամբ:

Եթե ազգության մի մասն է միայն բացարձակապես իշխում, իսկ մյուս մասը պարզապես հպատակյալ է, ապա քաղաքական նման իրավակարգը ոչ այլ ինչ է, յեթե ոչ իսկական արիստոկրատիա—վրդովված ասում էր Մաքսիմիլիան Ռոբեսպյերը, հեղափոխության հետագա առաջնորդը—և այն էլ ինչպիսի՛ արիստոկրատիա. բոլոր տեսակներից ամենաանտանելին, հարուստների արիստոկրատիա, և ահա այդ արիստոկրատիայի լծի տակ դուք ցանկանում եք դնել ժողովրդին, որ նոր է ազատվել ֆեոդալական արիստոկրատիայի լծից»:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Հիմնադիր ժողովի բոլոր ձեռնարկումներից յերևում էր, որ խոշոր բուրժուազիան վախենում է ապստամբած ժողովրդի կողմից սպառնացող վտանգից: Այդ տեսակետից առանձնապես հատկանշական է Հիմնադիր ժողովի բանվորական օրենսդրությունը:

1789 թվին, այդ ծանր տարին յեկավ կրճատելու արտադրությունը ձեռնարկություններից շատերում, մանավանդ այն ձեռնարկություններում, որոնք արտադրում եյին արիստոկրատիայի կողմից սպառվող փարթամության իրեր: Հեղափոխությունը հարկադրեց մեծատուններին կրճատելու տնային ծառայողների շտատները: Գործազրկությունից առաջացած խռովությունը տարածվեց նաև դերձակների, սափրիչների, կառուցող բանվորների շրջաններում: Թեև Փարիզի մոտ, Մոնմարտրի բարձունքներում հասարակական հողային աշխատանքները կազմակերպվեցին («բարեգործական արհեստանոցներ»), բայց ցածր աշխատավարձը, աշխատանքի ծանր պայմանները ուժեղ խլրտում առաջ բերին գործազուրկների մեջ, որոնք մեծ թվով կուտակվել եյին արհեստանոցներում: Բանվորներին իրարից անջատելու նպատակով՝ արհեստանոցները փակեցին, և նրանց փոխարեն մի քանի մանր արհեստանոցներ բացվեցին քաղաքի զանազան մասերում: Քանի որ յերկրի դրությունն անտեսապես և քաղաքականապես լավացավ և կապիտալիստները՝ խուսափելով իրենց կապիտալները չապահովված ասիգնատներով պահելուց՝ ձեռնամուխ յեղան այդ կապիտալների ներդրմանը կայքի և շինարարության մեջ, ուստի այդ կապակցությամբ գործազրկությունը 1790 թ. նվազեց:

1790 թվի գարնանը բանվորները սկսեցին իրենց տերերին պահանջներ առաջադրել աշխատավարձի բարձրացման վերաբերյալ: Գործադուլային շարժումն ընդգրկեց Փարիզի պրոլետարիատը: Այդ գործադուլներին բուրժուազիան պատասխանեց այն օրենքով, որ առաջարկվեց պատգամավորներից մեկի՝ Լե-Շապելյեյի կողմից և ընդունվեց Հիմնադիր ժողովում 1791 թվի հունիսի 14-ին: Այդ օրենքով արգելվեցին ամեն տեսակի պրոֆեսիոնալ միավորությունները, կոլեկտիվ կերպով պահանջագրեր ներկայացնելը, ժողովներ ու գործադուլներ կազմակերպելը. հակառակ դեպքում օրենքը խախտողներին տուգանում եյին, բանտարկում, արգելում աշխատանքի անցնել: Լե-Շապելյեյի օրենքը մի փայլուն նմուշ է ձեռնարկատիրական բուրժուազիայի համար տիպիկ օրենսդրական պրակտիկայից: Յեվ իզուր չէ, որ այդ օրենքը Ֆրանսիայում գործադրության մեջ մնաց մինչև 1864 թիվը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱԿՈՒՄԲՆԵՐԸ

Կուսակցություններ իրենց ծրագրերով ու կանոնադրություններով այն ժամանակ դեռ գոյություն չունեյին: Քաղաքական հոսանքների միջև նշմարվում եյին աբսոլյուտ միապետության (հին ռոյալիստները*), յերկպալատանի սիստեմով չափավոր միապետության և մի պալատանի սահմանադրական միապետության կողմնակիցներ: Հիմնադիր ժողովի ժամանակաշրջանում համեմատաբար թույլ չափով եյին ներկայացված չքավորության շահերը պաշտպանող դեմոկրատական խմբավորումները: Քաղաքական խնդիրները նախօրոք քննելու համար պատգամավորներն ու իրենց համախոհները սովորաբար հավաքվում եյին ակումբներում (դրանք—քաղաքական ընկերություններ եյին), որոնք խոշոր դեր եյին խաղում հեղափոխական և հակահեղափոխական ուժերի կազմակերպման գործում:

Ամենամեծ հռչակը վայելում էր «Սահմանադրության բարեկամների ընկերության ակումբը», որը հիմնված էր 1791 թվի փետրվարի 8-ին. Նրա ժողովները տեղի եյին ունենում Փարիզի յակոբինյան վանքում, և դրա համար այդ ակումբը մեծամեծների կողմից հեգնանքով հորջորջված էր «Յակոբինական» անունով: Իր գոյության առաջին շրջանում Յակոբինական ակումբը սահմանադրական միապետության կողմն էր: Սակայն հեղափոխության զարգացման ընթացքում Յակոբինական ակումբում գերիշխող դարձան դեմոկրատ-հանրապետականները, որոնք և մաքրեցին ակումբը միապետականներից: Նրանք արտահայտում եյին մանր բուրժուազիայի ունևոր մասի տրամադրությունը: Յակոբինական ակումբն առաջին տարիները գաղտնի յեր գործում և չքավորության ու ռամիկ ժողովրդի համար արգելում էր մուտքը իր ժողովներին:

Բայց 1791 թվի հոկտեմբերի 12-ից սկսած՝ նա իր նիստերը հայտա-

*) Ռոյալիստներ-թագավորական իշխանության կողմնակիցներ:

բարեց ղոնբայ, իսկ 1792 թվի սեպտեմբերի 21-ին պաշտոնապես նա դարձավ «Յակոբինների՝ ազատության և հավասարության բարեկամների ընկերության»: Այդ ակումբը գավառներում ուներ բազմաթիվ բաժանմունքների մի ցանց, որոնք կյանքի մեջ էին անցկացնում իրենց կենտրոնի տված դիրեկտիվներն ու ցուցումները: Յակոբինների ականավոր առաջնորդն էր հանդիսանում փաստաբան Մաքսիմիլիան Ռոբեսպյերը (1758—1794):

Յակոբինյան ակումբից դուրս ելած սահմանադրականներն ու չափավոր միապետականները կազմեցին իրենց ընկերությունը՝ «1789 թվի ակումբը» Ֆեյյանների վանքի շենքում (այստեղից էլ նրանց անունը՝ «ֆեյյաններ»): Ֆեյյաններն անհրաժեշտ էին համարում ուժեղացնել ռեպրեսիվ միջոցները հեղափոխական ելույթների դեմ:

Մեծ ժողովրդականություն էր վայելում «Կորդելյերների ակումբը» (նույնպես մի վանքի անունից է, որի շենքում մի ժամանակ տեղավորված էր ակումբը), որի շուրջն էին համախմբված դեմոկրատիայի տարբեր խմբերը: Այդ ակումբը պաշտպանում էր «մարդու և քաղաքացու իրավունքները», «պասիվ քաղաքացիների» շահերը: Հետագայում, յակոբինների դիկտատուրայի շրջանում այդ ակումբը դարձավ հեբերտիստների շտաբը և 1794 թվի գարնանն ապստամբություն առաջ բերելու մի անհաջող փորձից հետո կործանվեց: Ամենաազդեցիկ կորդելյերների շարքում էին փաստաբան Դանտոնը (1759—1794), Կամիլ Դեմուլենը (1760—1794), բժիշկ Մարատը (1744—1793), ժուռնալիստ Հեբերը (1757—1794):

ԱՐՔՈՒՆԻՔԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ. ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Խոշոր բուրժուազիան, որ հին կարգերի դեմ պայքարելիս հենվեց մասսաների վրա և այդ մասսաներին գրոհի հանեց ֆեոդալական կարգերի դեմ, այժմ, իշխանություն ձեռք բերելուց հետո, սկսեց սաստիկ վախենալ, որ հեղափոխությունն ավելի ևս կծավալվի: Ժողովրդական մասսաների դեմ պայքարելու համար նա ուժերի մոբիլիզացիա կատարեց. նա նույնիսկ կանգ չառավ ռեպրեսիաների և հալածանքների սիստեմի առաջ և դաշինք կնքեց միապետության հետ: Հիմնադիր ժողովն այնքան չէր հուզվում և անհանգստանում «սահմանադրական» թագավորի և արքունիքի պարզորոշ հակահեղափոխական գործունեությունից, որքան նրանից, որ հեղափոխության զարգացումն առաջ կընթանա:

Հեղափոխությունը հրապարակ հանեց իր առաջնորդներին: Հեղափոխության խոշորագույն տրիբուններից մեկն էր Մարատը, հին կարգերի այդ կատաղի թշնամին, «Ժողովրդի բարեկամ» հեղափոխական թերթի խմբագիրն ու գլխավոր աշխատակիցը: Ունևոր դասակարգերի շահերին նա շարունակ հակադրում էր չքավոր խավերի շահերը: Ընդհատակյա անգույն աշխատանք կատարող, բուրժուազիայի համար ամենաատելի մարդը, հեղափոխության ամենաանձնվեր զինվոր Մարատը բազմիցս նախազգուշացնում էր այն մասին, որ արքունիքում հակահեղափոխական դավադրություններ են պատրաստվում, որ թագավորը կարող է փախչել արտասահման, որտեղ այդ ժամանակ հավաքվում-կենտրոնանում էր ֆրանսիական էմիգրացիան—թագավորի եղբայրները, իշխանները, տիտղոսավոր ազնվականները, գեներալները, տերտերները և այլն, հեղափոխությունից փախած սպաները: Մարատի այդ նախազգուշացումներն անհիմն չէին: 1791 թվի հունիսին թագավորական ընտանիքը փորձեց փախչել արտասահման, սակայն ճանապարհին, Վարեն կոչված փոքրիկ քաղաքում Լյուդովիկոսին ճանաչեցին և՝ ամոթահար՝ վերադարձրին ելի Փարիզ:

Երբ բանվորներն ու մանր բուրժուական դեմոկրատիան պահանջեցին տապալել փախստական-թագավորին, որը մտադրություն է ունեցել դավաճանների և օտարերկրացիների օգնությամբ արյան մեջ խեղդելու Ֆրանսիան,—Հիմնադիր ժողովն այդ պահանջին պատասխանեց մերժումով: «Լյուդովիկոս XVI—հայտարարեց նա—չի փախել, այլ նրան փախցրել են»: Կորդելյերների ակումբի նախաձեռնությամբ 1791 թ. հուլիսի 17-ին Մարսյան դաշտում ցույց կազմակերպվեց, որտեղ հազարավոր մարդկանց կողմից ստորագրված մի խնդրագիր մշակվեց՝ թագավորին տապալելու և դատի ենթարկելու անհրաժեշտության մասին: Հուլիսի 17-ի ցույցը ցրեցին զինված ուժով: Ամերիկյան հանուն ազատագրման կռվի հայտնի մասնակից մարկիզ Լաֆայետի հրամանատարությամբ՝ ազգային գվարդիան հրացաններից արձակած գնդակներով հանդիպեց անզեն ցուցարարներին:

Թագավորական պալատը հակահեղափոխական դավադրությունների կենտրոնն էր դարձել: Հին կարգերը վերականգնելու մի շարք անհաջող փորձերից հետո, թագավորի վիժած փախուստից հետո, թվում էր, միայն մի ելք էր մնում՝ վերջնականապես հրաժարվել հին կարգերը վերականգնելուց. մանավանդ որ խոշոր բուրժուազիան ամեն կերպ աշխատում էր քաղաքականապես հաշտ ապրելու թագավորական իշխանության հետ: Նրա ղեկավարները—Միրաբոն, Բայլի, Լաֆայետը, Բարնավը և ուրիշները—որպես «արքայական դեմոկրատիայի» կողմնակիցներ, մի քանի անգամ փրկել էին թագավորին և նրա կնոջ կյանքը հեղափոխական ամբոխի ձեռքից. հիմա նրանք եռանդուն պայքար էին մղում մամուլում սահմանադրական միապետության գաղափարի ժողովրդականացման համար:

ԱՆՎԱԽՆԵՐԻ ԵՄԻԳՐԱՑԻԱՆ

Սակայն, թագավորը՝ ազնվական և եկեղեցական շրջանների ճնշման տակ՝ համառորեն շարունակում էր իր քաղաքականությունը. Նրա համակրանքը հակահեղափոխական էմիգրացիայի կողմն էր. այդ էմիգրացիան կենտրոնացած էր Կոբլենցում (դա գերմանական փոքրիկ քաղաք է՝ Ֆրանսիայի արևելյան սահմանի մոտ): Այստեղ, այդ «փոքր Վեր-

սայլխայում»—ինչպես արտահայտվում էր այն ժամանակվա մի ռուս ժուռնալիստ—ֆրանսիական ազնվական էմիգրացիան թագավորի յեղբայրների գլխավորությամբ ուրախ, անհոգ կյանք էր անցկացնում՝ վերականգնացնելով Փարիզի և Վերսալի պալատների անցած փարթամությունն ու բարքերը և համոզված լինելով, վոր ռոյալիստների հաղթանակն ու հին կարգերի վերականգնումն անխուսափելի յեն:

Էմիգրացիայի բները Կոբլենցում, Վորմսում, Ետտենհայմում, Տուրինում և այլ տեղերում արագ աճում եյին. մեծամեծների հետևից այդ վայրերը նետվեցին՝ փախչելով Ֆրանսիայից՝ ազնվական սպաները: Հենց միայն Կոբլենց եյին գալիս միջին հաշվով օրական 80—100 հոգի (1791 թ.): 1791 թ. վերջերքում էմիգրանտների թիվը Կոբլենցում 20 հազարի հասավ: Այստեղ էմիգրանտական ջոկատներ կազմակերպվեցին Փարիզ արշավելու համար: Ճնշել հեղափոխությունը, թվում էր հեշտ, չնչին գործ. դրա համար հարկավոր էր միայն «կախաղան հանել հեղափոխության ղեկավարներին, գնդակահարել սահմանադրական միապետության բոլոր կողմնակիցներին, բուլվարներում ծառերից կախել մի քանի հարյուր հեղափոխականների, իսկ նրանց կանանց և աղջիկներին ծեծի յենթարկել հասարակական հրապարակներում»: Բայց Փարիզ արշավելու համար փող էր հարկավոր: Ցեվ ահա սկսեցին փնտրել, մի կերպ ձեռք բերել այդ դրամը: Դիմում եյին կապիտալիստներին, հաշվի եյին առնում անհատական միջոցները, բարձրաստիճան պաշտոնյաների ռոճիկները, վոր նրանք շարունակում եյին ստանալ Հիմնադիր ժողովի վորոշմամբ, ոգնություն և նպաստ եյին հայցում թագակիր անձնավորություններից («գարդիմանդ» ռուս թագուհի Ցեկատերինա II-ը մի անգամից 1.500 հազար ռուբլի նվիրեց պետական գանձարանից): Մի փոքր ոգնություն ցույց տվին Նեապոլի, Սպանիայի և Պրուսիայի թագավորները: Հավաքած փողն արագ կլանում էր էմիգրացիան, «ոգոստափառ» անձանց նվիրաբերություններն այլևս չեյին բավականացնում նրան: Զբաղված լինելով իրենց գործերով (Անգլիան հետևում էր Ռուսաստանի առաջխաղացությանը դեպի Սև ծովի ափերը, Ավստրիան և Պրուսիան կլանված եյին Լեհաստանը գրավելու հոգսերով, Ռուսաստանը գրգռում էր Ավստրիային և Պրուսիային Ֆրանսիայի դեմ պատերազմելու, վորպեսզի ինքը գրավի Լեհաստանը, առանց նրա բաժանման ձեռնարկելու և այլն)՝ յեվրոպական միապետությունները չեյին ծածկում իրենց արհամարհանքն էմիգրացիայի հանդեպ և այնքան էլ տրամադիր չեյին ֆրանսիական աբսոլյուտիզմին պաշտպան կանգնելու: «Վերին աստիճանի վրդովեցուցիչ է այն, վոր Բուրբոնների (Լյուդովիկոս XVI-ի ազգականների) հետ վարվում են վորպես շրջմոլիկների հետ, վորոնք մի տեղ չեն գտնում հանգիստ պառկելու»—դառը կսկիծով, բայց ապարդյուն գանգատվում եյին էմիգրանտական մեծամեծները 1791 թվին:

Իրենց կորցրածը վերադարձնելու նպատակով՝ էմիգրանտները ամեն

տեսակի բարիքներ եյին խոստանում ոտարերկրացիներին՝ նրանց ոժանդակության դիմաց, հեշտությամբ և առատ ձեռքով շնորհում եյին ֆրանսիական հողերը «հովանավորող պետություններին», իսկ մյուս կողմից էլ կապ եյին ստեղծում և պահպանում Ֆրանսիայի ներսում գործող հակահեղափոխության և վնասարարների հետ: Ֆրանսիայի սահմանադրական միապետը, վոր այնպիսի աջակցություն էր գտել հայրենական բուրժուազիայի կողմից,—հենվում էր էմիգրանտական և ներքին հակահեղափոխության ուժի վրա. նա դեմ էր «օրինականացրած անարխիայի»:

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միապետական վտանգն այնքան էլ չէր անհանգստացնում խոշոր բուրժուազիային. նա ձգտում էր սահմանադրական ճանապարհներով իր ազդեցության յենթարկել թագավորական իշխանությունը, համաձայնության գալ «ֆեոդալական ռոմանտիզմի» հետ, հաշտվել յեկեղեցու հետ:

Հիմնադիր ժողովի հրատարակած օրենքը՝ յեկեղեցու քաղաքացիական կացության վերաբերյալ՝ վերացրեց յեկեղեցու հին կազմակերպությունը և ընտրովի դարձրեց քահանաների պաշտոնը,—այդ նոր չինովնիկների, վորոնք պարտավոր եյին այսուհետև հավատարմության յերդում տալու սահմանադրության նկատմամբ («յերդվյալ» քահանաներ). այդպիսով բուրժուական միապետության ագիտատորների մի կարգ ստեղծվեց պաշտամունքի սպասավորներից:

Քաղաքի չքավորության, բանվորների և գյուղացիների հանդեպ ձեռք առած միջոցներն այնքան էլ մեղմ չեյին. «Մեր ազգությունը բաղկացած է 25 միլիոն հոգուց. մենք, չքավորներս միայն կազմում ենք այդ թվի 2/3-ից էլ ավել, այն ինչ պետության մեջ մեզ բանի տեղ չեն դնում»—հայտարարում էր Մարատը: Հիմնադիր ժողովն իրոք վոր մինչև վերջը բուրժուական ժողով էր և բուրժուական պլանով էր վերաձևում Ֆրանսիան:

ՈՐԵՆՍԴԻՐ ԺՈՂՈՎ (1791—1792)

2½ տարի գոյություն ունենալուց հետո Հիմնադիր ժողովն ավարտված համարեց իր լիազորությունները և ցրեց իրեն: 1791 թվի սահմանադրության հիման վրա, 1791 թ. հոկտեմբերի 1-ին բացվեց Որենսդիր ժողովը: Որենսդիր ժողովի անդամների մեծագույն մասը (766-ից 600 հոգին) կողմնակից էր չափավոր միապետության, քաղաքական այն իրավակարգի, վոր հաղթական բուրժուազիան էր ստեղծել:

Հիմնադիր ժողովի հետ համեմատած՝ Որենսդիր ժողովի կազմն ավելի ձախ գույն յեկավ, չնայած ցենզային ընտրական իրավունքի:

Բանը նրանումն է, որ ընտրությունների ընթացքում չանցկացան հին կարգերի ակնհայտնի կողմնակիցները. մանր բուրժուազիան՝ չքավորացված լինելով հեղափոխությունից և ցանկանալով, որ սրա զարգացումը շարունակվի՝ իր ձայները տվեց ձախերին. 145 պատգամավորներ պատկանում էին արմատական քաղաքական խմբակցություններին:

Օրենսդիր Ժողովում ձախ նստարանները բռնել էր պատգամավորների այն խումբը, որ հետո «Ժիրոնդիստական» անունն ստացավ, որովհետև նրա ղեկավարները մեծ մասամբ Ժիրոնդ դեպարտամենտից էյին: Ժիրոնդիստները ներկայացնում էին հարավային և արևմտյան Ֆրանսիայի խոշոր առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի շահերը: Ժիրոնդիստների գաղափարական առաջնորդն էր «Էնցիկլոպեդիայի» աշխատակից, մաթեմաթիկոս և բնագետ Կոնդորսեն, որ բուրժուական ազատությունների, կանանց իրավահավասարության, գաղութներում ապրող նեգրերի ազատագրման և տղաների ու աղջիկների միասին և ձրի սովորելուն կողմնակից էր հանդիսանում:

Մանր բուրժուազիան և բանվոր դասակարգը[1]) շատ թույլ չափով էին ներկայացված Օրենսդիր Ժողովում: Նրանց առաջնորդներն էին՝ Դանտոնը, Ռոբեսպյերը և Մարատը, որոնք Ժողովում տեղ չէյին բռնում, բայց հանդես էին գալիս Փարիզի բնակչության շրջանում իրենց քաղաքական պրոպագանդով և ագիտացիայով. Նրանք արդեն իսկ այդ ժամանակ մեծ ժողովրդականություն էին վայելում՝ շնորհիվ իրենց համարձակ ելույթների՝ ընդդեմ հակահեղափոխության, ազնվականների և սահմանադրությանը հավատարիմ մնալու մասին չերդում տված քահանաների:

Օրենսդիր Ժողովի աջ նստարաններին նստած էին սահմանադրական միապետության կողմնակիցները (ֆեյանները), 1789 թ. մարդիկ, որոնք ներկայացնում էին հարուստ կալվածատերերի, հացի սպեկուլյացիայով զբաղվողների, բանկիրների ու մեծաքանակ առևտուր անողների շահերը:

Փարիզի դեմ արշավանք պատրաստող էմիգրացիան՝ իր ավելի լավ կազմված գործունեությամբ, Պիլնիցի համաձայնության («Պիլնիցի դեկլարացիա») կնքումն Ավստրիայի և Պրուսիայի միջև՝ յեվրոպական բոլոր պետությունների ուժով հեղափոխական Ֆրանսիան ճնշելու հնարավորության մասին, ներքին հակահեղափոխության աշխուժացումը, չերդված քահանաների հակահեղափոխական քարոզները յեկեղեցիներում— այդ բոլոր հանգամանքները ստիպեցին Օրենսդիր Ժողովին մի շարք վճռական միջոցներ ձեռք առնել: Հարց էր ծագում արիստոկրատիային

1) Բանվոր դասակարգը կազմում էին արհեստավորները (աշկերտներն ու վարպետացուները), գյուղական արդյունաբերության և մանուֆակտուրայի մեջ զբաղված բանվորները, օրավարձու բանվորները, գլխավորապես կառուցողները: Բանվոր դասակարգը տակավին չէր գիտակցել դասակարգային իր ուրույն խնդիրները և հեղափոխության ընթացքում գնում էր մանր բուրժուազիայի հետ։

(արտոնյալներին), խռովարարներին, դժգոհներին մի հարվածով «վոչնչացնելու» անհրաժեշտության մասին: Օրենսդիր Ժողովը բռնագրավված հայտարարեց էմիգրանտների գույքերը և միաժամանակ նշեց նրանցից ստացվող յեկամուտների օգտագործման յեղանակները. այդ ժողովը կարգադրեց էմիգրանտների հողերը ծախծխել գյուղացիներին, էմիգրանտների ազգականների համար մեկուսացման կենտրոնավայրեր հիմնեց, սկսեց հետապնդել էմիգրանտների կողմնակիցներին ու արքայազններին և մահապատիժ սահմանեց այն էմիգրանտների համար, որոնք մինչև 1792 թվի հունվարի 1-ը Ֆրանսիա չեն վերադառնա: Հին կարգերի սպասարար՝ յեկեղեցին, որ հեղափոխության ժամանակ զրկվել էր իր նյութական բազայից, բնականաբար, ամեն կերպ աջակցում էր հակահեղափոխության և ինտերվենցիայի (օտարերկրյա միջամտության) հաջողություններին: Օրենսդիր Ժողովը դադարեցրեց գանձարանից ռոճիկ տալը չերդված հոգևորականությանը և նրա վրա հսկողություն հաստատեց յեկեղեցիներում ծիսակատարության պահին: Օրենսդիր Ժողովի դեկրետներն ընդդեմ էմիգրանտների և հոգևորականության չհաստատվեցին թագավորի կողմից: Պարզ է, որ հակահեղափոխությունն աջակցություն էր գտնում պալատական շրջաններում: Թագավորի գաղտնի դիվանագիտությունը ղեկավարվում էր «ավստրիական կոմիտեյի» կողմից, որի նիստերը տեղի էին ունենում պալատում Լյուդովիկոսի կնոջ՝ Մարի Անտուանետի նախագահությամբ և որը հարաբերություններ ուներ օտարերկրյա արքունիքների հետ:

Օրենսդիր Ժողովն իրազեկ էր հակահեղափոխության բոլոր նախապատրաստումներին: Հարկավոր էր կանխել հարվածը: Հեղափոխության համար պարզ էր, որ հեղափոխական գաղափարների՝ Ֆրանսիայի սահմաններից դուրս տարածվելու սպառնալիքի ազդեցության տակ (ֆրանսիական «վարակի») անխուսափելի յեր ինտերվենցիան՝ օտարերկրյա պետությունների կոալիցիայի (դաշնակցության) կողմից:

ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

1792 թ. ապրիլի 20-ին Օրենսդիր Ժողովը պատերազմ հայտարարեց Ավստրիային:

Պատերազմի հարցի շուրջը Ֆրանսիական հասարակության մեջ միասնական կարծիք չկար: Լյուդովիկոս XVI և նրա կողմնակից միապետականները (ռոյալիստները) գտնում էին, որ պատերազմն այն հետևանքը կունենա, որ կոալիցիան կհաղթանակի և Ֆրանսիայում կվերականգնվեն «հին կարգերը»: Իսկ ժիրոնդիստները կարծում էին, որ պատերազմը կդառնա ժողովրդական, որ հեղափոխական կենտրոններից կհեռանան, բանակ կգնան ամենաանհանգիստ տարրերը, որ թագավորի իշխանությունը կթուլանա, որ ճանապարհ կբացվի նոր շուկաներ գրավելու համար, որ կոչնչացվի Անգլիայի հետ կնքած անշահավետ առևտրական պայմանագիրը:

«Թո՛ղ հաղթական զինվորներ իսկույն ևեթ կայծակի արագությամբ հարձակվեն բոլոր ֆեոդալական տիրապետությունների վրա»—բացականչեց ժիրոնդիստ Լուվեն:

Պատերազմի դեմ էյին սկզբում յակոբինները, վորոնք վստահություն չէյին տածում դեպի ժիրոնդիստները: Նրանք վախենում էյին, վոր հակահեղափոխությունը կհաղթանակի և հեղափոխությունը կպարտվի: Նրանք քաղաքացիական պատերազմ էյին պահանջում, նրանք առաջարկում էյին վոչնչացնել հեղափոխության թշնամիներին բուն իսկ Ֆրանսիայի ներսում:

«Յես վոչ թե կեղծայ, այլ մահու պատերազմ եմ պահանջում, հերոսական պատերազմ, վորպիսին կարող է մղել ինքը հեղափոխական ժողովուրդն իր սեփական առաջնորդների գլխավորությամբ,—և վոչ այն պատերազմը, վոր բանսարկուներն են ցանկանում»—ասում էր Ռոբեսպյերը:

Պատերազմն սկսվեց: Բանակը, թեև դեռ չէր կազմակերպված և ղեկավարվում էր հոգուտ միապետության տրամադրված հին սպայության կողմից, բայց ուժեղ էր իր հեղափոխական վոգևորությամբ. բազմաթիվ կամավորներ էյին գրվում բանակ մտնելու:

Ռազմական գործողությունների հաջողակությունը կախված էր մեծ չափով գյուղացիական մասսաների տրամադրությունից և հեղափոխական հայրենիքի համար կռվելու նրանց ցանկությունից: Անհրաժեշտ էր խիստ շահագրգռել գյուղացիներին հեղափոխության նվաճումների ամրապնդումով և նրա առաջընթացումով: Օրենսդիր ժողովը վճռեց վերանայել Հիմնադիր ժողովի վորոշումները գյուղացիական հարցի վերաբերյալ: Մի շարք պարհակներ վերացավեցին այն պարտավորությունների շարքը, վորոնք յենթակա էյին վերացման, առանց փրկանքի. սենյորների համար վորոշ պարտականություն սահմանվեց. նրանք պետք է իսկական փաստաթղթեր ներկայացնելով՝ ապացուցեյին իրենց իրավունքը պարհակներից ոգտվելու. փաստաթղթերով պետք է հաստատվեր նմանապես և սենյորների իրավունքը համայնական հողերի նկատմամբ: Դժվար չէ նկատել, վոր այդ բոլոր ձեռնարկումներն այնուամենայնիվ թերի, կիսակատար էյին, բնավ չէյին լուծում ագրարային հարցը, և, իհարկե, չէյին կարող բավարարել գյուղացիական մասսաներին:

Առաջին իսկ կռիվներից յերևաց, վոր Ֆրանսիան պատրաստված չէր պատերազմի: Բանակի կրած պարտությունը նկատելի հրճվանք էր պատճառում հակահեղափոխականներին և վնասարարներին: Հին բանակի զորամասերը («գծային զորքերը»—մշտական, կազմ պատրաստ զորքերը) կազմալուծված էյին, հրամանատարական կազմը՝ անվստահելի և անբավարար: Ռոյալիստ-սպաներից շատերը սաբոտաժ էյին անում, զլանում էյին ծառայել հեղափոխությանը, շատերն էլ կարողացել էյին գաղթել: Օրենսդիր ժողովը պահանջեց վճռական միջոցներ ձեռք առնել յերկրի պաշտպանության համար և Փարիզում զորաբանակ կազ-

մակերպել 20-հազարանոց այն պահակազորից, վոր հավաքված էր դեպարտամենտներում՝ ֆրոնտ ուղարկելու համար, և վորն իբրև կամավոր միլիցիա («ֆեդերատներ»), գալիս էր գավառներից հեղափոխությունը պաշտպանելու: Բայց Լյուդովիկոսը չտվեց իր համաձայնությունը, հեռացրեց ժիրոնդիստների մինիստրությունը և կազմեց ռեակցիոն (հետադիմական) կառավարություն: Բանակի հրամանատար գեներալ Լաֆայետն էլ զորավիգ հանդիսացավ թագավորի համար:

Հակահեղափոխության հարաճուն ակտիվության ազդեցության տակ և հեղափոխության նվաճումների կորստի վտանգի հանդեպ՝ ավելի վճռական էր դառնում Օրենսդիր ժողովը: Հեղափոխական մասսաների ճնշման տակ բուրժուազիան հայտարարեց հեղափոխությունն ու հայրենիքը վտանգված: Ժողովը թույլ տվեց քաղաքային ինքնավարություններին զենք բաշխել բոլոր քաղաքացիներին: Այդ ամբողջ շարժման ընթացքում ղեկավար դեր խաղացին Փարիզի կոմունայի սեկցիաները: Նրանց նիստերը հայտարարված էյին անընդհատ: Ժիրոնդիստները հունիսի 20-ին փորձեցին ազդեցություն գործ դնել թագավորի վրա՝ ժողովրդական շարժում սարքելով: Ցուցարարները ներս խուժեցին Տյուիլրի (թագավորական պալատ): Թագավորին—ժիրոնդիստներն ամեն կերպ պաշտպանում էյին նրան—ստիպեցին սեղան բարձրանալ, գլխին մի կարմիր մեծ գդակ դնել և խմել ժողովրդի կենացը: «Գահը դեռ կանգուն էր, բայց ժողովուրդը նստեց նրա վրա, նրա չափը վերցրեց»—այսպիսի սրամիտ բնորոշում տվեց իրերի դրությանը ժամանակակիցներից մեկը: Սակայն, Լյուդովիկոսը չէր էլ մտածում իր դիրքերը զիջելու մասին. նա հրաժարվեց հաստատել Օրենսդիր ժողովի վորոշումներն ընդդեմ հակահեղափոխականների: Գաղտնի բանակցություններ վարելով՝ նա պահանջում էր ոտարերկրյա հրամանատարությունից արագացնել ռազմական գործողությունները:

Արքունիքի բացորոշ դավաճանությունը, թշնամական բանակի գեներալների ուլտիմատումները, էմիգրանտների լրտեսական կազմակերպությունը, վնասարարությունը յերկրի ներսում նպաստեցին հեղափոխական վոգևորության վերելքին, ամրապնդեցին հեղափոխական վճռականությունը: Սկսվեց հեղափոխական ուժերի մոբիլիզացիան, հեղափոխական խմբավորումների միացումը: Պրուսական բանակի գլխավոր հրամանատար՝ Հերցոգ Բրաունշվեյգի լկտի մանիֆեստը, վորով նա սպառնում էր քարուքանդ անել Փարիզը, յեթե նոր հարձակում կատարվի Տյուիլրիի վրա, մեծ զայրույթ առաջացրեց և խթան հանդիսացավ միապետության անկման համար:

Օգոստոսի 5-ին Փարիզի սեկցիաները, բանվորները, արհեստավորները ու ֆեդերատները համարյա միահամուռ կերպով արտահայտվեցին հոգուտ ապստամբության:

Յերբ սեկցիաները պահանջեցին անհապաղ տապալել թագավորին (48 սեկցիայից 30-ը պահանջեցին Լյուդովիկոս XVI-ին տապալել),

Օրենսդիր ժողովը ժիրոնդիստների ղեկավարությամբ փորձեց ձեռքը թափել յերկդիմի պատասխաններով և գործը ձգձգելու համար սեկցիաների պահանջները հանձնեց հատուկ հանձնաժողովին քննելու: Օրենսդիր ժողովի հարուցած ձգձգումներն ու արգելքները մոտեցրին ապստամբության ժամը:

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՄԱՆՐ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

1792 Թ. ՈԳՈՍՏՈՍԻ 10-Ի ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1792 թ. ոգոստոսի 9-ի գիշերը սկսվեց հեղափոխությունը: Այս հեղափոխությունը կատարեցին Փարիզի պրոլետարիատն ու մանր բուրժուազիան՝ յակոբինների ղեկավարությամբ: Բազմամարդ զինված ամբոխները թմբուկներով շարժվեցին դեպի քաղաքի կենտրոնը և գրավեցին բուրժուական (քաղաքային) ինքնավարությունը: Բանվորական սեկցիաների ներկայացուցիչները ներս խուժեցին գործադիր մարմնի՝ մունիցիպալիտետի (քաղաքային խորհրդարանի) շենքը, հարկադրեցին բուրժուական ղեկավարներին թողնել այդ շենքը և իրենց հայտարարեցին հեղափոխական կոմունա: Կոմունայի կազմի մեջ մտան՝ ծառայողներ, ազատ պրոֆեսիաների տեր մարդիկ, մանր ձեռնարկությունների սեփականատերեր և բանվորներ: Ոգոստոսի 10-ին առավոտյան ապստամբած ժողովրդի ամբոխները ներս խուժեցին Տյուիլրի, վոր պաշտպանում եյին շվեյցարական վարձու հրաձիգները և ազգային գվարդիան:

Ժան - Պոլ Մարատ

Ազգային գվարդիան մի առանձին ջանք չցուցաբերեց թագավորին պաշտպանելու. իսկ շվեյցարացիները յերկու կողմերի փոխադարձ հրացանաձգությունից հետո զիջեցին պալատը: Լյուդովիկոս XVI-ն իր ընտանիքով պատսպարվեց Օրենսդիր ժողովում: Ժիրոնդիստների նոր փոր-

ձերը՝ թագավորին փրկելու՝ ապարդյուն անցան: Փարիզի կոմունան պահանջեց առանց այլևայլության բանտ նստեցնել Լյուդովիկոս XVI-ին իր ընտանիքով հանդերձ և զրկել նրան թագավորական իշխանությունից: Լաֆայետը ռազմաճակատից փորձեց զորքով գնալ հեղափոխական Փարիզի վրա, բայց՝ ընդհանուր դիմադրության հանդիպելով՝ փախավ արտասահման:

ՓԱՐԻԶԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԱՆ

Հեղափոխական անցուդարձերը ղեկավարում եր Փարիզի կոմունան: Նրա դրած պահանջի համաձայն՝ Օրենսդիր ժողովը վորոշեց գումարել Ազգային կոնվենտ՝ ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա: Կազմակերպվեց ժամանակավոր կառավարություն (Ժամանակավոր Գործադիր Կոմիտե) ժիրոնդիստական կազմով: Ժիրոնդիստները կառավարության կազմի մեջ մտցրին Դանտոնին՝ իբրև արդարադատության մինիստրի:

Փարիզի կոմունան խիստ միջոցներ ձեռք առավ էմիգրանտների դեմ, նա նրանց ձերբակալում եր հաճախ, նա արգելում եր յեկեղեցական թափորներ կազմակերպել և քահանայական զգեստով փողոցներում յերևալ. նա փակել եր տալիս վանքերը «արիստոկրատիայի վորջերը», բռնագրավում եր արիստոկրատների գույքը պատերազմի պետքերի համար և այլն:

Ժիրոնդիստները ռիսկ չեյին անում վորևե քայլ անելու կոմունայի հեղափոխական ձեռնարկումների դեմ:

Հենվելով դեպարտամենտների ուժեղ առևտրա-արդյունաբերական շրջանների վրա՝ ժիրոնդիստները՝ յակոբինների, Փարիզի կոմունայի և բուն իսկ Փարիզի ազդեցությունը թուլացնելու նպատակով՝ տրամադրված եյին կոնվենտը գումարել վորևե այլ տեղ գավառում, քաղաքականապես անդորր մի միջավայրում: Հեղափոխական Փարիզի դեմ յելնելով՝ ժիրոնդիստները հենվում եյին գավառական Ֆրանսիայի վրա և առաջադրում եյին «ֆեդերալիզմի» գաղափարը: Սակայն, Փարիզի կոմունան ժամանակին ձեռք առավ միջոցներ՝ ռեակցիան կանխելու համար: 30 կոմիսար գործուղվեցին գավառներն ու բանակ,—նրանցից 24-ը կոմունայի կողմից՝ հակահեղափոխության դեմ պայքար կազմակերպելու և հեղափոխական ագիտացիա ու պրոպագանդ մղելու համար: Դանտոնը յեռանդուն կերպով վռնդում եր հիմնարկություններից, սպայական կազմից թագավորական իշխանության կողմնակիցներին, սաբոտաժնիկներին և վնասարարներին: Մարատը «Ժողովրդի բարեկամ» թերթում անդադար հրավիրում եր աչալուրջ լինել: Կոմունայի «վերահսկող խորհուրդը», հեղափոխության պաշտպանության այդ արտակարգ մարմինը, արթուն եր միշտ և կանգ չեր առնում անգամ ամենախիստ պատիժների առաջ:

Տեսնելով, վոր Փարիզում հանցագործների դատաստանը տեսնում են, հակահեղափոխականները վոռնոց բարձրացրին: Ֆրանսիայի արևմտյան

ծայրագավառներում, ամենահետամնաց շրջաններում չերքված հոգեվորականությունը կառավարության դեմ հակահեղափոխական խռովություններ եր կազմակերպում: Վանդեայում (Լուարայի գետաբերանի մոտ) և Բրետանում հոգեվորականությունն ու կալվածատերերն օգտվելով նրանից, վոր զորահավաքը գյուղացիների միջև դժգոհություն ե առաջացրել՝ «զորություն քրիստոսի» անվան տակ գյուղացիական ապստամբություն կազմակերպեցին, վորը տարածվեց նաև մերձավոր ռայոններում:

Վանդեական խռովության հաջողությունը նրանով ե բացատրվում, վոր Վանդեայում գյուղացիությունը բաղկացած եր առավելապես կուլակներից, մանր սեփականատերերից և վարձակալներից: Այդ խռովությունը վտանգավոր բնույթ ստացավ 1793 թվին: Ապստամբության հաջողությանը նպաստում եյին արտաքին պատերազմը, մանավանդ Անգլիայի և սպիտակ եմիգրանտների ցույց տված աջակցությունը: Միայն 1798 թվի վերջերքին Վանդեացիները ջարդվեցին:

Դավադրություններ եյին պատրաստվում Բրետանում, Դոֆինեյում և այլ տեղերում: Հակահեղափոխությունը պատերազմում եր հանուն միապետության պաշտպանության:

Պալատի փաստաթղթերի հետազոտությունը յեկավ, հաստատելու թագավորի մասին տարածված լուրերը, այսինքն այն, վոր Լյուդովիկոս XVI գաղտնի հարաբերություններ ե վարում եմիգրացիայի հետ և վոր նա նյութական օժանդակություն ե ցույց տվել նրանց, ի հաշիվ Ֆրանսիական պետական գանձարանի:

Օգոստոսի 19-ին թշնամական զորքերը ներս մտան Ֆրանսիայի տերիտորիան: Օգոստոսի 23-ին վերցրին Լոնգվի բերդը, մի փոքր ուշ ընկավ և՛ Վերդենը:

Փարիզը վերածվեց զորաբանակի: Ժողովուրդը շտապ զինվում եր: Քաղաքի շուրջը խրամատներ եյին փորում, պաշտպանողական գծեր եյին կառուցում: Խոսում եյին հակահեղափոխականների դավադրությունների մասին. լուր եր տարածվել, վոր բանտերում, վորոնք վորջեր եյին դարձել արիստոկրատների և տերտերների համար, խռովություն ե սկսվել:

Իսկույն արձագանք գտավ այն կոչը, վոր անհրաժեշտ ե կոտորել բանտերում նստած ժողովրդական թշնամիներին: Սեպտեմբերի 2-ին և 3-ին ժողովրդի ահագին ամբոխները ներս խուժեցին բանտերը և ըսկսեցին կոտորել այնտեղ բանտարկված հակահեղափոխականներին: Հազարից ավելի կալանավորներ ժողովրդական վրեժխնդրության զոհ դարձան: Այժմ համառորեն պահանջում եյին կործանել Տամպլը (այն ամրոցը, վորտեղ բանտարկված եր Լյուդովիկոսը). «դեռ մի բանտ ել կա, վոր պետք ե մաքրել»:

Կոմունայի ձեռք առած յեռանդուն և արագ միջոցները, նրա խիստ քաղաքականությունը ապարդյուն չանցան. շուտով նկատելի խաղաղու-

թյուն հաստատվեց յերկրի ներսում: Արտաքին վտանգն ել նույնպես սկսեց նվազել: Ավստրիայի և Պրուսիայի մրցակցությունը, դաշնակցած պետությունների բանակի վատ կազմակերպումը, վատ մատակարարումը, թիկունքի հետ կարգավորված կապի բացակայությունը, սովը, վոր առաջացել եր Ֆրանսիայի սահմաններում գտնվող զորքերում—այդ բոլորը նշանավոր չափով քայքայել եյին թշնամու ուժերը: Մյուս կողմից՝ ավելի յեր ուժեղանում ֆրանսիական զինվորների հեղափոխական վոգեվորությունը. բանակը լրացվում եր հեղափոխականորեն տրամադրված յերիտասարդներով, իսկ հեղափոխական գաղափարները համակրական արձագանք եյին գտնում թշնամական բանակի զինվորների միջև:

Փարիզի կոմունայի սեկցիաները հանձն եյին առնում զորքին մատակարարել հագուստ, սպիտակեղեն և կոշիկներ, կազմակերպում եյին հացահատիկ տալու գործը, հսկում եյին քաղաքի պարենավորմանը, բանակի համար ցուցակագրում եյին կամավորներ:

Հեղափոխական Ֆրանսիան ձեռք եր քաշում հափշտակողական քաղաքականությունից. նա պարզել եր ֆեոդալական ստրկության մեջ տառապող ժողովուրդների ազատագրման դրոշը:

1792 թ. սեպտեմբերի 20-ին ֆրանսիական բանակը կանգնեցրեց թշնամու հարձակումը: Նույն տարվա աշնանը Ֆրանսիայի տերիտորիան ազատվեց թշնամական զորքերից:

ԿՈՆՎԵՆՏԸ

Ազգային կոնվենտը բացվեց 1792 թ. սեպտեմբերի 21-ին: Կոնվենտի անդամների թվում ընտրված կային ժիրոնդիստների և յակոբինների ամենաականավոր և կանոնավոր ներկայացուցիչները: Դանտոնը, Ռոբեսպյերն ու Մարատը կոնվենտի անդամ եյին: Կոնվենտում ավելի ևս զատորոշվեցին քաղաքական խմբավորումները: Կոնվենտի 745 պատգամավորներից 165 հոգի պատկանում եյին ժիրոնդիստներին, վորոնք կոնվենտում բռնել եյին արդեն աջ նստարանները: Կոնվենտի աշխատանքներին մասնակցում եյին ժիրոնդի բոլոր աչքի ընկնող առաջնորդները՝ Բրիսսոն, Վերնյոն, Կոնդորսեն, Իսնարը, Պետիոնը և այլն: Կոնվենտի ձախ թևում նստել եյին յակոբինները կամ մոնտանյարները (այսինքն՝ բառացի «Լեռնայինները». այդ անունը նրանք ստացել եյին նրա համար, վոր նրանք բռնել եյին ամենաբարձր, անմիջապես առաստաղի տակ շարված նստարանները): Լեռան ղեկավարներն եյին՝ Դանտոնը, Մարատը, Ռոբեսպյերը, Կամիլ Դեմուլենը, Սյան-Ժյուստը:

Ժիրոնդիստների և յակոբինների արանքում միջանկյալ դիրք եյին բռնել այն պատգամավորները, վորոնք քաղաքական վորոշ ծրագիր չունեյին («Ճահիճ»):

Տատանվելով Ժիրոնդի և Լեռան միջև, կենտրոնի պատգամավորները, վորոնց հեգնանքով անվանում եյին «ճահճի գորտեր», միշտ թեքվում եյին կոնվենտում գործող ավելի ուժեղ խմբակցության կողմը:

Սկզբում «Ճահիճն» իր ձայները տրամադրում էր ժիրոնդին, իսկ հետագայում նա պաշտպանում էր յակոբիններին:

ԺԻՐՈՆԴԻՍՏՆԵՐՆ ՈՒ ՅԱԿՈԲԻՆՆԵՐԸ

Կոնվենտի աշխատանքների սկզբից սուր ընդհարումներ ծագեցին ժիրոնդի և Լեռան միջև: Մանր բուրժուազիան, որ քաղաքականապես ավելի վճռական էր, խոշոր առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի դեմ յելավ: Յակոբինյան ակումբը դառնում էր մանր-բուրժուական դեմոկրատիայի քաղաքական կենտրոնը: Յակոբինների ազդեցությունն աճում էր Փարիզի կոմունայում և սեկցիաներում:

Ժիրոնդիստները ամեն կերպ փորձում եյին կոմունայի ազդեցությունը թուլացնել և հատուկ պահակախումբ կազմակերպել կոնվենտի համար՝ գավառական բուրժուաներից: Կոնվենտի կոմիսարները հալածանքի եյին յենթարկվում այն դեպարտամենտներում, որտեղ ուժեղ էր ժիրոնդիստների ազդեցությունը: Վայելելով «Ճահճի» աջակցությամբ կոնվենտի մեծամասնությունը՝ ժիրոնդիստները իրենց արբանյակներին եյին անցկացնում բոլոր ղեկավար պաշտոններում: Փարիզում և մանավանդ գավառներում ժիրոնդիստները կատաղի կերպով հետապնդում եյին յակոբիններին: Շրջաններից մեկում տեղի գլխավոր խորհուրդը հետևյալ հայտարարությունն արավ. «Իբրև բոլոր դժբախտությունների և անկարգությունների միակ պատճառներ՝ մենք, ի լուր աշխարհի, հայտարարում ենք Ռոբեսպյերներին, Մարատներին, Դանտոններին, բոլոր այդ արյունռուշտ մարդկանց, սեպտեմբերի 2-ի հերոսներին, որոնք դիակներից զատ՝ վոչինչ չեն տալիս ազգին անվելու»:

Չնայած այդ հալածանքին՝ յակոբինների ժողովրդականությունն արագ աճում էր: Յակոբինյան ակումբի ագիտացիայի շնորհիվ՝ շատացավ յակոբինների կողմնակիցների թիվը, յերեկվա թշնամիները փոխակերպվում եյին անձնվեր բարեկամների: Կոնվենտի պահակախումբն անգամ (այն, որ ժիրոնդիստներն եյին կազմակերպել) վարակվեց մոնտանյարական[1]) խանդավառությամբ:

ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՀԱՊԱՏԻԺԸ

Յերկու կուսակցությունների ընդհարումները նամանավանդ սուր ընթացք ստացան թագավորի խնդրի շուրջ: Թագավորի գործը, նրա մերկացված պետական դավաճանության խնդիրը ժիրոնդիստները փորձում եյին հանձնել հատուկ տրիբունալի քննության: Յակոբինները՝ արտահայտելով հեղափոխական փարիզցիների կարծիքը՝ պնդում եյին, որ այդ գործը պետք է տալ կոնվենտին քննելու:

«Յես պահանջում եմ—ասում էր Ռոբեսպյերը—ֆրանսիացիների վերջին բռնակալին, որ գլխավորում ու շաղկապում է իրար բոլոր դավադրությունները, դատապարտել պատժի՝ իր չարագործությունների համար: Քանի կոնվենտը հետաձգի այդ կարևոր պրոցեսի լուծումը, մինչ այդ նա հրահրելու յե դավադրությունները և սնելու յե ռոյալիստների հույսերը... Ավելի լավ է թող կործանվի Լյուդովիկոսը, քան հարյուր հազար առաքինի քաղաքացիները: Լյուդովիկոսը պետք է մեռնի, որովհետև հայրենիքը պետք է ապրի»:

[1]) Մոնտանյարներ բառը դարձավ հասարակ և միջազգային (նման. «բոլշևիկ» բառը):

Կոնվենտի դատական նիստում Լյուդովիկոսի ներկայությամբ հաստատվեցին նրան ներկայացված բոլոր մեղադրանքները: Թագավորի հանցավորության հարցը լուծելիս ժիրոնդիստները փորձեցին նրան փրկել՝ առաջարկելով դիմել տեղական սկզբնական ժողովներին դատավճռի խնդրով: Գավառի տրամադրությունը ծանոթ՝ ժիրոնդիստները հույս ունեյին, որ այդ դեպքում գործը Լյուդովիկոսի համար բարեհաջող յելք կունենա: Յակոբիններին իրենց կողմը թեքելու նպատակով՝ ժիրոնդիստները սպառնում եյին, որ պատերազմին կմիջամտեն Անգլիան և Սպանիան, խոսում եյին Ֆրանսիայի դեմ ուղղված նոր կոալիցիաների մասին: Իբրև պատասխան թագավորների սպառնալիքներին՝ Դանտոնն առաջարկում էր ձեռնոց նետել նրանց հասցեյին, իսկ իբրև ձեռնոց, գործադրել բռնակալի գլուխը: Սակայն վախենալով հեղափոխական ժողովրդից, որի տրամադրությունը հայտնի յեր և վոչ մի կասկած չեր հարուցում, կոնվենտը ձեռք քաշեց ձգձգումների քաղաքականությունից: Լյուդովիկոսը հանցավոր ճանաչվեց նրան ներկայացրած բոլոր մեղադրանքներում և յակոբինների, «ճահճի» և ժիրոնդիստների աննշան մասի ձայներով մահվան պատժի դատապարտվեց:

Բնակչությունը գոհունակությամբ ընդունեց բռնակալի գլխատումը (1793 թ.): Ժիրոնդիստների այն զրպարտության առթիվ, որ պատգամավորներն իբր թե դաշույնների հարվածների սպառնալիքի տակ են քվեարկել, Մարատը կծու մի նկատողություն արավ. «Նրանք ասում են, որ դաշույնները գլուխներին կախված են քվեարկել, այնինչ մեկն էլ չկա, որ ճանկռտած լինի»:

ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ՅԵ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ԽՈՇՈՐ ՅԵՎ ՄԱՆՐ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՄԻՋԵՎ

Մի հարց ևս գժտության առիթ տվեց ժիրոնդիստների և Լեռան միջև. դա պարենավորման խնդիրն էր:

1792/93 թ. ձմեռվա ընթացքում Ֆրանսիան տնտեսական ծանր կրիզիս էր ապրում: Պետական ֆինանսները խախտված դրության մեջ եյին, ազգային գույքերի վաճառքը բավական չեղավ պարտքը ծածկելու համար. ազգային գույքերի ապահովությամբ թողարկված ասիգնատների գինն ընկնում էր: Արդյունաբերության լճացումը, ներմուծվող հումույթի պակասը, ապրանքային հացի քչանալը (պատերազմի կապակցությամբ կրճատվել էր ցանքսի տարածությունը), պատերազմող յերկրների հետ վարած առևտրի դադարումը, ապրանքների, հատկապես առաջնակարգ անհրաժեշտության առարկաների թանկանալը—այս բոլորը ծանր էր անդրադառնում քաղաքի չքավորության դրության վրա: Սովածների ընդվզումներ եյին բռնկվում: Փարիզում ամբոխները ջարդում եյին պարենավորման կրպակները, հացի փռերն ու խանութները: Սովալլուկ ժողովուրդը պահանջում էր խիստ միջոցներ ձեռք առնել հացը թաքցնող սպեկուլյանտների դեմ: Հացի սպեկուլյացիա կատարե-

լով անում էր մի նոր բուրժուազիա: Մարատն առաջարկում է հինգ ամենաաղքատ քաղաքացիների դատին մատնել բոլոր խոշորագույն սպեկուլյանտներին՝ նրանց մեղադրելով պետական դավաճանության մեջ: Անխուսափելի չէր դառնում ամուր գների սահմանումը հացի և առաջնակարգ անհրաժեշտության իրերի վրա («մաքսիմում»): Մաքսիմումի կողմնակից էին, սակայն, վոչ բոլոր յակոբինները: Մաքսիմումի մեջ նրանք վտանգ էին նկատում, վոր սպառնում է մանր խանութպաններին, ամեն տեսակի առևտրական գործարարներին և հաց արտադրող գյուղացիներին: Ահա թե ինչու հաղթեց ազատ առևտրի սկզբունքը: 1792 թ. դեկտեմբերին Կոնվենտը դեկրետ հրապարակեց ազատ առևտրի վերաբերյալ: Ամեն մի վոտնձգություն այդ ազատության դեմ պատժվում էր մահվան պատժով:

ԿԱՏԱՂԻՆԵՐԸ

Յակոբինների առաջարկած կիսամիջոցները—հացի պաշարների հաշվառում կատարել, սպեկուլյանտներին հետապնդել—չբավարարեցին մասսաներին: Ժողովրդի միջից ելած հեղափոխականները մոնտանյարական հանրապետականությունն այն իմաստով էին հասկանում, վոր պետք է «պատերազմ հայտարարել վոչ միայն ռոյալիստների և ժիրոնդիստների, այլև վողջ բուրժուական վոգու դեմ»: Դժգոհությունը գնալով ուժեղանում էր: 1792–93 ձմեռը Փարիզի արվարձանների բանվորները, արհեստավորական և գյուղական չքավոր խավերը հրապարակ հանեցին իրենց առաջնորդներին, վորոնց ժիրոնդիստները կիսարհամարհական անուններ տվին՝ «անարխիստներ», «կատաղիներ»: «Կատաղիներ» անունով հայտնի էին քաղաքի և գյուղի չքավոր շերտերի շահերն արտահայտող այն ձախ դեմոկրատները, վորոնք թե՛ Փարիզում և թե՛ գավառներում ագիտացիա էին մղում սպեկուլյացիայի դեմ և պահանջում էին մաքսիմում սահմանել: Նրանք պնդում էին, վոր «ազատությունը վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի դատարկ ստվեր, յերբ մարդկանց մի դասակարգը կարող է անպատիժ մնալով ճնշել և սովամահ անել մյուսին»: «Կատաղիների» ղեկավար՝ քահանա Ժակ Ռուն, վոր Կոմունայի և կորդելյերների ակումբի անդամ էր, և Գրավիլյե, Բոն-Նուվելի սեկցիաների ներկայացուցիչը—սեկցիաներ, վորտեղ բնակվում էին հեղափոխականորեն տրամադրված մանր արհեստավորներ և բանվորներ, մանածագործներ, ժապավենագործներ և այլն—առաջարկում էր տնտեսական դժվարությունները վերացնելու համար վոչնչացնել բոլոր խանութպաններին: Հիշյալ կազմակերպությունների անունից Կոնվենտին ներկայացված խնդրագրում Ժակ Ռուն կշտամբում էր Կոնվենտի պատգամավորներին, վոր նրանք ներողամիտ են շահամոլների, դրամով առևտուր անողների, հակահեղափոխության և սպեկուլյացիայի հանդեպ: Խնդրագրում մատնանշվում էր, վոր 4 տարվա ընթացքում միայն հարուստներն են վայելել հեղափոխության բարիքները: Խնդրագիրը պահանջում էր սանձահարել բուրժուազիային,

վորն ավելի սարսափելի է, քան ծագումով և պաշտոնով արիստոկրատիան և վորը կոչաքաղության նկատմամբ սահման չի ճանաչում: Խնդրագիրը նաև պահանջում էր այլևս «չտանջել բարի ժողովրդին կենսամթերքների սոսկալի գներով», տերրոր գործադրել, առաջնակարգ անհրաժեշտության առարկաների համար վորոշ գներ սահմանել: Ռուն պնդում էր, վոր ժողովրդի դրությունն այժմ ավելի վատ է, քան հին ռեժիմի օրով էր: «Մի՞թե խարդախների սեփականությունը թանկ է մարդկանց կյանքից... Զարմ'անք է վախենալ հարուստներից, այսինքն՝ չար մարդկանցից. առանց վախենալու պետք է քաղաքական սկզբունքները զոհաբերել հանուն ժողովրդի փրկության. ժողովուրդն է հանդիսանում բարձրագույն օրենքը»: «Կատաղիները» պահանջում էին մաքրել Կոնվենտը ժիրոնդիստներից: Նրանք պայքար էին մղում նաև յակոբինական դիկտատուրայի դեմ, վորն անվճռական էր այն դասակարգի հանդեպ, վոր «կարողանում է անպատիժ մնալով ճնշել և սովամահ անել մյուսին»: «Կատաղիների» դեմ դուրս յեկան վոչ միայն ժիրոնդիստները, այլև Լեռը: 1793 թ. փետրվարի 25-ին Յակոբինական ակումբում արտասանած իր ճառում Ռոբեսպյերը վորակում էր «Կատաղիների» ելույթները վորպես «ազատության թշնամիների», ժողովրդի թշնամիների» ուխտադրած հարձակումներ: Ռոբեսպյերը հատկապես ընդգծում էր «Կատաղիների» ձգտումը՝ խախտելու սեփականության հիմքերը: Ռոբեսպյերի տեսակետով՝ «ժողովուրդը պետք է ապստամբի վոչ թե իրեն համար շաքար ձեռք բերելու, այլ ավազակներին վոչնչացնելու նպատակով»: 1793 թ. մարտի 18-ին Կոնվենտը մի դեկրետ ընդունեց, վորով նա մահվան պատիժ նշանակեց ամեն մեկին, ով վոր կառաջարկի ագրարային կամ վորևէ մի այլ օրենք՝ ուղղված հողային, առևտրական կամ արդյունաբերական սեփականության դեմ:

Սակայն, այն հանգամանքը, վոր երկրի տնտեսական դրությունը գնալով վատանում էր և, դրա հետ կապված՝ ուժեղանում էր մասսաների դժգոհությունը, հարկադրեց յակոբիններին 1793 թ. գարնանից փոխելու իրենց պարենավորման քաղաքականությունը. Լեռն հիմա առաջ տարավ ամուր գներ սահմանելու քաղաքականություն: Յակոբինների այդ նոր տնտեսական քաղաքականությունն ուղղված էր ժիրոնդիստների դեմ: Ամուր գները մի ջախջախիչ հարված էին քաղաքային և գյուղական բուրժուազիայի համար, վոր ամեն կերպ արգելակում էր մաքսիմումի կիրառումը:

Այդ պայքարի առթիվ, վոր յակոբինները մղում էին ժիրոնդիստների դեմ, Մարքսը գրել է հետևյալը. «Այսպիսով՝ հնչեց քաղաքացիական կռվի ահազանգը մի այնպիսի մոմենտում, երբ խնդիր էր հարուցված այն շահերի մասին, վորոնք դրդել էին ժողովրդին ապստամբելու: Լեռը գնում էր ժողովրդական մասսաների կուսակցության հետ. այստեղ էին գտնվում և՛ ջլոտ ձեռները, և՛ յեռանդը, և՛ անձնվիրությունը»:

Յեվրոպական կոալիցիայի նոր հարձակման հետևանքով 1793 թ. պարենավորման ճգնաժամն ավելի ևս սաստկացավ: Ֆրանսիական զորքերը հարկադրված յեղան թողնել Բելգիան, վոր նրանք գրավել եյին 1792 թ. վերջին: Բելգիական ֆրոնտում գործող բանակի գլխավոր հրամանատար՝ գեներալ Դյումուրյեն, վորն իր քաղաքական ձգտումներով միապետական եր, սաստիկ ատում եր յակոբիններին և վորն անհաջող փորձ եր արել միապետական հեղաշրջում կատարելու, այժմ՝ ավստրիացիներից ջարդ կրելուց հետո նրանց մատնեց Կոնվենտի կոմիսարներին և ինքն էլ փախավ թշնամու կողմը: Շուտով ակնհայտ դարձավ և այն, վոր հակաֆրանսիական կոալիցիային հարելու յե և՛ Անգլիան, վորն, իբրև Ֆրանսիայի վաղեմի թշնամին—մրցակիցը, չեր մոռանում, վոր Ֆրանսիան աջակցել եր Ամերիկայի ազատագրմանը և այժմ մի բացառիկ ատելություն եր տածում հեղափոխության հանդեպ:

Հեղափոխության սկզբից ևեթ Անգլիան վրդովեցուցիչ վերաբերմունք եր ցույց տալիս Ֆրանսիայի նկատմամբ: Ճանաչելով Ֆրանսիայի նոր կարգերը, ինչպես և նրա հեղափոխական ներկայացուցիչներին՝ անգլիական կառավարությունն այնպես եր ներկայացնում իրերի դրությունը, վոր իբր թե Անգլիան հեղեղված է ֆրանսիական գործակալներով, վորոնք պատրաստ են տեռոր կիրառելու: Պարզ եր, վոր անգլիական կառավարությունն ամեն կերպ աշխատում եր խզել իր հարաբերությունները Ֆրանսիայի հետ: Անգլիական կառավարության թշնամական վերաբերմունքը Ֆրանսիայի հանդեպ առավելապես ուժեղացավ օգոստոսի 10-ի հեղափոխությունից և Լյուդովիկոսի գլխատումից հետո: Անգլիական հասարակությունը բոյկոտ հայտարարեց ֆրանսիական դեսպանին: Միայն հեղափոխական բանակի տարած փայլուն հաղթանակները Ժեմապի և Վալմիի մոտ, ինչպես և՛ Սավոյի ու Բրաբանտի գրավումն ստիպեցին անգլիական պահպանողականներին ավելի զգույշ լինել: Վախենալով, վոր Անգլիայում կտարածվի ֆրանսիական «վարակը», վոր իր բուրժուազիայի շրջաններում կաճեն համակրանքը դեպի հեղափոխական Ֆրանսիան՝ անգլիական արիստոկրատիան դիտավորյալ կերպով շտապեց խզել կապերը Ֆրանսիայի հետ:

Կոնվենտի կառավարությունը՝ ուշադրություն չդարձնելով անգլիական կաբինետի պրովոկացիոն գործելակերպի վրա՝ անշեղորեն առաջ եր տանում խաղաղության քաղաքականությունը: Այնինչ Անգլիան պատրաստվում եր պատերազմելու, և անգլիական դիվանագետները ամեն կերպ աշխատում եյին հեղափոխության դեմ ուղղված պատերազմին մասնակից անել յեվրոպական բոլոր պետությունները՝ իրենց վերապահելով ռազմական և քաղաքական ղեկավարությունը:

Ի զուր չեր բացականչում ժիրոնդիստների ղեկավարներից մեկը.

«Ո՛, յեթե կարելի լիներ պատռել այն քողը, վորով վորպես մի

լուրջ դաղանիք ծածկված է յեվրոպական արքունիքների մակիավելիզմը[1])—վորքա՛ն զարհուրելի արարքներ կբացվեյին: Այն ժամանակ մարդիկ թերևս կտեսնեյին, վոր մեզ մոտ ծագած բոլոր անկարգությունների թելերն այնտեղից են գալիս, վորտեղից վոր մեզ հանդիմանում են, իբր թե մենք խանգարում ենք հարևանների հանգիստը»:

Յերբ Ֆրանսիան Անգլիայից պահանջեց վերացնել ֆրանսիական քաղաքացիների և ֆրանսիական առևտրի դեմ գործադրվող ճնշումները և բացատրություն տալ անգլիական սպառազինումների առթիվ,—Անգլիան մերժումով պատասխանեց 1793 թ. հունվարի 24-ին Լոնդոնից արտաքսեց ֆրանսիական դեսպանին: 1793 թ. փետրվարի 23-ին Կոնվենտը պատերազմ հայտարարեց Անգլիային: Անգլիային հաջողվեց իր կողմը գրավել Սպանիային, վորտեղ կառավարում եր ֆրանսիական թագավորների ազգակից Բուրբոնների դինաստիան: Սպանիայի հետ միաժամանակ Ֆրանսիայի դեմ պատերազմ հայտարարեցին նաև Սարդինիան և Հոլլանդիան: Այսպիսով՝ Ֆրանսիան իր արևելյան և հարավային սահմաններից պաշարված եր յեվրոպական պետությունների խոշորագույն մասի բանակների անընդհատ շղթայով: Իսկ ինքը՝ Անգլիան, իբրև ծովային պետություն, ծովի կողմից եր սպառնում Ֆրանսիային:

Յերկիրը պաշտպանելու համար անհրաժեշտ եր մի շարք արտակարգ միջոցների դիմել, վորոնք և առաջարկվեցին յակոբինների կողմից: Ֆրանսիական յերիտասարդ բանակն այն ժամանակ դեռ ի վիճակի չեր հաջողությամբ կռվելու թշնամու լավ դիսցիպլինավորված, զինված և վարժված բանակների դեմ:

Հեղափոխական ռազմական հրամանատարությունը պատերազմի ընթացքում վճռական միջոցներ ձեռք առավ բանակը վերակազմելու: 1793 թ. փետրվարին հայտարարվեց պարտադիր զորահավաք (300 հազար հոգու 18—40 տարեկան հասակում): Կոնվենտի դեկրետի համաձայն՝ բոլոր ֆրանսիացիները հրավիրվում եյին շարունակական ոգնություն ցույց տալու զորքերին:

«Ամբողջ ժողովուրդը և, մանավանդ, մասսաները, այսինքն ճնշված դասակարգերը համակված եյին մի անսահման հեղափոխական էնտուզիազմով. պատերազմը բոլորն համարում եյին արդարացի, պաշտպանողական, և նա իրոք այդպիսի պատերազմ եր: Հեղափոխական Ֆրանսիան պաշտպանվում եր հետադիմական-միապետական Յեվրոպայից: Վո՛չ թե 1792—1793 թ.թ., այլ շատ տարիներ անց, յերբ յերկրի ներսում արդեն հաղթել եր ռեակցիան, Նապոլեոնի հակահեղափոխա-

[1]) Այսպես է կոչվում այն քաղաքականությունը, վոր միջոցների ընտրություն չի կատարում և միայն նպատակին հասնելն է կարևոր համարում: Այս տերմինը ծագել է իտալական Պետական գործիչ Նիկկոլո Մակիավելլիյի անունից (1469-1527):

կան դիկտատուրայի Ֆրանսիայի վարած պատերազմը՝ որը պաշտպանողականից վերածեց նվաճողականի» (Լենին)։



Հրամանատարական կազմի միջից Կոնվենտը վտարում եր նախկին ազնվականության ներկայացուցիչներին։ Նրանց տեղն առաջ եյին քա-

չում՝ նշանակելով, հաճախ հենց զինվորների ընտրությամբ, նոր հեղափոխական սպաներ, վորոնք նախկին վոչ-արտոնյալ դասից եյին յելած։ Բանակի վերակազմության համար շատ աշխատանք կատարեց յակոբին Կարնոն (հաղթանակի կազմակերպիչը), վոր, վորպես հասարակական փրկության կոմիտեյի անդամ, վարում եր յերկրի պաշտպանության գործը։ Նա յեր, վոր կազմակերպեց 14 բանակների հավաքն ու սպառազինումը և ռազմական գործողությունների պլանները կազմեց։ Նրա թելադրանոք՝ բանակում մտցվեց յերկաթյա դիսցիպլինա։ Թե՛ պարտություններ կրելու համար և թե Կոնվենտին չհնազանդվելու դեպքում գեներալները պատասխանատու եյին իրենց գլխով։ Մեծ ուշադրություն դարձրին զինվորների քաղաքական դաստիարակության վրա։ Յակոբինների յեռանդուն ձեռնարկումները զայրույթ եյին առաջացնում ժիրոնդիստների շրջանում։ Ռազմաճակատներ ուղարկված ժիրոնդիստական սպաների դավաճանությունների շնորհիվ՝ թշնամական բանակը նորից մտավ Ֆրանսիայի տերրիտորիան։ Պատերազմի անհաջողությունները սաստիկ վրդովեցին և գրգռեցին Փարիզի մասսաներին ընդդեմ ժիրոնդիստների։ Դանտոնը Կոնվենտում հանուն հայրենիքի փրկության հարուստներից նյութական զոհաբերություն եր պահանջում և առաջարկում եր արտակարգ հեղափոխական տրիբունալ հիմնել հակահեղափոխականների, դավաճանների, դրամատենչների և այլոց համար։ Վանդեական խռովությունը գնալով ավելի յեր ուժեղանում։ Հաճախակի եյին դառնում Կոնվենտի կոմիսարների դեմ ուղղված տերրորիստական մահափորձերի դեպքերը։

ԺԻՐՈՆԴԻՍՏՆԵՐԸ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆ ԵՆ

Յերկրի պաշտպանության գործը հանձնարարված եր Հասարակական փրկության կոմիտեյին, վորի ինը հոգուց բաղկացած կազմը հաստատված եր Կոնվենտի կողմից։ Հատուկ դեկրետով Կոնվենտը պարտադիր փոխառություն մտցրեց՝ տարածելով այն 1000 լիվրից ավելի յեկամուտ ունեցող անձանց վրա և կարգադրեց վաճառքի հանել եմիգրանտների բռնագրավված գույքերն ու հողերը։ Մի այլ դեկրետով Կոնվենտը չունեվոր և աղքատ խավերի համար պետության հաշվին սոցիալական ապահովություն սահմանեց և դրա հետ միասին անցկացրեց մայրության պաշտպանությունը։ Գործազրկության դեմ պայքարելով՝ Կոմունան ձեռնարկեց գործազուրկների հաշվառման և նրանց համար հասարակական աշխատանքներ սահմանեց։

Ժիրոնդիստները բացահայտ կերպով անցան հակահեղափոխականների կողմը։ Նրանք փորձում եյին Պարիզի դեմ բարձրացնել գավառները, նրանք դավադրություններ եյին նախապատրաստում, հարց եյին հարուցում Յակոբինյան ակումբը փակելու, ինչպես և Կոմունան լիկվիդացիայի յենթարկելու մասին, նրանք առաջարկում եյին Կոնվենտին մի հանձնաժողով կազմել՝ Կոմունայի գործունեյությունը քննելու հա-

մար։ Ժիրոնդիստները ձգտում եյին Փարիզի նշանակությունը հավասարեցնել Ֆրանսիայի 83 դեպարտամենտներից միայն մեկի դերին և այդպիսով վերջնականապես վերացնել մայրաքաղաքի միասնական կենտրոնական ղեկավարությունը, փոշիացնել և ի չիք դարձնել հեղափոխությունը. ահա թե ինչու ժիրոնդիստներին անվանում եյին «ֆեդերալիստներ» և մեղադրում եյին «ֆեդերալիզմի» մեջ։

Ժիրոնդիստների ատելությանն եր արժանացել հատկապես Մարատը, վորը շարունակ հիշեցնում եր, թե «հեղափոխությունը կատարել են բանվորները, արհեստավորները, մանր առևտրականները, ամեն գյուղացիները»։ Ժիրոնդիստները մեղադրում եյին Մարատին, վոր իբր թե նա յե կազմակերպել հացափուռերի ու պարենավորման կրպակները քարուքանդ անելու գործը, և համառորեն պահանջեցին նրան յենթարկել հեղափոխական տրիբունալի դատին։ Սակայն Մարատին դատարանը արդարացրեց։ Այն ժամանակ ժիրոնդիստները վորոշեցին այլ յեղանակով ազատվել Մարատից։ Նրանք սկսեցին անհեթեթ լուրեր տարածել Մարատի մասին՝ ներկայացնելով նրան վորպես մի դահիճի, հրեշավոր մարդու, վոր շարունակ արյան ծարավ ե զգում։ Յեվ ահա նրանց դրդմամբ ժիրոնդիստների ծանոթ Շարլոտա Կորդեն 1793 թ. հուլիսի 13-ին դաշույնով սպանեց Մարատին. այն պատճառով, վոր նրա ասելով Մարատը քաղաքացիական կռիվ ե սերմանում, վոր նա «մի գիշատիչ գազան ե, վոր լափում ե բոլոր ֆրանսիացիներին»։

Հեղափոխականներին շարունակում եյին հալածել։ Ժիրոնդիստները ձերբակալեցին Կոմունայի ամենաականավոր գործիչ՝ յակոբինների ամենաարմատական մասի ներկայացուցիչ՝ Հեբերին։

1793 Թ. ՄԱՅԻՍԻ 31 ՀՈՒՆԻՍԻ 2 ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի վերջին Պետիոնը հրատարակեց իր «Նամակը՝ փարիզեցիներին»։ Ժիրոնդիստների այդ առաջնորդի դիմումը հավասարազոր եր մոնտանյարներին պատերազմ հայտարարելուն։ Պետիոնը կոչ եր անում կոտորել հեղափոխականներին։ «Ձեր դույքերին վտանգ են սպառնում, իսկ դուք ձեր աչքերն եք փակում այդ վտանգի հանդեպ։ Ունևորների և չունևորների միջև կռիվ են հարուցում, այնինչ դուք վոչինչ չեք անում կանխելու այդ կռիվը։ Մի քանի բանսարկուներ, մի խումբ խռովարարներ ձեզ որինակներ են հրամցնում, ձեզ հրավիրում են դեպի մոլի և չմտածված քայլեր, մինչդեռ դուք արիություն չունեք դիմադրելու։ Դուք համարձակություն չունեք յերևալու ձեր սեկցիաներում և այնտեղ պայքարելու նրանց դեմ։ Դուք տեսնում եք, թե ինչպես բոլոր հարուստ և խաղաղասեր մարդիկ լքում են Փարիզը, դուք տեսնում եք, թե ինչպես Պարիզը վոչնչանում ե, և այնուամենայնիվ դուք հանգիստ եք մնում։ Փարիզցինե՛ր, դուրս յեկեք վերջապես ձեր լետարգիական վիճակից և հարկադրեցեք այդ թունավոր միջատներին վերադառնալ իրենց բները»։

Յակոբինյան ակումբը՝ հաշվի առնելով այն, վոր ժիրոնդիստները հակահեղափոխության ուղին են բռնել, մի հատուկ կոչով դիմեց իր գավառային բաժանմունքներին. «Այո, յեղբայրնե՛ր և բարեկամնե՛ր, հակահեղափոխություն հենց Ազգային Կոնվենտի ներսում։ Վոտքի՛ յելնենք, այո՛, բոլորս ել վոտքի՛ յելնենք. ձերբակալենք մեր հեղափոխության բոլոր թշնամիներին և բոլոր կասկածելի մարդկանց»։ Ժիրոնդիստների պահանջը՝ Կոմունան ցրելու մասին՝ մեծ զայրույթ առաջացրեց Փարիզի չքավոր շրջաններում։ Անխուսափելի դարձավ նոր ապստամբությունը։ Կոնվենտի նախագահ, ժիրոնդիստ Ինարը յակոբիններին սպառնում եր, վոր, յեթե Կոնվենտի դեմ վորևե վոտնձգություն գործադրվի, Փարիզը վոչնչացվելու յե այնպես, վոր այլևս իզուր են վորոնելու Սենայի ափերին այն տեղը, վորտեղ նա գտնվում եր։ Իսկ Ռոբեսպյերը Յակոբինյան ակումբում հրավիրում եր ժողովրդին ապստամբելու։ Սեկցիաների մեծ մասը Կոմունայի գլխավոր խորհրդի վերահսկողությամբ կազմակերպեց գործողությունների կոմիտե։ Գրավեցին վառոդը։ Բանվորները զինվեցին։

Մասսաները պահանջում եյին Կոնվենտից վտարել ժիրոնդիստներին։ Փարիզի Կոմունան և սեկցիաները ղեկավարում եյին շարժումը։ Մայիսի 31-ին զինված ամբոխները Կոնվենտ յեկան և դարձյալ պահանջեցին վտարել և ձերբակալել ժիրոնդիստական պատգամավորներին։ Հունիսի 2-ին Կոնվենտը նորից պաշարեցին զինված ամբոխները։ Կոնվենտին ներկայացված պահանջների թվում կային հետևյալները՝ կառավարությունն ու ռազմական ապարատը զտել, չքավորների դրությունը բարելավելու նպատակով հարուստներին հարկել 1 միլիարդ պարտադիր փոխառությամբ, եժանագին հաց մատակարարել Փարիզին, հասարակական աշխատանքներ կազմակերպել, մայիսի 31—հունիսի 2-ի հեղափոխության բոլոր մասնակիցներին վարձատրել և այլն։ Կոնվենտին ուղղված դիմումը գալիս եր արդարացնելու հեղափոխությունը. «Ազատության ջահը մարում ե, ազատության սյուները խախուտ են դառել, հակահեղափոխականները գլուխ են բարձրացնում։ Թո՛ղ նրանք դողան. վորոտը կճայթի և նրանց փոշի կդարձնի։ Ժողովուրդը հոգնել ե. փրկեցեք նրան կամ թե չե նա ինքը կփրկի իրեն»։

Կոնվենտի պահակախումբը՝ Ազգային գվարդիան անցավ ժողովրդի կողմը։ Սարսափած «Ճահիճը» յակոբինների հետ քվեարկեց հոգուտ ժիրոնդիստների վտարման։ 29 ականավոր ժիրոնդիստական պատգամավորներ ձերբակալվեցին, հեղափոխական տրիբունալի դատին մատնվեցին և հետագայում մահվան պատժի յենթարկվեցին։ Մայիսի 31—հունիսի 2-ի հեղափոխությունը վերացրեց խոշոր բուրժուազիայի ազդեցությունը Կոնվենտում և հաստատեց յերկրում յակոբինների (մանր բուրժուազիայի) հեղափոխական դիկտատուրան։

1793 ԹՎԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Յակոբինների դիկտատուրայի ժամանակաշրջանում Կոնվենտի օրենսդրական հիմնական ակտերից մեկը պետք է համարել նոր սահմանադրությունը, վորի մշակման աշխատանքն սկսվել էր դեռևս ժիրոնդիստների օրով: Այդ նոր՝ 1793 թվի սահմանադրության մեջ կենսագործված էին բուրժուական դեմոկրատիայի սկզբունքները. այն է՝ ըստ սահմանադրության պահպանվում են մասնավոր սեփականությունը, հանրապետությունը և ընդհանուր ընտրական իրավունքը (բացառյալ կանանց). սահմանվում է օրենսդրական իշխանություն ի դեմս օրենսդրական կորպուսի, վորի 600 պատգամավորները պետք է ընտրվեյին մի տարով. մունիցիպալ պաշտոններ ստանձնող անձինք ընտրվում են կոմունալ ժողովներում. բոլոր քաղաքացիները յենթարկվում են հարկատվության. ժողովուրդը զինվում է. զորամասերում վերացվում է մտրակի դիսցիպլինան. Ֆրանսիան պատսպարում է այն օտարերկրացիներին, վորոնք ազատության գործի համար տուժել, արտաքսվել են իրենց հայրենիքից: Կարևորագույն օրենքները պետք է հանձնվեյին ամբողջ ժողովրդին հաստատելու՝ նրա կամքը հարցնելու միջոցով (ռեֆերենդում): Ինքն իսկ սահմանադրությունը նմանապես պետք է հաստատվեր ռեֆերենդումի միջոցով:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԵՐՐՈՐԸ

Սակայն, չհաջողվեց այդ սահմանադրությունն իրականացնել, կյանքում անցկացնել:

Դեմոկրատական իշխանություն կազմակերպելու համար տարված աշխատանքը վիժեց՝ շնորհիվ հակահեղափոխության միացյալ ուժերի և օտարերկրյա բանակների գրոհի: Հեղափոխության պաշտպանությունն արտակարգ միջոցառումներ էր պահանջում:

Տապալված ժիրոնդը յետ քաշվեց գավառները: Այստեղ նա ձեռնամուխ յեղավ քաղաքացիական անողոք կռվի: Կալանքի տակից փախած ժիրոնդիստները (Պետիոն, Բրիսսոն, Լուվեն և ուրիշները) գրգռում և հուզում էին բնակչությանը հարավային և արևմտյան դեպարտամենտներում: Արդյունաբերական քաղաքներում (Լիոն, Մարսել, Բորդո և այլն) յակոբիններին վտարում էին քաղաքային խորհուրդներից: Լիոնում իշխանությունը գրավեցին միապետականները: Կորսիկան անջատվեց: 83 դեպարտամենտներից մոտ 60-ը շարունակ պատերազմում էին Կոնվենտի դեմ: Վանդեական խռովությունը նորանոր շրջաններ էր ընդգրկում: Անգլո-սպանական նավատորմը ժիրոնդիստների հրավերով գրավեց Տուլոն նավահանգիստը: 1793 թ. ապրիլի 10-ին Կոնվենտը դեկրետ հրատարակեց հեղափոխական վարչակարգի վերաբերյալ. և մի առ ժամանակով, քանի շարունակվում էր ռազմական դրությունը, ընդհատեց նոր սահմանադրության կիրառումը: Հասարակական փրկության կոմիտեն վերակազմվեց և դարձավ կառավարական բարձրագույն մարմինը՝ օժտված արտակարգ իշխանությամբ: Այդ կոմիտեյին էր յենթարկվում հեղափոխական կառավարությունը՝ կազմված 12 «գործադիր կոլեգիաներից». այդ կոլեգիաները կազմակերպել էին մինիստրությունների փոխարեն և գործում էին Կոմիտեյի ղեկավարության ներքո: Սրա կողքին հիմնվեց նաև հասարակական ապահովության Կոմիտե, վորը ղեկավարում էր հեղափոխության պաշտպանության վերաբերյալ ձեռնարկումները, իրավունք ուներ ձերբակալելու և արտակարգ վորոշումներ կայացնելու:

Հակահեղափոխության և սպեկուլյացիայի, ինչպես և մաքսիմումի խախտման դեմ մղված պայքարում մեծագույն դեր էր խաղում յակոբինների կազմակերպած հեղափոխական տրիբունալը: Նա պարզեցրեց դատական պրոցեսը և դատապարտվածների համար միմիայն մի պատիժ սահմանեց—մահվան պատիժ: Ամբողջ իշխանությունը յերկրում կենտրոնացված էր յակոբինների ղեկավարության ներքո աշխատող այդ մարմիններում: Իսկ տեղերում հեղափոխական իշխանության լիազոր ներկայացուցիչների դերում հանդես էին գալիս Կոնվենտի կոմիսարները, վորոնց կից հիմնված էին «հեղափոխական հանձնաժողովներ». որոնք վարում էին տեղերում այնպիսի գործեր, ինչպես էին խուզարկությունները, կալանավորումները, ապարատի զտումն ու վերակառուցումը, բանակների պարենավորումը, մատակարարումն ու սպառազինումը, հին պաշտամունքի, «արիստոկրատիզմի», չերդված հոգևորականության դեմ ուղղված պայքարը և այլն: Զքավորների և զինվորների ընտանիքների ապրուստի միջոցները, ինչպես և կառավարության ծախսերի համար անհրաժեշտ ռեսուրսներն ավելացնելու նպատակով՝ կոմիսարները հայտարարում էին պարտադիր փոխառություններ և նշանակում էին հեղափոխական հարկեր: Տեղական ինքնավարությունը, վորտեղ շարունակ գերիշխում էին ժիրոնդիստները, ձևականորեն պահպանվեց, սակայն վերստուգման, հսկողության և շտապ միջոցներ ձեռք առնելու համար Կոնվենտի կոմիսարներն օժտված էին անսահմանափակ լիազորություններով: Տնտեսական ծանր պայմանները և հանրապետության անկախությանը դրսից և ներսից սպառնացող վտանգներն ստիպեցին յակոբիններին կիրառելու կենտրոնացած դիկտատուրայի և տերրորի սիստեմը:

Տերրորը սարսափեցնելու և հարկադրելու միջոց էր հանդիսանում. նա յերաշխավորում էր հասարակական անվտանգությունը և սանձահարում էր հակահեղափոխության փորձերը: «Ամբողջ ֆրանսիական տերրորիզմը—ասում է Մարքսը— վոչ այլ ինչ էր, բայց յեթե պլեբեյական մի յեղանակ՝ բուրժուազիայի թշնամիների—աբսոլյուտիզմի, ֆեոդալիզմի. քաղքենիության—հետ հաշիվ տեսնելու»: Տերրորը վոչ միայն քաղաքական նշանակություն ունեցող միջոց էր. նա պետք է ապահովեր նաև մաքսիմումի վերաբերյալ այն օրենքի գործադրումը, վորն ընդու-

նել էր Կոնվենտը 1793 թ. սեպտեմբերի 29-ին: Այդ օրենքով առաջնակարգ անհրաժեշտության բոլոր առարկաների գները վորոշ նորմայի էին յենթարկվում: Նման առարկաների շարքն էին դասված՝ բոլոր կենսամթերքները, խմիչքները, հագուստեղենը, ձեռնարկությունների համար պետքական հումույթը: Իբրև մաքսիմումի գործակից՝ վերցված էր 1790 թվի շուկայի գինը՝ հանած հետագայում վերացված տուրքերը և ավելացրած ⅓-ով: Աշխատանքի վարձատրությունը սահմանված էր 1 ½ անգամ ավելի բարձր չափով, քան 1790 թվի աշխատանքի վարձատրությունն էր:

Ի՞նչ հետևանքներ ունեցավ մաքսիմումի վերաբերյալ օրենքը: Մաքսիմումը նշանավոր միջոց էր, վորն ապահովում էր չքավոր բնակ-



Գիլյոտինը (ժամանակակից հոլանդական փորագրությունից)

չության առաջնակարգ անհրաժեշտության իրերով: Բնականաբար, հեղափոխության թշնամիներն ամեն կերպ աշխատում էին վոչնչացնել մաքսիմումը: Վաճառականները դադարեցրին առևտուրը: Ապրանքները շուկաներից անհետացան: Քաղաք մտնվող հացի քանակն օրեցօր նվազում էր, թեև կառավարությունը շարունակում էր բռնագրավել գյուղացիների հացը՝ կատարելով վճարումներն ամուր գներով: Հացն սկսեցին թաքուն ծախել: Սպեկուլյացիան հսկայական չափեր ընդունեց: Կոնվենտի դեկրետն սպեկուլյացիան հայտարարեց «ամենածանր հանցանքը»: Ապրանքներ թաքցնողներին մահ էր սպառնում: Հեղափոխական տրիբունալները խստիվ պատժում էին սպեկուլյացիայի համար: Այստեղ տուժում, զոհ էին դնում վոչ միայն պրոֆեսիոնալները (հատկապես սպեկուլյացիայով զբաղվողները), այլև առանձին անհատներ՝ գյուղացիության և պրոլետարիատի միջից: Տերրորը չէր խնայում դավաճաններին և հակահեղափոխականներին: 1793 թ. սեպտեմբերի 17-ին Կոնվենտը հրատարակեց «կասկածելիների» վերաբերյալ օրենքը. «Կասկածելիներ» ասելով հասկանում էին թագավորության կողմնակիցներին, ֆեդերալիզմի ջատագովներին (ժիրոնդիստներին), այն անձանց, վորոնք անկարող էին ապացուցել իրենց քաղաքական լոյալությունը, ազնվականներին, վորոնք չէյին ապացուցել

իրենց անձնվիրությունը հեղափոխության հանդեպ, էմիգրանտներին, յերդված հոգևորականությանը և այլն: Տերրորն անխնա անում էր հեղափոխության թշնամիների դատաստանը: Տերրորն էր այն ճանապարհը, վորով կարելի յեր յերկիրը խաղաղացնել և այնպիսի պայմաններ ստեղծել, վորոնք թույլ տային կենտրոնանալ տնտեսական դրության բարելավելու աշխատանքի շուրջը: Դիկտատուրայի հետևողական քաղաքականությունը, հանուն ազգի և հեղափոխության պաշտպանության գործադրած աննկուն յեռանդը, Թագուհու՝ Մարի Անտուանետի մահապատիժը, դավաճան—գեներալների, սպեկուլյանտների, ժիրոնդիստների գլխատումը, հակահեղափոխության արմատախիլ անելն ու ապստամբությունների և խռովությունների խըստապես ճնշելը—իրենց ազդեցությունը ներգործեցին: Ֆրանսիայում խաղաղություն հաստատվեց: 1793 թ. վերջին փոխվեց յերկրի արտաքին դրությունը: Բանակը անցավ հաջողակ հարձակման: Հեղափոխական հրամանատար Հոշը, վոր նախկին ձիապան էր, ջարդ տվեց ավստրիական զորքերին Էլզասում: 1793 թ. դեկտեմբերին գեներալ Բոնապարտը (ապագա կայսրը) գրավեց Տուլոնը և դուրս քշեց այնտեղից անգլիական եսկադրան (նավատորմամասը): Վանդեայում, Լիոնում և այլ տեղերում ապստամբությունը խորտակվեց:

Տերրորը վոչ վոքի չէր խնայում: Գիլյոտինի (մահվան դատապարտվածներին գլխատելու մեքենան) դանակի տակ մեռան ժիրոնդիստները, վորոնց թվում քիչ չէյին հայտնի գիտնականներ և քաղաքական գործիչներ, վորոնք յակոբինների հետ դաշնակցած դրոհ տվին աբսոլյուտիզմի վրա:

ՅԱԿՈԲԻՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ

Արմատականորեն վերացնելով ֆեոդալիզմի մնացորդները՝ յակոբինական դիկտատուրան լիովին իրականացրեց գյուղի ազատագրումը և գյուղացիական հարցը լուծեց այնպես, ինչպես ֆրանսիական գյուղացիությունն էր ակնկալում և պահանջում: 1793 թ. հուլիսի 17-ին վերացրեց, առանց բացառության և վորևէ փրկանքի վճարի, բոլոր ֆեոդալական պարհակներն ու սենյորալ իրավունքները: Ֆրանսիական գյուղացին դարձավ լիակատար սեփականատեր այն հողի, վոր մշակում էին ինքն ու իր նախահայրերը, և վորը, ըստ ֆեոդալական արտոնագրերի, համարվում էր սենյորի սեփականությունը: Այդ ռեֆորմի շնորհիվ, գյուղացին հնարավորություն ստացավ ընդարձակելու իր հողի չափերը՝ ազգային գույքի ֆոնդի հողամասեր գնելով:

Վորպեսզի գյուղացիները հեշտությամբ գնեն ազգային գույքի հողերը, Կոնվենտն արտոնություններ սահմանեց նրանց վաճառքի համար: Հողերը սկսեցին բաժանել մանր հողամասերի և նրանց գներն իջեցրին: Այն հանգամանքը, վոր ազգային ֆոնդի հողերն սկսեցին ծախծխել նման

արտոնյալ պայմաններով և մանր հողամասերով, նպաստեց մանր գյուղացի-սեփականատերերի քանակի մեծանալուն. Հողերը բաշխվում եյին հողազուրկ և սակավահող գյուղացիների, ինչպես և զինվորների ու հաշմանդամների միջև:

Կոնվենտի օրենսդրությամբ վորոշվեց, վերջապես, սենյորների կողմից գրավված համայնական հողերի բաժանում կատարել: Այսպես ավարտվեց ագրարային հեղափոխությունը: «Իրապես հեղափոխական պայքարը հնացած ֆեոդալիզմի դեմ, ամբողջ յերկրի փոխանցումը—և այն էլ իսկապես հեղափոխական-դեմոկրատական արագությամբ և վճռականությամբ, յեռանդով ու անձնազոհությամբ—արտադրական ավելի բարձր յեղանակի, գյուղացիական ազատ հողատիրության—ահա նյութական, տնտեսական այն պայմանները, վորոնք զարմանալի, «հրաշքային» արագությամբ փրկեցին Ֆրանսիան՝ վերածնելով, նորոգելով նրա տնտեսական հիմքը» (Լենին):

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Յակոբինյան դիկտատուրան հատկանշական է նաև վորպես ուշագրավ կուլտուրական վերելքի մի ժամանակաշրջան. դպրոցների թիվն ավելացավ, հաստատվեց աշխարհիկ ուսում, արմատահան արին հին դպրոցական սերտողության (սխոլաստիկայի) տրադիցիաները, ձեռնամուխ յեղան ընդհանուր գրագիտություն անցկացնելու աշխատանքներին: Մեծացավ յակոբինյան թերթերի թիվը, հեղափոխական գրականության տիրաժը սկսեց ամեն ամիս բարձրանալ, հանրամատչելի դարձան գրադարանները, ընթերցարանները, թանգարանները: Լուվրի հայտնի թանգարանը լրացվում եր նորանոր եքսպոնատներով:

1793 թ. սեպտեմբերին Կոնվենտը հանձնարարեց յերկու պատգամավորներին կազմել և հրատարակել ֆրանսիական հանրապետականների հերոսական և հայրենասիրական սխրագործությունների վերաբերյալ մի ժողովածու, վորը գար փոխարինելու տերտերական գրքերը: 150 հազար օրինակով հրատարակված այդ ժողովածուն տարածվեց ամենուրեք՝ դպրոցներում, ակումբներում, բանակում, քաղաքային և գյուղական ինքնավարություններում:

Յակոբինյան դիկտատուրան հետևողական և համառ պայքար եր մղում հեղափոխական նոր կենցաղի համար: Քաղաքական նշանավոր անցքերին նվիրված աշխույժ ցույցեր եյին տեղի ունենում փողոցներում, պատերազմում ձեռք բերած հաջողությունների առթիվ Փարիզի բնակչությունը կազմակերպում եր հանդիսավոր տոնակատարություններ՝ բուռն և վառ յելույթներով: Հին կարգերի հանդեպ տածած ատելությունը պատճառ հանդիսացավ արիստոկրատիայի բնախնդիր վարվելակերպի փոխարեն սահմանելու հանրապետական պարզ շարժուձևը, վոր գործ

եյին ածում աշխատավորները: Փողոցներից, հասարակական վայրերից չքացան հին Ֆրանսիայի կոստյումները: Սանկյուլոտը (բառացի՝ «անվարտիք», հեղափոխական) մոդայից դուրս հանեց ազնվականների կարճ մինչև ծնկները հասնող վարտիքները և մուգ կոստյումի ու մինչև ներբանները յերկար վարտիքների մոդա ստեղծեց: Հռչակավոր նկարիչ՝ Լուի Դավիդի նկարների հիման վրա նախագծվեցին հագուստի տարազներ՝ ֆրանսիական քաղաքացիների և քաղաքացուհիների համար: Փոխադարձ հարաբերությունների ասպարեզում պարզություն եր տիրում, տարածվում եր իրար դիմելիս «դու» գործածելու և «քաղաքացի», «քաղաքացուհի» ասելու սովորությունը: Սալոնական բարքերը վճռականապես վտարվում եյին հրապարակից:

Հեղափոխությունը ստեղծում եր և՛ իր արվեստը: Սոցիալական նոր ապրումներն իրենց արտացոլումն եյին գտնում հեղափոխական յերաժշտության մեջ: Շրջիկ օրկեստրները նվագում եյին անհոգ, բայց վստահ « Caira -ի («Կըդվի») զվարթ յեղանակը: Հեղափոխության բազմաթիվ տոներն ուղեկցվում եյին պարերով, յերգեցողությամբ, յերաժշտությամբ: 1917 թ. ապրիլի 25-ին սպա Ռուժե-դե-Լիլը գրեց «Մարսելյոզը», հեղափոխության աշխույժ և մարտական հիմնը, վորն այդպես կոչվեց Փարիզ գնացող և ճանապարհին այդ հիմնը յերգող մարսելցիների գումարտակի անունով (գումարտակը գնում եր հեղափոխական հայրենիքը պաշտպանելու): Վալմիի մոտ տարած հաղթանակից հետո մինիստր Սերվանն արգելեց յերգել դավանանական յեկեղեցական աղոթքը (Te deum-ի) մոդան անցյալ, կարգադրեցեք նույն հանդիսավորությամբ յերգել մարսելցիների հիմնը»: Տյուիլրի պալատի գրավման և թագավորական իշխանության անկման առնչությամբ կազմվեց մասսաների սիրած փոքրիկ յերգը՝ «Կարմանյոլա»-ն[1]): Այդ պարը ու հասարակ բառերով յերգը, վոր իր մեջ հեգնանք եր պարունակում Լյուդովիկոս XVI-ի դեմ և սպառնալիքներ՝ արիստոկրատիայի ու հոգևորականության հասցեյին, սիրով յերգում եր հեղափոխական ամբոխը և յերգելիս՝ ուրախ ու զվարթ պարում:

Տոները հեղափոխականացնում եյին մասսաներին: «Կազմակերպեցեք ընդհանուր հանդիսավոր տոնակատարությունները վողջ հանրապետության համար, կազմակերպեցեք հաճախակի տոներ առանձին վայրերի համար»—հանձնարարում եր Ռոբեսպյերը: Պարիզի տաճարներից մեկը վերածվեց մեծ մարդկանց դամբարանի (պանթեոն): 1791 թ. այս-

[1]) Пляшите карманьолу
Под польбу, под польбу!
В канаву всех попов!
В конюшню всех попов
И к дьяволу всех монахов
Под польбу, под полбу!
К к дьяволу монахов!
Под польбу, под польбу!

տեղ տեղափոխեցին Վոլտերի աճյունը: Տաճարի ճակատին գրեցին՝ «Մեծ մարդկանց հիշատակին—երախտագետ հայրենիքից»: Նկարիչ Դավիդն առաջարկում էր 1792 թ. օգոստոսի 10-ին նվիրված տոնի համար Մարսյան դաշտում մի թատրոն կառուցել, որտեղ կարելի լիներ մնջախաղի (пантомима) միջոցով ներկայացնել հեղափոխության ամենապայծառ եպիզոդները:

Հեղափոխությունը վճռականապես հրաժարվում էր եկեղեցական տոնացույցից: 1793 թ. վերջին Կոնվենտը հաստատեց նոր հեղափոխական օրացույցը, որ, նոր տարեթիվ էր մտցնում: Նրա սկզբնակետը դարձավ հանրապետության հիմնելու օրը՝ 1792 թ. սեպտեմբերի 22: Այդ օրից էր սկսվում նոր տարին: Տարին նշանակվում էր դասական հռոմեական թվանշաններով և բաժանվում էր 12 ամիսների՝ յուրաքանչյուրը 30 օրով: Ամիսն էլ բաժանվում էր երեք դեկադի՝ 10-ական օրով: Դեկադի տասներորդ օրը հանգստյան օր էր: Տարվա մնացյալ 5–6 օրերը հայտարարված էին լրացուցիչ օրեր՝ «սանկյուլոտիդներ»: Ամիսները միացվում էին իրար հետ ըստ չորս սեզոնական խմբերի: Ամիսների անունները համապատասխանում էին նշանակվող ժամանակի բնորոշ հատկություններին: Ամիսները հետևյալն էին. աշնան ամիսները՝ վանդեմյեր—այսինքն՝ խաղողաքաղի ամիս. բրյումեր—մառախուղների ամիս. ֆրիմեր—եղյամի ամիս. ձմռան՝ նիվոզ—ձյան ամիս. պլյուվիոզ—անձրևների ամիս. վանտոզ—քամիների ամիս. գարնան՝ ժերմինալ—այն ամիսը, երբ սերմերը ծլում են. ֆլորեալ—ծաղիկների ամիս. պրերիալ—մարգագետինների ամիս. ամառվա՝ մեսսիդոր—հնձի ամիս. թերմիդոր—շոգի ամիս և ֆրյուկտիդոր—պտուղների ամիս: Հեղափոխական օրացույցը պահպանեց իր գոյությունը մինչև Նապոլեոն I-ի ժամանակաշրջանը: Եկեղեցական տոների տեղը բռնել էին հեղափոխական տոները՝ Բաստիլի առումը, ֆեդերացիայի տոնը, միապետության անկման օրը և այլն:

Նոր տոների հետ սկսեց տարածվել քաղաքացիական կնունքներ կատարելու սովորությունը: Նորածիններին հաճախ տալիս էին հեղափոխական առաջնորդների անունները՝ անվանելով նրանց Ռոբեսպյեր, Մարատ և այլն: Գործ էին ածվում նաև անտիկ անուններ: Կոնվենտի անդամ Շոմետի առաջարկով՝ կրոնական պաշտամունքի փոխարեն՝ 1793 թ. նոյեմբերի 7-ին հաստատվեց բանականության պաշտամունքը (ապաքրիստոնեացում): Այս պաշտամունքը մի փորձ էր՝ կաթոլիկական եկեղեցու դեմ մղած պայքարից անցնելու կրոնական նախապաշարմունքների դեմ ուղղված պայքարին: Աշխատավորության շրջանում լայնորեն տարածվում էին անաստվածության գաղափարները: Երբ Փարիզի Կոմունայի որոշումով փակվեցին բոլոր կաթոլիկական եկեղեցիները, այդ փաստն ընդունվեց որպես մի խելացի քայլ, որ գալիս էր բավարարելու ճնշված մասսաների պահանջը—մասսաների, որոնց հիմարացնում և շահագործում էր եկեղեցին: Սակայն, բանականության պաշտամունքը, որ փոխարինեց քրիստոնեական աստվածապաշտությանը, համակրություն չգտավ Ռոբեսպյերի և Դանտոնի կողմից: Նրանք չէին բաժանում Հեբերի և Շոմետի աթեիզմն և անհրաժեշտ էին համարում պահպանել կրոնը՝ իբրև հասարակական անվտանգության երաշխիք և իբրև մասսաներին հնազանդ պահելու միջոց: Ռոբեսպյերի նախաձեռնությամբ՝ բանականության պաշտամունքը փոխարինվեց «բարձրագույն էակի»-ին երկրպագելու պաշտամունքով: Այդ երկրպագությունը կատարվում էր բացառիկ հանդիսավորությամբ, որ հիշեցնում էր կաթոլիկական աստվածապաշտական ծեսերը: Կենտրոնական դեմքն այդ հանդեսներում ինքը Ռոբեսպյերն էր, նոր կրոնը գլխավորող անձը:

Առանձին հոգատարություն ցուցահանեց հեղափոխությունը՝ ժողովրդական մասսաների լուսավորության և կուլտուրական վերելքի գործում: Դաստիարակության վերաբերող խնդիրները խորապես հուզում էին հեղափոխության առաջնորդներին և գործիչներին: Ռոբեսպյերի մտերիմ ընկեր և համախոհ՝ Սեն-Ժյուստը (1767—1794, որ Կոնվենտի կոմիսար էր և Հասարակական Փրկության Կոմիտեի անդամ, ստեղծեց դաստիարակչության իր սիստեմը: Երեխաները մինչև 5 տարին լրանալը մնում են իրենց մայրերի մոտ, այնուհետև նրանք հանձնվում են հանրապետությանը: Վաղ մանկությունից խիստ դիսցիպլինա է կիրառվում, վերահսկողության տակ են դրվում երեխաների խաղերը, մի բանիմաց սերունդ է նախապատրաստվում, որը կյանքի համար հարկավոր և անհրաժեշտ ունակությունների տեր լինի: 5 տարեկանից սկսած մինչև 10 տարեկան հասակը տղաները սովորում են փակ ուսումնական հիմնարկներում, որոնք բացվում և գործում են գյուղերում՝ մանկան ֆիզիքական և հոգևոր ուժերի զարգացման նպաստող հանգամանքներում (կոպիտ հագուստ, կարծր և բուսական կերակուր, ծեծի բացակայություն, փայփայանք, ֆիզիքական վարժություններ, լող, կարդալ-գրել և այլն): 10-ից մինչև 16 տարին տղաներն ուսումնասիրում են գյուղատնտեսությունը, աշխատում են գյուղացիական դաշտերում, մասնակցում են բոլոր գյուղատնտեսական աշխատանքներին, վարժվում են թե՛ անհատապես և թե՛ ջոկատով՝ ռազմական գործի մեջ: 16 տարեկան հասակում տղան հրապարակորեն ցույց է տալիս իր ունակությունն ու պատրաստվածությունն ընտրած պրոֆեսիայի բնագավառում, որից հետո նա ստանում է բանվորի հագուստ: Դառնալով չափահաս՝ պատանին բանակի մեջ է ընդունվում հայրենիքը պաշտպանելու: Աղջիկները դաստիարակվում են տանը: Ֆրանսիական հեղափոխության մանկավարժական գաղափարներն արտահայտվեցին ընդհանուր և ձրի ժողովրդական կրթության պահանջի ձևով: Ժողովրդական կրթության կոմիտե-

յում լսվեց Լեպելլետյեի զեկուցումը, որտեղ նա առաջարկում էր մտցնել ընդհանուր կրթություն՝ տարրական դպրոցներում, կենտրոնական և ապա մասնագիտական դպրոցներում։ Կոնվենտը ծրագրեց երեխաներին դպրոցներում անվճար հայթայթելու հասարակության հաշվին և հայտարարեց ընդհանուր, հավասար և պարտադիր կրթություն։ Կոնվենտը մտցրեց ֆրանսիական գիտնականների կողմից մշակված՝ չափերի և կշիռների մետրիկական սիստեմը, որն ահագին գործնական նշանակություն ունեցավ և ուժեղ ազդեցություն գործեց մաթեմաթիկական մտածողության զարգացման վրա։

ՊԱՅՔԱՐ ՅԱԿՈԲԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Հեղափոխական հարձակումը, հակահեղափոխականների կործանումը, հին կենցաղի արմատախիլ անելը, ռազմական հաջողությունները, հեղափոխության ժողովրդականությունը թշնամական զորքերում, իր գիտակից դիսցիպլինայով և հեղափոխական համերաշխությամբ ուժեղ՝ դեմոկրատացված բանակի ներխուժումը—պայմաններ ստեղծեցին, որոնք նպաստեցին հեղափոխության հետագա ծավալմանը։ Պետական ապարատը գտնվում էր յակոբինների ձեռքում։ Հասարակական փրկու-

Ժորժ Ժակ Դանտոն (Ջանդի նկարած պորտրետից)

թյան կոմիտեն գլխավորում էր սկզբում Դանտոնը, իսկ 1793 թ. հուլիս 10-ից սկսած՝ Ռոբեսպյերը։ Ոստիկանական ֆունկցիաներն ու հասարակական անվտանգությունն ապահովելու ձեռնարկումները հանձնվեցին հասարակական անվտանգության կոմիտեին վարելու։ Հեղափոխական իշխանության բարձրագույն ներկայացուցիչները տեղերում

Կոնվենտի կոմիսարներն էին։ Ամենուրեք գավառներում գործում էին հեղափոխական կոմիտեները, որոնք անխնա պայքար էին մղում հակահեղափոխության դեմ։ Համեմատական խաղաղացումը քաղաքացիական ֆրոնտներում և ռազմական հաջողությունները արտաքին ֆրոնտներում 1794 թ. գարնանը պառակտում առաջացրին՝ մինչ այդ միասնական՝ կառավարող կուսակցության մեջ։

Պարենավորման ճգնաժամի սաստկացման կապակցությամբ՝ սուր բնույթ ստացան տարաձայնությունները յակոբինների միջև։ Կուսակցության ներսում ձայներ էին լսվում, որ համառորեն պահանջում էին տերրորը դադարեցնել և հեղափոխությունն ավարտել։ Տերրորը դառնում էր հեղափոխության պաշտպանության հիմնական միջոցը։ Մանր բուրժուազիան անկարող էր հեղափոխության տնտեսական խնդիրները լուծել՝ ժողովրդական լայն մասսաների պահանջների համաձայն։ Յակոբինների վճռական ձեռնարկումները՝ ոչնչացնելով ֆեոդալիզմի մնացորդները և ապահովելով յերկրի պաշտպանությունը թե արտաքին և թե ներքին թշնամիներից՝ բարենպաստ պայմաններ ստեղծեցին կապիտալիստական արտադրության զարգացման համար։ Յակոբինների շրջանում ժողովրդականություն էին ձեռք բերում այն կոչերը, որ հրավիրում էին դաշինք կնքել նոր բուրժուազիայի հետ, հեղափոխության ընթացքում սպեկուլյացիաների միջոցով ուռճացած այդ խավի հետ։

ԴԱՆՏՈՆԻՍՏՆԵՐԸ

Յակոբինները տրոհվեցին յերեք գրուպաների (ֆրակցիաների)։ Աջ գրուպայի գլուխ կանգնած էր Դանտոնը, որ ներկայացնում էր այն նոր բուրժուազիայի շահերը, որը հարստացել էր ամեն տեսակի սպեկուլյացիաներ և առևտրական գործարքներ կատարելով։ Դանտոնիստների շուրջը հետզհետե կենտրոնանում էր ֆրանսիական հակահեղափոխությունը։ Դանտոնը կարծում էր, որ արդեն հասել է դիկտատուրայի սիստեմը վերացնելու և տերրորը դադարեցնելու ժամանակը։ Դանտոնիստները մանավանդ «թշնամաբար էին վերաբերվում Կոնվենտի այն միջոցառումներին, որոնք ուղղված էին հարուստների դեմ»։ Դանտոնիստներն ամեն կերպ աշխատում էին վիժեցնել սպեկուլյացիաների, մաքսիմումի, բռնագրավումների վերաբերյալ օրենքները։ Նրանք բացորոշ պաշտպանում էին առևտրականներին և պահանջում էին ցրել այն հեղափոխական բանակը, որ ստեղծված էր մաքսիմումն անցկացնելու համար։ Դանտոնիստները պնդում էին, թե մաքսիմումի վերաբերյալ օրենքը կասեցնելու յե մթերքների շրջանառությունը, ավել ու հակահեղափոխություն է առաջացնելու։ Նրանց ծրագիրը գալիս էր վերացնելու այն բոլոր հեղափոխական նվաճումները, որոնք համապատասխանում էին ժողովրդական մասսաների պահանջներին։

Դանտոնը համոզված կողմնակից էր մասնավոր սեփականության: Նա Կոնվենտին առաջարկեց՝ սեփականության իրավունքները խախտելու համար մահվան պատիժ սահմանել: «Յեկեք ազդարարենք—ասում էր Դանտոնը—որ ամեն տեսակի սեփականություն,—հողային, անհատական, արդյունաբերական,—պետք է ընդմիշտ անձեռնմխելի մնա»: Դանտոնիստները թեքվեցին դեպի ժիրոնդիստների դիրքը: Նրանց վրա դրեց իր հույսերը ռեակցիան: Ինչպես առաջ ժիրոնդիստները, այժմ դանտոնիստները յեռանդուն կամպանիա սկսեցին Փարիզի Կոմունայի դեմ, մեղադրելով նրան խռովության գործերին անօրինաբար միջամտելու մեջ: Դանտոնն առաջարկում էր բանակից և գավառներից յետ կանչել Կոնվենտի կոմիսարներին, լիկվիդացիայի յենթարկել հեղափոխական վարչակարգը, հաշտություն կնքել արտաքին թշնամու հետ: Նա նպատակահարմար էր գտնում՝ լայն ամնիստիա (ներում) հայտարարել, բանտերից ազատ արձակել կալանավորված հակահեղափոխականներին: Երբ իշխանությունը ռոբեսպյերիստների ձեռքն անցավ, Դանտոնը սկսեց կատաղի կերպով հարձակվել Ռոբեսպյերի վրա: Դանտոնիստների թերթը՝ «Հին կորդելյեր»-ը, որը Կամիլ Դեմուլենն էր հրատարակում 1793–94 թ. ձմեռը, մեծ ժողովրդականություն և աջակցություն էր վայելում հետադիմականների շրջանում:

ՌՈԲԵՍՊԵՅՐԻՍՏՆԵՐԸ

Կենտրոնի ղեկավարն էր Մաքսիմիլիան Ռոբեսպյերը, որը յակոբինների դիկտատուրայի ժամանակաշրջանում գլխավորում էր հեղափոխությունը: Ռոբեսպյերը հեղափոխական մանր բուրժուազիայի և գյուղացիության առաջնորդն էր. նա անձնավորում էր մանր-բուրժուական «չքավորությունն ու ճշտապահությունը». նա դեմ էր հակակրոնական շարժման: Հետապնդելով չերդված քահանաներին՝ Ռոբեսպյերը ժխտում էր հոգևորականությանն իր ամբողջությամբ հալածելու անհրաժեշտությունը: Չցանկանալով աշխատել ժիրոնդիստների հետ և վստահություն չունենալով նրանց հանդեպ, նա չընդունեց պատերազմի լոզունգը, խստիվ պահանջեց թագավորին տապալել և ժիրոնդիստների դեմ սկսված պայքարի գլուխ կանգնեց՝ դաշինք կնքելով «կատաղիների» հետ: Ռոբեսպյերը յերկու անգամ Կոնվենտի նախագահ էր ընտրվել՝ լինելով միաժամանակ Փարիզի Կոմունայի գործունյա անդամն ու ղեկավարը: Հակահեղափոխության դեմ մղած պայքարում նա անկաշառ էր և անխնա: «Անողոքաբար և վճռականապես պատժեցեք դավաճան-ռոյալիստներին, մանավանդ ժիրոնդական և հակահեղափոխական դավերի գլխավոր ղեկավարներին և գլխավոր գործակալներին»—գրում էր Ռոբեսպյերը հասարակական փրկության կոմիտեի մի կոչում: «Մայրահեղ աղքատությունը և ահագին հարստությունները Ռոբեսպյերը լոկ արգելք էր համարում մաքուր

դեմոկրատիայի առջև. ահա թե ինչու նա ձգտում էր հաստատել կյանքի սպարտական պարզություն» (Մարքս):

Տնտեսական ձեռնարկումների և ագրարային հարցի բնագավառում ռոբեսպյերիստների քաղաքականությունն աչքի յեր ընկնում կրկնակի զգուշավորությամբ և կրում էր հաշտարար բնույթ: Գլխավորելով բոլոր հետևողական-հանրապետական բուրժուական տարրերի միությունը՝

Մաքսիմիլիան Ռոբեսպյեր (բրոնզե մեդալից)

Ռոբեսպյերը քաղաքականության ասպարեզում խուսափում էր ծայրահեղությունից և աշխատում էր հավասարակշռություն պահպանել աջակողմյանների և ձախակողմյանների միջև:

Իր գործունեության առաջին շրջանում Ռոբեսպյերը՝ գլխավորելով հեղափոխությունը՝ ժողովրդական մասսաների հետ էր և նրանց հետ լինելով էր, որ հաղթանակ տարավ: Այդ հաղթանակից հետո, սակայն, Ռոբեսպյերը սկսեց հետ քաշվել հեղափոխությունից, նա բացահայտ կերպով գործում էր աշխատավորության դեմ: Ռոբեսպյերը հենվում էր միջակ կարողության տեր մանր-բուրժուազիայի վրա, որը տրամադիր էր խոշոր բուրժուազիայի շահերին համապատասխանող քաղաքականություն վարել, բայց անընդունակ էր այդ քաղաքականությունը լրիվ կենսագործելու:

Ռոբեսպյերիզմի ծրագիրն այդ շրջանում քիչ էր տարբերվում սովորական բուրժուական-հանրապետական ծրագրերից, մանավանդ այն մասում, որը վերաբերում էր արտաքին քաղաքականության, ձախ կուսակցությունների հանդեպ և սեփականության խնդրի նկատմամբ բռնած դիրքին: Ռոբեսպյերիստները պահանջում էին յեռանդուն կերպով շարունակել պատերազմը, պահպանել և ուժեղացնել տերրորը, մերժում էին 1793 թ. սահմանադրությունը կյանքում անցկացնելու ամեն

տեսակի փորձերը, վճռականորեն դեմ էին տնտեսական հավասարության, հալածում էին ագրարային օրենքի (հողի ընդհանուր վերաբաժանման) կողմնակիցներին։ Ռոբեսպիերն անողոք կռիվ էր մղում «կատաղիների» դեմ։ Վերջինների առաջնորդ՝ Ժակ Ռու-ն յենթարկվում էր հալածանքների և հարձակումների. նրան բառիս բուն նշանակությամբ հետապնդում էին։ Ռոբեսպիերը Ռու-ին վերագրում էր «բոլոր վաճառականներին և խանութպաններին բնաջինջ անելու» դիտավորություն։ Ռու-ի դեմ հարուցած հալածանքները վերջացան նրա ձերբակալումով։ Բանտում, դեռևս իր դատից առաջ, 1794 թ. սկզբում Ժակ Ռու-ն վերջ տվեց իր կյանքին ինքնասպանությամբ։ «Հեղափոխական կառավարությունը—ասում էր Ռոբեսպիերը—հարկադրված է գործելու յերկու խութերի միջև՝ չափավորների և ծայրահեղների։ Սանկյուլոտները, վորոնց աշխատանքների խթանն է միշտ յեղել սերը հանդեպ մարդկության, յերբեք գույքերի հավասարության պահանջ չեն դրել, այլ միայն իրավունքների հավասարության պահանջ։ Կառավարության գլուխ պետք է կանգնած լինեն վոչ թե հարուստները, այլ սահմանափակ կարողության տեր մարդիկ»։

ՀԵԲԵՐՏԻՍՏՆԵՐԸ

Յակոբինների ձախ թևը, վոր Ռոբեսպիերի սիստեմի դեմ դուրս յեկավ, կազմում էր Հեբերի (հեբերտիստները), Շոմետի և Կլոոցի կողմից գլխավորված խմբակը, վորը ներկայացնում էր Փարիզի մանրբուրժուազիայի ամենանվազ չափով ապահովված՝ պրոլետարականացած շերտերը, քաղաքային արհեստավորներին, մանր արհեստանոցների տերերին, բանվորներին։ Հեբերտիստների խմբակներից մեկը (Հեբեր-Շոմետ) պնդում էր, թե «չքավորները վոչինչ չեն շահել հեղափոխությունից, բացի իրենց աշխատության մասին գանգատվելու իրավունքից»։ Անհրաժեշտ է «աշխատավորին դնել այնպիսի դրության մեջ, վոր նա հույս ունենա մի գեղեցիկ օր դառնալու մանր սեփականատեր»։ Շոմետն առաջարկում էր պրոգրեսիվ-յեկամտային հարկ մտցնել, հասարակական աշխատանքներ կազմակերպել գործազուրկների համար, իրականացնել սոցիալական ապահովությունը, Փարիզի բնակչության համար քաղաքային ինքնավարության հաշվին կազմակերպել եժանագին հացի մատակարարում, հարուստներից խլել ձեռնարկությունները և հանձնել պետության ձեռքը, ունևոր գյուղացիներից պարեն, հաց բռնագրավել, պայքար մղել բարքերի ապականության դեմ, վերակառուցել ժողովրդական լուսավորության գործը՝ հաշվի առնելով չքավոր բնակչության կրթական պահանջները։ Իբրև անխնա տերրորիստներ և հետևողական աթեիստներ, իբրև տնտեսության՝ մանր սեփականության բազայի վրա կազմակերպելու կողմնակիցներ՝ հեբերտիստներն արտահայտում էին մանր, նյութապես անապահով ինտելիգենցիայի

նարոդնիկական տրամադրությունները։ Ձախ հեբերտիստները (Կլոոցի գլուխով) ներկայացնում էին մանր արհեստավորներին, խանութպաններին, բանվորների վորոշ շերտեր և մասամբ տրամադրված էին անարխիստորեն։ Նրանք համոզված էին, վոր ֆրանսիացիները ընտրյալ ազգ են։ Նրանք էին, վոր կատարեցին մեծագույն հեղափոխությունը։ Նրանք ապագայում կոչնչացնեն տարբեր ազգությունների, պետությունների միջև յեղած սահմանները և ժողովուրդների միավորումով կստեղծեն միասնական մարդկություն, միասնական համաշխարհային ընտանիք։ Այսպես՝ հեղափոխական ճանապարհով ի մի կձուլվեն բոլոր ժողովուրդները և կկազմեն միասնական մարդկություն։ Այդ միավորման գործում ահագին դեր կխաղան կապիտալն ու մասնավոր սեփականության սիստեմը։ Ամբողջ չարիքը նրանից է առաջ գալիս, վոր պետություններն ու ազգություններն անջատված են իրարից ու թշնամաբար տրամադրված իրար հանդեպ։ Պետության վերացումով կբացվի խաղաղության և յերջանկության դարաշրջանը։ Վորոշ սոցիալական ծրագիր հեբերտիստները չունեյին։ Նրանք պահանջում էին հացով ապահովել Փարիզի չքավորությունը և այդ նպատակով առաջարկում էին կազմակերպել սանկյուլոտներից մի «հեղափոխական բանակ»։

ՅԱԿՈԲԻՆՆԵՐԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ահա յակոբինականության ներսում յեղած այն ամենագլխավոր հոսանքները, վորոնք հիմք տվին պառակտման։ Ակներև էր դառնում այն, վոր կուսակցությունն այլևս ի վիճակի չէ առաջիկայում ղեկավարելու հեղափոխական իրադարձությունները։ Իբրև մանր սեփականության կողմնակիցներ՝ յակոբինները, վորոնք ներկայացնում էին միջին և մանր բուրժուազիայի տարբեր դրույթները, դեմ էին տնտեսական լայն բարենորոգումների։ Յակոբինները հետ էին մնում հեղափոխական մասսաների պահանջներից։

Հեղափոխությունն անցավ մի քանի էտապներ։ Նրա առաջին տարիներում, հին կարգերի կործանումից հետո, իշխանության գլուխ բարձրացած խոշոր բուրժուազիան ձեռք էր առնում բոլոր միջոցները՝ իր գերիշխանությունն ապահովելու համար։ Իր համար նեցուկ վորոնելով գյուղացիական մասսաների շրջանում՝ նա փորձեց ագրարային հարցը լուծել գյուղացիության կուլակային շերտերի պահանջների վոգով։ Սոցիալական դաշնակիցներ նա փնտրում էր միապետականների շրջաններում, վորոնք համառորեն ձգտում էին վերականգնել հին ռեժիմը։ Սակայն, այդ քաղաքականությունը՝ հիմնական խնդիր ունենալով վերջ տալ հեղափոխությանը և ճնշել գյուղացիության ու քաղաքի չքավոր մասսաների հզոր շարժումները՝ ապիկար դուրս յեկավ. խոշոր բուրժուազիան անկարող դուրս յեկավ լուծելու ագրարային հարցն ու վստահելի դաշնակից լինելու ռոյալիստների համար։ Նա ստիպված յեղավ իշ-

խանությունը զիջել մանր-բուրժուազիային, վոր արմատականորեն և անողոքաբար մաքրեց հաշիվները ֆեոդալական մնացորդների, հին կենցաղի, միապետության և յեկեղեցու հետ։ Մանր բուրժուազիան կարողացավ լուծել ագրարային հարցը և բռնագրավված հողերը հանձնել գյուղացիական մասսաների ձեռքը։ Նա ի վիճակի գտնվեց կազմակերպելու հանրապետության հաջող պաշտպանությունը և հարձակողական պատերազմը վերածել հեղափոխական պատերազմի, ժողովուրդների կռիվ՝ ընդդեմ ֆեոդալական միապետների։ Իր միջոցառումների նկատմամբ նա հենվում եր հեղափոխական մասսաների վրա։ Բուրժուական հեղափոխության զարգացման վորոշ ետապում կատարելով նրա հիմնական խնդիրները՝ մանր-բուրժուազիան անկարող յեղավ այլեւս պահել իր ձեռքում իշխանությունը և անխուսափելիորեն պետք է ընկներ։

Ֆրանսիական հեղափոխությունը բուրժուական հեղափոխություն է. նա իրականացրեց բուրժուազիայի ծրագիրը։ Շարժման գլուխ կանգնած դասակարգը բուրժուազիան եր։ «Պրոլետարիատն ու հասարակության այն հատվածները, վորոնք չեյին պատկանում բուրժուազիային, կամ դեռեւս այնպիսի շահեր չունեյին, վոր զուգադիպվեյին բուրժուազիայի շահերին, կամ դեռեւս չեյին կազմել վոչ մի ինքնուրույնորեն զարգացած դասակարգեր կամ դասակարգերի մասեր։ Ահա թե ինչու այն դեպքում, յերբ նրանք բուրժուազիայի դեմ եյին դուրս գալիս, ինչպես և եր Ֆրանսիայում, 1793 թվից մինչև 1794 թիվը նրանք կռվում եյին լոկ բուրժուազիայի շահերն անցկացնելու համար, թեպետ և վոչ բուրժուական յեղանակով» (Մարքս)։

Յակոբինների քաղաքական մեկուսացումն անխուսափելի յեր դառնում։ Բնակչության զանազան շերտերը բացահայտ կերպով հայտնում եյին իրենց դժգոհությունը։ Խոշոր բուրժուազիան, վոր այնքան վճռական եր ֆեոդալական ռեժիմի դեմ կռվելիս, վորը ժողովրդի ապստամբության ոգնությամբ վերացրեց աբսոլյուտիզմը և այդ ժամանակաշրջանում գլխավորում եր հեղափոխությունը,—այժմ ել եր հետամուտ այնպիսի պայմանների, վորոնք բարենպաստ լինեյին կապիտալիստական տնտեսության և խոշոր արդյունաբերության զարգացման համար։ Աճել եր և նոր բուրժուազիան, ուռճանալով՝ սպեկուլյացիաների, բանակի մատակարարման, կապալների և այլ գործառնությունների շնորհիվ։ Նա, իհարկե, ամեն կերպ ձգտում եր վերջ տալ տերրորի սիստեմին, վորով ավարտվեց հին կարգերի արմատական խորտակման գործը և վորն այժմ ուղղված եր «չափավոր» քաղաքացիների դեմ։ Նա ցանկանում եր վոչնչացնել մաքսիմումի որենքը, բոլոր այն վորոշումներն ու միջոցառումները, վոր խախտում եյին նրա առևտրական շահերը և ի չիք եյին դարձնում ազատ մրցման սկզբունքները։ Նրա միջից դուրս եյին յեկել այն նոր հողատերերը, վորոնք գործադրում եյին հողի շահագործման կապիտալիստական յեղանակներ։

Գյուղացիությունը, մանավանդ նրա ունևոր և միջակ շերտերը, բավարարություն եր ստացել հեղափոխությունից։ Յակոբինների ագրարային որենքը, վոր առանց վորևե փրկանքի վճարի վոչնչացրեց ֆեոդալական պարհակներն ու ազնվական-կալվածատերերին, վոր ճշտիվ բաշխեց համայնական հողերը—հեղափոխության կողմը գրավեց գյուղացիական մասսաների համակրանքը։ Ֆրանսիայի գյուղացիները վաղուց եր, վոր հեղափոխության վստահելի նեցուկն եյին։ Հեղափոխական բանակի տարած հաղթանակը մեծ չափով պետք է բացատրել գյուղացիական մասսաների հեղափոխական տրամադրությամբ,—մասսաների, վորոնք առանց տրտունջ հայտնելու կատարում եյին զինվորական պարտականությունները, վորոնք սիրով եյին իրենց յերիտասարդությունը տրամադրում հեղափոխական հասարակակարգի պաշտպանության գործին։ Յակոբինների դիկտատուրայի որով գյուղացիները հնարավորություն ստացան գնելու այն հողերը, վոր կառավարությունը բռնագրավել եր ազնվական-եմիգրանտներից։ Իր նպատակին հասած գյուղացիությունը պահպանողական ուժ դարձավ. նա դժգոհություն եր հայտնում, հետագայում ավելի մեծ չափերով կատարվող զորահավաքների, հացի չընդհատվող բռնագրավումների և հացի պարտադիր ցածր գների առթիվ։ Թուլանում եր քաղաքի կապը գյուղի հետ. գյուղացիության չքավոր շերտ, բավարարություն չստանալով հեղափոխությունից, հետ քաշվեց քաղաքի հետ դաշնակցելուց։ Գյուղերում ուժեղանում եր դժգոհությունը յակոբինական կառավարության հանդեպ։

Քաղաքի բնակչությունը (մանր բուրժուազիան, բանվոր դասակարգը), վոր ուժեղ աջակցություն ցույց տվեց կառավարությանը, ամենից ավելի աղետներ և զրկանքներ եր կրում և, սակայն, իզուր սպասում արմատական սոցիալական բարենորոգումների։ Բանվոր դասակարգը, վորի դրությունը գնալով ավելի ու ավելի յեր վատթարանում, չափազանց թույլ եր և անկազմակերպ՝ ինքնուրույն կերպով ասպարեզ յելնելու համար։ Այսպես աճում եր ռեակցիան։

1794 թ. գարնան մոտերքում յակոբինները մեկուսացած վիճակում եյին, զուրկ վորևե աջակցությունից։ Մանր բուրժուազիայի դիկտատուրան ընկավ այն պատճառով, վոր հեղափոխական յեղանակով արմատախիլ անելով ֆեոդալական մնացորդները և կանխապատրաստելով բոլոր անհրաժեշտ պայմանները կապիտալիստական արդյունաբերության հետագա զարգացման համար՝ փորձ արավ այդ հանգամանքներում կառուցել անտիկ վոգով իդեալականացած մի պետություն,—աննկուն, պահանջներով՝ չափավոր, հասարակ, խնայասեր մանր սեփականատերերի պետություն։

«Ռոբեսպյերը, Սան-Ժյուստը և նրանց կուսակցությունը կործանվեցին այն պատճառով—ասում է Մարքսը—վոր նրանք անտիկ իրա-

պաշտական-դեմոկրատական հասարակակարգը, վոր հիմնված էր իսկական ստրկության վրա, խառնեցին նորագույն հոգեպաշտական-դեմոկրատական ներկայացուցչական պետության հետ, վոր հիմնված է ազատագրված ստրկության վրա, բուրժուական հասարակության վրա: Վորպիսի՛ խոշոր սխալ—հարկադրված լինել ճանաչելու և «մարդու իրավունքներով» նվիրագործելու ժամանակակից բուրժուական հասարակությունը՝ արդյունաբերության, ընդհանուր մրցման, իրենց նպատակներն ազատորեն հետապնդող մասնավոր շահերի, անիշխանության, ինքն իրենից օտարացած բնական և հոգևոր անհատականության հասարակությունը,—հարկադրված լինել ճանաչելու և նվիրագործելու այդ ամենը և միևնույն ժամանակ վոչնչացնել ի դեմս առանձին անհատների այդ իսկ հասարակության կենսական արտահայտություններն ու միաժամանակ էլ ցանկանալ անտիկ որինակով կառուցել այդ հասարակության քաղաքական վերնահարկը»:

Ռոբեսպյերը, վոր յակոբինների ամենաուժեղ մասն էր գլխավորում և կառավարական գրուպան ղեկավարում, աջ դանտոնիստների հետ դաշնակցելով՝ կռիվ հայտարարեց հեբերտիստներին: Հեբերտիստները փորձեցին ժողովրդական մասսաների ապստամբություն բարձրացնել, բայց այդ փորձն անհաջողությամբ վերջացավ: Հոգնած, հեղափոխությունից չբավարարված, քաղաքական ապատիայի դրության մեջ ընկած, մի կտոր հացի համար առորյա պայքար մղելու հոգսերով ծանրաբեռնված և, վերջապես՝ սոցիալական հեղափոխության հաջողության նկատմամբ իրենց հավատը կորցրած՝ մասսաներն անտարբեր մնացին յակոբինների ներքուստակցական պայքարի հանդեպ: 1794 թ. մարտի 27-ին Հեբերն ու նրա կողմնակիցները մեռան գիլյոտինի դանակի տակ:

Ապրիլի 5-ին նույն վախճանն ունեցան և դանտոնիստները, վորոնց յելույթները վերջին ժամանակներում կրում էին առանձնապես չեշտված ռեակցիոն բնույթ: Դանտոնիստների դեմ կռվելիս՝ Ռոբեսպյերը հենվում էր Փարիզի Կոմունայի վրա, վորն այդ ժամանակ յենթարկվում էր ամենակատաղի հարձակումների՝ Դանտոնի և նրա զինակիցների կողմից:

Վոչնչացնելով գիլյոտինի միջոցով կուսակցության արմատական թևը՝ Ռոբեսպյերը դանտոնիստների մահից հետո զրկվեց և՛ նոր բուրժուազիայի կողմից աջակցություն ստանալու հնարավորությունից—այն չափավոր բուրժուազիայի, վորը կարոտ էր խաղաղության և փափագում էր ազատություն՝ կապիտալիստական կուտակման համար, ու յերաշխիք՝ հեղափոխության շարունակվելու՝ դեմ: Այդպիսով՝ Ռոբեսպյերը քաղաքականապես մեկուսացրեց ինքն իրեն: Նման պարագաներում ակնհայտ էր դառնում, վոր Ռոբեսպյերը կործանվելու յե:

Զգալով սպառնացող վտանգը՝ յակոբինները 1794 թ. ապրիլի 15-ին (ժերմինալի 26-ին) փորձեցին հենակետ գտնել «Ճահճի»-ի, ունեոր

ընակչության շրջանում: Ականավոր Ռոբեսպյերիստ Սեն—Ժյուստը հասարակական փրկության կոմիտեների անունից առաջարկեց յերկրի խաղաղացման համար կրճատել բռնադրավումները, դադարեցնել տերրորը սպեկուլյանտների վերաբերմամբ, պահպանել քաղաքական տերրորը, մեղմացնել այն բոլոր միջոցառումները, վորոնք դիպչում էին ունեոր դասակարգերի, ազգային գույքեր ձեռք բերողների շահերին:

ՏԵՐՄԻԴՈՐԻԱՆԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆ

Սակայն, այդ առաջարկն ապարդյուն անցավ: Խոշոր բուրժուազիան նախապատրաստվում էր իշխանություն գրավելու: «Ճահիճը» համարձակ էր դարձել և այժմ ցույց տվեց իր իսկական դեմքը: Բանվորությունը չեզոքություն էր պահում:

«Մենք սովից մեռնում ենք, մինչ դուք ուզում եք մեզ կշտացնել մահապատիժներով»— ասում էին բանվորները, յերբ նրանց հրավիրում էին ապստամբելու:

Փարիզյան Կոմունան Շոմետի հեբերտիստների անկումից հետո զրկվեց ղեկավարությունից: Յակոբինական բլոկի ձախ տարրերը յենթարկվեցին «զտման»: Իրերի լարված դրությունն արագ մոտենում էր իր վախճանին: Հասարակական փրկության Կոմիտեյի անդամների միջև էլ տեղի ունեցավ պառակտում. այստեղ ձախերը, վորոնք կողմնակից էին տերրորի ուժեղացման, միացյան աջակողմյանների հետ՝ ընդդեմ Ռոբեսպյերի:

1794 թ. տերմիդորի 8-ին (հուլիսի 26-ին) Ռոբեսպյերն առաջարկեց կոնվենտին սահմանել կոնվենտի դիկտատուրա, վոչնչացնել հեղափոխության թշնամիներին, զտում կատարել կոնվենտի կոմիտեների միջև, Հասարակական անվտանգության Կոմիտեն յենթարկել Հասարակական փրկության Կոմիտեյին, հաստատել Կոնվենտի միասնական կառավարություն:

Յակոբինական ակումբն ու կոմունան Ռոբեսպյերի կողմն էին: Բայց նրանց թույլ լինելը, ուժերի շերտավորումը Հասարակական փրկության Կոմիտեյի ներսում, Հակառակորդների միացումը, Փարիզի բանվորների անտարբեր վերաբերմունքը կրախ առաջացրին: Տերմիդորի 9-ին Կոնվենտը, աջակողմյան թշնամիների ճնշման տակ, «ճահճ»-ի ոգնությամբ վորոշում կայացրեց՝ Ռոբեսպյերին իր ընկերներով հանդերձ Հեղափոխական տրիբունալի դատին տալ:

Մասսաներն իրոք վոր չպաշտպանեցին Ռոբեսպյերին: Փարիզի Կոմունայի կոչը, վոր հրավիրում էր ապստամբություն բարձրացնելու, արձագանք չգտավ սեկցիաներում: Տերմիդորի 10-ին Ռոբեսպյերը, Սան-Ժյուստը և այլ ռոբեսպյերիստներ գլխատվեցին: Սկսվում էր ռեակցիայի և սպիտակ տերրորի ժամանակաշրջանը: Շարժումը գլխավորում էր կոնվենտի «ճահիճը»: Ռեակցիան վերջ տվեց Փարիզի Կոմմունային՝ փոխարինելով նրան 12 ինքնուրույն մունիցիպալիտետներով, մայրաքաղաքի առանձին մասերով: Վողջ մնացած պատգամավոր-ժի-

րոնդիստները Կոնվենտ վերադարձան: Ցակոբինական ակումբը տակն ու վրա արին: Մաքսիմումը վերացրին: Հեղափոխության պատմության մեջ դասակարգային պայքարի զարգացման «վերընթաց» գծին հերթափոխելու յեկավ բուրժուական հեղափոխության զարգացման «վայրընթաց» գիծը:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ III ՏԱՐՎԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ. ԴԻՐԵԿՏՈՐԻԱՆ

Փարիզի արվարձանների քաղցած բանվորները 1795 թ. գարնանը տարերային ապստամբություններ բարձրացրին՝ պահանջելով «հաց և 1793 թ. սահմանադրությունը»: Այդ ապստամբությունները ճնշվեցին զինված ուժի միջոցով: Ցակոբինների մնացորդները յենթարկվում եյին հալածանքների և հարձակումների: Նրանց «հախից գալիս» եյին՝ մի անխնա կոտորած կազմակերպելով: Ֆրանսիայի բոլոր քաղաքներում սոսկալի չափերով գործադրվում եր սպիտակ տեռրորը: Նա ավելի շատ զոհեր տարավ, քան կարմիր տեռրորը: Ամենուրեք անկարգություններ եյին սարքում ռոյալիստների և վերադարձած եմիգրանտների ջոկատները: Ռոյալիստները մի քանի անգամ փորձեցին հեղաշրջում կատարել: Կոնվենտն ավարտեց իր աշխատանքները՝ մշակելով մի նոր սահմանադրություն, վոր կոչվեց «Հանրապետության III տարվա Սահմանադրությունը»: Ընդհանուր ընտրական իրավունքը վերացվեց, ընտրողների շրջանը սահմանափակվեց գույքային ցենզով (պատգամավորների յեկամուտը պետք է հավասար լիներ 150—200 բանվորական օրվա արժեքի): Օրենսդրական իշխանությունը պատկանում եր յերկու պալատներին՝ Ավագների Խորհրդին և Հինգ հարյուրի խորհրդին: Դրությունը կայուն պահպանելու նպատակով՝ պատգամավորների 2/3-ի տեղ անցկացրին Կոնվենտի անդամներին և միայն 1/3 նոր ընտրվեց: Գործադիր իշխանությունը հանձնվեց Դիրեկտորիային՝ հինգ հոգուց կազմված: Դիրեկտորիան եր նշանակում մինիստրներին և բանակների գլխավոր հրամանատարներին, վարում արտաքին հարաբերությունները, ներկայացնում գերագույն իշխանությունը: III տարվա Սահմանադրությունն ապահովում եր խոշոր բուրժուազիայի քաղաքական տիրապետությունը: Քաղաքի չքավոր մասսաները զրկվեցին քաղաքական իրավունքներից: Մաքսիմումի վերացման և թանկության սաստկացման շնորհիվ բանվորների և չքավոր խավերի դրությունը գնալով անտանելի յեր դառնում: Աշխատավարձը համարյա չորս անգամ յետ եր մնում թանկացման տեմպից, արագորեն ընկնում եր ասսիգնատների կուրսը: Սովը սաստկանում եր: Ժողովրդական մասսաները սովամահ եյին լինում:

«Դիրեկտորիայի կառավարության օրոք միայն բուռն թափով դուրս պրծավ և յեռալ սկսեց բուրժուական հասարակության իսկական կյանքը: Առևտրական ձեռնարկությունների յեռուզեռը, հարստանալու տենչը, նոր բուրժուական կյանքով տարվելը—այն կյանքով, վորի վայելքները սկզբներում ընդունում են հանդուգն, թեթևսոլիկ, ընդունայն և շշմեցուցիչ կերպարանք—իրապես քաղաքակրթական ոգտագործումը ֆրանսիական հողերի, վորոնց ֆեոդալական ցրվածությանը վերջ տվեց հեղափոխության մուրճը և, վորոնք այժմ հանրակողմանի մշակման յենթարկեց բազմաթիվ նոր սեփականատերերի տենդային խանդը, ազատագրված արդյունաբերության առաջին շարժումները—այս ամենը նորածին բուրժուական հասարակության կյանքի տարբեր սիմպտոմներն եյին: Բուրժուական հասարակությունը բուրժուազիայի մեջ է գտնում իր գլխավոր ներկայացուցչին: Բուրժուազիան այսպիսով իր գերիշխանության ուղին է բռնում» (Մարքս):

ԳՐԱԿԽ ԲԱԲՅՈՖԸ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՔԱՐՈԶԸ

Դիրեկտորիայի թունդ ժամանակն եր, յերբ կոչեր արձակվեցին՝ հեղափոխական պայքարը վերսկսելու և նոր հեղափոխություն կատարելու մասին: Շարժումն ուղղված եր հարուստների դեմ, III տարվա Սահմանադրության դեմ, նոր բռնակալների դեմ: Այդ շարժման ղեկավարն եր Ֆրանսուա Նոել Գրակխ Բաբյոֆը (1760—1797): «Գրակխ» անունը Բաբյոֆը յուրացրել եր ի հիշատակ հայտնի հին-հռոմեյական տրիբունների[1]): Ինքը Բաբյոֆն այսպես եր բացատրում այդ անվանափոխությունը. «Յես ինձ համար իբրև հովանավորներ եմ ընտրել հռոմեյական հանրապետության ամենաազնիվ, ըստ իս, քաղաքացիներին, վորոնք ամենից ավելի շատ ցանկություն ունեյին հաստատելու ընդհանուր բարորություն. դրանով յես բարոյական նպատակ եմ ունեցել զգալ տալու, վոր յես նույնքան ուժեղ չափով, ինչպես և նրանք, ձգտում եմ գլուխ բերելու ընդհանուր բարորությունը... Միապետության, արիստոկրատիայի և ֆանատիկոսության բոլոր հետքերը յերկրի յերեսից ջնջելու համար՝ մենք հանրապետական անուններ ենք տվել մեր վայրերին, մեր քաղաքներին, մեր փողոցներին»:

Բաբյոֆի անվան հետ կապակցելով՝ հիշում են Ֆրանսիայի առաջին «իսկապես ակտիվ կոմունիստական կուսակցությունը» (Մարքս) և հեղափոխական շարժումն այն հասարակական շերտի, «վորը ժամանակակից պրոլետարիատի քիչ թե շատ զարգացած նախորդն եր հանդիսանում» (Էնգելս):

Բաբյոֆն, ըստ պրոֆեսիայի, հողաչափ եր. իբրև այդպիսին շրջելով գյուղերը՝ նա յեկավ այն համոզմունքին, վոր սոցիալական անարդարությունների աղբյուրը հողային հարաբերությունների անհավասարությունն է: Բաբյոֆը մասնակցել եր Բաստիլի առման ղեպքին, մոտ

[1]) Տրիբունները հին Հռոմի այն պաշտոնյաներն եյին, վորոնք պաշտպանում եյին պլեբեյական դասի շահերը: Գրակխոս յեղբայրները (Տիբերիոս և Կայոս) տրիբուններ յեղած ժամանակ, II դարում մեր տարեթվից առաջ, պայքարում եյին հոգուտ հողային ռեֆորմների.

եր կանգնած յակոբիններին, իսկ 1992—1993 թ. թ. նա դարձավ «ագրարային օրենքի», հողերի հավասար բաշխման կողմնակից: Նա հրատարակում էր «Ժողովրդական Տրիբուն» թերթը: Տերմիդորիանականների դեմ ուղղված իր խիստ հոդվածների և սուր հարձակումների համար նա ձերբակալվում է (1795 թ.): Ազատվելով (1795 թ. վերջին)՝ նա շարունակում է լրագրային աշխատանքը: Բուոնարոտտի, Դարտե և այլ ընկերների հետ միասին նա կազմակերպեց «Հավասարների ընկերությունը» և մշակեց ապստամբության ծրագիրը («Հավասարների դավադրությունը»): Դավաճան Գրիզելի պրովոկացիայի հետևանքով՝ 1796 թվի մայիսին Բաբյոֆն ու իր ընկերները ձերբակալվեցին և գլխատվեցին (1797 թ. մայիսի 27-ին): Սկզբում Բաբյոֆը կարծում էր, թե Ռոբեսպյերի տապալմամբ նոր հեղափոխություն է սկսվում: Սակայն, տերմիդորիանական ռեակցիան, սպիտակ տեռորը Բաբյոֆին բերին հակառակ համոզմունքի: «Պետք է արիություն ունենալ խոստովանելու,—գրում էր Բաբյոֆը—վոր վերջիվերջո մենք թույլ ենք տվել, վոր հակահեղափոխությունը հաղթանակի»: Այդ խոստովանությունից շրջադարձ է սկսվում բաբուվիզմի (Բաբյոֆի ուսմունքի) պատմության մեջ, ինչպես և մերձեցում՝ բաբուվիստների ու յակոբինների միջև: Բաբյոֆը քարոզում էր քաղաքական ազատության նվաճում, իշխանության գրավում և ապա աշխատավորության տնտեսական ազատագրում: Բաբուվիստները չարիք էին համարում մասնավոր սեփականությունը, իսկ հարուստներին, վորոնք չէին ցանկանում հրաժարվել իրենց հարստություններից՝ ժողովրդի թշնամիներ: Հեղափոխության նպատակն է՝ վոչնչացնել անհավասարությունը և հաստատել ընդհանուր յերջանկություն: «Մենք ձգտում ենք...կոլեկտիվ սեփականության: Կորչի՛ հողի մասնավոր սեփականությունը. հողը վոչ վոքի չի պատկանում»: Բաբյոֆը հակադրում էր հարուստների և աղքատների շահերը. այդ յերկու խմբերի միջև ծագած ընդհարումները ստանում են անընդհատ պայքարի ձևեր: «Այդ կռիվը պլեբեյների և պատրիկների միջև, աղքատների և հարուստների միջև սկիզբ է առնում վոչ միայն այն մոմենտից, յերբ նա հայտարարված է բացահայտ կերպով. նա տեղի յէ ունենում միշտ, նա սկսվում է այն հաստատությունների յերևան գալու հետ միատեղ, վորոնք ձգտում են բովանդակ հաստատությունները հանձնել վոմանց և ամեն ինչ խլել մյուսներից»: Բաբյոֆը դարձավ չքավորների տրիբունը: Նրա թերթը՝ «Ժողովրդական տրիբունը» հիրավի պաշտպանում էր ժողովրդի իրավունքները: Նա աչալրջությամբ հետևում էր տերմիդորիանական ռեակցիայի զարգացմանը, պարզաբանում էր ժիրոնդիստական պատգամավորների կոնվենտ վերադառնալու նշանակությունը, ցուցահանում էր մաքսիմումի վերացման իմաստը, անխնա խարազանում էր տերմիդորի «կարգերը»: «Ասում են՝ ամեն ինչ գնում է դեպի լավագույնը—գրում էր Բաբյոֆը—Այո, այդպես է արիստոկրատների և ազատության թշնամիների համար: Սոսկալի թանգությունից վշտանում և ավամահ է լինում խեղճ բանվորը, վորն ա-

ռական միայն չոր լեղի կամ հարյուր սու յէ աշխատում: Իսկ ծանր սեզոնի դեպքում, հասարակական արհեստանոցների աշխատանքները դադարեցնելու սպառնալիքը ստիպում է յերկյուղ կրել առավել սարսափելի ապագայից: Մաքսիմումի վերացումը—այն մաքսիմումի, վորը հայտարարեցին հակահեղափոխական ձեռնարկում և վորն իրոք այդպես էր անկուշտ և ագահ չարչիների տեսակետից—պետք է վերջնակա-

Ֆրանսուա Նոել Գրակխ Բաբյոֆ

նապես ավամահ անի սանկյուլոտների դասակարգը, վորն առանց այն էլ յենթարկվում է ամեն տեսակի վիրավորանքների և անպատվությունների՝ ճիշտ այնպես, ինչպես այդ յեղել է անցյալում:

Բաբյոֆը նոր ապստամբություն էր քարոզում: Նա գտնում էր, վոր 24 միլլիոն ֆրանսիական բնակչությունը պատրաստ է ապստամբելու:

«Պարտավո՞ր է արդյոք ժողովուրդը ապստամբություն բարձրացնել—հարց էր տալիս Բաբյոֆը և պատասխանում.— Ամեն կասկածից վեր է, վոր նա պարտավոր է այդ անել, յեթե չի ուզում կորցնել իր ազատությունը»:

Բուրժուազիան հետապնդում էր Բաբյոֆին: Նա մի քանի անգամ ընկել էր թշնամիների ձեռքը, նստել էր այս ու այն բանտում: Նրա ձերբակալման լուրը (1795 թ. փետրվարի 7-ին) ուրախություն պատճառեց բուրժուազիային: «Այժմ նա (այսինքն՝ Բաբյոֆը) անզոր է ապստամբության կոչ անելու, ինչպես վոր այդ անում էր նա ամբողջ վերջին ամիսը»—ցնծում էր կոնվենտում վոստիկանության ներկայացուցիչը Բաբյոֆի ձերբակալության առթիվ: «Վոսկե» յերիտասարդությունն այրում էր «Ժողովրդական տրիբունի» համարները թատ-

ռնում՝ հրձվանք առաջացնելով բուրժուական հանդիսականներով լեփ–լեցուն դահլիճում:

Տերմիդորի ժամանակաշրջանում ծագած ուտոպիստական ապստամբությունն առաջ բերեց Կոնվենտի «ձախացում»: Եվ 1795 թ. հոկտեմբերի 18–ին Բաբյոֆն ազատվեց բանտից: Բաբյոֆի շուրջը համախմբվեցին նրա ընկերներն ու համախոհները (Դարտե, Ժերմեն, Բուոնարոտի և ուրիշները): Կազմակերպվեց «Պանթեոն ընկերությունը», ուր մտնում եյին բաբուվիստների հետ միասին նաև յակոբիններ: Ընկերության ծրագրում կային կառավարության, դիրեկտորիայի և III տարվա սահմանադրության տապալումը նախապատրաստելու և ժամանակավոր հեղափոխական կառավարություն հաստատելու խնդիրները: Բաբուվիստներն առաջադրեցին 1793 թ. սահմանադրությանը վերադառնալու լոզունգն այն նպատակով, վորպեսզի իրենց կողմը գրավեն մանր բուրժուազիային: «Ժողովրդական տրիբունը» նորից սկսեց լույս տեսնել:

Բաբյոֆը ձգտում էր բուրժուական սեփականությունը վոչնչացնելու և կոմունիստական հասարակակարգ հիմնելու ճնշված մասսաների հեղափոխության միջոցով—այն մասսաների, վորոնք ուժեղ և համերաշխ են իրենց ատելությամբ՝ դեպի «իրենց բոլոր դժբախտությունների հիմնական պատճառը—դեպի սեփականությունը»:

Բաբյոֆի ծրագիրը հիմնականում հանգում էր հետևյալ դրույթներին. 1) աշխատանքն ու սպառումը պետք է լինեն ընդհանուր՝ բոլորի համար. 2) վոչ վոք չի կարող յուրացնել հողային և արդյունաբերական սեփականությունը բացառապես իրեն համար, առանց դրանով իսկ հանցանք գործելու, 3) իսկական հասարակության մեջ չպետք է լինեն վո՛չ հարուստներ և վո՛չ էլ աղքատներ. 4) հեղափոխության նպատակն է՝ վոչնչացնել անհավասարությունն ու վերահաստատել ընդհանուր յերջանկությունը:

1796 թ. դիրեկտորիայի կառավարությունը կարգադրեց փակել «Պանթեոն ընկերությունը» (այդ վորոշումն ի կատար ածեց Բոնապարտը). այդ հանգամանքը ստիպեց բաբուվիստներին անցնել ընդհատակյա աշխատանքին, անլեգալ դրության: 1796 թ. մարտին ստեղծվեց ապստամբության կենտրոնը, կազմակերպվեց «Հասարակական փրկության դիրեկտորիա»՝ իր լիազորներով հանդերձ, Փարիզի 12 ռայոններում (ռայոնները նշեց «գաղտնի դիրեկտորիան»): «Հավասարների» բովանդակ կազմակերպությունը դավադրական բնույթ էր կրում: Լիազորներն ուժեղ ագիտացիա ծավալեցին մասսաների մեջ: Ապստամբության հետևանքով պետք է ստեղծվեր մի քանի հոգուց բաղկացած կառավարություն, վորը պարտավոր էր իրականացնել հեղափոխական դիկտատուրա: Նա պետք է հրավիրեր Ազգային Ժողով՝ կազմված մեկական պատգամավորից յուրաքանչյուր դեպարտամենտից. այդ ժողովը պետք է աշխատեր կառավարության վերահսկողության ներքո: Ապստամբածները պետք է գրավեյին գանձարանը, փոստը, մինիստրությունները,

պարենավորման մագազինները և ինտենդանտի վարչատունը: Իշխանության գրավումն ավարտելու համար պետք է կազմակերպվի պարենի մատակարարման գործը, բռնագրավվեն հակահեղափոխականների, էմիգրանտների գույքերը, «վոչնչացվեն հսկայական կարողությունները», պետք է չքավորներին տեղափոխեյին խռովարարների տները, նրանց հայթհայթեյին կահ–կարասիք, հագուստ և այլն:

Ապստամբության ծրագիրը, վոր առաջարկեց «Գաղտնի Դիրեկտորիան», ընդունվեց նրա և յակոբինների կոմիտեյի միացյալ նիստում (մայիսի 8–ին), վորին մասնակցում եյին Բաբյոֆը, Բուոնարոտի, Դարտե, Գրիզել և ուրիշները: Այդ և հաջորդ ժողովներում հաստատվեցին և կոնկրետացվեցին ապստամբության մանրամասնությունները. այն է՝ վորոշվեց բարրիկադով պատել Սենտ–Անտուանի արվարձանը, գրավել Մոնմարտրի բարձունքը, կազմակերպել զինվորական ջոկատներ և սանկյուլոտների գվարդիա, ապստամբության (Ինսուրրեկցիոն) կոմիտե, ձերբակալել օրենսդրական կորպուսը և գործադիր Դիրեկտորիան, զինել բանվորներին, սպանել Դիրեկտորիայի բոլոր անդամներին:

«Հավասարների դավադրությունը» պաշտպանություն չգտավ մասսաների կողմից. բանվոր դասակարգը փոքրաթիվ էր, դեռևս չափազանց թույլ, վորպեսզի նա կարողանար վորոշիչ ազդակ հանդիսանալ հանուն կոմունիստական կարգերի սկսած պայքարում: Գյուղացիությունը մի կողմ քաշված մնաց և չխառնվեց բաբուվիստական շարժման մեջ: Բանակն էլ վեր էր ածվում ինքնուրույն կազմակերպության՝ ուժեղ իր հաղթական արշավանքներով:

«Հավասարների դավադրության» խորտակման հետ գրեթե միաժամանակ Փարիզում հայտնի դարձան Բոնապարտի փայլուն հաղթանակներն Իտալիայում: Այդ հաղթանակներն ամրապնդեցին Դիրեկտորիայի կառավարության հեղինակությունը: Երբ հարց տվին Բաբյոֆին դավադրության մասին, նա հայտարարեց. «Խորը համոզված լինելով, վոր այժմյան կառավարությունը կեղեքող, ճնշող կառավարություն է, յես ամեն ինչ կանեյի, ինչ վոր կարողանայի, նրան տապալելու համար: Ես միացյալ հանրապետության մեջ յեղած բոլոր դեմոկրատների հետ, սակայն պարտքս թույլ չի տալիս նրանցից և վոչ մեկի անունը տալու»:

Բաբուվիզմն առաջին փորձն է հանդիսանում՝ գործնականում իրականացնելու կոմունիստական գաղափարները: Նա XIX դ. հեղափոխական–կոմունիստական շարժման սկիզբը դրեց: Իզուր չէր, վոր բաբուվիզմը ֆրանսիական հեղափոխությունը նախադուռն էր համարում գալիք մեծ հեղափոխության համար: «Ֆրանսիական հեղափոխությունը սոսկ նախակարապետն է մի այլ, ավելի մեծ և ավելի վսեմ հեղափոխության, վոր և կլինի արդեն վերջինը»—գրում եյին բաբուվիստներն իրենց «Հավասարների մանիֆեստում»:

3. ՌԱԶՄԱ–ԲՈՒԺՈՒԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻՑ ԴԵՊԻ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄՂԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Դիրեկտորիայի ժամանակաշրջանում Ֆրանսիան հաջողությամբ շարունակում էր պատերազմները: Ֆրանսիական զորքերը նվաճեցին Բելգիան, Հոլանդիան, գրավեցին Ջենովայի ծովափն ու Գերմանիայի ձախ–Հռենոսյան յերկրամասերը, վերցրին Սավոյան ու Նիցցան: 1795 թ. սկզբում Պրուսիան՝ զբաղված լինելով Լեհաստանի բաժանման խնդրով՝ դուրս յեկավ կոալիցիայից և ճանաչեց Ֆրանսիական հանրապե-

Արևմտյան Յեվրոպայի հանրապետությունները XVIII դ. 90-ական թվակ. վերջին

տությունը: Ամենաուժեղ ցամաքային պետությունը, վոր շարունակում էր պատերազմել Ֆրանսիայի դեմ, մնաց Ավստրիան: Ֆրանսիական զորքերը, Բոնապարտի հրամանատարությամբ՝ հաղթությամբ ավարտեցին

Իտալիայի նվաճումը և այնտեղ հիմնեցին նոր՝ Ֆրանսիային դաշնակից «քույր–հանրապետություններ», վորից հետո նրանք շարժվեցին դեպի Վիեննա: Դեռևս Ավստրիայի մայրաքաղաքը չհասած՝ նրանից 80 կիլոմետր հեռավորության վրա Բոնապարտը զինադադար կնքեց ավստրիացիների հետ և ապա՝ նաև ձեռնտու դաշնագիր: Ինչ վերաբերում է Անգլիային, նա՝ իր կղզու դիրքով և ուժեղ նավատորմիղով՝ անխոցելի մնաց պատերազմում: Բոլոր փորձերը՝ հարված հասցնելու Անգլիային (Հոշի արշավանքն Անգլիա՝ Իռլանդիայի ապստամբությանն աջակցելու և Բոնապարտի էքսպեդիցիան դեպի Յեգիպտոս՝ այնտեղից Հնդկաստան արշավելու նպատակով)՝ վերջացան անհաջողությամբ:

Հեղափոխությունը բարենպաստ պայմաններ ստեղծեց Ֆրանսիայի կապիտալիստական զարգացման համար: Յերկրի տնտեսական հսկայական փլուզումին վերջ էր տրվում. ընդարձակվում էին ցանքսի տարածությունները, զարգանում էր անասնաբուծությունը, բարձրանում էին հացի և հողի գները: Տնտեսական աշխուժացումն արտահայտվեց նաև արդյունաբերության ասպարեզում: Հեղափոխության շնորհիվ բարձրացած նոր դասակարգերը վախենում էին ժողովրդական մասսաների հեղափոխությունից, սոցիալական խաղաղություն էին փափագում և, իհարկե, բնավ չէին ցանկանում, վոր «հին կարգերը», հին տերերը վերադառնան: Նրանց շահերը բավարարված էին լիովին: Նրանք ձգտում էին դաշինք կնքելու նախկին միապետության կողմնակիցների հետ: Բաբուվիստների շարժման մեջ նրանք նկատում էին պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության աճումը, սոցիալական նոր ցնցումների ուրվականը: Պաշտպանության կարոտ՝ նոր բուրժուազիայի անկայուն դրությունը բարձրացնում էր հաղթական բանակի և նրա գեներալների նշանակությունը քաղաքական գործերում:

Ֆրանսիական զորքերն իրենց արշավանքների ժամանակ սնվում էին նվաճված յերկրների հաշվին: Բոնապարտն իտալական պետություններում (Պյեմոնտ, Միլան, Ջենովա, Պապի շրջանը) ահագին ռազմատուգանքներ հավաքեց և նրանց օգնությամբ փայլուն կերպով կարգավորեց բանակի պարենավորման ու մատակարարման գործը: Այդպիսի ռազմատուգանքներով գեներալները, մանավորապես Բոնապարտը, օժանդակեցին Ֆրանսիայի ֆինանսների բարելավմանը: Վոսկու ներհոսանքը՝ շնորհիվ այն հեղաշրջման, վոր հեղափոխությունն էր կատարել յերկրի էկոնոմիկայի մեջ՝ շահավետ զետեղում գտավ և մեծացրեց այդ վոսկին ձեռք բերող բանակի ժողովրդականությունը: Պատերազմներն ուժեղացնում էին բուրժուազիայի տնտեսական հզորությունը, նրա համար ձեռք էին բերում հումույթի և վաճառքի շուկաներ, նպաստում էին արդյունաբերության զարգացմանը, սնում էին նոր բուրժուազիային, վոր հարստանում էր՝ սպասարկելով բանակին: Զորքերը դեպի նորանոր հաղթանակներ մղող գեներալներն այդ բուրժուազիայի «հերոսներն» էին:

Ֆրանսիայում ուժեղանում էին միապետության վերականգնման կողմնակիցները, որոնք իրենց ներկայացուցիչներն ունեին օրենսդրական պալատներում: Ռոյալիստական դավադրությունը Փարիզում արագ լիկվիդացիայի յենթարկեց այն գեներալը, որին Բոնապարտն էր ուղարկել Իտալիայից: Հանրապետական կառավարությունը՝ հաշվի առնելով բանակի ուժն ու ազդեցությունը՝ պատրաստվում էր իշխանությունը հանձնել զինվորական դիկտատորի ձեռքը: Այդ դերն ստանձնեց գեներալ Նապոլեոն Բոնապարտը (1769—1821), որը փայլուն զորավար էր և կազմակերպչական մեծ ընդունակությունների տեր:

Բոնապարտի սահմանած սիստեմը (բոնապարտիզմ) յերևան յեկավ դասակարգերի անկայուն հավասարակշռության հետևանքով՝ իբրև արդյունք այն քաղաքականության, որը ձգտում էր ժողովրդականություն վայելող գեներալի դիկտատուրայի օգնությամբ լիկվիդացիայի յենթարկել հեղափոխությունը և հաստատել բուրժուազիայի քաղաքական գերիշխանությունը: Բոնապարտի անձնական դիկտատուրան ներկայացնում էր այն բուրժուազիայի դասակարգային դիկտատուրան, որն այնպես յեռանդուն կերպով իր շահերը ծածկում էր «ժողովրդի շահերի» տակ: Բոնապարտիզմը հենվում էր ֆրանսիական բուրժուազիայի և կոնսերվատիվ (պահպանողական) գյուղացիության վրա, որոնք սարսափահար եյին յեղած հեղափոխության ուրվականից, և կառավարում էր յերկիրը տերտերների ու բյուրոկրատիկ ապարատի օգնությամբ: Բուրժուազիայի և գյուղացիության համար «զինվորական համազգեստը նրանց սեփական պետական կոստյումն էր, պատերազմը՝ նրանց պոեզիան, հողամասը՝ մեծացրած ու պարուրված ֆանտազիայով՝ մարմնավորում էր հայրենիքը, նրանց հայրենասիրությունը ներկայացնում էր սեփականության զգացմունքի իդեալականացրած ձևը» (Մարքս):

VIII ՏԱՐՎԱ ԲՐՅՈՒՄԵՐԻ 18-Ը

1799 թ. նոյեմբերի 9-ին (հեղափոխական օրացույցով՝ VIII տարվա բրյումերի 18-ին) Բոնապարտն՝ իրեն հավատարիմ զինվորների գլուխ կանգնած՝ ցրեց յերկու պալատները, Դիրեկտորիան և հիմնեց կոնսուլություն՝ յերեք հոգուց բաղկացած, կենտրոնացնելով ամբողջ իշխանությունն իր ձեռքում: Բոնապարտը դարձավ առաջին կոնսուլը՝ ընտրված 10 տարով: Նա իրավունք ուներ նշանակելու մինիստրներին, վարչական պաշտոնեությունը, հրատարակելու օրենքներ, կարգադրելու յերկրի բովանդակ ռազմական ուժերը:

Պատերազմական հաջողությունները ամրապնդեցին Բոնապարտի դիրքը: Բոնապարտը կամակատարն էր այն նոր արդյունաբերական բուրժուազիայի, որ անգլիական իր ուժեղ մրցակցի հետ պայքարելու համար շահագրգռված էր պետության օգնությամբ: Դրա հետ միասին, Բոնապարտը գյուղացիների և բուրժուազիայի հաստատ սեփականությունը դարձրեց այն հողերը, որոնք ձեռք եյին բերել հեղափոխության ժամանակ բռնագրավված յեկեղեցական գույքերի և ազնվական-

էմիգրանտների հողերի ֆոնդից: Բնական է, որ արդյունաբերական բուրժուազիայի և գյուղացիության շրջաններում Բոնապարտը զորեղ



Արևմտյան Յեվրոպան Նապոլեոնի կայսրության շրջանում

ՆԱՊՈԼԵՈՆԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

պաշտպանություն էր գտնում: 1802 թ. առաջին կոնսուլի իշխանությունը հայտարարվեց ցմահ, իսկ յերկու տարուց հետո Բոնապարտն ընդհանուր քվեարկության միջոցով կայսր հռչակվեց՝ Նապոլեոն I անունով (մինչև 1815 թ.):

Նապոլեոնի կայսրությունը անընդհատ պատերազմների ժամանակաշրջան է. այդ պատերազմների նպատակն էր՝ կործանել Անգլիայի քաղաքական և տնտեսական գերիշխանությունը: Նապոլեոնի ռազմական

ավանդույթան պետք է ավարտվեր յեվրոպական շուկաների գրավումով հօգուտ ֆրանսիական արդյունաբերության, վորն արագ զարգանում եր այն հանգամանքի շնորհիվ, վոր յերեվան եյին յեկել գործարաններ, գավոդներ՝ մեքենային արտադրությամբ և շոգեշարժիչներով հանդերձ: Նապոլեոնական պատերազմները նպաստեցին ֆրանսիական արդյունաբերության աճման: Նապոլեոնի նվաճած և նրան դաշնակից յերկրները պարտավորվում եյին խստիվ կատարել 1806 թ. հայտարարված կոնտինենտալ բլոկադի սիստեմի պահանջը. այդ սիստեմն անգլիական ապրանքների առաջ փակում եր մուտքը՝ յեվրոպական շուկաներ: Բլոկադի հիմնական նպատակն եր հաստատել Ֆրանսիայի տնտեսական դերիշխանությունը և նվաճված յերկրները վեր ածել ֆրանսիական գաղութների: Ֆրանսիական առևտուրն ապահովելու նպատակով՝ Նապոլեոնը վոչնչացրեց Տրիեստի, Վենետիկի Հոլլանդիայի վաճառաշահ քաղաքների առևտրական նշանակությունը: Բոլոր ապրանքների վրա, թեկուզ և նրանք գնված լինեին բլոկադի վերաբերյալ դեկրետի հրատարակությունից առաջ էլ, նշանակվում եյին կրկնապատիկ մաքսեր. հայտաբերված անգլիական ապրանքները բռնագրավվում եյին և նույնիսկ այրվում: Այդ հետապնդումների սաստկացման հետ կապված՝ սակայն, լայնորեն զարգանում եր անգլիական ապրանքների կոնտրաբանդային (մաքսանենգությամբ կատարվող) առևտուրը: Ֆրանսիական արդյունաբերությունը՝ իր տեխնիքական ցածր մակարդակի հետևանքով՝ չկարողացավ մրցել անգլիական կոնտրաբանդի հետ. նա ի վիճակի չեղավ ապրանքներով բավարարելու յեվրոպական շուկաները:

Անգլիային տնտեսական մեկուսացման յենթարկելու հետ միասին, Նապոլեոնը՝ ֆրանսիական բուրժուազիայի գերիշխանությունն ամրապնդելու նպատակով՝ նպաստում եր, վոր նվաճված պետությունների մեջ հին կարգերը խորտակվեն և այնտեղ հաստատվի սահմանադրական ռեժիմ, բուրժուական իրավակարգ: Գահերից քշելով ֆեոդալական միապետներին՝ Նապոլեոնը նրանց տեղ նստեցնում եր իր ազգականներին, վորոնք բնակչության համար ծանր վարչակարգ եյին կիրառում: Ֆրանսիական բանակի ուժով ստեղծված բուրժուական պետությունները (Գերմանիան և Իտալիան) վեր եյին ածվում շուկաների, վորոնք մոնոպոլ կերպով շահագործում եր ֆրանսիական բուրժուազիան: Ֆրանսիական արդյունաբերական կապիտալիզմի նման հեգեմոնիան և մոնոպոլ դիրքը շուտով առաջ բերեց յեվրոպական բուրժուազիայի կազմակերպված դիմադրությունը՝ ֆրանսիական կայսրության, Նապոլեոնի ռազմական լծի հանդեպ: Այդ բուրժուազիան անխուսափելիորեն պետք է անցներ ֆեոդալական կառավարությունների կողմը, վորպեսզի ազատվեր ֆրանսիական արդյունաբերության գերիշխանությունից և կործաներ Նապոլեոնի կայսրությունը: Այդ շարժումն օգտագործվեց Անգլիայի կողմից, վոր բացառիկ համառությամբ առաջ եր տանում պատերազմական կամպանիան: Մի քանի անգամ նա կոալիցիաներ եր կազմել յեվրոպական պետություններից: Այս կոալիցիաների կրած պատերազմա–

կան պարտությունները չեյին կանգնեցնում Անգլիային: Նապոլեոնի տարած փայլուն հաղթանակները Ֆրանսիային ընձեռեցին գրեթե վողջ Յեվրոպան: Ավստրիացիները ռուսների հետ միասին ջարդ կրեցին Աուստերլիցի մոտ 1805 թ., պրուսական զորքերը վոչնչացվեցին Յենի մոտ 1806 թ., Նապոլեոնի հաղթական զորքերի գրոհից անձնատուր յեղան պրուսական բոլոր բերդերը, Բեռլինը գրավեց Նապոլեոնը: Յերբ Ռուսաստանը խախտեց կոնտինենտալ բլոկադը, դրանից սկսվեց 1812 թ. արշավանքը, վորի ժամանակ Նապոլեոնը՝ ահագին բանակի գլուխ կանգնած՝ ներս մտավ Ռուսաստան: Անհաջողությամբ վերջացած այդ արշավանքը յեկավ ամրապնդելու Անգլիայի դիրքերն ու ազդեցությունը Յեվրոպայում. Անգլիան կարողացավ մի նոր հզոր կոալիցիա կազմակերպել ֆեոդալական պետություններից: 1813 և 1814 թ. թ. Անգլիան, Ռուսաստանն ու Պրուսիան յետ մղեցին Նապոլեոնին Գերմանիայից դեպի Ֆրանսիա, հարկադրեցին նրան գահից հրաժարվել և վերականգնեցին Ֆրանսիայում Բուրբոնների դինաստիան՝ հանձին Լյուդովիկոս XVIII թագավորի, գլխատված Լյուդովիկոս XVI-ի յեղբոր: Այսպես՝ սկիզբ առավ ռեստավրացիայի (վերականգնման) ժամանակաշրջանը:

«Նապոլեոնի՝ վորպես ֆրանսիական մեծ հեղափոխության ստեղծած բանակների կազմակերպչի՝ նշանակությունը, Ենգելսի ասելով, նրանում է կայանում, վոր արդեն ստեղծված հեղափոխական բանակների համար նա գտավ միակ ուղիղ ստրատեգիական և տակտիքական գործադրումն և այդ կատարեց այնչափ լավ, վոր անգամ լավագույն ժամանակակից գեներալներն իրենց ամենաճարպիկ և տաղանդավոր ռազմական գործողությունների ընթացքում ձգտում են լոկ ընդօրինակելու նրան»:

Նապոլեոնի կայսրության պարտությունը հետևանք եր մի շարք պայմանների, ինչպես վողջ Յեվրոպայի տնտեսական քայքայվածությունը, յեվրոպական միացյալ կապիտալի պայքարն ընդդեմ ֆրանսիական կապիտալի, կոնտինենտալ բլոկադի սիստեմի խախտումը և անգլիական կոնտրաբանդի բացառիկ զարգացումը. այդ կոնտրաբանդը խորտակիչ հարվածներ հասցրեց ֆրանսիական արդյունաբերության և առևտրի մոնոպոլիային Յեվրոպայում: Անընդհատ պատերազմները ցնցեցին գյուղացիական տնտեսությունը Ֆրանսիայում, ավերեցին գյուղերը, դժգոհություն առաջացրին մասսաների միջև: Գյուղացիությունը ձգտում եր խաղաղության և կարգ ու կանոնի. Նապոլեոնի դահընկեցությանը նա անտարբեր վերաբերվեց:

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԴԵՊՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1789 Թ. ՄԱՅԻՍԻ 5—1792 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 10—Բուրժուական-արիստոկրատական կարգերի եպոխան.

1789 Թ. ՀՈՒԼԻՍ 14—Բաստիլի առումը.

1791 Թ.—Ընդունվում է սահմանադրական-միապետական սահմանադրությունը.

1791 Թ. ՀՈՒԼԻՍԻ 14—Լե Շապլիեյի օրենքը.

1791 Թ. ՀՈՒԼԻՍԻ 17—Բուրժուազիան գնդակահարում է Մարսյան դաշտում տեղի ունեցած ցույցը.

1792 Թ. ԱՊՐԻԼԻ 20—Պատերազմ է հայտարարվում Ավստրիային.

1792 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 10—1793 Թ. ՄԱՅԻՍԻ 31—Ժիրոնդիստները՝ իշխանության գլուխ անցած.

1792 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 10—Հեղափոխությունը Փարիզում (միապետության տապալումը). Փարիզի կոմունայի և նրա սեկցիաների հեղափոխական դերը.

1792 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 19—Թշնամական զորքերը ներս են խուժում Ֆրանսիա.

1792 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21—Կոնվենտի բացումը.

1792 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22—Հանրապետության հիմնելը.

1792—1793 Թ. Թ. ՁՄԵՌԸ—Տնտեսական ճգնաժամ. «կատաղիների» ագիտացիան.

1793 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 23—Պատերազմ է հայտարարվում Անգլիային.

1793 Թ. ՄԱՅԻՍԻ 31—1794 Թ. ՀՈՒԼԻՍԻ 27 (II ՏԱՐՎԱ ՏԵՐՄԻԴՈՐԻ ՛)—Մանր բուրժուազիայի հեղափոխական դիկտատուրան.

1793 Թ. ՄԱՅԻՍԻ 31—ՀՈՒՆԻՍԻ 2—Ժիրոնդիստների անկումը. Փարիզի կոմունայի ղեկավարությամբ կատարված հեղափոխությունը. ապստամբության կոմունայի ձևավորվելը.

1793 Թ. ՀՈՒԼԻՍԻ 17—Կոնվենտն ընդունում է դեմոկրատական սահմանադրությունը. բոլոր ֆեոդալական պարհակների և սենյորալ իրավունքների վերացումը. յակոբինների ագրարային ռեֆորմը.

1793 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10—Ժամանակավոր հեղափոխական կառավարության հաստատումը.

1794 Թ. ՄԱՐՏԻ 27—Հեբերի և նրա կողմնակիցների գլխատումը.

1794 Թ. ԱՊՐԻԼԻ 5—Դանտոնի գլխատումը.

1794 Թ. ՀՈՒԼԻՍԻ 27—1799 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 9 (VIII ՏԱՐՎԱ ԲՐՅՈՒՄԵՐԻ 18)—Բուրժուական ռեակցիայի եպոխան.

1794 Թ. ՀՈՒԼԻՍԻ 28—Ռոբեսպյերի գլխատումը.

1795 Թ. ԳԱՐՆԱՆԸ—Բանվորների ապստամբությունը Փարիզում.

1796 Թ. ԱՊՐԻԼԻՆ—1797 Թ. ՄԱՅԻՍԻՆ—«Հավասարների դավադրությունը».

1797 Թ. ՄԱՅԻՍԻ 27—Բաբյոֆի գլխատումը.

1797 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 9—Նապոլեոն Բոնապարտի կատարած հեղաշրջումը բրյումերի 18-ին.

1799—1815 Թ. Թ.—Կոնսուլությունը և Առաջին Կայսրությունը. Նապոլեոնն իբրև կոնսուլ և կայսր՝ ֆրանսիացոց:

ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Վորո՞նք են ֆրանսիական հեղափոխության հատկանշական գծերը, վոր բնորոշում են նրան վորպես հեղափոխության կլասսիկ մի օրինակ՝ զարգացող կապիտալիզմի ժամանակաշրջանում.

2. Ինչո՞վ արտահայտվեց Հիմնադիր ժողովի և 1791 թ. սահմանադրության բուրժուական բնույթը.

3. Վորո՞նք եյին այն ուժերը, վոր առաջացրին 1792 թ. օգոստոսի 10-ի հեղափոխությունը և վորո՞նք եյին միապետության անկման պատճառները.

4. Ի՞նչպիսի քաղաքական խմբավորումներ կազմակերպվեցին Կոնվենտի ժամանակաշրջանում, ի՞նչպես եյին նրանց դասակարգային փոխ-հարաբերությունները ու սոցիալական բնույթը և ինչի՞ց առաջացան նրանց միջև այն ընդհարումները, վոր բերին ժիրոնդիստներին դեպի անկում.

5. Ի՞նչպիսի սոցիալական միջոցառումներ ձեռք առան յակոբինները չունևոր դասակարգերի դրության տնտեսական բարելավման և հանրապետության պաշտպանության նպատակով.

6. Ի՞նչ հիմնական գծերով է բնորոշվում յակոբինների դասակարգային եությունը, ի՞նչպես եյին յակոբինները դնում ագրարային և բանվորական խնդիրները.

7. Ինչո՞ւ հեղափոխական կառավարությունն «օրակարգի խնդիր համարեց» տեռրորը.

8. Պարզեք այն դիրքերի դասակարգային բնույթը, վոր բռնեցին հեղափոխության ժամանակ մանր բուրժուազիայի տարբեր գրուպպաները, պարզեք նրանց միջև յեղած պայքարի բնույթը և բացատրեք, ի՞նչ եր տերմիդորի 9-ի սոցիալական իմաստը.

9. Ի՞նչպիսի դեր խաղաց գյուղացիությունը ֆրանսիական հեղափոխության տարբեր ստադիաներում.

10. Վորո՞նք եյին ֆրանսիական հեղափոխության շարժիչ ուժերը նրա զարգացման տարբերետապներում:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ—ԽՆԴԻՐՆԵՐ

1. Կարդացեք 1789 թ. «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան»

Фридлянд и Слуцкий, Хрестоматия. Материалы и документы к III гл., 1793 *թ. «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան»* (*նույն գրքի* IV *գլխում*), *համեմատեցեք նրանց խորհրդային՝ «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիայի» հետ* (С. Пионтковсвкий, Хрестоматия по истории октябрьской революции) *և պարզեք, թե ի՞նչպես են բուրժուազիան ու պրոլետարիատը՝ իշխանություն գրավելով վորոշում իրենց դասակարգային քաղաքականությունը* :1793 *թ. դեկլարացիան ուսումնասիրելով՝ պետք է պարզել յակոբինական դիկտատուրայի դասակարգային բնույթը:*

2. Ագրարային խնդրին վերաբերող մատերիալների ուսումնասիրու-

թյան հիման վրա բնութագրեք բուրժուազիայի դասակարգային քաղաքականության հիմնական գծերը. պարզեք, թե ի՞նչու բուրժուազիան ի վիճակի չեղավ լուծելու գյուղացիական հարցը և համեմատեցեք բուրժուազիայի ագրարային ձեռնարկումներն յակոբինների ագրարային ռեֆորմի հետ: Պարզեք նաև, թե ո՞ւմ շահերն են բավարարություն գտել այդ ռեֆորմի մեջ:

Համեմատեցեք յակոբինների ագրարային ռեֆորմը հողի վերաբերյալ այն դեկրետի հետ, վորը հրատարակել է խորհրդային իշխանությունը 1917 թ. հոկտեմբերի 26-ին.

(материалы: Фридлянд и Слуцкий, гл. III, документы №№ 4, 5, 6, 7: из. IV главы №№ 22 (էջ 2), 28, 29, Пионтковский, указание выше Хрестоматия).

3. **Մշակեցեք** հետևյալ խնդիրները՝ ի՞նչպիսի սոցիալ-տնտեսական միջոցներ ձեռք առան յակոբինները չքավորության շահերը պաշտպանելու նպատակով. արդյո՞ք մաքսիմումի սահմանումը լիովին եր համապատասխանում բանվորների և քաղաքի ցածր խավերի շահերին. ի՞նչ խնդիրների շուրջ և հատկապես ինչո՞վ արտահայտվեցին տարաձայնությունները յակոբինական կոալիցիայի ներսում. ինչո՞ւ յեր անխուսափելի յակոբինների դիկտատուրայի անկումը.

(Материалы: Фридлянд и Слуцкий, Хрестоматия, из гл. IV, документы №№ 31. 32, 35, 36; «Революционное провителство в эпоху Конвента», под ред. Н. М. Лукина, стр. 145—205, стр. 501 и дальше).

4. **Կազմեցեք** համառոտ կենսագրական տվյալներ հեղափոխության առաջնորդների վերաբերյալ, այն է՝ Մարատի, Ռոբեսպյերի, Հեբերի, Դանտոնի, Սան-Ժյուստի, Բաբյոֆի մասին, ոգտագործելով ստորև «Գրականություն» բաժնում նշված կենսագրական ուրվագծերը.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴՈԿՈՒՄԵՆՏՆԵՐ

Ц. Фридлянд и А. Слуцкий, История революционного движения Западной Европы (1789—1914), Хрестоматия, т. I, изд. 5-е, Гиз., М. 1928

Թե վո՞ր մատերիալներն այստեղից պետք է մշակել—այդ ցույց է տրված վերև, «Հանձնարարություն-խնդիրներում».

Революционное провительство во Франции в эпоху Конвента (1792–1794), сборник документов и материалов, перевод Н. Б. Фрейберг, под ред. Н. М. Лукина, изд. Комм. акад., М. 1927.

Դոկումենտները վերաբերում են հեղափոխական կառավարության կազմակերպմանը: Մատերիալների նշանավոր մասը նվիրված է 1792 թ. ոգոստոսի 10-ից մինչև 1793 թ. հունիսի 2-ը տևող ժամանակաշրջանին: Դոկումենտներից մի քանիսը բերված են քաղվածքներով (1793 թ. սահմանադրությունը, 1793 թ. հուլիսի 17-ի դեկրետը): Ժողովածուն բազմաթիվ նյութեր է տալիս՝ պարզելու մանր բուրժուազիայի դերը հեղափոխության ընթացքում:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Ц. Фридлянд, История Западной Европы, ч. I, изд. 3-е «Пролетарий», 1930 г.

Лекция 5—я—«Великая Французская революция—буржуазная аристократия у власти 6—я—эпоха мелкобуржуазной диктатуры (1793—1795), 7—я —«буржуазная республика во Франции (1795—1799), 8—я—«Эпоха военной диктатуры буржазии (1799—1814)»:

А. Матьез, французская революция, изд. «Московский Рабочий», 3 тома.

Առաջին հատորը վերջանում է թագավորական իշխանության անկման շարադրությամբ. յերկրորդ հատորը՝ ժիրոնդի անկումով. յերրորդ հատորն ընդգրկում է յակոբինների դիկտատուրայի ժամանակաշրջանը մինչև II տարվա տերմիդորի 9 (1794 թ. հուլիսի 27): Հանձնարարվում է դասատուին իբրև լրացուցիչ գրականություն:

С. Фрязинов, Великая Французская революция, научно-популярный очерк, изд. «Пучина», М. 1927.

Շարադրությունը սկսվում է հին կարգերի բնութագրումից և վերջանում բրյումերի 18-ով: Գրքի մեծ մասը նվիրված է Կոնվենտի եպոխային: Մեծ տեղ է հատկացվում հակահեղափոխական եմիգրացիային: Բավարար չափով չի պարզաբանված գյուղացիական հարցը: Թռուցիկ կերպով է շոշափված յակոբինների ագրարային ռեֆորմը: Այս գիրքը կարող է ծառայել իբրև հիմնական ձեռնարկ՝ խորացած մշակման համար:

Н. М. Лукин (Антонов), Новейшая история Западной Европы, вып. I, изд. 2-е, Гиз, 1926, гл. IV и V.

Հեղափոխության անցուդարձերը, Կոնսուլության և կայսրության եպոխան լուսաբանված են մանրամասնորեն: Հեղինակը շարադրում է վոչ միայն հեղափոխության սոցիալ-քաղաքական պատմությունը, այլև ծանոթացնում է նաև կուլտուրայի և տեխնիկայի խնդիրների հետ:

К. Раткевич, Французские рабочие в годы великой революции, изд. «Масковский рабочий», М. 1928.

Գիրքը բաղկացած է 4 գլուխներից, վորոնք նվիրված են բանվորների դրության խնդրին՝ մինչհեղափոխական Ֆրանսիայում, սահմանադրական միապետության, մանր բուրժուազիայի դիկտատուրայի և ռեակցիայի տարիներին: Շարադրությունը պոպուլյար է:

С. Колоколкин и С. Моносов, Что такое термидор? изд. «Московский Рабочий», М. 1928.

Ц. Фридлянд, Девятое термидора (стр. в жур. «Историк—марксист», т. 7).

Н. М. Лукин, Максимилиан Робеспьер, изд. 2-е, дополненное,, Гиз, М. 1921.

Լավագույն գիտական-հանրամատչելի գրքերից մեկն է, գրված պարզ լեզվով: Ռոբեսպյերի անձնավորությունը փոքր ինչ յետ է մղված յերկրորդ գծի վրա, դրա համար այս գիրքը կարող է ծառայել ընդհանրապես ֆրանսիական մեծ հեղափոխության ուսումնասիրության համար:

И. И. Степанов, Жань Поль Марат и его борьба с контр-революцией **1792—1793 г. г., Гиз, 1923.**

А. Матьез, Новое о Дантоне, пер. с фр. с пред. Ц. Фридлянд, изд. «Московский рабочий», М. 1928.

Հեղինակը ռոբեսպյերիստ է, ըստ իր համակրանքների։ Գրքում զետեղված են Դանտոնի վերաբերյալ չորս հոդվածներ, վորտեղ ցուցահանված են Դանտոնի վաճառվածությունը, կաշառակերությունն ու համաձայնականությունը հեղափոխության բոլոր թշնամիների հետ։

П. П. Щеголев, Заговор Бабьефа, изд. «Прибой», 1927.

Հեղինակը ծանոթացնում է Բաբյոֆի և բաբուվիզմի գործունեության հետ հեղափոխության ֆոնի վրա՝ սկսած հին կարգերի ժամանակաշրջանից և վերջացրած Դիրեկտորիայով։ Գրքում շատ նյութեր են օգտագործված, ընդարձակ քաղվածքներ են բերված Բաբյոֆի թերթերից (առավելապես «Ժողովրդական տրիբուն»-ից), բաբուվիստների զանազան գրքերից և թռուցիկներից։ Գիրքը պետք է ծառայի իբրև հիմնական ձեռնարկ՝ պարզելու այն հարցը, թե ինչո՞ւ չհաջողվեց կոմունիստական հեղափոխությունը։

П. П. Щеголев, После Термидора, изд. «Прибой» Л. 1930.

Տերմիդորիանական ռեակցիայի պատմության ուրվագծեր։ Կուսակցությունների պայքարը տերմիդորիանական ռեակցիայի առաջին ամիսներին, լեռան և մաքսիմումի վախճանը։ Սոցիալ-տնտեսական խնդիրների բնութագրությունը՝ տերմիդորիանական ռեակցիայի առաջին շրջանի դասակարգային պայքարի վերաբերյալ։

Г. Серебрякова, Женщины Великой французской революции. Предисловие М. Н. Покровского, Гиз. М. 1928.

Գրքում տրված կան Տերուան դը Մերիկուրի, Շառլոտտա Կորդեի, Մանոն Ռոլանի, Լյուսիլ Դեմուլենի և ուրիշների պորտրետները։

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

*) *В. Гюго,* 1793 год ред. М Левберг, Гиз, *А. Франс,* Боги жаждут (*վեպում նկարագրված են յակոբինական դիկտատուրայի եղլիզոնները, տեռորը*); Ф. Гра, Марсельцы (*մարսելցիների արշավը Փարիզ*); его же, Террор, роман, Гиз, *Ч. Диккенс,* Повесть о двух городах, вступ. статья К. Чуковского. Серия «Всемирная литература», П. 1919. (*Լոնդոնն ու Փարիզը հեղափոխության շրջանում*);*) *Эркли-Шатриан,* История одного крестьянина; *И. Эренбург,* Заговор равных, повесть из жизни Бабьефа (в журнале «Красная Новь», № 11—12, 1928); *Ал. Алтаев,* Когда разрушаются дворцы, роман, с предисл. И. Нусинова, с рис. изд. «Молодая гвардия», Л. 1929. *Героизм революции,* историко-литературная хрестоматия XIX и XX в. в., состовил Л. Войтоловский, т. I, М—Л. 1927 (*գրքի հինգ բաժիններից մեկը նվիրված է ֆրանսիական հեղափոխությանը*)։

---

*) *Աստղանիշներով ցույց են տրվում հայերեն թարգմանված գրքերը։*

ԴՐԱՄԱՏԻՔԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Вл. Масс, Сестры Жерар, мелодрамма по тему *Деннери и Керман,* Две сиротки (*գործողությունը կատարվում է Փարիզում 1789 թ.*) *Ромен Роллан,* Взятие Бастилии (*Հեղափոխության սկիզբը, Պալե-Ռոյալ, Մարատի ճառը, Ռոբեսպյերը կարդում է «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան», Դեմուլենը կոչ է անում ապստամբելու, Բաստիլի առումը*); *его же,* Избранные сочинения, Театр революции, редакция Е. Замятина (пьесы «Взятие Бастилии», «Дантон» и «Волки»); *его же,* Любовь и смерть, драматическая эпопея в 12 сценах, пер. с фр. А. Горлина и Б. Лившица, Гиз, Л. 1925; *Г. Бюхнер,* Смерть Дантона, пьеса; *А. Шницлер,* Зеленый попугай.

ԻՐԱԶՆՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԱԼԲՈՄՆԵՐ ՅԵՎ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Серия открыток *«Великая французская революция»,* изд. Музея Института Маркса и Энгельса, Л. 1927 (10 *բացիկներ՝ փորագրություններից արտատպված*)։

ԴԻԱՊՈԶԻՏԻՎՆԵՐ

Издания отдела учебных пособий Главполитпросвета: серия *«Французская революция 1789»;* (30 *սևագույն դիապոզիտիվներ*)․

Издания Гос. акц. о-ва нагляд. пособий (АОНАПО—Москва): серия № 572 *«Великая французская революция»* (25 *սևագույն*)։

ԿԻՆՈ-ՖԻԼՄԵՐ

«ՍԿԱՐԱՄՈՒՇ» (ամերիկական ֆիլմ․ հերոսը—Մորոն է, հետագայում Նապոլեոնական մարշալը) «ՅԵՐԿՈՒ ՎՈՐԲ ԱՂՋԻԿՆԵՐ» (ամերիկական ֆիլմ․ Փարիզը հեղափոխության ժամանակ, տեռորը, Դանտոնը)․ «ԴԱՆՏՈՆ» (գերմանական ֆիլմ)․ բոլոր այդ ֆիլմերը, վորոնք այլանդակ, խեղաթյուրված կերպով են ներկայացնում հեղափոխությունը և աշխատում են հանդիսատեսի մեջ համակրանք առաջացնել արիստոկրատների կամ դանտոնիստների հանդեպ, նախնական բացատրություններ են պահանջում։ «ԼԵԴԻ ՀԱՄԸԼՏՈՆԸ»—(գերմանական ֆիլմ)․ Անգլիան XVIII դ․ վերջին—XIX դ․ սկզբին, Նեապոլը, անգլիա-ֆրանսիական կռիվները․ հերոսն անգլիական նավատորմի հրամանատար Նելսոնն է, վորն Աբուկիրի և Տրաֆալգարի մոտ տեղի ունեցած ծովային կռիվներում հաղթանակ տարավ։

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ XIX Դ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԻՆ

Ֆրանսիական մեծ հեղափոխությունը վոչնչացնելով ֆեոդալիզմի մնացորդները, հնարավորություն տվեց Ֆրանսիային արագ ընթանալ կապիտալիստական զարգացման այն ուղիով, վորով արդեն առաջուց անցել եր Անգլիան: Ներկա գլխում անհրաժեշտ ե կանգ առնել յերկու դասակարգերի — արդյունաբերական բուրժուազիայի և պրոլետարիատի — փոխհարաբերության վրա՝ 19-րդ դարի առաջին կիսում: Այդ դասակարգերի միջև յեղած պայքարը լցնում ե հետագա բոլոր տարիները, մինչև մեր որերը:

Այս գլուխն ուսումնասիրելիս, անհրաժեշտ ե պարզել հետևյալ խնդիրները՝

1. Պրոլետարիատի դրությունը և նրա կազմն ինչպե՞ս են անդրադարձել 19-րդ դարի առաջին կիսի բանվորական շարժման վրա:

2. Վորո՞նք եյին այդ եպոխայի պրոլետարիատի ելույթների անհաջողության պատճառները:

3. Այդ ժամանակի կարևորագույն սոցիալական տեսություններն ինչպե՞ս եյին ջանում լուծել գոյություն ունեցող հակասությունները. ի՞նչ դրական կողմեր կային առանձին տեսություններում և վո՞րն եր նրանց ուտոպիզմը:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՃՈՒՄՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

ՅԵՎՐՈՊԱՆ XIX Դ. ՍԿԶԲԻՆ

Նապոլեոն Բոնապարտի կայսրության վերջնական խորտակումը հնարավորություն տվեց հաղթող պետություններին ձեռնամուխ լինել ֆրանսական հեղափոխության նվաճումների մասնակի լիկվիդացիային: 1814 թվին Վիեննայում հավաքված յեվրոպական պետությունների ներկայացուցիչների միջազգային կոնգրեսը, վոր իր աշխատանքները շարունակեց մինչև 1815 թիվը, ծայր ռեակցիոն եր տրամադրված և ձգտում եր վերականգնել հին հարաբերություններն ու սահմանները, վորոնք հեղափոխության ժամանակ շատ եյին փոխվել: Սակայն այդ ծրագրերը չեյին կարող ամբողջությամբ կենսագործվել, քանի վոր նախահեղափոխական ժամանակի հետ համեմատած՝ իրերի դրությունը խիստ փոխվել եր. Ֆեոդալիզմի մնացորդները վերջնականապես

փլվել եյին, զիջելով իրենց տեղը նոր կապիտալիստական հասարակության: Այդ պատճառով Վիեննայի կոնգրեսը, նախկին Բուրբոնների դինաստիան՝ հանձին գլխատված թագավորի յեղբայր Լյուդովիկ XVIII-ի՝ ֆրանսիական գահը բարձրացնելով, այնուամենայնիվ ստիպված եր Ֆրանսիայում բուրժուական սահմանադրությունը պահել: Դրանից հետո պետություններն սկսեցին Յեվրոպայի քարտեզը վերաձևել: Սկզբում յենթադրվում եր հարցը լուծել ըստ ազգային սկզբունքի, բայց փաստորեն այդ սկզբունքը խախտվեց ամենաբիրտ ձևով: Լեհաստանը, նախկին Վարշավայի հերցոգությունը, վերստին բաժանվեց յերեք պետությունների միջև — Ռուսաստանի, Պրուսիայի և Ավստրիայի: Բելգիան և Հոլանդիան միացված եյին իբրև մեկ Նիդերլանդական պետություն: Գերմանիայում ստեղծվեց գերմանական դաշնակցություն՝ կազմված 38 առանձին մանր պետություններից՝ դաշնակցային սեյմով (պարլամենտով)՝ Մայնի վրայի Ֆրանկֆուրտում: Իտալիան մի քանի մանր պետությունների միջև բաժանված մնաց:

ՌԵԱԿՑԻԱՆ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Յեվրոպայում թագավորող ռեակցիայի պահակ եյին կանգնել՝ Ավստրիան, Պրուսիան և Ռուսաստանը, վորոնց միապետները, ռուսաց կայսր Ալեքսանդր I առաջարկով յեվրոպական յերկրներում «հին կարգը» պահպանելու համար, միմյանց հետ «սրբազան դաշնակցություն» կազմեցին: Դաշնակցության անդամները պարտավորվում եյին փոխադարձաբար ոգնել միմյանց ու մյուս միապետներին ամեն մի հեղափոխական ելույթի հանդեպ: «Սրբազան դաշնակցությունը» հանուն «քրիստոնեյական սիրո, սուրբ կրոնի, ճշմարտության և խաղաղության» զինված ուժով պետք ե պաշտպաներ Յեվրոպան հեղափոխության «վոճրագործ վարակից»: «Սրբազան դաշնակցության» ոժանդակությամբ 19-րդ դարի քսանական թվականներին Ֆրանսիան ճնշեց հեղափոխական շարժումներն Սպանիայում և Պորտուգալիայում, իսկ Ավստրիան — Իտալիայում:

Բուրբոնների ռեստավրացիան Ֆրանսիայում նշանակում եր, վոր ամբողջ Յեվրոպայում հաղթանակել ե Նապոլեոնի կայսրության անկումից հետո սկսված ռեակցիան: Հեղափոխությունից սարսափած ազնվականությունն ու կղերականությունը միացան բուրժուազիայի մի մասի հետ, վորը չեր կարող մոռանալ յակոբինյան դիկտատուրայի «պլեբեյական» տակտիկան: Գերմանիայի և Իտալիայի պետություններում, Ռուսաստանում, Սպանիայում, Պորտուգալիայում ազնվականության և հոգևորականության իրավունքները լայնանում եյին: Աճում եր գյուղացիների շահագործումը, մեծանում եր աբսոլյուտիզմի ճնշումը, աճում եր կռիվն ընդդեմ «ժողովրդական ներկայացուցչության քայքայիչ իդեաների»: Կենսագործվում եր Վիեննայի կոնգրեսում ընդունված «յեվրոպական հավասարակշռության» սկզբունքը,

վորի հիմունքով Անգլիայի, Ավստրիայի, Պրուսիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի միապետները համաձայնության յեկան իրար մեջ բաժանել յեվրոպական ժողովուրդներին: Սակայն վոչ ռեակցիան, վոչ «սրբազան դաշնակցությունը», վոչ «հավասարակշռությունը» չկարողացան միապետությունների համար «կարգը» ապահովել: 20-ական թվականներին հեղափոխական շարժում բռնկվեց՝ Սպանիայում, Պորտուգալիայում, Նեապոլում և Ռուսաստանում (դեկաբրիստների ապստամբությունը): Ամենուրեք ծնունդ եյին առնում գաղտնի ընկերություններ, կազմվում եյին դավադրություններ, ապստամբություններ: Շարժումն ընդգրկում եր լիբերալ բուրժուազիայի, մանր բուրժուազիայի, արհեստավորների և արդյունաբերական պրոլետարիատի լայն զանգվածները:

Կապիտալիզմի արագ աճումը մի կողմից և պրոլետարիատի ծանր դրությունը մյուս կողմից՝ սպառնում եյին նոր ցնցումներ առաջացնել. սրան պետք ե ավելացնել նաև առանձին յերկրների միջև յեղած մրցումը:

XIX դարի սկիզբը նշանակալից ե կապիտալիզմի զարգացման ոժանդակող նոր տեխնիկական գյուտերով: Ուատտի մեքենայի կատարելագործումը և նրա հարմարեցումը տրանսպորտի կարիքներին հանգեց յերկաթուղային ճանապարհների և շոգենավի կառուցման*), իսկ այդ իր հերթին ոժանդակեց ապրանքաշրջանառության արագացման: Կապիտալիստական յերկրներից առաջվա պես առաջին տեղն եր բռնում Անգլիան: Ֆրանսիան կամաց-կամաց իր մոտ մեքենայական տեխնիկա յեր մտցնում: Փոքր ինչ հետ եյին մնացել Գերմանիան և Ռուսաստանը, թեպետ առաջինում (Սաքսոնիայում և Մերձհռենոսյան մարզում) արդեն սկսել եյին կազմվել խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ: Արագ աճում եր կապիտալիզմը, բայց նույնքան արագ աճում եր նաև նրա ուղեկիցն ու թշնամին — պրոլետարիատը:

ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԸ *XIX* Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Հեղափոխական Ֆրանսիայի դեմ պատերազմները, վորոնց ընթացքում գործունյա մասնակցություն եր ցուցաբերում Անգլիան, չդանդաղեցրին անգլիական կապիտալիզմի զարգացումը: Պետական պարտքը, վոր կապված եր պատերազմական ծախսերի հետ, ավելի ուժեղացրեց կապիտալիստներին, քանի վոր նրանք վարկավորում եյին պետությունը դրամով և ստանում մեծ տոկոսներ: Մեքենայական տեխնիկան ավելի յեր զարգանում և նպաստում եր արդյունաբերության աճման: Դրան զուգընթաց, ավելի յեր վատթարանում պրոլետարիատի դրությունը: XIX դարի սկզբին գյուղացիությունը վերջնականապես պրոլետարականացման եր յենթարկվել: Տնայնագործական արտա-

*) Ֆուլտոնի շոգենավը 1807 թ. կատարեց իր առաջին ռեյսը: 1825 թ. Անգլիայում բացվեց առաջին յերկաթուղին:

դրությունը ճնշման եր յենթարկվել մեքենայական արտադրության կողմից: Պրոլետարիատի միակ ապաստանը, վոր կարող եր լինել նրա պայքարում սովի դեմ, միայն գործարանների և ֆաբրիկաների աշխատանքն եր: Բայց այստեղ էլ բանվորները հուսախաբության առաջ եյին կանգնած: Ամեն մի նոր մեքենայի հանդես գալը, պարզեցնելով աշխատանքը, փողոց եր նետում բանվորական զանգվածներ: Մյուս կողմից, մեքենաներից շատերի վրա աշխատելու համար վորակյալ աշխատանք չեր պահանջվում. դրանից ոգտվում եյին ֆաբրիկատերերը և տղամարդու աշխատանքը փոխարինում եյին կանացի, նույնիսկ յերեխաների արյան աշխատանքով: Դրա հետևանքով տղամարդկանց մեջ ուժեղացավ գործազրկությունը: Գործարանները լցվում եյին կանանցով ու յերեխաներով, վորոնք աշխատում եյին սարսափելի ծանր պայմաններում: Մանուկները ֆաբրիկաներում վարձվում եյին սկսած 6 տարեկանից և աշխատում եյին որական 12—16 ժամ: Դեպքեր են յեղել, վոր մանուֆակտուրաներում և հանքերում աշխատել են 3, 4 և 5



Յեվրոպայի առաջին շոգեգնացքներից մեկը

տարեկան մանուկներ: Մեծերի աշխատանքն ավելի յերկարատև եր: Շահույթի ծարավը ֆաբրիկատերերին դրդում եր գիշերային հերթ մտցնել, վորն առանձնապես ծանր եր անդրադառնում բանվորների առողջության վրա: Այդ բոլոր հանգամանքները տանում եյին դեպի աշխատունակության կորուստը ժամանակից առաջ, մահացության շատացումը, մանավանդ յերեխաների մեջ, և պրոլետարիատի այլասերումը: Գործազրկության և չնչին աշխատավարձի հետևանքով Անգլիայում հանդես յեկան մուրացիկների խմբեր: Միաժամանակ աճեց վոճրագործությունների թիվը, վոր 1815 թ. մինչև 1825 թիվը գրեթե քառապատկվեց: «Արդյունաբերության զարգացման հետ մեկտեղ վոճրագործության թիվն աճում եր, և ձերբակալությունների տարեկան թիվը մշտական հարաբերության մեջ եր մշակվող բամբակի հակերի թվի հետ» (Ենգելս):

Շահագործման չլսված ձևերով հուսահատության հասած բանվորները մեքենան եյին համարում իրենց գլխավոր թշնամին և մրցակիցը: XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին հաճախակի առաջացած գործադուլներն ուղեկցվում եյին ֆաբրիկաները հրդեհելով և մե-

քենաները ջարդելով (օրինակ՝ XIX դարի յերկրորդ տասնամյակի սկզբներին այսպես կոչված «լուդդիտների» շարժումը)։ Շարժումն ավելի լայն ծավալելով, դեռ XVIII դարում այնքան էր տարածվել, վոր պարլամենտը հրատարակեց հատուկ օրենք, վորով մեքենաները փչացնելու համար մահվան էր դատապարտում (1769 թ.)։ 1811 թվի վերջերին լուդդիտները գաղտնի ընկերություն կազմեցին։ Կառավարությունը լուդդիտներին դաժանորեն վոչնչացնում էր, մասսայական մահապատիժների յեր յենթարկում, հեռավոր գաղութներ էր ուղարկում տաժանակիր աշխատանքի։ «Բանվորները, իբրև բանվոր դասակարգ, — Էնգելսի ասելով,— առաջին անգամ բուրժուազիայի դեմ ապստամբեցին այն ժամանակ, յերբ ուժով ընդդիմացան մեքենաների ներմուծելուն»։ Հետագայում պրոլետարիատը պայքարի այլ, ավելի խաղաղ միջոցների էլ է դիմում։ Այսպես, օրինակ՝ դիմում էր պարլամենտին, իբրև պետության վերին օրգանի, բազմաթիվ պետիցիաներով (խնդրագրերով)՝ մեքենաների գործադրությունն արգելելու մասին։ Հասկանալի յե, վոր պարլամենտը խուլ էր մնում դեպի պրոլետարիատի նման աղերսանքները։ Այն ժամանակ բանվորները համոզվեցին, վոր պարլամենտը բնակչության այն խավերի շահերն է արտահայտում, վորոնց ներկայացուցիչները կան պարլամենտում։ Այստեղից էլ բղխեց նրանց ձգտումը՝ տեղ գրավել պարլամենտում, ուստի սկսեցին պայքարել ընդհանուր ընտրական իրավունքի համար։

Դեռ XIX դարի սկզբին ձեռնարկուների դեմ բանվորների պայքարի ընթացքում առաջացան բանվորների առաջին միավորումները — տրեդյունիոնները (պրոֆմիությունները)։ Տրեդյունիոններն՝ առաջ գալով գործադուլների մոմենտին՝ կառավարության կողմից դաժանորեն հետապնդման եյին յենթարկվում։

Սարսափած բուրժուազիային վերջապես հաջողվեց հասնել կոալիցիաների (միավորումների) իրավունքների վերացման։ Այսպիսով, գոյության համար պայքարի ընթացքում, բանվորները մեքենաների դեմ տարերային, եյապես ռեակցիոն, խմբերից անցան պրոֆեսիոնալ միությունների և քաղաքական իրավունքների պահանջին։ 1824 թվին բանվորներին վերջապես հաջողվեց վերացնել տալ կոալիցիաների արգելման օրենքները, և այդ ժամանակվանից տրեդյունիոնները ծավալվելու հնարավորություն ստացան։ Սակայն ֆաբրիկատերերը կարողացան այլ հարց անցկացնել, այն է՝ վոր օրենքով հետապնդվելու յե «ի վնաս ուղղված արդյունաբերության» բանվորների ամեն մի յելույթ։ Գործադուլների ընթացքում պիկետները (պաշտպանողական ջոկատները) և շտրեյկբրեխերության դեմ բանվորների պայքարը հետապնդվում եյին իբրև քրեական հանցագործություն։

ՊԱՅՔԱՐ ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԻ ՀԱՄԱՐ

Ընտրական իրավունքի լայնացումը հուզում էր նաև վոչ բանվորների միտքը․ այդ հարցը զբաղեցնում էր նաև քաղաքական իշխանությունից հեռու կեցած բուրժուազիային։ 8·000·000 բնակչությունից

ընտրական իրավունքից օգտվում եյին մոտավորապես 150·000 մարդ։ Ընտրական իրավունքի վերջին ռեֆորմը տեղի յեր ունեցել XVIII դ. կեսերին, իսկ այդ ժամանակվանից շատ բան էր փոխվել։ Նախկին «հին» Անգլիան իր անանցնելի անտառներով, լորդերի հոյակապ ամրոցներով, բազմաթիվ գյուղացիական ազգաբնակչությամբ և մանր քաղաքներով վաղուց արդեն ավանդության գիրկն էր անցել։ Նրա տեղ նոր Անգլիան էր առաջացել՝ մեծ քաղաքներով, հազարավոր ֆաբրիկաներով ու գործարաններով և յեռացող քաղաքային կյանքով։ Ընտրական շրջանների հին բաժանումը վաղուց իրականությանը չէր համապատասխանում։ Ագրարային հեղաշրջումը ազգաբնակչության տեղաշարժ կատարեց հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք, վորի հետևանքով շատացավ «փտած վայրեր»-ի քանակը, այսինքն, այն հին շրջանների, ուր կյանքը գրեթե մեռել էր, բայց վորոնք առաջվա պես իրավունք ունեյին համայնքների պալատի պատգամավորներ ընտրել։ 30 վայր՝ 375 մարդ բնակչությամբ պարլամենտ եյին ուղարկում 2-ական պատգամավոր, ընդամենը 60, իսկ միևնույն ժամանակ այնպիսի արդյունաբերական կենտրոններ, ինչպես Մանչեստրը, վորը 1821 թվին ուներ 129·000 բնակչություն, Բիրմինհամը—102·000 և Լիդսը՝ 84·000, բոլորովին զուրկ եյին ընտրական իրավունքից և պարլամենտում ներկայացուցիչներ չունեյին։ Ընտրական շրջաններից շատերում, ուր միայն լորդերն ու նրանց ֆերմերներն եյին ապրում, պատգամավոր եյին նշանակում ուղղակի լորդին հաճելի մարդկանցից։

XIX դ. սկզբին պարլամենտը մեծ իրավունքներով էր օգտվում։ Համայնքների պալատը նվաճեց այն իրավունքը, վոր թագավորը մինիստրներ էր նշանակում պալատի ամենաազդեցիկ կուսակցությունից։ Համայնքների պալատի կողմից ընդունված մինիստրության անվստահության վոտումով (վորոշումով), բոլոր մինիստրները հրաժարական եյին տալիս։ Նման սիստեմի կիրառումով, վոր պարլամենտարիզմ է կոչվում, ամբողջ փաստական իշխանությունը անցնում էր համայնքների պալատին, թագավորին թողնելով լոկ այսպես կոչվող «վետո»-յի իրավունք, այսինքն, պարլամենտի կողմից ընդունված օրինագծերի չհաստատելու իրավունք։ Ժամանակի ընթացքում թագավորն ավելի ու ավելի յեր խոնարհվում պարլամենտի հզորության առաջ և հազվադեպ էր դիմում այդ իրավունքին։ Մյուս կողմից՝ պարլամենտարիզմը տանում էր դեպի ներքին պալատի գերակշռությունը՝ վերին պալատի հանդեպ։

Պառլամենտի դասակարգային քաղաքականության փայլուն օրինակ հանդիսացան այսպես կոչված «Հացի օրենքները», վորոնք Անգլիայում սկսեցին կիրառել Ֆրանսիայի հետ ունեցած պատերազմի վերջանալուց հետո (1815 թ.)։ Ֆրանսիայի հետ ունեցած պատերազմի հետևանքով, դադարելով հացի իմպորտը (ներմուծումը), գները բարձրացան։ Հողատերերը մեծ յեկամուտներ եյին ստանում. Հետագայում նրանք վախենում եյին անգլիական շուկայում ռուսական եժան հացի մրցման հետևանքով գների անկումից և իրենց յեկամուտների կրճատումից։ Ուստի պառլամենտը մի օրենք ընդունեց, ըստ վորի արտասահմանից թույլ եր տրվում հաց ներմուծել լոկ այն դեպքում, յերբ տեղական հացի գինը վորոշ աստիճանից բարձրանում եր։ Օրենքը չեր բխում արդյունաբերական բուրժուազիայի շահերից, վորն ստիպված եր հացի թանկության պատճառով ավելացնել բանվորների աշխատավարձը։ Արդյունաբերական բուրժուազիան պրոլետարիատին յեռանդով քաշում եր դեպի պայքար՝ ընդդեմ հացի օրենքների։ Սակայն բանվորները շուտով հասկացան, վոր հացի օրենքների վերացումը չափազանց շահավետ ե բուրժուազիայի համար, քանի վոր հացի եժանացումը հնարավորություն կտա իջեցնել բանվորների աշխատավարձը, դրա համար ել հրաժարվեցին բուրժուական նախագծի պաշտպանությունից։

Այսպիսով անգլիական բուրժուազիան 19-րդ դար. առաջին կեսին քաղաքական կռվի յեր պատրաստվում հանուն ընտրական իրավունքի։ Այն ժամանակ Անգլիայում քաղաքական խոշոր յերկու կուսակցություն կար, վորոնք արտահայտում եյին յերկու հիմնական դասակարգերի շահերը։ «Տորի», հողատերերի շահերի ներկայացուցիչները և «վիգեր» գործնական բուրժուազիայի ներկայացուցիչները. այդ կուսակցություններն իրենց անունն ստացել եյին հայհոյական անարգումից, վոր արտահայտում եյին փոխադարձաբար քաղաքական հակառակորդները։ («Տորի»՝ ավազակներ, «վիգի» դավաճլրներ)։ Ճիշտ ե, յերկու դասակարգերը աստիճանաբար սկսել եյին ձուլվել, կազմելով միջին շերտեր, վորոնք կազմված եյին արդյունաբերական գործունեյությամբ զբաղվող հողատերերից և գյուղացիական հողաբաժիններ գնած կապիտալիստներից, այդ միջին շերտերը միանում եյին այս կամ այն կուսակցության, նայած վորի շահերն եր նրանց մոտ գերակշռում։ Վերջապես՝ շատ թե քիչ առաջավոր բուրժուական ինտելիգենցիան կազմեց յերրորդ՝ արմատականների կուսակցությունը (ծայր ռեֆորմների կուսակցություն), վորը հետագայում սկսեց մոտենալ բան. շարժման։

Այս պատկերն եյին ներկայացնում քաղաքական խմբակներն Անգլիայում պառլամենտական ռեֆորմի շուրջը տեղի ունեցող պայքարի սկզբին։ Պայքարը կապակցվեց 1815 թվի արդյունաբերական մեծ ճգնաժամին և հացի օրենքները սահմանելուն։ Օգտվելով բանվորների դժգոհությունից, արդյունաբերական բուրժուազիան նրանց իր կողմը գրավեց։ Պայքարը արտահայտվեց բազմաթիվ միտինգների ձևով, վորոնք ընդգրկեցին վողջ Անգլիան և ռեֆորմներ պահանջելով՝ բազմաթիվ պետիցիաներ ուղարկեցին պառլամենտ։ Պառլամենտը բոլոր պետիցիաները մերժեց։ Յերկիրը դրան պատասխանեց միտինգների մի նոր ալիքով վոր յերբեմն ահեղ բնույթ եր ընդունում։ Ամենաբազմամարդ միտինգներից մեկը Մանչեստերում ցրվեց զինված ուժով, վորի հետևանքով սպանվեցին 15 և վիրավորվեցին 400 մարդ (1819 թ.)։ Այդ դեպքին հետևող զայրույթի պոռթկմանը կառավարությունը պատասխանեց դաժան վորոշումներով, վորոնցով գրեթե վերացվեց հավաքույթների իրավունքը, ինչպես ժողովուրդն եր ասում՝ «բերանը փակելու օրենքներ» առաջացան։

Այդ բոլոր միտինգներում ամենից յեռանդուն մասնակցում եր պրոլետարիատը, վորը գնում եր բուրժուազիայի հետևից ընտրական ռեֆորմի պայքարի համար։

Պայքարը տևեց մի քանի տարի։ Շատ անգամ պառլամենտ բիլլ (օրինագիծ) մտցվեց և ամեն անգամ մերժվում եր կամ վերին կամ ներքին պալատի կողմից։ Յերբեմն թվում եր, վոր Անգլիան ել Ֆրանսիայի պես պետք ե հեղափոխություն ապրի։

Վերջապես պայքարն ավարտվեց 1832 թ. արդյունաբերական բուրժուազիայի հաղթանակով։ Վերջիվերջո պառլամենտն ստիպված յեղավ այնպիսի բիլլ ընդունել, վորով իր մեջ եր առնում խոշոր և միջին բուրժուազիային։ 1832 թ. ընտրական իրավունքը վոչնչացրեց 56 «փտած վայրեր», 66 տեղ հատկացվեց նոր արդյունաբերական կենտրոններին և գյուղական շրջաններին. փոքր թվով տեղեր ստացան նաև Իռլանդիան և Շոտլանդիան։ Քաղաքներում միանման ընտրական ցենզ վորոշվեց.—ընտրական իրավունք ստացան տնատերերն ու կապալով տներ վերցնողները, վորոնք մաքուր յեկամուտ եյին ստանում 10 ֆունտ ստերլինգից վոչ պակաս (1 ֆ. ստերլ. = 10 միջպատերազմյան ռուբլուն)։ Պրոլետարիատն իր ուսերի վրա տանելով քաղաքական պայքարի ամբողջ ծանրությունը, վերստին ընտրական իրավունքներից զրկված մնաց։ Բուրժուազիան իշխանությունը բաժանելով հողատերերի հետ, դրանով բավարարվեց։ Պառլամենտում հայտարարվեց—«Անգլիայի սեռական կազմը կատարելության հասավ։ Յերկիրը նոր բարեփոխությունների կարիք չի զգում։ Ռեֆորմները վերջացան»։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Մասսաների աղքատացման աստիճանական ավելացումը պետք ե իր վրա դարձներ բուրժուական կառավարության ուշադրությունը։ Ճիշտ ե, չքավորներն օգնություն եյին ստանում ծխերից, 16-րդ դարի կեսերին հրատարակված օրենքի հիման վրա։ Այդ օրենքի համաձայն ծխական չքավորների խնամակալությունը պետք ե աշխատանքի անընդունակներին և գործազուրկներին նպաստ տար, վորբերին վորբանոցներում, իսկ ծերերին և հաշմանդամներին անկելանոցներում տեղավորեր։ Բացի այդ, խնամակալությունները չնչին աշխատավարձ ստացողներին պետք ե վորոշ դրամական օժանդակություն ցույց տային։ Դրա համար միջոցները հավաքվում եյին ծխի ունեվոր բնակչու-

թյունից։ Առաջ նման ծախսերը ունեվորներին առանձնապես ծանր չեյին թվում. քանի վոր խնամակալները համեմատաբար սահմանափակ չքավորների համար եյին ոժանդակություն խնդրում։ Գյուղացիության պրոլետարիզացիայի և բանվորության մեջ անչափ տարածված գործազրկության հետևանքով՝ աղքատների, հիվանդների, անաշխատունակների և ընդհանրապես ապրուստի վոչ մի միջոց չունեցողների հոծ զանգվածներ հանդես յեկան։ Բուրժուազիան չցանկանալով նրանց ապրուստի ծախսերն իր վրա վերցնել, դիմեց այդ որենքի վերացման։ Ամեն մի կարիքավոր պետք է դիմեր չքավորական տներին։ 1834 թվին աշխատանքի տների մասին մի որենք հրատարակվեց։ Այդ որենքին նախորդեցին հասարակական մտքի նախապատրաստման աշխատանքները, վոր ավելորդ բարեգործությունը մեծապես վնասում է հասարակության հենց նրանով, վոր ձրիակերություն և ծուլություն է զարգացնում։

Որենքի նպատակը համարվում է ժողովրդին աշխատանքի սովորեցնելը։ Այս նպատակին հասնելու համար ստեղծվում են հատուկ աշխատանքի տներ, ուր պետք է տեղավորվեյին աշխատանք չունեցող աշխատունակ բանվորները (անաշխատունակներին նպաստ տալը մնում եր ծխական խնամակալության ձեռքին)։

Այդ տները «Չքավորների բաստիլիա» կոչումն ստացան։ Վորպեսզի բանվորները չձգտեյին բուրժուազիայի բարեգործության, աշխատանքի տներում սոսկալի պայմաններ ստեղծեցին, իրենց որենքի հեղինակները խոստովանում եյին, վոր նպատակ են դրել աշխատանքի տները բանտի նման դարձնել։ Այդ բանին հասնում եյին դաժան ռեժիմի, Ֆիզիքական ծանր աշխատանքի, վատ կերակուրի, և նույնիսկ բանվորին այնտեղ ընդունելու ձևով. (բանվորներին այնտեղ կալանավորների դեսա եյին հագցնում)։ Հետևանքներն արդարացրին բուրժուազիայի հույսերը.—բանվորները սարսափում եյին աշխատանքի տներից և ավելի շուտ գերադասում եյին քաղցի ու չքավորության մատնվել, քան այնտեղ գնալ աշխատելու։

Այդ միջոցառումների հետևանքով մեծացավ գործազուրկների բանակը, ստեղծվում եյին արդյունաբերական կապիտալիստական անհրաժեշտ ազատ բանվորական զանգվածներ (աշխատանքի պահեստի բանակ)։

ՌՈԲԵՐՏ ՈՈՒԵՆ ՅԵՎ ՆՐԱ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Առաջավոր բուրժուազիայից վոմանք մտածում եյին բանվորների դժվարին դրության և նրանց ոգնելու միջոցների մասին։ Դրա փայլուն որինակը հանդիսանում է Նյու-լանորկի (Շոտլանդիա) խոշոր չթի ֆաբրիկատերերից մեկը՝ Ռոբերտ Ոուենը (1771–1858)։ Ունենալով մանր բուրժուական ծագում (նրա հայրը թամբագործ եր), նա նախքան ֆաբրիկանտների շարքն անցնելը, ճաշակել եր վարձու աշխատանքի «հաճույքները»։ Նրա ֆաբրիկայի բանվորների դրությունն իր ժամանակի համար տիպիկ եր։ Ծանր յերկարատև աշխատանք, կեղտ, կոպտություն, անբարոյականություն, փոքր հասակից աշխատող մանուկների մեծ տոկոս.—այս բոլորը զարմացնում եր Ոուենին։ Նա խորապես մտածում եր այդ բոլորի պատճառների շուրջը և, վերջապես, այն յեզրակացության հանգեց, վոր մարդու անձնավորությունը կազմակերպվում է դաստիարակության և շրջապատի ազդեցության շնորհիվ։ Յերեխաներին պետք է մեծ խնամքով դաստիարակել. սովորական պատիժները մեղավորներին չեն ուղղում, դրդում են նրանց դեպի այլ

մեղանչումներ ու վոճրագործություններ։ Դրա փոխարեն մարդուն պետք է դնել լավ պայմանների մեջ, վորոնք կարողանան նրան տանել դեպի բարոյական վերածնություն։ Իր այդ կարծիքներն Ոուենը կարողացավ իրագործել. իր ֆաբրիկայում, չնայած այն խոչընդոտներին, վոր հանդիպանում եր իր ընկերակիցների և նույնիսկ բանվորների կողմից։ Բանվորներն սկզբում նրան իբրև ֆաբրիկատիրոջ բավական կասկածանքով եյին նայում։ Փորձը փայլուն կերպով ապացուցեց Ոուենի յենթադրությունների ճշտությունը։ Մի քանի տարի անց դժվար եր ճանաչել նրա ֆաբրիկան։ Բոլոր յերեխաներին նա հեռացրեց աշխատանքից և նրանց համար բացեց դպրոցներ լավ ուսուցիչների մեծ շտատով։ Հասակավոր բանվորների համար բացեց յերեկոյան դպրոցներ և ընթերցարաններ. աշխատավարձը բարձրացրեց, իսկ բանվորական որվա տևողությունը կրճատեց։ Բանվորների համար կազմակերպեց հանրակացարաններ ու ճաշարաններ. բացի այդ, բոլոր բանվորները մասն եյին ստանում ձեռնարկության վաստակից։ Հետևանքն այն յեղավ, վոր բարձրացավ աշխատանքի արտադրողականությունն ու վորակը և ֆաբրիկան սկսեց մեծ վաստակներ ստանալ։ Այդ հաջողություններից թևավորված, Ոուենը ձգտում եր բոլոր ձեռնարկուներին համոզել իր տեսակետների ճիշտ լինելը, բայց լիակատար անհաջողության հանդիպեց։

Ոուենի հետագա խոհերը նրան հանգեցրին այն մտքին, վոր հասարակության վողջ կառուցվածքն ունի հիմնական բացեր։ Նրա կարծիքով՝ այդ կառուցվածքը պետք է փոխել, վերացնել հողի, արտադրության գործիքների մասնավոր սեփականությունը։ Նոր հասարակությունը պետք է կառուցված լինի ընկերական հիմունքներով։

Անհրաժեշտ է կազմակերպել փոքր յերկրագործական կոմունաներ, ուր արդյունաբերությունը սերտ կապված լինելով յերկրագործության հետ, կատարի միայն յերկրորդական դեր։ Ոուենը ղեկավար մասնակցություն եր ցույց տալիս անգլիական արհեստակցական և կոոպերատիվ շարժման մեջ։ Նա սխալ կերպով յենթադրում եր, վոր կապիտալիստական հասարակության չարիքների պատճառը պետք է փնտրել շրջանառության մեջ, այսինքն միջոցների շահագործման՝ թե արտադրողների և թե սպառողների։ Այդ շահագործման հաջողությունը նպաստում է փողի սիստեմը՝ փողը արժեքի արհեստական չափանիշ հանդիսանալով, ծածկում է աշխատավորի արտադրանքի ռեալ աշխատանքային արժեքը։ Վորպեսզի այդ չարիքը վոչնչացվի, Ոուենը նախագծում եր փոխանակային շուկաների կազմակերպման խնդիրը. այդ շուկաներն ընդունելով աշխատավորներից ապրանքը նրանց աշխատանքային գնահատումով, փոխարենը պետք է բոներ հատուցեյին։ Ոուենի յենթադրությամբ, այդ բոներով շուկայի պահեստներից կարելի յե ստանալ հարկավոր ապրանքները՝ նրանցում պարունակող աշխատանքի քանակի համեմատ։ Փոխանակային շուկան չնայած սկզբի հաջողության, շուտով քայքայվեց, քանի վոր կապիտալիստական տնտեսության գոյության պայմաններում, ուտոպիա յե շրջանառության կազմակերպման գործը։

Ոուենը գործնականում ձգտում եր կենսագործել սպառողական կոոպերացիան, վորն այն ժամանակվանից սկսած պատվավորվեց անգլիական բանվորության մեջ և Ոուենը «կոոպերացիայի հայրը» կոչմանն արժանացավ։ Սակայն Ոուենի պրակտիկ գործունեյությունը դրանով չվերջացավ. նա միացավ բանվորական պրոֆեսիոնալ շարժմանը, ձգտելով նրան գցել խաղաղ հունի մեջ։

Նրա ազդեցությամբ 30-ական թվականներին տրեդյունիոնները կարճ ժամանակով միացան մի վիթխարի միության մեջ և նախագահ ընտրեցին Օուենին:

Ռոբերտ Օուենի նշանակությունն այն է, որ նա առաջադրեց դաստիարակության նոր ձևեր և ձգտում էր հասարակությունը կառուցել սոցիալիզմի հիմունքներով, այսինքն, հանրայնացնել արտադրության միջոցները: Բայց Օուենը չարաչար սխալվում էր, երբ հավատում էր, թե խաղաղ, առանց ցնցումների հնարավոր է սոցիալիզմի անցնել և երբ հույս էր տածում, թե հնարավոր է մանր սոցիալիստական կղզիներ ստեղծել կապիտալիստական հսկայական ծովի մեջ: Այդպիսի սոցիալիզմը սովորաբար կոչվում է ուտոպիական: Այդ անունը վերցված է 16-րդ դարում անգլիական գրող և պետական գործիչ Թոմաս Մորի աշխատությունից (1478–1535), որը նկարագրել է սոցիալիստական հասարակությունն վերացական «Ուտոպիա» կղզում: Այստեղից էլ բոլոր անիրագործելի, գիտական տվյալներով չհիմնավորված յենթադրությունները կոչվում են ուտոպիական:

ՉԱՐՏԻԶՄ

Այն դժվարին կացությունը, որի մեջ գտնվում էր Անգլիայի պրոլետարիատը, անխուսափելիորեն պետք է առաջ բերեր մասսայական բանվորական շարժումներ: Բանվորները հույս էին տածում, թե իրենց դրությունը կարող են բարելավել, երբ մուտք ունենան պարլամենտ, ահա ինչու նրանք միացան արդյունաբերական բուրժուազիայի պայքարին՝ պարլամենտական ռեֆորմների խնդրում: Բայց բանվորների ջանքերով ձեռք բերած 1832 թ. այդ ռեֆորմը պարլամենտի դռները բացեց լոկ բուրժուազիայի լայն խավերի համար: Պրոլետարիատի աղքատության ու չքավորության հետ մեկտեղ բուրժուազիան ցնծում էր իր հաղթանակով: Օգնություն ստանալու համար շնորհակալության փոխարեն նա պրոլետարիատին աշխատանքի տներով պարգևատրեց: Այդ արդեն բանվորության համար քաղաքական ուսանելի դաս հանդիսացավ:

Ճիշտ է, պրոլետարիատի գործադուլային ու արհեստակցական ուժեղ շարժումները, որ տեղի ունեցան 19-րդ դարի 30-ական թվականներին, ստիպեցին բուրժուազիային հիմք դնել աշխատանքի պաշտպանության առաջին գործարանային օրենսդրության: Կազմվեց ֆաբրիկային ինսպեկցիա, արգելվեց երեխաների և պատանիների գիշերային աշխատանքը և նրանց ցերեկվա աշխատանքն սահմանափակվեց 8 ժամով երեխաների և 12 ժամով՝ պատանիների համար: Բայց այդ մի կաթիլ էր բանվորական մասսաների դժբախտությունների ծովի մեջ: Նրանց անմխիթար կացությունը ժամանակ առ ժամանակ ավելի էր վատթարանում հաճախակի կրկնվող ճգնաժամերի հետևանքով, որոնք փողոց էին նետում բանվորների մեծաքանակ խմբերը: Ճգնաժամերը, որ 19-րդ դարի առաջին կեսին կրկնվում էին գրեթե յուրաքանչյուր տասնամյակում, նոր եպոխայի չափազանց բնորոշ հատկությունն էին հանդիսանում: Նրանք առաջանում էին ապրանքների գերարտադրության հետևանքով, կապիտալիստները տարված էին մեծամեծ շահույթներ ստանալու տենչանքով, նրանք ջանում էին լոկ արտադրությունը մեծացնել և հարկավոր ուշադրություն չէին դարձնում շուկայի գնողունակության վրա: Շուկայի՝ ապրանքներով չափից դուրս հագեցումը տանում էր դեպի գների խիստ անկում և գործարանների ու ֆաբրիկաների դադարեցում: Պրոլետարիատի համար սկսվում էր գործազրկության ու քաղցի դժվարին ժամանակ: Բայց մի որոշ ժամանակ անց, արդյունաբերությունը կենդանանում էր և գործարաններն ու ֆաբրիկաները վերստին իրենց դռները բաց էին անում ու իրենց մեջ ներգրավում գործազուրկների մեծ մասը: Ապրանքների գների բարձրանալու հետևանքով որոշ չափով բարձրանում էր և աշխատանքի վարձը: Այդ շրջանը բանվորների շունչ քաշելու շրջանն էր հանդիսանում, որն ամեն մի րոպե կարող էր նորից աղքատության ու սովի փոխվել: Նման ճգնաժամերի ֆոնի վրա զարգանում էր 30-ական և 40-ական թվականների մասսայական շարժումները: Այսպես 1836 թվի ճգնաժամը բանվորական շարժման վերելք ստեղծեց, որն ամենուրեք տնտեսական պահանջներից փոխանցվում և ձևավորվում էր որպես քաղաքական շարժում:

Դեռ 1836 թվին Լոնդոնում կազմակերպվել էր համեմատաբար լավ վարձատրվող բանվորների, այսպես կոչված՝ Լոնդոնի ասոցիացիան (միավորում, ընկերությունը): Ասոցիացիայի գլուխ կանգնած էր ատաղձագործ Լովետը, որն Օուենի բազմաթիվ հետևորդներից մեկն էր: Ասոցիացիան ձգտում էր «օրինական բոլոր միջոցներով հասարակության բոլոր դասակարգերի համար իրավունքներ ձեռք բերել»: «Օրինական միջոցներ» ասելով Ասոցիացիան հասկանում էր՝ պարլամենտին պետիցիաներ ներկայացնելը և բանվորների շրջանում դրա համար պրոպագանդ անելը: Լովետն ընդհանուր ընտրական իրավունքի մասին յերազելով՝ պարլամենտ ներկայացնելու համար կազմեց մի պետիցիա, որն 1836 թ. սարսափելի ճգնաժամից հետո իր շուրջը հավաքեց մեծաքանակ բանվորական մասսաներ: Բանվորները դեռ հավատում էին, որ պարլեմենտի միջոցով հնարավոր է իրենց դրությունը բարելավել: 1837 թ. գարնանից սկսած, ամբողջ Անգլիայում տարածվեց բազմամարդ միտինգների ալիքը: Միտինգները պահանջում էին, որ պարլամենտն ընդունի պետիցիան, այդ «ժողովրդական խարտիան», որտեղից էլ ամբողջ շարժումը կոչվեց չարտիզմ (անգլերեն «չարտեր» խարտիա, խնդրագիր). շարժման մեջ ներգրավվեց ամբողջ Անգլիան:

Հյուսիսային արդյունաբերական շրջաններում հսկայական միտինգներ ու ցույցեր էին տեղի ունենում, ուր քննության էր առնվում պետիցիան. Լովետի պետիցիան վեց հիմնական կետ ուներ. նա պահանջում էր բոլոր չափահաս տղամարդկանց համար ընդհանուր ընտրական իրավունք. ունեցվածքային ցենզի վերացում՝ որպեսզի յուրաքանչյուր ընտրող հնարավորություն ունենա նաև ընտրվել. ընտրական շրջանների հավասարեցում՝ որպեսզի ապահովվի հավասար ներկայացուցչություն. գաղտնի քվեարկություն, որով կվերացվի թե կաշառքը և թե բուրժուազիայի կողմից ահ ներշնչելը: Պարլամենտի տարեկան վերընտրություն և պատգամավորների ռոճիկով ապահովելը, առանց որի բանվորները պարլամենտի նիստերին չէին կարող մասնակցել (բուրժուազիայի պատգամավորներն իբրև հարուստներ ռոճիկ չէին ստանում):

Էնգելսի ասելով «իր ծագման սկզբից՝ 1835 թ., չարտիզմը ճիշտ է, որ յեղել է գլխավորապես բանվորական շարժում, բայց այն ժամանակ նա դեռ կտրականապես չէր բաժանվել արմատական մանր բուրժուազիայից: Բանվորների արմատականությունը, բուրժուազիայի արմատականության հետ ձեռք ձեռքի տված էր ընթանում: Խարտիան յերկուսի համար էլ փորձաքար էր, և նրանք ամեն տարի միասին կազմում էին «Ազգային կոնվենտներ» և թվում էր, թե մի կուսակցություն էին

կալում։ Մանր բուրժուազիան մոտավորապես այդ ժամանակներում հուսախաբվելով ռեֆորմի բիլլի հետևանքների մեջ և 1837–39 թվերի տնտեսական ճգնաժման հետևանքով վնասներ կրելով, չափազանց մարտականորեն և արյունռուշտ էր տրամադրված, ուստի չարտիստների ուժեղ ագիտացիան նրա հոգուն շատ մոտ էր... դիմում էին ժողովրդին կոչ անելով զինվել, նույնիսկ ապստամբել»։

Չարտիստների պահանջը պաշտպանում էր Բիրմենհամի բուրժուական «քաղաքական միության»-ը, որի գլուխ կանգնած էր բանկիր Աթվուդը։ Շարժմանը միացավ նույնպես Անգլիայի հյուսիսի պրոլետարիատը, ուր իռլանդացի Օ՛Կոննորը՝ չարտիզմի առաջնորդներից մեկը, կազմակերպեց «Հյուսիսային մեծ միություն»-ը։ Բանվորության շրջանում նշանակալից ազդեցություն էին ձեռք բերել նաև ռեակցիոն քարոզիչները, վորոնք ատելով կապիտալիզմը և անխնա մերակելով բուրժուական կարգերը, կոչ էին անում բանվորներին դեպի հետ, տարածում էին «յեկեղեցու, գահի և խրճիթների համար», կոչ էին անում վերականգնել անցյալը, վոր նրանք իրենց ճառերում ամենից գովաբանում էին։ Նրանք դրդում էին բանվորներին գործողությունների դիմել ընդդեմ կառավարության և հեղափոխական շարժման ազդեցության տակ քարոզում էին տապալել միապետությունը «մինչև ազնիվ չքավորը ազնիվ աշխատանքի դիմաց կստանա իր գոյության ապահովումը»։ Միտինգներից շատերում բազմաթիվ պետիցիաներ էին ընդունում բանվորների տնտեսական դրության բարելավման մասին։ Ագիտացիան մեծ վոգևորությամբ էր տարվում։ Ջահերով զինված բազմաթիվ բանվորների գիշերային միտինգները ուժեղացնում էին բուրժուազիայի շարքերում գոյություն ունեցող պանիկան։

Անգլիայի հյուսիսում չէին ընդհատվում բանվորների և վոստիկանության ու զորքի միջև տեղի ունեցող ընդհարումները, ապստամբություններ էին պատրաստվում։

Միտինգներում պատգամավորներ էին ընտրում «աշխատավոր դասակարգերի ազգային կոնվենտ»-ի համար, վորը չարտիստների պետիցին պետք է հանձներ պարլամենտին և անհաջողության դեպքում համապատասխան միջոցների պետք է դիմեր։

1839 թ. փետրվարի 4-ին Լոնդոնում հավաքված կոնվենտում առաջ յեկավ յերկու հոսանք, վորոնք արտացոլում էին չարտիզմի մեջ յեղած զանազան ռեակցիոն, ոպորտունիստական և հեղափոխական խմբավորումների տրամադրությունները։ Մի հոսանքի կողմնակիցները առաջարկում էին խաղաղ միջոցներով ու ճանապարհով հասնել իրենց ծրագրի իրագործմանը։ Դրանք «բարոյական ուժի» պաշտպաններն էին, վորոնք գործում էին այն համոզմամբ, վոր բանվորներին պետք է հետ կանգնեցնել հեղափոխական ցելույթներից։ Մյուս հոսանքը պնդում էր տիրող դասակարգերի վերաբերյալ բռնի ուժ գործադրելու անհրաժեշտությունը և առաջադրում էր զինված ցելույթ կազմակերպել ընդդեմ կառավարության։

Դրանք «Ֆիզիկական ուժի» ներկայացուցիչներն էին։ Ֆիզիկական ուժի գործադրման կողմնակիցներն էին պրոլետարիատի ներկայացուցիչները, մինչ այս բարոյական ուժի սկզբունքները պաշտպանում էին կոնվենտի բուրժուական ու մանր բուրժուական պատգամավորները։ Մեծամասնությունը «բանվորական ուժի» կողմն էր։ Բուրժուազիայի ներկայացուցիչները ստիպված էին հեռանալ կոնվենտից։

Կոնվենտը մի շարք առաջարկներ ընդունեց, վորոնց իրագործումը պետք է ապահովեր չարտիզմի հաջողությունը։

Նախատեսված միջոցառումները հետևյալներն էին՝ բանկերից և

խնայողական դրամարկղներից միաժամանակ հետ վերցնել մուծած դրամները և փոխել վոսկով, հայտարարել «սրբազան ամիս», այսինքն ընդհանուր գործադուլի միամսյակ, վորի ընթացքում բոլոր աշխատանքները պետք է կանգ առնեն միաժամանակ։ 1839 թ. օգոստոսի 12-ին նշանակված «սրբազան ամիսը» կոնվենտը հետաձգեց բանվորական միտինգներում անցկացնելու նպատակով։ Այն դանդաղկոտությունը «սրբազան ամսի» լուծարքի յենթարկվելու պատճառ դարձավ։

Կոնվենտի դեմ ուղղած բուրժուազիայի պայքարը պատճառ դարձավ նրա Լոնդոնից Բիրմենհամ տեղափոխելուն։ Սակայն ավելի մեծ թափով այստեղ ևս շարունակվեց չարտիստների հետապնդումն ու ձերբակալումները։

Այդ հետապնդումներին Բիրմենհամի և Ուելսի բանվորները պատասխանեցին ապստամբությամբ։ Ապստամբները ջարդում ու այրում էին բուրժուազիայի տները, զինված մասսաներն աշխատում էին բանտերից ազատել ձերբակալված չարտիստներին։

Ապստամբությունները բանվորների պարտությամբ վերջացան։ Չարտիստների առաջնորդներից յերեքը՝ Ջոն Ֆրոստը, Վիլյամը և Ջոնսը կախաղան բարձրացվեցին։ Յերբ պարլամենտը մերժեց 1½ միլիոն բանվորների ստորագրած պետիցիան, կոնվենտը փորձեց «սրբազան ամիս» հայտարարել, սակայն արդեն ուշ էր՝ կառավարական տերրորը գլխատել էր չարտիստական շարժումը։ Առաջնորդները ձերբակալված էին։

Այսպես վերջացավ շարժման առաջին փուլը, վորը ցույց տվեց բանվորական շարժման ուժն ու ինքնուրույնությունը, վորն ազատվել էր բանվորների դասակարգային պայքարի խոչընդոտ հանդիսացող բուրժուական արմատականների ազդեցությունից։

Չարտիզմի առաջին ալիքի անհաջողությունը բացատրվում է նրանով, վոր այդ շարժումը միացրել էր պայքարի մասին տարբեր կարծիք ու տարբեր շահեր ունեցող բազմազան խմբեր։ Շարժմանը մասնակցում էին միջին ու մանր բուրժուազիայի փոքրաթիվ խումբ և կապիտալիզմի նախնական զարգացման եպոխայի, իր սոցիալական կազմով տակավին խայտաբղետ պրոլետարիատը։

Գյուղացիական ու արհեստավորական Անգլիան՝ արդյունաբերական կենտրոններին դեռևս մատակարարում էր քայքայված գյուղացիների ու արհեստավորների մասսաներ։ Բայց միաժամանակ կապիտալիզմի զարգացման ընթացքում կազմվեցին արդյունաբերական բանվորների կադրեր և հանդես յեկավ տնտեսապես ավելի ապահով բանվոր դասակարգի վորակավոր վերնախավը՝ բանվորական արիստոկրատիան։ Այդ վերնախավը և դեպի նա հակված արմատական կուսակցության անդամները, վորոնք ներկայացուցիչներն էին միջին և մանր բուրժուազիայի, կազմեցին չարտիզմի աջ թևը։ Արմատականների ղեկավարները պահանջում էին սոցիալական խնդիրներն իսպառ հանել, իսկ Լովետը, վոր բանվորական վերնախավի գլխավորողն էր, առաջարկում էր կենտրոնացնել բան. տների փակելու պահանջը։ Չարտիստների վերջնական նպատակն էր իրագործել ընդհանուր ընտրական իրավունքը։ Տակտիկայի խնդիրներում նրանք հակառակ էին վճռական ցելույթների և պայքարի խաղաղ միջոցներ էին առաջարկում, «բարոյական ազդեցության» ճանապարհով՝ միտինգների և պետիցիաների միջոցով ազդել պարլամենտի վրա։

Չարտիստների ձախ թևն էլ միատարր չէր։ Ծրագրային խնդիրներում ձախ թևը, աջերի հակառակ, իր պայքարը չէր սահմանափա-

կում սոսկ քաղաքական իրավունքների համար տարվող պայքարով, այլ առաջադրում էր սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրներ, ինչպիսիք էին՝ հարկերի իջեցումը, չքավորների օրենքի փոփոխությունը, պրոֆեսիոնալ միությունների ազատ գործունեությունը. ձախ թևի ներկայացուցիչների մի քանի ղեկավարներ ավելի արմատական պահանջներ էին առաջադրում, ինչպես օրինակ, յեկեղեցու բաժանումը պետությունից, ընդհանուր կրթություն, 8 ժամյա բանվորական օր, մշտական բանակի վերացում և այլն:

Շարժման վերջին նպատակի մասին ձախ թևի մեջ գոյություն ուներ տարակարծիքություն:

Գործարանային բանվորները Օ'Բրայենի կարծիքներն էին բաժանում, վորը հողի ազգայնացման և արտադրության գործիքների մասնավոր սեփականության վերացման խնդիրն էր առաջադրում, իբրև մի միջոց, վորի ոգնությամբ կարելի կլինի փոխել հասարակական հարաբերության վողջ սիստեմը: Դեռ վերջնականապես չքայքայված ջուլհակների ղեկավարն էր, չարտիստների առաջնորդներից ամենաժողովրդականներից մեկը՝ Օ'կոննորը: Նա ձգտում էր ընդհանուր ընտրական իրավունքի լոկ նրա համար, վորպեսզի վոչնչացնի կապիտալիզմը և վերածնելով մանր գյուղացիական տնտեսությունը, բանվորներին հետ տանի դեպի հողը: Նա կոմունիզմի թշնամի յեր: Մասնավոր սեփականության կողմնակից հանդիսանալով, Օ'կոննորն առաջարկում էր բանվորների համար մանր հողաբաժիններ գնել և նրանց վրա անհատական տնտեսություն ստեղծել, թողնելով յերկրագործական գործիքների կոլեկտիվ ոգտագործումը:

Արդյունաբերական պրոլետարիատի մի փոքր խմբակ, վորն իր դասակարգային շահերը ճիշտ էր ըմբռնում, գլխավորում էյին Հարնեյն ու Ջոնսը: Արհեստավորների և գյուղատնտեսական բանվորների քայքայված մասսան գնում էր ամենածայրահեղ լոզունգների հետևից, վորոնցով առաջադրվում էր կապիտալիզմի կործանումը և հետ դարձը դեպի գյուղատնտեսական Անգլիա: Չարտիստական շարժման այս ակտիվ ու բազմաթիվ կադրերի տեսակետների արտահայտիչը հանդիսանում էր նախկին քահանա Ստիֆենսը, վորն ատելով կապիտալիստական Անգլիան, միացավ շարժման, լոկ այն պատճառով, վոր շարժումն ուղղված էր բուրժուազիայի դեմ:

Նոր Անգլիան կործանելու հեղափոխական լոզունգի տակ, Ստիֆենսը հետադիմական ծրագիր էր առաջարկում՝ հետ դարձ դեպի «Հին Անգլիա», վորը նվիրված էր յեկեղեցուն և պետությանը: Նրա պերճախոսությունը, ատելությունը դեպի գոյություն ունեցող կարգերը, ծայրահեղ կոչերը, դեպի Ստիֆենսն էյին քաշում բազմաթիվ թշվառներին:

Չարտիստների տարաձայնությունները առանձնապես յերևան յեկան կոնվենտում: Աշխատանքի մեթոդների մասին ներքին պայքարը կոնվենտի ուժերը ջլատեց: Վոչինչ չկարողանալով անել, շարժման անկումից հետո 1839 թ. կոնվենտը ցրվեց:

Չարտիզմի յերկրորդ ալիքը, բարձրացավ 1841—1842 թվերի սոսկալի ճգնաժամի կապակցությամբ: Տասնյակ հազարավոր բանվորներ մնացին անգործ, մնացածների ել աշխատավարձն իջավ 55 տոկոսով: Այդ տարիների քաղցից առաջացած հուզումները շարժման վերսկսվելու համար ահազանգ հանդիսացան:

Բաժան-բաժան յեղած չարտիստական խմբակները, վորոնցից ար-

դեն հեռացել էյին արմատական կուսակցության ներկայացուցիչները, միացան և կազմեցին «Չարտիստական ազգային ասոցիացիան», վորի առաջնորդն Օ'Կոննորը դարձավ: Ասոցիացիան նոր պետիցիա մշակեց, վորը կրկնում էր առաջինի վեց կետերը, բայց կազմված էր ավելի խիստ տոնով: Այդ պետիցիան պայծառությամբ հակադրում էր բարձր դասակարգերի հարստությունը պրոլետարիատի աղքատության: Պետիցիայի մեջ տեղ էր տրվել նաև 10 ժամյա բանվորական օրվա պահանջին, չքավորների մասին օրենքի վերացման, գործարանային օրենսդրության բարելավման: Շարժումը լայն թափ ստացավ և ընդգրկեց արդյունաբերական հյուսիսն ու յերկրագործական հարավը: 1842 թ. մայիսի 2-ին, յերկրորդ պետիցիան, վորի տակ ստորագրել էյին 3 միլիոնից ավելի մարդ, ներկայացվեց պարլամենտ: Բայց սա յել առաջինի պես ձայների մեծամասնությամբ տապալվեց:

Հանդարտության ժամանակաշրջանը, վորը տևեց 1843-ից մինչև 1846 թիվը, նշանակալից էր նրանով, վոր այդ ժամանակ առաջ յեկավ բանվորական կոոպերատիվ շարժումը: 1844 թ. այսպես կոչված «Ռոչդելյան պիոներները» Ռոչդել փոքրիկ քաղաքում հիմք դրին առաջին կոոպերատիվ ընկերության, վորը հիմնվեց Ռոբերտ Ոուենի իդեայի համաձայն, բայց առանց ուտոպիզմի: Այդ ժամանակվանից սկսվեց Անգլիայի կոոպերատիվ շարժման աճումը: Բանվորները մեծ հաղթություն տարան գործարանային օրենսդրության բնագավառում. 1843 թվին արգելվեց աշխատանքը գետնի տակ, նույնպես 10 տարեկանից պակաս տղաների: 1847 թվին պարլամենտը ընդունեց տեքստիլ արդյունաբերության մեջ աշխատող կանանց և պատանիների համար 10 ժամյա բանվորական օրվա բիլլը. այդ օրենքը կանանց և պատանիների հետ մեկ տեղ փաստորեն տարածվում էր նաև տղամարդկանց վրա: Բանվորների դրության բարելավումը մեծապես թուլացրեց չարտիստական շարժման թափը:

Չարտիզմի վերջին բռնկումը հանդես յեկավ նոր՝ 1847 թ. ճգնաժամի կապակցությամբ:

Ամբողջ ձմեռը շարունակվող բանվորական հուզումներն առանձնապես ուժեղացան, յերբ Ֆրանսիայում առաջացած 1848 թ. հեղափոխության լուրն ստացվեց: 1848 թ. ապրիլի 4-ին Լոնդոնում հավաքված չարտիստների կոնվենտը ապրիլի 10-ին նշանակեց հսկայական մի ցույց, վորը պետք է միաժամանակ պարլամենտ հասցներ յերրորդ պետիցիան: Սակայն ցույցը տեղի չունեցավ. կառավարությունը կարգը խանգարելու առաջն առնելու համար մեծ քանակությամբ զորք քաշեց դեպի Լոնդոն: Պետիցիան պարլամենտ տարավ միայն Օ'Կոննորը, վոր հայտարարեց, թե նրա տակ 5·700·000 ստորագրություն կա: Բայց այդ ստորագրությունների ստուգման ժամանակ պարզվեց, վոր չարտիստները պրովակացիայի զոհ են դարձել՝ ստորագրությունների մեծ մասը նրանց թշնամիներին էր պատկանում, վորոնք ոգտագործեցին այդ դրությունը պետիցիան տապալելու համար:

Այս անգամ պետիցիայի դեմ քվեարկեցին պարլամենտի գրեթե բոլոր անդամները: Գործարանային օրենսդրության հետ կապված բանվորների դրության բարելավումը և ճգնաժամի վերջանալը արգելակ հանդիսացան շարժման հետագա զարգացմանը: Չարտիզմը հաղթվեց:

Չարտիզմի անհաջողությունը բացատրվում է նրա մեջ մտնող սոցիալական խմբերի այլազանությամբ և միասնական կուսակցության բացակայությամբ: Կուսակցությունը կարող էր պրոլետարական բոլոր ուժերը միացնել և ստիպել այդ ուժերին գործել նախապես գծ-

ված ծրագրով։ Չարտիզմի բնորոշ գիծն այն էր, վոր նյութական դրության բարելավման ձգտելով, առաջադրում եյին վոչ թե տնտեսական պահանջներ, այլ քաղաքական։ Նրանք հույս եյին տածում, վոր պարլամենտ մուտք գործելով ամեն ինչի կհասնեն։ Բայց պայքարի խաղաղ միջոց ընտրելով՝ հույսերն ամբողջովին դրել եյին պարլամենտի վրա, կարծում եյին, վոր այնտեղ նստած բուրժուազիայի ներկայացուցիչները կնդունեն պետիցիան, հարկավ այդ բանում նրանք չարաչար սխալվեցին։ Արդյունաբերական ճգնաժամերի ֆոնի վրա առկայծած չարտիստական շարժումը հանգավ նրանց հետ միասին։ 1848 թ. հետո առաջ յեկած տնտեսական ծաղկման եպոխան չեր կարող պատրաստ հող հանդիսանալ չարտիզմի համար։ Չարտիզմի նշանակությունն այն է, վոր նա մասսայական բանվորական շարժում եր, վորը պայքարում է քաղաքական իրավունքներ նվաճելու համար։ Չարտիստական շարժումը պարզ ցույց տվեց, թե ինչպիսի անդունդ է բաժանում բուրժուազիային պրոլետարիատից։ Իր սխալներով նա բանվորներին օգնեց պարզորոշել իրենց դասակարգային խնդիրները։

2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

ՌԵՍՏԱՎՐԱՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Բուրբոնների ռեստավրացիան էմիգրացիայից վերադարձրեց նախկին արտոնյալ դասակարգերի ներկայացուցիչներին, վորոնք վաղուց սպասում եյին իրենց համար այդ յերջանիկ րոպեյին։ Նրանք համոզված եյին, վոր հեղափոխության առաջացրած փոփոխությունների վերջն յեկել է։ Նրանք պահանջում եյին հին կարգը վերականգնել, վերադարձնել առանց վարձատրության նոր տերերին, իրենցից բռնագրաված ու ծախծխված կալվածքները. հոգևորականությունը չեր զլանում իր անեծքը թափել նրանց վրա, վորոնք գնել եյին նախկին յեկեղեցապատկան կալվածքները։ Սակայն ֆրանսիական հեղափոխության առաջացրած սոցիալական խոր տեղաշարժերն անկարելի յեր դարձնել Ֆրանսիայում ուժեղ և յերկարատև ազնվա-կալվածատիրական ռեակցիան, ինչպիսին դեռ կարող եր լինել Յեվրոպայի մնացած մայր ցամաքում։ Բացի այդ, հեղափոխությունը Ֆրանսիայում վերացրեց այն պայմանները, վորոնք խանգարում եյին նրա արդյունաբերական զարգացման։ Այս հանգամանքը բարձրացնում եր բուրժուազիայի տեսակարար կշիռը։

Հետևյալ թվերը ցույց են տալիս այդ շրջանում Ֆրանսիայի առևտրի ու արդյունաբերության աճումը։ Արտաքին առևտրի ընդհանուր արժեքը 621 միլիոն ֆրանկից 1815 թվին բարձրացավ մինչև 1.224 միլիոնի՝ 1832 թվին, այսինքն աճում 97 տոկոսով։ Թուջի արտադրությունը 1811 թ.՝ 99.000 տոննից, բարձրացավ մինչև 267.000 տոննի՝ 1830 թ., այսինքն՝ աճում 270 տոկոս։ Քարածխի հանույթը նույն ժամանակամիջոցում 600.000 տ., բարձրացավ 1.700.000 տոննի։ Շոգեմեքենան առաջին անգամ գործադրվել է 1815 թ., 1830 թ. արդեն 625 մեքենա կար։ Այս բոլորն ստիպում եր ազնվականներին, ինչպես իրենք հույս ունեյին, ժամանակավոր կոմպրոմիսի (համաձայնության փոխադարձ զիջումներով) գալ բուրժուազիայի վերնախավի հետ։ Դեռ չվաճառված հողերը վերադարձնեն էմիգրանտ ազնվականներին։ Հողատիրությունն ազատվեց ուղղակի հարկադրումից։ Ներմուծվող հացահատիկների վրա դրված մաքսը, անգլիական հացի օրենքների պես, ապահովում եր հողատերերի օգտին հացի բարձր գինը ներքին շուկա-

յում։ Բայց, մյուս կողմից, բարձր մաքսեր դրվեցին ներմուծվող յերկաթի և կտորեղենի վրա, վորով փակում եյին ոտարերկրյա մետաղի և մանուֆակտուրայի ապրանքների մուտքը Ֆրանսիա։ Կառավարության ներքին փոխառությունները մեծամեծ վաստակներ եյին տալիս ֆրանսիական բուրժուազիային։ Կոմպրոմիսն արտահայտվեց նույնպես քաղաքական բնագավառում։ Էմիգրանտ-ազնվականները, չնայած աբսոլյուտիզմի վերականգնման իրենց յերազանքին, պետք է համաձայնեյին սահմանադրության գոյության փաստի հետ, բայց նույն սահմանադրությամբ ստեղծված օրենսդիր յերկու պալատները օրենսդրական ինիցիատիվա չունեյին (իրենք օրենքներ առաջարկելու իրավունք)։ Գույքային մեծ ցենզը ապահովում եր պալատներում հողատերերի և խոշոր արդյունաբերողների ներկայացուցչությունը։

Այս կոմպրոմիսում թաքնված եյին անհաշտ հակասություններ։ Ազնվականությունը ձգտում եր վերականգնել իր վաղեմի արտոնյալ վիճակը, բուրժուազիան էլ իր զարգացման համար կարիք եր զգում միայնակ իշխանության տեր լինելու։ Հացի օրենքը, բարձրացնելով հացի գինը, բարձրացնում եր նաև աշխատավարձը. այդ բանը հուզում եր արդյունաբերական բուրժուազիային։ Հողատերերը չեյին կարողանում հանդուրժել ինդուստրիայի արտադրանքների թանգությունը, վորն արդյունք եր հովանավորող մաքսերի։ Իշխանությունն իրենց մեջ բաժանած այդ դասակարգերի միջև յեղած հակասությունը ավելի բարդանում եր յերկրում յեղած մյուս դասակարգերի դրությամբ։ Առևտրաարդյունաբերական բուրժուազիայի մի մասը, բարձր ընտրական ցենզի հետևանքով, դուրս ընկած մնալով յերկրի քաղաքական կյանքի մասնակցությունից, պահանջում եր ցենզն իջեցնել։ Մանր բուրժուազիան, բոլորովին իրավազուրկ լինելով և քայքայվելով խոշոր արդյունաբերության զարգացման հետևանքով, գաղտնի ընկերություններ եր ստեղծում և 1893 թ. հանրապետության մասին յերազում։

Արդյունաբերության մեջ մեքենայի հանդես գալը ֆաբրիկա-գործարանային և արհեստավորական պրոլետարիատի համար նույն ծանր շահագործման պայմաններն ստեղծեց, ինչպիսին ստեղծեց արդյունաբերական հեղաշրջումն Անգլիայում։ Բանվորների և արհեստավորների դրությունն ավելի յեր ծանրանում, շնորհիվ ռեստավրացիայի շրջանի ֆինանսական քաղաքականության։ Ունևոր դասակարգերի շահերից յելնելով, ուղղակի հարկերը գրեթե նույն աստիճանի վրա եյին մնում, դրա փոխարեն արագությամբ աճում եյին անուղղակի հարկերը, վորոնց ծանրությունը չքավոր դասակարգերի վրա յեր ընկնում։ 19-րդ դարի առաջին քառորդում Ֆրանսիայում անուղղակի հարկերը 4 անգամ աճեցին։

Ցածր դասակարգերի անտանելի դրությունը առաջ եր բերում դավադրություններ և, գաղտնի ընկերությունների կողմից կազմակերպված, ապստամբության փորձեր։ Պատահում եյին առանձին տերրորիստական յելույթներ։ Կառավարությունն այդ բոլորին պատասխանում եր մամուլը հալածելով, արտակարգ դատարաններով, վորոնք առաջացած բուրժուական ոպոզիցիային աճեցնում եյին։ Իշխանությունը, գլուխ կանգնած խմբերի անկայուն կոմպրոմիսը, սրվելով մյուս դասակարգերի աճող դժգոհությամբ, ազնվականության հենց առաջին փորձերն վերականգնել հին կարգը, պետք է վերջանար պայթյունով։

ՀՈՒԼԻՍՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ազնվականությունը վճռական քայլերի դիմեց, յերբ Լյուդովիկ

18-րդի մահից հետո գահ բարձրացավ Կարլ 10-րդի անվան տակ՝ «էմիգրանտների թագավոր» կոմս Դ'Արտուան: Նախկին էմիգրանտներին նա պարգևատրեց մեկ միլիարդ ֆրանկով պետության դրամարկղից. Հեղափոխության ժամանակ նրանց կորցրած հողամասերի դիմաց: Այս ձեռնարկման հանդեպ առաջացած զայրույթի պոռթկման, կառավարությունը պատասխանեց մամուլի հալածանքով: Պայքարը թեժացավ: Հակահեղափոխական հեղաշրջման վտանգը, դժգոհության աճումը՝ պարլամենտում քանակային գերակշռությունը տվին բուրժուական ոպոզիցիային: Հեղափոխության ուրվականի սարսափի ազդեցության տակ, ոպոզիցիան միջոցներ է վորոնում հաշտություն կնքել Կարլ 10-րդի հետ և նրա «ազնիվ սրտին» առաջարկում էր՝ ընտրություն կատարել նրանց՝ ովքեր «չեն հասկանում ազգի խաղաղությունն ու հնազանդությունը» և նրանց միջև, ովքեր «նորին մեծության վոտքերի տակ են դնում մի ամբողջ ժողովրդի վիշտը»: Կարլ 10-րդը ընտրություն կատարեց այս դիմումն ստանալու հենց հաջորդ օրն արձակեց պալատը:

Նոր ընտրությունների ժամանակ, չնայած կառավարության ճնշման, դարձյալ մեծամասնությունը ոպոզիցիային անցավ: Այն ժամանակ Կարլ 10-րդը վճռեց հեղաշրջում առաջ բերել: Նա հրապարակեց հրամաններ, վորոնցով ցրեց հենց նոր հավաքված օրենսդիր պալատը, ընտրական իրավունքը փոխեց հօգուտ խոշոր հողատիրության, վերականգնեց, հենց այդ ժամանակ նոր վերացված, գրաքննության օրենքը: Դա մի ազդանշան է, վորով թագավորը մենամարտի յեր հրավիրում բուրժուազիային:

11 բուրժուական թերթերի խմբագրություններ թագավորական հրամանների դեմ բողոքի թուղթ կազմեցին, վորի մեջ ասված էր՝ «մամուլի ներկայացուցիչներն այժմ պետք է ընդդիմադրության օրինակ ցույց տան քաղաքացիներին»: Սակայն միայն յերկու լրագիր խիզախություն ունեցան այդ բողոքը տպագրելու:

Բայց ահա Փարիզի փողոցներում յերևացին մանր-բուրժուական ուսանող յերիտասարդության զանգվածներ: Սրանց միացան փակված տպարանների գրաշարները, արհեստավորներն ու արդյունաբերական

Փարիզի բարրիկադների վրա 1830 թ. հուլիսին (ժամանակակից փորագրությունից)

բանվորները: Զորքի և վոստիկանության հետ առաջ յեկան առաջին ընդհարումները: Մասսաները զինվում էյին զինանոցներից թալանած զենքով: Բանվորների թաղամասերի նեղ ու ծուռ փողոցները ծածկվեցին բարրիկադներով:

Այն ժամանակ ֆաբրիկանտներն էլ վճռեցին ուժերը ներածին չափ մասնակցել հեղափոխական ապստամբության. Նրանք բանվորներին խոստացան վճարել կորցրած բանվորական օրվա համար, յեթե կռվի դուրս գան թագավորական զորքերի դեմ: Կռիվը փողոցներում շարունակվեց յերեք օր: Ապստամբները հարձակվելով բանվորական արվարձաններից՝ թագավորական զորքերին քայլ առ քայլ հետ մղեցին դեպի քաղաքի կենտրոնը: Յերրորդ օրը, յերբ վերցրին Տյուիլրի պալատը, կռիվը վերջացավ: Հաղթության ընթացքում սպանվեցին ու վիրավորվեցին շուրջ 6.000 մարդ:

Դեռ կռվի ընթացքում բուրժուազիայի մի մասը կարողացավ կազմակերպվել: Ֆինանսական արիստոկրատիայի ներկայացուցիչները և նրանց հետ կապված ինտելիգենցիան՝ բանկիրները, իրավաբանները, հրապարակախոսներն ու պրոֆեսորները պայմանավորվեցին ստեղծել այնպիսի պայմաններ, վորոնց ժամանակ հաղթության պտուղներն ամբողջությամբ իրենց ձեռքն անցնի. Նրանք իրենցից մի հանձնաժողով կազմեցին «անվտանգությունն ու սեփականությունն ապահովելու համար». այդ հանձնաժողովը ժամանակավոր կառավարության դեր պետք է ստանձներ. բուրժուազիան վերականգնեցրեց իր ազգային գվարդիան և թագավորական գահի համար առաջ քաշեց տապալված հարստության (դինաստիայի) ազգական՝ Օրլեանական դուքս Լյուդովիկ-Ֆիլիպին:

Բարրիկադների վրա հաղթություն տանողները, շնորհիվ կազմակերպության չունենալուն և մեծ մասամբ հավատալով բուրժուազիային, զենքերը ժամանակից առաջ վայր դնելով, չկարողացան կազմակերպված բուրժուազիային վորևէ բան հակադրել: Հանրապետականների թռուցիկի այն խոսքերին, թե՝ «այլևս թագավորական իշխանություն չկա»— ապագա Փարիզի կոմունայի դահիճ Տիյերը հակաճառեց, ասելով, վոր «հանրապետության գոյությունն անհնար է, նա մեզ սարսափի և կռվի մեջ կգցի» — ու Լյուդովիկ-Ֆիլիպը դարձավ թագավոր: Նույն թռուցիկ պահանջին, թե պատգամավորների ընտրության պետք է մասնակցեն բոլոր քաղաքացիները, հակադրվեց ընտրական նոր օրենքը, ըստ վորի քաղաքական իշխանությունը կենտրոնացվում էր ֆինանսական բուրժուազիայի ձեռքին: «Յերբ լիբերալ բանկիր Լաֆիտը,— ասում է Մարքսը,— հուլիսյան հեղափոխությունից հետո հանդիսավորությամբ Ռատուշա յեր ուղեկցում իր կնքահայր Օրլեանական դուքսին, նա իր բերանից մի բան թռցրեց՝— «այժմյանից տիրապետելու յեն բանկիրները», Լաֆիտը մատնեց հեղափոխության գաղտնիք»: Իրոք, հուլիսյան միապետությունը 1830—1848 թ. ֆինանսական արիստոկրատիայի տիրապետության շրջանն էր: «Հուլիսյան միապետությունը վոչ այլ ինչ էր, յեթե վոչ մի ակցիոներական ընկերություն՝ Ֆրանսիական ազգային հարստությունը շահագործելու համար»:

Այս «ակցիոներական ընկերությունը» հասարակության չնչին վերնախավից էր կազմված. Ֆրանսիայի 30.000.000 բնակչությունից միայն 200.000-ն ընտրական իրավունք ուներ, այսինքն 2/3 տոկոսը:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Բացի այն, վոր ֆրանսիական բուրժուազիան ամենայն անպատկառությամբ թալանում էր յերկիրը, ինքնին Ֆրանսիայի արդյունաբերության աճումը ուժեղացնում էր մանր բուրժուազիայի քայքայումն ու պրոլետարիատի շահագործումը:

Յերկաթահանքի հայթայթումը բարձրացավ 714.000 տոննից՝ 1833 թ. 1.658.000՝ 1847 թվին, այսինքն՝ յերկու անգամից ավելի:

Քարածխի հայթայթումը 2.000 տոննից, բարձրացավ 7.000.000-ի, այսինքն աճում 3½ անգամ:

Ցերկաթուղու յերկարաթյունը 1825 թ. հավասար եր 23 կիլոմետրի, այն էլ չոգեկառքերի փոխարեն ձիերն եյին ոգտագործվում. 1848 թ. յերկաթգծի ցանցի տարածությունը աճեց մինչև 1.837 կ. մ. բացի այդ 2.870 կ. մ. էլ դեռ վերջացված չեր: Արտաքին առևտրի շրջանառությունը 1.224.000.000 ֆրանկից՝ 1829 թ. բարձրացավ մինչև 2.437.000.000, այսինքն գրեթե յերկու անգամ ավել: Վերջապես 1830 թ.՝ 625 չոգեմեքենաների դիմաց, 1847 թ. կար 4.857, այսինքն գրեթե 8 անգամ ավելի: Քաղաքների բնակչությունն աճում եր:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԱՃՈՒՄԸ ՑԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

19-րդ դարի սկզբին Ֆրանսիայի պրոլետարիատի դրությունը նույնպես վատ եր, ինչպես Անգլիայում: Ֆրանսիական կապիտալիզմը, չնայած դանդաղ, բայց անընդհատ աճում եր: Անգլիայից փոխանցված մեքենան դեռ նոր եր սկսել իր հաղթական առաջխաղացումը: Դրան ուղեկցում եր արհեստավորների և տնայնագործների քայքայումը, վորոնք սովից փրկվելու համար գործարան եյին ուղարկում իրենց կանանց ու յերեխաներին: Այնտեղ նրանց սպասում եյին ցածր աշխատավարձն և յերկարատև բանվորական որը:

Բանվորների քայքայումն ու աղքատացումը յերբեմն անհավատալի չափերի եյին հասնում: Նրանցից շատերը նկուղներում եյին ապաստան գտնում յեվ անկողնի փոխարեն ծղնոտի վրա գիշերում: Այն նրբանցքներն, ուր գտնվում եյին բանվորների կացարանները լեցուն եյին գարշահոտությամբ, աղբով և ամեն տեսակ անմաքրությամբ: Կիսաքաղց ու կիսամերկ մանուկների ֆիզիկական և մտավոր զարգացումը չափազանց թույլ եր:

Բայց այդ՝ կապիտալիզմի դեռ առաջին քայլերն եյին: Գյուղացիությունն ազատագրված հողին տիրանալով և 1793 թ. ազատվելով ֆեոդալական ու սենյորական պարհակներից, բավական դանդաղությամբ եր պրոլետարացման յենթարկվում:

Քաղաքներում առաջվա պես արհեստավորական արտադրությունն եր գերակշռում: Խոշոր ֆաբրիկաներն ու գործարանները համեմատաբար քիչ եյին և նրանք բանվորության լոկ մի փոքր մասն եյին ընդգրկել:

Մեքենայական արտադրության զարգացման հետ մեկտեղ, պակասեց բանվորական ձեռքերի պահանջը. ինչպես Անգլիայում այստեղ ևս մտցվում եր կանանց և յերեխաների եժան աշխատանքը (50 տոկոս): «Գործազուրկները խմբերով, ցնցոտիներով ծածկված՝ թափված եյին քաղաքի հրապարակներում, նրանք անիծում եյին մեքենաներին, վոր խլել են իրենց աշխատանքը». աշխատավարձն իջնում եր, իսկ բանվորական որվա տևողությունը հասնում եր 18 ժամի:

1830 թ. հուլիսյան որերի հաղթողները խաբվել եյին. նրանք դիմում եյին ապստամբությունների (Լիոնում, Փարիզում և այլ քաղաքներում): Մանր բուրժուազիայի հետ միասին կազմակերպում եյին գաղտնի միություններ, մահափորձ եյին կատարում «բանկիրների թագավորի» վրա: Կառավարությունը դրան պատասխանում եր տասնյակ հազարավոր բանվորների գնդակահարությամբ, չարժման առաջնորդ ղեկավարների բանտարկությամբ:

Ֆրանսիայի բանվորներն այս ժամանակ կազմակերպում եյին կոմպանիոնաժներ, այսինքն վարպետացուների միություններ, վորոնք փոխոգնության բնույթ ունեյին:

Կոմպանիոնաժներն աստիճանաբար սկսեցին արհեստակցական միությունների, սինդիկատների բնույթ ընդունել և յերբեմն ղեկավարում եյին գործադուլային շարժումները: Քանի գնում, գործադուլներն այնքան ավելի եյին շատանում Ֆրանսիայում, այսպես որինակ 1831—32 թ. յեղել ե 50, իսկ 1833 թվին արդեն 90: Գործադուլավորների պահանջները մեծ մասամբ տնտեսական բնույթ ունեյին՝ սահմանափակվում եյին աշխատավարձի բարձրացման և բանվորական որը 10 ժամի իջեցնելու հարցերով:

ԼԻՈՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19-րդ դարի առաջին կեսի բանվորական հուզումների շարքում առանձնակի տեղ են գրավում Լիոնի յերկու ապստամբությունները—1831 և 1834 թ. թ.: Լիոն քաղաքի մետաքսարդյունաբերությունը այդ ժամանակվա ֆրանսիական արդյունաբերության տիպիկ նմուշն եր: Այնտեղ խոշոր գործարաններ չկային: Հասարակության վերին շերտը կազմում եյին մի քանի տասնյակ կապիտալիստ վաճառականներ, վորոնք արտասահմանից հում մետաքս եյին դուրս գրում և բաժանում արհեստանոցատերերին, սրանցից էլ ամեն մեկը հինգ վեց-հաստոց ուներ, այդ հաստոցների վրա աշխատում եյին 30.000-ի չափ վարպետացուներ: Իրենք արհեստանոցատերերը շահագործվում եյին ձեռնարկուկա-

Լիոնի ջուլհակների ապստամբությունը 1831 թ.

պիտալիստների կողմից և շատ քիչ եյին տարբերվում վարպետացուներից: Նրանք յերկուսը միասին մի ընդհանուր բանվորական մասսա եյին կազմում և միաչափ ատում եյին ֆաբրիկանտներին ու վաճառականներին:

1826 թ. առաջ յեկավ ուժեղ տնտեսական ճգնաժամ, վորի պատճառով Լիոնում 5.000 հաստոց կանգ առավ և աշխատավարձը ուժեղ թափով իջավ: Բանվորների դժգոհությունը վորոշակի տարիֆի, այսինքն աշխատավարձի վորոշ չափի, պահանջի վերածվեց: 1831 թ. բանվորներից և կապիտալիստներից մի հանձնաժողով կազմվեց: Բանվորների ցույցի ազդեցության տակ կապիտալիստներն սկզբում համա-

հայտնեցին բանվորների առաջարկած պայմաններին, այս հանգամանքը մեծ ցնծություն առաջ բերեց բանվորների մեջ: Բայց հետո ֆաբրիկանտները հրաժարվեցին իրենց խոստումներից, պատրվակելով օտարերկրյա մրցման ուժեղ լինելը: Խաբված բանվորները խիստ զայրացան: Երեսուն հազար ջուլհակներ փողոց դուրս եկան սև դրոշակներով, որոնց վրա գրված էր՝ «Ապրել աշխատանքով՝ կամ մեռնել կռվով»: Փողոցի հուզումները վերածվեցին ապստամբության, որը հաջողություն ունեցավ: Երեքօրյա տաք արյունալի կռիվներից հետո, ազգային գվարդիան ստիպված եղավ հետ նահանջել, քաղաքը թողնելով բանվորների ձեռքին: Այս հաջողությունը, նույնիսկ ապստամբների համար, անսպասելի յեր, քանի որ նրանք միտք չունեին իշխանությունը գրավել: Քաղաքի բարձր պաշտոնատար անձանց թողին իրենց տեղերում, սակ նրանց վրա հսկիչներ նշանակեցին: Ապստամբներն իրենց տասնօրյա քաղաքի տիրապետության ընթացքում որևէ բան փոխելու տրամադրություն չցուցաբերեցին, միայն ամենայն փութկոտությամբ պաշտպանում էին հասարակական կարգը: Ապստամբությունը ճնշելու համար եկած զորքերին նրանք չդիմադրեցին և հայտարարեցին, որ իրենք հավատարիմ են կառավարության, բայց պայքարում են ֆաբրիկանտների դեմ:

1834 թվին ապստամբությունը նորից բռնկվեց: Այդ ժամանակներում Լիոնի պրոլետարիատի շարքերում կազմակերպվել էր «Մյուտուելիստների» միությունը (փոխօգնության): 1834 թ. մի օրենք հրատարակվեց, որը պահանջում էր վերացնել նման միությունները: Այս հանգամանքը բանվորների մեջ բուռն զայրույթ առաջացրեց: «Նոր օրենքը»,—ասում էր բանվորական թերթ՝ «Ֆաբրիկայի արձագանքը» —կոչումն է, որ քաղաքացիական կռիվ է ստեղծում: Կառավարությունը քամի յեր ցանում, բա՛րի, նա փոթորիկ կհնձի»:

Իրոք՝ ապստամբությունը բռնկվեց: Փողոցներում տաք կռիվներ էին տեղի ունենում. կանայք կռվում էին տղամարդկանց կողքին: Սակայն վեցերորդ օրը զգացվեց, որ հաղթությունը կառավարական զորքերի կողմն է, և որ բանվորները վատ են պատրաստված դիմադրությունն ավելի շարունակելու համար: Ապստամբությունը ճնշվեց ամենայն խստությամբ՝ մի քանի հարյուր բանվորների գնդակահարեցին: Ապստամբությանն արձագանքեցին ֆրանսիական մի շարք քաղաքների բանվորներ: Այս մասսայական շարժումների ղեկավարը մինիստր Թիյերն էր, որը զորքին հրաման էր տվել «ոչ ոքի չխնայել»:

Հրամանը իրագործվեց:

Լիոնի ապստամբությունների նշանակությունն այն է, որ դրանք առաջին զուտ բանվորական մասսայական շարժումներն էին, որոնք նախորդել էին անգլիական չարտիզմին: Բանվորների պահանջները դեռ դուրս չէին եկել իրենց առօրյա կարիքները բարելավելու շրջանակից: Միաժամանակ շարժման բնույթի վրա ազդեցություն ունեցավ մանր-բուրժուական տարրերի՝ արհեստանոցատերերի մասնակցությունը:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՈՒՏՈՊԻԿ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ. Ս. ՍԻՄՈՆ ՅԵՎ ՖՈՒՐՅԵ

Ֆրանսիայում, ինչպես Անգլիայում, կապիտալիզմի զարգացման և բանվորական շարժման աճման հետ՝ առաջացան ուտոպիական գաղափարներ, որոնց զբաղեցնում էր հասարակությունը նոր հիմունքներով վերակառուցելու խնդիրը: Այդ ուսմունքների ականավոր ներկայացուցիչներն էին ֆրանսիացի Սեն-Սիմոնն ու Շարլ Ֆուրյեն: Սեն-

Սիմոնը (1760—1825) իր ուսմունքը զարգացրեց մի շարք աշխատություններում. նա ջախջախիչ քննադատության ենթարկեց իր ժամանակի կապիտալիստական կարգերը, որոնք աշխատանքի անհամաչափ բաշխում և ուժերի ոչ արտադրական օգտագործում էին ստեղծում: Սեն-Սիմոնը ձգտում էր հասարակությունը վերակառուցել նոր հիմունքներով. նա ասում էր այնպիսի կարգեր պետք է ստեղծել, որ «արդյունաբերական դասակարգը, որը բավականին ընդունակություն ունի և կարող է իր ձեռքը վերցնել հասարակության ղեկավարությունը, պետք է միանա, և այն ժամանակ հեշտությամբ կկարողանա, առանց բռնի միջոցների դիմելու, ազատվել ազնվականներից, զինվորականներից, ռանտյեներից, իրավաբաններից և մետաֆիզիկներից»:

Եթե Ֆրանսիան,— գրում էր Սեն-Սիմոնը,— մի գեղեցիկ օր կորցնի ամբողջ արքունիքը, մինիստրներին, աստիճանավորներին, բարձր հոգևորականներին և պորտաբույծ հարուստներին՝ նա դրանից ոչ մի վնաս չի ունենա, բայց եթե կորցնի իր լավագույն գիտնականներին, բանաստեղծներին, նկարիչներին, վարպետներին, բանվորներին և ձեռներեց արդյունաբերողներին, այն ժամանակ երկիրը հոգեպես կմեռնի և կյանքը կմարի: Այն ինչ, նրանք, որոնք հասարակությանը ոչ մի օգուտ չեն տալիս, շահագործում են ամբողջ պետությունը: Աշխատանքը բոլոր բարօրությունների աղբյուրը հանդիսա-

ԱՆՐԻ ՍԵՆ–ՍԻՄՈՆ

նալով հանդերձ, ոչ միայն պատվի չի արժանանում, նույնիսկ հաճախ հարուստների կողմից ատելության է հանդիպում: Ահա ինչու Սեն-Սիմոնը գտնում էր, որ հասարակության ղեկավարությունն արդյունաբերողներին պետք է հանձնել: Արդյունաբերողներն, ըստ Ս.-Սիմոնի ձեռնարկուներն ու բանվորներն են, սրանք արտադրության միակ մասնակիցներն են, որոնք շահագործվում են պորտաբույծ դասակարգերի կողմից (արիստոկրատիա, բյուրոկրատիա և բանկիրներ):

Սեն-Սիմոնի սոցիալական գաղափարներն արտահայտվում էին

պետական մասշտաբով արդյունաբերությունը միացնելու, բայց արտադրության գործիքների մասնավոր սեփականության հիման վրա, չնայած սեփականության գոյությունը Ս.—Սիմոնը մի անիրավ բան չեր համարում: Սեփականության ձևերը, իբրև սոցիալական յերևույթներ, նրա կարծիքով պետք ե փոխվեն:

Այսպիսով նա առաջարկում եր՝ վոչնչացնել արտադրության անարխիան, հասարակությունը մաքրել պարազիտային տարրերից և պլանավորման ու համագործակցության հիման վրա միացնել յերկրի բոլոր արտադրողական ուժերը: Իր գաղափարների իրագործումը նա վոչ թե հեղափոխությունից եր սպասում, (նա հեղափոխությունը մերժում եր) այլ առանձին մարդկանցից՝ լուսավորված թագավորներից ու բանկիրներից: Նոր հասարակության մեջ Սեն-Սիմոնն արդյունաբերողներին, վորպես արտադրության հիմնական կազմակերպողների, մեծ տեղ եր հատկացնում:

Բանվորներին և ձեռնարկուներին մի դասակարգի մեջ միացնելով, նա չեր ըմբռնում կապիտալի ու աշխատանքի շահերի հակադրությունը: Բուրժուազիայի և պրոլետարիատի միատեղ պայքարը, այն ժամանակ իշխանության գլուխ կանգնած, խոշոր հողատերերի դեմ, այդ յերկու դասակարգերի շահերի նույնության իլյուզիա յեր ստեղծում, մինչդեռ նրանք հակադիր դասակարգեր եյին:

Հասարակության զարգացման մասին Սեն-Սիմոնը մի քանի հետաքրքրական մտքեր ունի: Հասարակության զարգացման մեջ նա գտնում եր օրինաչափություն. ցույց եր տալիս հասարակական յերևույթների մեջ տեղի ունեցող փոփոխությունների կապակցությունը սեփականության փոփոխության հետ, նույնիսկ դասակարգային պայքարի դերը, վորպես պատմական պրոցեսի շարժիչ ուժ, նա նկատի յեր առնում: Սեն-Սիմոնը տեսնում եր, վոր դասակարգային պայքար գոյություն ե ունեցել մարդկային հասարակության զարգացման տարբեր աստիճանների վրա. նշում եր, վոր շահագործման մի ձևին հաջորդել ե մի ուրիշը, միայն կապիտալիստական հասարակության մեջ նա չկարողացավ տեսնել ձեռնարկուների և պրոլետարիատի միջև յեղած պայքարը: Այսպիսով հասարակության և պատմության զարգացման վերաբերյալ Ս.—Սիմոնի տեսակետների մեջ կային այնպիսի գաղափարների սաղմեր, վորոնք հետագայում զարգացվեցին գիտական սոցիալիզմի կողմից:

Սեն-Սիմոնի ուսմունքի մեջ արտացոլել ե XIX դ. սկզբի արդյունաբերության առաջադիմական դերը, այն ե՝ արդյունաբերության արագ զարգացումը, վորն ուղեկցվում եր արդյունաբերական բուրժուազիայի տնտեսական ու քաղաքական հզորության աճումով, գիտության և տեխնիկայի ծաղկումով: Իզուր չե, վոր Սեն-Սիմոնը գիտության և արդյունաբերության սերտ կապի մեջ եր տեսնում արդյունաբերական ճգնաժամերից և մրցումից զերծ պահելու

գրավականը: Նրա կարծիքով հասարակության ղեկավարությունը՝ քաղաքական իշխանությունը պետք ե պրոլետարիատի ու արդյունաբերական բուրժուազիայի միության ձեռքին լինի: Կապիտալիստական հասարակության վերլուծությունն ու նրա քննադատությունը, հասարակության պրոցեսի եյության և նրա շարժիչ ուժերի պարզաբանումը, դասակարգային պայքարի պրոբլեմը և Սեն-Սիմոնի կողմից առաջադրված այլ դրույթները Մարքսը հետագայում վերամշակեց և օգտագործեց գիտական սոցիալիզմի տեսության համար: Սեն-Սիմոնի հետևողները զարգացրին նրա ուսմունքը, վորը հայտնի յե Սեն-Սիմոնիզմ անունով. Նրանք իրենց ուսուցչից ավելի առաջ անցան և հանդես յեկան, վորպես ուտոպիստ-սոցիալիստներ: «Սեն-Սիմոնի ուսմունքի շարժադրությունը» վերտառությունը կրող կոլեկտիվ աշխատության մեջ Սեն-Սիմոնի աշակերտներ՝ Անֆանտենը (1796—1864), Բազարը (1791—1872) և ուրիշերն ընդծում եյին այն միտքը, վոր անհրաժեշտ ե արտադրությունը բարեփոխել այնպես, վոր նա մարդկանց ղեկավարելուց դառնա ընդհանուր բարիքների, իրերի ղեկավարություն: «Ընդհանուր ասոցիացիա՝ ահա մեր ապագան. յուրաքանչյուրին իր ունակությունների համեմատությամբ, ամեն մի ունակության իր արտադրանքի համեմատությամբ,—ահա այն նոր իրավունքը, վորը փոխարինելու յե նվաճման ու ծագման իրավունքին»: Մարդն այլևս չպետք ե մարդուն շահագործի. մարդիկ միմյանց հետ դաշնակցած պետք ե իրենց տրամադրության տակ յեղած աշխարհն օգտագործեն: Սեն-սիմոնիստներն առաջադրում եյին արտադրության պլանաչափ կազմակերպման և հասարակության պահանջի ճիշտ հաշվառման իդեան, վորը հասարակությանը կապահովի՝ արտադրական անկարգությունից, անարխիայից, արդյունաբերական ճգնաժամերից, մթերքների պակասից և այլն: Ուժեղ ղեկավարություն ունեցող կենտրոնական իշխանությունը, իր հունի մեջ դնելով արտադրությունը, միացյալ ուժերով պետք ե իրագործի արտաքին բնության օգտագործման խնդիրը և վերջնականապես վոչնչացնի մարդը մարդուն շահագործելը: Նման ընդհանուր արտադրական ասոցիացիայի անցնելը, սեն-սիմոնիստները յենթադրում եյին իրագործել՝ նոր «սիրո-ծես»-ի և հատուկ կրոնական համայնք կազմելու միջոցով:

Ինտելիգենտական խմբակների մեջ ծնունդ առած և սերտ կապված արդյունաբերության և բանկային գործի զարգացման հետ, սեն-սիմոնիզմը կարողացավ սոցիալիստական տնտեսության մեջ շատ նոր և թարմ մատերիալ մտցնել: Բայց դուրս գալ այդ խմբակների շրջանակից, գնահատել պրոլետարիատին՝ վորպես պատմության ակտիվ ուժի և վոչ թե դիտել իբրև տառապող ու շահագործվող մի մասսա, սեն-սիմոնիզմը դեռ ի վիճակի չեր: Այստեղից ել նրա ուսմունքի խաղաղ բնույթը, իդեալիզմը և թեոկրատիզմը (աստվածատիրություն, աստված ե իշխում մարդկանց վրա քրմերի միջոցով), նույնպես և մասսաներ գրավելու անկարողությունը:

Կապիտալիստական կարգերի փայլուն քննադատներից մեկն էլ Շառլ Ֆուրյեն է հանդիսանում (1772—6837)։ Ֆուրյեյի կարծիքով չարիքի արմատը աշխատանքի միանական կազմակերպության բացակայությունն է. արտադրողական ուժերի մանրացած լինելը տանում է դեպի արտադրության անարխիա՝ մի անիմաստ դրություն, յերբ առանձին մարդիկ հարստանում են ուրիշների դժբախտության պատճառով (բժիշկները, իրավաբանները և այլն)։ Արտադրության անկազմակերպության և անարխիայի հետևանքով մեծ չափով ապարդյուն ուժեր են գործադրվում։ Կազմակերպվում է պորտաբույծների մի ամբողջ բանակ։ Դրանց Ֆուրյեն բաժանում է տնայինի և սոցիալականի. տնայիններին, նրա կարծիքով, պատկանում են կանանց մեծ մասը, և յերեխաները, որոնց աշխատանքը կարելի էր հասարակության համար օգտակար ձևով գործադրել։ Սոցիալական պարազիտներ են հանդիսանում՝ զինվորականները, աստիճանավորները, առևտրականների մեծ մասը, տան ծառաները և գործազուրկները։ Սոցիալական խնդրի լուծման հարցում Ֆուրյեն ավելի մոտ էր Ռոբերտ Օուենին, քան Ս.-Սիմոնին։ Նա յերազում էր առանձին «Ֆալանգներ» կազմակերպել և նրանց մեջ 1500–2000 մարդ միացնել։

Ֆալանգի մեջ պետք է ընդգրկվեյին բոլոր տեսակի աշխատանքի ներկայացուցիչները, որոնք Ֆալանգի ներսը խմբակներ են կազմում։ Ինչպես ըստ Օուենի կոմունաների, այնպես էլ ըստ Ֆուրյեյի Ֆալանգների հիմքը գյուղատնտեսությունը պետք է կազմի։ Ֆալանգները հանրակացարաններ պիտի ունենան («Ֆալանստեր») և կազմելու յեն մի մեծ արտելի, կամ կոոպերատիվի պես մի բան. մտնողներից յուրաքանչյուրը ի սպաս է բերելու իր տաղանդը, գիտությունը, կամ կապիտալը։ Ինչ որ ստացվի Ֆալանգից բաժանվելու յէ ըստ խմբերի՝ աշխատանքն ստանալու յէ բոլոր պրոդուկտների $^5/_{12}$, կապիտալը՝ $^4/_{12}$ և տաղանդը $^3/_{12}$։

Սեն-Սիմոնի, Ֆուրյեյի և նրանց հետևողների ուսմունքը ուտոպիկ բնույթ ուներ։ Նրանց նշանակությունն այն է, որ ջախջախիչ քննադատության յենթարկելով կապիտալիստական կարգերը, ճանապարհ մաքրեցին մարքսիզմի համար։ Սոցիալական հիվանդագին խնդիրների լուծման նվիրած նրանց ուսմունքները ոչ միայն Ֆրանսիայում էին մեծ հաջողություն գտնում, այլ և արտասահմանում։ Այդ ուսմունքների բազմաթիվ հետևողները սեն-սիմոնիզմի ֆուրյերիզմի ամբողջ հոսանքներ էին ստեղծում, որոնք մշակում ու ավելի լայնացնում էին իրենց ուսուցիչների հիմնական մտքերը։

ՈԳՅՈՒՍՏ ԲԼԱՆՔԻ ՅԵՎ ԲԼԱՆՔԻԶՄ

Ֆրանսիական պրոլետարիատի և մանր բուրժուազիայի չքավոր խավերի հերոսական պայքարի ընթացքում հանդես յեկավ իր ժամանակի մեծագույն հեղափոխականներից մեկը՝ Օգյուստ Բլանքին, որը XIX դ. Փարիզի բոլոր ապստամբությունների ամենաակտիվ մասնակիցն

էր։ Իր 76 տարվա ապրած կյանքից 37-ը նա անց է կացրել բանտերում. յերկու անգամ մահվան է դատապարտվել։ Լիոնի ապստամբությունների ազդեցության տակ Բլանքին դարձավ «հարուստների և չքավորների միջև պատերազմի» կողմնակից, քանի որ հարուստները «ճարպակալում են չքավորների արյունը ծծելով»։ Շնորհիվ իր ծանոթության, Բաբյոֆի աջակից՝ Բուանորոտի հետ, նա դարձավ Բաբուվիզմի հետևող։ 1837 թ. գլխավորապես գործարանային և արհեստավորական պրոլետարիատից կազմակերպվեց գաղտնի «Տարվա յեղանակների միությունը»։

ՇԱՐԼ ՖՈՒՐՅԵ

Այդ միությունն իրեն առաջ խնդիր էր դրել ապստամբություն նախապատրաստել և առաջ բերել արմատական սոցիալական հեղափոխություն։ Չնայած միությունը 1000 անդամ ուներ, սակայն կապված չէր մասսաների հետ։ Այդ պատճառով էլ, յերբ միության անդամները 1839 թ. մայիսի 12-ին փորձեցին իշխանությունը գրավել, ոչ մի տեղից օժանդակություն չստացան. այդ փորձն անհաջողության մատնվեց։ Ապստամբության առաջնորդները, որոնց թվում և Բլանքին՝ ձերբակալվեցին։

Բլանքին կոմունիստ էր և կապիտալիստական կարգերի հակասության և անհավասարության յելքը միայն սոցիալական հեղափոխության մեջ էր գտնում։ Նա համոզված էր, որ կոմունիստական կարգերը հանդես կգան բանվորների կողմից իշխանության գրավման հետևանքով. իշխանությունը բանվորությունը պետք է նվաճի, որովհետև նա իրենից հասարակության հեղափոխական փոքրամասնությունն է ներկայացնում։ Նոր կարգերին անցնելը կարող է տեղի ունենալ լոկ իշխանությունը գրավելու միջոցով՝ զինված պայքարի ճանապարհով։ Հեղափոխական կառավարությունը պետք է լինի բանվորներին, մշտական բանակը փոխարինի դասակարգային բանակով՝ պրո-

լետարական դիկտատուրայով, պետք է բուրժուական իշխանության օրգանները վոչնչացնի, ինչպիսիք են—պարլամենտը, ինքնավարությունները, փակի բուրժուական թերթերը, հետապնդի բուրժուական իդեաների տարածումն, հոգեվորականությունը լիկվիդացիայի յենթարկի, բռնագրավի յեկեղեցիների և կրոնական կազմակերպությունների գույքը, հեռացնի բարձր ու միջին աստիճանավորներին, մտցնի ուղղակի պրոգրեսիվ հարկ: Արդյունաբերությունը կանոնավորելու նպատակով, պետք է կազմակերպի հատուկ կոմիտեներ, վորոնք պետք է հետևեն, վոր արդյունաբերողները արտադրությունը չկանգնեցնեն:

Բլանքիի ասելով, նոր իշխանության առաջին հոգսը հեղափոխական ուժերի կազմակերպումը պետք է լինի. ամեն հնարավոր միջոցներով, պետք է աշխատի բարձրացնել ժողովրդի՝ դեպի հավասարությունն ունեցած վոգեվորությունը, ճնշի այն հակառակորդներին, վորոնք կռվի մոմենտում դեռ կուլ չեն գնացել ժողովրդական ցասմանը:

Բլանքիի կարծիքով, սոցիալական հեղափոխությունն սկսվում է վոչ թե բանվորական մասսայական շարժումների հետևանքով, այլ ամենաակտիվ հեղափոխականների մի խմբի ինիցիատիվայով, վորոնք առաջին հերթին պետք է գրավեն քաղաքական իշխանությունը: Այդ խումբը տիրող կարգերի դեմ դավադրություն և հետո ել ապըստամբություն կազմակերպելով, բանվորական մասսաներին իր կողմը կգրավի: Բլանքին աչքաթող եր անում այն հանգամանքը, վոր ապստամբությունը, յեթե հենված չե մասսաների և բանվորների մասսայական շարժումների վրա, անկայուն կլինի և ռեակցիայի կողմից հեշտությամբ կոչնչացվի: Բլանքիի կողմից այդ բանվորական մասսայական շարժման թերագնահատությունն եր պատճառը, վոր բլանքիզմը, չնայած 60-ական թվականների հեղափոխական տրամադրությունների վերելքին, չկարողացավ այդ շարժումները ձևավորել և իր հետևից տանել: Բլանքիզմը մինչև իր գոյության վերջն ել չդարձավ լայն մասսայական շարժում. նա ուներ իր կողմնակիցների, չնայած բազմամարդ, բայց անջատ-անջատ խմբեր՝ արհեստավորների և բանվորների շարքերից:

Բլանքին պատմության մեջ չափազանց մեծ տեղ եր հատկացնում գաղափարներին և անհատներին: Դրանով ել պետք է բացատրել մասսայական շարժումներից մեկուսացած յելույթների տակտիկան, քաղաքական հանգամանքների և ուժերի հարաբերության հաշվառման բացակայությունը, լայն բանվորական կազմակերպությունների վրա հենված՝ կուսակցության դերի թերագնահատումը, փաստորեն պրոլետարիատին անգործունեության մատնելը և նրան կապիտալիստական հասարակության մեջ դասակարգային պայքարից հեռու պահելը, ինչպես հեղափոխական ինտելիգենցիային բացառիկ նշանակություն տալը:

Սակայն բլանքիզմի մի շարք դրույթներն, այն է, պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության գրավումը, պրոլետարիատի դիկտատուրայի անխուսափելիությունն ու անհրաժեշտությունը, հեղափոխական փոքրամասնության դերը և այլն, անցան մարքսիզմի տակտիկայի մեջ: Իզուր չե, վոր Մարքսը, 1848 թ. հեղափոխության ժամանակ Բլանքիի դերի գնահատության կապակցությամբ նրան անվանում է «պրոլետարիատի միակ իսկական առաջնորդ»:

ԼՈՒԻ ԲԼԱՆ

Ֆաբրիկային ու արհեստավորական պրոլետարիատի շարժումը հյուսվելով մանր-բուրժուական շարժման հետ, հող եր պատրաստում ուտոպիական սոցիալիզմի հետագա զարգացման համար: 1839 թ. ապստամբությունից մեկ տարի անց Ֆրանսիայում լույս տեսավ Լուի Բլանի (1811—1882) «Աշխատանքի կազմակերպումը» գիրքը:

Ինչպես մյուս ուտոպիստ-սոցիալիստները, նա ել քննադատում եր տնտեսության անհատական սիստեմը: Այդ սիստեմին հատուկ մրցումը, կապիտալիստների միջև պայքար առաջացնելով, աշխատավորական մասսաներին տանում է դեպի ամենաանողոք շահագործում, նրանց այլասերում է, տանում է դեպի քաղաքացիական պատերազմ, դեպի կուլտուրայի անկում: Հասարակության համար ստեղծված այս կացությունից դուրս գալու միայն մի յելք կա՝ այն է, աշխատանքի պլանաչափ կազմակերպումը: Կազմակերպելն իր վրա պետք է վերցնի պետությունը, բայց դեմոկրատական պետությունը, ուր ինքը «ժողովուրդն է» ղեկավարում իր ներկայացուցիչների միջոցով: Այդ իսկ պատճառով «ժողովուրդը» պետք է տիրանա պետական իշխանության, այդ «կազմակերպված ուժին»: Այդպիսի «ժողովրդական» պետությունը պետք է «արտադրության ամենաբարձր տնորենը» հանդիսանա: Պետությունը աշխատանքային ընկերությունների հիմունքներով պետք է կազմակերպի աշխատանքը և «հանրային արհեստանոցներ», կամ ստեղծի արդյունաբերական ու գյուղատնտեսական ասոցիացիաներ: Ամեն մի աշխատել ցանկացող՝ «աշխատանքի իրավունք» ունի: Կապիտալիստական առանձին ձեռնարկությունները ի վիճակի չեն լինի մրցել այդ կոլեկտիվ տնտեսության հետ, քանի վոր նրանք ոժանդակություն են ստանալու հզոր պետական կազմակերպությունից, այսպիսով «մրցումն սպանելով մրցման» կհանգի խաղաղ սոցիալական հեղաշրջման: Լուի Բլանը իշխանության բռնի գրավելուն դեմ եր:

«Սոցիալական հեղափոխությունը,—գրում եր նա,—կարելի յե և նույնիսկ հեշտ է խաղաղ ճանապարհով առաջացնել»—բանվորների և բուրժուազիայի խաղաղ գործակցությամբ: Ըստ Լուի Բլանի, դեմոկրատական պետության կառավարություն կազմելու համար բավական է միայն ընդհանուր ընտրական իրավունք մտցնել:

Լուի Բլանը մեծապես ոժանդակեց սոցիալիստական գաղափարների տարածման բանվորական մասսաների մեջ:

ԵՏԻՅԵՆ ԿԱԲԵ

Պրոլետարիատի մեջ այդ գաղափարների տարածման համար ավելի մեծ նշանակություն ունեցավ ֆրանսիական ուտոպիստ Ետյեն Կաբեյի (1778—1856) «Ճանապարհորդություն դեպի Իկարիա» կոմունիստական վեպը: Այդ ֆանտաստիկ վեպը բանվորները կլանում եյին և հազարներով Կաբեյի հետևողներ դառնում: Նա իր վեպում հրապուրիչ կերպով նկարագրել է մտացածին կոմունիստական յերկիր Իկարիայի յերջանիկ կյանքը. այդ յերկրում չկա մասնավոր սեփականություն, պետությունը հենված ժողովրդի մեծամասնության վրա՝ իկարացիների ամբողջ կյանքը իր ամբողջ մանրամասնությամբ մի ընդհանուր հունի մեջ եր գնում. յուրաքանչյուր իկարացի 18-ից՝ 65 տարեկան ազգային բանվոր եր համարվում և կատարում եր համայնքի կողմից նրա վրա դրված բոլոր պարտականությունները: Բոլորն ել համայնքից

տանում էին՝ բնակարան, հագուստեղեն, կերակուր, շատ խիստ կերպով սահմանված էր ուտելու ժամանակը, նույնիսկ ճաշի տեսակների հերթականությունը, զբոսնելու և յերգելու ժամանակը և այլն: Կաբեն էլ գտնում եր, վոր կոմունիզմին միայն խաղաղ ճանապարհով կարելի յե հասնել: «Յեթե հեղափոխությունն իմ բռունցքիս մեջ ունենայի,— գրում եր Կաբեն,—յես բռունցքս բաց չեյի անի, յեթե նույնիսկ ինձ աքսոր, կամ մահ սպառնար»: Մարքսն ու Էնգելսը ընդունում եյին, վոր Կաբեն «անփոխարինելի ծառայություն է մատուցել պրոլետարիատին», գլխավորապես նրանով, վոր կոմունիզմի կենսագործումը նա սպասում եր բանվորներից: Բայց Մարքսն ու Էնգելսը գտնում եյին, վոր «նրա կողմից առաջադրված ցաղթը շատ մեծ վնաս կհասցներ կոմունիզմի սկզբունքին»: «Յեթե վորևե յերկրում,—գրում եյին նրանք.—ժողովուրդն ամենայն սոսրությամբ չահագործվում է... Ճշմարտության համար յուրաքանչյուր պայքարող պետք է մնա այդպիսի յերկրում... Վորպեսզի նոր հասարակական կազմակերպության հիմք դնի»: Նրանք մարգարեաբար նախատեսում եյին Կաբեյի սկսած փորձի անհաջողությունը. «կոմունա-գաղութներում անխուսափելի յեն յերկպառակություններն ու անհամաձայնությունները... Անհնար է գույքի հանրայնացում անցկացնել առանց դեմոկրատիկ անցողիկ շրջանի... Մի քանի հարյուրավոր, կամ հազարավոր մարդկանցով»:

ԹԵՈԴՈՐ ԴԵԶԱՄԻ

Կաբեյի ուտոպիական գաղափարները տոգորված եյին, կրոնական տրամադրություններով և քրիստոնեյական սանտիմենտալություններով: Իր ուտոպիայի իրագործման համար Կաբեն, Ս.-Սիմոնի և Ֆուրյեյի պես, օգտագործում եր կրոնը: Այլ աշխահահայացք ուներ ֆրանսիական մի այլ ուտոպիստ, գաղտնի «Տարվա յեղանակներ միության» անդամ Թեոդոր Դեզամին (1803—1850): Հակառակ Կաբեյի Դեզամին հանդես յեկավ վորպես աթեիստ ու մատերիալիստ: 1842 թվին լույս տեսավ նրա «Գույքի հանրության կանոնավորող օրենքների ժողովածու» աշխատությունը, վորը գրված եր բանվորների շրջանում պրոպագանդ մղելու նպատակով: Թե այդ գրքում և թե իր մյուս աշխատություններում Դեզամին զարգացնում եր բռնի հեղափոխության և հեղափոխական դիկտատուրայի գաղափարը. նա ժխտում եր այն միտքը, թե կապիտալիզմը վորևե դեր կարող է կատարել նոր հասարակության կազմակերպման խնդրում: Դեզամին դասակարգային տեսակետ եր անցկացնում: Հոգեկան կյանքը նա մատերիական միայն հայելին եր համարում, տոտմն ու շարժումը ամեն ինչի կազմակերպողն են:

Հողի և արտադրության գործիքների հանրային տիրապետությունը, աշխատանքը բոլորի համար, գյուղի և քաղաքի տարբերության վոչնչացումը, հանրային դաստիարակությունը, պրոֆեսիոնալ կրթությունն (ինդուստրիալ և գյուղատնտեսական), ամուսնական ճրնշումների բացակայությունը, հավասար ինքնավար համայնքների ֆեդերացիան, ուր փալանստյորների տեղը «կոմունալ պալատն է» գրավում—սրանք են ապագա հասարակության այն հիմնական գծերը, վորոնք պատկերացնում է Դեզամին:

ՈՒՏՈՊԻԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՍԽԱԼՆԵՐԸ

Սոցիալական հակասությունները, կարիքի սրումը, հաճախակի կրկնվող ճգնաժամերի լայնածավալությամբ առաջացող գործադրկությունը՝ պարարտ հող եյին պատրաստում սոցիալիստական գաղափարների տարածման համար: Ուտոպիստներից վորոնք, ինչպես օրինակ՝ Ֆուրյեն, Կաբեն, նկարագրելով սոցիալիստական, կամ կոմունիստական կարգերը, հավատում եյին, վոր հնարավոր է կապիտալիստական կարգերի շրջանակում անհապաղ իրագործել կոմունիզմը: Նրանք բացասում եյին հեղափոխությունը, վորպես գոյություն ունեցող հարաբերությունների վերացման յեղանակ, յենթադրելով, վոր նոր հասարակություն ստեղծելը իրենց և առանձին անհատների գաղափարներից ու կամքից է կախված:

Ուրիշները, ինչպես Լուի Բլանը և նրա հետևորդները, պետական սոցիալիզմի կողմնակիցներ եյին:

Ձմռնելով պետության դասակարգային բնույթը, նրանք հույս եյին դնում արմատական սոցիալական ռեֆորմներ անցկացնել բուրժուա-դեմոկրատական պետության միջոցով:

Վերջապես՝ յերրորդ փոքրաթիվ խումբը կոմունիստ հեղափոխականներն եյին, Բլանքիի ղեկավարությամբ: Բլանքին ճիշտ եր հասկանում քաղաքական իշխանության գրավման անհրաժեշտությունը, բայց սխալ եր մտածում, թե այդ կարելի յե իրագործել չհենվելով մասսաների վրա:

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԴԵՊՔԵՐԻ ՈՐԱՑՈՒՅՑ

XVIII դ. վերջը և XIX դ. առաջին 35-ամյակը:

Անգլիական պրոլետարիատի անկազմակերպ պայքարը և համագործակցությունը առաջադեմ բուրժուազիայի հետ:

1769 թ. Մեքենաները վոչնչացնելու համար սահմանված մահապատժի օրենքը:

1789—80 թ. Միությունները և գործադուլներն արգելող օրենքները:

1814 թ. Հացի օրենքները.

1814—15 թ. Վիեննայի կոնգրեսը.

1819 թ. օգոստոս. Մանչեստերի ցուցարարների գնդակահարումը.

1824—Արհեստակցական միությունների արգելման օրենքի վերացումը.

1832—Պարլամենտական ռեֆորմը.

1833— Յերեխաների և պատանիների աշխատանքի սահմանափակման և ֆաբրիկային ինսպեկցիայի կազմակերպման օրենքները.

1834— Աշխատանքի գների մասին օրենքը:

30-ական թվականների յերկրորդ կեսը և 40-ական թվականները: Չարտիզմն Անգլիայում:

1836 թ. Լոնդոնի բանվորների ասոցիացիայի հիմնվելը.

1836—37 թ. Արդյունաբերական ճգնաժամ.

1838 թ. Առաջին պետիցիայի ներկայացնելը և կոնվենտի ընտրությունը.

1839 թ. Առաջին պետիցիայի մերժումը: Կոնվենտի ցրվելը.

1841—42 թ. Արդյունաբերական ճգնաժամ.

1841 թ. Չարտիստական ազգային ասոցիացիայի հիմնվելը.

1842 թ. II պետիցիայի ներկայացնելը և մերժումը.

1844 թ. Առաջին կոոպերատիվ ընկ. կազմվելն Անգլիայում (Ռոչդեյլյան պիոներներ).

1847 թ. 10-ժամյա բանվորական օր մտցնելը.

1847—48 թ. Արդյունաբերական ճգնաժամ.

1848 թ. III պետիցիայի ներկայացնելն ու մերժումը:

1814 թ.—1848 թ. փետրվար: Բուրբոնների ռեստավրացիան. Յուլիսյան միապետության և բանվորական շարժման զարգացումը Ֆրանսիայում:

1815—1830 թ. Ռեստավրացիայի շրջան.

1830 թ. Հուլիսյան հեղափոխություն.

1830—48 թ. Հուլիսյան միապետություն.

1831 թ. նոյեմբեր Լիոնի առաջին ապստամբությունը.

1834 թ. Մետաքսարդյունաբերության ճգնաժամը և միությունների արգելման օրենքը.

1834 թ. ապրիլ Լիոնի II ապստամբությունը:

ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ.

1. Ինչո՞ւ անգլիական բանվորները մեքենաների գործադրման առաջին տասնամյակներում իրենց գլխավոր թշնամիները մեքենաներն էյին համարում:

2. Ինչո՞ւ անգլիական բուրժուազիան պայքարում էր ընտրական ռեֆորմի համար:

3. Ինչով է՞ բացատրվում աշխատանքի տների մասին օրենքի հրատարակումը:

4. Վորո՞նք են Ռ. Ոուենի ուսմունքի դրական կողմերը:

5. Վորո՞նք են չարտիստական շարժման պատճառները:

6. Ի՞նչ տարբերություն կա Չարտիզմի աջ և ձախ թևերի մեջ՝ ծրագրային և տակտիկական հարցերում:

7. Ինչո՞վ կարելի յե բացատրել չարտիզմի պարտությունը:

8. Ֆրանսիայում ռեստավրացիայի շրջանում վո՞ր դասակարգերն էյին իշխանության գլուխ անցել և ինչպիսի՞ հակասություններ կային նրանց միջև:

9. վորո՞նք են ուտոպիկ սոցիալիզմի բնորոշ գծերը և ինչո՞վ են բացատրվում դրանք:

10. Ինչպե՞ս էր պատկերացնում Բլանքին բուրժուական հասարակությունից սոցիալիստականին անցնելը և վորոնք էյին նրա սխալները:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ—ԽՆԴԻՐՆԵՐ

1. Համեմատեցեք չարտիստների առաջին և յերկրորդ պետիցիաները (Хрестоматия Фридлянда и Слуцкого, 21 V, документы №№ 11 и 15*)

Թե մեկի և թե մյուսի հիմնական պահանջներից քաղվածքներ արեք և բացատրեցեք դրանց բովանդակության տարբերությունը:

2. Фридлянд и Слуцкий, хрестоматия-ի V գլխի № 23 դոկումենտի հիմնա վրա, նկատի առնելով ռեալ աշխատավարձի տատանման մակարդակը, կազմեցեք չարտիստական շարժման սխեմա:

3. Նույն хрестоматия-յի VI գլխի Б բաժնի № 6 դոկումենտի (Լուբլան) և Г բաժնի (Комунисты-революционеры) հիման վրա համեմատեցեք պետական-սոցիալիստներին և կոմունիստ-հեղափոխականներին և սխեմա կազմեցեք հետևյալ կտրվածքներով.—

ա) վերաբերմունքը դեպի իշխանությունն ու պետությունը,

բ) նպատակներն ու ուղիները,

գ) պայքարի մեթոդները,

դ) թե մեկի, թե մյուսի սխալները:

*) Ծանոթություն. Ռուսերեն չգիտեցողները կարող են փոխարինել Կ. Ղազարյան-Արևմտ. Եվրոպ. դաս. պայք. պատմ. պրակ I, գլ. V դոկում. №№ 8 և 9:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

ԴՈԿՈՒՄԵՆՏՆԵՐ

Ц. Фридлянд и А. Слуцкий. История революц. движения Западной Европы (1789—1914), Хрестоматия. այս թեմային վերաբերվում են՝ V գլուխը՝ — «Չարտիզմ» և VI գլխի՝ «Револ. 1848 г. во Франции» №№ 1—6 դոկումենտները:

Կ. Ղազարյան—Արևմտ. Եվրոպ. դասակ. պայք. պատմ. պրակ I, գլ. V և VI:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ.

Н. М. Лукин (Антонов) Новейшая история Западной Европы, вып. I. տվյալ թեմային վերաբերում են VI գլխի §§ 63, 64 և, VII, VIII, IX գլուխները: Ц. Фридлянд, История Западной Европы ч. I, 9, 10 և 11 դասախոսությունները:

Ф. Ротштейн, Очерки по истории рабоч. движения в Англи, изд. II. սույն թեմային վերաբերվում է առաջին մասը (էջ 5—83):

Б. И. Горев, История социализма, т. I, էջ 37—117, (Ոուենի, Ս.-Սիմոնի և Ֆուրյեյի մասին):

Фр. Энгельс, положение рабоч. класса в Англии

» » Развитие социализма от утопии к науке.

С. Моносов.—Два восстания Линоских рабочих.

Գեղարվեստական գրականություն.

Ч. Дикенс.—Домбы и сын. **Его же** Тяжелые времена հռչակավոր անգլիական վիպասանի յերկու վիպակներում էլ նկարագրված է ձեռնարկուների և բանվորների հարաբերությունները մանր բուրժուազիայի, մանր արհեստավորության արտադրության տեսակետից: **В. Гюго,** Отверженные (20—30 թ. թ. Ֆրանսիան) կա հայերեն թարգմանությունը՝ «Թշվառներ» О. Бальзак-ի Евгения Гранде, отец Горио; Утраченные иллюзии (Ֆրանսիական հռչակավոր վիպասանի վեպերում նկարագրված են բուրժուական Ֆրանսիան):

П. Беранже, Песни (նրա յերգերում արտացոլել է XIX դ. 20—40 թ. թ. ֆրանսիական կյանքը):

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՈՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ 1848 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Այս գլուխը յերեք մասից է կազմված՝ 1) Փետրվարյան հեղափոխությունը Ֆրանսիայում, 2) հեղափոխությունը Գերմանիայում, 3) հեղափոխություն Իտալիայում: Այս հեղափոխությունների հիմնական տարբերությունները պայմանավորվում են հեղափոխությունը տեղի ունեցած յերկրների տնտեսական զարգացման տարբեր աստիճաններով:

Փետրվարյան հեղափոխության ժամանակ, պրոլետարիատն առաջին անգամ բուրժուազիային քաղաքական ու սոցիալական պահանջներ ներկայացրեց: 1848 թվին Ֆրանսիայում տեղի ունեցավ «յերկու դասակարգերի միջև առաջին մեծ կռիվը» (Մարքս):

Փետրվարյան հեղափոխությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է պարզաբանել՝

1. Փետրվարյան հեղաշրջման ժամանակ ի՞նչ դեր են խաղացել՝ մի կողմից պրոլետարիատը, մյուս կողմից բուրժուազիան, ինչպիսի՞ տարբերությամբ եյին նրանք հասկանում փետրվարյան հեղափոխությունը և ի՞նչ նպատակներ եյին հետապնդում:

2. Ի՞նչ վերաբերմունք եր ցուցաբերում բուրժուազիան՝ դեպի պրոլետարիատի պահանջները և պրոլետարիատի հանդեպ ինչպիսի՞ տակտիկա յեր բանեցնում:

3. Ինչո՞ւ և ի՞նչ պատճառով բուրժուազիայի և պրոլետարիատի միջև յեղած խուլ պայքարը փոխվեց ակնհայտ դասակարգային պայքարի:

4. Ի՞նչ դիրք բռնեց այդ պայքարում մանր-բուրժուազիան:

5. Վորոնք եյին պրոլետարիատի պարտվելու պատճառները: Գերմանիան, Ֆրանսիայի հետ համեմատած, տնտեսապես շատ հետամնաց եր. այնտեղ պրոլետարիատը հեղափոխական կռիվներում մեծ մասամբ վճռական դեր խաղալով հանդերձ, իր ամբողջությամբ պայքարում եր բուրժուական լոզունգների համար:

Այս մասն ուսումնասիրելու ժամանակ, պետք է պատասխանել հետևյալ հարցերին.—

1. Ինչպիսի՞ դասակարգային հակասությունների արդյունք եր հեղափոխությունը.

2. Իր դասակարգային նպատակներով, ի՞նչ բնույթ ուներ հեղափոխությունը:

3 Հեղափոխության ընթացքում բուրժուազիայի և պրոլետարիատի միջև ինչպիսի՞ հակասություններ յերևան յեկան:

4. Ինչո՞ւ հեղափոխությունը անհաջողության հանդիպեց: Փետրվարյան և մարտյան — հեղափոխություններն ուսումնասիրելիս, անհրաժեշտ է նույնպես պարզաբանել այն հարցը, թե ի՞նչ նշանակություն ունեցան այդ հեղափոխությունները պրոլետարիատի հետագա պայքարի համար՝ ընդդեմ բուրժուազիայի: Վերջապես Իտալիան, վորը տնտեսապես ավելի հետամնաց եր, քան Գերմանիան. այնտեղ

պրոլետարիատը թվով չնչին եր և հեղափոխական շարժման լոկ մասնակցում եր: Հեղափոխության մեջ ղեկավարող դերը մանր-բուրժուազիային եր պատկանում: Այս բաժինն ուսումնասիրելիս անհրաժեշտ է պարզել՝

1. Ինչի՞ց առաջացավ ազգային լիբերալ շարժումն Իտալիայում:

2. Հեղափոխության ժամանակ ի՞նչ նպատակներ եյին առաջադրել՝ մի կողմից՝ առևտրա-արդյունաբերական, մյուս կողմից՝ մանր-բուրժուազիան:

3. Ի՞նչ պատճառներով եր պայմանավորված հեղափոխության պարտվելը:

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Հուլիսյան միապետությունը Ֆրանսիայում միայն պրոլետարիատի շարքերում չէ, վոր վրդովմունք եր առաջացնում: Ֆրանսիայի արիստոկրատիայի կամայական տիրապետությունն ավելի ու ավելի յեր գժգոհություն պատճառում բուրժուազիայի մյուս խմբերին, վորոնք բարձր ընտրական ցենզի հետևանքով քաղաքական կյանքում մասնակցություն չունեյին:

Գժգոհները պահանջում եյին փոխել ընտրական որենքը: Քանի վոր այդ պահանջները յելնում եյին սոցիալական տարբեր խավերից, ուստի միատեսակ չեյին: Խոշոր արդյունաբերական բուրժուազիան պալատներում փոքրամասնություն լինելով, այսպես կոչված «պաշտոնական ոպոզիցիան» եր կազմում: Ֆինանսական բուրժուազիան յերկիրը կողոպուտի յեր յենթարկում. շնորհիվ գործադրվող սիստեմի, այդ կողոպուտից արդյունաբերական բուրժուազիան փշրանքներ եր միայն ստանում, մինչ այն, այդ սիստեմը, Մարքսի ասելով, «վտանգի յեր յենթարկում և վնասում եր առևտրի ու արդյունաբերության, յերկրագործության, նավագնացության շահերին՝ արդյունաբերական բուրժուազիայի շահերին»: «Պաշտոնական ոպոզիցիան» պատրաստ եր Լյուդովիկ-Ֆիլիպպի միապետության հետ գործարք կատարել, միայն նա պահանջում եր ընտրական ցենզի վորոշ իջեցում, հույս տածելով, թե այդ հանգամանքն իրեն հնարավորություն կտա իշխանության հասնելու: Միջին բուրժուազիան, վորպեսզի վերջ տա հուլիսյան միապետության, ձգտում եր հանրապետության, բայց առարկում եր ամեն մի սոցիալական ռեֆորմի դեմ:

Բուրժուական ոպոզիցիայի ամենաձախ թևը բռնում եյին դեմոկրատ-հանրապետականները, մանր-բուրժուական ինտելիգենցիայի այն խմբակը, վորն իր պահանջներով խիստ բաժանվում եր կոմունիստներից: Նրանց առաջնորդ Լեդրյու-Ռոլենը (1848 թ. մինիստր) գրում եր՝ «յես կոմունիստ չեմ և խորապես ատում եմ կոմունիզմը»: Դեմոկրատ-հանրապետականները կողմնակից եյին 1793 թ. սահմանադրության. նրանք սոցիալական ռեֆորմներ եյին պահանջում, վորոնք պետք է բարելավեյին հասարակության ցածր շերտերի դրությունը. սակայն առանց մի պայմանի ձեռնամուխ լինելու, այն է, «ամեն մի բարոյականության հիմքը կազմող» սեփականության իրավունքի սրբությունը, պետք է անձեռնմխելի մնա:

1839 թ. անհաջող ապստամբությունից հետո վերացան դավադրությունները, ապստամբությունները և տերրորիստական գործողությունները: Առաջնորդների ձերբակալությամբ առանց գլխավորման

մնաց Փաբրիկային ու արհեստավորական պրոլետարիատի ամենահեղափոխական մասը: Բուրժուազիայի ոպոզիցիան վոչինչ չկարողացավ անել: «Կարգը յերկարատև ապահովված է» հայտարարեց մինիստրության ղեկավար Գիզոն՝ փետրվարյան հեղափոխությունից յերկու տարի առաջ: «Ֆրանսիայում հոյակապ խաղաղ հանգստություն է տիրում: Անգույն, քնաթաթախ ու հորանջող է աշխարհը: Ձմեռվա գիշեր է, ամեն ինչ հանգիստ է: Միայն միալար կաթիլթոցն է լսվում: Այդ տոկոսներն են կաթիլ առ կաթիլ կապիտալի վրա ընկնում»: Այսպես եր գրում, այդ ժամանակ Ֆրանսիայում ապրող գերմանական բանաստեղծ Հայնեն:

Սակայն այդ «քնաթաթախ, հորանջող աշխարհի» ծածկոցի տակ բանվորական մասսաների մեջ նոր հեղափոխական ուժեր եյին հասունանում. տարածվում եյին Լուի Բլանի և Կաբեյի ուսմունքները:

Թագնված կատաղությունը ժամանակ առ ժամանակ հանդես եր գալիս և նորանոր մահափորձեր եյին կատարվում Լուի Ֆիլիպի դեմ: Յեվ բավական եր մի քանի արտաքին ցնցում, վորպեսզի հուլիսյան միապետությունը կործանվեր: 1845 թ. Ֆրանսիայի բերքը շատ վատ եր: Հաջորդ տարին դրան ավելացավ գետնախնձորի հիվանդությունը, իսկ գետնախնձորը քաղաքի չքավորության գրեթե միակ կերակուրն եր: Ֆրանսիայի զանազան մասերում, քաղցի հետևանքով, խռովություններ առաջացան, կառավարությունը դրանց պատասխանում եր՝ քաղցածներին պատժի յենթարկելով: 1847 թ. բռնկվեց համաեվրոպական ծանր արդյունաբերական ճգնաժամ, պրոլետարիատի համար իր բոլոր սարսափելի հետևանքներով: Ճգնաժամը հարվածեց նաև արդյունաբերական բուրժուազիային, ուստի նրա համար ավելի անտանելի դարձավ փինանսական արիստոկրատիայի ինքնակալությունը: Հասարակության ստորին շերտերի շարժումներն արդյունաբերական բուրժուազիային արիություն եր ներշնչում, քանի վոր նա կարող եր օգտվելով այդ շարժումներից սարսափի մեջ գցել կառավարության. բայց մյուս կողմից, ինքը վախենում եր, չլինի թե այդ շարժումը հեղափոխության վերածվի: Ահա ինչու արդյունաբերական բուրժուազիան հեղափոխությունից խուսափելու նպատակով վճռականորեն ռեֆորմներ եր պահանջում, այսինքն, ընտրական իրավունքի լայնացում: Այդ պահանջներին Գիզոն պատասխանում եր՝ «հարստացեք, աշխատեցեք, տուրքեր մուծեցեք և դուք ընտրողներ կդառնաք»: Կառավարության անդրդվելիությունը պարլամենտական ոպոզիցիային ստիպեց ոժանդակության համար յերկրին դիմել:

Դիմումի համար ոպոզիցիան հարմար ձև ընտրեց՝ բանկետները, այսինքն, ցուցակագրված հասարակական ճաշկերույթներ, վորոնց ժամանակ քաղաքական ճառեր եյին արտասանվում: Ճաշկերույթների թանկությունը (մինչև 10 ֆրանկ) բուրժուազիայի համար ապահովում եր հարկավոր մարդկանց մասնակցությունը: Իսկ «յերկիրը», այսինքն՝ բանվորների ու մանր-բուրժուազիայի չապահովված մասը, վորպեսզի բանկետը ցանկալի ազդեցություն ունենա, պետք է փողոցներում խաղաղ ցույցեր կազմակերպեր: Ոպոզիցիան վոչ հեղափոխություն եր ուզում և վոչ էլ հանրապետություն: Նա ագիտացիա յեր տանում հոգուտ ընտրական ռեֆորմի: Հեղափոխական տրամադրությունները քանի գնում ավելի լայն եյին տարածվում մասսաների մեջ:

«Իմ աներոջը շուտով կվռնտեն, ինչպես Կարլ X-ին», գրում եր հեղափոխությունից մի քիչ առաջ բելգիական թագավորը՝ Լուի-Ֆի-

լիպի փեսան: Սակայն, թագավորն ու նրա մինիստրները ընդդիմանում եյին ամեն մի փոփոխության:

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՈՐԵՐԸ

Այսպիսի պայմաններում տեղի ունեցավ 1848 թվի փետրվարը Ֆրանսիայում: Փետրվարի 22-ին Փարիզում նշանակված եր բանկետ. բանկետի ժամանակ պետք է բանվորների և ուսանող յերիտասարդության մի հսկայական ցույց տեղի ունենար: Կառավարությունը բանկետն արգելեց: Ընդդիմանալ դրան, նշանակում եր հեղափոխության ճանապարհը բռնել: Բուրժուազիան հետ քաշվեց: Բանկետի կազմակերպիչները, նրանց թվում նաև Լեդրյու-Ռոլանը և Լուի Բլանը, դիմեցին Փարիզի բնակչությանը՝ հրաժարվել յելույթից: Բանկետը տեղի չունեցավ, բայց փետրվարի 22-ին կանուխ առավոտվանից բանվորների և արհեստավորների մեծաքանակ զանգվածներ լցվեցին Փարիզի փողոցները: Ուսանողների խմբերն անցան այդ զանգվածի գլուխ և վիթխարի ցույցը գոչելով՝ «Կորչի՛ Գիզոն, կեցցե՛ ռեֆորմը»՝ շարժվեց դեպի Փարիզի կենտրոնը: Շուտով ընդհարում տեղի ունեցավ կառավարական զորքերի հետ. ցուցարարները կողոպտեցին զինախանութները և զինվեցին, իսկ յերեկոյան բանվորական արվարձաններում բարրիկադներ կառուցվեցին: Կառավարությունն իրեն պաշտպանելու համար առաջ քաշեց խոշոր և միջին բուրժուազիայից կազմված ազգային գվարդիան: Սակայն ազգային գվարդիան հրաժարվեց շարժումը ճնշելու մասնակցությունից, իսկ մի քանի մասեր միացան ապստամբներին: Նա համոզված եր, վոր շարժման վերջին նպատակն ընտրական ռեֆորմը և Գիզոյի կառավարության տապալումն է: Լուի-Ֆիլիպը վճռում է հրաժարեցնել Գիզոյին: Այդ լուրն արագությամբ տարածվեց ամբողջ քաղաքում: Պայքարը դադարեց: Յերեկոյան Փարիզի լուսավորված փողոցներով շարժվում եր արվարձանների բանվորությունը՝ մարսելյոզ յերգելով: Զինվորների մի ջոկատ, վոր պաշտպանում եր ինչ վոր կառավարական շենք, կտրեց մասսայի ճանապարհը: Ջոկատի պետի հետ բանակցությունների ժամանակ, մի անհայտ անձնավորություն կրակեց, վորին հետևեց մասսայի վրա ուղղված՝ ջոկատի համազարկը: Տեղն ու տեղը շատերն սպանվեցին և վիրավորվեցին: Այդ բանը կռվի վերսկսվելու ազդանշան դարձավ: Հսկայական թափորն սպանվածների դիակները վերցրած, ահազանգի ձայնի և ջահերի լույսի տակ «Զինվե՛լ, վրեժ առնել» գոչելով, մինչև կես գիշեր շրջում եյին Փարիզի փողոցներով: Առավոտյան դեմ գրեթե ամբողջ փողոցը ծածկվեց բարրիկադներով: Զանազան քաղաքամասերում սկսվեցին արյունալի ընդհարումներ: Հեղափոխական ժողովուրդը կռվով մոտենում եր Թյուլերիի պալատին: Թագավորը հազիվ կարողացավ գահից հրաժարվելու ակտն ստորագրել և փախուստի դիմելով ազատվել: Ժողովուրդը պալատը գրավեց: Բաստիլիայի հրապարակի վրա ծաղրական աղաղակներով թագավորական գահը խարույկի մատնեցին: Ինչպես 1830 թվին, այս անգամ էլ բուրժուազիան շտապեց հաղթության արդյունքներն իրեն համար օգտագործել:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Զինված պրոլետարիատի ճնշման տակ միապետությունը տապալված հայտարարեցին և ժամանակավոր կառավարություն կազմակերպեցին, վորի մեջ բանվորների կողմից յերկու ներկայացուցիչ անցան՝ Լուի Բլանը և բանվոր-մեխանիկ Ալբերը: Այսպիսով իսկական հաղ-

Թողները կառավարության տասն և մեկ տեղից միայն յերկուսն առա-
ցան: Փետրվարյան հաղթությունից հետո բուրժուաչիայի այս առաջին
քայլն եր պրոլետարիատին. դրան հետևեց խաբեբայությունների մի
ամբողջ շարան: Չնայած ժամանակավոր կառավարության մեջ մեծա-
մասնությունները արդյունաբերական բուրժուազիայից եյին, բայց
զինված, իր պահանջները բարձրաձայն հայտարարող պրոլետարիատի
գոյության փաստը անհրաժեշտ եր դարձնում հարմարվողական և հա-
մաձայնողական քաղաքականությունը:

Այդ իսկ պատճառով, ժամանակավոր կառավարության մեջ, ղե-
կավարող դերը մանր բուրժուազիայի՝ իսնուեթիաններ և արհես-
տավորների մի մասի առաջնորդ Լեդրյու-Ռոլենը և ավելի աջ կանգ-
նած, բայց այդ խավին մոտ, բանաստեղծ Լամարտինն եյին կատա-
րում: Աշխատանքի ու կապիտալի պայքարի վճռական մոմենտում նը-
րանք յերկուսն էլ կապիտալի կողմն անցան:

ԾԱԾԿՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՄԻՋԵՎ

Փարիզի իսկական տերերը բանվորներն եյին հանդիսանում, վո-
րոնք գրավելով ժամանակավոր կառավարության շենքը (ռատուշան)՝
զինված ուժով պաշտպանում եյին հեղափոխությունը: Նրանք սպա-
սում եյին ժամանակավոր կառավարության կողմից հանրապետու-
թյուն հայտարարելուն. սակայն կառավարությունը թաղնվում եր հե-
ղափոխական բարբաջանքների հետևը, վոր ինքը «նախապատվություն
է տալիս հանրապետական կառավարական յեղանակին»: Այն ժամանակ
Փարիզի պրոլետարիատի առաջնորդներից մեկը, Ռասպայլը, բանվոր-
ների ներկայացուցչության գլուխ անցած, պրոլետարիատի անունից
հրամայեց ժամանակավոր կառավարության՝ հանրապետություն հայ-
տարարել. «յեթե այդ չիրագործվի յերկու ժամվա ընթացքում,—հայ-
տարարեց Ռասպայլը,—յես կվերադառնամ 200,000 մարդու գլուխ ան-
ցած»: «Դեռ յերկու ժամվա ժամկետը չանցած,—ասում է Մարքսը,—
Փարիզի բոլոր պատերին փայլում եյին պատմության մեջ խոշոր տա-
ռերով գրված՝ «Ֆրանսիական Հանրապետությո՛ւն, Ազատությո՛ւն,
Հավասարությո՛ւն, Յեղբայրությո՛ւն»: Ընդհանուր ընտրական իրա-
վունքի հիման վրա հանրապետություն հայտարարվեց, բայց ինչպիսի՞
հանրապետություն, այդ հարց եր. բուրժուակա՞ն, այսինքն՝ վոր իշ-
խանությունը ֆրանսական արիստոկրատիայից անցնում է բուրժուա-
զիայի ավելի լայն խավերին, թե՞ «սոցիալական», այսինքն, վոր պետք
է ուղեկցվի սոցիալական կարգերի փոփոխությամբ, ինչպես պահան-
ջում եյին Փարիզի բանվորները: Հենց հանրապետություն հայտարա-
րելու օրը, ժողովուրդը բանվորական արվարձաններից հեղափոխական
կարմիր դրոշակներով, կարմիր թաշկինակներով և կարմիր ժապավեն-
ներով գլխարկները զարդարած ներկայացավ կառավարության և պա-
հանջեց՝ պետական յեռագույն դրոշը փոխարինել կարմիր՝ սոցիալա-
կան հեղափոխության սիմվոլ-կարմիր դրոշով: Ժամանակավոր կառա-
վարությունը շատ լավ եր հասկանում, թե ինչ է նշանակում բարրի-
կադների դրոշ ընդունել: «Այդ անսքող պայքար եր պրոլետարիատի
և բուրժուազիայի միջև»—ասում է հետագայում Լամարտինը: Յեվ նա
իր ամբողջ բանաստեղծական պերճախոսությունը գործադրեց, վոր-
պեսզի համոզի ներկայացած բանվորներին՝ պահել յեռագույն դրոշը:
«Վորպես յերջանիկ հիշատակ ժողովրդական հեղափոխության վերջին
ակտի» դրոշի կոթին կարմիր վարդակապ ամրացրին:

Ի՞նչ պետք է հանդիսանա հանրապետությունը սոցիալական խընդ-

րում: Վերստին ռատուշայի շենքը փաթաթում է բանվորական զինված
ցույցը: Մասնակիցներից մեկը, պատանի բանվոր Մարշը, ներս մտավ
ռատուշա՝ «Քաղաքացինե՛ր, այժմ ևեթ աշխատանքի իրավունք հայ-
տարարեցեք: Այս է ժողովրդի կամքը, նա սպասում է՛»: Իսկ Լամար-
տինի առարկության նա ռեպլիկա նետեց՝ «բավական են ֆրազները»:
Կառավարությունն ստիպված եր ազդարարել, վոր պարտավորվում է
բոլոր քաղաքացիներին աշխատանքով ապահովել և ազգային արհես-
տանոցներ կազմակերպել:

Փետրվարի 28-ին բանվորները վերստին փողոց դուրս յեկան:
Նրանց դրոշակների վրա գրված եր իրենց պահանջները. «Աշխատանքի
մինիստրությո՛ւն: Տասժամյա բանվորական օ՛ր: Մարդը մարդու շա-
հագործելու վերացում»: Աշխատանքի մինիստրության փոխարեն կազ-
մակերպվեց «կառավարական բանվորական հանձնաժողով»: Այսպի-
սով զինված պրոլետարիատի ճնշման ներքո ժամանակավոր կառավա-
րությունը բանվորական հարցում զիջումներ եր անում, մի հարց, վոր
հենց իր խոստովանությամբ բոլոր հարցերից ամենակարևորն եր:
Սակայն այդ զիջումներն էլ նա վարպետությամբ օգտագործում եր
պրոլետարիատի պարտությունը նախապատրաստելու համար: «Կառա-
վարական բանվորական հանձնաժողովի»՝, վորի նիստերը Լյուքսեն-
բուրգի պալատում տեղի ունենալու պատճառով կոչվում եր «Լյուքսեն-
բուրգյան հանձնաժողով», նախագահներ նշանակվեցին Լուի Բլանը և
Ալբերը:

«Ի տարբերություն ամեն տեսակ սովորական պետական իշխանու-
թյունից,—ասում է Մարքսը,— նրանց տրամադրության տակ վոչ բյու-
ջե կար և վոչ գործադիր իշխանություն: Նրանք գլխով պետի կոտ-
րեյին բուրժուական հասարակության գլխավոր հիմքերը»: Լյուք-
սենբուրգի հանձնաժողովն անպտուղ աշխատանքի յեր մատնված. նրա
կազմակերպումով փաստորեն ժամանակավոր կառավարությունից հե-
ռացվեցին բանվորական ներկայացուցիչները, վերջապես նրա գոյության
փաստը, բանվորության կեղծ հույսեր ներշնչելով, իջեցնում եր նրա հե-
ղափոխական թափը: Պրոլետարիատի դեմ օգտագործվեցին նաև ազ-
գային արհեստանոցները, վորոնք դիտմամբ այնպես եյին կազմակերպ-
ված, վոր բանվորներին ապացուցեյին Լուի Բլանի գաղափարների ան-
միտ լինելը:
1847 թվի արդյունաբերական ճգնաժամն ե՛լ ավելի սրվեց՝ հեղափո-
խության ազդեցության տակ: Ամբողջ Ֆրանսիայում աճեց գործա-
զուրկների բանակը. միայն Փարիզում 1848 թ. փողոց շպրտվեցին
դրեթե 200.000 բանվոր: Գործազուրկների ամբոխն ամեն կողմից
շարժվում եր դեպի «ազգային արհեստանոցները»՝ այդ «ազատ ան-
գլիական բանվորական տները», ինչպես անվանել է նրանց Մարքսը:
Ազգային արհեստանոցների ղեկավար նշանակվեց ամենամոլեռանդ
ռեակցիոներներից մեկը՝ հանրային աշխատանքների մինիստր Մարին:
Նման արհեստանոցներ կազմակերպվեցին նաև Լիոնում, Մարսելում,
Նանտում, Ռուանում: Տարբեր պրոֆեսիաների բանվորներ օրական
յերկու ֆրանկով պետք է կատարեյին վոչ արտադրական դժվարին հո-
ղի աշխատանքներ: Բոլորին աշխատանք չեր հասնում, այդ պատճա-
ռով վերջիվերջո շաբաթական աշխատանքի օրերի թիվն իջավ 2-ի,
իսկ այն օրերի համար, վոր աշխատանքային օրերի համար վճարում եյին մե-
կական ֆրանկ: Ֆինանսական ճգնաժամի և մանր բուրժուազիայի

քայքայման ուժեղացման հետևանքով՝ թանկ նստող ազգային արհեստանոցները ընդհանուր հուզում էյին առաջացնում։

«Աշխատանքի պես մի բանի համար պետական թոշակ—ահա ինչ բան է սոցիալիզմը»։ Մարքսի վկայությամբ, այսպես էր արտահայտում մանր բուրժուազիան ազգային արհեստանոցների հանդեպ ունեցած իր հուզմունքը։ Գյուղացիությունը գրգռված էր, որ ժամանակավոր կառավարությունը գյուղացիության դրամները ծախսում է ձրիակերներին պահելու համար։ Եվ իրոք, փոխանակ բանկիրների, արդյունաբերողների, սպեկուլյանտների վրա հարկ դնելու՝ ազգային արհեստանոցների ծախսերը ծածկելու համար, ժամանակավոր կառավարությունն ամեն մի ֆրանկ ուղղակի հարկին ավելացրեց 45 սանտիմ (1 սանտիմը=0,01 ֆրանկի)։ Այս հարկի գլխավոր ծանրությունը գյուղացիության վրա ընկավ։ Դեռ առաջ գյուղացիության մեջ տարածված էր այն լուրը, որ բանվորությունը ցանկանում է նրա ձեռքից հողը խլել, ուստի խիստ թշնամական դիրք բռնեց դեպի պրոլետարիատը և արհեստավորների վրա նայում էր, որպես ձրիակերների վզի վրա։ Այսպիսով պրոլետարիատը բոլոր մյուս դասակարգերից մեկուսացվեց։

Ժամանակավոր կառավարությունը դրանով չբավարարվեց։ Նա փորձեց պրոլետարիատին յերկու մասի բաժանել և մեկ մասը մյուսին հակադրել։ Դրա համար ազգային արհեստանոցներում զինվորական կարգեր սահմանվեցին։ «Կառավարությունը կարծում էր,— գրում էր Մարքսը,—որ նրանց մեջ գտել է յերկրորդ բանվորական բանակ՝ հակադրելու հենց իրեն՝ բանվորության։

Այս անգամ «ազգային արհեստանոցների» վերաբերմամբ բուրժուազիան սխալվեց... նա խռովության բանակ ստեղծեց»։ Սակայն հաջողությամբ պսակվեց բուրժուազիայի նմանօրինակ մի այլ փորձը։ Նա կազմակերպեց 24 բատալիոն (20·000 մարդ) ռազմական ուժ՝ թռուցիկ կամ «մոբիլ» գվարդիան, որը կազմված էր 15–20 տարեկան կամավոր յերիտասարդներից։

Սրանք օրեկան $1\frac{1}{2}$ ֆրանկ էյին ստանում։ Գվարդիայի մեջ էյին մտնում բազմաթիվ լումպեն-պրոլետարներ, որոնք շնորհիվ իրենց սոցիալական շրջապատի և հասակի, բարոյապես անկայուն տարրեր էյին։

Այդ գվարդիայի սպաները բուրժուական յերիտասարդությունից էր։

Այսպիսով մի շարք խաբեբայություններով ժամանակավոր կառավարությունը պրոլետարիատին մեկուսացրեց և բուրժուական հանրապետության հաղթանակն ապահովեց։ Ժամանակավոր կառավարության դեկրետը Սահմանադիր ժողովի ընտրություններն ապրիլի 9-ին նշանակելու մասին հարմարեցված էր գյուղացիության դժգոհությանը։ Ակներև էր, որ գյուղացիությունը հակահեղափոխականներին է ընտրելու։ Փարիզի բազմաթիվ ակումբներում (շուրջ 200), որոնք իրենց մեջ միացնում էյին միատեսակ մտածող մարդկանց, հեղափոխական առաջնորդներն ու թերթերը, բանվորական մասսաներն ու մանր բուրժուազիան պահանջում էյին ժողովի ընտրությունները հետաձգել և տեղերն ուղարկել «քաղաքացիներ, որոնք կկարողանան լուսավորել գյուղացիական բնակչությանը»։ Այդ պահանջը պաշտպանում էր Փետրվարյան հեղափոխության ժամանակ բանտից ազատված Բլանքին։ Մարտի 17-ին Բլանքին հեղափոխական բանվորական ակումբների մի շարք այլ առաջնորդների հետ կազմակերպեց մի ցույց,

որին 200·000 մարդ էր մասնակցում. Նրանք պահանջում էյին ընտրությունները հետաձգել և զորքը Փարիզից հանել։ Ցույցը բոլորովին այլ հետևանք ունեցավ, հակառակ Բլանքիի սպասածին։ Նախորյակին բուրժուական ազգային գվարդիականները ցույց կազմակերպեցին ընդդեմ ժամանակավոր կառավարության։ Նրանք աղաղակում էյին՝ «կորչեն կոմունիստնե՛րը»։ Մահ Լեդրյու-Ռոլենին» և պահանջում էյին ժամանակավոր կառավարությունից՝ հեռացնել նրա բոլոր ձախ անդամներին։

Այս հանգամանքը մարտի 17-ի ցույցի նախատեսված բնույթը բոլորովին փոխեց։ Փոխանակ ժամանակավոր կառավարության դեմ դուրս գալու, ցույցը դուրս յեկավ ի պաշտպանություն նրա։ Ցուցարարների շարքից գոչում էյին՝ «կեցցե՛ Լեդրյու-Ռոլենը, կեցցե՛ ժամանակավոր կառավարությունը»։ Իզուր էր Բլանքին ճիգ թափում ուղղել գործը և կառավարության անդամներին ուղղած իր խոսաճառում պահանջում էր ընտրությունները հետաձգել և անհապաղ վճռական սոցիալական ռեֆորմներ մտցնել։ Լուի Բլանը, որ աշխատում էր ժամանակավոր կառավարության մեջ խաղաղություն պահպանել, դուրս յեկավ Բլանքիի դեմ։ Ցուցարարների տրամադրությունը դրանով վերջնականապես կոտրվեց և դրա հետևանքով ժամանակավոր կառավարության դրությունն ամրացավ և իշխանությունն իր ձեռքում պահեց մինչև Սահմանադիր ժողով։ Ընտրությունները միայն յերկու շաբաթով հետաձգվեցին։ Կառավարությունը գաղտնաբար դեպի Փարիզ էր քաշում բանակը։

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ

Մայիսի 4-ին հավաքվեց ազգային Սահմանադիր ժողովը։ Ժողովի 900 անդամներից մոտ 700-ը բուրժուական հանրապետության կողմնակիցներ էյին, իսկ 200-ը միապետականներ. հանրապետական կոչված սոցիալիստների թիվը միայն մի քանի տասնյակի էր հասնում։

Ժողովրդից յելած հասարակ մարդիկ պատգամավոր չընտրվեցին։ Ընտրվածները միայն «պարոններն» էյին։ Այդ ժամանակ Փարիզում ապրող՝ ռուս հրապարակախոս Հերցենի արտահայտությամբ «պարոնները» Ֆրանսիայի վիճակը տնօրինում էյին «չափանիշ ունենալով խանութպանի արշինն ու նպարավաճառի կշեռքը»։

Ժամանակավոր կառավարությունը հրաժարական տվեց, նրա տեղն ընտրվեց գործադիր հանձնաժողովը, որի մեջ այլևս տեղ չունեցան ոչ Լուի Բլանը և ոչ էլ Ալբերը։ Փետրվարյան հեղափոխության սոցիալական պատրանքներին վերջ դրին։ Այն ժամանակ Փարիզի պրոլետարիատը, որը չափազանց ուշ գլխի ընկավ իրեն գլխին կատարված խաբեբայությունների մասին, տարերայնորեն յելավ սոցիալական հեղափոխության պաշտպանության համար։

ԲԱՑՈՐՈՇ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՅԵՎ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՄԻՋԵՎ

Մայիսի 15-ին մի հսկայական զանգված շարժվեց դեպի այն շենքը, ուր Ազգային ժողովի նիստերն էյին տեղի ունենում։ Նրանք ներս խուժելով, խաբված ժողովրդի անունից Ազգային ժողովը ցրված հայտարարեցին։ Հենց այստեղ էլ նոր ժամանակավոր կառավարություն կազմեցին, գլխավորապես պրոլետարիատի ժողովրդականություն ունեցող առաջնորդներից։ Դեռ հազիվ էյին ռատուշայում նոր կառավարություն կազմել, յերբ ահազանգով կանչված ազգային և մոբիլ գվարդիաները հասան և ապստամբներին պատժի յենթարկեցին։

Ապստամբության առաջնորդներ՝ Բլանքին, Ռասպայլը, Ալբերը և ուրիշները ձերբակալվեցին, հեղափոխական ակումբները փակվեցին, Լյուքսեմբուրգյան հանձնաժողովը ցրեցին, վոչնչացրին այն բոլոր զիջումները, վոր արվել եր բանվոր դասակարգին: Մայիսի 15-ի ապստամբությունից պրոլետարիատը դուրս յեկավ գլխատված՝ նա զրկվեց իր առաջնորդներից:

ՀՈՒՆԻՍՅԱՆ ՈՐԵՐԸ

Մայիսի 15-ը ցույց տվեց, թե ում կողմն է ուժերի գերակշռությունը: Բուրժուազիան այլևս կարիք չեր զգում պրոլետարիատին հաճոյանալ:

Ընդհակառակը, Ազգային ժողովի մեծ մասը ցանկանում եր, վորքան հնարավոր է շուտ, պրոլետարիատին նորից դեպի ապստամբություն առաջ քաշել, վորպեսզի մի ջախջախիչ հարվածով նրա վոտնձգություններին վերջ դնի: Նման պրովոկացիայի միջոց ծառայեց ազգային արհեստանոցների փակելը: 100·000 բանվորություն փողոց նետվեց: «Բանվորներին մնում եր կամ քաղցից մեռնել, կամ պայքարն սկսել,—նա այլ յելք չուներ»—ասում է Մարքսը: Հունիսի 22-ի յերեկոյան Փարիզի փողոցներով շրջում եր սարսափելի հուզված մի հսկայական մասսա, կազմված բանվորներից ու բանվորուհիներից և աղաղակում եր՝ «Հաց, կամ գնդակ» «Ազատություն, կամ մահ»: Վոչ վոք նրանց չեր կանգնեցնում« Մենք նրանց հնարավորություն կտանք կենտրոնանալ իրենց կվարտալներում,—հայտարարեց գեներալներից մեկը,—իսկ հետո կշարժվենք այնտեղ և նրանց կոչնչացնենք: Այս անգամ նրանք մեր ձեռքից չեն պրծնի»: Հունիսի 23-ի ցերեկը և լույս 24-ի գիշերը բանվորներն իրենց ընտանիքներով արվարձաններում և նրանց կից փողոցներում բարրիկադներ եյին կառուցում: Հունիսի 24-ին, յերբ բուրժուազիայի կարծիքով շարժումն արդեն բավականին ծավալվել եր, Սահմանադիր ժողովը Փարիզում զինված դրություն հայտարարեց և դիկտատոր նշանակեց գեներալ Կավենյակին, վորը բարրիկադների դեմ դուրս հանեց կանոնավոր զորքը,—ազգային ու մոբիլ գվարդիաները: Սկսվեց դիկտատուրան, վորն «առաջացավ մինչև կոկորդ արյան մեջ և վերջացավ մինչև կոկորդ խայտառակության մեջ» (Հերցեն): Յերեք որ փողոցներում այնպիսի կատաղի կռիվներ եյին տեղի ունենում, ինչպիսին յերբեք հեղափոխություն ապրած Փարիզը չեր տեսել:

Մանր բուրժուական ուսանող յերիտասարդությունը, Փարիզից հաճախ 100–200 մղոն հեռու ընկած վայրերից յեկած գյուղացիությունը՝ Կավենյակի զորքերի հետ միասին կռվում եյին ապստամբների դեմ: Միայնակ բոլորի դեմ, առանց առաջնորդների, առանց լավ կազմակերպության, հաճախ առանց զենքի, յերեք որ անընդհատ պրոլետարիատը պաշտպանում եր իր արվարձանները: Բանվորները քայլ առ քայլ նահանջում եյին, վերանորոգելով դիմադրությունը բարրիկադների հաջորդ շարքի վրա: Հունիսի 26-ին, ցերեկվա ժամը 2-ին ընկավ ապստամբների վերջին հենարանը՝ Սեն-Անտուանի արվարձանը: Կռիվը վերջացավ: Սկսվեց դատաստանը: Գերիներին գնդակահարում եյին, նետեցնում եյին գետնի տակով անցնող Փարիզի կոյուղու մեջ, տներն եյին խուժում և այնտեղ սպանում անզեն բանվորներին: Բարրիկադների վրա սպանվածների թիվը 12·000-ից պակաս չեր: Մոտ 15 հազար մարդ ձերբակալվեց, վորոնցից մոտ 5 հազարը տաժանակիր աշխատանքի աքսորվեց Հարավային Ամերիկայի վատառողջ վայրերը: Ան-

Գլխական մամուլի տվյալներով սպանվածների թիվը հասնում է մինչև 50·000 իսկ ձերբակալվածներինը՝ 25.000-ի: «Վայ նրան,—գրում եր Լուի Բլանը,—ով կհամարձակվեր բարեգութ մի խոսք արտասանել: Նույնիսկ ծնողներին արգելված եր վողբալ իրենց զավակների մահը»: «Վայ նրանց, ովքեր այդպիսի բաները ներում են»,—գրում եր Հերցենը:

«Հեղափոխությունն այդ պատմական գնդակահարությամբ վերջացավ. թվով գերազանցողը մանր բուրժուազիան եր, վորը մնաց իբրև բուրժուազիայի անկարող քաղաքական պոչ և, յերեք տարի անց, Ֆրանսիայում վերստին վերականգնեց կեսարական միապետությունն առանձնակի նողկալի ձևով... Յեթե կա ճահիճ, սատանան կգտնվի: Յեթե կա անկայուն, տատանվող, հեղափոխության զարգացումից վախեցող՝ մանր բուրժուազիա,—Կավենյակի հանդես գալը պատրաստ է» (Լենին):

ՀՈՒՆԻՍՅԱՆ ՋԱԽՋԱԽՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած պրոլետարիատի ջախջախվելուն, Հունիսյան ապստամբության նշանակությունը շատ մեծ է: «Այդ,—ասում է Մարքսը,—առաջին մեծ կռիվն եր ժամանակակից հասարակության յերկու դասակարգերի միջև: Բուրժուական կարգերի պահպանման ու տապալման կռիվ եր այդ կռիվը... Միայն նրա (պրոլետարիատի) հաղթվելը պարզեց իր համար այն ճշմարտությունը, վոր նրա դրության նույնիսկ չնչին բարելավումը բուրժուական հանրապետության սահմաններում մնում է վորպես ուտոպիա, և վոր այդ ուտոպիան վոճրագործություն է դառնում նրա կենսագործման հենց առաջին փորձի ժամանակ»:

Բուրժուազիայի կողմից դրդված Հունիսյան ապստամբությունը պրոլետարիատի պարտությունն եր: «Բայց պրոլետարիատը ընկնում է պատվով մեծ համաշխարհային պատմական պայքարում. վոչ միայն Ֆրանսիան, այլև վողջ Յեվրոպան ցնցվում է հունիսյան յերկրաշարժից» (Մարքս):

Լոնդոնի յեղբայրական դեմոկրատների միությունը, վոր հեղափոխական-եմիգրանտների միջազգային կազմակերպություն եր, Անգլիայի բանվորներին ուղղած իր կոչում գրում եր. «Կարմիր հանրապետության դրոշը՝ ամբողջ Յեվրոպայի պրոլետարիատի դրոշն է: Սենտ-Անտուանի արվարձանի կարմիր դրոշը պոկել, դեռ չի նշանակում հաղթել: Այն հավատը, վորի սիմվոլն է ծառայում այդ դրոշը, միայն մի Փարիզով չի սահմանափակվում: Նա ապրում ու աճում է այն բոլոր անկյուններում, ուր կենտրոնանում է արդյունաբերությունը: Յեվ մի պարտություն, նույնիսկ հիսուն պարտություններ չեն կարող նրա վերջնական հաղթանակին արգելք հանդիսանալ»:

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԵԼԸ

Բանվոր դասակարգի և նրա առաջնորդների հետ իր հաշիվները մաքրելուց հետո, Սահմանադիր ժողովը, Հերցենի արտահայտությամբ այդ «բարկացած խանութպանների ժողովը», հանրապետության սահմանադրության մշակման անցավ: Սահմանադրությունը նախ և առաջ վերջ դրեց «սոցիալական ուտոպիաներին»: «Աշխատանքի իրավունքը» սահմանադրությունից ջնջվեց: 12 ժամյա բանվորական որվա տևողություն սահմանվեց: Ընդհանուր ընտրական իրավունքի հետ միասին բուրժուական «ազատություններ» մտցվեցին, վորոնք յերբեք էլ պրոլետարիատի համար չեյին. որինակ, Փարիզում լրագիր հրա-

տարակելու համար պետք ե 24000 ֆրանկ գրավական մուծեյին. արժան բանվորական թերթերի հրատարակությունը բնական ե, պետք ե դադարեր: Ըստ սահմանադրության, որենսդիր իշխանությունը պատկանում եր 750 հոգուց կազմված պալատին (Որենսդիր ժողով), վորն ընտրվում եր յերեք տարի ժամանակով: Վախը «կարմիր ուրվականից» Սահմանադիր ժողովին ստիպեց գործադիր իշխանության հանձին պրեզիդենտի, դերն ու նշանակությունն ուժեղացնել: Պրեզիդենտն ընդհանուր քվեարկությամբ եր ընտրվում. Որենսդիր ժողովից դուրս ընտրվելով՝ պրեզիդենտն որենսդիր իշխանությունից անկախ եր դառնում: Պրեզիդենտն ընտրվում եր 4 տարի ժամանակով, իրավունք ուներ մինիստրներ նշանակել և հեռացնել առանց որենսդիր ժողովի հավանության, իրավունք ուներ բանակը և հսկայական բյուրոկրատական ապարատն իր հայեցողությամբ ղեկավարել: Արված եր այն բոլորը, ինչ վոր կարող եր վոչնչացնել հանրապետությունը և միապետական հեղաշրջման հաջողությունները ապահովել: Առաջին Պրեզիդենտ ընտրվեց Լուի Բոնապարտը, Նապոլեոն I-ի յեղբոր վորդին, «ապրած՝ հին կոնծող»՝ Մարքսի բնութագրով, «մեր դարի ամենաընդունված տխմարը»՝ Ենգելսի բնութագրով: Լուի Բոնապարտի ոգտին մեծ մասամբ գյուղացիությունը քվեարկեց. գյուղացիությունը չեր մոռացել, վոր Նապոլեոն I-ը, ֆրանսիական մեծ հեղափոխությունից գյուղացիության ստացած հողի սեփականության իրավունքն ամրացրեց:

«Նապոլեոնը գյուղացիների համար վոչ թե անձնավորություն եր, այլ ծրագիր, դրոշակներով և յերաժշտությամբ, նրանք գնացին ընտրության տեղը. նրանք գոչում եյին «այլևս հարկեր չկան. կորչե՛ն հարուստները, կորչի՛ հանրապետությունը. կեցցե կայսրը» (Մարքս):

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Մայիսի 29-ին Որենսդիր ժողովը հավաքվեց: Այնտեղ միապետականները գերակշռում եյին. 700 պատգամավորներից 450-ը միապետականներ եյին: Բայց նրանք բաժանված լինելով յերեք ֆրակցիայի, միմյանց թուլացնում եյին: Այդ ֆրակցիաներն եյին՝ Բուրբոնների տոհմի կողմնակիցներ (լեգիտիմիստներ*), Որլեանական տոհմի կողմնակիցներ «Որլեանիստներ» և Նապոլեոնի (Բոնապարտիստներ) կողմնակիցներ: Այդ խմբերը հողատերերի, ֆինանսիստների և առևտրական բուրժուազիայի արտահայտիչներ լինելով, միանում եյին ընդդեմ հանրապետության և մեկ «կարգի կուսակցություն» կազմում, Որենսդիր ժողովի բավական ուժեղ ձախ թևի (մոտ 200 պատգամավոր) դեմ պայքարելու համար: Ձախ թևը 1793 թվի հեղափոխականների որինակով, իրեն «Լեռան կուսակցություն» եր անվանում, իր շարքերում շատ քիչ սոցիալիստներ ուներ. նրա մեծամասնությունը մանր բուրժուազիայի ներկայացուցիչներն եյին: Որենսդիր ժողովում «ձախերը» անզոր եյին պայքարելու միացյալ «կարգի կուսակցության» դեմ: 1849 թ. հունիսի 13-ին «Լեռը» փորձեց ապստամբություն բարձրացնել և հեղաշրջում առաջ բերել: Նա պրեզիդենտին մեղադրում եր

*) Լեգիտիմիստ կոչվում եյին բուրբոնների կողմնակիցները. նրանց կարծիքով այդ տոհմն եր ժառանգական գահի որինական տերը. («լեժիտիմ» ֆրանսերեն նշանակում ե «որինական») հակառակ այն տոհմերի, վորոնք գահ են բարձրացել հեղափոխության շնորհիվ:

այն բանում, վոր չնայած սահմանադրությամբ արգելված ե ուրիշ յերկրների ազատությունները ճնշել, պրեզիդենտը զորքեր ե ուղարկել Հռոմի պապին ոգնելու: Հունիսի ջախջախումով արյունաքամ յեղած Փարիզի պրոլետարիատն ընդհանուր առմամբ պասիվ մնաց: «Լեռը» ջախջախվեց. նրա անդամների մի մասը արտասահման փախավ, մյուսը դատի յենթարկվեց, «Լեռան» անհաջող յելույթը «կարգի կուսակցությանն» առիթ տվեց ռեակցիան ուժեղացնել: Հանուն «սեփականության, ընտանիքի, կրոնի, կարգի» վերացնում եյին «ազատությունները», դպրոցները հոգևորականության հսկողության ներքո եյին դնում, Ֆրանսիայի զանազան մասերում ռազմական դրություն եյին մտցնում: 1850 թ. մայիսին ընդհանուր ընտրական իրավունքը վերացվեց: Ընտրել կարող եյին միայն նրանք, վորոնք յերեք տարուց վոչ պակաս շարունակաբար միևնույն տեղում եյին ապրել:

Ձայնից զրկվում եյին բոլոր նրանք, ովքեր դատի եյին յենթարկվել իշխանությունը վիրավորելու համար, նրանք, վորոնք մասնակցել եյին գաղտնի ընկերություններին: Ընտրողների թիվը 3 միլիոնով կրճատվեց: Թիյերի առաջարկությամբ ընտրական իրավունքից զրկվեց «ստոր ամբոխը»՝ բանվորական մասսան, վորն ստիպված եր աշխատանք վորոնելու համար շարունակ տեղահան լինել, նույնպես և մանր բուրժուազիայի ամենաարմատական առաջնորդները: «Կարգի կուսակցությունը» ցնծում եր:

1851 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ը

Լուի Բոնապարտը ճոճվում եր տարբեր քաղաքական խմբավորումների միջև. յերբեմն սպառնում եր Որենսդիր ժողովին, յերբեմն ստորանում նրա առաջ, նայած հարաբերությունների փոփոխության: Գահին ձգտելու ընթացքում նա շատ լավ հաշվի յեր առնում իր հակառակորդների թուլությունը և այն ուժերը, վորոնց վրա կարող եր հենվել: Թե բանակում, թե աստիճանավորների շրջանում բոլոր պատասխանատու տեղերում՝ իրեն նման ավանտյուրիստներ եր նշանակել: Զորքն ու բյուրոկրատիան նրա կողմն եյին: Նրա կողմն եր նաև գյուղացիությունը, պրոլետարիատը և մանր բուրժուազիան, վորոնցից դիմադրություն կարելի յեր սպասել, ջախջախված եյին: Բացի այդ, Լուի Բոնապարտը վերականգնելով ընդհանուր ընտրական իրավունքը, հույս եր տածում նրանց իր կողմը գրավել: Բոնապարտի պրեզիդենտության չորս տարին արդեն լրանում եր: Նրա փորձը՝ փոխել սահմանադրությունը, ըստ վորի թույլ չեր տրվում պրեզիդենտի վերընտրությունը, չհաջողվեց—Որենսդիր ժողովի մեծամասնությունը սահմանադրության փոխելու դեմ արտահայտվեց:

Այն ժամանակ նա վճռեց հեղաշրջում կատարել: 1851 թ. դեկտեմբերի 2-ի գիշերը ձերբակալվեցին Որենսդիր ժողովի ամենաազդեցիկ անդամները, ինչպես և պրոլետարիատի և դեմոկրատիկ մանր բուրժուազիայի այն ներկայացուցիչները, վորոնք ավելի վտանգավոր եյին թվում: Ռազմական տեսակետից Փարիզի ամենակարևոր կետերը բռնվեցին զինվորական ջոկատներով: Իսկ առավոտյան Փարիզի բնակչությունը կարդաց պատերին փակցրած պրեզիդենտի թռուցիկները, վորոնցով նա հայտնում եր տեղի ունեցած հեղաշրջման մասին: «Ֆրանսիական ժողովրդի անունից» Որենսդիր ժողովը ցրված եր հայտարարված, ընդհանուր ընտրական իրավունքը վերականգնված եր, Փարիզում և մոտակա տասը դեպարտամենտներում պաշարման դրություն եր հայտարարված:

Բոնապարտի հաշիվները ճիշտ եյին. դիմադրություն ցույց տվող չկար: Մի քանի հանրապետականներ ապստամբության կոչ ուղղեցին Սենտ-Անտուանի արվարձանի բանվորներին, պատասխանը հետևյալն եր՝ «Ինչ ե՞ք ուզում մեզանից: Չե՞ որ մեր զենքերը խլեցիք 1848 թ. հունիսին»:

Բարրիկադներ կառուցելու առանձին փորձերը անհաջող զենքով ճնշվեցին: Նույնպիսի արագությամբ ճնշվեցին շրջանների ապստամբական փորձերը: Ամբողջ Ֆրանսիայում մինչև 50.000 մարդ ձերբակալվեց. դրանց կեսը Հարավային Ամերիկա (Հայիեն) աքսորվեց: Մի ամիս անց՝ Բոնապարտը վերականգնեց կոնսուլության VIII տարվա սահմանադրությունը և այդպիսով իր իշխանությունը գրեթե միանձնյա դարձրեց: Իսկ պետական հեղաշրջման տարեդարձին, 1852 թվի դեկտեմբերի 2-ին, նա հրամայեց, վոր իրեն կայսր հռչակեն՝ Նապոլեոն III անունով (Նապոլեոն II անվանում եյին յերբեք չթագավորած Նապոլեոն I-ի որդուն):

Պաշարման դրության ճնշման տակ համաժողովրդական քվեարկությունը (Ռեֆերենդում) ճնշող մեծամասնությամբ (7.481.000 ձայն) կայսրություն հաստատեց: Այսպես, պրոլետարիատի հունիսյան ջախջախումից հետո, բուրժուական հանրապետությունը գլորվեց մինչև Նապոլեոն III-ի զինվորական (կեսարական) միապետությունը, վորը հենվում եր զորքի սվինների և վոստիկանության վրա:

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԵԼԸ

Կայսրությունը բուրժուազիային զրկեց քաղաքական իշխանությունից, բայց այդ բղխում եր հենց բուրժուազիայի շահերից, նրա դասակարգային տիրապետության շահերից: Նրան անհրաժեշտ եր նախ և առաջ «բուրժուական կարգն» ապահովել: «Կարմիր վտանգը» կարող եր վերացնել միայն ուժեղ գործադիր իշխանությունը: Բացի այդ հենց բուրժուազիայի քաղաքական իշխանությունից հեռանալը հնարավորություն եր ստեղծում նրա համար մյուս դասակարգերին ավելի ազատ շահագործել: Նրա քաղաքական տիրապետությունը, բուրժուական հանրապետության ժամանակ, այդ շահագործումը դարձնում եր պարզորոշ: Բուրժուազիան, ինչպես ասում ե Մարքսը, պետք ե «անմիջականորեն, յերես առ յերես պայքարեր ճնշված դասակարգերի դեմ, հնարավորություն չունենալով գահի հետևը ծածկվել»: Այդպիսի բացահայտ պայքարի համար ֆրանսիական բուրժուազիան իրեն դեռ թույլ եր զգում: Դրա համար եվ այն ժամանակ հենց միապետությունն եր «ամենից քիչ վտանգավոր դասակարգային տիրապետության ձևը» (Մարքս): Յեվ իրոք, յերկրորդ կայսրության շրջանում տեղի ունեցավ ֆրանսիական բուրժուազիայի տնտեսական հսկայական աճումը:

Այսպիսով՝ Նապոլեոն III կայսրությունն իրենից ներկայացնում եր ազգային-բուրժուական միապետություն, վորի մեջ ազգային ծածկոցով ծածկված եր բուրժուազիայի տնտեսական տիրապետությունը մյուս դասակարգերի հանդեպ:

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ

1848 թ. Ֆրանսիական հեղափոխությունը մի ամբողջական շրջան կատարեց. ֆինանսական արիստոկրատիայի հուլիսյան միապետությունից իշխանությունն անցավ Նապոլեոն III ազգային բուրժուական միապետության: Այդ ընթացքում դրսևորվեց յերեք ետապ. առաջին ե-

տապը— 1848 թ. փետրվարից մինչև մայիսի 4-ը՝ ժամանակավոր կառավարության շրջանն եր, յերբ պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև ծածկված պայքար եր գնում: Պրոլետարիատի ճնշման տակ բուրժուական հանրապետությունն իր մեջ առավ սոցիալական հանրապետության տարրերը («աշխատանքի իրավունք» ազգային արհեստանոցներ, Լյուքսեմբուրգյան հանձնաժողով): Յերկրորդ ետապը— 1848 թ. մայիսի 4-ից մինչև 1849 թ. մայիսի 29-ը՝ Սահմանադիր ժողովի և բուրժուական հանրապետության ամրապնդման ժամանակաշրջանն եր: Այս ետապի առաջին շրջանը հանդիսանում եր պրոլետարիատի և ռեակցիոն Սահմանադիր ժողովի վրա հենված՝ բուրժուազիայի բացորոշ պայքարի շրջան, վորը վերջացավ պրոլետարիատի հունիսյան ջախջախումով: Այս ետապի յերկրորդ շրջանում բուրժուական հանրապետության սահմանադրությունն եր մշակվում և արդեն նշմարվում եր Գործադիր և Որենսդիր իշխանությունների պայքարը: Յերրորդ ետապը— 1849 թ. մայիսի 29-ից մինչև 1851 թվի դեկտեմբերի 2-ը, դա բուրժուական հանրապետության և Որենսդիր ժողովի շրջանն եր:

Այդ շրջանի սկզբին տեղի ունեցավ մանր բուրժուազիայի ջախջախումը: Այնուհետև բուրժուական հանրապետությունը, վորի Որենսդիր ժողովի մեծամասնությունը միապետականներն եյին, կամաց-կամաց մեռնում եր: Հանրապետությունը հնարավորություն չուներ ոգնության կանչել, իր կողմից արյունաքամ յեղած պրոլետարիատին ու մանր բուրժուազիային և 1851 թվի դեկտեմբերի 2-ին հեռացավ թատերաբեմից:

ՄԱՐՔՍԸ 1848 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1848 թ. հեղափոխությունից արդեն 80 տարուց ավել ե անցել, բայց մինչև այժմ վոչ մի հետազոտություն չկա, վորը Ֆրանսիայի 1848 թ. հեղափոխության դասակարգերի պայքարի այնպիսի խոր ու բազմակողմանի վերլուծություն տար, ինչպիսին տվել ե Մարքսը իր «Դասակարգերի պայքարը Ֆրանսիայում» և «Լուի Բոնապարտի Բրյումերի 18-ը» յերկու աշխատություններում: Նրանց մեջ Մարքսը քայլ առ քայլ հետևում ե բուրժուազիայի և պրոլետարիատի միջև յեղած պայքարին, պարզում ե մանր բուրժուազիայի դերը, վերլուծում ե պրոլետարիատի պարտվելու պատճառները, ցույց ե տալիս, թե ինչպես բուրժուական հանրապետությունը փոխվեց Նապոլեոն III-ի միապետության: Ֆրանսիական հեղափոխության ժամանակ պրոլետարիատի պարտությունը Մարքսի համար ծանր հարված եր: Բանվորների հունիսի գնդակահարումից հետո «Նոր Հռենոսյան լրագրում» լույս տեսած նրա հոդվածը արտասովոր զայրույթ ե արտահայտում բուրժուազիայի դեմ: Մարքսը գրում եր. «Թշնամիների ուժերի գերակշռությամբ Փարիզի բանվորները ճնշվեցին, բայց չոչնչացան:

«Նրանք ջարդված են, բայց հաղթվողը նրանց թշնամիներն են: Բիրտ ուժի րոպեական ցնծումը գնված ե փետրվարյան հեղափոխության կեղծավորության և իլյուզիաների կործանման գնով, հին հանրապետական կուսակցության քայքայումով, ֆրանսիական ազգի յերկու մասի բաժանումով,— սեփականատերերի ազգի և բանվորների ազգի»: Պրոլետարիատի դեմ միացել եյին՝ ամբողջ բուրժուազիան, արմատական մանր բուրժուաները, ռեակցիոներները, ամբողջ կապիտալիստական աշխարհը: Փետրվարյան հեղափոխությունից սկսած բանվորությունն ավելի վճռականորեն խմբվում ե հեղափոխական սոցիալիզմի շուրջը, կոմունիզմի շուրջը: «Այդ սոցիալիզմն անընդհատ

հեղափոխության հռչակումն է, պրոլետարիատի դասակարգային դիկտատուրայի հռչակումն է, իբրև անհրաժեշտ անցողիկ պունկտ ընդհանրապես դասակարգային տարբերության վոչնչացման, վոչնչացման այն արտադրական հարաբերությունների, վորոնց վրա հենված են այդ տարբերությունները, վոչնչացման բոլոր այն հասարակական հարաբերությունների, վորոնք համապատասխանում են այդ արտադրական հարաբերություններին, ամբողջ աշխարհում հեղաշրջման այն գաղափարների, վորոնք ծնունդ են այդ հասարակական հարաբերություններից» (Մարքս): Պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարում ցույց տալով գյուղացիության, իբրև մանր հողային սեփականատերերի հակահեղափոխական դերը, Մարքսն այն ժամանակվա համար չափազանց ուշագրավ նախագուշակություն է անում պրոլետարական հեղափոխության ժամանակ գյուղացիության նշանակության մասին:

«Հուսահատվելով Նապոլեոնական ռեակցիայից,— ասում է Մարքսը,—ֆրանսիական գյուղացին կբաժանվի և իր հողի կտորի հավատից... Եվ պրոլետարական հեղափոխությունը մի խմբերգ կստանա, առանց վորի նրա մեներգը բոլոր գյուղացիական յերկրներում կարապի յերգ է դառնում»: Մարքսը նշում է նաև այն միջոցները, վորոնցով պրոլետարիատը գյուղացիության իր դաշնակիցը կդարձնի. այդ միջոցներն են՝ առանց գնման բոլոր ֆեոդալական պարհակների վոչնչացումը և բոլոր խոշոր հողատիրությունների ազգայնացումը:

ԼԵՆԻՆԸ 1848 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լենինը նույնպես մի շարք անգամ դիմել է 1848 թ. հեղափոխության փորձին: Այսպես, բոլշևիկյան «Պրավդա» թերթի 1917 թ. ապրիլի 8-ի համարում տպված «Լուի Բլանականություն» իր հոդվածում, Լենինն ապացուցում է, վոր Պետրոգրադի զինվորների և բանվորների խորհրդի մենշևիկ առաջնորդները Լուի Բլանի տեղն են բռնել: Իսկ Լուի Բլանը,— գրում եր Լենինը,— «հռչակ է ստացել նրանով, վոր դասակարգային պայքարի դիրքերից անցավ մանր բուրժուազիայի իլլյուզիաների, վորոնք իբր թե զունավորված եյին «սոցիալիզմով», իսկ իրականում ծառայում եյին բուրժուազիային պրոլետարիատի վրա ազդելու...: Որվա հերթական խնդիրն է անդարձ բաժանվել Լուի Բլաններից... Լուի Բլանականությունը կործանում է և կկործանի հեղափոխության հետագա հաջողությունը... Եթե մասսաները չհասկանան այդ մանր բուրժուական իլլյուզիաների վտանգը»: Մի այլ հոդվածում, վորը «դասակարգային վո՞ր աղբյուրից են գալիս և կգան Կավենյակները» վերտառությունն եր կրում («Պրավդա» 1917 թ. հունիսի 16-ին), Լենինը ցույց է տալիս, վոր հենց Լուի Բլանականությունն է Կավենյակի հանդես գալու հնարավորություններ ստեղծում: Ֆրանսիական բուրժուական հանրապետականները 1848 թ. «վարպետորեն օգտագործում եյին Լուի Բլանի մանր բուրժուական «նացիոնալիզմը», նրան մինիստր դարձնելով, սոցիալիստական բանվորների առաջնորդից, ինչպիսին նա ցանկանում եր լինել, բուրժուազիայի արբանյակ դարձրին: Մանր բուրժուազիայի տատանումները հնարավորություն տվին խոշոր բուրժուազիային, պրոլետարիատի դեմ պայքարի վճռական մոմենտում իրենց շարքերից յերևան բերին Կավենյակին և ջախջախեցին պրոլետարիատին: 1917 թ. հունիսին մենշևիկներն ու եսերները, Լուի Բլանի պես, մտան ժամանակավոր կառավարության մեջ, ուր մինիստրների մեծամասնությունը բուրժուազիայից եր:

1848 թ. ֆրանսիական մանր բուրժուազիայի նման, նրանք վախենում են «հավատ ընծայել հեղափոխական պրոլետարիատին և նրա ինքնուրույն քաղաքականությունը պաշտպանել», ուստի նրանք «հանդիսանում են այնպիսի մանր-բուրժուական քաղաքականության առաջնորդներ, վորը հնարավոր և անխուսափելի յե դարձնում Կավենյակի յերևան գալը»: Մի շարք այլ հոդվածներում և բրոշյուրներում Լենինը, 1848–51 թ. թ. փորձի հիման վրա, ապացուցում է, վոր կապիտալիզմից կոմունիզմի անցնելու եյությունը «անխուսափելիորեն մեկն է՝ պրոլետարիատի դիկտատուրան» («Պետություն և հեղափոխություն»):

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

Ամբողջ Եվրոպան ընդգրկող 1847 թվի ճգնաժամի հողի վրա առաջացած Ֆրանսիայի փետրվարյան հեղափոխությունը՝ մի շարք յերկըրներում հեղափոխական պոռթկումներ առաջացրեց: Նրա ազդեցությունն առանձնապես ուժեղ եր Գերմանիայի և Իտալիայի վրա: Գերմանիայում ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական պայմանները ավելի բարդ եյին, քան Ֆրանսիայում: Ֆրանսիայում իշխանությունը կենտրոնացած եր և այդ պայմաններում Փարիզում առաջացած հեղափոխությունը վճռական նշանակություն եր ունենում ամբողջ յերկրի համար: Իսկ Գերմանիան բաժանված եր 36 պետության, վորոնց միջև յեղած կապը, առանձին պետությունների ներկայացուցիչներից կազմված՝ դաշնակցային սեյմի միջոցով, շատ թույլ եր: Այդ պետություններից գլխավորները Պրուսիան և Ավստրիան եյին: Վերջինս իր մեջ առած ուներ, բացի մի շարք սլավոնական ցեղերից, նույնպես Հունգարիան և Իտալիայի հյուսիսային մասը՝ Լոմբարդիան: Համեմատած Ֆրանսիայի, մանավանդ Անգլիայի հետ, Գերմանիան տնտեսապես շատ հետամնաց յերկիր եր հանդիսանում, ուր գերիշխում եր գյուղատնտեսությունը: 40-ական թվականներին Պրուսիայի ազգաբնակչության միայն 28 %-ն եր քաղաքներում բնակվում: Ավստրիայի քաղաքային ազգաբնակչությունն ավելի քիչ եր, ըստ վորում, այն ժամանակվա համեմատությամբ, համեմատաբար խոշոր՝ 5000 ավել բնակիչ ունեցող քաղաքների «քաղաքացիների», յերբեմն մինչև 20 % ապրում եր բացարձակապես գյուղատնտեսությամբ: Գյուղացիության անձնական կախյալ վիճակը օրենքով վերացված եր համարվում, բայց պրուսական գյուղացիության միայն չնչին մասն եր XIX դ. առաջին կիսում ազատ հողի սեփականատեր դարձել: Գյուղացիներն այդ դեպքում կորցնում եյին իրենց հողաբաժնի $1/3$ մասը, բացի այդ, միանվագ մեծ գումար և տարեկան ռենտա եյին վճարում:

Գյուղացիության մնացած հոծ զանգվածը, ինչպես ֆրանսիական մեծ հեղափոխությունից առաջ տեղի ուներ, տնքում եր ֆեոդալական և պետական պարհակների ծանր բեռի տակ: 1848 թվից առաջ գյուղացիական կյանքի բոլոր դիտողները, գերմանական գյուղացիությունը նկարագրում են վորպես աներևակայելի աղքատության մեջ տառապողներ և բացարձակ իրավազուրկներ:

«Գյուղացիները սիստեմատիկորեն քաղցած են».—գրում է նրանցից մեկը: «Ավստրիական գյուղացիները տարվա մեջ միայն մեկ, կամ յերկու անգամ են մի կտոր միս ուտում, և այդ նրանց համար աներևակայելի համեղ մի բան է».—գրում է մի ուրիշը, չնայած ինքը ֆեոդալական կարգերի պահպանման կողմնակիցներից եր: Գյուղացիությունը պատրաստ եր դուրս գալ իրեն քայքայող ֆեոդալական

պարհակների դեմ, բայց նրա շարժումն իր մեջ քաղաքական վոչ մի պահանջ չեր պարունակում: Նույնիսկ պարզ սոցիալական բնույթից զուրկ եր, ուղղված չեր կալվածատերերի, վորպես դասակարգի դեմ, չեր ձգտում կալվածատիրական հողերի բռնագրավման: Ֆեոդալական պարհակների վերացումով, նրանք հանդստանում եյին, իսկ յերբեմն նույնիսկ հեղափոխության դեմ եյին դուրս գալիս, համարելով այն «անկարգություն»:

Արդյունաբերությունը մեծ մասամբ արհեստավորական և տնայնագործական բնույթ ուներ: 40-ական թվականների սկզբին Պրուսիայում, արդյունաբերական ձեռնարկություններում զբաղվող յուրաքանչյուր հարյուրին, գրեթե յերեք, տանն աշխատող, հաստոց եր ընկնում: Արհեստավորական արտադրությունը դեռ պահում եր համքարային կազմը:

Հիմք ունենալով գյուղատնտեսության կիսաճորտային և արհեստի գերակշռությունը, Գերմանիայի պրոլետարիատի մեծամասնության մեջ ինքնակալական-կալվածատիրական միապետությունը մի շարք կալվածատիրական արտոնություններով դեռ ամուր եր: Դեռ ռեստավրացիայի ժամանակվանից ամբողջ Գերմանիայում թագավորում եր ռեակցիան, իբրև վոստիկանական քմահաճույքի, շպինաժի և ցենզուրայի մի ամբողջական սիստեմ:

30-ական և 40-ական թվականները Գերմանիայի համար արդյունաբերական հեղաշրջման ժամանակ եր: Յեթե 20-ական թվականների սկզբին ամբողջ Գերմանիայում միայն յերկու շոգեմեքենա կար, 1847 թվին միայն Պրուսիայում այդպիսիների թիվը 1139-ի յեր հասնում՝ 21½ հազար ձիու ուժի կարողությամբ 40-ական թվականների կեսերին Պրուսիայում 78,000 արդյունաբերական ձեռնարկություններ կային, ուր 500.000-ից ավելի բանվորներ եյին աշխատում: 1835 թ. Գերմանիայում կառուցվեց առաջին յերկաթուղագիծը: 1840 թ. ռելսային ճանապարհների յերկարությունը հավասար եր 540 կմ., 1848 թ. հասավ 5.500 կմ: Խոշոր ձեռնարկություններն ամենից առաջ հանդես յեկան տեքստիլ և լեռնարդյունաբերության մեջ:

Խոշոր արդյունաբերության աճման հետ մեկտեղ, աճում եր և ամրանում եր արդյունաբերական բուրժուազիան: Բայց նրա աճման արգելակ եր հանդիսանում կալվածատիրա-ինքնակալական միապետությունը: Ներքին շուկայի բացակայությունը, ֆեոդալական պարհակների հետևանքով գյուղացիության քայքայվելը, տարբեր պետությունների միջև գոյություն ունեցող մաքսային բաժանվածությունը—այդ բոլորը առևտրի և արդյունաբերության զարգացմանը խոչընդոտ եյին հանդիսանում: Այդ բանը առաջ եր բերում ազգային ազատամիտ շարժում՝ բուրժուազիայի մեջ, վորը քաղաքական, տնտեսական ռեֆորմներ և Գերմանիայի միացումն եր պահանջում: Նրա ճնշման տակ 1834 թ. ստեղծվեց մաքսային դաշնակցություն, վորն իննը գերմանական պետությունների միջև մաքսային սահմանները վերացրեց: Աստիճանաբար սկսեցին այդ դաշնակցության միանալ նաև Գերմանիայի մյուս պետությունները: Այսպիսով՝ բուրժուազիայի և ազնվականության միջև յեղած հակասությունները Գերմանիայում հերթի եյին դնում բուրժուական հեղափոխությունը: Բազմաքանակ մանր բուրժուազիան իր վրա զգում եր ծնունդ առնող կապիտալիզմի ճնշումը և միաժամանակ տառապում եր կալվածատիրա-ինքնակալական կարգերում իր իրավազրկությունից: Հանձին իր ինտելիգենցիայի, նա տարվում եր «ազատությունների», հանրապետության մասին յերևակայություններով,

բայց առանց սոցիալական ուտոպիաների: Այդ ինտելիգենցիան Էնգել-
սի ասելով, «ապստամբության եր կոչում ճոռոմաբանությունով»:
Բայց «հենց վոր զինված ապստամբությունը լուրջ ճգնաժամի յեր հաս-
նում, մանր բուրժուաները վտանգի առաջ սարսափի մեջ եյին ընկ-
նում... Յեվ նախ և առաջ նրանց սարսափեցնում եր այն հետևանքնե-
րը, վորոնք պետք է հանդես գային... Իրենց համար, իրենց հասարա-
կական դիրքի համար, իրենց սեփականության համար»: Լավագույն
դեպքում մանր բուրժուազիան հեռանում եր հեղափոխությունից, իսկ
վատագույն, ինչպես այդ տեղի ունեցավ Դրեզդենում, ոգնություն եր
ցույց տալիս կառավարության զորքերին՝ ընդդեմ ապստամբների:
Խոշոր արդյունաբերության զարգացումն ստեղծում եր, ճիշտ է,
տակավին դեռ փոքրաթիվ, ֆաբրիկա-գործարանային պրոլետարիատ:
Մանր արտադրությունից խոշորին անցնելը, ինչպես այդ տեղի ունե-
ցավ Անգլիայում և Ֆրանսիայում, չափազանց ծանր եր անդրադառ-
նում արհեստավորների և բանվորների վրա: Նրանք ճնշվում եյին յեր-
կուստեք շահագործումով.—ֆեոդալական պետության և ծագող կա-
պիտալիզմի կողմից:

ՍԻԼԵԶԻԱՅԻ ՋՈՒԼՀԱԿՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Այդպիսի յերկուստեք շահագործման տիպիկ որինակ եր Սիլեզիայի
ջուլհակների դրությունը: Բանի վոր այստեղ հողը քիչ բերք եր տա-
լիս, գյուղացիները վաղ ժամանակներից ոժանդակ աշխատանք եյին
գտնում մանվածային և հյուսվածային արտադրության մեջ: Յերբ
Սիլեզիայում խոշոր մեքենաներով և սարքավորումներով տեքստիլ
ձեռնարկություններ հանդես յեկան, բազմաթիվ տնայնագործ ջուլ-
հակներ առանց աշխատանքի մնացին: Նրանց անելանելի դրությունից
ոգտվելով, ձեռնարկուները ջուլհակներին վարձում եյին չնչին աշ-
խատավարձով, վորը այն ժամանակվա նույնիսկ պաշտոնական տվյալ-
ներով հասնում եր որական 4 կոպեկի՝ մեր փողով: Բայց այդ աղքատ
ջուլհակները միաժամանակ «թղուկ» գյուղացիներ եյին, այսպես եյին
անվանում նրանց չնչին հողաբաժիններ ունենալու պատճառով: Նրանք
պարտավոր եյին պետության հողային հարկ վճարել և կալվածատիրոջ
վճարել չկատարած կոռի համար: Այսպիսի յերեքտակ՝ պետության,
կապիտալիստի և կալվածատիրոջ ճնշման տակ, քաղցած, տիֆի
հետևանքով կոտորվում եյին Սիլեզիայի ջուլհակները:
Նրանք առանձնապես ատելություն եյին տածում դեպի Ցվանցի-
հեր ֆաբրիկանտները: Բանվորների բողոքին, թե աշխատածը գետնա-
խնձոր գնելու էլ չի բավականացնում, Ցվանցիհերները պատասխանում
են, վոր ջուլհակները կարող են խոտ ուտել, վոր այդ տարին առատ
կանաչ կա: Սիլեզիայի ջուլհակների շրջանում տարածված փոքրիկ
յերգը նկարագրում եր ջուլհակների դառն վիճակը և անեծք եր թա-
փում ֆաբրիկանտների գլխին:

Այստեղ Ցվանցիհերներն են՝
	դահիճներն են,
նրանց ոգնականներն՝
	իրենց ծառաներն են.

Ճնշում են՝ համբերի՛ր—
Գզլում են՝ լռի՛ր,
Մի ճանապարհ կա՝
	Մեռի՛ր:

Բրեսլավլի մոտ, Պետերսվալդաու գյուղում, Ցվանցիհերների տան

առավ 1844 թ. ամռանը հավաքված բանվորները խմբով յերգում եյին այդ յերգը, վորի համար բանվորներից մեկին խիստ ծեծի յենթարկեցին: Հուզված բանվորները շարժվեցին դեպի Փաբրիկանտի տունը և մի շարք պահանջներ ներկայացրին. պահանջները ծաղրանքով մերժեցին: Բանվորները գրոհով վերցրին Ցվանցիհերների տունը, ջարդեցին պահեստները, նկուղները, կոտրատեցին թանգարժեք կահույքը, դեն ու դեն եյին նետում ապրանքները, կոխկրտում և պատառոտում եյին կտորեղենը: Ցվանցիհերները փախան:

Ապստամբության լուրն արագությամբ տարածվեց:

Ապստամբներին միացան հարևան գյուղերի ջուլհակները: Վիթխարի յերեք հազարանոց ամբոխը գյուղից-գյուղ եր անցնում, Փաբրիկանտներին սարսափ, իսկ գյուղացիներին հիացմունք պատճառում: Ապստամբությունը ճնշեցին մոտակա քաղաքից ուղարկված զորքերը: Զորքին դիմադրելու ժամանակ ապստամբներից 11-ը սպանվեցին և 24-ը մահացու վիրավորվեցին:

Կացիններով, մահակներով և քարերով նրանք հարձակվեցին զինվորների վրա և դուրս խռկեցին գյուղից:

Տեղական Փաբրիկանտի տունն ավերեցին: Սակայն մյուս որը նոր ջոկատներ յեկան և գյուղը գրավեցին. այս անգամ իրենց հետ բերին 4 թնդանոթ և հեծելազոր: Ջուլհակների մի մասը մերձակա լեռները փախավ. մնացածներից շատերը դատի յենթարկվեցին և տաժանակիր աշխատանքի ու մտրակի 24 հարվածի դատապարտվեցին:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

Ջուլհակների ապստամբության և քաղցից բազմաթիվ հուզումների անհաջողությունը բացատրվում է բանվոր դասակարգի թուլությամբ, (բանվորությունն ամբողջ ազգաբնակության չնչին մասն եր կազմում), պլանի և ղեկավարության բացակայությամբ և ապստամբների սոցիալական կազմով: Մինչև 1848 թ. գերմանական պրոլետարիատը մեծ մասամբ արհեստավորական վարպետացուներից եր կազմված և համքարային իդեոլոգիայի ուժեղ ազդեցության եր յենթարկված: Արդյունաբերության աճման կապակցությամբ արհեստավորների դրության վատթարացումը, նրանց մեջ ժողովրդականացնում եր նախակապիտալիստական արտադրության վերադարձի միտքը, մեքենաների վոչնչացման լոզունգը, ռեակցիոն համքարային կազմակերպությունների վերականգնումն իրենց աշակերտի, վարպետացուի, վարպետի աստիճաններով, աշակերտի պարտականություններով ու վարպետացուի ճանապարհորդությամբ: Այդ ճանապարհորդությունը արհեստավորի վերավորակավորման յուրահատուկ մի ձև եր, արհեստավորը ձեռքի աշխատանքի ժամանակաշրջանում աշխատանքի նոր պրիոմների կարիք եր զգում, մանավանդ յեթե այդ պրիոմները գործադրվում եյին ուրիշ համքարություններում հմուտ վարպետների միջոցով: Արհեստավորների այդ թափառումը՝ մի շրջանից մյուսը, մի քաղաքից մի ուրիշ քաղաք, իրոք բարձրացնում եր վարպետացուների վորակը և միաժամանակ ոժանդակում եր դանազան պրոֆեսիոնալ բնույթ կրող միությունների առաջացման: Հաճախ այդ միությունները հեղափոխական ուղղություն եյին ընդունում և իշխանության կողմից հետապնդվում եյին, արգելվում և անլեգալ կազմակերպություններ եյին դառնում:

ԵՄԻԳՐԱՆՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վոստիկանական հետապնդումը բանվորներին և վարպետացուներին

ստիպում եր Գերմանիայից արտասահման գնալ, գլխավորապես Փարիզ, Լոնդոն և Բրյուսել: Այստեղ դառնալով քաղաքական եմիգրանտներ, նրանք ծանոթանում եյին ուտոպիստ-սոցիալիստների ուսմունքներին, խմբակներ ու միություններ եյին կազմում և աշխատում եյին այնտեղից Գերմանիայում սոցիալիստական պրոպագանդ անել: Շատերը հայրենիք վերադառնալով, այնտեղ տարածում եյին իրենց հետ եմիգրացիայից բերած ուտոպիական սոցիալիզմի՝ Ֆուրյեյի և Ռ. Ոուենի գաղափարները:

Քաղաքական եմիգրացիան կենտրոնանում եր Շվեյցարիայում և Փարիզում, ուր ձգտում եյին յեվրոպական բոլոր յերկրների հեղափոխականները, այնտեղ էլ բազմաթիվ միություններ եյին ծնունդ առնում գլխավորապես ինտելիգենտական կազմով: Գերմանական եմիգրանտական միություններ՝ «Յերիտասարդ Գերմանիա», «վտարանդիների միությունը» և «Մարդու իրավունքների միությունը» սկզբում ինտելիգենտական կազմակերպություններ եյին: Բանվորական եմիգրացիայի ուժեղացումը Գերմանիայից պրոլետարականացնում եր այդ միությունների կազմը, ոժանդակում եր նրանց հեղափոխականացման, ազգայնական սկզբունքներից հրաժարվելուն, նրանց վերակառուցման ինտերնացիոնալ վոգով և սերտ կապ ստեղծելուն բլանքիստների գաղտնի խմբակների հետ: Ամենից մեծ ազդեցություն եր ձեռք բերել գերմանացի արհեստավորների Փարիզում կազմած «Ճշմարիտների միությունը». իր կազմով բանվորական լինելով միությունն իր կազմակերպություններն ուներ Լոնդոնում, Շվեյցարիայում և Բելգիայում: «Ճշմարիտների միության» անդամները հարաբերության մեջ եյին մտնում տեղական բանվորական կազմակերպությունների հետ: Փարիզում կապված լինելով «Տարվա յեղանակների միության» հետ, 1839 թ. մայիսի 12-ի անհաջող ապստամբությունից հետո միությունը ջախջախվեց, բայց նրա առանձին անդամների պրոպագանդը շարունակվում եր:

ՎԻԼՀԵԼՄ ՎԱՅՏԼԻՆԳ

«Ճշմարիտների միություն» ստեղծելու և գործունեյության մեջ մեծ դեր խաղաց գերմանացի վարպետացու-դերձակ Վիլհելմ Վայտլինգը (1808—1871): Տան սպասուհի (գերմանուհի) և ֆրանսիական սպայի «սպորինի» զավակ Վայտլինգը մեծացել եր կարիքի և չքավորության մեջ: Դերձակություն սովորելով, նա թափառող վարպետացու դարձավ և վեց տարի թափառում եր ամբողջ Գերմանիայում: Նա իր ամբողջ կյանքում վտարանդի յեր. նա շրջել եր ամբողջ Յեվրոպան և Ամերիկան, յերկար ապրել եր Փարիզում, Շվեյցարիայում, Լոնդոնում, Բրյուսելում (այստեղ նա ծանոթացավ Մարքսի և Ենգելսի հետ), Նյու-Յորքում և այլն: Հաճախ իր շուրջը հավաքված կոմունիստների, բանվորների մեջ ագիտացիա և հակակառավարական իր յելույթների, պրոպագանդ անելու համար նա վտարման և ձերբակալության եր յենթարկվում: Մասնակցել է 1848 թ. Բեռլինի հեղափոխության, ակտիվ մասնակցել է զանազան ընկերությունների և խմբակների, ամերիկյան Ֆուրյերիստների կազմակերպություններին: Վայտլինգի գրչին են պատկանում մի շարք տեսական աշխատություններ, ուր նա քննադատում է գոյություն ունեցող կարգերը և ապագա կոմունիստական հասարակարգն է բնութագրում: Իր կյանքի վերջին տարիները Վայտլինգն անց է կացրել Ամերիկայում, այդ ժամանակ նա հեռացավ բանվորական շարժումից:

Մարքսը Վայտլինգի վրա մեծ հույսեր եր դնում:

«Եթե համեմատենք,—գրում եր նա,—չոր ու յերկչոտ գերմանական քաղաքական գրականությունը գերմանական բանվորների այս աննման, փայլուն դեբյուտների հետ, յեթե համեմատենք պրոլետարիատի այդ մանկական հսկա կոշիկները, բուրժուազիայի թզուկի վոտքի չափ կոխճրտած քաղաքական կոշիկների հետ, կարելի յե յենթադրել, թե ինչ հսկա յե լինելու այդ փոքրիկ գաճաճը»:

Հակառակ Սեն-Սիմոնի, Ֆուրյեյի, Ոուենի և ուրիշների՝ Վայտլինգը ժխտում եր տիրող դասակարգերի ոժանդակությամբ կոմունիզմի իրագործման հնարավորությունը:

Արհեստավորական վարպետացուների տրամադրությունների արտահայտելով, Վայտլինգը յենթադրում եր, վոր սոցիալիստական հեղափոխությունը կկատարվի լյումպեն—պրոլետարիատի ուժերով, մինչ հեղափոխության պատրաստ՝ աղքատացած բանվոր բոսյակների աճող կադրերի միջոցով: Իր դասակարգային շահերը գիտակցած արդյունաբերական պրոլետարիատը, նրա կարծիքով, կոմունիզմի համար տարվելիք պայքարում, վճռական դեր չեր կարող խաղալ: Վայտլինգը դեմ եր պրոպագանդիստական աշխատանքին. նա հույսը դնում եր աղքատների տարերային հեղափոխության վրա: Իզուր չե, վոր նրա մտքում շարունակ պտտվում եր 40.000 գողերի ու ավազակների միջոցով հեղափոխություն կատարելը. նա կարծում եր, վոր այդպիսիներն իրենց աշխատանքի բնույթով ի ծնե մասնավոր սեփականության կործանիչներ են:

Հեղափոխության հաջողությունը բացարձակապես խելացի և վճռականություն ունեցող առաջնորդներից ե կախված:

Այսպես, բուրժուական ուտոպիստների խաղաղ միջոցառումների փոխարեն, խաղաղ համոզելու ճանապարհով կոմունիզմին անցնելու փոխարեն, Վայտլինգն իբրև իր ուտոպիայի իրագործման հիմնական նախադրյալ առաջադրում եր՝ չքավորության հեղափոխական պայքարի գաղափարը, նա շարունակ պնդում եր, բանվոր դասակարգը յերբեք չի ազատագրվի, յեթե ինքն իրեն չազատագրի: Վայտլինգն իր ուսմունքին կրոնական գունավորում եր տալիս, նա քրիստոնեյության խիստ ազդեցության տակ եր գտնվում, չնայած ժամանակակից հոգևորականության բացասաբար եր վերաբերվում:

Նա այսպես եր պատկերացնում նոր հասարակության առաջացումը:

«Մի նոր մեսիա կգա, վորպեսզի իրագործի առաջինի ուսմունքը: Նա կփշրի հին հասարակության փտած շենքը, արցունքների աղբյուրը մոռացության ծովը կուղղի և յերկիրը դրախտ կդարձնի:

Պատրաստվե՛նք արժանավայել ընդունել նրան: Ի՞նչ նշանով մենք կարող ենք նրան ճանաչել. ահա ինչ նշանով. նա կգա հասարակ և առանց պատրվակի, հպարտ ատելությամբ դեպի Մամոնի հրապույրները և իր սիրտը բացած մարդկանց տառապանքների հանդեպ: Նա հարստության բարձունքից աղքատության անդունդը՝ դժբաղդների ամբոխի մեջ կիջնի և իր արցունքները նրանց արցունքներին կխառնի... Բայց նրան հանձնված իշխանությունը նա իր ձեռքից բաց կթողնի հանդուգն գործը վերջացնելուց վոչ առաջ: Այն ժամանակ հասարակության վրա չի իշխի մեկի կամքը, այլ բոլորի գիտությունը: Յեվ մեծագույն մեսիան խաղաղ համեստությամբ այդ նոր իշխանությանը կենթարկվի: Այդ նրա գործերի պսակը կլինի, և այդ նշանով ամբողջ աշխարհը կճանաչի յերկրորդ Մեսիային, վորն ավելի մեծ կլինի, քան առաջինը»:

Այսպիսով, յերկրորդ քրիստոսը, ըստ Վայտլինգի, կոմունիզմի մունետիկն ե հանդիսանալու. իսկ կոմունիզմը նախնական քրիստոնեյության նման ե լինելու: Ապագան նա պատկերացնում ե, վորպես կոմունիստական հասարակություն, վոր ղեկավարվում ե իմաստուն մարդկանց մի փոքրիկ խմբի կողմից:

Մյուս ուտոպիստների պես Վայտլինգը գծել եր այդ հասարակության պլանը իր մանրամասնություններով:

Այդ «կատարյալ հասարակությունը վոչ մի իշխանություն չի ունենալու, այլ միայն վարչություն, վոչ մի օրենք, այլ լոկ պարտականություն, վոչ մի պատիժ, այլ սոսկ բուժում»: Կապիտալիստական հասարակության հիմնական չարիքը Վայտլինգը փողն եր համարում, վորը «միջոց ե այդ նողկալի կարգերի պահպանման համար»: Փողի վոչնչացումը նա պատկերացնում եր վոչ թե վորպես կապիտալիզմի վերացման հետևանք, այլ իբրև կապիտալիզմի լիկվիդացիայի սկզբնական ետապ: Այդ պատկերացումն արտացոլումն ե վարպետացուի տրամադրության, վորը շարունակ ականատես եր ինքնուրույն արտադրողների քայքայման:

Վիլհելմ Վայտլինգ (նկ. 22)

Դեմոկրատիայի և հեղափոխության բուրժուական ըմբռնման քննադատությունը Վայտլինգի կողմից, անտարակույս, ազդեցություն ե ունեցել Մարքսի վրա: Վայտլինգի սոցիալիզմը կարծես միջին օղակն եր ուտոպիստների մանր բուրժուական սոցիալիզմի և Մարքսի (1818-1883) և Ենգելսի (1820—1895) պրոլետարական սոցիալիզմի միջև:

«ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ»

«Ճշմարիտների միություն» առանձին անդամների հեղափոխական պրոպագանդն Արևմտյան Յեվրոպայի զանազան արդյունաբերական կենտրոններում առաջ բերեց նոր կազմակերպություններ. սրան նպաստեց, միության ջախջախվելու հետևանքով, նրա անդամների Փարիզից ցրվելը: Այդ կազմակերպություններից 1847 թվին Մարքսի և Ենգելսի յեռանդուն աջակցությամբ կազմվեց «Կոմունիստների միությունը»: Նրա կանոնադրության առաջին հոդվածն այսպես եր վորոշում միու-

թյան նպատակը՝ «Բուրժուազիայի տապալումը, պրոլետարիատի տիրապետությունը, հին՝ անտագոնիզմի վրա հենված բուրժուական հասարակության վոչնչացումը և նոր՝ առանց դասակարգերի ու մասնավոր սեփականության՝ հասարակության հիմնումը»: Հենց վոր Փարիզում ծագեց փետրվարյան հեղափոխությունը, Մարքսն ու Էնգելսը Կոմմունիստների Միության կենտկոմի մյուս անդամների հետ տեղափոխվեցին Փարիզ՝ հեղափոխական շարժումների կենտրոնը: Այստեղ նրանք հրատարակեցին մի կոչ, վորի մեջ շարադրված եր Գերմանիայի կոմմունիստական կուսակցության պահանջները: Այդ կոչի մեջ մի շարք դեմոկրատական պահանջներ եյին առաջադրված՝ Գերմանիայի միացումը և մի անբաժան հանրապետություն կազմելը, ընդհանուր ընտրական իրավունք, ձրի դատավարություն, ֆեոդալական բոլոր պարհակների վոչնչացում: Այդ պահանջների հետ միասին դրված եյին հետևյալ պահանջները՝ արքունական և ֆեոդալական կալվածքների, հանքերի և հաղորդակցության ճանապարհների ազգայնացումը: Ծրագիրը նախատեսում եր Գերմանիայում այնպիսի պայմաններ ստեղծել, վորոնց ժամանակ միլիոնավոր շահագործվողներ «կկարողանան իրենց իրավունքները և այն իշխանությունը ձեռք բերել, վորը նրանց՝ իբրև բոլոր հարստությունների արտադրողների, համապատասխան է»: «Գերմանիայի կոմունիստական կուսակցության այս պահանջները» հեղափոխական ագիտացիայի ձեռնարկ հանդիսացան կոմունիստների միության այն անդամների համար, վորոնք այդ ժամանակ կենտ-կենտ Գերմանիա եյին վերադառնում: Հատկապես այդ ագիտացիայի ազդեցության տակ Գերմանական հեղափոխական բանվորական շարժումը տեղ-տեղ հեղափոխական-պրոլետարական բնույթ ընդունեց:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ

1847 թ. նոյեմբերի վերջին Կոմունիստների միության յերկրորդ համագումարը հավանություն տվեց Մարքսի և Էնգելսի կողմից առաջադրած մանիֆեստի նախագծին: Այսպես, 1848 թ. փետրվարին Կոմունիստների միության անունից հրապարակվեց «Կոմունիստական կուսակցության» մանիֆեստը: Նա լույս տեսավ փետրվարյան հեղափոխությունից ընդամենը մի քանի որ առաջ: Հենց այդ պատճառով էլ չկարողացավ շոշափելի ազդեցություն ունենալ 1848 թ. հեղափոխության ժամանակ պրոլետարիատի պայքարի վրա: Բացի այդ, Ֆաբրիկա-գործարանային պրոլետարիատն այն ժամանակ փոքրաթիվ եր, չափազանց շատ եր տարված խաղաղ ուտոպիական սոցիալիզմի գաղափարներով, վորպեսզի կարողանար Կոմունիստական Մանիֆեստի հիմնական դրույթները յուրացնել: Մանիֆեստը չորս գլուխներից է կազմված.

1) Բուրժուազիան ու պրոլետարիատը, 2) պրոլետարներն ու կոմունիստները, 3) սոցիալիստական և կոմունիստական գրականությունը և 4) կոմունիստների վերաբերմունքը դեպի զանազան հեղափոխական կուսակցությունները: Նախընթաց հասարակության ամբողջ պատմությունը դասակարգերի պայքարի պատմություն է, ճնշողների և ճնշվողների: Նրանց պայքարն «ամեն անգամ վերջանում եր ամբողջ հասարակության հեղափոխականորեն վերակառուցումով, կամ պայքարող դասակարգերի միասին կործանումով»: Բուրժուազիայի եպոխայում պայքարը պարզ է դառնում:

Հասարակությունը բաժանված է յերկու մեծ բանակի, յերկու միմյանց դեմ կանգնած դասակարգերի՝ բուրժուազիան և պրոլետարիատը: Միջնադարյան քաղաքներում ֆեոդալիզմի ավերակներից յելած բուրժուազիան հարստացավ Ամերիկայի հայտնագործման և կոլոնիզացիայի, դեպի Արևելյան Հնդկաստանի և Չինաստանի շուկաները տանող ճանապարհների հայտնագործման հետևանքով: Առևտրի և նավագնացության ուժեղացումն արագացրին ֆեոդալական հասարակության քայքայումը: «Նախկին ֆեոդալական համքարային արտադրության յեղանակն ի վիճակի չեր բավարարել պահանջը»: Համքարությունը դուրս եր մղում մանուֆակտուրան, իսկ մանուֆակտուրային՝ ֆաբրիկան: Նախկին տերերի տեղը բռնեցին «արդյունաբերող-միլիոնատերերը, արդյունաբերական ամբողջ բանակների առաջնորդները՝ ժամանակակից բուրժուազիան»: Բուրժուազիան ֆեոդալիզմի բոլոր մնացորդները վոչնչացրեց և «խոշոր արդյունաբերության ու համաշխարհային շուկայի հանդես գալու հետ միասին», նոր սահմանադրական պետության մեջ, իր համար բացառիկ քաղաքական իշխանություն նվաճեց: Ժամանակակից պետական իշխանությունը վոչ այլ ինչ է, յեթե միայն մի կոմիտե, վորը վարում է բուրժուազիայի հասարակական գործերը: Բուրժուազիան կործանում է ֆեոդալական-նահապետական հարաբերությունները, արդյունաբերության կղզիացած «ազգային» ճյուղերը, արտադրության գործիքների և հաղորդակցության միջոցների արագ կատարելագործումով մտնում է հետամնաց յերկրները և նրանց քաղաքակրթված Արևմուտքին է յենթարկում:

«Մի խոսքով, նա մի նոր աշխարհ է ստեղծում՝ հար և նման իրեն»:

Իր դասակարգային տիրապետության ժամանակ բուրժուազիան վիթխարի արտադրողական ուժեր է ստեղծում: Ցեվ ինչպես ֆեոդալական հարաբերություններն արգելակ հանդիսացան նրանց խորքերում զարգացող արտադրողական ուժերի համար, այնպես էլ բուրժուազիայի ստեղծած արտադրողական ուժերն սկսում են դուրս գալ բուրժուական հարաբերությունների շրջանակից: Բուրժուական հասարակությունը «նման է մոգի, վորն ի վիճակի չէ անեծքով յերկրի խորքերից դուրս բերած ուժերը սանձահարել»: Բուրժուազիայի գոյությունը սպառնում է վոչ միայն այդ՝ իրեն ստեղծած արտադրողական ուժերը:

Բուրժուազիան ծնում է իր գերեզմանափորը՝ ժամանակակից պրոլետարիատը, այդ մանր ու միջին սեփականատերերի հաշվին աճող դասակարգը: Սովորական ապրանքի պես, բանվորը «յենթակա յե մրցման բոլոր պատահականություններին, շուկայի բոլոր տատանումներին»: Մեքենաների և աշխատանքի բաժանման շնորհիվ, բանվորը մեքենայի պարզ կցորդն է հանդիսանում, վորն առանձին վարպետություն չպահանջող միատեսակ պարզ շարժումներ է կատարում: Այդ հանգամանքը տանում է դեպի բանվորի աշխատավարձի իջեցումը մինչև այն նորման, վորը կբավի նրա ապրուստի և ժառանգության շարունակելու համար. տանում է դեպի տղամարդու աշխատանքի փոխարինումը կանանց ու յերեխաների աշխատանքով: Արդյունաբերական բանակ կազմելով, բանվորներն ընկնում են արդյունաբերության յենթասպաների ու սպաների մի ամբողջ յերախիայի հսկողության տակ: Նրանք վոչ միայն ամբողջ բուրժուական դասակարգի ստրուկներն են, նրանց ստրկացնում են մեքենաները, հըսկիչները և իրենք՝ բուրժուա-ձեռնարկուները:

Բուրժուազիայի զարգացմանը զուգընթաց, զարգանում է նաև պրոլետարիատը: Նա ևս տարբեր աստիճաններ է անցնում:

Սկզբում բանվորները մենակ են պայքարում, հետո միանում են մի ֆաբրիկայի բոլոր բանվորները, այնուհետև՝ արդյունաբերության մի ճյուղի բանվորները: Պայքարը մեքենաների, ապրանքների փչացման, ֆաբրիկաների հրդեհման, համքարային կազմակերպությունների վերականգնման պահանջի ձև է ընդունում: Զարգացման այս փուլում բանվորական մասսայական շարժումներն առաջ է քշում բուրժուազիան ինքը: Բանվորները կռվում են «իրենց թշնամիների թշնամի» հողատերերի հետ և դրանով բուրժուազիայի համար քաղաքական իշխանություն են նվաճում:

Սակայն արդյունաբերության հետագա զարգացումը մեծացնում է պրոլետարական կադրերը, որոնց շահերը «մի հավասարի յեն գալիս, քանի որ մեքենայական արտադրությունն ավելի ու ավելի յե ջնջում աշխատանքի զանազան ճյուղերի միջև յեղած տարբերությունը»: Բանվորների բախումը ձեռնարկուների հետ «հասարակության յերկու դասակարգերի բախման» բնույթ է ընդունում: Բանվորությունը միություններ է կազմակերպում, գործադուլներ է առաջ բերում, նրա պայքարը տեղ-տեղ բացորոշ ապստամբության է վերածվում: Դասակարգային պայքարը, որը տարբեր վայրերի բանվորական մասսաներին համախմբում է որպես մի առանձին դասակարգ, ինչպես ամեն մի դասակարգային պայքար քաղաքական պայքար է: Պրոլետարիատն իր քաղաքական կուսակցությունն է ստեղծում, որ զարգացման պրոցեսում ամուր, ուժեղ, կարող է դառնում: Շնորհիվ իրեն՝ բուրժուազիայի մեջ յեղած տարաձայնությունների, կուսակցությունը ձեռք է բերում բանվորների մի քանի պահանջների օրենքի ձևով ընդունելը: Վաղ թե ուշ պրոլետարիատի պայքարը բուրժուազիայի դեմ «փոխվում է բացորոշ հեղափոխության և պրոլետարիատը բուրժուազիայի բռնի տապալումից հետո հիմք է դնում իր տիրապետության»:

Այդ պայքարում կոմունիստները շարժման պիոներները, պրոլետարիատի առաջավոր մարտիկները պետք է հանդիսանան:

Նրանք են ամբողջական շարժման ընդհանուր շահի պաշտպանները, միջազգային պրոլետարական համերաշխության ապավենները: Նրանք իրենց նպատակ են դնում բուրժուազիայի տապալումը և պրոլետարիատի քաղաքական իշխանության նվաճումը:

«Հին բուրժուական հասարակության տեղը, նրա դասակարգերով և դասակարգային անտագոնիզմով, կգանի ասոցիացիան, ուր յուրաքանչյուրի ազատ զարգացումով պայմանավորված կլինի բոլորի ազատ զարգացումը»: Կոմունիստներն ամենուրեք պաշտպանում են «ամեն մի հեղափոխական շարժում, որն ուղղված կլինի գոյություն ունեցող հասարակական և քաղաքական հարաբերությունների դեմ: Այդ բոլոր շարժումներում նրանք առաջին պլան են քաշում ամբողջ շարժման հիմնական խնդիրը՝ սեփականության հարցը, անկախ այն բանից, այդ հարցը շատ թե քիչ զարգացած ձև է ընդունել, թե ոչ: Նրանք բացեիբաց հայտարարում են, որ իրենց նպատակին կարող են հասնել գոյություն ունեցող հասարակական կարգերի միայն բռնի տապալման ճանապարհով: Թող դողան տիրող դասակարգերը կոմունիստական հեղափոխության առաջ: Պրոլետարներն այդ ժամանակ միայն իրենց շղթաները կկորցնեն, բայց ձեռք կբերեն մի

ամբողջ աշխարհ: «Պրոլետարնե՛ր բոլոր յերկրների, միացե՛ք»: Այս կոչով, որը փոխարինեց ուտոպիկ սոցիալիզմի «բոլոր մարդիկ յեղբայրներ են» լոզունգին, վերջանում է կոմունիստական մանիֆեստը: Էնգելսն այսպես է գրել մանիֆեստի մասին. «Մանիֆեստի հիմնական միտքն այն է, որ տնտեսական արտադրությունը և անխուսափելիորեն նրանով պայմանավորված հասարակական կառուցվածքը ամեն մի պատմական եպոխայի քաղաքական և մտավոր պատմության հիմքն է կազմում, որ դրա համապատասխան ամբողջ պատմությունը, սկսած այն ժամանակներից, յերբ քայքայվել է նախնական հասարակական համայնքը, յեղել է դասակարգային պայքարի պատմություն, այսինքն, պայքար շահագործվողների և շահագործողների, յենթարկվողների և տիրողների միջև հասարակության զարգացման տարբեր աստիճաններում, որ այդ պայքարը հասել է այնպիսի աստիճանի, որ շահագործվող և ճնշվող դասակարգը (պրոլետարիատը) չի կարող իրեն շահագործող ու ճնշող դասակարգից (բուրժուազիայից) ազատել, առանց միաժամանակ և ընդմիշտ ամբողջ հասարակությունը շահագործումից, ճնշումից և դասակարգային պայքարից ազատելու,—այս հիմնական միտքը միակ և բացառապես Մարքսին է պատկանում»:

Կոմունիստների Միությունը, ըստ մանիֆեստի, իրենից «ամենավճռական» կուսակցությունն է ներկայացնում, որը հասկանում է «բանվորական շարժման պայմանները, ընթացքը և ընդհանուր հետեվանքները: Կոմունիստների մոտակա նպատակն է...բանվոր դասակարգի կազմակերպումը, բուրժուազիայի տիրապետության տապալումը, պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճումը»:

Սակայն Կոմունիստների Միության հետ գերմանական պրոլետարիատի միայն չնչին մասն էր կապված: Նրա մի փոքր մասն էլ Վայտլինգի ազդեցության տակ էր: Իսկ գլխավոր մասսան կանգնած էր դեմոկրատական շարժման ծայր ձախ թևում և պայքարում էր բուրժուական լոզունգների՝ «ազատության», սահմանադրության և հանրապետության համար:

Բայց ինչպես միշտ, պրոլետարիատը հեղափոխության ակտիվ ուժ էր մատակարարում, իր շարքերից նա բարրիկադների մարտիկներ էր առաջ քշում:

ՄԱՐՏՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Այս քաղաքական բաժանվածության և դասակարգային հարաբերությունների բարդ պայմաններումն էր, որ Գերմանիայում առաջացավ 1848 թ. հեղափոխությունը: 1846 թ. քաղցը և հաջորդ տարվա տնտեսական ճգնաժամն այն աստիճան սրեցին դասակարգային հարաբերությունները, որ փետրվարյան հեղաշրջման լուրն առնելուն պես, Գերմանիայի զանազան մասերում սկսվեցին հեղափոխական խռովությունները: Բուրժուազիան պահանջում էր սահմանադրություն, մամուլի, ժողովների և միությունների ազատություն,—Գերմանիայի միացում: Այդ պահանջներն իրենց յելույթներով պաշտպանում էին մանր բուրժուազիան և պրոլետարիատը: Գյուղացիների զանգվածները հավաքվում էին «իրենց փեթակներից քշած մեղուների պես» հարձակվում էին ազնվականների ապարանքների վրա և այրում էին իրենց համար ատելի ֆեոդալական դոկումենտները: Մարտ ամսում ամբողջ Գերմանիայում հեղափոխություն բռնկվեց, այդ իսկ պատճառով 1848 թ. գերմանական հեղափոխությունը կոչվեց «Մարտյան»: Նրա համար վճռական նշա-

նակություն ունեցան յերկու գլխավոր պետություններում տեղի ունեցած դեպքերը, քանի վոր յերկուսն էլ, սկսած 1814—1815 թ. թ. Վիեննայի կոնգրեսից, ռեակցիայի բույնն եյին:

ՎԻԵՆՆԱՅԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Վիեննայում հուզումներն սկսվեցին Փարիզում կատարված հեղափոխության լուրն առնելուն պես: Բուրժուազիան կառավարությանն առաջարկեց «սիստեմը փոխել»: Մարտի 13-ին ուսանող յերիտասարդության և բանվորության մի հսկայական դանդված փողոց դուրս յեկավ: Ամենուրեք գոչում եյին «կորչի՛ Մետտերնիխը*)», «Կեցցե սահմանադրությունը»: Ուղարկված զորքերը կրակ բաց արին ամբոխի վրա և ցրեցին: Մասսան աշխատում եր իրեն հետևող հեծելազորի դեմ բարրիկադներ շինել: Մի քիչ անց, ամբոխը նորից հավաքվեց և շարժվեց դեպի կայսրի պալատը, վորը պաշտպանում եյին թնդանոթներով և չորս հազար զինվորներով: Հրաման տրվեց մասսային հրանոթով ցրել, բայց հրետանին անշարժ մնաց: Կառավարությունը գլուխը կորցրեց և զիջումների անցավ: Մետտերնիխը, վոր յերեսուն տարուց ավելի հոգին յեր ներշնչում ու ղեկավարում եր համայեվրոպական ռեակցիան, ստիպված եր հրաժարական տալ և Անգլիա փախչել: Կառավարությունը խոստացավ ժողովրդական ներկայացուցչություն հրավիրել և համաձայնեց զինված թողնել ուսանողության, վորոնք կազմակերպեցին «Ակադեմիական լեգիոնը», առ Վիեննայի հեղափոխության գլխավոր զինված ուժը հանդիսացավ: Միաժամանակ բուրժուազիան էլ եր զինվում: Նա ազգային գվարդիա ստեղծեց՝ «ազատությունը» պաշտպանելու և «ամբոխի յելույթներից կարգը» պահպանելու համար: Դեռ մարտի 13-ին զինված բուրժուազիայի առանձին ջոկատները կրակում եյին բանվորների վրա: Ապրիլի 25-ին կայսրը սահմանադրություն «շնորհեց», ուր նախատեսված եյին՝ ընտրական ցենզ, արիստոկրատական վերին պալատ, որենսդիր պալատների վորոշումներին վետո դնելու կայսրի անսահման իրավունք: Մայիսին յերկու անգամ փորձ կատարվեց ցրել «Ակադեմիական լեգիոնը»: Պարզ եր, վոր կառավարությունը մտադիր եր մարտյան խոստումներից խուսափել: Հարկավոր յեղավ «Ակադեմիական լեգիոն»-ի և Վիեննայի բանվորության զինված ապստամբությունը, (վորի հետևանքով թագավորն ստիպված յեղավ Վիեննայից փախչել), վորպեսզի կառավարությունն ընդհանուր ընտրական իրավունքի հիմունքներով սահմանադիր ժողով հրավիրեր: Սակայն այս անգամ էլ պահպանվեցին անուղղակի ընտրությունները և բանվորների քաղաքական իրավունքները սահմանափակվեցին: Ավստրիայի հեղափոխությունը բարդացավ նաև նրան յենթակա ժողովուրդների ազգային շարժումով: Հունգարիան ինքնուրույն սահմանադրություն եր պահանջում, իսկ հետագայում, յերբ նրան Վիեննայում հաղթող ռեակցիան եր սպառնում, իրեն անկախ հայտարարեց: Սլավոնական ժողովուրդները գերմանացիների և հունգարացիների դեմ դուրս յեկան: Պրագայում համասլավոնական կոնգրես հրավիրվեց, ուր քննության առնվեց սլավոնական պետություն ստեղծելու խնդիրը: Լոմբարդիայի Իտալացի ազգաբնակչությունն իրեն Ավստրիայից անկախ հայտարարեց:

*) Մետտերնիխն Ավստրիայի արտաքին գործերի մինիստրն եր (1809—1848 թ.):

ԲԵՌԼԻՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Միաժամանակ հեղափոխություն բռնկվեց Պրուսիայում: Փարիզի փետրվարյան դեպքերի լուրն ստանալուն պես Բեռլինում հուզումն որ-ավուր աճում եր: Քաղաքի Տիրգարտեն այգում տեղի եյին ունենում բազմամարդ միտինգներ, վորոնք պահանջներ եյին մշակում թագավորին ներկայացնելու համար: Բանվորները հուզված քննության եյին առնում այն, վոր Փարիզում ժամանակավոր կառավարության մեջ է անցել բանվոր Ալբերը: Բազմաթիվ գործադուլներ գործ եյին պահանջում: Մարտի 14-ին Բեռլինում տարածվեց Վիեննայի հեղափոխության հաղթության լուրը: Հուզումն աճում եր: Մասսայի և զորքի միջև ընդհարումներ եյին տեղի ունենում. սպանության և վիրավորվելու դեպքեր յեղան: Թագավորը վախենալով մայրաքաղաքում տեղի ունեցող շարժման մեծ ծավալից և ամբողջ Գերմանիայում հեղափոխության հաջողություններից, մարտի 18-ին յերկու հրովարտակ հրատարակեց՝ դասերի ներկայացուցիչներ հրավիրելու և ցենզերի վերացման մասին: Այդ բավական եր, վոր Բեռլինի բուրժուազիան ցնծության մեջ ընկներ: Պալատի առաջ մեծ բազմություն հավաքվեց, վորը, մի լրագրի արտահայտությամբ, կազմված եր «վայելուչ և որինակելի» մարդկանցից. սրանք հրճվանքի աղաղակներով վողջունում եյին պատշգամբ դուրս յեկած թագավորին: Միայն «մռայլ դեմքերի» մի փոքրիկ խմբակ կանգնել եր հեռու և ընդհանուր հրճվանքին չեր մասնակցում: Այդ բանվորների մի խմբակ եր: Յերբ մինիստրներից մեկը, դժգոհ նման սառնությունից, խրատի պես ասաց ծեր բանվորներին, վոր թագավորն ավելին է տվել, քան նրանից պահանջել են, հետևյալ պատասխանն ստացավ. «դո՛ւ, ծերուկ, բոլորովին վոչինչ չես հասկանում, վո՛չինչ, բացարձակապես վոչինչ չեն տվել»: Հետագա դեպքերն ապացուցեցին այդ խոսքերի իրավացիությունը: Հենց վոր հավաքվածների շարքից՝ պալատը պաշտպանող զինվորական պահակները ցրելու պահանջ լսվեց, հրապարակում յերևաց մի հեծյալ ջոկատ, վորը մերկացրած սրերով հարձակվեց հավաքվածների վրա: Նույն ժամանակ պալատի դարբասներից թմբկահարությամբ դուրս յեկավ զինվորների մի վաշտ և սվիններով ցրել սկսեց հավաքվածներին: Այդ բանն ապստամբության ազդանշան դարձավ: Աններևակայելի արագությամբ Բեռլինը ծածկվեց բարրիկադներով: Բանվորները ջարդում եյին զինախանութները: Նա, վորին զենք չեր հասնում, կացնով, ցցով, յերկաթե ձողերով եր զինվում: Անընդհատ հնչում եր ահազանգը և այդ կոչին արձագանքելու համար Բեռլինի շրջակայքից շտապ հավաքվում եյին զինված մարդիկ: Ցերեկոյան զորքերը հարձակման դիմեցին. սկսվեց 13 ժամ տևող մի համառ կռիվ: Առավոտյան հոգնած զորքերը հետ նահանջեցին դեպի կենտրոն: Առավոտյան ժամը 7-ին լույս տեսավ թագավորի հրովարտակը «Իմ սիրելի բեռլինցիներին», վորոնց դայթակղեցրել են «նենգամիտ մարդիկ, գլխավորապես այլազգիներ»: Մանիֆեստում թագավորը խոստանում եր զորքերը հետ քաշել, յեթե ժողովուրդն ինքն առաջինը կթողնի բարրիկադները: Ի պատասխան դրան, բարրիկադներից վերսկսվեց հրացանաձգությունը: Այն լուրը, թե ապստամբները պատրաստվում են գրոհ տալ պալատի վրա, չեր կարող չհուսահատեցնել թագավորին և չհիշեցնել 1792 թ. օգոստոսի 10-ի Փարիզը: Թագավորը զորքին հրաման արձակեց՝ հեռանալ քաղաքից: Այդ Բեռլինի բանվորների հաղթանակն եր, քանի վոր նրանք բարրիկադ-

ների վրա կռվողների ճնշող մեծամասնությունն եյին։ Գիշերային բարրիկադային կռվի ղեկավարներն եյին՝ փականագործը, մեխանիկը և խառատը։ Իսկ հաղթության արդյունքները «յուղ ու բուրդ ծախողների» մինիստրությունն եր, կազմված լիբերալ արիստոկրատիայից ու բուրժուազիայից և մայիսին հավաքված ազգային ժողովը։ Ժողովն իր ճնշող մեծամասնությամբ կազմված եր աստիճանավորներից, կալվածատերերից և բուրժուազիայից, բացի այդ, մի քանի տասնյակ գյուղացիներից և յերեք բանվոր-արհեստավորներից։ Վիեննայի պես այստեղ էլ բուրժուական «քաղաքացիական բանակ» կազմվեց, վորի հրամանատար ընտրվեց վոստիկանության պետը։

ՖՐԱՆԿՖՈՒՐՏԻ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

Հեղափոխության հաջողությունները գերմանական պետություններում ու նախ և առաջ Ավստրիայում և Պրուսիայում հերթական հարց դարձրին Գերմանիայի միացումը։ Մարտի վերջերին Մայնի վրայի Ֆրանկֆուրտում «նախապարլամենտ» հրավիրվեց։ Նրա բուրժուական մեծամասնությունը, հեղափոխությունից սարսափած, մտածում եր ինչպես անի, վոր «սահմանադրական ճանապարհից» չիջնի, ուստի տապալում եր մանր բուրժուական փոքրամասնության առաջարկությունները։ Նախապարլամենտը վորոշեց մայիսին սահմանադիր ժողով հրավիրել, ընտրված ամբողջ Գերմանիայի ազգաբնակչությունից՝ ընդհանուր ձայնատվությամբ։ Հանրապետականները դժգոհ մնալով Բադենում ապստամբություն առաջացրին, վորը ճնշվեց ամենայն խստությամբ։ Մայիսի 18-ին սահմանադիր պարլամենտը հավաքվեց Ֆրանկֆուրտում. այդտեղ պետք է մշակվեր համագերմանական սահմանադրությունը։ Այստեղ էլ մեծամասնությունը բուրժուական ներկայացուցիչներն եյին, վորոնք ամենից շատ հեղափոխության շարունակվելուց եյին վախենում։ Մանր բուրժուազիայի ձախ թևը չուներ վորոշակի վոչ քաղաքական և վոչ էլ սոցիալական ծրագիր։

ՌԵԱԿՑԻԱ

Այսպիսով պրոլետարիատի և հեղափոխական մանր բուրժուազիայի բարրիկադների վրա տարած հաղթանակի պտուղը բուրժուազիան վայելեց։ Ինչպես նախագուշակում եյին Մարքսն ու Ենգելսը «լիբերալ բուրժուաները իշխանության հասնելով, նվաճած իշխանությունն իսկույն բանվորության դեմ ուղղեցին»։ Նրանց գլխավոր գործը դարձավ հեղափոխությունից պաշտպանել «հասարակության խաղաղությունը; անձի և սեփականության անձեռնմխելիությունը»։ Բուրժուազիային առանձնապես վախեցնում են շարժման պրոլետարական բնույթ ընդունելու նշանները։ Բեռլինի և Վիեննայի բանվորները սկսեցին պրոֆեսիոնալ միություններ կազմակերպել և գործադուլներով իրենց դրության բարելավման ձգտել։ Ստիպված յեղան բանվորական որը կրճատել և 10 ժամի իջեցնել, աշխատավարձը բարձրացնել, գործազուրկների համար աշխատանք կազմակերպել։ Պրոլետարիատի այս շարժման մեջ հանդես յեկավ Կոմունիստական Միության անդամների գործունեյությունը. նրանք հեղափոխության սկզբից վերադարձել եյին եմիգրացիայից և ցրվել ամբողջ Գերմանիայում։

Նրանցից մեկը, նախկին բանվոր-գրաշար Ստեփան Բորնը, ամբողջ Գերմանիայի բանվորության միացման սկիզբը դրեց։ Գերմանիայի զանազան մասերում մի շարք բանվորական միություններ ստեղծելով, Բորնը 1848 թ. օգոստոսին այդ միությունների ներկայացուցիչների կոնգրես հրավիրեց, ուր կազմվեց համագերմանական բանվորական կազմակերպություն՝ «գերմանական բանվորների յեղբայրություն» անունով։ Այդ Գերմանիայի առաջին բանվորական լայն կազմակերպությունն եր, ստեղծված նրանց դասակարգային շահերի հիման վրա և ուներ իր տպագիր օրգանը։ Այս բոլորը բուրժուազիային ստիպում եր դաշն կապել ազնվականների հետ, վորպեսզի միասնական ճակատով գործեն պրոլետարիատի, այդ «վատ տեսակի թափառող կերպարանքների» դեմ։ Մարտյան օրերից ընդամենը մի շաբաթ անց, պրուսական թագավորին 14.000 քաղաքացիների ստորագրությամբ պետիցիա ներկայացրին, վորի մեջ աղերսում եյին թագավորին զորքերը Բեռլին վերադարձնել։ Բուրժուական գվարդիան յեռանդով օգնում եր կառավարական զորքերին՝ բանվորության պատժելու ժամանակ։ Այսպես, հուլիս ամսում նա կառավարական զորքերի հետ մեկտեղ գլխաթափ արավ Բեռլինի բանվորներին, վորոնք հարձակվել եյին զինամթերանոցի վրա, վորտեղից կառավարությունը գաղտնաբար զենք եր հանում իր զորքերի համար։ Վիեննայում օգոստոսին նա գնդակահարեց բանվորներին, վորոնք բողոքում եյին հանրային աշխատանքների վրա բանվորների աշխատավարձն իջեցնելու դեմ։

ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Բուրժուազիայի հեղափոխությունից նահանջելը, ռեակցիան, հանձինս ազնվականների, սպաների և աստիճանավորների, շուտով ուշքի յեկավ և անցավ հարձակման, հարձակումն առանձնապես վճռական եր Փարիզի պրոլետարիատի հունիսին ջախջախվելու լուրն ստանալու ժամանակ։ Այդ հարձակումն առավել ևս հաջող անցավ, քանի վոր ֆեոդալական պարհակների մասնակի վերացումով հաջողվեց հանդարտեցնել գյուղացիական շարժումները։ Ռեակցիան ամենից առաջ Ավստրիայում հաղթեց, ուր նա կարողացավ օգտագործել գերմանացիների, հունգարացիների և սլավոնների ազգային տարաձայնությունները։ Գերմանական զորքերը ցրեցին Պրագայի սլավոնական կոնգրեսը։ Հոկտեմբերի 31-ին սլավոնական ջոկատների օգնությամբ գրոհի միջոցով վերցրին հեղափոխական Վիեննան, վորը մինչև վերջին րոպեն հերոսաբար պաշտպանում եյին բանվորներն ու ուսանողները։ Քաղաքը հանձնեց բուրժուական կոմունալ խորհուրդը։ Վիեննայի անկումից հետո գերմանական զորքերն սլավոնների հետ միասին շարժվեցին Հունգարիայի դեմ։ Գրեթե մի ամբողջ տարի հունգարացիք համառ դիմադրություն եյին ցույց տալիս, և միայն ավստրիական կառավարության խնդրանոք, Նիկոլայ I-ի կողմից ուղարկված ռուսական բանակի միջոցով հաջողվեց «խաղաղեցնել» Հունգարիան։ Գերիներին կախում և գնդակահարում եյին, վիրավորներին ու անզեններին սպանում։ Ամբոխի եքսցեսներից բնակչության «պաշտպանելու» համար Վիեննա ուղարկված զորքերը կողոպտում եյին տները և կանանց ու յերեխաներին չարչարանքի մատնում։ Ավստրիայում հեղափոխությունը վերջացավ։ Սահմանադիր ժողովը ցրեցին, մինչ մարտյան անսահման միապետությունը վերականգնվեց։

Ավստրիական հեղափոխության կործանումը խիզախության ներ-

չնչեց պրուսական ռեակցիոն ուժերին: Զորքերը դեպի Բեռլին քաշեցին: Թագավորական հրովարտակով Ազգային ժողովը ցրված հայտարարվեց, միքանի չենթարկվող պատգամավորներին սվիններով հեռացրին: Նրանք այդ բանին «պասիվ դիմադրություն» վորոշումով պատասխանեցին: Սահմանադրությունն այնպես փոխվեց, վոր այլես չէր կարող խանգարել վոչ միահեծանության և վոչ էլ հողատերերի և աստիճանավորների տիրապետության: 1848 թ. վերջերին գերմանական պետությունների մեծամասնության մեջ հեղափոխությունը ճնշվեց: Ֆրանկֆուրտի պառլամենտը, չնայած սահմանադրություն մշակելուն, ոդում կախված մնաց: Բուրժուական մեծամասնությունը վճռականապես մերժեց փոքրամասնության առաջարկը՝ հատուկ բանակ կազմելու մասին, վորի վրա կկարողանար հենվել պառլամենտը: «Այդ պառավ կնիկների ժողովն իր գոյության հենց առաջին որից վախենում էր ժողովրդի ամենաթույլ շարժումից ավելի, քան միասին վերցրած բոլոր գերմանական կառավարությունների ռեակցիայից» (Էնգելս): Պրագայի սլավոնական կոնգրեսը ցրելու համար, պառլամենտը շնորհակալություն հայտնեց ավստրիական զորքերի հրամանատարին: Այնուհետև զորքերը Ֆրանկֆուրտի դեմ ուղղեցին. այդ ժամանակից մի շարք գերմանական պետությունների պահանջին՝ ցրել Ֆրանկֆուրտից պառլամենտի անդամներին: Պառլամենտի մեծամասնությունը, սահմանադրությունը ձեռքին, վոչինչ չէր մնում անել, քան յենթարկվել այդ պահանջին: Մանր բուրժուական փոքրամասնությունը ճառերի և բանաձևերի միջոցով անպտուղ փորձից հետո ցրվեց զինված ուժով 1848 թ. հունիսի 13-ին, հենց նույն որը, յերբ սոցիալական կազմով իրեն նման «Լեռը» հաղթվեց Փարիզում:

Դարձյալ բանվորներն էյին, վոր պատրաստ էյին իրենց կյանքը զոհել մեռնող հեղափոխության համար: Ֆրանկֆուրտի պառլամենտի գոյության վերջին օրերին մի շարք ապստամբություններ բռնկվեցին՝ Դրեզդենում, Պֆալցում, Բադենում: Դրեզդենում ապստամբության գլուխ էյին անցել ռուս էմիգրանտ Բակունինը և Ստեֆան Բորնը: Ապստամբության մասնակցող Էնգելսի ասելով՝ «պայքարը փողոցներում 4 որ շարունակվեց... Ապստամբների ուժերը գրեթե բացառապես արդյունաբերական շրջանների բանվորներից էր կազմված»: Բադենում և Պֆալցում ապստամբներին միացան բատրակները և գյուղացիական չքավորությունը: Այդ ապստամբություններին մասնակցում էր նաև մանր բուրժուազիայի ամենահեղափոխական մասը: Նրա ինտելիգենցիան տեղ-տեղ ղեկավարող դեր էր կատարում, սակայն այդ միայն թուլացնում էր ապստամբության հեղափոխական թափը: Յերբ ապստամբությունը վերելքի ամենաբարձր աստիճանին էր հասնում, մանր բուրժուական առաջնորդները սարսափում և Էնգելսի վկայությամբ, «իրենց ուժը պատածի չափ աշխատում էյին խլել շարժման էներգիան, ներքուստ թուլացնել և կործանման հասցնել»: Այդ ապստամբությունները հեղափոխության վերջին բռնկումն էյին: Յերբ նրանք հանգցվեցին ապստամբների արյունով, Գերմանիան մինչև 60-ական թվերն ընկղմվեց ռեակցիայի խավարի մեջ: Մարքսն ու Էնգելսը Գերմանիա վերադարձան հեղափոխության ամենայեռուն ժամանակ: 1848 թ. հունիսի մեկից սկսեցին հրատարակել Քյոլնում «Նոր հռենոսյան լրագիրը»: Հաշվի առնելով դասակարգերի ուժերի հարաբերությունը Գերմանիայում, Մարքսն ու Էնգելսն իրենց լրագրի առաջ յերկու նպատակ էյին դնում. մի կողմից՝ բուրժուազիային դրդել Գերմանիայի կարկատած ատի–

րական-ինքնակալական պետությունների դեմ ավելի վճռական գործունեության դիմելու, մյուս կողմից, բացատրել պրոլետարիատին հեղափոխության մեջ նրա դասակարգային նպատակը և ցրել նրա մանր բուրժուական իլյուզիաները: 11½ ամսվա ընթացքում «Նոր հռենոսյան լրագիրը» մի հեղափոխական դրոշ էր, վորը գերմանական հեղափոխության ժամանակ պրոլետարիատին ցույց էր տալիս միակ ճիշտ ուղին: Յերբ Գերմանիայի այս կամ այն վայրում առանձին լարված հեղափոխական մոմենտ էր ստեղծվում, Մարքսը գնում էր այնտեղ, վորպեսզի անձնական աջակցությամբ նախապատրաստի և հեղափոխության բռնկման ճիշտ ուղղություն տրվի: Հաղթված ռեակցիան վորքան ուժեղ էր հարձակվում հեղափոխության վրա, այնքան ավելի խիստ էր մտրակում նրան «Նոր հռենոսյան լրագիրը»: Մարքսը յերկու անգամ դատական պատասխանատվության յենթարկվեց և յերկու անգամն էլ, իր պաշտպանողական ճառերից հետո, յերդվյալ դատարանի կողմից անմեղ ճանաչվեց: Լրագրի «դեմոկրատ» փայատերերը սարսափած իրենց փայերը հետ պահանջեցին: Լրագիրը փրկելու համար Մարքսը նվիրաբերեց իր և կնոջ փոքրիկ կարողությունը: Այդ չնչին միջոցները բավական չէյին,

Ֆրիդրիխ Էնգելսը յերիտասարդ ժամանակ (ժամանակակ. նկ.)

և Մարքսը Քյոլնից դուրս յեկավ լրագրի համար փող վորոնելու: Յերբ նա վերադարձավ Քյոլն, այնտեղ գտավ, իր արտահայտությամբ, «վոստիկանական մի թղթի կտոր», վորով նրան հրամայում էյին թողնել Գերմանիայի սահմանները: 1849 թ. մայիսի 19-ին լույս տեսավ «Նոր հռենոսյան լրագրի» վերջին համարը. Մարքսն անխնա մտրակում էր «կոպիտ, ատելի, անպիտան և անազնիվ մոնարխիստ տերրորիստներին և հրաժեշտ տվեց բանվորներին: Մարքսը տեղափոխվեց Փարիզ: Այնտեղ էլ ռեակցիան էր թագավորում: Այնտեղից նա աքսորվեց Ֆրանսիայի ճահճուտ՝ դողերոցքով լի վայրերից մեկը: Վորպեսզի ազատվի «քողարկված սպանության փորձից», Մարքսը Լոնդոն տեղափոխվեց. դրա համար նա աներևակայելի դժվարությամբ միջոցներ գտավ: Վերահաս սպիտակ տերրորը Կոմունիստների Միության մի մասին ստիպեց էմիգրացիայի դիմել, իսկ մյուս մասը ընդհատակյա դրության անցավ: 1852 թ. աշնանը Քյոլնում կազմակերպվեց ձերբակալված կոմունիստների դա–

տավորությունը, որին հիմք ծառայեցին պրովոկատորական մատնությունը և «կեղծ» դոկումենտների ֆաբրիկացիան. կոմունիստներին զանազան ժամանակներով բանտ նստեցրին: Կոմունիստների Միության գոյությունը դադարեց:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1848 թ. Գերմանիայի հեղափոխությունը բուրժուական հեղափոխություն էր՝ ուղղված կապիտալիզմի զարգացմանը խանգարող հին կարգի դեմ: Բայց հեղափոխության վճռական ուժը պրոլետարիատն էր, որը բարրիկադային կռվով կառավարությունից զիջումներ կորզեց: Վախենալով պրոլետարիատից բուրժուազիան նախապատվություն տվեց «բարի կարգերին» ընդդեմ ազատության և միացավ ռեակցիայի հետ: Հեղափոխության անհաջողության հիմնական պատճառներից մեկն այս էր:

Այնուամենայնիվ ֆեոդալական պարհակների և համքարային սահմանափակումների մասնակի վերացումը ճանապարհ հարթեց կապիտալիզմի հետագա զարգացման համար Գերմանիայում: Ահա ինչու Մարքսը 1848 թ. գերմանական հեղափոխությունը «անավարտ բուրժուական հեղափոխություն» անվանեց: «Նոր Հռենոսյան լրագրում» Գերմանիայի հեղափոխական դեպքերը նա փայլուն կերպով վերլուծեց: Այստեղ, ի միջի այլոց, նա ցույց տվեց գերմանական բուրժուազիայի հեղափոխական ակարությունը. նա «կույր, խուլ, անատամ, պառավ» էր: Մարքսը պարզեց պրոլետարիատի հաղթելու պատճառները, որոնցից ամենագլխավորը Գերմանիայի արդյունաբերության թույլ զարգացած լինելն էր: 1848 թ. Գերմանիայի հեղափոխության փորձն, ինչպես և Ֆրանսիայինը, պրոլետարիատի համար մեծ նշանակություն ունեցավ: Բուրժուազիայի այդ դավաճանությունը, մանր բուրժուազիայի տատանումները, որոնք գլխավոր պատճառն էին զինված ապստամբությունների պարտության, ռեակցիայի վայրագ տեռորը — այս բոլորը պրոլետարիատի առաջավոր մասին ոգնեց դուրս գալ ուտոպիական սոցիալիզմի իլլյուզիաներից: 1848 թ. հեղափոխությունները պրոլետարիատին գործնականում ցույց տվին, որ հաղթության միակ հաստատուն ճանապարհը «Կոմունիստական Մանիֆեստ»-ում Մարքսի ցույց տված ճանապարհն է:

1848 թ. հեղափոխությունների վերլուծման հիման վրա Մարքսն ու Էնգելսը պրոլետարական հեղափոխության մի ամբողջ ծրագիր տվին, 1850 թ. այսպես կոչված «գերմանական Կոմունիստների Միության Կենտրոնական Կոմիտեյի դիմումի» մեջ: 1848—49 թ.թ. փորձերի հիման վրա Մարքսն ու Էնգելսն այդ ծրագրում առանձնապես ընդարձակ խոսում են հետագա հեղափոխության ժամանակ դեմոկրատական մանր բուրժուազիայի դավաճանական դերի մասին՝ հանդեպ պրոլետարիատի: Նրանք «այժմ իրենց կարմիր և սոցիալ-դեմոկրատ են անվանում», բայց «նրանց դավաճանելը բանվորներին կսկսվի հաղթության առաջին ժամից»:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

ԻՏԱԼԻԱՆ ՎԻԵՆՆԱՅԻ ԿՈՆԳՐԵՍԻՑ ՀԵՏՈ

Նապոլեոն I-ի կայսրության խորտակվելուց հետո ռեակցիայի ազդեցությունն ամենից շատ Իտալիան էր զգում: 1814—1815 թ.թ. Վիեննայի կոնգրեսը Իտալիան վերականգնեց իր նախկին բաժան-բաժան յեղած դրությամբ, և Նապոլեոնի կողմից վտարված հարստությունները վերստին կյանքի կոչվեցին: Իտալիայի հյուսիսային մասը (Լոմբարդո-Վենետիկյան մարզը) վերադարձվեց Ավստրիային: Ամենախոշոր պետությունը Սարդինական թագավորությունն էր, որի մեջ, բացի Սարդինյա կղզուց, մտնում էին նաև Պյեմոնտը ճենովական ծովափով, Նիցցան և Սավոյան: Իտալիայի հարավային մասը բռնում էր այսպես կոչվող Յերկու Սիցիլիաների թագավորությունը, որը մինչ այդ նեապոլիտական էր կոչվում: Նրանցից դեպի հյուսիս ընկած էր պապական մարզը՝ Հռոմ քաղաքով, որի իշխողը պապն էր, նրան էր պատկանում նույնպես աշխարհիկ իշխանությունը: Բացի այդ, հանդես յեկան մի շարք դքսություններ: Այդ բոլոր պետություններում վերջնչացրին ֆրանսիական կարգերը և վերականգնեցին ավտոկրատական կարգեր, վատիկանության և հոգևորականության ճնշումները: Նապոլեոնի կոդեկսի վերացումից հետո մանր և փոքրաթիվ առևտրա-արդյունաբերական բուրժուազիան զրկվեց այդ կոդեկսով ոգտվող քաղաքական իրավունքներից: Իտալիայի բաժանելը մի շարք մանր պետությունների, որոնք միմյանցից անջատ էին ոչ միայն քաղաքականապես, այլև մաքսային սահմաններով, հարված հասցրեց բուրժուազիայի յերկրի ազգային միացման ձգտելուն, որն ամենից առաջ անհրաժեշտ էր առևտրի զարգացման համար:

Ամեն մի դժգոհության արտահայտության կառավարությունները դաժանով էին պատասխանում:

ԿԱՐԲՈՆԱՐԻՆ ՑԵՎ 1820—1821 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային լիբերալ շարժումը, որն անցել էր ընդհատակյա աշխատանքների, գաղտնի ընկերություններ կազմակերպելու մեջ էր արտահայտվում: Այդ ընկերություններից ամենանշանակալիցը, թե անդամների քանակով, թե գործունեությամբ կարբոնարի ընկերությունն էր: («Կարբոնարի» իտալերեն ածխահատ է նշանակում. այս անունը սիմվոլիկ նշանակություն ուներ): Ընկերության նպատակն էր ամբողջ Իտալիան միացնել և մի սահմանադրական միապետություն դարձնել: Ընկերությունը Նեապոլում կազմակերպվեց և շուտով իր ճյուղերը, այսպես կոչված «վենտերը», տարածեց ամբողջ Իտալիայում: Կարբոնարիզմը մեծ ուժ դարձավ այն ժամանակ, յերբ իտալական պետությունների բանակներում վենտեր կազմակերպվեցին: Նապոլեոնի կայսրության խորտակումից հետո բանակը, և առաջին հերթին սպայությունը, կորցրեց իր արտոնյալ վիճակը: Մեծ մասամբ զրկված և բացառված, որ ռեստավրացիայի ժամանակ բանակը ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում հեղափոխական շարժման մեջ:

1820 թվի սկզբի սպանական զինվորական հեղափոխության հաջողության լուրը ուժեղացրեց կարբոնարների գործունեությունը: Նույն թվի հուլիսին նրանց ղեկավարությամբ ապստամբած գնդերն, առանց

դիմադրության հանդիպելու, մտան Նեապոլ: Թագավորն ստիպված էր ընդունել սահմանադրությունը, վորը կազմված էր 1793 թ. ֆրանսիական սահմանադրության վրա: Բայց Իտալիայի զանազան մասերում տեղի ունեցող շարժումների մեջ ընդհանուր համաձայնությունը բացակայում էր: Նեապոլիտանական ապստամբությունից միայն 8 ամիս հետո, 1821 թ. մարտին Պիեմոնտում զինվորական ապստամբություն ծագեց: Սարդինական թագավորության մեջ սահմանադրություն մտցվեց, վորը նման էր նեապոլիտանականին: Բայց արդեն ուշ էր: Պիեմոնտական հեղափոխության սկզբից յերկու շաբաթ հետո Նեապոլը գրավեց Ավստրիան, վորը «սրբազան դաշնակցությունից» կարգադրություն ձեռք բերեց «փչացած մարդկանց կողմից առաջացրած նողկալի հուզումները ճնշել»: Նեապոլիտանական սահմանադրությունը վոչնչացվեց: Դրանից յերեք շաբաթ հետո նույն Ավստրիայի զինված ուժերը ջարդեցին Սարդինական թագավորության հեղափոխական զորքերը: Մահապատիժները, բանտարկությունները, աքսորը՝ ռեակցիայի ձեռքին այն միջոցներն էին, վորով կռվում էին, հեղափոխական շարժման մասնակցելու մեջ բոլոր կասկածվողների դեմ: Նորից ընդհատակյա անցած այդ շարժումը չմեռավ. գաղտնի ընկերությունները շարունակում էին իրենց գործը: Նրանց գլխավոր լոզունգներից մեկը դարձավ «կորչեն գերմանացիք»: 1831 թվի սկզբին, Ֆրանսիայի հուլիսյան հեղափոխության ազդեցության տակ, Միջին Իտալիայի մի քանի պետություններում առաջացան մի քանի հեղափոխական բռնկումներ, վորոնք Ավստրիայի օգնությամբ արագ ճնշվեցին:

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՃՈՒՄԸ

Բաժան-բաժան յեղած Իտալիան 40-ական թվականների մոտ տնտեսապես ավելի հետամնաց էր, քան Գերմանիան: Լեռնաշղթաներով կտրված այս յերկրում, ճանապարհների վատ հաղորդակցությամբ, առանձին պետությունների միջև մաքսային բաժանվածությամբ՝ առևտրական փոխանակությունը շատ դժվար էր: Արդյունաբերությունը խիստ դանդաղ էր զարգանում. գրեթե բացառապես արհեստավորական արտադրությունն էր իշխում: Ամենահեղափոխական դասակարգը մեծաքանակ, բայց բոլորովին իրավազուրկ, մանր բուրժուազիան էր հանդիսանում: Նրա վերնախավը՝ ինտելիգենցիան՝ ֆրանսիական հեղափոխության գաղափարներով էր տարված և յերազում էր հանրապետության մասին, վորը Իտալիային միացում և ազատություն կբերեր: Մանր բուրժուազիայի շարքերից դուրս յեկան իտալական հեղափոխության այն ժամանակվա առաջնորդներ՝ Մաձինին (1805—1872) և Գարիբալդին (1805—1882): Մաձինին նոր գաղտնի ընկերության հիմք դրեց՝ «Յերիտասարդ Իտալիա» անունով, վորը ձգտում էր դուրս քշել ավստրիացիներին Իտալիայից և յերկիրը մի ամբողջական դեմոկրատիկ հանրապետություն դարձնել: Ազգային-ազատամիտ շարժումը ավելի ուժեղ սկսեց տարածվել նաև առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի շրջաններում: Տնտեսական զարգացման նպատակով, անհրաժեշտ էր յերկիրը ավստրիական լծից ազատել, անցկացնել յերկաթուղի, վորը կարող էր Իտալիայի «կոշիկը կարել»:

Բուրժուազիայի քաղաքական ծրագիրն էր Իտալիան միացնել և սահմանադրական միապետություն ստեղծել:

Մոտենում էր, գերմանական բուրժուազիայի արտահայտությամբ, «խելագար» 1848 թիվը: Ազատամիտ և հեղափոխական շարժումների աշխուժացումը Արևմտյան Յեվրոպայի մի շարք յերկրներում արտահայտվեց նաև Իտալիայում: Ամբողջ յերկրում ուժեղացավ «Յերիտասարդ Իտալիայի» ագիտացիան: Հեղափոխական առաջին յելույթները Լոմբարդիայում բռնկվեցին, ուր բնակչության դժվարին պայմաններին ավելանում էր ավստրիացիների կողմից կոպիտ ազգային ճնշումը: 1848 թ. հունվարի կեսերին ապստամբություն ծագեց Պալերմոյում, վոր արագությամբ ընդգրկեց ողջ Սիցիլիան: Թագավորական զորքերը դուրս քշվեցին կղզուց, ուր կազմվեց ժամանակավոր կառավարություն: Մի քանի օր հետո ապստամբություն բռնկվեց հենց Նեապոլում. թագավորն ստիպված էր սահմանադրություն խոստանալ: Նեապոլի հեղափոխության ազդեցության տակ սարդինական թագավորն էլ սահմանադրության պահանջին իր համաձայնությունը տվեց: Փարիզի փետրվարյան և Վիեննայի մարտյան հեղափոխության լուրն ստանալով, հեղափոխական շարժումը բռնկեց ամբողջ Իտալիան: Հեղափոխությամբ բռնկված Լոմբարդիայի, Սարդինայի ու Նեապոլիտանական զորքերը ավստրիական բանակին ստիպեցին հետ նահանջել: Լոմբարդիան համաժողովրդական քվեարկությամբ վորոշեց Սարդինական թագավորությանը միանալ: Վենետիկն իրեն Ավստրիայից անկախ հանրապետություն հայտարարեց: Պիոս IX պապը, վոր մի ժամանակ լիբերալ-բուրժուազիայի շրջանում մեծ ժողովրդականություն ուներ, ստիպված էր Հռոմից փախչել. նրա խնդիրքը, վոր իրեն «սուրբ յեկեղեցուն հակառակ» պահանջներ չառաջադրել, հպատակների վրա ազդեցություն չունեցավ: Հռոմը հանրապետություն հայտարարվեց. հանրապետությունը ղեկավարում էր տրիումվիրատով (յերեք հոգուց կազմված կոլլեգիա), վորի գլուխ անցավ Մաձինին: Գարիբալդին տրիումվիրատը պաշտպանելու համար կամավորներից ժողովրդական բանակ կազմեց: Հռոմի հանրապետությունը, նրա կազմակերպիչների կարծիքով, պետք է ամբողջ Իտալիայի միացման կենտրոն հանդիսանար:

ՌԵԱԿՑԻԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Ինչպես Գերմանիայում, Իտալիայում էլ առաջին հաջողության հետևեց անհաջողություն, իսկ հետո էլ հեղափոխության ջախջախում: Հեղափոխական շարժման մեջ միասնություն չկար. առևտրա-արդյունաբերական և մանր բուրժուազիայի՝ սահմանադրական միապետության և հանրապետության կողմնակիցների միջև պառակտում առաջացավ: Հանրապետականների հաջողություններից սարսափած առևտրա-արդյունաբերական բուրժուազիան դերադասեց ռեակցիայի կողմն անցնել: Մանր բուրժուազիան, հեղափոխական մեծ թափ ցուցաբերելով, վորոշակի սոցիալական և շարժման ծրագիր չուներ: Հեղափոխության ընթացքում նա չէր հենվում մասսաների վրա. Իտալիայում պրոլետարիատ գրեթե չկար, մութ և ճնշված գյուղացիությունը պասիվ էր, հեղափոխական յելույթների մասսայական ուժը քաղաքի չքավորությունն ու ծովափնյա քաղաքների, նավահան-

գիտների ազգարնակչության եր, վորոնք հեղափոխության մեջ չունեյին իրենց դասակարգային նպատակները: Իտալական հեղափոխության ընթացքի մեջ վճռական բեկում առաջացավ Ֆրանսիայում և Գերմանիայում ռեակցիան հաղթելուց հետո: Ավստրիական կառավարությունը ճնշելով իր յերկրի ներսի հեղափոխությունը, ազատված զորքերը դեպի Լոմբարդիա շարժեց: Լոմբարդիան, հետո նաև Վենետիկը Ավստրիային միացվեցին:

Ֆրանսիական պրեզիդենտ Լուի Բոնապարտը, ցանկանալով իր կողմը թեքել հոգևորականությունը և դեպի կրոնը տրամադրված գյուղացիությունը, բացի այդ, յերազելով, վոր Յեվրոպայում իր հորյեղբոր դերն է խաղալու, զորքերն Իտալիա ուղարկեց պապին պաշտպանելու: Ֆրանսիացիներին յերկու ամիս հերոսաբար պաշտպանելուց հետո, Գարիբալդին իր կամավոր զորքերով 1849 թ. ստիպված եր քաղաքը թողնել: Հռոմում տապալեցին հանրապետությունը և վերականգնեց պապի իշխանությունը: Միևնույն ժամանակ նեապոլիտանական թագավորը ճնշելով Սիցիլիայի ապստամբությունը, վոչնչացրեց սահմանադրությունը:



1848—49 թ. թ. հեղափոխական շարժումներով բռնկված Յեվրոպական պետությունները (այդ պետությունների տերիտորիան պատած է գծերով).

Իտալիայի ազգային–լիբերալ շարժումը յերրորդ անգամ ճնշվեց: Ամբողջ յերկրում սկսվեցին ձերբակալություններ ու մահապատիժները: Մաձինին և Գարիբալդին հեղափոխության միքանի առաջնորդների հետ Շվեյցարիայի գիմեցին և արտասահման անցան: Բայց շատերն էլ հեղափոխության մասնակցելու համար զրկվեցին իրենց կյանքից կամ ազատությունից:

Միայն նեապոլիտանական պետության մեջ քաղաքական հանցագործության համար 22.000 մարդուց ավելի դատի յենթարկվեց:

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԴԵՊՔԵՐԻ ՈՐԱՑՈՒՅՑ

1848 թ. փետրվարի 24–ից.—մայիսի 4–ը: Հեղափոխությունը Ֆրանսիայում: Պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարի սկիզբը: Հեղափոխությունը Գերմանիայում և Իտալիայում:

1848 թ. փետրվարի 23—24–ին.—Փարիզի հեղափոխությունը:

1848 թ. փետրվարի 25–ին.—Հանրապետության և աշխատանքի իրավունքի հռչակումը:

1848 թ. փետրվարի 27–ին.—Ազգային արհեստանոցներ կազմակերպելու մասին դեկրետը:

1848 թ. փետրվարի 28–ին.—Լյուքսեմբուրգյան հանձնաժողովի կազմելը:

1848 թ. մարտի 17–ին.—Փարիզի հեղափոխական ցույցը:

1848 թ. մարտի 13–ին—Հեղափոխությունը Վիեննայում:

1848 թ. մարտի 13–18–ին.—Հեղափոխությունը Բեռլինում:

1848 թ. մայիսի 4–ից—հունիսի 27–ը.—Ֆրանսիայի սահմանադիր ժողովը և պրոլետարիատի ու բուրժուազիայի պայքարի սրումը: Հակահեղափոխության հաղթանակը Պրագայում և Նեապոլիտանական թագավորության մեջ:

1848 թ. մայիսի 15–ին.—Փարիզի պրոլետարիատի յելույթը Սահմանադիր ժողովի դեմ: Յերկրորդ զինված ապստամբությունը Վիեննայում:

1848 թ. հունիսի 21–ին.—Ազգային արհեստանոցները ցրելու մասին դեկրետը:

1848 թ. հունիսի 23—27–ը.—Պրոլետարիատի հունիսյան ջախջախումը:

1848 թ. հունիսի 27—1849 թ. մայիսի 29–ը.—Սահմանադիր ժողով. Ֆրանսիայի բուրժուական հանրապետության ամրապնդումը: հակահեղափոխության հաղթանակը Գերմանիայում և Իտալիայում:

1848 թ. հոկտեմբերի 30–ին.—Հեղափոխական Վիեննան գրոհով վերցնելը:

1848 թ. դեկտեմբերի 10–ին.—Լուի Բոնապարտի պրեզիդենտ ընտրվելը:

1849 թ. մայիսի 29–ին—1851 թ. դեկտեմբերի 2–ը.—Որենսդիր ժողով. Լուի Նապոլեոնի հեղաշրջման պատրաստվելը:

1849 թ. մայիս—հունիս.—Դրեզդենի, Պֆալցի, Բադենի ապստամբությունները:

1849 թ. հունիսի 13–ին.—«Լեռան» ապստամբությունը և ջախջախվելը. Ֆրանկֆուրտի պարլամենտի ցրումը:

1850 թ. մայիսի 31–ը.—Ընդհանուր ընտրական իրավունքի վերացումը:

1851 թ. դեկտեմբերի 2–ը.—Լուի Բոնապարտի հեղաշրջումը:

1852 թ. դեկտեմբերի 2–ը.—Յերկրորդ կայսրության հաստատվելը:

1. Ի՞նչ դեր խաղացին բուրժուազիան և պրոլետարիատը փետրվարյան օրերին:

2. Ի՞նչ քաղաքականություն էր տանում ժամանակավոր կառավարությունը պրոլետարիատի հանդեպ:

3. Ինչո՞ւ 1848 թ. մայիսի 4-ից հետո բուրժուազիան կարողացավ բացորոշ պայքարել պրոլետարիատի դեմ:

4. Ինչո՞ւ պրոլետարիատը հունիսյան օրերին պարտվեց:

5. Լենինը ինչն է՞ր «Լուիբլանովականություն» անվանում:

6. Դեպի պրոլետարիատն ինչպե՞ս էր վերաբերվում ֆրանսիական գյուղացիությունը, և ինչո՞վ էր բացատրվում այդ վերաբերմունքը:

7. Ինչպիսի՞ դասակարգային հակասություններ կային Գերմանիայում հեղափոխությունից առաջ:

8. Ինչո՞ւ գերմանական պրոլետարիատի մեծ մասը 1848 թ. բուրժուական լոզունգների համար էր պայքարում:

9. Կոմունիստների Միությունն ի՞նչ նշանակություն ունեցավ հեղափոխության համար:

10. Ի՞նչ տարբերություն կար, մի կողմից՝ 1848 թ. Ֆրանսիայի, մյուս կողմից՝ Գերմանիայի և Իտալիայի հեղափոխությունների միջև:

11. Ինչո՞ւ Մարքսը 1848 թ. գերմանական հեղափոխությունը «անավարտ բուրժուական հեղափոխություն» է անվանում:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-ԽՆԴԻՐՆԵՐ

1. *Կարդացեք՝* Фридлянд и Слуцкий, Хрестоматия-*յում* (VI *գլուխ*) *ժամանակավոր կառավարության թռուցիկը և* (№ 9—В) *և մայիսի 15-ի ապստամբության առաջնորդների կազմած դոկումենտները* (№ 21)*: Վորոշեցեք՝ բուրժուազիայի և պրոլետարիատի դասակարգային հակասությունների արտացոլող այդ դոկումենտների հիմնական տարբերությունը:*

2. *Նույն քրեստոմատիայում զետեղված ժամանակավոր կառավարության թռուցիկը համեմատեցեք Փարիզի պրոլետարիատի՝ Սահմանադիր ժողովի անհապաղ հրավիրելու դեմ ուղղված թռուցիկի հետ* (№ 19)*: Պարզեցեք՝ Սահմանադիր ժողովի ընտրությունների և Ֆրանսիայի ընդհանուր դրության մասին այդ թռուցիկների վերաբերմունքը:*

3. *Գծեցեք՝ հունիսյան հեղաշրջումից մինչև* 1851 *թ. դեկտեմբերի* 2-*ը Ֆրանսիայի բանվորական շարժման կոր գիծը, դրա համար օգտագործեցեք այս և նախորդ գլուխների մատերիալները:*

4. *Նույն Քրեստոմատիայում կարդացեք Մարքսի տված բնութագիրը գերմանական բուրժուազիայի* (*գլուխ* VI—Б)*. Հետևյալ հատվածներում՝* «Буржуазия и пролетариат» (№ 2)*, «Буржуазия и революция 18 марта» (№ 11)*: *Օգտվելով այդ բնութագրությունից, պարզեցեք բուրժուազիայի հեղափոխությունից արագ հեռանալու հիմնական պատճառները:*

5. *Նույն Քրեստոմատիայում կարդացեք Բեռլինի բանվորների պա-*

---

*) *Ռուսերեն չգիտցողները կարող են փոխարինել Կ. Ղազարյանի քրեստոմատիայի I մասի VII Գլխի № 2 և 9 դոկումենտներով:*

հանջները (*գլուխ* VI—Б, № 9 *դոկումենտը*)*: Պարզեցեք՝ այդ պահանջներն ի՞նչ խնդիրներում էին իրար հակասում, դրանցից վորոնք էին ռեակցիոն և արհեստավորական պրոլետարիատի հետամնացությունն էին արտացոլում:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴՈԿՈՒՄԵՆՏՆԵՐ

Ц. Фридлянд и А. Слуцкий, *հիշատակված Քրեստոմատիայի* VI *գլխի մատերիալներն ու դոկումենտները:*

Կ. Ղազարյան—հիշատակված Քրեստոմատիայի VI *և* VII *գլուխները:*

Կ. Մարքս և Ֆր. Էնգելս.—Կոմունիստական Մանիֆեստ:

К. Маркс. Классовая борьба во Франции (1848—1850).

» Восемнадцатое брюмера Луи Бонапарта.

К. Маркс и Фр. Энгельс, Революция и контр-револ. в Германии.

Կ. Մարքս և Ֆր. Էնգելս—Հեղափոխ. և հակահեղափոխ. Գերմանիայում:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Լենին—Պետություն և հեղափոխություն, գլ. II.

» *«Դասակարգ. ինչ աղբյուրներից են գալիս» ու «կգան» Կավենյակները (Կ. Ղազարյանի Քրեստոմատիայում, եջ* 197).

Լենին—Լուիբլանովշչինա (նույն տեղը եջ 195).

» Русская революция и задачи пролетариата (т. XX).

» *Մարքսի և մարքսիզմի մասին.*

Ц. Фридлянд, История западн. Европы, ч. I, изд. 1930 г. 11, 12, 13 *և* 14 *դասախոսությունները:*

Л. Эритье, История французской революции 1848 г. и второй республики, вып. I и II: *Գրքում ընդգրկված է Ֆրանսիայի պատմությունը սկսած ռեստավրացիայից մինչև* II *կայսրության անկումը: Առանձնապես կենդանի շարադրված է բուրժուազիայի ու պրոլետարիատի պայքարը սկսած փետրվարյան հեղափոխությունից մինչև հունիսյան օրերը: Գիրքը պատկերազարդ է:*

Ш. Шмидт, Июнские дни 1848 г.

Г. Горев, Огюст Бланки, его жизнь, революционная деятельность и роль в истории социализма *հետաքրքրական շարադրության մեջ հեղինակը ծանոթացնում է այդ անկուն հեղափոխականի կյանքի, գործունեության և ուսմունքի հետ: Այս գլխի հետ անմիջական առնչություն ունեն գրքի առաջին յերեք գլուխները (եջ* 5—52):

Меринг, История германской соц.-демократии т. II, стр. 216—275

Блос, Германская революция.

Շնորհիվ կենդանի, հաճախ դրամատիկ շարահյուսության հեշտ է ընթերցվում: Գրքի բացը՝ հեղափոխության տնտեսական հիմնավորման չլինելն է, այս հանգամանքը վերացվում է շնորհիվ Ի. Ստեպանովի ներածության՝ «Экономическое положение Германии в первую половину XIX в.».

Ленин—Фридрих Энгельс. (Соч. изд. 2-ое и 3-е, т. I).

Համառոտ կենսագրությունն

Сборник «К 75-летию революции 1848 г.» ст. ст. Луначарского. Револ. 1848 г. в Италии; Покровский, Ламартин, Кавеньяк и Никалай I.

Зайдель Коммунисты в револ. 1848 г. (журн. «Историк марксист» т. 8).

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վոյնիչ—Բոռ.

Հաուպտման—Ջուլհակներ.

Эркман-Шатриан—Гаспар Фикс (рев. 1848 г.), В. Гюго, История одного преступления (переворот Л. Бонапарта).

Шпилгаген, Между молотом и наковльеней (рабочее движение в Германии конце 30-х г. г.) его же, От мрака к свету (1848 г. в Германии) Швейцер, Эмма (1848 г. в Германии); Руффини, Записки Лоренцо Бенони (рев. движеч. в Италии в 30-х г. г.). Стандаль. Пармаский монастирь, 2 тома (реакция в Италии в первой половине XIX в.).

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՖԻՈԴԱԼԱ-ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Այս գլուխը ռուսական պատմական պրոցեսսի կարևոր մոմենտին է վերաբերում, հատկապես XIX *դ. առաջին կիսին, յերբ Ռուսաստանի ֆեոդալա-ճորտատիրական կարգերը քայքայվում են, ճորտատիրական կարգերի շրջանակում զարգացող արդյունաբերական կապիտալիզմի ազդեցության տակ: Նախորդ դարերում ստեղծված առևտրական կապիտալն սկսում է անցնել արդյունաբերության, վորն արդեն և վաճառքի շուկա յեր գտնում իր պրոդուկցիայի (մանուֆակտուրայի) համար և բանվորական ուժի շուկա, չնայած այն բանին, վոր յերկրում իրականորեն ազատ պրոլետարիատ գոյություն չուներ: Արդյունաբերական կապիտալի զարգացման անմիջական հետևանք հանդիսացավ նոր բուրժուական իդեոլոգիայի ծնունդը, այդ իդեոլոգիան տարբեր գունավորումներ ստացավ, նայած սոցիալական կազմին այն խավերի, վորոնք այդ իդեոլոգիան արտահայտում եյին իրենց ծրագրերում և տակտիկայում: Կապիտալիստական հարաբերությունների զարգացումն ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ անխուսափելիորեն տանում եր դեպի ճորտատիրական տնտեսության քայքայումը և դեպի ճորտատիրական իրավունքի լիկվիդացիան:*

Այս գլխի ուսումնասիրության ժամանակ հիմնական հարցերը հետևյալներն են՝

1. *Ինչո՞ւ կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում* XIX *դ. առաջին կիսին անխուսափելիորեն տանում եր դեպի ճորտատիրական իրավունքի վոչնչացումը:*

2. *Ցարական ինքնակալության ներքին և արտաքին քաղաքականությունը* (XIX *դ. առաջին կիսի) ի՞նչպես եր հարմարվում տնտեսական զարգացման փոփոխվող պահանջներին:*

3. *Ինչի՞ց առաջ յեկավ դեկաբրիստական շարժումը և ո՞ւմ շահերն եր նա արտահայտում:*

4. *Սոցիալական վո՞ր խավի ոգտին անցկացվեց* 1861 *թ. ռեֆորմը:*

5. *Ինչպիսի՞ սոցիալ-տնտեսական հետևանքներ ունեցավ գյուղացիական ռեֆորմը:*

1.

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐՏԱՔԻՆ ՅԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

XIX *դ. առաջին կիսում Ռուսաստանը առևտրա-կապիտալիստական և ճորտատիրական եր մնում, ինչպես վոր եր* XVIII *դ. վերջերին, բայց նրա մեջ սկսեցին վորոշ փոփոխություններ նշմարվել:*

1801—1860 *թ.թ. արտաքին առևտրի շրջանառությունը* 3½ *անգամ մեծացավ: Դեպի արևմուտք արտահանումը նույնն եր, ինչ վոր* XVIII *դարում, բայց դեպի Արևելք՝ Ասիա սկսեցին մեծ քանակությամբ*

Դաս. գրք. պատմություն...

ռուսական ֆաբրիկատներ արտահանվել: Այդ ապրանքները մեծ մասամբ դեպի Կյախտա էին ուղարկվում, որոնք այնտեղ փոխանակվում էին չինական թեյի հետ: Յեթե XVIII դ. Ռուսաստանի համար յերկրագործությունը գլխավոր աշխատանք էին համարում, որին անհրաժեշտ էր զարկ տալ, այնինչ XIX դ. գտնում էին, որ «Ռուսաստանն իր արտահանվող առևտրով յերկրագործական է Արևմուտքի հանդեպ և մանուֆակտուրային—Արևելքի հանդեպ»:

1815—25 թվերի տասնամյակի ընթացքում չթի կտորների արտահանումը բարձրացավ 10 անգամ, բրդինը՝ 6 անգամ և մետաղե արտադրանքներինը՝ 2 անգամ: Արտասահմանից ներմուծման բնույթը արտահայտվում էր մեքենաներ և գործիքներ ստանալու աճումով, որը նույն տասնամյակում ավելացավ 13 անգամ: Անտարակույս այդ նշանակալից յերևույթ էր. ռուսական արդյունաբերությունը արդեն սկըսում էր յերկրի տնտեսության մեջ որոշ դեր խաղալ—յերկիրը կապիտալիստորեն զարգացման ուղին էր բռնում:

Յերկրի ինդուստրացման հետ միասին առևտուրն էլ էր աշխուժանում. մեծանում էր գյուղատնտեսական հումքի պահանջը, արդյունաբերական շրջանների սպառողական շուկան ծավալուն էր դառնում: Տոնավաճառները ավելի ու ավելի մեծ շրջանառություն էին կատարում. Խարկովի տոնավաճառները 20 միլիոն արծաթ ռուբլու շրջանառություն ունեին:

Ուկրայինայի քաղաքամերձ վայրերում մինչև 270 մանր տոնավաճառներ կային, որոնք ազդեցություն էին ունենում գյուղացիական բնակչության բոլոր խավերի վրա. սրանք կապվում էին շուկայի հետ «վելիկոռուս գործիչների ագենտների մի ամբողջ բանակի» միջոցով (մանրավաճառներ, չարչիներ, շրջիկներ), որոնք ապրանքները գյուղից-գյուղ, ավանից-ավան էին տանում: Նիժնի Նովգորոդի տոնավաճառը տարեկան 50 միլիոն արծաթ ռուբլու շրջանառություն էր կատարում: Սիբիրի և Մերձվոլգյան շրջանների համար մեծ նշանակություն ուներ Իրբիտի տոնավաճառը: Վայրի կենդանիների թանգարժեք մորթիները այնտեղից արտասահման էին ուղարկվում և վերամշակվելով վաճառվում էին յեվրոպական և ռուսական գնորդներին, հետևաբար նա նույնիսկ համաշխարհային նշանակություն ուներ:

Սակայն ճանապարհներն առաջվա պես վատ էին և արգելում էին փոխանակման զարգացմանը, բայց կառավարությունը սկսել էր այդ ուղղությամբ որոշ ձեռնարկումներ անել, կառուցվեցին Դնեպրոպուղի և Տիխվինի ջրանցքները, Վոլգայի և Կամայի վրա մարդատար ու ապրանքատար յերթևեկություն բացվեց: Ակցիոներական ընկերություններ կազմվեցին, որոնք յերկաթուղիներ էին անցկացնում, չնայած այդ յերկաթուղիները դեռ տնտեսական նպատակներին չէին համապատասխանում, նրանք միացնում էին՝ Մոսկվան և Պետերբուրգը (1858 թ.), Վարշավան ու Վիեննան (1848 թ.), Պետերբուրգն ու Ցարսկոյե սելոն*) (1838 թ.): Տոնավաճառներում ռուսական արտադրության չթի կտորներ էին վաճառում և Ուկրայինայից անցնում էր այդ առևտուրը դեպի հարավ՝ Սև և Ազովի ծովերի ափերը: Այդ ապրանքները հաճախ իրենք ֆաբրիկանտներն էին բերում, որոնք այդ ճանապարհների ամենամեծ կենտրոններում ամրանալով առևտրի հետ կապված արդյունաբերական ձեռնարկություններ էին ստեղծում: Առևտրական կապիտալի արդյունաբերականի փոխանցվելու պրոցես էր տեղի ունենում:

Մինչև XIX դ. սկիզբը Ռուսաստանին, ինչպես և ամբողջ Եվրոպային, Անգլիան էր չթի կտորեղեն մատակարարում: Կոնտինենտալ բլոկադայի ժամանակ անգլիական կտորեղենի ներմուծումը դադարեց, այնինչ բամբակն Ամերիկայից ստացվում էր, բամբակի ներմուծումը դեպի Ռուսաստան աճում էր՝ 1809 թ.՝ 204 տոննի դիմաց, 1811 թ. հասավ՝ 3787 տոննի:

ԽՈՇՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

XIX դ. առաջին կեսին Ռուսաստանում արագ զարգանում էր չթի արտադրությունը: 50 տարվա ընթացքում բամբակի վերամշակումն աճեց 50 անգամ: Բամբակե կտորեղենները հագուստեղենի համար ամենաարժան մատերիալը դարձան, շնորհիվ մանածագործության և հյուսվածագործության ասպարեզում մեքենաների գործադրության: 1808 թ. Մոսկվայում կառուցվեց առաջին բամբակագործական ֆաբրիկան, իսկ 1812 թ. նրանց թիվը հասավ 11-ի: 40-ական թվականներից սկսեցին Անգլիայից մանվածքային մեքենաներ բերել: 50-ական թվականին Ռուսաստանը իլիկների քանակով բամբակագործության մեջ հինգերորդ տեղն էր գրավում: Առաջին չթադաջական մեքենաները հանդես յեկան Իվանովոյում 1835 թ. և արագությամբ դուրս մղեցին ձեռքով դաջողներին. մի մեքենան փոխարինում էր 30-ից 50 մարդու: Ճիշտ է, շնորհիվ վատ կահավորման, յերբեմն ֆաբրիկան կործանվում էր և իր տեղը տնայնագործին զիջում: Բայց այդ յերևույթը բոլորովին էլ, խոշորի հանդեպ՝ տնայնագործական արտադրության գերազանցող նշանակություն ունենալը չի ապացուցում: Բամբակի կտորեղեններ արտադրող ֆաբրիկաներում ազատ վարձու աշխատանքն էր գերակշռում: 1804 թ. 6.566 բանվորներից 5.436 ազատ վարձվածներ էին: Կառավարությունը շահագրգռված չէր բամբակի կտորեղենների արտադրության զարգացումով, ոչ մի վարկ և արտոնություններ նրանց չէր տրվում, այնուամենայնիվ այդ արտադրությունը զարգանում էր շուկայի պահանջների շնորհիվ: Բամբակի կտորեղենների արտադրության արագ աճումը ծանր ճգնաժամ առաջացրեց կանեփի և վուշի մշակման ասպարեզում:

Չնայած կառավարության ամեն մի օժանդակության, մահուդի արդյունաբերությունը դարի սկզբին շատ դանդաղ էր առաջ գնում: Յեղած մահուդը կառավարությունը չէր բավականացնում, զորքերի համար մահուդն ստիպված էին արտասահմանում, մեծ մասամբ Անգլիայում գնել. Ռուսաստանի ներքում մահուդի ազատ վաճառքը, նույնիսկ կառավարության հետ չկապված ֆաբրիկանտների համար, արգելված էր: Մահուդի ֆաբրիկաների մեծ մասն ազնվականներին էր պատկանում, որոնք սպասարկվում էին ճորտական պարտադիր աշխատանքով. 28.689 բանվորներից ազատ վարձու բանվորներ էին միայն 2.788-ը: Հենց այդ հարկադրական աշխատանքը և շուկայից կտրված

*) Այժմ Դետսկոյե սելո:
Ցարսկոյե սելո=Թագավորական գյուղ
Դետսկոյե սելո=Մանկական գյուղ

լինելն էր, վոր արգելք էին հանդիսանում մահուդի արդյունաբերության զարգացման: Միայն կառավարության հանդեպ պարտավորությունից ազատվելուց հետո (1816 թ.) առաջացան նոր ֆաբրիկաներ, վորոնք բացառապես ազատ վաճառքի համար էին աշխատում, և այդ ժամանակ մահուդի վորակը նշանակալի չափով լավացավ:

Ոտարերկրացի գաղութականների կողմից հարավում կազմակերպված մահուդի ֆաբրիկաներն սասանում էին ազնվականների մենաշնորհն այդ ասպարեզում: Սկսվեց առևտրական կապիտալի բուռն դնելը մահուդի արդյունաբերության մեջ: Ազնվականները ճորտատիրական տնտեսության բոլոր միջոցներն ու հնարավորություններն ունեին, բայց կապիտալ չունեին և միայն խոշոր ազնվականներից շատ քչերն էին կարող իրենց արդյունաբերական ձեռնարկություններին լայն ծավալ տալ: Միջին տիպի կալվածատերերը պետք է առևտրականների օժանդակությանը դիմեին, միացնեին իրենց ճորտերի հարկադրական աշխատանքը և առևտրականների կապիտալը, առևտրականների հետ ընկերանային կամ իրենց կալվածատիրական ձեռնարկությունները և գյուղացիներին նրանց կապալով տային: Կապալի ճանապարհով առևտրական կապիտալի մուտք գործելը ճորտատիրական տնտ. մեջ, ներսից պայթեցնում էր այն և անցողիկ շրջանի նոր տիպի ֆաբրիկա յեր ստեղծում—«նախակապիտալիստական» ֆաբրիկա:

Թջահալության գործում մեքենաների համար ամենակարևոր մատերիալներ հանդիսացող՝ յերկաթարտադրության ասպարեզում ծայր լճացում տեղի ուներ: Ռուսաստանը 30-ական թվականներին հալում էր ամբողջ աշխարհի թջի 12%-ը, իսկ 1859 թ. նրա բաժինը միայն 5% -ն ընկնում: Յերկաթի արտահանումը Ռուսաստանից—իջնում էր: Այդ լճացումը բացատրվում է լեռնարդյունաբերության մեջ գոյություն ունեցող ստիպողական հարկադրական աշխատանքով: Քանի դեռ բանվորը փայտի ծայրով էր աշխատում, աշխատանքի արտադրողականությունը չէր կարող բարձրանալ: Վոչ մի արտոնություն (կառավարությունը յերկաթի կարիք ունենալով գործարաններին մեծ արտոնություններ էր տալիս) չէր կարող փոխարինել արդյունաբերության հիմնական պայման հանդիսացող՝ ազատ աշխատանքը:

ՊՐՈՏԵԿՑԻՈՆԻԶՄԸ ՎՈՐՊԵՍ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄ

Ռուսական արդյունաբերությունը պաշտպանողական մաքսային քաղաքականության կարիք էր զգում: Առևտրական կապիտալի համար միևնույնն էր թե ինչ կվաճառեր՝ հայրենիքի թե ոտարերկրյա արտադրություններ,—միայն թե ավելի շահույթ ստանար, ուստի աշխատում էր իջեցնել տալ մաքսային տարիֆները, բողոքում էր հովանավորող տարիֆների դեմ, վորոնք մեծ քանակությամբ ապրանքներ ներմուծելուն արգելք էին հանդիսանում: Հովանավորող տարիֆներից դժգոհ եյին նաև ճորտատեր-կալվածատերերն իբրև սպառողներ: Նրանք գովաբանում էին ազատ առևտրի ոգուտները, հաշվում էին, թե անգլիական մահուդի ներմուծելն արգելելուց վորքան վնաս էին կրում պետությունն ու մասնավոր անձինք: Արդյունաբերողներն, ընդհակառակը, ցավագին էին վերաբերվում դեպի ֆրիտրեդերական տարիֆները և համոզում էին, վոր նապոլեոնական քայքայումից հետո ազատ տարիֆը յերկիրը «յերկրորդ անգամ կքայքայի, պետությունից կծծի վերջին փողն ու

արծաթը, կթողնի միայն վոչ մի նշանակություն չունեցող թուղթն ու փալասը»: Կառավարությունը խուլ չմնաց դեպի արդյունաբերողների խնդիրքները. հովանավորող սիստեմը գերակշռում էր ամբողջ XIX դ. ընթացքում: Այսպիսով՝ 1) առևտրա-կապիտալիստական տնտեսության սիստեմի մեջ ներս սողոսկեցին արտադրական ձեռնարկություններ, 2) ճորտատիրական աշխատանքը զուգակցվեց վարձու ազատ աշխատանքի հետ հենց ճորտատիրական տնտեսության ներսը, 3) ստեղծվեց նոր՝ անցողիկ շրջանի ֆաբրիկայի տիպ—«նախակապիտալիստական» ֆաբրիկա, 4) Ռուսաստանը ներգրավվեց արդյունաբերականորեն զարգացող համաշխարհային հարաբերությունների մեջ, Անգլիայի կապիտալիստական զարգացման շրջանակի մեջ անցավ՝ ոգտվելով նրա տեխնիկական նվաճումներից և 5) իր ներսում արդյունաբերության նոր տեսակ ստեղծեց՝ բամբակե կտորեղենի արդյունաբերությունը: Այսպիսով Ռուսաստանը դեպի կապիտալիստորեն զարգացման ուղին էր անցնում: Ճորտատիրական կարգերն սկսում էին քայքայվել:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՔԱՅՔԱՅՄԱՆ ՊՐՈՑԵՍԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ճորտատիրական տնտեսության ձևերի քայքայման պրոցեսը՝ զարգացող արդյունաբերության հարվածների տակ էր ընթանում, բայց նույն քայքայման պրոցեսը նշմարվում էր նաև գյուղատնտեսության ասպարեզում:

Հացի արտահանումը մեծանում էր. 1821—1825 թ.թ. հացի արտահանումը ամբողջ արտահանության արժեքի 8,4% էր կազմում, իսկ 1848—1850 թ.թ. 31,3%: Այս հանգամանքը կալվածատերերին դրդում էր կալվածքները հացի ֆաբրիկաներ դարձնել, տնտեսության նոր՝ կապիտալիստական հարաբերությունների պահանջներին համապատասխանող նոր սիստեմ մտցնել: Կալվածատերերն իրենց վարուցանքի տարածությունը մեծացնում էին յերկու և յերեք անգամ, գյուղացիներին հողից կտրում և տնեցի (дворовые) կամ ամսական պարենով աշխատող էին դարձնում (նրանց պարեն և բնակարան էր տրվում կալվածատիրոջ հողերն իրենց գործիքներով մշակելու համար), մեքենաներ էին գործադրում, գործադրում էին նաև պարարտացման նոր յեղանակներ, ուշք էին դարձնում իրենց տնտեսության մեջ արդյունաբերական ձեռնարկություններ մտցնելու, վորոնցով վերամշակում էին գյուղատնտեսությունից ստացված հումքը: Սակայն այդ փորձերը գրեթե հետևանք չէին տալիս, քանի վոր վերջնական բեկում չէր առաջացել տնտեսական հին հարաբերությունների մեջ: Նրանք զարնվում էին՝ ճորտատիրական պայմաններին, կապիտալի բացակայության, գյուղացիներին ամբողջ տարին և սովի ժամանակ կերակրելու անհրաժեշտության, կալսելու, ցանելու, քամելու մեքենաների ներմուծելու անհնար լինելուն: Առաջադեմ կալվածատերերից շատերը պարզ գիտակցում էին հարկադրական աշխատանքի անշահավետ լինելը: Նրանք հաշվում էին, վոր ճորտական մի միավորը (ТЯГЛО) իրենց ավելի քիչ արդյունք է տալիս, քան վարձու բանվորներից կազմված ազատ միավորը. բնակեցված հողերը յերկու անգամ ավելի եժան էին գնահատվում, քան բնակչություն չունեցողները: Բայց այնուամենայնիվ ճորտատիրական իրավունքը դեռ պաշտպանվում էր:

Յեթե վաղուց արդեն կալվածատերերի գիտակցության մեջ եր անցել այն հիմնական միտքը, վոր կոռվորական աշխատանքն անշահավետ ե, ապա և ինչն ե՞ր արդյոք հանդիսանում հեղաշրջմանը: Այս հարցի պատասխանը կարելի յե գտնել հացի գների եվոլյուցիայի մեջ: 1820 թ. մինչև 1840 թ. հացի գներն Արևմտյան Յեվրոպայում շատ դանդաղ եյին աճում: 1840 թվից սկսած՝ հացի գներն ավելի ու ավելի եյին բարձրանում, հացի արտահանումն էլ ավելի արագ սկսեց աճել:

Հացի գների աճումը յերևում ե հետևյալ աղյուսակից՝

Հացի արտահանումը Ռուսաստանից (տոններով)			Հացի գինը Բեռլինի շուկայում (մարկով—ցենտների համար)		
Թվեր	Ցորեն	Վարսակ (Рожь)	Տասնամյակ	Ցորեն	Վարսակ (Рожь)
1820	275	64	1821–30	6.07	4 46
1830	417	142	1831–40	6,91	5,16
1840	296	23	1841–50	8,38	6,30
1850	426	91	1851–60	10,57	8,48
1860	686	331	1861–70	10,21	7,93

Յերբ արտասահմանում հացի գինը ցածր եր կալվածատիրոջ համար իմաստ չկար արտադրությունը վորոշ սահմանից ավելի լայնացնել, իսկ ճգնաժամի վերջանալուց հետո ձեռնտու յեր արտադրությունն ուժեղացնել մինչև հնարավոր վերջին սահմանը, դնել այն ռացիոնալ, վորի համար փող ու միջոցներ եյին պահանջվում: «Կապիտալներ, կապիտալներ, կապիտալներ,—ահա այն մոգական ուժը, վոր ամենավայրի անապատն անգամ դրախտ ե դարձնում», ասում եյին կալվածատերերը:

Բայց հենց փողն եր, վոր կալվածատերերը չունեյին:

2.

ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆԳԼԻԱՅԻ ՀԵՏ ՄՈՏԵՆԱԼԸ

Ռուս ինքնակալության արտաքին քաղաքականության ուղղությունը վորոշվում եր Ռուսաստանի տնտեսական զարգացումով, նրա՝ Անգլիայի հետ ունեցած տնտեսական սերտ կապով և Արևելքում շուկաներ ունենալու անհրաժեշտությամբ: Անգլիական դաշնից եր կախված ռուսական կապիտալիզմի ապագան: Կալվածատիրական ազնվականությունը հողերից յեկամուտ ստանալու խնդրում իրեն ապահովված եր զգում նրանով, վոր արտասահմանում, գլխավորապես Անգլիայում վաճառում եր՝ հաց, նավաշինարարության համար անտառանյութ, ճարպ, վուշ, կանեփ: Պավել I-ը (1796—1801) կապերը խզելով Անգլիայի հետ, իրեն դեմ դժգոհություններ առաջացրեց, վորոնք ազնվական դավադրության բնույթ ընդունեցին: Դավադիրները 1801 թ. մարտի 11-ին Պավելին իր պալատում խեղդեցին: Պավելի մահվան անմիջապես հաջորդեց Անգլո-ռուսական հաշտությունը:

Ռուսաստանը նորից Ֆրանսիայի դեմ ուղղված կոալիցիայի (միության) մեջ մտավ: Սկզբում Ավստրիայի, հետո Պրուսիայի հետ: Այդ կոալիցիաները ջախջախվեցին Նապոլեոնի կողմից 1805—1810 թ.թ.,

վորը գրավեց Վիեննան, Բեռլինը, իսկ Ռուսաստանին Տիլզիտում (Պրուսիա) ստիպեց դաշն կնքել (1807 թ.) Ալեքսանդր I-ն ստիպված յեղավ Անգլիայի հետ ունեցած դաշնակցությունից հրաժարվել և դաշն կնքել Ֆրանսիայի հետ. ընդունեց Նապոլեոնի իրավունքները Իտալական և Գերմանական յերկրների վրա, համաձայնեց Պրուսիայի կեսի վերցնելուն և նոր կազմված՝ Վարշավայի դքսության միացնելուն, վոր Նապոլեոնի ավանպոստն եր հանդիսանում Արևելքում: Տիլզիտի հաշտության պայմանները Ռուսաստանի համար միայն արտաքուստ եյին պատվավոր: Պրուսիայից Ռուսաստանին անցավ Բելոստոկի մարզը, պայմանական Ռուսաստանին խոստացվեց Մոլդավիան և Վալախիան, վորոնք արդեն գրավված եյին Թյուրքիայից՝ 1806 թվին սկսված պատերազմի ժամանակ: Վերջում 1812 թվին Ռուսաստանին միացվեց լոկ Բեսսարաբիան: Մի քիչ առաջ Ռուսաստանին եր միացվել Ֆինլանդիան՝ Շվեդական յերկու տարվա պատերազմից հետո (1808—1809 թ

Ռուսաստանը, ըստ Տիլզիտի հաշտության, պետք ե ընդուներ կոնտինենտալ սիստեմն, այսինքն հրաժարվեր Անգլիայի հետ ունեցած առևտրական հարաբերություններից և թույլ չտար, վոր անգլիական առևտրական նավերը Ռուսաստանի նավահանգիստները մտնեն:

Տիլզիտի հաշտությունը շատ շուտով աննպաստ անդրադարձավ ռուսական առևտրական կապիտալի վրա: Հումքի արտահանումը կրճատվեց, յերկաթի գինը 60% իջավ, կանեփինը՝ 75%-ով, առևտրական հաշվեկշռի մեջ փոփոխություն կատարվեց ի վնաս Ռուսաստանի, վորի հետևանքով փողը դուրս հոսեց, ասսիգնացիա ռուբլին (թուղթ փող) ընկավ (1808 թ. մինչև 48 կ., 1809 թ.—43,5 կ., 1810 թ.—25,4 կ.), մի քանի առևտրական ֆիրմաներ, կալվածատիրական տնտեսություններ կործանվեցին, ապրանքների գները բարձրացան (1808 թ. 1 կգ. շաքարն արժեր ասսինգնացիաներով 6 ռուբլի): Այս բոլորը դժգոհություն առաջ բերեց ազնվականների և առևտրականների շրջաններում: Ալեքսանդր I-ին իր հոր վիճակն եր սպառնում: Ազնվականներին և առևտրականներին այնուամենայնիվ հաջողվեց 1812 թ. իրենց նպատակին հասնել—հարաբերությունները խզել Ֆրանսիայի հետ և պատերազմ հայտարարել նրան (1812—1814 թ.թ.):

1812—1814 Թ. Թ. ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

1812 թ. ամառը Նապոլեոնն իր 600.000-նոց «մեծ բանակով» արշավեց Ռուսաստանի վրա: Չնայած նրա զորքը լավ զինված եր, բայց վորակով վատն եր, հեղափոխական պատերազմների տրադիցիաներով ապրած, հին զինվորներից շատ քչերն եյին մնացել բանակի շարքերում, իսկ գերմանացիներից, հոլանդացիներից, սպանացիներից, պորտուգալացիներից և այլ ժողովուրդներից կազմված նոր գնդերն, իբրև «դաշնակից զորքեր» շատ քիչ եյին հուսալի, նրանք տարերայնորեն բողոքում եյին ստիպողականության դեմ, դիսցիպլինան ընկած եր և դասալքությունը մեծ: Ռուսական զորքերն ընդհակառակը, շվեդական և թյուրքական պատերազմների ընթացքում ռազմական փորձ եյին ձեռք բերել և վորակապես ավելի բարձր եյին, քան նապոլեոնական նախորդ պատերազմների ժամանակ, չնայած քանակով ավելի թույլ եյին:

Նապոլեոնն անցնելով Նեմանը և ճանապարհին ռուսների կողմից դիմադրության չհանդիպելով, արագությամբ հասավ մինչև Վիլնո,

Ամբողջ Փրոնտում ցրված ռուսական բանակը նահանջում եր դեպի յերկրի ներսը: Սմոլենսկում և Բորոդինոյի տակ Փրանսիական առաջխաղացումը կանգնեցնելու յերկու անհաջող փորձերից հետո՝ ռուսները թողին Մոսկվան, ուր Նապոլեոնը հույս ուներ ձմեռն անցկացնել: Վորպեսզի նրա բանակը զրկվի այդ հնարավորությունից, Մոսկվայի գեներալ — նահանգապետ Ռոստոպչինի հրամանով, վոստիկանությունը հրդեհեց քաղաքը, բնակչության մեծ մասը քաղաքից հեռացել եր: Հրդեհված քաղաքում Նապոլեոնի զորքերի քայքայումն ավելի արագացավ: Նրանք զբաղվում եյին քաղաքը և շրջակայքը թալանելով:

Հաշտության բանակցություններ սկսելու մասին Նապոլեոնի փորձերն անհաջող անցան. նա վորոշեց թողնել Մոսկվան և հետ նահանջել, նպատակ ունենալով գարնանը վերսկսել պատերազմական գործողությունները: Զորքի մնացորդով՝ 42.000 մարդ, վորի վրա չարունակ պարտիզանական հարձակումներ եյին լինում ռուսների կողմից, Նապոլեոնին հաջողվեց Ռուսաստանից հեռանալ: Ռազմական գործողություններն Արևմտյան Յեվրոպա տեղափոխվեցին: Ֆրանսիայի դեմ նոր կոալիցիա կազմակերպվեց՝ Ռուսաստանից, Պրուսիայից, Ավստրիայից, Շվեդիայից և Անգլիայից: Լայպցիգի տակ «Ժողովուրդների պատերազմում» (1813 թ.) Նապոլեոնի զորքերը ջարդվեցին և Հռենոսի մյուս ափը նահանջեցին: Դաշնակիցները, հետապնդելով նրան, անցան Ֆրանսիայի սահմանները և 1814 թ. գրավեցին Փարիզն ու Նապոլեոնին ստիպեցին գահից հրաժարվել: 1815 թ. սեպտեմբերին կոալիցիայի առաջնորդներն ստորագրեցին «Սրբազան դաշնակցության» կազմակերպման ակտը:

ՆԻԿՈԼԱՅ I-Ի ԱՐՏԱՔԻՆ ՅԵՎ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ալեքսանդր I-ի հաջորդ Նիկոլայ I-ի քաղաքականությունը (1825—1855) նույնպես յեռանդով պաշտպանում եր բուրժուազիայի և ազնվականության շահերը, վորոնց ինքնակալությունն աշխատում եր մոտեցնել, տալով վաճառականներին մի շարք արտոնություններ: Փորձ կատարվեց վաճառականությունից ստեղծել «անվանի քաղաքացիներ», վորոնք իրավունքներով մոտենային ազնվականության: Վաճառականությունը պարգևատրվում եր չքանշաններով և աստիճաններով, կազմակերպվում եյին մանուֆակտուրայի ցուցահանդեսներ, կազմակերպվում եյին վաճառականության համար հարկավոր դպրոցական հիմնարկներ (Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը, ռեալական, գիմնազիոններ), կանոնավորվում եր փողի շրջանառությունը՝ հանելով շրջանառությունից ասսիգնացիաները և թղթադրամի գինը հավասարեցնելով արծաթին (350 ռ. ասսիգնացիան=100 ռ. արծաթի): Ֆաբրիկանտների և գործարանատերերի ներկայացուցիչները մանուֆակտուրայի խորհրդի մեջ եյին մտնում, ուր կարող եյին իրենց կարիքներն արտահայտել: Նիկոլայ I-ը անձամբ հաճախում եր տոնավաճառները, ցուցահանդեսները, Ձմեռային պալատում ճաշկերույթներին հրավիրվում եյին Պետերբուրգի և Մոսկվայի ֆաբրիկանտներից, նրանցից միքանիսի հետ Նիկոլայը պատրաստ եր նույնիսկ «քավոր-սանահայր»-ություն անել:

Բուրժուազիայի համար առանձնապես արժեքավոր և կառավարության «զինված ձեռքը», վորը ճանապարհներ եր հարթում ֆաբրիկային արտադրության համար. ռուսական արտադրությունը, ճորտատի-

րության ժամանակ, վատ եր տարածվում ներքին շուկայում: Պարսկական պատերազմից հետո (182?—1828) Ռուսաստանն, իբրև «բարենպաստ ազգ» անսահման տիրողն եր պարսկական շուկայի: Ռուսական առևտրի շրջանառությունը Պարսկաստանում տարեկան հասնում եր մինչև 4.000.000 ռ. արծաթ դրամով:

Ռուս-թուրքական պատերազմից հետո (1828—1829) հաշտության դաշնագրի համաձայն Ռուսաստանը ձեռք բերեց Ստորին Դանուբի ձախ ափը, Սև ծովի Արևելյան ափը, Մոլդավիայի, Վալախիայի, Սերբիայի և հունական յերկրների համար ավտոնոմիա ձեռք բերեց և իրավունք ստացավ սուլթանի կայսրության մեջ առևտուր անել առանց ներքին մաքսի: 1833 թ. դաշնագրով Նիկոլայ I-ը սուլթանին հարկադրեց Բոսֆորի և Դարդանելի մուտքը փակել մյուս պետությունների ռազմական նավերի համար: Սև ծովը ռազմական տեսակետից ռուսական լիճ դարձավ, իսկ հետո, յերբ մաքսային սահմանն ընդգրկեց Կովկասն ու Անդրկովկասը և թույլ չէր տալիս անգլիական և այլ յերկրների ապրանքներն այնտեղից անցնել, այն ժամանակ դարձավ նաև առևտրական լիճ: Այդ պատճառով ունեցած կորուստն Անգլիան գնահատում եր չուրջ 3½ միլիոն ֆ. ստերլինգ: Անգլիայի և Ռուսաստանի միջև պատերազմն անխուսափ եր դառնում, մանավանդ, վոր հացը, վորն Անգլիան ստանում եր Ռուսաստանից, Արևմտյան Յեվրոպայումն էլ արժան եր: 1841 թ. տեղի ունեցավ յեվրոպական կոնֆերանս, վորը Թյուրքիային դրեց յեվրոպական հինգ պետությունների պրոտեկտորատի տակ և Բոսֆորն ու Դարդանելը փակեց բոլոր ռազմական նավերի համար, այսինքն, փաստորեն ռուսների համար: Նույն թվերին ռուսները շարժվեցին դեպի Հնդկաստանի սահմանները՝ Ավղանստան, արշավեցին Խիվայի վրա, վորով և Միջին Ասիայի նվաճման սկիզբը դրին (Խիվան և Բուխարան Ռուսաստանին միացվեցին 1873 և 1886 թ.թ.): Նույնիսկ Չինաստանից, ոպիումի վաճառքում, ռուսները փորձում եյին դուրս վանել Անգլիացիներին: Պատերազմը հասունանում եր, և ռուսական կառավարությունը պատրաստություններ եր տեսնում. յեռանդով ավելացնում եր նավատորմիղը, վերակառուցում եր Կրոնշտադի բերդը, Սևաստոպոլում նորն եր կառուցում: Անգլիան դաշն կապեց Ֆրանսիայի և Ավստրիայի հետ (վորն առևտրով մրցում եր Ռուսաստանի հետ):

ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատերազմի համար միայն արտաքին պատրվակ եր հարկավոր: Առիթ ծառայեց Ռուսաստանի միջամտությունը Պաղեստինի հոգևորականների գործին: Մերժում ստանալով, Նիկոլայ I-ը զորքերը շարժեց դեպի Մոլդավիա և Վալախիա, վորոնք սուլթանի իշխանության տակ եյին գտնվում: Թյուրքիան բողոքեց: Պետությունները, վորոնք Թյուրքիայի վրա պրոտեկտորատ եյին սահմանել, թյուրքական գործերի առթիվ կոնֆերանս հրավիրեցին Վիեննայում, բայց վոչ մի յեզրակացության չեկան: 1853 թ. աշնանը Թյուրքիայի և Ռուսաստանի միջև պատերազմ ծագեց: Թյուրքիային ոգնելու համար՝ Բոսֆորում, իսկ հետո ել Սև ծովում հանդես յեկան Անգլիայի և Ֆրանսիայի նավերը: 1854 թվի պատերազմի գլխավոր թատերաբեմը թշնամիները Ղրիմը դարձրին: Այսպես սկսվեց Ղրիմի պատերազմը: 11-ամսյա պաշարումից հետո Սևաստոպոլն ընկավ, Սև ծովի նավատորմը խորտակվեց: Ռուսաստանն ստիպված եր հաշտության դիմել (այսպես կոչված «Փարիզի»

հաշտությունը 1856 թ.), ըստ որի Ռուսաստանը կորցրեց Սև ծովի վրա նավատորմիղ պահելու իրավունքը և զրկվեց Դանուբի վրայի յերկրների մի մասից: Թյուրքիայում լիակատար տիրություն անելու ռուսական կապիտալի հաշիվները խորտակվեցին: Պետք եր լայնացնել ներքին շուկան: Այդ արդեն սպառնում եր խորտակել ճորտատիրական պետության ամբողջ սիստեմը, և այդ սիստեմի կրող Նիկոլայ I-ը, ինչպես յենթադրում են, ինքնասպանությամբ վերջ դրեց իր կյանքին:

Ալեքսանդր II-ի կառավարությունը (1855—1881) պետք է ձեռնամուխ լիներ գյուղացիների ազատագրման. հուզումները Նիկոլայ I-ի թագավորության ժամանակամիջոցում յերբեք չդադարեցին: 1826—1854 թ.թ. 709 հուզումներ են տեղի ունեցել, ըստ որում նրանցից շատերն ստիպված են յեղել զինվորական ուժով ճնշել: Առանձնակի դեպքերում այդ հուզումները ահռելի բնույթ եյին ընդունում: Այսպես, օրինակ, Օրենբուրգի և Պերմի նահանգների պետ. գյուղացիները, լսելով, վոր իրենց տալիս են կալվածատերերին, ապստամբեցին. սրանց թիվը 40.000 եր հասնում: Նրանց խաղաղեցնելու համար հարկավոր յեղավ 10.000-անոց մի բանակ: Ռյազանի նահանգում Գոլիցինի կալվածքում հուզումները շարունակվում եյին ամբողջ յերկու տարի: Ղրիմի պատերազմի ժամանակ, զորակոչի հայտարարության կապակցությամբ, գյուղացիները մի շարք նահանգներում ապստամբեցին: 50-ական թվականների վերջերին վոչ վոք չեր կասկածում նոր Պուգաչովական շարժման հնարավորության մասին: Ռեֆորմն իր առաջ դրած խնդիրների թվում նախատեսում եր գյուղացիական շարժումների կասեցումը. գյուղացիների դժգոհությունները վտանգավոր եյին տիրող դասակարգերի համար: Անհրաժեշտ եր «հեղափոխությունը վերևից» առաջ բերել, չսպասել «ներքևից հեղափոխության» ծագելուն, մանավանդ վոր Ղրիմի պատերազմի անհաջողությունից հետո լարված դրություն եր տիրում: Դժգոհությունը կառավարության դեմ աճում եր հասարակության բոլոր խավերում, անհույս եր դառնում նաև բանակը:

Ֆեոդալական հողատիրության վերանորոգման համար, վորպեսզի վերջնական անկում տեղի չունենա, պետք եր անդամահատություն կատարել, վորին և ձեռնամուխ յեղավ տիրող ազնվականությունը:

3.

XIX Դ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԲԵՐԱԼ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՑԵՎ ՌԵԿԱՑԻԱՅԻ ՍԿԻԶԲԸ

XIX դ. հենց սկզբից արդյունաբերական և ագրարային կապիտալիզմի առաջին ծիլերը հերթի դրին ճորտատիրական իրավունքի վերացման խնդիրը: Ազատ բանվորը հարկավոր եր թե արդյունաբերողին և թե գյուղական տնտեսատիրոջ: Ռուսաստանի արդյունաբերական զարգացումը ծնեցնում եր նաև քաղաքական ազատության անհրաժեշտության գաղափարը: Արդյունաբերական կապիտալը կարիք չուներ ստիպել վոչ-տնտեսական միջոցառումներով, նա կարող եր բանվորի վրա ներգործել՝ «վոչ թե մեջքի, այլ ստամոքսի միջոցով», այդ իսկ պատճառով նրան հարկավոր չեր ճորտատիրական իրավունքը և ամբողջ ճորտատիրական հարաբերությունների կարգը:

Բուրժուական այս իդեոլոգիան ընդունում եր կալվածատերերի մի մասը, հատկապես կենտրոնական շրջանի հողատերերը, վորոնք ամենից սերտ կապ ունեյին արդյունաբերական կապիտալի հետ: Այդ իդեոլոգիան օտար չեր նաև կառավարական շրջաններին, հատկապես շատ յու-

րահատուկ ձևով: Գյուղացիական հարցը դնելու յերկչոտ մի փորձ եր, վոր արգելվեց հայտարարություն տալ, թե գյուղացիները վաճառվելու յեն առանց հողի: Հետո, 1803 թ., հետևեց այն հրահանգը՝ «ազատ հողագործների» մասին, վորով կալվածատիրոջ թույլատրվում եր իր գյուղացիներին ազատել միայնակ կամ ամբողջ գյուղերով հողաբաժինների հետ մեկտեղ, փոխադարձ համաձայնության պայմանով (սովորաբար գյուղացին ազատվում եր միջին հաշվով 396 ռ. ասիգնացիա վճարելով: Լիֆլյանդիայի, Եստլյանդիայի և Կուրլյանդիայի գյուղացիության կարգավորելու մասին կանոնները, թույլ տալով գյուղացիության ազատագրումն առանց հողի, հնարավորություն եյին ստեղծում ազատ վարձու բանվորների հանդես գալուն, վորն անհրաժեշտ եր այդ նահանգներում սերմնափոխական տնտեսություն ստեղծելու համար:

Ալեքսանդր առաջինի շուրջը համախմբվել եյին նրա մոտիկներից և կազմել, այսպես կոչվող, «գաղտնի կոմիտեն» (негласный комитет) այնտեղ մասնակցում եյին կայսրի յերիտասարդ ընկերները, վորոնք յեվրոպական կրթություն եյին ստացել և ազատամտորեն եյին տրամադրված (Ստրոգանով, Նովոսիլցև, Չարտորիսկի, Կոչուբեյ): Ճորտատերերը նրանց «յակոբինյան շայկա» եյին անվանում: Կոմիտեն յերկար կյանք չունեցավ: Ժամանակի յերկու գլխավոր հարցերը՝ ճորտատիրական իրավունքի վերացման և ինքնակալության սահմանափակման մասին, լուծում չստացան կոմիտեյում, վորն իր գործունեյության ընթացքում յերկչոտություն և անհետևողականություն եր ցուցաբերում:

Բոլոր ազատ պրոֆեսիայի մարդկանց թույլ տրվեց հողեր գնել. վարչական ռեֆորմ անցկացվեց, վորով նախկին կոլլեգիաները վերածվեցին մինիստրությունների, վորոնց մեջ անցան նախկին «գաղտնի կոմիտեյի» անդամներից վոմանք, իսկ սենատը վերածվեց ադմինիստրացիայի վրա պետական հսկողության օրգանի և դատական բարձր ինստանցիայի:

XIX դ. սկզբին սահմանադրությունն անժամանակ եր համարվում: Սպերանսկու*), (այն ժամանակ դեռևս ներքին գործոց մինիստրության ատենավոր) զեկուցագրում խոսվում եր յերկրում սահմանադրություն մտցնելու դժվարությունների մասին, մի յերկրում, ուր բնակչության կեսը բոլորովին ստրկական վիճակում եր գտնվում, ուր լուսավորություն չկա, Սպերանսկու կարծիքով սահմանադրություն մտցնելը վտանգավոր ե, իսկ ճորտատիրական իրավունքի ժամանակ լուսավորություն մտցնելը հեշտ չե:

Այնուամենայնիվ այդ ուղղությամբ կառավարությունը վորոշ բան անում եր: Հիմք դրվեց հինգ նոր համալսարանների, բավական նշանակալից գումար եր բաց թողնվում կրթության կարիքների համար, թույլատրվեց մի շարք հանդեսներ հրատարակել, դրանցից միքանիսը լիբերալ մտքեր եյին արծարծում:

Տիլզիտի հաշտությունից հետո, յերբ ազնվականությունը դժգոհ եր կառավարությունից, Ալեքսանդր I-ը ավելի չեր ձգտում հենվել արդյունաբերական կապիտալի ուժի վրա: Նա Սպերանսկուն հանձնարարեց

*) Սպերանսկին գյուղական քահանայի վորդի յեր: Հոգևոր ակադեմիան ավարտելուց հետո նա ծառայության մտավ Սենատի դիվանը:

կազմել «պետության վերակազմակերպման պլանը», վորը պատրաստ էր 1809 թ.: Սպերանսկու նախագիծը ընդգծում էր այն միտքը, վոր «ժամանակն է ուղիղ պետական կառուցում մտցնել» Ռուսաստանում նախորդ միջոցառումների հիման վրա: Պլանի հիմնական միտքը ֆինանսների և վարկի կանոնավորումն էր, վորն առանց հաստատուն պետական օրենքների անհնար էր: Գյուղացիությունը պետք է իրավական ազատություն ստանար: Սպերանսկու պլանով նախատեսվում էր նույնպես՝ գավառակային, շրջանային և նահանգային դումաների կազմակերպումը, վորոնք կազմված պետք է լինեին՝ հողատերերի, հարուստ վաճառականների և արդյունաբերողների ընտրովի ներկայացուցիչներից: Դումաներն զբաղվելու էին տեղական տնտեսության խնդիրներով: Բացի այդ, պլանն աչքի առաջ ուներ յերկու պալատ ստեղծել՝ Պետական դումա և Պետական խորհուրդ, վորը պլանի նախնական ձևավորման համաձայն մասնակցություն պետք է ունենար օրենսդրության մեջ: Այս ամբողջ պլանից իրագործվեց միայն Պետական Խորհրդի կազմակերպվելը, վորը գործականում դարձավ հին բարձրաստիճանավորների ժողով, ուր քննության էին առնվում նոր օրենքների նախագծերը, բայց վոչինչ չէր վորոշվում: Ամբողջ գործնական աշխատանքը տանում էր մինիստրների Խորհուրդը: Չնայած Ալեքսանդր I-ը Ֆինլանդիայում և Լեհաստանում սահմանադրություն մտցրեց և յերկու տեղումն էլ սեյմ հրավիրեց, բայց ներկա դեպքում նա այդ անում էր բացարձակապես այն նպատակով, վոր Ֆինլանդիայի և Լեհաստանի բնակչությանն իր կողմը գրավի:

Արդեն իսկ Ալեքսանդրի ժամանակաշրջանի «լիբերալիզմի» ամբողջ ընթացքում կարելի յեր բանալ ռեակցիոն քաղաքականության սաղմերը: Ալեքսանդրի թագավորության տարիներին էր, վոր սկսեց բարձրանալ Պավելի սիրելիներից մեկը՝ Արակչեևը, բիրտ ու հիմար կամակորի մեկը, վորը ռազմական մինիստր նշանակվեց:

Նապոլեոնական կայսրության կործանումը հանդեց ռեակցիոն Սրբազան դաշնակցության կազմակերպելուն, վորն Ալեքսանդր I-ի մտքի արդասիքն էր: Շուտով բեկում առաջացավ Ալեքսանդրի ներքին քաղաքականության մեջ: Լիբերալ գաղափարներն սկսեցին հետապնդվել ամենայն կոպտությամբ. ցենզուրան պայքար սկսեց մամուլի դեմ: Սկսվեց հետապնդվել բարձրագույն դպրոցների ազատամտությունը: Ժողովրդական լուսավորության մինիստրությունը վերանվանեցին հոգևոր գործոց և ժողովրդական լուսավորության մինիստրություն: Ազատամիտ պրոֆեսորներին համալսարաններից վտարում էին. փիլիսոփայության և բնագիտության դասավանդումը փոխարինում էին աստվածաբանությամբ, պրոֆեսորներին ստիպում էին նույն իսկ քաղաքատնտեսության դասընթացը հիմնավորել սուրբ գրքի ասածներով: Ձգտում էին հարկադրական միջոցներով ուսանողության մեջ հավատ և խոնարհություն սերմանել, ուսանողներին ստիպում էին խմբով աղոթքներ յերգել, իսկ հանցավորի պարանոցը տախտակ էին դնում, վրան գրված «մեղավոր» և ստիպում էին ապաշխարել:

ԴԵԿԱԲՐԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ռեակցիան նպաստեց դժգոհությունների արագ ձևավորվելուն, վորն ազնվականության մի մասի մեջ աճում էր և մի շարք գաղտնի ընկերություններ կազմակերպվեցին:

Այդ շարժումը, վորը պատմության մեջ դեկաբրիստական է կոչ-

վում, 1825 թ. դեկտեմբերի 14-ին Պետերբուրգում առաջացած ապստամբության հետևանքով, ծնունդ առավ բանակի սպայության շրջանում: Այդ ժամանակ սպայությունը մեծ մասամբ հանդիսանում էր ազնվականության հետևաբար և վողջ ռուս հասարակության վոչ միայն ամենակուլտուրական խավը, այլև ամենաառաջադեմ: Բայց քանի վոր նոր տնտեսական հարաբերություններն արդեն շերտավորման էին յենթարկել ազնվականության, վորը մի միասնական զանգված չէր կազմում այլ միքանի սոցիալական խավի յեր բաժանված, այդ իսկ պատճառով այդ խավերի իդեոլոգիան էլ զանազան գունավորում էր ստացել, վորոնք արտացոլել էին նրանց քաղաքական ծրագրերում: Դեկաբրիստական շարժումը, վորը մի շարք սոցիալ-տնտեսական պատճառների ծնունդ էր, շատ բան ստացել էր բուրժուական քաղաքական գրականության գաղափարներից և Արևմուտքի բուրժուական հեղափոխական շարժումներից: Սակայն սահմանադրական կարգերին ծանոթ լինելը վոչ միայն կարդացած գրքերի հետևանք էր, այլև արտասահմանյան արշավանքների ժամանակ, յեվրոպական կյանքը դիտելու: Ազատամիտ սպայությունն իր դաստիարակությունն ստացած լինելով XVIII դ. լուսավորիչների փիլիսոփայությունից և յեվրոպական քաղաքական գրականությունից, սկսել էր մոտ կանգնել զինվորական մասսաներին: Ազնվական սպաներից վոմանք ծանոթ էին Արևմտյան Յեվրոպայի գրողների, գիտնականների, քաղաքական գործիչների հետ: Վոմանք նապոլեոնական պատերազմները վերջանալուց հետո ճանապարհորդեցին դեպի յեվրոպական յերկրները: Այս բոլորը հայրենի և Արևմտյան Յեվրոպայի կարգերը համեմատելու համար՝ նյութեր էր մատակարարում: Իսկ կառավարությունը, խաղաղ դրության անցնելով, ձգտում էր զորքի մեջ մտցնել նախկին անիմաստ վարժությունները, անվերջ զորատեսները և ձեռ վոքր ինչ խախտելու համար պատիժները:

Սկսվեց սպայական անձնակազմի վերադաստիարակումը և զտումը: Հրամանատարական բարձունքների համար ընտրում էին հավատարիմ-ճակատայիններ, իրենց «յակոբինականության» համար հանվում էին ռազմական ծառայություն մատուցած և զորքի մեջ ժողովրդականություն վայելողները, դեպի զինվորները մարդավայել վերաբերմունք ունեցողները:

Արակչեևի ղեկավարությամբ սկսվեց զինվորական շեների կազմակերպումը: Այդ նպատակի համար, քաղաքացիական գերատեսչությունը զինվորական գերատեսչության մի շարք հողամասեր հատկացրեց, բնակեցրած պետական գյուղացիներով, վորոնց «զինվորական շինականներ» էին դարձնում. հանձինս սրանց, աշխատում էին միաժամանակ ունենալ թե հողագործներ և թե զինվորներ: Նույն տերիտորիաների վրա բնակեցրին միքանի գնդեր, բերել տալով ամուսնացած զինվորների ընտանիքները: Զինվորական շինականների կյանքը խիստ տնօրինված և զինվորական դիսցիպլինայի էր յենթարկված: Շինականները զինավարժությամբ էին պարապում. նրանց զավակներին զինվորական ուսուցում էր տրվում: Կառավարությունը, այդ շեների կազմակերպումով, ցանկանում էր հաստատ զինվորա-յերկրագործական մի դաս ստեղծել այն նպատակով, վոր ծախսերը կրճատվեն, զինակոչը հեշտացվի, զինվորներին չկտրեն ընտանիքից ու սովորական յերկրագործական աշխատանքից:

Հեշտություն և տնտեսում առաջ չեկավ. դուրս յեկավ, վոր կա-

զարմային աքսորը չափազանց թանկ է նստում և իր ծախսերը չի ծածկում: Առաջադեմ սպայությունն ոպոզիցիայի դիրքն էր ընկնում և զինվորական չեների կազմակերպման մեջ տեսնում էր զինված ուժ ստեղծելու մի փորձ, որի վրա ինքնակալությունը կարող կլիներ հենվել, ամեն մի հասարակական շարժում ճնշելու համար: Այսպիսով զինվորական միջավայրի պրոֆեսիոնալ տրամադրությունները միաձուլվեցին կառավարությունից ընդհանուր դժգոհության տրամադրությունների հետ:

Զորքի մեջ դժգոհության առաջին բացորոշ պոռթկումն այդ 1820 թ. Պետերբուրգում Սեմյոնովյան գվարդիական գնդի զինվորների հուզումն էր: Սեմյոնովցիների ելույթը հետևանք էր զինվորական ծառայության դժվարին պայմանների: Գնդի մեջ տեղի ունեցող հուզումները կառավարությունը լիկվիդացիայի ենթարկեց: Հետևանքն այն եղավ, որ զինվորներին և սպաներին փոխադրեցին բանակային գնդերն, առանց ծառայությունից հեռանալու իրավունքի, արձակուրդների և փոխադրության արգելումով: Դեպի կառավարությունն ունեցած ատելությունը նրանք բանակները տարան:

Դեռ առաջ գվարդիական և բանակային սպայության մեջ սկսել էին գաղտնի ընկերություններ առաջանալ, որոնք այս կամ այն հասարակական-քաղաքական նպատակներն էին առաջադրում: Այդ ընկերություններից ամենից շուտ կազմակերպվածներն էին՝ «Փրկության միությունը» (1816–1817) և «Երանելիության միությունը» (1818—1821), որոնք իրենց ֆիլիալներն (բաժանմունքները) ունեյին՝ Մոսկվայում, Նիժնի-Նովգորոդում, Ուկրայնայի Տուլչինում և ուրիշ քաղաքներում. դրանք խաղաղ կազմակերպություններ էին, որոնք գրեթե բացորոշ էին գործում:

«Երանելիության միության» կանոնադրությունը ոչ մի հեղափոխական հոդված չուներ: Ներկայացուցչական վարչաձևն էր նրա նպատակը, որի մասին սկզբում միայն ընկերության հիմնադիրները գիտեյին: Միությունը ցանկանում էր բարոյական ազդեցության միջոցով կառավարությանը հարկադրի խաղաղ ճանապարհով պետության բարենորոգության անցնել: Ժամանակի ընթացքում ընկերության մեջ առաջացավ ձախ թև, երիտասարդ գնդապետ Պ.Ի. Պեստելի (1793—1826) ղեկավարությամբ, որը պրոպագանդի միջոցով Պետերբուրգի կազմակերպության ամենաակտիվ անդամներին համոզեց պետական հեղաշրջման անհրաժեշտ լինելը և նրանց իր կողմը գրավեց: 1820 թ. նրան հաջողվեց միության անդամների մեծ մասին համոզել՝ Ռուսաստանի համար հանրապետական կարգերի ցանկալի լինելը և հարց հարուցեց ինքնակալության շուտափույթ լիկվիդացիայի մեթոդների մասին:

Երբ կառավարությունը ոպոզիցիայի ամեն մի արտահայտության հետապնդել սկսեց, Միության ոպորտունիստորեն տրամադրված անդամներից շատերը, որոնք շնորհիվ տնտեսական պայմանների փոփոխման (հացի գնի իջնելը, հովանավորող տարիֆ) սառել էին դեպի շարժումը, Միության համար ծանր բալաստ էին դարձել:

1821 թ. Մոսկվայում Միության համագումար հավաքվեց, որը «Երանելիության միություն»-ը լիկվիդացիայի ենթարկված հայտարարեց: Դա միայն ոչ ցանկալի անդամներից ազատվելու մի միջոց էր:

Միության փշրանքներից երկու գաղտնի ընկերություն կազմվեցին՝ «Հարավային» և «Հյուսիսային» (1821–1825):

Ուկրայնայում՝ երկրորդ բանակի տեղավորման շրջանում, գործում էր վերակազմված Հարավային միությունը, որի գլուխ կանգնած էր Դիրեկտորիան. Պեստելը դիրեկտորիայի անփոփոխ նախագահն էր:

Հարավային միության պատգամավորների համագումարը 1823–1824 թ.թ. առաջադրեց Հարավային Միության ազդեցություն ձեռք բերելու խնդիրը Պետերբուրգի վրա: Հարավային և Հյուսիսային Միությունների միջև եղած հարաբերությունները լարված էին, նույնիսկ երբեմն սրվում էին:

Պետերբուրգում Հյուսիսային միությունը, որը կազմված էր մեծ մասամբ լավ ապահովված գվարդիական սպաներից, ղեկավարում էր երեք դիրեկտորներից կազմված Դուման: Միության իսկական անդամներն էին՝ գերազույն շտաբի կապիտան Նիկիտա Մուրավյովը (1796–1843) և Ռուս-ամերիկյան ընկերության աշխատակից, պաշտոնաթող սպա բանաստեղծ Կ.Ֆ. Ռիլեևը (1796-1825):

Այն հիմնական խնդիրները, որոնք բաժանում էին Միության անդամներին, հետևյալներն էին՝ 1) Ռուսաստանը հանրապետություն, թե՞ սահմանադրական միապետություն պետք է դառնա. 2) Նա պետք է մնա որպես անբաժան պետություն, թե՞ ֆեդերացիա պետք է կազմի, 3) Ո՞վ պետք է լիակատար իրավատեր քաղաքացի համարվի, և վերջապես 4) Ինչպե՞ս պետք է ազատել գյուղացիներին՝ հողով, թե՞ առանց հողի:

Այս հարցերին Հյուսիսցիների կողմից պատասխան էր տալիս Նիկիտա Մուրավյովի կազմած սահմանադրության նախագիծը, իսկ Հարավցիների կողմից՝ Պեստելի գրած «Ռուսսկայա Պրավդա»-ն. դա միաժամանակ և սահմանադրության նախագիծն էր և մի նակազ՝ ժամանակավոր կառավարության համար, այդ նակազը սոցիալ-քաղաքական մի նոր սիստեմ էր առաջադրում:

Մուրավյովի սահմանադրությունն արտացոլում էր առաջադիմական ազնվականության միջին խավերի իդեոլոգիան, այդ խավերը ձգտում էին դաշնակցել տնտեսապես ուժեղ բուրժուազիայի հետ: Սահմանադրական միապետությունը Մուրավյովի իդեալն էր, չնայած Հյուսիսային միության անդամներից՝ ոմանք հանրապետականներ էին, օրինակ՝ Ռիլեյևը, Ոբոլենսկին: Մուրավյովի նախագծով ներկայացուցչական սիստեմի հետ միասին, թագավորի ձեռքին էր մնում ուժեղ գործադիր և զինվորական իշխանությունը: Ըստ Մուրավյովի, Ռուսաստանը հանդիսանալու յեր միացյալ նահանգների նման մի ֆեդերացիա: Նրա մեջ մտնող պետությունները պետքե կապված լինեյին ընդհանուր օրենքներով և որոշ միացուցիչ հիմնարկներով: Ըստ սահմանադրության, օրենքների հրատարակումը պետք է հանձնվեր ազատ ընտրված ժողովրդական պատգամավորներին, գործադիր իշխանությունը՝ թագավորին, իսկ օրենքների դատական պաշտպանությունը՝ ընտրովի դատավորներին: Ժողովուրդն է ընտրելու ամբողջ պետության ժողովրդական խորհրդի (   ) և տեղական ժողովների պատգամավորներին, նա պետք է հաստատի ամեն անգամ նոր գահ բարձրացող թագավորին, որը հաշվետու յե ժողովրդական խորհրդի առջև: Լիաիրավունք քաղաքացիների շարքերից սահմանադրությունը հանում է կանանց, վաչկատուն ժողովուրդներին,

հարկերը ժամանակին չմուծողներին, տնային ծառայողներին, վոչ նստակյաց անձանց: Մյուսները քաղաքական կյանքին պետք է մասնակցեյին, բայց տարբեր իրավունքներով. ընտրել կարող եյին նրանք, ովքեր անշարժ կայքով 5·000 ռուբլու, իսկ շարժականով 10·000 ռ. սեփականություն ունեյին. բարձր պաշտոններ կարող եյին գրավել այն անձինք, վորոնք 30·000-ի և 60·000-ի սեփականություն ունեյին:

Մուրավյովի սահմանադրությունը ցենզային սահմանադրություն եր: Նախկին պետական գյուղացիության 500 հոգուն թույլ եր տրվում ունենալ մեկ ընտրող, այսինքն 500 գյուղացիների ձայնը կշռում եր այնքան, վորքան մեկ կալվածատիրոջ կամ կապիտալիստի ձայնը: Ճորտային դրությունը պետք է վերացվեր, գյուղացիությանը յուրաքանչյուր ծխին պետք է հատկացվեր ագարակ յերկու դեսյատին հողամասով: Այսպիսով գյուղացին պատկերացվում եր, վորպես բատրակ-գյուղացի չնչին հողամասով, վորը նրան կստիպեր աղայի մոտ աշխատանքի վարձվել: Մուրավյովի սահմանադրությունը՝ պարզորոշ կալվածատիրական ծրագիր եր, վորը հողն ու իշխանությունը թողնում եր կալվածատերերի և բուրժուազիայի ձեռքին:

Հարավցիների առաջնորդ Պեստելը վճռականապես հանրապետական եր: Նրա նախագծով օրենսդիր իշխանությունը պետք է պատկաներ ընդհանուր ընտրական իրավունքով ընտրված ներկայացուցիչներից կազմված ժողովրդական խորհրդին: Գործադիր իշխանությունը գլխավորելու յեր հինգ հոգուց կազմված «Վեհապետական Դուման»: Օրենքների կիրառման հետևելու յեր 120 հոգուց կազմված «Գերագույն ժողովը»: Պեստելն ապագա Ռուսաստանը պատկերացնում եր վորպես մեկ և անբաժան պետություն: Ռուսաստանում ապրող բոլոր ժողովուրդները, նրա կարծիքով, պետք է հրաժարվեն տեղական առանձնահատկություններից և յուրացնեն ռուսական սովորությունները ու լեզուն: Հրեաների համար առաջարկում եր ռուսական զորքերի միջոցով նվաճել Պաղեստինը և նրանց այնտեղ ուղարկել: Պեստելը բոլորին նույն քաղաքական իրավունքն եր հատկացնում, յուրաքանչյուրը վորևե գավառակի անդամ է համդեսանալու և ընտրելու յե գավառակի, գավառի, նահանգի ժողովների պատգամավորներ: Ամեն վոք կարող է ժողովրդական խորհրդի անդամ լինել: Հարուստներին վոչ մի առավելություն չի տրվելու, քանի վոր, Պեստելի կարծիքով, «հարստության արիստոկրատիան» վոչնչով լավ չէ «ֆեոդալական արիստոկրատիայից»: Պեստելի տրամադրությունը քաղաքի և գյուղի մանր բուրժուազիայի կողմն եր. առաջիններին նա հատկացնում եր Ռուսաստանի քաղաքացու բոլոր իրավունքները, իսկ ազատ հողագործներին մշտական ժառանգական հողին տիրելու իրավունքը: Այդ հողերի ազգայնացումն, ըստ Պեստելի, պետք է արգելվեր:

Ճորտատիրական իրավունքը պետք է վերանար: Ամբողջ հողն ազգայնացվելու յեր (5·000 դեսյատինից ավելի կալվածքները առանց հատուցման, 5·000-ից պակասը՝ հատուցումով) և բաժանվելու յեր յերկու մասի՝ մի մասը գավառականներին, մյուսը պետական ֆոնդ պետք է դարձվեր: Գավառակային իշխանությունները ստացած հողը հավասար չափով պետք է բաժանեյին բոլորի միջև, իսկ ֆոնդի հողերը խոշոր հատվածներով տային կապալով և նույնիսկ իբրև սեփականու-

թյուն՝ ուժեղ տնտեսություններին, վորոնք կկարողանային մշակել այն իրենց ուժերով՝ շուկայում վաճառելու համար:

Ինչպես տեսնում ենք Մուրավյովի և Պեստելի նախագծերի միջև մեծ տարբերություն կար: Գլխավոր տարաձայնություններն ընտրական սիստեմի և հողի բաժանման խնդիրների շուրջն եր: Այդ պունկտերը հյուսիսային միության անդամներին, վորպես կալվածատերերի, հարավցիներից հեռու եյին վանում: Տարբերությունը դասակարգային եր. Պեստելը վեր բարձրացող բուրժուական դեմոկրատիայի իդեոլոգիան եր արտացոլում: Նրա ծրագիրը քաղաքականության մեջ հանդես յեկած մանր բուրժուազիայի ծրագիրն եր:

Դեկաբրիստների ձախ թեն եր կազմում «Միացյալ սլավոնների ընկերությունը» (1823–1825) վորն առաջ յեկավ հարավում յերկրորդ բանակի սպայության շարքերում: Հանրապետության դեմոկրատիայի, դիկտատուրայի և զինված ապստամբության գաղափարները հարավային միության և «Միացյալ սլավոնների ընկերության» միմյանց հետ մոտեցնում եյին: Ընկերությունը կազմակերպողներն եյին չքավոր սպայի զավակներ–Բորիսով յեղբայրները և լեհ չքավոր ազնվական Լյուբլինսկին, այս վերջինը լեհական գաղտնի ընկերության մասնակցելու համար Վարշավայից շղթայակապ տեղափոխվել եր Վոլինի-Նովգորոդ: Ընկերության մեջ մտնում եյին բանակի սպաներ և զինվորական աստիճանավորներ, այսինքն նրանք, վորոնք հողազուրկ եյին, միայն ռոճիկով եյին ապրում և միայն անունով եյին ազնվական: Բացի այդ, ընկերության անդամներ եյին նաև նահանգապետի դրասենյակի դրագիրը, գյուղացու զավակներ, փոստային ծառայողի ծագում ունեցող մանր աստիճանավորներ և մանր լեհական ազնվականներ: Ընկերության անդամներն իրենց համար կանոն եյին դարձրել «ստրուկ ունենալու ցանկություն չունենալ, քանի վոր ինքդ չես ցանկանում ստրուկ լինել». նրանք պատրաստ եյին իրենց ռոճիկներից մուծումն եր կատարել գյուղացիներին ազատագրելու համար, իսկ ընկերության այն անդամներին, վորոնք ճորտեր ունեյին, պարտավորեցնում եյին ազատագրել նրանց: «Սլավոնները» զինվորների մեջ պլանաչափ պրոպագանդ եյին մղում հեղաշրջում առաջացնելու մասին: Այդ պրոպագանդը կապակցվում եր գյուղացիական հարցի հետ: Զինվորներին պատմում եյին նրանց հայրերի և մայրերի ճնշման մասին: Ընկերության քաղաքական նպատակն եր, ազատվելով ինքնակալությունից, կազմել սլավոնական հանրապետությունների ֆեդերատիվ միություն:

Հարավցիների և հյուսիսցիների տարաձայնությունը հանդես եր գալիս նաև տակտիկական խնդիրներում: Հյուսիսցիները յենթադրում եյին, վոր հեղափոխությունը զինվորական բնույթ պետք է կրի առանց ժողովրդական զանգվածների մասնակցության:

Նրանք չեյին մտածում իշխանությունն իրենց ձեռքն առնել. այլ այն հանձնում եյին փորձված և ժողովրդականություն վայելող պետական գործիչներին (օրինակ՝ Սպերանսկուն): Զորքերը պետք է յելնեյին շարքերով, դիսցիպլինան առանց խանգարելու, միության անդամ սպաների հրամանատարությամբ. զինվորները վորպես ինքնուրույն ուժ չպետք է հանդես գային, այլ լոկ գործիք պետք է ծառայեյին շարժման համար: Ահա ինչու, 1825 թ. դեկտեմբերի 14-ին Պետերբուրգում Միությունը, փոքրաթիվ զորքերի գլուխ անցած՝ դուրս

յեկավ Սենատի հրապարակը և «ձեռքից բաց» թողեց հեղափոխությունը: Նրանք երկար ժամանակ այնտեղ կանգնած մնացին, չմիացան ժողովըրդական մասսաների հետ, վորոնք մեծ քանակով հավաքվել էին հրապարակում և կից փողոցներում ու պատրաստ էին պայքարի ելնել Նիկոլայ I-ի և կառավարական զորքերի դեմ: Հյուսիսային ընկերության անդամներին է ամբողջությամբ վերաբերում Լենինի խոսքերը՝ «Նեղ է այդ հեղափոխականների շրջանը. սարսափելի հեռու են նրանք ժողովրդից»: Նրանց կազմակերպությունը՝ վերջին ազնվական հեղափոխական կազմակերպությունն էր. նրանք ապագա չունեին:

Հարավային միությունը հեղաշրջման նախագիծը կառուցում էր կայսերական ամբողջ ընտանիքի ոչնչացման և ապստամբության վրա: Ըստ նախագծի, ապստամբությունից հետո միության անդամներն իրենց ձեռքն են առնելու իշխանությունը և ժամանակավոր կառավարության յերկարատև դիկտատուրա հաստատելու՝ նոր կարգերը կյանք մտցնելու համար:

Կառավարությունը, մատնությունների միջոցով գիտեր բանակի գաղտնի միությունների գոյության մասին: 1825 թ. դեկտեմբերին սկըսվեցին Հարավային միության անդամների ձերբակալությունները (Պեստելի և մյուսների): Այդ ժամանակ հյուսիսեցիները վճռեցին օգտագործել ստեղծված կացությունը. անզավակ մնացած Ալեքսանդր I-ի մահվանից հետո գահը պետք է ժառանգեր նրա յեղբայր Նիկոլայը, այս հետևվանք էր այն բանի, վոր մյուս յեղբայրը՝ Կոստանտինը, այդ ժամանակվա Լեհաստանի փոխարքան, առաջուց գահից հրաժարվեց: 1825 թ. դեկտեմբերի 14-ը Հյուսիսային միության ջախջախման օրը հանդիսացավ: 1825 թ. դեկտեմբերի վերջերին հարավում ապստամբեց Չերնիգովի հետևակ գունդը: Ապստամբությունը ղեկավարում էին Հարավային միության անդամներ Ս. Մուրավյով—Ապոստոլը և Բեստուժև—Ռյումինը, վորոնց հետ շատ խնդիրներում համաձայն չէին կազմակերպված «հեղափոխական շտաբի» անդամները՝ «սլավոնները»: «Սլավոնները» պահանջում էին՝ արագ և վճռական գործողություններ, արշավել Կիևի վրա կապվել գյուղացիության հետ: Մուրավյովը դանդաղում էր, սպասում էր մյուս մասերի միանալուն: Ղեկավարության անմիաբանությունը ապստամբության անհաջողության պատճառներից մեկն էր: Հարավցիների մասին ասում են հեղափոխությունը «անցան», չարունակ ուղղությունները փոխելով ու դաշնակիցներ վորոնելով, վախենալով հենվել գյուղացիական մասսաների վրա, հակառակ հյուսիսցիների, վորոնց մասին ասում են «կանգնելով» բաց թողին հեղափոխությունը: Հունվարի 3-ին գունդը ճակատ առ ճակատ հանդիպեց կառավարական զորքերին և թնդանոթների համազարկի տարափի տակ ցրվեց, տալով մեծ քանակությամբ սպանվածներ և վիրավորներ: Հյուսիսի և հարավի կենդանի մնացածներին կառավարությունը խիստ պատժի յենթարկեց:

Հարավցիներ՝ Պեստելը և Ս. Մուրավյով—Ապոստոլը, Բեստուժև—Ռյումինը, հյուսիսցիներ՝ Կախովսկին և Ռիլեևը կախաղան բարձրացան. (1826 թ.) մյուսները Սիբիր ուղարկվեցին՝ տաժանակիր աշխատանքի:

Դեկաբրիստական շարժման անհաջողության պատճառները միքանիսն էին: Առաջինը՝ դեկաբրիստները վորևե դասակարգի հետ կապեր չէին պահում: Իրենք քիչ էին. մյուս ազնվականությունը ճորտատեր կալվածատերերն էին: Արդյունաբերական բուրժուազիան դեռ նոր էր զարգանում, ինչպես վոր նոր էր զարգանում կապիտալիզմը: Գյուղացիությունը միաձուլված չէր, դեկաբրիստներից շատերն էլ իսկի չէին էլ ցանկանում կապվել գյուղացիության հետ: Անհաջողության մյուս պատճառն իրենց՝ դեկաբրիստների մեջ ներքին միաձուլվածության բացակայությունն էր: Այստեղից էլ առաջանում էին՝ կիսվածություն, թուլության զգացում, վճռական հեղափոխական գործողությունների անկարողություն և հին տրադիցիոն զգացումների արթնացում՝ զզվանք դեպի բռնությունը, հարգանք դեպի ցարը, իշխանության հանդեպ խոնարհվելը:

Բայց դեկաբրիստների շարժումն իզուր չանցավ. ընկածների գործի շարունակողներ և ճշմարիտ գնահատողներ առաջացան: Պլեխանովն ասում էր, վոր «դեկաբրիստներն իրենց կործանումով հետագա սերունդներին ճանապարհ ցույց տվին»: Լենինը գտնում էր, վոր «նրանց գործը չկորավ, Դեկաբրիստներն արթնացրին Հերցենին: Հերցենը հեղափոխական լայն ագիտացիա ստեղծեց: Ագիտացիան ընդգրկեցին, լայնացրին, ամրացրին ռազնոչիննեց*)—հեղափոխականները: Պայքարողների շրջանը լայնացավ»:

ՍԼԱՎՈՆԱՖԻԼՆԵՐԸ ՅԵՎ ԶԱՊԱԴՆԻԿՆԵՐԸ (ԱՐԵՎՄՏԱԿԱՆՆԵՐԸ): ԱՌԱՋԻՆ ՌՈՒՍ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ

Դեկաբրիստների պարտությունը դանազան կերպ ազդեց ժամանակակից ռուս ինտելիգենցիայի տարբեր սերունդների վրա: Ավագ սերունդը կամ բոլորովին հաշտվեց ինքնակալության հետ և յեռանդով պաշտպան հանդիսացավ նրան, կամ հուսահատության գիրկն ընկավ, ինչպես Պուշկինի ընկեր՝ Չաադաևը, վորը 30-ական թվականներին հանդեսներից մեկում տպված իր «Փիլիսոփայական նամակ»-ում հաստատում էր, վոր Ռուսաստանն ապագա չունի և նա հավիտենական տգիտության և վայրենացման է յենթակա: Այլ բան էր յերիտասարդությունը: Հերցենի արտահայտությամբ «Սենատի հրապարակի վրա

*) Ռազնոչիննեց էին կոչվում բոլոր նրանք, վորոնց գործունեյությունը դասային բաժանման սահմանից դուրս էր մնում, օրինակ, հոգևորականի վորդին Ռազնոչիննեց է դառնում, յերբ չի ցանկանում հոր պրոֆեսիայով զբաղվել, առևտրականի վորդին՝ յերբ դադարում է գիլդիական գումար վճարել:

Թնդանոթների վորոտը մի ամբողջ սերունդ արթնացրեց»: Կրտսեր սերունդը մեծանալով, ավելի ու ավելի ոպոզիցիոն եր դառնում: «Իրենց կորցրած Ռուսաստանն ուշքի յեր գալիս»,—ասում եր Հերցենը: Հնարավորություն չունենալով լայն ու բացորոշ արտահայտություն տալու, հասարակական հուզումը կենտրոնանում եր համալսարանների շրջապատում և 40-ական թվականների «խմբակներում»:

Սկզբում այդ խմբակներում ընդհանուր փիլիսոփայական խնդիրներով հետաքրքրվելն եր գերակշռում, բայց շուտով ոպոզիցիոն քննադատական տրամադրությունը հանդեց կենսական, պրակտիկ խնդիրների լուծման, այն բոլորի քննադատության, ինչ վոր ծածկված եր նիկոլայան ժամանակի պաշտոնական լոզունգների տակ՝ «ինքնակալություն, ուղղափառություն, ժողովուրդ»: Այդ կապակցությամբ եվրոպայի հասարակական մտքի յերկու ամենամեծ հոսանքների միջև պայքարը բորբոքվեց. այդ հոսանքներն եյին՝ սլավոնաֆիլները և զապադնիկները (արևմտականները):

Սլավոնաֆիլներն այն տեսակետն եյին պաշտպանում, վոր ամեն մի ժողովուրդ իր «ինքնագո կյանքով» ե ապրում: Նրա հիմքը խոր գաղափարական սկզբնավորումն ե՝—«ժողովրդական վոգին»: Ժողովրդին ճանաչելու համար, անհրաժեշտ ե հասկանալ այդ ժողովրդական վոգու եյությունը: Ռուս ժողովրդի ինքնագո լինելն արտահայտվում ե՝ ուղղափառության, համայնական կազմակերպվածության, պետության առաջացման վոչ թե դասակարգերի պայքարի, այլ իշխանական իրավունքի խաղաղ ընդունման մեջ: Սլավոնաֆիլների կարծիքով, Ռուսաստանը կարող ե որինակ ծառայել Արևմուտքի համար, նա կոչված ե, սլավոնների գլուխ անցած՝ Յեվրոպայի կյանքը վերակառուցել ավետարանական ուսմունքի սկզբունքներով: Սլավոնաֆիլների տեսության փիլիսոփայական հիմնավորումը տվել ե՝ Ի. Ի. Կիրեևսկին, աստվածաբանականը՝ Ի. Խոմյակովը, սոցիալ-պատմականը՝ Ի. Ակսակովը:

Հակառակ սլավոնաֆիլների, զապադնիկները հավատում եյին մարդկային միասնական քաղաքակրթության և ընդունում եյին, վոր Ռուսաստանը մինչև Պետրոս I-ի ռեֆորմները, լինելով վայրենի և տգետ, վոչ մի «ինքնագո» դրություն չի ունեցել: Ռուս հասարակության խնդիրն այն ե, վորպեսզի կից մոտենա յեվրոպական Արևմուտքին և միաձուլվելով նրա հետ, մի միասնական համամարդկային կուլտուրական ընտանիք կազմի: (Այստեղից ել ծագում ե նրանց անունը—զապադնիկ=արևմտական. արևմուտք=запад):

Սլավոնաֆիլները ռուս գյուղացիության, մասամբ ել վաճառականության, իբրև նախապետրյան ռուսական տրադիցիաների պահպանողների, իդեալականացնում եյին: Իրենց յելույթներում սլավոնաֆիլներն աչքերը փակում եյին ժողովրդի կյանքի շատ մութ կողմերի հանդեպ, բայց այնուամենայնիվ անհրաժեշտ եյին դանում լայն ռեֆորմներ անցկացնելը և գյուղացիության ազատագրման կողմ-

նակիցներ եյին, հարկավ այդ ազատագրումը յուրակերպ՝ ազնվականորեն եյին ըմբռնում: Սլավոնաֆիլները ռուս հասարակական մտքի վրա շոշափելի ազդեցություն չունեցան: Միակ բանը, վոր նրանց տեսության մեջ նշանակություն ուներ, այդ գյուղացիական համայնքի մասին ունեցած ուսմունքն եր, բայց այդ ել զապադնիկները նոր ձևով լուսաբանեցին. վոչ թե նահապետական-ուղղափառ փնտրումների բնագավառ դարձրին, այլ սոցիալիստական փնտրումների:

Զապադնիկների շրջանում առանձնացավ ավելի արմատական սոցիալիստական գունավորում ունեցող մի հոսանք, վորն առաջացավ յեվրոպական ուտոպիստ սոցիալիստների ուսմունքների ազդեցության տակ: Ռուսական կյանքի պայմանների ազդեցության տակ սոցիալական խնդիրներով հետաքրքրվելը Ռուսաստանում՝ իրավազուրկ ճորտ մասսայի դրությամբ հետաքրքրվելու բնույթ եր ընդունում: 30-ական թվականներին առաջին ռուս սոցիալիստներից եյին Ա. Ի. Հերցենը (1812—
—1870) և նրա ընկեր, բանաստեղծ Ն. Պ. Օգարյովը, վորոնք տարված եյին Սենսիմոնիզմով: 40-ական թվականների յերկրորդ կեսին, արտաքին գործոց մինիստրության աստիճանավոր՝ Մ. Վ. Բուտաշևիչ—Պետրաշևսկու շուրջը մի խմբակ կազմակերպվեց, այսպես կոչվող պետրաշևցիների խմբակը: Նրանք տարվել եյին Ֆուրիեյի գաղափարներով, ագիտացիա և պրոպագանդա մղելու փորձեր եյին անում. խմբակի ժողովներում վեր եյին լուծվում ուտոպիստ-սոցիալիստների աշխատությունները և մի շարք հասարակական հարցեր եյին քննարկվում՝ գյուղացիության ազատագրման, դատական ռեֆորմի մասին: 1849 թ. պետրաշևցիները ձերբակալվեցին և ռազմական դատարանին հանձնվեցին: Զնայած նիկոլայան պաշտպաններն ընդունում եյին, վոր այդ լոկ «գաղափարների դավադրություն ե», սակայն մի շարք պետրաշևցիների (այդ թվում Պետրաշևսկուն, Ֆ. Մ. Դոստոևսկուն) դատարանը մահապատժի դատապարտեց: Նրանց հետ շատ խիստ վարվեցին: Դատապարտյալներին գնդակահարության վայրը բերին, կարդացին մահվան դատավճիռը, գնդակահարության պատրաստություն տեսան և միայն նոր հայտարարեցին նրանց, թե մահապատիժը տաժանակիր աշխատանքի յե փոխարինված, զանազան ժամանակներով:

1861 Թ. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ

ՌԵՖՈՐՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Գյուղացիական ռեֆորմն որյեկտիվորեն բխում եր Ռուսաստանի կապիտալիզմի զարգացումից. ավելանում եր ֆաբրիկաների քանակն, աճում եր վարձու ազատ աշխատանքը, հացի գինը բարձրանում եր, կալվածքները հացի ֆաբրիկաների եյին վերածվում, ճորտ գյուղացու աշխատանքը քիչ եր արտադրական, և կալվածատերն ազատ բանվորի կարիք եր զգում: Ղրիմի պատերազմի անհաջող յելքը փակեց արևելյան շուկաները, ներքին շուկայի պահանջն անհրաժեշտություն դարձավ: Այդ բոլոր պատճառներին ավելացան 40-ական թվականներից սկսած շարունակաբար ուժեղացող գյուղացիական հուզումները: Գյուղացիական հարցի քննարկումը տեղի յեր ունենում նաև 40—50-ական թվականներին, բայց այդ քննարկումը «գաղտնի» յեր տարվում, սոսկ պետական բյուրոկրատական ապարատի միջոցով: Նիկոլայ I-ի եպոխայում գաղտնի կոմիտեների աշխատանքների հետևանքը յեղավ 1842 թ. հրովարտակը—«պարտավորված գյուղացիների» մասին, ըստ վորի կալ-

վածատերերին իրավունք էր տրվում իրենց գյուղացիների հետ ազատ կամքով համաձայնության գալ անձնական ճորտային կախյալ դրության վերացման մասին, և 1847 թ. հրովարտակը, վորով գյուղացիներին թույլ էր տրվում իրենց գնել կալվածքի վաճառքի ժամանակ։ Երկու հրովարտակներն էլ գործնական հետևանքները չունեցին (առաջինով ազատագրվեցին մոտ 60 000 հոգի, տղամարդ և կին, յերկրորդով՝ 964 հոգի տղամարդ)։

1857 թ. նորից կազմվեց գաղտնի կոմիտե՝ բարձր աստիճանավորներից։ Կոմիտեն սկսեց քննության առնել կառավարության մեջ գտնվող և հասարակական շրջաններում տարածված անհատ անձնավորությունների կողմից առաջադրված նախագծերն ու առաջարկները գյուղացիական հարցի շուրջը (իրավաբան և հրապարակախոս Կավելինի, սլավոնաֆիլ Սամարինի, հրապարակախոս և հասարակական գործիչ Կոշելյովի և այլոց գրվածքները), կոմիտեն նույնպես քննության էր առնում ճորտատիրական իրավունքի սահմանափակման շուրջը կառավարության կողմից ընդունած միջոցները և պետք է գյուղացիության ազատագրման ընդհանուր նախագիծ մշակեր։ Կոմիտեյի աշխատանքները դանդաղ էին ընթանում, նա գլխավորապես տեղեկություններ ու մատերիալ հավաքելով էր զբաղված։

Աշխատանքն աշխուժացրեց Լիտվայի ազնվականների ձեռներեցությունը, դրանք խնդրել էին թույլ տալ տեղերում ազնվականներից նահանգական կոմիտեներ կազմել գյուղացիական ռեֆորմը քննարկելու համար։ Լիտվայի կալվածատերերն յենթադրում էին գյուղացիներին առանց հողի ազատել, վորպեսզի իրենք էլ ազատվեն իրենց համար անհարմար, այսպես կոչված «ինվենտարային կանոններից» (գոյություն ուներ սկսած 1852 թ.), վորոնցով վորոշվում էին Արևմտյան նահանգների յուրաքանչյուր կալվածքի գյուղացիների հողամասերը և պարհակների չափը։ Ի պատասխան այդ խնդրագրի, հետևեց 1857 թ. նոյեմբերի 20 հրամանագիրը (ռեսկրիպտ), ուղղված Վիլնոյի գեներալ-նահանգապետ Նազիմովին. ըստ էության կրկնվում էր 1842 թ. օրենքը՝ «Կալվածատերերը պահում են ամբողջ հողի սեփականության իրավունքը, բայց գյուղացիներին թողնվում է իրենց նստակային տեղը, վորը նրանք գնման միջոցով ձեռք են բերում իբրև սեփականություն»։ Բացի այդ, հրամանագրում նախատեսվում էր գյուղացիության վորոշ քանակությամբ հող տրամադրելը, վորի դիմաց նրանք բեգառ պետք է վճարեյին կամ աշխատեյին կալվածատիրոջ համար։ Մինչև ազարակի համար փրկանքագնի (ВЫКУП) վճարումը (փրկանքագնի մեջ մտնում էին հողի ու շենքերի գինը և բեգառը) գյուղացին անձնական ազատություն էլ չէր ստանում։ Նույնիսկ այդ հրամանագիրը ռուս հասարակությունն ընդունեց իբրև մի շրջադարձ գյուղացիական գործերի «բյուրոկրատական բնույթի» լուծումից դեպի բաց-աշկարա՝ «հասարակական ճանապարհով» լուծելուն և չափազանցացրած հույսեր առաջացրեց։

Այդ ժամանակ էմիգրանտության մեջ գտնվող Հերցենը Լոնդոնից իր «Զանգ» (КОЛОКОЛ) օրգանի միջոցով ողջունեց Թագավորի նախաձեռնությունը գյուղացիների ազատագրման գործում մի ջերմ հոդվածով, վորին բնաբան էր ընտրել «դու կհաղթես, գալիլեացի՛»։ Հրապարակախոս Ն. Գ. Չերնիշևսկին «Ժամանակակից» («современник») ժուռնալում հայտնեց, վոր Ալեքսանդր II-ը բաղդ ունի «իր հպատակների

ազատությունը միայնակ սկսելու և կատարելու»։ Միաժամանակ սլավոնաֆիլ Ի. Ս. Ակսակովը մի ցնծալի բանաստեղծություն գրեց, վորի մեջ գոչում էր՝ «Մոռացություն՝ վաղվա օրվան, ողջույն՝ գալիք օրվան»։ Ժուռնալներն իրենց էջերում ճորտատիրական ռեֆորմի նվիրված հատուկ բաժին բաց արին, բանկետներ էին կազմակերպվում, ուր ճառեր էին ասվում «մեր թանկագին՝ հաց ու ջուր տվող մուժիկի» մասին։ Բայց շուտով հուսախաբություն առաջացավ։

ՌԵՖՈՐՄԻ ԸՆԹԱՑՔԸ

Լիտվայի նահանգներում ստեղծված նահանգական կոմիտեներից հետո, նույնանման կոմիտեներ կազմակերպվեցին և մյուս նահանգներում։ 1858 թ. աշնանը կոմիտեներն ամենուրեք արդեն գործում էին։ Վեց ամսվա ընթացքում նրանք պետք է մշակեյին, կառավարությունից տրված ծրագրի հիման վրա, գյուղացիների ազատագրման խնդիրը։ Այդ ծրագիրը հնարավորություն էր տալիս գյուղացիության դրությունը վորոշել, վորպես անցումն ժամանակավոր պարտավորություն, այսինքն, իրենց ուժի մեջ էին մնում՝ կոռը, կալվածատիրոջ ժառանգական իշխանություն, գյուղացիության հողազրկումը, հողի ազնվականության սեփականություն ճանաչելը և գյուղացիների համար միայն ազարակի գնման իրավունքը։

Առաջադիմական մամուլը և դեմոկրատիկ ինտելիգենցիան այդ ծրագիրը խիստ քննադատության յենթարկեցին։ Այս հանգամանքը լիբերալ կալվածատերերին ռեակցիոն յելույթի դրդեց (Զիչերին, Տուրգենև, Կավելին), նրանք Հերցենին, Չերնիշևսկուն և այլոց հանդիմանում էին, վոր առանց մտածելու, ծայրահեղության հասնելով կզրկվեն կառավարության վստահությունից։ Այսպիսով կալվածատերերն անմիջապես յերևան հանեցին միապետության հետ կոմպրոմիսի դիմելու, համաձայնության գալու տրամադրությունները։

Նահանգական կոմիտեներում մշակված նախագծերը գալիս էին Գլխավոր կոմիտե, վորը վերակազմված էր գաղտնի կոմիտեյից։ Նկատի ունենալով գործի բարդությունը, Գլխավոր կոմիտեյին կից կազմվեց խմբագրական հանձնաժողով, չորս բաժիններով՝ իրավաբանական, տնտեսական, վարչական և ֆինանսական. սրանք իրենց միջև բաժանեցին հատուկ խնդիրների մշակումը՝ գյուղացիների իրավունքների և պարտականությունների, գյուղացիական համայնքների կազմակերպման, հողաբաժինների և պարհակների ու փրկանքագնի մասին։

Այս խնդիրների շուրջը վեճեր առաջացան։ Տնտեսական հողի վրա ազնվականության զանազան խավերը պայքարում էին միմյանց հետ։ Ֆեոդալական խոշոր ազնվականությունը (ընդհանուր ազնվականության 10%-ից վոչ ավելին, տիրում էր հողերի 3/4 մասը) առաջադրեց գյուղացիներին առանց հողի ազատագրելու խնդիրը։ Նա, հանձինս սևհողային շրջանի ազնվականների, ցանկանում էր խոշոր կապիտալիստական տնտեսություն ստեղծել, և դրա համար արժան բանվորական ուժ էր հարկավոր։ Բայց բոլոր խոշոր կալվածատերերը չէին, վոր այդպես էին ցանկանում,— նրանցից վոմանց հարկավոր էր վոչ թե բատրակ-գյուղացի, այլ կապալառու-գյուղացի, վորն անձնապես ազատագրվելով, միաժամանակ կապված մնար իր մի պատառ հողին և կապալի կարիք ունենար։

Վոչ սևհողյան շրջանի կալվածատերերը նույնպես չէին կարող համաձայնել գյուղացիների առանց հողի ազատագրվելուն, քանի որ այդ ձևի ազատագրումը սպառնում էր նրանց կործանել. Նրանք այնքան հողից չէին արդյունք ստանում, որքան գյուղացիներից, որպես ճորտերից, որ բեղառ էին վճարում: Այդ բեղառային կալվածատերերի հատվածը պնդում էր, որ գյուղացիներին հող հատկացվի փրկանքագնով, որի մեջ մտնեն հողի գինը և այն յեկամուտները որ ստացվում են որպես բեղառ:

Սևհողյան և արդյունաբերական շրջանների միջին ազնվականությունը, յենթադրելով ռեֆորմներից հետո զարգացնել գյուղատնտեսությունը, որի համար նրան փող էր հարկավոր, այդ պատճառով կանգնած էր գյուղացիներին հողաբաժինով ազատագրելու տեսակետի վրա, բայց փրկանքագնով:

Ազնվականության այդ դասակարգային բաժանումը և կալվածատիրական տնտեսության պահանջները ազնվականությանը բաժանեցին յերկու հակամարտ խմբերի—ռեակցիոն նախագծերի կողմնակիցների և լիբերալ ռեֆորմների կողմնակիցների:

Լենինն այդ խմբերի պայքարն այսպես է բնութագրում՝ «ճորտատերերի և լիբերալների ախորահռչակ պայքարը...տիրող դասակարգերի ներսի պայքարն էր՝ մեծ մասամբ կալվածատերերի ներսը, բացարձակապես զիջման չափի և ձևի համար էր այդ պայքարը: Լիբերալներն էլ այնպես, ինչպես ճորտատերերը, կանգնած էին սեփականության և կալվածատերերի իշխանության ընդունելու հողի վրա, զայրանալով դատապարտում էին այդ սեփականությունը վերացնելու, այդ իշխանության լրիվ տապալելու մասին, ամեն տեսակի հեղափոխական գաղափարներ»:

Ալեքսանդր II-ը վճռեց Պետերբուրգ կանչել, խմբագրական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար, նահանգային կոմիտեների ներկայացուցիչներին: Այդ կապակցությամբ կալվածային ազնվականության շրջաններում առաջացավ շարժում, որը նպատակ ուներ ազնվական սահմանադիր ժողով ստեղծել, որպեսզի սահմանափակի ինքնակալության իշխանությունը, փոխնչացնի պալատական յերևելիների տիրապետությունը և միջին ազնվականության քաղաքական իրավունքներն ընդլայնի: Ազնվականությունն հույս էր տածում այդ պահանջների միջոցով իրեն վարձատրել գյուղացիության տիրելու իրավունքից զրկվելու համար:

1859 թ. պատգամավորները հավաքվելով հիասթափվեցին: Կառավարությունը բոլոր միջոցները ձեռք առավ ազնվականությանը սանձահարելու համար:

Կոմիտեները և կոմիսիաները (սկսած 1857 թ. մինչև 1861 թ.) հաշտեցրին այդ զանազան տեսակետներն, ու, նրանց աշխատանքի հետևանքով, հրատարակեցին 1861 թ. փետրվարի 19-ի մանիֆեստն ու «ճորտատիրական դրությունից դուրս յեկած գյուղացիների մասին օրենքները»:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՂԱԲԱԺԻՆՆԵՐԸ

Գյուղացիական հողաբաժինների չափը որոշելու համար Ռուսաստանը բաժանվեց յերեք գոտու, իսկ գոտիները՝ վայրերի (ըստ որում նկատի էին առնվում տնտեսական պայմանները և գոյություն ունեցող

բաժինների չափը): Յուրաքանչյուր գոտու և վայրի համար սահմանվեցին ամենաբարձր և ամենացածր հողաբաժինների նորմաները: Սևահող գոտին բաժանվեց 5 վայրի, ընչին 3,3 մինչև 4,9 հ. ամենաբարձր հողա-

Կոռային և բեգարային գյուղացիների դասավորվածությունը ռեֆորմից առաջ (ըստ 1858 թ. 10-րդ ռեվիզիայի տվյալների):

բաժնով: Վոչ սևահողային գոտին՝ 7-ի՝ 3.5 մինչև 8,7 հ. բարձր հողաբաժնով: Հարթավայրային գոտին՝ 4-ի և մեկ «հրովարտակայիններին օրենքով որոշված) 7-ից մինչև 13,1 հեկտար հողաբաժնով:

Ցածր հողաբաժինը հավասար էր բարձրի $1/3$-ին, ուստի յերբեմն կոչվում էր «յերրորդական»: Յեթե գոյություն ունեցող հողաբաժինը որոշված բարձրից ավելի լիներ, պետք է «կտոր»-ները (отрезки) կտրեյին հօգուտ կալվածատիրոջ, կամ թե չէ, գյուղացիների ստացած ավելցուկի դիմաց, հօգուտ նախկին տիրոջ, պետք է պարհակներ տանեյին:

Յերկու գլխավոր գոտիներում «կտորների» չափը յերևում է հետևյալ տվյալներից.

Գ Ո Տ Ի Ն Ե Ր	Հողազատագրումը մինչև 1861 թիվը	Նախանգների կտորների տարածության գումարը	Տոկոսով
Ոչ սևահող գոտի (15 նահանգ)	15.896.457	1.569 980	9,9
Սևահող գոտի (21 նահանգ)	15.971.842	4 178.986	26,2

Սևհողային գոտու առանձին-առանձին շրջանների կտրնների տարածությունը դասավորված էր հետևյալ կերպով՝

Ն Ա Հ Ա Գ Ն Ե Ր	Հողազատագրումը մինչև 1861 թիվը	Կտորներ	Տոկոսով
Մերձոկյան	3 643.621	490.550	13.4
Կենտրոնական-յերկրագործական	2.935 655	692.670	23.6
Ուկրայինայի	2.734.628	866.384	31.6
Մերձվոլգյան	3.738.672	1.287 012	34.4
Նովոռոսիսկի	1.896.649	567.028	30.0
Անդրվոլգյան	1.000.767	275.320	27.5

Յեթե գոյություն ունեցող հողաբաժինը ցածրից պակաս եր (մի շարք կալվածատերեր դեռ ռեֆորմից առաջ գյուղացիներին հողազրկել եյին), կալվածատերերը պարտավոր են հողին կցում կատարել հօգուտ գյուղացու կամ թե չէ պարհակն իջեցնել, պետք է ասել, վոր կցումը վոչ մի տեղ չեր կատարվում: Միաժամանակ հօգուտ կալվածատիրոջ նախատեսված եր՝ համենայն դեպս հարմար հողերի մինչև ⅓-ը պետք է մնա կալվածատիրոջ, իսկ հարթավայրական գոտում հրովարտակային հողաբաժինը կարելի յեր պակասեցնել, յեթե կալվածատիրոջը կալվածքի կեսից պակաս եր մնում:

Բացի այդ, Պետական խորհրդում օրենքի վերջնական քննության ժամանակ իշխան Գագարինի առաջարկությամբ ընդունվեցին այսպես կոչվող «քառորդական» կամ «նվիրաբերական» հողաբաժիններ: Կալվածատիրոջ իրավունք եր վերապահվում ձրիաբար գյուղացիներին հատկացնել բարձր հողաբաժնի մեկ քառորդ մասը, վորից հետո նրանց միջև ճորտատիրական իրավունքի վրա հենված բոլոր հարաբերությունները վերացած եյին համարվում: Մնացած ամբողջ հողը կալվածատիրոջն եր մնում, իսկ «նվերի» դիմաց անում եր կապալավարձը և մնացած հողի յեկամուտը: Այս «նվիրաբերական հողաբաժինները» գյուղացիներն անվանում եյին «մուրացկանական» կամ «վորբական» հողաբաժիններ: Նման հողաբաժիններ ստացողների թիվը բավականին մեծ եր՝ 640.000 հոգի, այսինքն ճորտերի 6%-ը: Տնային ճորտերն ազատ եյին արձակվում առանց հողի և կալվածատերերն էլ դրա դիմաց վոչինչ չեյին ստանում: Տնային ճորտերի թիվը հասնում եր մինչև 1½ միլիոնի:

Լեհական նահանգների գյուղացիներն ամբողջությամբ ստացան այն հողերը, վորոնց տիրապետում եյին ճորտատիրության ժամանակ, դրան ավելացրած մարգագետիններից և անտառներից վորոշ մաս:

ՓՐԿԱՆՔ

Ագարակները և դաշտաբաժինները գյուղացիներին եյին տրվում մշտապես օգտագործելու վորոշ պարհակներով. միաժամանակ նրանց իրավունք եր վերապահվում ագարակը ձեռք բերել իրենց պահանջով, փրկանք վճարելու միջոցով. իսկ դաշտաբաժինները՝ կալվածատիրոջ համաձայնությամբ: Հողից օգտվելու համար գյուղացիները պարտավոր եյին բեգառ վճարել և կոռ տանել (որական 12 ժամ ամառը և 9 ժամ ձմեռը, բարձր հողբաժնի համար տարեկան 40 տղամարդկային օր և 30 կանացի): Լրիվ հողաբաժնի համար սահմանված եր իբրև բեգառ՝ 12, 10, 9 և 8 ռուբլի. ընդ վորում առաջին և յերկրորդ դեսյատիններն ավելի եյին հարկադրվում, վորպիսի հանգամանքը հնարավորություն եր տալիս կալվածատիրոջ նույնիսկ փոքր հողաբաժինների դեպքում մեծ բեգառ ստանալ: Կողմերի փոխադարձ կամավոր համաձայնության դեպքում բեգառը կարող եր փոխարինվել կառավարության օժանդակությամբ, միանվագ փրկանքով:

Փրկանքով ձեռք բերված հողի գինը վորոշվում եր տարեկան բեգառի կապիտալականացումով, յելնելով 6%-ից: Հողաբաժինը փրկվում եր չափազանց մեծ գնով, վորն իր մեջ պարունակում եր նաև գյուղացու անձի փրկանքագինը: Հենց այդ պատճառով եր, վոր առանձնապես թանկ եյին գնահատվում Պետերբուրգի և Մոսկվայի նահանգների հողերը: Մեկ դեսյատինի գինը առաջինում ըստ փրկագնի՝ 61 ռ. 50 կոպեկ եր, 24 ռ. փոխարեն. յերկրորդում՝ 51 ռ. 33 կոպեկ եր, 26 ռ. փոխարեն: Ընդհանուր առմամբ կալահողային շրջաններում կալվածատերերը մարդկանց դիմաց ստացան 162 միլ. ռ. և սևհողյան շրջաններում՝ 58 միլ. ռ.: Այն ժամանակվա գներով ամբողջ հողն արժեր 648 միլ. ռ., իսկ գյուղացիները վճարեցին՝ 867 միլ. ռ.:

Հողերի և հողինների փրկանքագինն այնպես եր հաշվված, վորպեսզի «կալվածատերերի փայը քիչ չլինի»: Արևմտյան նահանգներում, ուր ռուսական կառավարության և լեհական կալվածատերերի միջև պայքար տեղի ուներ, գյուղացիներին կալվածտերերից ձրիաբար վերցրին: Հետևյալ աղյուսակից յերևում է, ինչ տարբերություն կար հողի գնի և փրկանքագնի միջև:

Ն Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր	Հողաբաժինների տարածությունը 1000 հեկտարով	Հողաբաժինների գինը	Փրկանքագինը
		(միլիոն ռուբլիներով)	
Ոչսևահողային	13,422	180	342
Սևահողային	10,750	284	342
Արևմտյան	11,079	184	183
Բոլորը	35.251	648	867

Ամբողջ գումարի ¾ մինչև ¾ կալվածատերերը պետությունից ստացան փրկանքի արժեթղթերով, իսկ գյուղացիները 49 տարվա ընթացքում վճարելու էյին կառավարությանը յուրաքանչյուր ռուբ. վարկին 6 կ. փրկանքավճարով, վորից ½ կոպեկ գնում էր վարկավորված կապիտալի մարելուն, ½ կոպեկ պահեստի ֆոնդ կազմելու՝ հատուկ գործառնական ծախքերի համար, 5 կոպեկը՝ իբրև տոկոս: Փրկանքը գյուղացիների համար շատ ծանր էր և գյուղացիների վրա տալացուկներ կուտակվեցին: 1862 թ. տալացուկները կազմում էյին մուծանքի 60%-ը, 1863 թ.՝ 45%-ը: 45 տարվա ընթացքում կալվածատիրական գյուղացիները մուծեցին 1·541·204·000 ռուբլի: Միայն 1905 թ. հեղափոխությունն ստիպեց կառավարությանը փրկանքավճարումները կիսով չափ կրճատել, իսկ 1907 թ. իսպառ վերացնել:

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԼՎԱԾԱՏԻՐՈՋ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փրկանքով ձեռք բերած հողերը վոչ թե առանձին գյուղացիների սեփականություն էյին դառնում, այլ ամբողջ համայնքի, վորը դաշտահողերը բաժանում էր առկա շնչերի մեջ և համապատասխան կերպով բաշխում էր վճարումները, վորոնց մուծելու համար համայնքի բոլոր անդամները միմյանց հետ կապված էյին համապարտ յերաշխավորությամբ: Գյուղացիներին գյուղական հասարակության հետ ամենից ամուր կապում էր հողատիրության համայնական ձևը: Համապարտ յերաշխավորությամբ կապված լինելը պարհակների կատարման և վճարումների խնդրում թե կալվածատիրոջ և թե կառավարության յեկամուտների կանոնավոր ստանալն ապահովում էր: Ռեֆորմի գործիչները գտնում էյին, վոր «աշխատավորների միությունը, կապիտալիստների և իշխանության դեմ կոլեկտիվ ոպոզիցիան․․․զարգացավ բացարձակապես այն դասերի մեջ, վորտեղ ստահակ անձնավորությունները, կապված չլինելով վոչ մի հողային շահով և թողնված լինելով իրենք իրենց համար, գիտակցեցին իրենց միայնակության անզորությունը և կազմեցին արհեստականորեն միություն, վորը թշնամական վերաբերմունք ունի դեպի կառավարությունը, սեփականությունը և հասարակական կարգերը»: Հետևաբար, կառավարությունը շատ լավ հաշվի յեր առնում համայնքի ռեակցիոն նշանակությունը:

Գյուղացիներն այնքան ժամանակ, վորքան դեռ իրենց հողաբաժինները չէյին փրկել, կոչվում էյին ժամանակավոր—պարտավորյալներ: Նրանց կալվածատիրոջից իրավական անկախությունը խաբուսիկ էր: Վոչ միայն անցողիկ շրջանում, յերբ կոռն էլ պետք է կատարվեր, այլև պարտադիր հարաբերությունների գոյության ամբողջ ընթացքում (1891 թ. կալվածատիրական գյուղացիների 15% դեռ ևս գտնվում էր ժամանակավոր—պարտավորյալ հարաբերությունների մեջ), կալվածատերն իրավունք ուներ իր նախկին գյուղացու դատի և դատաքննության ժամանակ ներկա գտնվելու, կարող էր պահանջել ընտրովի պաշտոնյաներին փոխել՝ այսպիսով իշխելով գյուղացիական վարչության օրգանների վրա: Այնինչ կալվածատերերը գյուղացիների վերաբերմամբ պարտականությունից ազատված էր բոլորովին (օրինակ՝ սովի ժամանակ գյուղացիներին կերակրելու պարտականությունից):

ՌԵՖՈՐՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ռեֆորմն այնպիսի տեսք ընդունեց, ինչպիսին հարկավոր էր խոշոր ֆեոդալական հողատիրությանը և նրա դաշնակից առևտրական կապիտալին: Թե ինչպես էյին ազնվականների պարտքերը, կարելի յե տեսնել Ռուսաստանի ամենախոշոր կալվածատերեր՝ Շերեմետյեվների պարտքի կոր գծից: Գյուղացիներն այնպես ազատագրվեցին, վոր առևտրական կապիտալը հնարավորություն ստացավ համայնքին ամրացած կիսաքաղց մանր արտադրողներից էլ ավելի մեծ քանակով հավելյալ պրոդուկտ կորզել: Հարկային քաղաքականությունը գյուղացիներին ստիպում էր իրենց հավելյալ պրոդուկտը, յերբեմն էլ անհրաժեշտի մի մասը շուկա հանել վաճառքի, վորպեսզի փող հայթայթի հարկերը վճարելու համար: 70-ական թվականներին ուղղակի հարկերը կազմում էյին մաքուր յեկամտի 120 մինչև 200 % սևհողյան գոտում և 200-ից մինչև 270՝ վոչ սևհողյան: Գյուղացին ստիպված էր իր հացը դեռ չհնձած ծախել, անկախ գնից, հակառակ դեպքում, գյուղացու տալացուկները մարելու համար, ծախելու էյին դուրս բերում նրա անասուններն ու շենքերը:

Միջին ազնվականությունը և արդյունաբերական կապիտալը ռեֆորմից ավելի քիչ ստացան: Նրանց հարկավոր էր պրոլետարականացած աշխատող՝ ֆաբրիկայում և կալվածքում աշխատելու համար: Հենց այդ էր, վոր նրանք չստացան ռեֆորմի հետևանքով. ռեֆորմը շատ բանում պահեց կիսաճորտատիրական հարաբերությունները:

Տնտեսության կոռվորական սիստեմն ընկավ, բայց իսպառ չոչնչացվեց: Գյուղացիական տնտեսությունը լիովին չբաժանվեց կալվածատերերի տնտեսությունից, քանի վոր վերջինների ձեռքին մնացին գյուղացիական հողաբաժինների եյական մասը «հողերի կտրոնները», անտառները, մարգագետինները, ջրատեղերը, արոտատեղերը և այլն: Վոչ տնտեսական հարկադրման հնարավորություններն էլ էյին մնացել՝ ժամանակավոր-պարտավորյալ դրությունը, փոխադարձ պարտավորությունը, նույնպես գյուղացու մարմնական պատիժները և նրան հասարակական աշխատանքի գնելը:

Կալվածատիրական տնտեսությունը հին յեղանակներից միանգամից նոր կապիտալիստական արտադրական ձևերին անցնել չէր կարող, այդ պատճառով գյուղացիների ազատագրումից հետո յերկար ժամանակ միասին պահպանվում էյին յերկու սիստեմներ՝ հին կոռվորական տնտեսությունը և կապիտալիստական տնտեսությունը: Կալվածատիրական տնտեսությունը պետք է անցներ մաքուր կալվածատիրականից դեպի մաքուր կապիտալիստական տնտես. բոլոր միջին ձևերը: Դեռ 80-ական թվականներին ագրարային Ռուսաստանը մաքուր կապիտալիստական յերկիր չէր հանդիսանում: 43 նահանգներում տնտեսության տիրապետող սիստեմները հետևյալ կերպ էյին դասավորված.

Խառն սիստեմի տնտեսությունները այն բնույթն ունեյին, վոր վար-
ձու բանվորական ուժ գործադրվող կապիտալիստական տնտեսության
կողքին լայն կերպով գործադրվում եյին աշխատանքահատուցային
տարբեր ձևերն ու յեղանակները՝ գործավարձ, դեսյատինային աշխա-

Նահանգների խմբերն ըստ հողատերերի տնտեսության գերիշխող սիստեմի	ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԹԻՎԸ Սևհողային գոտի	Վոչ սևհողային գոտի	Բոլորը
Կապիտալիստական սիստեմը գերիշխող նահանգները . . .	9	10	19
Խառը սիստեմը գերիշխող նահանգները	3	4	7
Աշխատանքահատույց սիստեմը (отработочная система) գերիշխող նահանգները . . .	12	5	17
Բոլորը . .	24	19	43

տավարձ, այսինքն դրամով կալվածատիրոջ հողի մշակումը գյուղացու
գործիքներով, փողով կամ նատուրայով պարտքերի դիմաց աշխատա-
հատույց լինել, կալվածատիրական արտերի արածեցնելու համար աշ-
խատանք, յերբեմն գյուղացուն կիսով տրված հողի համար աշխատանք:
Օրինակ՝ կալվածատիրոջից վերցրած մի դեսյատին հողի դիմաց, գյու-
ղացին պարտավոր եր կալվածատիրոջ համար մշակել 1½ դեսյատին,
դրան լրացուցիչ տալ նաև հավ, ձու և կանացի աշխատանք: Այդպիսի
միջոցներով կալվածատիրոջ հաջողվում եր դրեթե ձրի բանվորական ուժ
ստանալ: Նույնիսկ յեթե գյուղացին աշխատանքահատույցի համար փող
եր ստանում, նրա աշխատավարձն ազատ վարձու բանվորի աշխատա-
վարձից նշանակալից ցածր եր (օրինակ՝ 17 ռ. 50 կ. փոխարեն՝ 9 ռ. 40
կոպեկ): Աշխատանքահատույցն առանձնապես ծանր, ստրկական պայ-
մաններ եր ստեղծում այն ժամանակ, յերբ կիսափողային, կիսաբնական
բնույթ եր ունենում, այսինքն, յերբ գյուղացին կալվածատիրոջ հա-
մար իր կատարած աշխատանքի դիմաց փող եր ստանում և միաժամա-
նակ կապալով վերցրած հողի դիմաց պետք է կալվածատիրոջ համար
աշխատեր իր ինվենտարով: Կալվածատերը փաստորեն կանխավճարով
«ազատ» գյուղացուն ամրացնում եր հողին, դրանով իրեն համար արժան
բանվորական ուժ եր ապահովում: Աշխատանքահատույցի տարբեր տե-
սակներն ու ձևերը փոխվում եյին, նայած տեղական և այլ պայմաննե-
րին, բայց այդ բոլոր տեսակները մի ընդհանուր գիծ ունեյին՝ ստրկաց-
նող. կիսաֆեոդալական բնույթն եր այդ: Աշխատանքահատույցի սիս-
տեմը աստիճանաբար վերացավ կապիտալիստական տնտեսության զար-
գացումով:

Վ. Ի. Լենինն այսպես է նկարագրում գյուղի դրությունը 1861 թ.
ռեֆորմից հետո՝ «Կոռից «ազատագրված» գյուղացին բարենորոգչի
ձեռքից դուրս յեկավ ընկճված, պլոկված, ստորացված, իր հողա-
բաժնին կապված, վոր նրան այլ բան չեր մնում, քան «հոժարակամ»
կոռի անցնել: Յեվ մուժիկն սկսեց մշակել իր նախկին աղայի հողը. Նրա-
նից «կապալով» վերցնել հենց իրեն հողի կտորները. քաղցած ընտանիքը
պահելու, հաց վերցնելով ձմեռը կապալի տակ ընկնել՝ ամառն աշխա-
տելու համար... Իսկ այդ կալվածատիրական ճնշման... ավելացավ կա-
պիտալի ճնշումը: Փողի իշխանությունն... իր ամբողջ ծանրությամբ
հարվածեց մեր կիսաճորտ մուժիկին: Մի կերպ անհրաժեշտ եր փող
գտնել և հարկ վճարելու համար, վորն ավելացել եր բարերար ռեֆորմի
շնորհիվ, և գնելու համար այն ֆաբրիկայի արդյունաբերության մու-
րացկանային արտադրանքները, վորոնք սկսել եյին դուրս վանել գյու-
ղացու տնային արտադրանքները, և հաց գնելու համար և այլն: Փողի
իշխանությունը վոչ միայն ճզմեց գյուղացուն, այլև հատվածների բա-
ժանեց. վիթխարի մասսան անընդհատ քայքայվում և պրոլետար եր
դառնում, փոքրամասնությունն առաջ եր քաշվում, վորպես մի բուռ
փոքրաթիվ, բայց ամրուկ կուլակներ և տնտեսատեր գյուղացիներ, վո-
րոնք իրենց ձեռքը հավաքեցին գյուղացու տնտեսությունն ու գյուղա-
ցու հողը և ծնունդ առնող գյուղական բուրժուազիայի կադրերը կազ-
մեցին: Վողջ հետռեֆորմյան քառասնամյակը մի ապագյուղացիացման
անընդհատ պրոցես է՝ դանդաղ, չարչարվող, մահվան պրոցես: Գյուղա-
ցին հասցված եր մինչև կյանքի մուրացկանային աստիճան. նա կենում
եր անասունների հետ մեկտեղ, հագնում եր ցնցոտիներ, կերակրվում եր
աղցանով. գյուղացին փախչում եր իր հողաբաժնից, յերբ կար ուր՝
փախչել, նույնիսկ աշխատում եր փրկվել հողաբաժնից, վճարում եր նրան
ով կհամաձայներ վերցնել հողաբաժինը. վորի համար մուծանքները
գերակշռում եյին տված ոգուտը: Գյուղացիները հարատև քաղցի մատն-
ված եյին մնում և տասնյակ հազարներով մահանում եյին սովից ու
համաճարակից անբերրի տարիներին, վորոնք ավելի ու ավելի հաճախա-
կի եյին կրկնվում» «աշխատանքահատույց և ստրկություն—ահա իրա-
պես ինչ հանդիսացավ այն «ազատ աշխատանքը», դեպի վորը «աստվածա-
յին վողորմածությամբ» կանչում եր գյուղացուն ճիզվիտ—տերտերի կազ-
մած մանիֆեստը»*): «Գյուղացիական ռեֆորմը ճորտատիրական ռե-
ֆորմ եր և այլ լինել չեր կարող, քանի վոր կիրառողները ճորտատերերն
եյին»:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՒԶՈՒՄՆԵՐԸ ՌԵՖՈՐՄԻՑ ՀԵՏՈ

1861 թ. մանիֆեստը, վորն ստորագրվեց փետրվարի 19-ին, միայն
մարտի 5-ին հայտարարվեց: Կառավարությունն սպասում եր, վոր հե-

*) Փետրվարի 19-ի մանիֆեստը կազմել է ռեֆորմի հակառակորդ՝ Մոսկվայի Ֆիլարետ արքեպիսկոպոսը:

ղավորություն տեղի կունենա և միջոցներ էր ձեռք առնում այն ճնշելու: Ոստիկանական մասերում գյուղացիների համար սայլերով ճիպոտներ էին պատրաստում: Նման նախապատրաստությունը զարմանալի չէր: Գյուղացիական ռեֆորմն անց էր կացված յելնելով հողատերերի շահերից: Նոր պարհակների, փրկանքագների, աշխատանքահատույցի ծանրության տակ ընկնելով, գյուղացիությունը ռեֆորմին մասսայական ապստամբություններով պատասխանեց: 1860—1863 թ.թ. նշված է 2·000 գյուղացիական զատ-զատ հուզումներ:

Մանիֆեստի հենց հայտարարվելուց հետո գյուղացիական հուզումները ծայր առան: Ողբերգական վախճան ունեցան 1861 թ. Կազանի նահանգի Բեզդնա գյուղի հուզումները: Այստեղ գյուղացիությունը հուզված էր այն լուրի ազդեցությամբ, որ իբր թե լրիվ ազատություն են ստացել, ինչպես նրանց համար օրենքը կարդացել էր՝ բեզդնացի գյուղացի Անտոն Պետրովը: Բեզդնա ուղարկված հրետանիով լրացրած հետևակ ջոկատին գյուղացիները հանդիպեցին գոչելով՝ «ազատությո՛ւն, ազատությո՛ւն»: Ջոկատի հրամանատար գեներալ-մայոր Ապրակսինը պահանջեց, որ իրեն հանձնեն Անտոն Պետրովին, որը գյուղացիներին ասել էր՝ «չլսել կալվածատերերին և իշխանավորներին, հրամայել էր գյուղացիներին՝ կոռի չգնալ, բեղառ չվճարել, սայլեր չտալ, նույնիսկ չարգելել, յերբ գյուղացիները կտեսնեն, որ ուրիշները տերերի շտեմարաններից հաց են տանում, յեթե ջուրը ջարդի ջրաղացը, չվերանորոգել այն, կալվածատերերից վոչինչ չվերցնել»: Գեներալ Ապրակսինը, իր պահանջին բացասական պատասխան ստանալով հրամայեց կրակ բաց անել անզեն գյուղացիների վրա (1861 թ. ապրիլի 12-ին): Ըստ զեկուցագրի գյուղի ամբողջ փողոցը ծածկվել էր սպանվածներով և վիրավորվածներով (71 սպանված և 155 վիրավորված): Անտոն Պետրովին գնդակահարեցին (1861 թ. ապրիլի 17-ին):

Բեզդնայի խռովությունը յեզակի դեպք չէր: 45 նահանգներում, այսինքն՝ Յեվրոպական Ռուսաստանի 90% տարերային գյուղացիական հուզումներ բռնկվեցին: Գրոդնոյի նահանգի տասը հազարանոց գյուղացիական բանակը հրաժարվեց բեղառային պարհակներից: Գյուղացիական մասսաների մեջ առանձնապես սուր դժգոհություն առաջացրեց ժամանակավոր-պարտավորյալ կացությունը, վորով գյուղացիները դեռ մնում էին ճորտի վիճակում:

Պայքարն առանձնապես լայն ծավալ ստացավ Լիտվայում, Բելոռուսիայում և Վորոնեժի, Տուլայի, Սմոլենսկի, Պերմի, Սարատովի նահանգներում:

Ապստամբներին կառավարությունը չէր խնայում, և ճիպոտով, խարազանով պատժելն այդ ժամանակ չտեսնված չափերի հասավ: Գյուղացիության մեջ համոզմունք ստեղծվեց, վոր օրենքի մեջ հատուկ հոդված կա—ծեծել նրան, ով կհամարձակվի այդ օրենքը կարդալ: Փոշիացած գյուղացիական մասսաները հարկավ չէին կարող հարկավոր չափով կայուն դիմադրություն ցույց տալ կառավարության կազմակերպված ուժին: «Ազատագրումը», չնայած իր բոլոր պակասություններին, այնուամենայնիվ բավարարեց գյուղացիության վորոշ խավե-

րին. Թեկուզ հենց նրա համար, վոր ազատվեցին աղայի անմիջական ճնշումից:

1861 թ. ռեֆորմը այդ կողմերից եղավ մի քայլ առաջ էր ֆեոդալական միապետությունը բուրժուականի վերածելու ճանապարհին: Նա խթան հանդիսացավ գյուղատնտեսության, արդյունաբերության զարգացման, կյանքի կոչեց հասարակական նոր հիմնարկներ (զեմստվո, յերդվյալների դատարան, քաղաքային դումաներ):

ԶԵՄՍՏՎԱՅԻՆ ՌԵՖՈՐՄԸ

Մինչև 1861 թ. տեղական գործերը վարում էին գյուղում կալվածատերերը, քաղաքներում՝ առևտրականները: Այդ «զեմստվո»-ների դերն այնքան չնչին էր, վոր նրանց չէին նկատում, և 1864 թ. զեմստվոյի ռեֆորմը մի նոր բան թվաց, վորը փոխեց վողջ հասարակական կյանքի բնույթը: Ներկայացուցչական վարչաձևի հույս առաջացավ:

Յուրաքանչյուր նահանգի և յուրաքանչյուր գավառի տնտեսական կյանքը վարելու համար գործի կոչեցին բնակչությունից ընտրված, այսպես կոչված, ձայնավորներ: Ընտրական ժողովներին կարող էին մասնակցել նրանք, ովքեր 100-ից բարձր գյուղական հողբաժին ցենզ ունեին (մոտ 800 դես., բայց վոչ պակաս 150 դեսյատինից՝ վորոշ նահանգներում), 25 տարեկան հասակը լրացած, բացի կանանցից և հրեաներից: Ընտրողները բաժանվում էին յերեք կուրիայի (ընտրողների խմբեր. ընտրողները միացած էին գույքային կամ դասային նշանով)՝ մասնավոր հողատերերի, գյուղական համայնքների և քաղաքի ընտրողների (15·000 ռ. վոչ պակաս անշարժ գույքով): Կուրիաները ձայնավորներ էին ընտրում գավառական զեմստվային ժողովների համար 3 տարի ժամանակով): Գավառական ժողովները ձայնավորներ էին ընտրում նահանգային զեմստվային ժողովների համար: Թե մեկը և թե մյուսը տարին մեկ անգամ հավաքվում էին՝ տնտեսությունը վարելու ընդհանուր նախագիծ մշակելու, յելք ու մուտքի նախահաշիվները հաստատելու, գործադիր մարմիններ, գավառական և նահանգական զեմստվային վարչություններ ընտրելու, նաև քննելու և հաստատելու նրանց հաշվետվությունը:

Զեմստվոյի վարչությունների գործունեությունը յենթարկվեց նահանգապետների և ներքին գործոց մինիստրության հսկողության: Չնայած զեմստվոները հիմնվում էին իբր թե «համադասային» սկզբունքներով, բայց ծածկված նրանց մեջ պահպանվեց դասային ներկայացուցչության սկզբունքը: Ձայնավորներ ընտրելու համար համայնական հողատիրության հատկացվեց ձայների միայն 1/3-ը, կեսը ազնվականներին թողնվեց, քանի վոր առաջին կուրիայի մասնավոր հողատերերը գրեթե բացառապես ազնվականներն էին, նրանց հետ էին միանում ազնվական—առևտրականները քաղաքի կուրիայից: Ժողովների նախագահներն էին գավառական և նահանգական ազնվականների առաջնորդները: Զեմստվային վարչություններում, մանավանդ նահանգային, ազնվականները բացարձակ մեծամասնություն էին կազմում: Զեմստվային ինքնավարությունները գյուղացիության հաշվին փաստորեն ազնվականության ինքնավարություններ հանդիսացան:

Ձեմստվային հիմնարկները վարում էին ճանապարհների կառուցումը, առողջապահական գործը, անասնապահության վերաբերյալ միջոցառումները, նույնպես հոգևորականության հետ միասին և կառավարական տեսչության հսկողությամբ, նաև ժողովրդական լուսավորության գործերը: Ձեմստվային հարկերն իրենց ամբողջ ծանրությամբ ընկնում էին գյուղացիության վրա:

Հետագայում նահանգապետներին իրավունք տրվեց վոչ միայն կասեցնելու այլև ղեկավարելու ձեմստվային մարմինների գործունեությունը, խառնվել նրանց բոլոր գործերին: Ձայնավորներին գյուղացիական թեկնածուներին նշանակում էր նահանգապետը, բոլոր պաշտոնատար ընտրովի անձանց հաստատում էր կամ ներքին գործոց մինիստրը, կամ նահանգապետը: Առանց ադմինիստրացիայի հաստատման, ձեմստվոյի վոչ մի վորոշում չէր կարող կենսագործվել:

ԴԱՏԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ

Միաժամանակ անցկացրած դատական ռեֆորմը Ռուսաստան էր մտցնում արևմտյան-յեվրոպական դատավորության ձևերը, վորոնք ամենից շատ էին համապատասխանում արդյունաբերական կապիտալիզմին: Դատը դարձվեց դռնբաց և հրապարակական՝ կողմերի ակտիվ մասնակցությամբ: Նվազ նշանակալից գործերի համար կազմվեց այսպես կոչված հաշտարար դատարան յերկու ինստանցիայով՝ կազմված ընտրովի (ձեմստվային և քաղաքային դումաներից) հաշտարար դատավորներից և նրանց համագումարից: Որենքն այդ գործերի համար պարզեցրած դատավարություն մտցրեց— գործերի քննությունը տարվում էր հաշտեցնելու կարգով:

Քաղաքացիական և քրեական գործերի համար մտցվեցին շրջանային դատարան և դատական պալատ: Քրեական գործերը մեծ մասամբ քննում էր շրջանային դատարանը՝ յերդվյալ ատենակալներով, իսկ գործերի մի մասը (այստեղ մտնում էին, որինակ, քաղաքական հանցագործության գործերը) քննում էր դատական պալատը դասային ներկայացուցիչների մասնակցությամբ: Սենատին պատկանում էր դատական գործնեյության ընդհանուր հսկողությունը, միաժամանակ սենատը գերագույն բեկման դատարան էր: Քննությունը հանձնվում էր հատուկ դատական քննիչի, նրա ձեռք բերած նյութերն անցնում էին դատարան: Մեղադրյալը կարող էր դատապաշտպան ունենալ: Դատին ներկա յեր լինում հասարակությունը: Դատական քննության հիման վրա յերդվյալները «վերդիկտ» էին հանում, այսինքն, մեղավորության մասին վորոշում, իսկ դատարանը դատավճիռ էր հանում, վորոշում էր պատժի չափը: Մարմնական պատիժները դատարանով վերացվում էին (բացի գավառային դատարանների—գյուղացիների վերաբերյալ):

Դատական ռեֆորմը բուրժուազիայի շահերն էր պաշտպանում: Յերդվյալները վորոշակի յեկամուտ ունեցող մարդիկ էին, վորոնց յեկամուտը շատ էր բարձր բանվորների և ցածր ծառայողների աշխատավարձից. այսպիսով քաղաքներում յերդվյալ էր դառնում բուրժուազիան, գյուղացիներից թույլատրվում էր նրանց, վորոնք առաջ գյուղացիական ինքնավարության մեջ վորևէ պաշտոն էին վարել, այսինքն «քաղաքական ցենզ» ունեյին:

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԴԵՊՔԵՐԻ ՈՐԱՑՈՒՅՑԸ

Տնտեսական զարգացումը

1802 թ. գյուղատնտեսական մեքենաների առաջին գործարանը (Մոսկվայում):

1808 թ. առաջին բամբակամանվածային ֆաբրիկան (Մոսկվայում)

1822 թ. արգելման տարիֆ.

1843 թ. Վոլգայի վրա մարդատար և ապրանքատար ուղիղ հաղորդակցություն:

1851 թ. Նիկոլայեվյան (այժմ Հոկտեմբերյան) յերկաթուղու կառուցումը:

Արտաքին քաղաքականություն

1805—1807 թ. թ. Նապոլեոնի դեմ պատերազմները

1807 թ. Տիլզիտի հաշտությունը: Միացումը Կոնտինենտալ բլոկադային:

1812 թ. Նապոլեոնի դեմ պատերազմը: Բեսսարաբիայի միացումը:

1813—1814 թ. թ. Նապոլեոնի դեմ պատերազմներն արտասահմանում:

1826—1828 թ. թ. Պարսկաստանի դեմ պատերազմը:

1828—1829 թ. թ. Թյուրքիայի դեմ պատերազմը:

1853—1855 թ. թ. Ղրիմի պատերազմը:

1817—1826 թ. թ. դեկաբրիստների շարժումը

1817 թ. «Փրկության միության» կազմակերպումը:

1820 թ. Հուզումները Սեմյոնովյան գնդում:

1818—1821 թ. թ. «Յերանելիության միությունը»:

1821—1825 թ. թ. «Հյուսիսային» և «Հարավային» միությունները:

1823—1825 թ. թ. «Միացյալ սլավոնների միությունը»:

1825 թ. դեկտեմբերի 14-ին «Հյուսիսային Միության» յելույթը:

1826 թ. հունվարի 3-ին Չերնիգովի գնդի ապստամբության ջախջախումը:

1826 թ. հուլիսի 13-ին. Հինգ դեկաբրիստների մահապատիժը:

1845—1849 թ. թ. Պետրաշևսկիների խմբակը:

Գյուղացիական հարցը

1803 թ. ազատ հողագործների մասին հրովարտակը

1842 թ. պարտավորյալ գյուղացիների մասին հրովարտակը

1847 թ. պարտքի դիմաց վաճառվող կալվածների գյուղացիության փրկանքի մասին հրովարտակ

1857—1961 թ. թ. գյուղացիական ռեֆորմների քննարկումը նահանգային կոմիտեներում և խմբագրական հանձնաժողովներում:

1861 թ. փետրվարի 19-ին ճորտատիրական իրավունքի վերացման մասին մանիֆեստը:

1861 թ. ապրիլի 12-ին Կազանի նահանգի Բեզդնա գյուղում տեղի ունեցած դնդակահարությունը

1864 թ. Զեմստվոյին և դատական ռեֆորմները:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ — ԽՆԴԻՐՆԵՐ

1. Մշակեցեք Ն. Մուրավյովի սահմանադրության նախագծի և Պեստելի «Ռուսական Պրավդայի» հոդվածները (Կ. Ղազարյան. Ռուսաստ. դասակարգ. պայքարի պատմությունը, Քրեստոմատիա. պրակ I. էջ 59—68), կազմեցեք նրանց առաջարկած՝ Ռուսաստանի յենթադրվելիք ներքին կառուցվածքի սխեման, տալով սխեմայի վրա նախագծերի բնութագրությունը. համեմատեցեք 1789 և 1793 թ. թ. ֆրանսիական սահմանադրության հետ:

2. Հասարակագիտական կաբինետի համար մեծացրեք գրքում զետեղված քարտեզը, վորը ցույց ե տալիս, թե ինչ կերպ եյին դասավորված կոռվորական և բեգյառական գյուղացիները ռեֆորմի նախորյակին:

3. Տեղեկություններ ժողովեցեք, ձեզ մոտ ինչպես են ազատագրվել գյուղացիները, ինչ հողաբաժիններ են ստացել, արդյոք ձեզ մոտ ռեֆորմից հետո յեղել են գյուղացիական շարժումներ (հարցնել ծերերին, ստուգել տեղական արխիվներում և տպագրված գավառագիտական նյութերում):

4. Կարդացեք Լենինի «50-летие падения крепостного права» և «По поводу юбилея», «Крестьянская реформа и пролетарско.-крестьянская революция» հոդվածները (I XI) և պարզեցեք Լենինի տեսակետները գյուղացիական ռեֆորմի վերաբերյալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴՈԿՈՒՄԵՆՏՆԵՐ

Կ. Ղազարյան, Ռուսաստանի դասակարգ. պայքարի պատմությունը. Քրեստոմատիա, պրակ I:

«История классовой борьбы в России в материалах и документах» под ред. Н. Карпова и М. Мартынова, 2 тома.

А. М. Большаков и Н. А. Рожков, История хозяйства России в материалах и документах. Вып. II.

Гл. II—Разложение крепостного хозяйства в первой половине XIX в., стр. 111—148; о крестьянской реформе, гл. III, стр 155—170, 184—196, 211—213.

Ю. Г. Оксман, Декабристы. Отрывки из источников центрархив, гл. IV и VII.

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

М. Н. Покровский—Русская история с древнейших времен т. т. III и IV.

В т. III, гл. XII,— «Александр I» и гл. XIII—«Декабристы»; т. IV гл. XIV—«Крестьянская реформа» и гл. XV—«Шестидесятые годы».

М. Н Покровский, Дипломатия и войны царской России в XIX ст. сборн. статей.

Մի շարք հոդվածներ այս գրքից կարելի յե օգտագործել:

М. Н. Покровский—Очерки русск. револ. движения XIX и XX в. в. (կա հայերեն թարգմանությունը):

Հանձնարարություն-խնդիրների մեջ հանձնարարված՝ Լենինի հոդվածները XI և XII հատորներում:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տուրգենև—Մումու, նույնի—Պատմվածքներ, Տոլստոյ—պատերազմ և խաղաղություն (համառոտ հրատարակություն), Տոլստոյ—Սեվաստոպոլ. Գրիբոյեդով—Խելքից պատուհաս, Գոգոլ—Վերաքննիչ, նույնի Ամուսնություն:

Սրբագրիչներն՝ Գար. Հակոբյան
Ոն. Գասարչյան

Հայպոլիգրաֆի տպարան

Գլավլիտ № 7103, Պատվեր № 423, Հրատ. 2056, Տիրաժ 5000

Հանձնված է արտադրության 5 փետրվարի 1932 թ.
Ստորագրված է տպագրելու 5 սեպտեմբերի 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0836860

ԳԻՆԸ 2 Ռ. 50 ԿՈՊ. ($15\frac{1}{2}$ մ.)

11
26093

Ю. М. БОЧАРОВ, А. З. ИОАНИСЯН И ДР.

УЧЕБНИК ПО ИСТОРИИ КЛАССОВОЙ БОРБЫ
(XIII—XX В. В.)

Для Техникумов, Рабфаков и Совпартшкол

Ч. ПЕРВАЯ

ПЕРЕВЕЛИ С. Маркосян
С. Нерсесян

ЭПОХА БУРЖУАЗНЫХ РЕВОЛЮЦИЙ

Госиздат ССР Армении
Эривань—1932